Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

*Մեր կոնտակտները`*

*Պաշտոնական կայք`*[http://www.armin.am](http://www.armin.am)

*Էլ. փոստ`*[info@armin.am](mailto:info@armin.am)

# ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

# ՄՈՒՍԱ ԼԵՌ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

# АРМЯНСКАЯ ЭТНОГРАФИЯ и ФОЛЬКЛОР

МАТЕРИАЛЫ И ИССЛЕДОВАНИЯ

16

ВЕРЖИНЭ СВАЗЛЯН

# МУСА ЛЕР

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН • 1984

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

# ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ և ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ՆՅՈՒԹԵՐ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16

ՎԵՐԺԻՆԵ ՍՎԱԶԼՅԱՆ

# ՄՈՒՍԱ ԼԵՌ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ • 1984

ԳՄԴ 63.5 (2Հ)
Ս 850

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա

Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Է. Տ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կ. Վ. ՄԵԼԻՔ-ՓԱՇԱՅԱՆ, Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆ, Դ. Ս. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ

Պատասխանատու խմբագիր՝ բանասիրական գիտությունների դոկտոր՝ Ս. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գիրքը հրատարակության են երաշխավորել գրախոսներ՝ բանասիրական գիտությունների թեկնածուներ Ա. Մ. ՆԱԶԻՆՅԱՆԸ և Ռ. Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Սվազլյան Վ. Գ.

Ս 850 *Մուսա լեռ/Հատորի պատ. խմբ. Ս. Բ. Հարությունյան.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ. 1984.— 219 էջ, 1 թ. նկ./ Հայ ազգագր. և բանահյուս., նյութեր և ուսումնասիր. (ՀՍՍՀ ԳԱ., Հնագիտ. և ազգագր. ինստ. [Պր., 16]).*

*Ժողովածուն ընդգրկում է Սովետական Հայաստանում բնակվող հայրենադարձ մուսալեռցիներից 1955—1978 թթ. գրի առնված ավանդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերի նմուշները։ Բարբառային բնագրերին կցված են արևելահայ գրական լեզվով թարգմանությունները։ Ներածության մեջ տրված է հայրենարնակ մուսալեռցիների մշակութային կյանքի պատկերը, քննված են գրառված բանահյուսական նյութերի և դիտարկված ժողովրդագիտական երևույթների արդյունքները՝ համաժամանակյա և տարաժամանակյա մոտեցումով։ Ժողովածուն ունի նաև բառարան, ծանոթագրություններ, բանասացների կենսագրականներ, նոտագրություններ և մուսալեռցիների բնակեցումը պատկերող ուղեցույց քարտեզ։*

*Հասցեագրվում է բանահյուսությամբ, ժողովրդագիտությամբ հետաքրքրվողներին և ընթերցող լայն շրջաններին։*

Ս $\frac{0508000000}{703(02)-84}$ 33—83

ԳՄԴ 63,5 (2Հ)
902.7 (CA 43)

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1984

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

*Կիլիկիայի հարավում ձգվում է Տավրոսի Ամանոս լեռնաշղթան, որի հարավարևմտյան փեշերին վեր է խոյանում Մուսա լեռը՝ Դամլաջըք եռանկյունաձև գագաթով (1355 մ)։ Նրա հարավարևելյան և հարավարևմտյան լանջերը զառիթափ իջնում են դեպի Օրոնտեսի դաշտավայր ու Միջերկրական ծով։*

*Մուսա լեռան արևելքից հոսում է Օրոնտես գետի վտակ Մեծ Կարաչայը, իսկ հարավում տարածվում է Օրոնտեսի ընդարձակ դաշտը։*

*Մուսա լեռը գտնվում է պատմական Անտիոքից շուրջ 20 կմ դեպի արևմուտք։ Անցյալում այն կոչվել է Սվեդիա[1], Մուսա դաղ[2], Ջեբել Մուսա[3], Մուսա լեռ[4]։*

*Մուսա լեռան հյուսիսային լանջերին, արևելքից արևմուտք սփռված են եղել հայկական վեց գյուղերը՝ Բիթիաս, Հաջի-Հաբիբլի, Յողուն-Օլուկ, Խդըր-Բեկ, Վակըֆ և Քաբուսիե։*

*Ազգագրական այս խմբի կազմավորման ու նրա բնակիչների անցյալի մասին մատենագրական հավաստի աղբյուրներ մեզ գրեթե չեն հասել։ Օտար և հայ պատմիչների վկայությունները հիմք են տալիս ենթադրելու, որ դեռևս Տիգրան Մեծի տիրապետության ժամանակ (մ. թ. ա. I դ.) հայերը բնակվել են այդ վայրերում։ Հետագայում, տարբեր տեղերից պարբերաբար կազմակերպված գաղթերի շնորհիվ, նրանք համալրվել ու համախմբվել են Մուսա լեռան շուրջը[5]։ Գյուղախմբի ավելի քան 6 հազար բնակիչներն զբաղվել են երկրագործությամբ, շերամապահությամբ, մեղվաբուծությամբ։ Ունեցել են տարրական դպրոցներ ու եկեղեցիներ[6]։*

*XIX դարի երկրորդ կեսին բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ոգին բռնկել էր նաև արևմտահայությանը, որը նույնպես հեծում էր սուլթանական բռնապետության լծի ներքո։ Սան-Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովների հետ կապված հույսերը չէին արդարացել։ Զեյթունի ապստամբության ազատագրության ոգին նոր թափ էր ստանում։*

*Կ. Պոլսում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռուսաստանում և Կիլիկիայում կրթություն ստացած երիտասարդները Մուսա լեռ գալով ոչ միայն գրագիտություն էին տարածում, այլև պատմում էին այդ երկրներում կատարված իրադարձությունների մասին, սովորեցնում հայրենասիրական երգեր, ազատասիրության գաղափարներով լուսավորում մարդկանց մտքերը։ Նրանք իրենց նկատելի հետքերն են թողել մուսալեռցիների 1895 թ. և ապա 1909 թ. ազատագրական շարժումների վրա[7]։*

*Սուլթանական կառավարությունը 1915 թ. հուլիսի 13-ին հատուկ հրամանով հայերին պարտավորեցնում է յոթ օրվա ընթացքում գաղթել Սիրիայի անապատները։ Մուսալեռցիներն ընդդիմանում են ու չեն ենթարկվում կորստաբեր այդ հրամանին։ Նրանք անցնում են ինքնապաշտպանության։*

*Վերապրողները դեռ մինչև օրս հիշում են իրենց երդումը. «իս հուս ձննուձ իմ, հուս ա̈լէ բըր միռնէմ. իս չըմուրթօ յաասէր քիմը միռնիլ. թվունըը ծառիս գըմիռնէմ յաս դիղը, թաքէ մուհաջըր չը՛մըննօ»[8]։ Բողոքի և վրեժխնդրության զգացումը համակում է բոլորին. այր ու կին, մանուկ ու ծեր թողնելով իրենց ունեցվածքը, բարձրանում են Մուսա լեռան գագաթը՝ կռվով դիմադրելու թշնամու բազմահազար զորքերին։*

---

1 *Այդ վայրերում են գտնվում պատմական Սելևկիա քաղաքի ավերակները. «Սվեդիա» անվանաձևը (ըստ Տիգրան Անդրեասյանի) հնագույն այդ տեղանվան արձագանքն է։*

2 *Թուրքերեն՝ Մուսա լեռ։*

3 *Արաբերեն՝ Մուսա լեռ։*

4 *Մուսա լեռան տեղանվան մասին մի շարք ավանդություններ են զետեղված սույն ժողովածուի մեջ։*

5 *Տե՛ս* Ա. Ալպոյաճյան, *Պատմություն հայ գաղթականության, Ա. Գահիրե, 1941, էջ 105—121 և* Տ. Անդրեասյան, *Սվեդիայի բարբառը, Երևան, 1967, էջ 291—351։*

6 *Տե՛ս* Մ. Գուշագճյան, *Պատմություն Անտիոքի և շրջակայքի, «Հուշամատյան Մուսա լեռան», Բեյրութ, 1970, էջ 4—48։*

7 *Այդ ժամանակաշրջանն արտացոլող մի քանի երգեր տեղ են գտել սույն ժողովածուի մեջ։*

8 *«Ես այստեղ եմ ծնվել, այստեղ էլ կմեռնեմ. ես չեմ գնա սուրուկի պես մեռնելու. հրացանը ձեռքիս այստեղ կմեռնեմ, բայց գաղթական չե՛մ դառնա» (Թարգմ. կազմողի)։*



Մուսա լեռան համայնապատկերը

Հիսուներեք օր համառ մարտեր են մղվում։ Այդ ընթացքում չորս լուրջ ճակատամարտ է տեղի ունենում, սակայն հակառակորդը նոր ուժեր է կենտրոնացնում ըմբոստ հայերին պատժելու համար։ Մուսալեռցիների պարենն ու զինամթերքը սպառվում են, ճարահատյալ նրանք, լեռան ծովահայաց կողմից օգնություն ստանալու հույսով, սպիտակ սավաններն իրար են միացնում՝ վրան կարմիր խաչի փրկության նշանով և պարզում լեռան լանջին։ Միջերկրական ծովով անցնող ֆրանսիական մարտանավերը նկատում են նրանց, փոխադրում Պորտ Սաիդ, որտեղ նրանք պատսպարվում են բրեզենտյա վրանների տակ[9]։

Պորտ Սաիդում անցկացրած չորս տարիների ընթացքում մուսալեռցիներն իրենց ապրուստը հայթայթում են զանազան արհեստներով (սանրագործություն, գդալագործություն, կոշկակարություն, գորգագործություն, ասեղնագործություն)։

Վերապրողները դեռ հիշում են, թե ինչպես իրենք անապատի հրաշեկ ավազների վրա գրելով են սովորել մեսրոպյան տառերը, մինչև որ մի քանի վրանների տակ սկսել է գործել Հայկական բարեգործական ընդհանուր միության հիմնած Սիսվան վարժարանը՝ կից որբանոցով ու հիվանդանոցով։

Երիտասարդները զինվորագրվում են ֆրանսիական բանակին՝ ստեղծելով Արևելյան լեգեոնը։ «1918 թ. սեպտեմբերի 19-ին, տրվեցավ գրոհի հրամանը։ Հայ կորյունները՝ մուսալեռցի, քեսաբցի, սեբաստացի, խարբերդցի, արաբկիրցի, չընգուշցի, հուսենիկցի և Հայաստանի այլ վայրերեն, մեկ-մեկ հրեղեն պեգասներ դարձած, արհամարհելով ամեն վտանգ ու նույնիսկ մահը, հաղթանակի և սրբազան վրեժի տեսլականով... պարտություն են մատնում գերմանո-թուրքական զորքերին, Պաղեստինի մոտ նվաճում Արարայի փայլուն հաղթանակը»[10]։ Հայ լեգեոնականներն արժանանում են ֆրանսիական ու անգլիական հրամանատարության դրվատանքին և պատերազմի ավարտից հետո, 1919 թ. հուլիսից մուսալեռցիներին հնարավորություն է տրվում վերադառնալ Մուսա լեռ, որտեղ տուն չգտան, այլ կիսակործան ու հրկիզված պատեր։ Հեշտ չէր նաև հաղթահարել սովն ու վարակիչ հիվանդությունները։ Սկսեցին վերականգնել ավերվածը, մշակել խոպանացած այգիները։

Քսան տարվա խաղաղ կյանքից հետո 1939 թ. հուլիսի 23-ին, երբ անգլո-ֆրանսիական դիվանագիտությունը Թուրքիային է շնորհում Ալեքսանդրեթի նահանգը (այդ թվում նաև Մուսա լեռը), մուսալեռցիների համար այլևս անհնար է դառնում այդ վայրերում ապրելը. նրանք հարկադրված մեկընդմիշտ թողնում, հեռանում են իրենց հարազատ Մուսա լեռից։

Տուն ու տեղից զրկված հազարավոր մուսալեռցիներն սկզբում փոխադրվում են Պասիտի բացատը (Սիրիայի ծովափին), ապա, մեծ տառապանքով ու կորուստներով, Լիբանանի կիսանապատը՝ Այնճար։ Նրանք իրենց աշխատասիրությամբ, տոկունությամբ ու անընկճելի կամքով այստեղ ևս կառուցում են դպրոցական շենք, եկեղեցի, մշակում ու մրգաստանների են վերածում այդ անջրդի տարածությունները։

1946—47 թթ. զանգվածային հայրենադարձության տարիներին մուսալեռցիների ավելի քան

9 Մուսալեռցիների հերոսամարտին է նվիրված Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» հանրահռչակ վեպը։
Այդ հերոսամարտի դրվագների, խիզախ մարտիկների և Դամլաչըրքում ընկած տասնութ հերոս-նահատակների մասին են սույն ժողովածուի մեջ տեղ գտած մի շարք պատմահայրենասիրական երգերը։

10 Տե՛ս Հ. Թոռոսյան, «Հուշամատյան...», էջ 435։



Մուսալեռցիների տեղափոխումը ֆրանսիական նավերի վրա



Մուսալեռցիների պորտսաիդյան վրանաքաղաքը

70%-ը, շուրջ 700 ընտանիք Այնճարից և 50 ընտանիք այլ վայրերից (Բեյրութից, Դամասկոսից, Սուրից), ներգաղթում են Սովետական Հայաստան։ Նրանք բնակություն են հաստատում Երևանի շրջակա արվարձաններում, էջմիածնում, Հոկտեմբերյանում, Աշտարակում, Արարատում, Լենինականում, Կիրովականում, Նոյեմբերյանում, Ղափանում և այլուր։

Սովետական Հայաստանի կառավարության շնորհիվ և հայրենադարձ մուսալեռցիների ներկայացուցչական կազմկոմիտեի ջանքերով, Երևանից էջմիածին տանող ճանապարհին հիմնադրվել է Մուսալեռ ավանը։ Ավանի բարձունքին կառուցված հուշարձանի շուրջ ամեն տարի սեպտեմբերին, մուսալեռցիները հավաքվում են երգ ու պարով, ավանդական հարիսայով, Հայաստանի ու աշխարհի տարբեր ծայրերից ժամանած բազմաթիվ հյուրերով, նշում հերոսամարտի հաղթանակի օրը, դհոլ-զուռնայի հնչյուններով հաստատում իրենց ինքնությունը նոր Մուսալեռան վրա, հայրենի հողի վրա։

Միջերկրականի բարեխառն ափերից դեպի կլիմայական շեշտակի փոփոխություններ ունեցող հայրենիք. միայն աշխարհագրական տեղաշարժ չէր հայրենադարձների համար։ Այն նախ և առաջ ենթադրում էր հասարակական նոր, սոցիալիստական կյանքի պայմաններ։

Հայրենիքում, հակառակ ետպատերազմյա տընտեսական ծանր վիճակին, յուրաքանչյուր ընտանիքին հողամաս հատկացվեց՝ անվերադարձ նյութական վարկերով ու նպաստներով, որպեսզի նրանք բնակարաններ կառուցեն։ Տարիների ընթացքում փոխվել են այս թաղամասերի դիմագծերը։ Մեկ հարկանի տները դարձել են երկու և ավելի հարկեր ունեցող բարեկարգ, գողտրիկ առանձնատներ՝ օժտված ժամանակակից հարմարություններով։ Մուսալեռցիները, առնչվելով հայրենի տեղաբնիկների ու նախկինում տարբեր վայրերից գաղթած վերաբնակիչների հետ աշխատանքային, հարևանական ու խնամիական կապերով, աստիճանաբար ընտելանում են նոր բարքերին ու ապրելակերպին։

Հայրենաբնակ մուսալեռցիների մշակութային արդի կյանքի պատկերը պարզելու համար, այստեղ փորձ է արվում ցույց տալ նրանց կրթական ու մասնագիտական զարգացման հնարավորությունները։ Հանգամանքներ, որոնք սոցիալական ու սեռատարիքային տարբեր խմբերի մոտ տարբեր ձևով են արտահայտվում, նայած թե նրանք ե՞րբ և որտե՞ղ են սկսել իրենց գիտակցական գործունեությունը։

Հայրենադարձության տարիներին մուսալեռցիների կրթական մակարդակն զգալի կերպով ցածր է եղել։

Գաղափար կազմելու համար, ստորև բերում ենք տարիքային մի քանի խմբերի կրթական մակարդակի ցուցանիշները 1946—1947 թթ. հայրենադարձության տարիներին.

| Ծննդյան տարեթվեր (Տարիքային խումբ) | Անգրագետ | Տարրական կրթություն | Վեցամյա կրթություն | Միջնակարգ կրթություն | Բարձրագույն կրթություն |
|---|---|---|---|---|---|
| 1911—1920 (25—35) | 42% | 40% | 6% | 12% | |
| 1901—1910 (35—45) | 54% | 41% | 4% | 0,8% | 0,2% |
| 1890—1900 (45—55) | 82% | 18% | | | |

Հաշվումներից պարզվում է[11].

1890—1900 թթ. ծնվածների (45—55 տարեկան) 82%-ն անգրագետ էր, իսկ 18%-ն ուներ տարրական կրթություն։

1901—1910 թթ. ծնվածների (35—45 տարեկան) 54%-ն անգրագետ էր, 41%-ը տարրական կրթություն էր ստացել գյուղերում կամ Պորտ Սաիդի վրանաքաղաքի Սիսվան վարժարանում, 4%-ը սովորել էր մինչև վեցերորդ դասարան, 0,8%-ն ուներ միջնակարգ կրթություն, իսկ 0,2%-ը՝ այսինքն միայն մեկը, ինժեների բարձրագույն կրթությունն ստացել էր Փարիզում։

1911—1920 թթ. ծնվածների (25—35 տարեկան) 42%-ն անգրագետ էր, 40%-ն ուներ տարրական, իսկ 60%-ը՝ վեցամյա կրթություն, 12%-ն Այնճարում կամ այլ քաղաքներում ստացել էր միջնակարգ կրթություն, որից 1,5%-ը հայրենիքում շարունակում է իր միջնակարգ մասնագիտական կրթությունը, իսկ 0,5%-ն՝ ընդունվում բարձրագույն ուսումնական տարբեր հաստատություններ։

---

11 Ժողովրդագրական ուսումնասիրության հաշվումները կատարել ենք շուրջ 7 հազար հայրենաբնակ մուսալեռցիների վիճակագրական տվյալների (մինչև 1970 թ.) հիման վրա։
Ավելի մանրամասն տե՛ս Վ. Գ. Սվազլյան, Հայրենաբնակ մուսալեռցիների սոցիալ-մասնագիտական զարգացումը Սովետական Հայաստանում (դոկտ. Յու. Վ. Հարությունյանի էտնոսոցիոլոգիական մեթոդով), ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի 1982 թ. գիտական նստաշրջանի թեզիսներ, Երևան, էջ 30։

# ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ




պատրաստեց՝ Հ. Գ. ՍԱՐԳՍՅԱՆ

Հետագա տարիներին արդեն նկատվում է վիճակի բեկում՝ սովորողների զանգվածային հոսք դեպի ցերեկային ու գիշերային դպրոցները։ Անգրագետների թիվը կտրուկ կերպով նվազում է, որը բացատրվում է մեծահասակ անգրագետների համար կազմակերպված հատուկ խմբակների (լիկկայաններ) գործունեությամբ։ Դպրոցականների թիվը հասնում է չաշխատողների (տնային տնտեսուհիներ, թոշակառուներ և սովորողներ) ընդհանուր թվի 55%-ին, իսկ միջնակարգ և բարձրագույն մասնագիտական հաստատություններում սովորողներինը՝ ուսումնարաններում՝ 3%, բուհերում՝ 5%-ի։

Մասնագիտությունների բաշխումը ևս կատարվել է ըստ անհատների կարողության։ Աշխատողների ընդհանուր քանակի շուրջ 30%-ը (հողագործներ) ընդգրկվում են գյուղատնտեսության մեջ, իսկ ովքեր տոհմային ավանդույթով հմտացել էին գորգագործությանն ու ջուլհակությանը (աշխատողների 35%-ը) ներգրավվում են Երևանի մետաքսի, Լենինականի ու Կիրովականի տեքստիլ տրիկոտաժի ֆաբրիկաներում։

Եթե անցյալում Մուսա լեռում գրեթե չկար արդյունաբերական բանվոր (բացառությամբ մեկ վարպետի), ապա հայրենիքում մասնագիտական զարգացման շնորհիվ, արդյունաբերական-գործարանային բանվորների քանակը հասնում է 18%-ի, հասարակական ձեռնարկություններում միջնակարգ կրթությամբ ծառայողներինը՝ 6%-ի։ Հաշվումների մեջ առանձնացվել են հատուկ մասնագիտական կրթություն ունեցողները, որոնցից միջնակարգ մասնագիտությամբ՝ 6%, բարձրագույն մասնագիտական կրթությամբ 5%՝ տեխնիկական ու հասարակական գիտությունների գերակշռությամբ։

Այժմ նրանց շատ ընտանիքներում չորսից հինգ հոգին ունեն բարձրագույն կրթություն։

Ներկայումս մուսալեռցիների մեջ կան տասից ավելի գիտության թեկնածուներ, վաստակավոր ուսուցիչներ, մշակույթի գործիչներ և այլն, որոնք, հայրենիքում կրթություն ստանալով, իրենց գիտելիքները ներդնում են նրա հետագա առաջընթացին։

Բերված թվերը հստակ պատկերացում են տալիս հայրենադարձ մուսալեռցիների մտավոր ու մասնագիտական զարգացման օբյեկտիվ և սուբյեկտիվ հնարավորությունների մասին, խոսում սոցիալիստական հասարակարգում կրթություն ստանալու կամ կրթական իրավունք ունենալու այն բացառիկ մեծ նշանակության մասին, որից զուրկ է եղել օտարության մեջ իր գոյությունը պահպանած ավագ սերունդը։

Այսպես, մասնագիտական զարգացման, գիտատեխնիկական հարաճուն ինֆորմացիայի, հասարակական արտադրական հարաբերությունների բովում, աստիճանաբար ձևավորվում ու առնականանում է հայրենադարձ մուսալեռցիների սոցիալական նոր որակը, հոգեգիտակցական աշխարհն ու մտածելակերպը։ Նրանց մշակութային զարգացումն ու հասարակականորեն հարմարվելու կարողությունը, ընթանալով մերձեցման ուղղությամբ, դառնում է հայ ժողովրդի ազգային ինքնահաստատման բաղադրիչ մասը։

* * *

Պատմական-հասարակական նշված հանգամանքների անմիջական ազդեցությամբ պետք է բացատրել անցյալի մշակութային արժեքների, այդ թվում նաև բանահյուսական ավանդների փոխակերպման և նորի ձևավորման փաստերը։

Տարիների ընթացքում գրառելով Հայաստանից կտրված այս հատվածի հոգևոր մշակույթի բեկորները, միաժամանակ փորձել ենք պարզել ազգագրական այս ինքնատիպ խմբի ավանդապահության մակարդակը, կապված ժամանակագրական ու աշխարհագրական տեղաշարժերի, սոցիալ-պատմական պայմանների, բանասացների սեռատարիքային հատկանիշների ու հոգեբանական խնդիրների հետ։

Մուսա լեռան բանահյուսության գրառումն ու հետազոտումը մինչև այժմ հատուկ և ամբողջական ուշադրության չի արժանացել[12]։

---

12 Սփյուռքահայ մուսալեռցի մտավորական Տիգրան Անդրեասյանն իր «Սվեդիայի բարբառը» ուսումնասիրության մեջ (1967) հիշատակել է մի շարք ասացվածքներ ու ոճեր։

1970 թ. Բեյրութում հրատարակված «Հուշամատյան Մուսա լեռան» ստվարածավալ հատորում որոշ տեղ է հատկացվել նաև ժողովրդական բանահյուսությանը. Մարտիրոս Գուշակճյան, Ժողովրդական երգն ու պարը Մուսա լեռան մեջ, էջ 221—227 և Զարա Իսկենդերյան, Մուսա լեռան առածներն ու ասացվածքները, էջ 228—245։

1973 թ. Բեյրութում լույս է տեսել Սոնա Զեյթլյանի «Մուսա լեռան ժողովրդական հեքիաթներ» գիրքը, որտեղ հեղինակը, նկատի ունենալով իր նախնիների հարազատ բարբառի խրթինությունը, հեքիաթները ներկայացրել է արևմտահայ գրական լեզվով ու ենթարկել գեղարվեստական վերամշակման, որը և հեղինակի անհատական դրոշմն է թողել ժողովրդական նյութերի վրա։

*Ներկա ժողովածուն առաջին փորձն է գիտական ամփոփ տեսքով ներկայացնելու Սովետական Հայաստանում բնակվող մուսալեռցիներից անաղարտորեն գրառված ավանդական բանահյուսության գրեթե բոլոր ժանրերի նմուշները*[13]։

*Մուսալեռցիների բանահյուսական նյութերի գրառումները հիմնականում կատարվել են ժամանակագրական երկու փուլերում.*

Առաջին փուլն *ընդգրկում է 1955—60 թթ., երբ մեր անձնական նախաձեռնությամբ գրի ենք առել մուսալեռցիների բանահյուսական նմուշները։*

Երկրորդ փուլը *1972—78 թթ., երբ նյութերը գրի ենք առել Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի կողմից կազմակերպված անհատական գիտարշավների ընթացքում։ Ընդ որում, յուրաքանչյուր փուլում համաժամանակյա (սինխրոնիկ) կերպով գրի է առնվել սեռատարիքային տարբեր խմբերի բանասացներից, բանահյուսական տարբեր ժանրերի ստեղծագործությունները։*

*Հետևաբար ստացվել են երկու տարաժամանակյա շերտեր։ Ակամայից ստեղծված այս ընդմիջումը, անշուշտ, ենթադրում է ժողովրդագիտական նյութերի բավականաչափ կորուստ։ Սակայն, մյուս կողմից, քսան-քսանհինգ տարվա ընթացքում, մենք հնարավորություն ենք ունեցել գրի առնել բանասացների մեկից ավելի սերունդների (նախ՝ ծնողների, ապա՝ որդիների ու թոռների) հաղորդած նյութերը, ուսումնասիրել ժամանակի ու տարածության մեջ, համեմատել միմյանց հետ և գաղափար կազմել ազգագրական այդ խմբի ժողովրդական մշակույթի վերընթացի՝ դիախրոնիայի մասին*[14]։

*Ուսումնասիրությունը կատարված է բանասիրության դոկտոր Իսիդոր Լևինի մշակած քանակական վերլուծման հայկական կոդային համակարգով։ Ըստ այդմ, Մուսա լեռան ժողովրդական բանահյուսության մեր գրի առած յուրաքանչյուր միավոր մշակված, քարտագրված ու կոդավորված պահվում է ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվի* FS *ֆոնդում (Վերժինե Սվազլյանի ֆոնդ) 0001—3309 լցահամարների տակ։*

*Բանահյուսական նյութը գրի առնելիս, նախ նկատի է առնվել նյութի ծագման տեղավայրի հարցը։ Այն հնարավորություն է տվել պարզելու, թե հոգևոր ի՞նչ հարստություն է հասցվել հայրենիք, ի՞նչքանով է այն պահպանվել կամ փոփոխվել, բանահյուսական ժանրերից ո՞րոնք են կենսունակ, ավանդապահության ի՞նչպիսի մակարդակ ունեն, ո՞րտեղից է սկսվել փոփոխությունը՝ բարբառի՞ց, թե՞ բանահյուսությունից։*

*Այդ նպատակով, գրառումների ժամանակ օժանդակ հարցերի միջոցով բանասացից տեղեկացել ենք, թե ժողովրդական տվյալ ստեղծագործությունն ինքն ո՞ւմից է լսել ու սովորել, այսինքն՝ ո՞րտեղից և ի՞նչ ճանապարհով է այդ նյութը հասել մինչև մեր օրերը։ Բանասացներից շատերն այդ հարցին պատասխանել են. «Դա̈ղը-մա̈րէն լսուծ իմ» (ծնողներից եմ լսել) կամ «Բա̈բգÖնց խուսք ի» (պապական խոսք է) և այլն։ Օրինակ՝ ժողովրդական շատ հեքիաթներ, առակներ ու զրույցներ մեզ հաղորդած Գրիգոր Գյոզալյանը հաճախ էր վկայակոչում իր հորեղբայր Սերոբ ամիին կամ զվարճախոս Ղավլաղենց պառավին։ Հետևաբար, տվյալ նյութի ծագման վայրը (Քաբուսիե) չի համընկել գրառման վայրին (Երևան), սակայն այդ ցուցանիշը մեզ գաղափար է տվել նյութի անցած ճանապարհի ու նրա ավանդապահության մակարդակի մասին։*

*Առաջին ժամանակահատվածում գրառումները կատարվել են Երևանի արվարձաններում (Շահումյան, Մալաթիա, Նոր Արեշ, Արաբկիր, Նոր Զեյթուն, Սարի թաղ, Վարդաշեն, Նորագավիթ) և էջմիածնի ու Հոկտեմբերյանի շրջաններում։*

*Երկրորդ ժամանակահատվածը, նախորդ տեղավայրերից բացի, ընդգրկել է նաև նորերը՝ Աշտարակ, Արարատ, Լենինական, Կիրովական, Ղափան։*

*Եթե առաջին ժամանակահատվածում գրառումները կատարվել են հիմնականում ծագումով Հաջի-Հաբիբլի, Բիթիաս և Քաբուսիե գյուղերից վերաբնակված մուսալեռցիներից, ապա երկրորդ ժամանակահատվածում՝ նաև Յողուն-Օլուկ, Խըդըր-Բեկ գյուղերի վերաբնակիչներից ու նրանց հաջորդող սերունդներից։ Թեպետ երկրորդ, առավել երկարատև ժամանակահատվածում, ավելի շատ տեղավայրեր են ընդգրկվել, սակայն գրառումների արդյունքը և՛ քանակով, և՛ որակով եղել է ավելի նվազ, քան առաջին ժամանակահատվածում։*

*Երևույթի պատճառն ուսումնասիրելու համար դիմենք փաստերի։ Կցված* առաջին աղյուսակում *ներկայացված է նյութերի ընդհանուր պատկերը, ըստ ժամանակահատվածների։ Ձախից՝ առաջին սյունյակում* (F) *նշված է կոդային արտահայտությունը, որը պայմանականորեն համապատասխանում է ժողովրդագիտական նյութի տեսակին։*

---

[13] *Տե՛ս* Վ. Գ. Սվազլյան, *Մուսա լեռան հայ ժողովրդական բանահյուսությունը, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1969, № 1։*

[14] См. *В. Г. Свазлян.* О диахронии и синхронии в мусалерском фольклоре. Тезисы докладов. В кн.: Всесоюзная сессия, посвященная итогам полевых этнографических и антропологических исследований 1976—1977 гг., Ереван, 1978, стр. 225—226.

Աղյուսակ 1

Բանահյուսական նյութերի քանակը ըստ գրառման ժամանակահատվածների

| Նյութի տեսակը ըստ կոդիֆիկատորի | Նյութի անվանումը | I փուլ 1955-60թթ. | II փուլ 1972-78թթ. | Ընդամենը |
|---|---|---|---|---|
| F 7 0. 1 | Գիտական ինֆորմացիա լեզվի մասին | 23 | 32 | 55 |
| F 7. 0. 2 | Բառային կազմ | 545 | 167 | 712 |
| F 7. 0. 3 | Տոպոնիմիկա | 22 | 4 | 26 |
| F 7. 1. 3 | Օրհնանք, մաղթանք, երդում | 57 | 6 | 63 |
| F 7. 1. 5 | Անեծք | 62 | 9 | 71 |
| F 7. 2. 1 | Առած-ասացվածք | 502 | 176 | 678 |
| F 7. 2. 5 | Շուտասելուկ | 3 | 1 | 4 |
| F 7. 2. 8 | Դարձված | 248 | 52 | 300 |
| F 7. 3. 0 | Հանելուկ | 33 | 6 | 39 |
| F 8. 1 | Հուշապատում | 29 | 18 | 47 |
| F 8. 2 | Ավանդություն | 3 | 8 | 11 |
| F 8. 3 | Առակ | 8 | 4 | 12 |
| F 8. 4 | Հեքիաթ | 18 | 14 | 32 |
| F 9. 1 | Վիպական երգ | 1 | 5 | 6 |
| F 9. 5 | Խաղիկ | 69 | 16 | 85 |
| F 9. 6 | Երգ | 18 | 4 | 22 |
| F 9. 6. 9 | Մանկական և օրորոցային երգեր | 5 | 1 | 6 |
| | Ընդամենը | 1646 | 523 | 2169 |

Աղյուսակ 2

Նյութերի և բանասացների սեռի փոխհարաբերությունը

| Նյութի տեսակը ըստ կոդիֆիկատորի | Ընդամենը | Բանասացի սեռը | | | |
|---|---|---|---|---|---|
| | | f | | m | |
| | | Նյութի քանակը | Նյութի տոկոսը | Նյութի քանակը | Նյութի տոկոսը |
| F 7. 0. 1 | 55 | 5 | 10 % | 50 | 90 % |
| F 7. 0. 2 | 712 | 212 | 30 % | 500 | 70 % |
| F 7. 0. 3 | 26 | 6 | 23 % | 20 | 77 % |
| F 7. 1. 3 | 63 | 50 | 80 % | 13 | 20 % |
| F 7. 1. 5 | 71 | 50 | 70 % | 21 | 30 % |
| F 7. 2. 1 | 678 | 178 | 26 % | 500 | 74 % |
| F 7. 2. 5 | 4 | 4 | 100 % | — | — |
| F 7. 2. 8 | 300 | 50 | 17 % | 250 | 83 % |
| F 7. 3. 0 | 39 | 19 | 49 % | 20 | 51 % |
| F 8. 1. | 47 | 17 | 36 % | 30 | 64 % |
| F 8. 2. | 11 | 5 | 45 % | 6 | 55 % |
| F 8. 3. | 12 | 3 | 25 % | 9 | 75 % |
| F 8. 4. | 32 | 9 | 28 % | 23 | 72 % |
| F 9. 1. | 6 | — | — | 6 | 100 % |
| F 9. 5. | 85 | 70 | 83 % | 15 | 17 % |
| F 9. 6. | 22 | 20 | 90 % | 2 | 10 % |
| F 9. 6. 9 | 6 | 6 | 100 % | — | — |
| Ընդամենը | 2169 | 704 | 33 % | 1465 | 67 % |

Հաջորդ սյունակում նշված են բանահյուսական այն բոլոր նյութերը, որոնք ընտրությամբ զետեղված են ժողովածուի մեջ, ինչպես նաև բանասացների հաղորդած տարբեր բնույթի պատմաաշխարհագրական, լեզվաբարբառային և այլ բնույթի տեղեկությունները, որոնք այս կամ այն չափով նպաստել են մեր ուսումնասիրությանը։

Նյութերի բազմազանությունը պայմանավորված է եղել մեր հատուկ նպատակադրումով՝ գրի առնել այն ամենը, ինչ հնարավոր է եղել փրկել կորստից։

Աղյուսակում արտահայտված երկու փուլերից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է համաժամանակյա (սինխրոնիկ) գրառումների մի առանձին ժամանակահատված, որը բնութագրվում է այդ ընթացքում գրառված տարբեր նյութերի ընդհանուր քանակով։

Գրառված նյութերը կազմում են՝

Առաջին փուլում *(1955—60 թթ.) 1646 միավոր*

Երկրորդ փուլում *(1972—78 թթ.) 523 միավոր*

Երկու փուլերի տարաժամանակյա (դիախրոնիկ) համեմատական ուսումնասիրությունից պարզվում է, որ ժամանակի հետ զուգընթաց (20—25 տարում) ժողովրդագիտական նյութի քանակը զգալի չափով նվազել է (գրեթե 68%-ով)։

Նախորդի տրամաբանական շարունակությունն է Երկրորդ աղյուսակը: Այստեղ բանահյուսական յուրաքանչյուր ժանրի նյութերի կենցաղավարման և բանասացների սեռերի տոկոսային հարաբերություններից պարզվում է, որ բանահյուսական նյութերը հաղորդել են երկու սեռի ներկայացուցիչներ (կին՝ f, տղամարդ՝ m), ընդ որում, նյութի 33%-ը բաժին է ընկել՝ կին, իսկ 67% տղամարդ բանասացներին։

Այս հանգամանքն ավելի ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրության ենք ենթարկում ոչ միայն բանահյուսական նյութը, այլև նրան առընթեր բանասացների մասին գրառված կենսագրական տվյալները։ Պարզվում է, որ բանասացները եղել են սոցիալական տարբեր խավերի ներկայացուցիչներ՝ հողի աշխատավորներ, բանվոր ծառայողներ, նաև հատուկենտ մտավորականներ։ Խորամուխ լինելով նրանց սեռային առանձնահատկությունների մեջ՝ պարզվում է, որ ծավալուն հեքիաթների, զրույցների, սոցիալական սուր հագեցվածություն ունեցող առակների և մանավանդ պատմահայրենասիրական, զենքի կոչող խրոխտ երգերի կրողները հիմնականում եղել են տղամարդիկ։ Կանայք, կապված լինելով առօրյա կենցաղին ու հոգսերին, նրանց հոգուն ավելի հարազատ է հնչել կենցաղային ու զավեշտական բնույթի փոքր զրույցները, անեծք-օրհնանքները, օրորոցային, մանկական ու ծիսական, ինչպես նաև մեր միջնադարյան հայրեններն ու լալյաց երգերը հիշեցնող, տարագրության ու աքսորի ճամփաներին ստեղծված ժողովրդական երգերը։

Երրորդ աղյուսակը գաղափար է տալիս երկու ժամանակահատվածներում գրառված նյութի քանակի և բանասացների սեռատարիքային առանձնահատկությունների փոխհարաբերության մասին։ Երկու փուլերի նյութերի քանակական ցուցանիշները համեմատության մեջ են տրված բանասացների զույգ սեռերի տարիքային խմբերի հետ։ Եթե առաջին փուլում ունեցել ենք 54 բանասաց (33 կին, 21 տղամարդ), ապա երկրորդ փուլում ընդամենը 26 բանասաց (16 կին, 10 տղամարդ)։ Քսանքանհինգ տարվա ընթացքում նվազել է ոչ միայն բանահյուսական նյութերի քանակը, այլև բանասացների թիվը՝ մոտ 40%-ով։

Ինչպես երևում է աղյուսակից, առաջին փուլում բանահյուսական նյութի կրողներն ընդգրկել են տարիքային գրեթե բոլոր խմբերը (II—VII, այսինքն՝ 17—69 տարեկան)։ Եվ իրոք, եթե մեր գրառումների սկզբնական շրջանում, թեպետ ոչ

Աղյուսակ 3

Նյութի և բանասացների սեռատարիքային փոխհարաբերությունները

| Փուլերը | Գրառման տարեթիվը | Նյութի քանակը | Բանասացի սեռը | Տարիքը | Տարիքային խումբը 8—16 I | 17—19 II | 20—29 III | 30—39 IV | 40—49 V | 50—59 VI | 60—69 VII | 70—79 VIII | 80—ավելի IX | Ընդամենը | Տոկոսային հարաբերությունը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| I փուլ | 1955—1960 թթ. | 1646 | f | | — | 1 | 3 | 4 | 6 | 9 | 10 | — | — | 33 | 61 % | 54 |
| | | | m | | | | 1 | 3 | 4 | 6 | 7 | — | — | 21 | 39 % | |
| II փուլ | 1972—1978 թթ. | 523 | f | | | | | | 1 | 3 | 5 | 6 | 1 | 16 | 62 % | 26 |
| | | | m | | | | | | | 2 | 2 | 4 | 2 | 10 | 38 % | |
| | Ընդամենը | 2169 | | | | | | | | | | | | | | 80 |

դյուրությամբ, բայց, այնուամենայնիվ, մեզ հաջողվում էր բանահյուսական նյութեր գրի առնել Մուսա լեռում ծնված ու ապրած ավագ, միջին և մասամբ նույնիսկ կրտսեր սերնդի ներկայացուցիչներից, որոնք տակավին հիշում ու խոսում էին իրենց բավական խրթին բարբառով, ապա մեր գրառումների երկրորդ ժամանակահատվածում վիճակն այլ էր. բանահյուսական նյութի կրողներըն աղյուսակում արտահայտվում են VI խմբից (այսինքն՝ 50 տարեկանից սկսած), բացառություն էր կազմում միայն մեկը՝ Ալմաստ Դավիթյանը (V խումբ), որն իր ստացած լեզվագրական բարձրագույն կրթության շնորհիվ, լավ էր տարբերում բարբառի առանձնահատկությունները, և մեր նպատակը հասկանալով, հատուկ իրենց բարբառով էր վերարտադրում մորից ու հորից լսած բանահյուսական նյութերը։

Երկրորդ փուլում, արդեն մեծ դժվարությամբ ու երկար փնտրտուքներից հետո միայն մեզ հաջողվել է գտնել հատուկենտ տարեց մարդկանց, որոնք, բնիկ մուսալեռցի լինելով, բանահյուսական նյութերը հիշում էին ու պահպանում իրենց բարբառը, սակայն այն էլ զգալի աղճատումներով (այլ բարբառների, գրական լեզվի և ռուսերենի նորամուծումներով)։

Երկրորդ փուլում հներից շատերն արդեն չկային, ոմանք ծերացել էին՝ մթագնված հիշողությամբ։ Հետևաբար, շատ հաճախ օժանդակ հարցերի շնորհիվ, հազիվ է հնարավոր եղել նրանցից դուրս կորզել բանահյուսական որևէ պատառիկ։

Եթե առաջին փուլում գրի է առնվել առավելապես երկար, հրաշապատում հեքիաթներ, այնպիսի շնորհալի ու օժտված բանասացներից, ինչպիսիք էին կույր Հովհաննես Դուդակլյանը, Սերոբ Գյոզալյանը, Սարգիս Խարիկյանը և ուրիշներ, ապա երկրորդ փուլում այդ այլևս անհնար էր։ Նախորդ վարպետ հեքիաթասացներից մնացել էր միայն մեկը։ Այդ 95-ամյա ծերունուն խնդրեցինք վերհիշել անցյալում իր պատմած հեքիաթներից որևէ մեկը։ Նա փորձեց հիշել, սկսեց պատմել, սակայն նոր պատումն ստացվեց խիստ կցկտուր ու մնաց անավարտ։ Բանասացն այլևս չկարողացավ հիշատակել անցյալում իր պատմած հրաշապատում հեքիաթներին հատուկ ավանդական սկիզբը. «գըգինու, չըգինու»[15], չօգտագործեց պատմողական նախակին բանաձևերը. «Ուցն էր բիրդէն, ծուկը էր թիվէն չըր գարիր յաղիղը ուկիլ, տօն չը՞ւց իգիր»[16] կամ՝ «ա̈շկէյնը յարիվէն գուա̈սիր՝ տօն մի՝ ձիթի. իս բըր ձիթիմ»[17]։ Չկային նաև ժողովրդական բանվոր խոսքը համեմող պատկերավոր ու թևավոր արտահայտությունները, փոխաբերություններն ու համեմատությունները։ Դեպքերն ու դեմքերը հաճախ իրար էին խառնվում և աղճատվում՝ անհասկանալի դարձնելով բովանդակության տրամաբանական ու հաջորդական զարգացումը։

Այսպիսով, երկրորդ փուլում գրեթե անհնար դարձավ գրի առնել ընդարձակ, ամբողջական ու գեղարվեստորեն կատարյալ հրաշապատում հեքիաթներ, փոխարենը մեզ հաղորդում էին առավելապես կենցաղային, հակիրճ զրույցներ, անեկդոտներ, երգերի պատառիկներ, բանաձևային քարացած ձևեր՝ առած-ասացվածքներ ու դարձվածներ։

Այստեղ անհրաժեշտ է անդրադառնալ նաև բանահյուսական նյութի կենցաղավարման պայմաններին։ Եթե դարասկզբին, Մուսա լեռում մարդիկ ավանդական ձևով հավաքվել են օջախի շուրթը կամ բաց երկնքի տակ՝ թթաստաններում. երկար, հրաշապատում հեքիաթներ ասել ու լսել, իսկ 1950-ական թվականներին, մեր գրառումների ժամանակ դեռևս մարդիկ հավաքվում էին, լսելու Հ. Դուդակլյանի պատմածները, ապա քսան տարի անց պատկերը բոլորովին այլ էր։ Նախկին մուսալեռցիները նոր ձևով էին կազմակերպում իրենց ժամանցը։ Կինոն, ռադիոն և մանավանդ հեռուստացույցը նոր որակ էին հաղորդել նրանց երբեմնի ավանդական բարքերին։ Զարգացել էր մարդանց ճաշակը, փոխվել մշակութային պահանջարկի մակարդակը։

Տարբեր ժամանակահատվածների նյութի և բանասացների խրոնոսոցիոլոգիական համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարեց մարդկանց հետ միասին նվազում է նաև ակտիվ ավանդապահության մակարդակը։

Ժամանակի և տարածության մեջ ուսումնասիրելով մեր գրառած նյութերը՝ նկատում ենք, որ փոփոխություններ են կատարվել ոչ միայն բանահյուսական նյութերի ու բանասացների քանակական ցուցանիշների մեջ, այլև ժանրերի ներսում և ժանրերի միջև զգացվում են քայքայման, տարրալուծման ու փոխակերպման որոշ երևույթներ։

1958 թ. Սերոբ Գյոզալյանից գրի էինք առել մի շարք բարոյախոսական առակներ։ Քսան տարի անց հանդիպելով նրա եղբորորդուն՝ Գրիգոր Գյոզալյանին, խնդրեցինք վերհիշել իր հորեղբոր պատմած առակները։ Նա վերարտադրեց գրեթե նույն նմուշները, բայց արդեն խիստ սեղմ՝ երկխոսական առածների ձևով։ Դժվար է ասել, թե արդ-

15 Լինում է, չի լինում։

16 Օձն իր պորտով, ձագն իր թևով չէր կարող այստեղ գալ, դու ինչպե՞ս եկար։

17 Աղջիկն արևին ասում է՝ դու մի՛ ծաթիր. ես պիտի ծաթեմ։

յոք իր նախորդն իմացե՞լ է այդ երկխոսական առածները ևս, բայց փաստն այն է, որ հաջորդ սերունդն այլևս չէր պահպանում նախորդի պատմածը ժանրային նույն ձևով[18]։

1959 թ. Սիմա Դուդակլյանը հաղորդել էր հետևյալ շուտասելուկը.

Ծօյը՝ ձուվը,
Ջուփը՝ գրագէն,
Դափաղիցէն խուփը,
Թըղ չառնի դրուգը,
Դըքըր ուկօ վուգը,
Պուրը ուկօ ուդուգը[19]։

Քանի տարի անց նրա դուստրը՝ Դշխուհին, իր մոր հանգավոր ասելուկից վերհիշեց միայն սկզբի երկտողը, աննկատորեն կատարելով ոչ միայն բովանդակության կրճատում, այլև՝ ժանրային փոփոխություն՝ շուտասելուկը վերածելով առածի։

Փոխակերպումներ նկատելի են նաև բանահյուսական նյութի բուն բովանդակության մեջ։ Օրինակ աստվածաշնչային Մովսես մարգարեի ավանդությունը, որն աղերսվում է «Մուսա լեռ» տեղանվան ծագումնաբանության հետ, մեր գրառած հետագա տարբերակներից մեկում գեղարվեստորեն արտացոլված են արդեն նոր ժամանակների Մուսա լեռան հերոսամարտի 1915 թ. դեպքերն ու հասարակական-քաղաքական պայմանները։

Այլ կարգի երևույթներ են կատարվել նաև երգերի մեջ.

Յաըձա խնթրիցո՛,
Այարում ծիօն հիձնիլո՛,
Ջէբէլ Մուսա ուրթիլո՛,
Թըլնէն թօզ քաղիլո՛,
Ունդըլգինէն ունդըլգ քաղիլո՛[20]։

Եթե այս երգը պորտասիդյան կյանքի (1915—1919 թթ.) արձագանքն է, երբ երազ էր Մուսա լեռ վերադառնալը, ապա ավելի ուշ՝ 1940-ական թվականներին, Այնճարում ապրող մուսալեռցին նույն երգի հենքի վրա, նոր ժամանակների նոր երազներ է փայփայել.

Յաըձա խնթրիցո.
Այարում ծիօն հիձնիլո՛,
Հայաստան ուրթիլո՛,
Մըկտաբ ուրթիլո՛,
Խիլք ու շնուրք սուրվիլո՛,
Միր վատանը շինցընիլո՛[21]։

Նախկին երգը, պատմական նոր շերտավորումներ ստանալով, դարձել է նոր տարբերակ։

Փոփոխություններ նկատվում են նաև աշխարհագրական տեղավայրերի, բուսական ու կենդանական աշխարհի անվանումների ասպարեզում։

Մուսալեռցիների բանահյուսության մեջ մշտապես առկա է եղել Մուսա լեռան բնաշխարհի ընդգրկումը (հիշատակվել է Մուսա լեռն իր հայաբնակ գյուղերով, Միջերկրական ծովը, Կարաչայ գետը, Շըբըլղէյն աղբյուրը, Թեկղեի քարանձավը, Հովհան Ոսկեբերանի մենարանը և այլն)։ Հասարակական-պատմական իրադարձությունները, մուսալեռցիների երկրեերկիր թափառումները ևս իրենց գեղարվեստական անդրադարձն են գտել նրանց բանավոր ավանդության մեջ (Կիլիկիա, Փայաս, Ադանա, Դամլաջըք, Դեր-Զոր, Պասիտ, Այնճար), իսկ վերջին շրջանում գրառված բանահյուսական նմուշներում գործողությունները կատարվում են Հայաստանում՝ Փարաքարում, Ջվարթնոցում և այլուր։ Եթե անցյալի բանահյուսական նյութերի մեջ հիշատակվում էին Մուսա լեռան բնաշխարհի մերձարևադարձային բույսերն ու պտուղները (գուլգուս, սումախ, ձիթապտուղ, արմավ, նարինջ), ապա հետագայում արդեն՝ ծիրան, դեղձ, խաղող։

Կյանքի նոր պայմաններն ազդել են նաև բանահյուսական կերպարների ու իրողությունների վրա։ Եթե առաջին փուլի նյութերի մեջ հիշատակվում էին արաբներ, դերվիշներ, մոլլաներ, ապա հետագայում հանդես են գալիս հարևանը, ուսուցիչը, ընկերը, որոնք գործ ունեն ոչ թե ուղտերի քարավանների կամ գրաստների սայլի, այլ՝ մեքենայի, տրակտորի ու ինքնաթիռի հետ։

Այդպես, ավանդական բանահյուսության քանակական նվազումն իր հետ բերել է որոշակի որակական փոփոխություններ։ Աշխարհագրական միջավայրի, սոցիալ-տնտեսական պայմանների և ժամանակի փոփոխություններն ուղղակի կամ անուղղակի կերպով ազդել են ազգագրական այս

18 Այդ կարգի նյութերը ժողովածուի մեջ զետեղված են առածների բաժնում։

19 Զուկը՝ ծովը,
Տապակը՝ կրակին,
Փակեցին խուփը,
Թող չառնի պադը,
Մինչև գա վաղը,
Բարով գա ուտողը։

20 Աստուց խնդրեցի,
Թամբած ձի հեծնել,
Գնալ Մուսա լեռ
Թզենուց թուզ քաղել,
Ընկուզենուց ընկույզ քաղել։

21 Աստծուց խնդրեցի.
Թամբած ձի հեծնել,
Հայաստան մեկնել,
Դպրոց հաճախել,
Խելք ու շնորհք սովորել,
Մեր հայրենիքը շենցնել։

ինքնատիպ խմբի բարքերի ու սովորույթների, բարբառի ու բանահյուսության ավանդապահության մակարդակի վրա։ Նրանց խրթին բարբառը աստիճանաբար քայքայվելով դարձել է ավելի մատչելի ու գրականախառն։

Ուշագրավ է տարբեր ժամանակահատվածներում, հասարակական-պատմական տարբեր պայմաններում, տարբեր սերունդների ավանդապահության և ընկալունակության չափանիշներն իրենց բանավոր խոսքի՝ հարազատ բարբառի նկատմամբ։

Մուսալեռցիները պատմական իրադարձությունների բերումով դարեր շարունակ ապրել են թուրքերի, ալավի-թաթերի, արաբների ու ազգային այլ խմբերի հարևանությամբ և, բնականաբար, նրանց բանավոր խոսքը կրել է որոշ ազդեցություններ ու փոխազդեցություններ[22]։ Դարասկզբին ծայր առած նրանց աստանդական կյանքի պայմանները՝ գաղթերը, տեղահանություններն ու տարագրությունն ավելի են արագացրել այդ երևույթի ընթացքը, սակայն բուն բարբառն իր քերականական կառուցվածքով մնացել է կայուն, քանի որ օտարության մեջ մայրենի բարբառը եղել է նրանց ինքնության, հայապահպանման միակ միջոցը։ Եթե անցյալում որոշիչ գործոնը ժամանակն էր, իսկ օտար շրջապատի ներգործությունը՝ երկրորդական պայման, ապա Հայաստան տեղափոխված բարբառի համար նոր միջավայրի ազդեցությունն է դարձել որոշիչ, իսկ ժամանակը՝ երկրորդական պայման։

Հայրենիքում, ինչպես արդեն տեսանք բերված թվերից, համատարած գրագիտության ու մասնագիտական զարգացման, գրական, համազգային պետական լեզվի հեղինակավոր ու անդիմադրելի ներգործության շնորհիվ (մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության անմիջական ազդեցություն), պատմականորեն կարճ ժամանակամիջոցում, ընդամենը երեք տասնամյակի ընթացքում, նրանց խրթին բարբառն աստիճանաբար տեղի է տվել արդի գրական հայերենին (կամ տվյալ տեղավայրի բարբառին)։

Ներկայումս մուսալեռցի ընտանիքներում նկատելի է բանավոր խոսքի բազմաշերտայնություն. մեծահասակները դեռևս միմյանց հետ շարունակում են խոսել իրենց բարբառով, միջին տարիքի մարդիկ՝ գրականախառն, իսկ Հայաստանում ծնված, ուսում ստացած նոր սերունդին գրեթե անհասկանալի է մեծերի, բնիկ մուսալեռցիների բարբառը։ Նա տիրապետում է արդի գրական հայերենին, ռուսերենին և օտար լեզուներին։ Բանահյուսական անցյալի ավանդներից ևս գրեթե ոչինչ չի պահպանում, բայց փոխարենը հարստանում է ազգային ու համաշխարհային մշակույթի արժեքներով։

Անկախ բարբառի այս կորստից, մեր հավաքած բանահյուսական նյութերը, որոնք գրառվել են հիմնականում բարբառախոս ավագ սերնդի ներկայացուցիչներից, պատկանում են Մուսա լեռան բարբառի երեք ճյուղավորումներին[23]։

Բարբառային այս տարբերությունները թեպետ զգալիորեն բարդացրել են մեր գրառած նյութերի լեզուն, խախտել ուղղագրական միօրինակությունը, սակայն այդուհանդերձ, աշխատել ենք հավատարիմ մնալ հնչյունային ու բարբառային հիշյալ յուրահատկություններին և ընդունված գիտական տառադարձությամբ, ըստ հնարավորին, անաղարտորեն վերարտադրել բանասացների հաղորդած ժողովրդական խոսվածքը։

Մուսա լեռան բարբառի առանձնահատկությունները բավական ինքնատիպ են ու բազմազան, սակայն մենք մեր մասնագիտական նպատակից դուրս ենք համարում բարբառագիտական հարցերի մեջ խորամուխ լինել[24]։

---

22 Մուսալեռցիների ստեղծած թեկուզ թուրքերեն ժողովրդական ստեղծագործությունները, որոնք մեզ պատահել են, չեն վրիպել մեր ուշադրությունից և ենթարկվել են գրառման։

23 Մուսա լեռան (Սվեդիայի) բարբառն ունեցել է իր ներքին ստորաբաժանումները՝

ա. Հաջի-Հաբիբլի և Բիթիաս գյուղերն ունեցել են բարբառային ընդհանրություններ,

բ. Յողուն-Օլուկը, Խըդր-Բեկն ու Վակըֆը՝ իրենց առանձնահատկությունները,

գ. Քաբուսիեն՝ իրենը։

Հնչյունային ու քերականական այս յուրահատկություններն անասելիորեն դժվարացրել են ժողովածուի բանահյուսական նյութերի գրառումը, մանավանդ որ գրառողն ազգագրական տվյալ խմբին չի պատկանել։

24 Մուսա լեռան բարբառին առաջին անգամ անդրադարձել է Հր. Աճառյանն իր «Հայ բարբառագիտություն» գրքում, էմինյան ազգագրական ժողովածու, հ. 8, Մոսկվա— Նախիջևան, 1911։

Այնուհետև մուսալեռցի Ի. Ա. Մարտիրյանը «էջմիածին» ամսագրում տպագրել է «Ջեբել Մուսայի բարբառը» հոդվածաշարը (1952, № 3, 1953, № 2, 6, 7, 8)։

Ար. Ղարիբյանն այդ բարբառի մասին գրել է «Հայ բարբառագիտություն» ձեռնարկում (1953), ապա՝ «Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ» գրքում (1958)։

Մուսա լեռան բարբառի ամբողջական ուսումնասիրությանն էր ձեռնարկել ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, մուսալեռցի Ալ. Փաշայանը (տե՛ս նրա «Սվեդիայի բարբառի մասին», «Պատմա-բանասիրական հանդես», 1953, № 4, «Սվեդիայի բարբառի ձևաբանությունը», ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1964, № 9), սակայն վաղահաս մահվան պատճառով այն մնացել է թերավարտ։

Լեզվի ինստիտուտը 1967 թ. լույս է ընծայել սփյուռքահայ մուսալեռցի մտավորական Տ. Անդրեասյանի «Սվեդիայի բարբառը կամ Քիստինըգի լեզուն» աշխատությունը։

19[illegible]0 թ. Բեյրութում լույս տեսած «Հուշամատյան Մուսա լեռան» ստվարածավալ հատորում տեղ է գտել Հ. Թորոսյանի «Ակնարկ մը Մուսա լեռան (Սվեդիո) գավառաբարբառին վրա» հոդվածը։

Մուսա լեռան երեք ենթաբարբառները գիտական բազմահատկանիշ ուսումնասիրության են ենթարկված Գ. Բ. Ջահուկյանի «Հայ բարբառագիտության ներածություն» (1972) գրքում։

* * *

*Ներկա ժողովածուի մեջ բանահյուսական նյութերը խմբավորված ու համակարգված են հետևյալ երեք մեծ բաժիններով.*

*I.* **Վիպական բանահյուսություն** *(հեքիաթներ, առակներ, անեկդոտներ, ավանդություններ, սնահավատական զրույցներ)։*

*II.* **Քնարական բանահյուսություն** *(խաղիկներ, ծիսակենցաղային, հայրենասիրական, զինվորի և տարագրության երգեր)։*

*III.* **Բանաձևեր** *(առած-ասացվածքներ, հանելուկներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, դարձվածներ)։*

*Հաշվի առնելով Մուսա լեռան բարբառի խրթինությունը, նպատակահարմար գտանք բարբառային բնագրերին կցել նաև գրական արևելահայերենով զուգահեռ թարգմանությունները։*

*Ժողովածուն ունի* **բառարան**, *ուր տրված են բնագրերում եղած դժվար հասկանալի բարբառային և օտարամուտ բառերի բացատրությունները՝ մեծ մասամբ մեկնաբանված ու ճշտված տարբեր բանասացների կողմից։*

**Ծանոթագրությունների** *մեջ տեղեկությունները հաղորդված են ըստ ժողովածուի երեք հիմնական բաժինների, յուրաքանչյուր բաժնի ներսում առանձին ու շարունակական համարակալումներով։ Ծանոթագրությունների մեջ Մուսա լեռան հեքիաթների մոտիվները զուգորդված են ինչպես հայկական այլ ազգագրական շրջանների, այնպես և մերձավոր ու հեռավոր ժողովուրդների հեքիաթների համանման մոտիվների, ըստ Անտի Աարնեի համակարգի համարակալման։ Ծանոթագրությունների աղյուսակում տրված են նաև բանահյուսական նյութի ծագման, գրառման վայրը, տարեթիվը և բանասացի անուն-ազգանունը։*

*Ժողովածուին կցված են նաև վարպետ բանասացների կենսագրական տվյալներն իրենց լուսանկարներով, ձայնագրությունների հիման վրա կատարված տասը երգերի նոտագրություններ, ռուսերեն ու անգլերեն ամփոփումներ, ինչպես նաև Մուսա լեռան և Սովետական Հայաստանում մուսալեռցիների բնակեցումը պատկերող ուղեցույց սխեմատիկ քարտեզ։*



Մուսա լեռան հերոսամարտին նվիրված հուշարձանը Էջմիածնի շրջանի Մուսալեռ ավանում
Ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան   Լուսանկար՝ Պ. Պողոսյանի

# I

# ՎԻՊԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

## Ա. ՀԵՔԻԱԹՆԵՐ

### 1 (1). ԿՏՐԷՋ ԴՂԱՆ

Գիգինօ, չիգինար քայր մը իլան ախպար մը։ Անա̈նք մաննան չէրին իրինց օմրին, ուզիցէն նօր պան մը հաղընիլ յաշխարէն, առէն զիրինց բիշարը, հիձան ծիանղէն, իլան կա̈ցէն։

Շա̈ռ կա̈ցէն, քէչ կա̈ցէն, հասան թարլէ մը միչ։ Արէվը միրից, իշիցէն չուրս ուէն, գիտան դօն մը գօ։ Ախպարը ա̈սաց.— Քրօ՛գ, ուրթանք իդօ դօնը բաղզէնք իրգօնը։

— Աղվա̈՛ր,— ա̈սաց քայրը,— ուրթանք բաղզէնք։

Իլան կա̈ցէն, մդան դօնը, իշիցէն դավ մընըսդած ի։ Դղան քիշից գթօրը, դավէն կլօխը գդրից։

Դավը ա̈սաց.— Մի մալէ գիխէ։

— Էմ մարը գէս զ̊ալթ մը պիրած է,— ա̈սաց ախպարը։

Դավը սաղցիցավ։ Քայրը իլան ախպարը պա̈ռվիցան զալաք ադինէն, իշիցէն չարըր գօ յախշար ուդէլա̈—խմէլա̈ պա̈նիր, ալայը յադ դանը միչը գօ։

Ախպարը ա̈սաց.— Քրօ՛գ, հօս աբրէնք,— աղվա̈ր է։

— Աբրէնք,— ա̈սաց քայրը։

— Դավը յօ՞ բըր թա̈ղինք,— ա̈սաց ախպարը,— դուրսցի թը գաթա̈ղինք կէ, ճօր գըտիբա՝ յիդ գըսադնօ։

Քայրը իլան ախպարը դյուշինմիշ իդան, դավը թա̈ղիցէն տարղուգ ադէ մը միչ, քէ ճօր չըտիբէր է։

Ամըն օր ախպարը ավճըլըխ գուրթիր, չէյրաննա գըսբա̈նէր։ Գուկիր իդօն, գաղէրին, գախմէրին, վախտ գանցնէրին։

Ուր մ'ալէ քայրը ըլվուսք բըր ինէ, բըր ըլվացվա. էնքէնքը դա̈շա̈մըշ իդավ. «Յօ՞ ըլվուսք ինիմ, ըլվացվէմ, էմ ախպարը գուկօ, գըդիտնօ զէս՝ ալըբէ»։

Կնա̈ց յան ուղան, քէ դավը թա̈ղած էրին, ըլվուսք իրօց, ըլվա̈ցվիցավ, ճօրը ֆիտից, կիդէնը թրճիցավ խա̈ղը, դավը սաղցավ, ջանիլ տարծավ. ա̈սաց.— Հէ՛յ ա̈շկէ՛ն, հօրը քէ ախպարը գէս սբանից, թը կիդիր, իս չըբըր սաղնէր է։ Ջէս բըր առնիս, թը չը՝ բըր սբանիմ զքէ։

### 1(1). ԿՏՐԻՃ ՏՂԱՆ

Լինում է, չի լինում մի քույր ու եղբայր։ Նրանք գոհ չէին իրենց կյանքից, ուզեցին մի նոր բան հասկանալ աշխարհից, վերցրին իրենց պաշարը, հեծան ձիերը, ելան գնացին։

Շատ գնացին, քիչ գնացին, հասան մի արտի։ Արևը մայր մտավ, նայեցին չորս կողմ, տեսան մի տուն կա։ Եղբայրն ասաց.— Քույրի՛կ, գնանք այդ տանը գիշերենք։

— Լա՛վ,— ասաց քույրը,— գնանք պառկենք։

Ելան գնացին, մտան տունը, տեսան մի դև է նստած։ Տղան քաշեց թուրը, դևի գլուխը կտրեց։

Դևն ասաց.— Մի հատ էլ զարկ։

— Իմ մայրն ինձ մի անգամ է (աշխարհ) բերել,— ասաց եղբայրը։

Դևը սատկեց։ Քույրն ու եղբայրը ման եկան բոլոր սենյակները, տեսան աշխարհում ինչքան ուտելու—խմելու բան կար, բոլորն այդ տանը կար։

Եղբայրն ասաց.— Քույրի՛կ, այստեղ ապրենք լավ է։

— Ապրե՛նք,— ասաց քույրը։

— Դևին ո՞ւր պիտի թաղենք,— ասաց եղբայրը,— եթե դրսում թաղենք, ջուր կդիպչի՝ կկենդանանա։

Քույրն ու եղբայրը մտածեցին, դևին թաղեցին դատարկ սենյակի մեջ, որ ջուր չդիպչի։

Ամեն օր եղբայրը գնում էր որսի, եղնիկներ սպանում։ Գալիս տուն, ուտում, խմում, ժամանակ էին անցկացնում։

Մի օր էլ քույրը լվացք պիտի աներ, պիտի լողանար. ինքն իրեն մտածեց. «Ո՞ւր լվացք անեմ, լողանամ, եղբայրս կգա կտեսնի՝ ամոթ է»։

Գնաց այն սենյակը, որտեղ դևին էին թաղել, լվացք արեց, լողացավ, ջուրը թափվեց, գետինը թրջվեց, դևը կենդանացավ, ջանհելացավ, ասաց.— Հե՛յ, աղջի՛կ, երբ քո եղբայրն ինձ սպանեց, կարծում էր, թե ես չպիտի կենդանանամ։ Ինձ պիտի առնես, թե չէ՝ քեզ կսպանեմ։

Ա̈շկէնը ա̈սուց.— Ամա̈ն, գաւնէմ զքէ։

Առէն զմէ զմիգալը։ Շա̈դ վախըտ անցավ, քէչ վախըտ անցավ, ա̈խպարը խա̈բար չիր քալըը չա̈ շինուձ իր. կա̈ղդö̈գ գուաբրէրին ա̈շկէնը իլան դավը յախպուրը իրմինը։

Ա̈շկընէն գղա մը իղավ, ա̈սուց. «Զա̈ բըր շինիմ համօ»։ Առավ զադ չուճօխը փախթէց ջան-գախը ա̈սուց. «Էմ ախպարը ցավօխիրդ է, գուրժավ մթնօլը էմ ախպուրը ադուձ ջամփաքը զըանէմ զէ, էմ ախպարը գառնէ զըպիրի զէ»։ Ջուճօխը խռէր ջամփուքը։ Մթնօյը ախպարը գիսավ զէ, առավ իպիր զէ իդօն, իդö̈ր զէ էր քալըը։

Ախպարը շա̈դ միամէդ իր, ա̈սուց.— Գրö̈՛գ, չուճօխ մը դ̊դօ ջամփուքը, արէ ադօթինք ասդը-ձա, քէ զէթ թըղ ըննօ, չուճօխը զըրիհիս։

Ըրգö̈քը բարաբուր ադօթիցէն ասդձա. ա̈շկընէն զէթ իղավ։ Գայրը ա̈սուց.— Ըհը՛, զէթ իղավ ընծէ, ախպա̈ր, չուճօխը զըբիհիմ։

Շա̈դ վախըտ անցավ, քէչ վախըտ անցավ չուճօխը գա̈մուց-գա̈մուց մինձավ։

Դավը ուր մը ա̈սուց տայ գնայը.— Տըղաս կաղդö̈գ նադո̊ւր բըր ա̈բրէնք մինք։

Գնայը ա̈սուց.— Զա̈ շինինք։

Դավը ա̈սուց.— Բէ ախպարը զըսբանինք, սարբաստ զա̈բրէնք։

Դավը իլան ա̈շկէնը գուխուսէրին, չուճօխը յադ դիղը խա̈դիր իր, չարը զօսէրին, գուհա̈սգնիր զէ։

Դավը ա̈սուց.— Ուց մը զընում, տրուցէ տը-ռունը յաթաբան զընիմ, քէ ախպարը զուկօ, զը-խա̈ձիմ զէ, զըմիռնա։

Ջուճօխը զադ ալայը լսից, կնա̈ց քըռէն դ̊ար-շա՝ յան վախըըը քըռէն զուկիր։ Քէչ մը հիյի-ցուվ, քռէն իգիք, ա̈սուց տայ չուճօխը. — Հաս չա̊ զուշինիս։

Ջուճօխը ա̈սուց.— Քռա̈, շա̈լգի զէս։

Քռէն շա̈լգից չուճօխը, խռէր յուսէն, տրուցէ տռնին անցուն, ուցը զիսավ զչուճօխը, յիդ քիշվի-ցավ տռնէն, անցուն իդօն, նսդուն։

Ղէր ուր մ'ալէ դավը ա̈սուց.— Աս տըղաս չի-ղավ։

Ա̈շկէնը ա̈սուց.— Զա̈ շինինք։

Դավը ա̈սուց.— Տօն հիվընտցէ, ա̈սու քէ ախ-պուրը՝ հիվանտ իմ, քէ ախպարը զա̈ռի՝ չա̈ զու-զիս։ Ասու՝ փլուն զէղ թարլէն միչը դօն մը գօ, դունը պö̈յը հավըզ գօ, չուրս տէն թա̈վըր-թա̈վըր ձա̈ղգընա գօ։ Գա̈սիս քէ ախպուրը՝ յադ ձա̈ղգը-նին իլան ճö̈ր զըպիրիս ընծէ, զըճաղնում։ Բէ ախպարը հուն բաղըը ուրթօ, ձա̈ղգընէն հա̈ղը զըհիղըդօ՝ խիլքը զըմա̈ղէ։ Իս յադ վախըտը զըն-նում մինձ ձöւկ մը, քէ ախպարը յիրգէնքը զը-հա̈նիմ, զիսկիմ կիդէնը, զըմիռնա։ Ազա̈ր թը քէ

Աղջիկն ասաց. —Ամա՛ն, կառնեմ քեզ։

Առան իրար։ Շատ ժամանակ անցավ, քիչ ժամանակ անցավ։ Եղբայրը տեղյակ չէր, որ քույրն ինչ է արել. եղբորից գաղտնի էին ապրում աղջիկն ու դևը։

Աղջկան մի տղա ծնվեց, ասաց. «Ի՞նչ պիտի անեմ հիմա»։ Վերցրեց երեխային փաթաթեց բարուրի մեջ, ասաց. «Իմ եղբայրը սրտացավ է, կգնամ իր եկած ճամփին կդնեմ սրան, եղբայրս կվերցնի, կբերի»։ Երեխային դրեց ճամփի վրա։ Մթանը եղբայրը տեսավ այն, վերցրեց բերեց տուն, հանձնեց քրոջը։

Եղբայրը շատ միամիտ էր, ասաց.— Քույրի՛կ, մի երեխա գտա ճանապարհին, արի աղոթենք աստծուն, որ քեզ կաթ լինի, երեխային պահես։

Երկուսը միասին աղոթեցին աստծուն. աղջըկան կաթ եղավ։

Քույրն ասաց.— Ըհ՛ը, ինձ կաթ եղավ, եղբա՛յր, երեխային կպահեմ։

Շատ ժամանակ անցավ, քիչ ժամանակ անցավ, երեխան կամաց-կամաց մեծացավ։

Դևը մի օր կնոջն ասաց.— Մինչև ե՞րբ այսպես թաքուն պիտի ապրենք։

Կինն ասաց.— Ի՞նչ անենք։

Դևն ասաց.— Եղբորդ կսպանենք, ազատ կապրենք։

Դևն ու աղջիկը որ խոսում էին, երեխան այդտեղ ներկա էր, ինչ որ ասում էին, հասկանում էր։

Դևն ասաց.— Օձ կդառնամ, դրսի դռան վերևը կթաքնվեմ, երբ եղբայրդ գա, կխայթեմ, կմեռնի։

Երեխան այդ բոլորը լսեց, քեռու գալու ժամանակ նրան ընդառաջ գնաց։ Մի քիչ սպասեց, քեռին եկավ, երեխային ասաց.— Այստեղ ի՞նչ ես անում։

Երեխան ասաց.— Քե՛ռի, շալակիր ինձ։

Քեռին շալակեց երեխային, դրեց ուսին, դըռսի դռնից անցան, օձը տեսավ երեխային, դըռնից ետ քաշվեց, անցան տուն, նստեցին։

Մյուս օրը դևն ասաց.— Այսպես չեղավ։

Աղջիկն ասաց.— Ի՞նչ անենք։

Դևն ասաց.— Դու հիվանդացիր, ասա եղբորդ՝ հիվանդ եմ, քո եղբայրը կասի՝ ի՞նչ ես ուզում։ Ասա՝ այսինչ տեղ արտի միջին մի տուն կա, տան բակում ավազան կա, չորս կողմը տեսակ-տեսակ ծաղիկներ։ Կասես եղբորդ՝ այդ ծաղիկներից և ջրից կբերես, կլավանամ։ Երբ եղբայրդ այնտեղ գնա, ծաղիկների բույրն առնի՝ կուշաթափվի։ Ես այդ ժամանակ մի մեծ թռչուն կդառնամ, եղբորդ կբարձրացնեմ երկինք, կգցեմ

ախպարը թը չըմիռնէր, ղէս թը գըրրանէ, գա̈ռխս էր՝ գէմ կլօխը իլան ա̈կէն թըղ պիրէ քէ: Կլխէն իղը գըհանիս, քէ ուդիլէն միչը գըանիս. Իս գըսադնում, հէնը քիմը գընէնում: Ա̈կէն իղը քէ ախպարը զուգիրցնիս, քէ ախպարը գադի գէ՝ մէսը միզ տէն, ա̈սգա̈րը միզալ տէն գընէնա:

Զուճօխը զալաք ա̈սուձնէն լսից, մէդքը բիհից:

Զուճօխը հիվընտցուվ: Բռէն իգիք իդօն, դիտուվ չուճօխը հիվունտ ի, ա̈սուց.— Դդա̈ս, չվա̈ հիվունտ իս, չա̈ գունու քէ:

Զուճօխը ա̈սուց.— Բռա̈, յավը մուրթօ:

— Զըմ ուրթօ, դդաս,— ա̈սուց քռէն,— իս քուվըդ րըր ճիօմ դըկըր ճուդնուս:

Զուճօխը ուզից քռէն յըրմինը սուրվիլ, չուց գունիդին: Քռէն սուրվըցօգ չուճօխը նիդիլ: Ուր մա̈լէ չուճօխը ա̈սուց.— Բռա̈, ադվըրցօ, ճադցօ:

Յադ վախըտը չուճուխէն մարը սօդ հիվունտ իդուվ, ա̈սուց ախպուրը.— Կնա̈, ընծէ ձա̈ղա̈զ իլան ճօր պէր ֆլուն հավըզին:

Ախպարը գնա̈ց: Զուճօխը տռուվ գթվունզը, քռէն յիդիտղահը կադդօզ կնա̈ց:

Ախպարը հասուվ հավըզը, ճօր խմից, ձա̈ղզընէն հա̈դ քիշից, խիլքը մադից ինգուվ: Զուճօխը համան քռէն արէն վըրքը մդուվ: Իգիք ծա̈կը քռէն րըր վիրցընիր, չուճօխը նիդից, գծա̈կը սադգիցուվ: Իլուվ չուճօխը գքռէն իմցօց քռէն իմցուվ, ա̈սուց.— ԵՒս չա̈ պուն ի:

Զուճօխը ա̈սուց.— Մինձ ծա̈կ մը նիդիցա, հայդէ, քիլէ ուրթունք իդօն:

Առէն ձա̈ղա̈զ ճօր, կացէն: Սադգուձ ծօկը հա̈դ ճմա̈ց: Հասուն իդօն, ճօր իլան ձա̈ղա̈զը ախպարը իդօր քուրը:

Համան չուճօխը նըքցէ մդուվ, ա̈սուց.— Յամա̈, մինձ ծա̈կ մը նիդիցա:

Մարը ա̈սուց.— Ցօ՞ զօ:

Զուճօխը ա̈սուց.— Ձա̈ղա̈զը պիրունք յան դիղը զօ:

Մարը ա̈սուց.— Ուշէդ-ուշէդ կլօխը իլան ա̈կէն ընծէ գըպիրիս:

Զուճօխը կնա̈ց, ծա̈կօն գլօխը իլան ա̈կէն գըդրից, իդօր էր մարը: Նսդուվ դդան մուրը քավը, իշից մարը չա գուշինէ: Մարը հանից կլխէն իղը, իտէր լէր ուդիլա̈ն միչը, ա̈կէն իղը հա̈նից, իտէր յախպուրը ուդիլա̈ն միչը: Զուճօխը դիսուվ զալալը, պուն չա̈սուց:

Իկիք քռէն, նսդուն ուդիլա̈ բըր ուդին, չուճօխը ա̈սուց.— Քռա̈, մուդի, մամայը ընծի ծիթըրդօղ թըղ պիրէ:

Մարը ա̈սուց.— Ըսկօ ուդիլա̈ն, գէր:

գետին, կմեռնի: Եթե եղբայրդ չմեռնի, ինձ սպանի, նրան կասես՝ գլուխս և պոչս թող բերի քեզ: Գլխի յուղը կհանես, քո ճաշի մեջ կդնես. ես կկենդանանամ, առաջվա պես կլինեմ: Պոչի յուղը եղբորդ կկերցնես, եղբայրդ այն կուտի՝ միսը մի կողմ, ոսկորը մի կողմ կդնա:

Երեխան այս բոլոր ասածները լսեց, միտքը պահեց:

Երեխան հիվանդացավ: Քեռին տուն եկավ, տեսավ երեխան հիվանդ է, ասաց.— Տղա՛ս, ի՞նչու ես հիվանդ, ի՞նչ ունես:

Երեխան ասաց.— Քե՛ռի, որսի մի՛ գնա:

— Չե՛մ գնա,— ասաց քեռին,— ես քո մոտ կմնամ մինչև առողջանաս:

Երեխան ուզեց քեռուց սովորել, թե ինչպես են կրակում: Քեռին նրան կրակել սովորեցրեց: Մի օր էլ երեխան ասաց.— Քեռի՛, լավացա, առողջացա:

Այդ ժամանակ երեխայի մայրը սուտ հիվանդ ձևացավ, եղբորն ասաց. —Գնա՛, ինձ ծաղիկ և ջուր բեր այսինչ ավազանից:

Եղբայրը գնաց: Երեխան վերցրեց հրացանը, գաղտնի գնաց քեռու հետևից:

Եղբայրը հասավ ավազանին, ջուր խմեց, ծաղիկների հոտն առավ, ուշքը գնաց, ընկավ: Երեխան իսկույն քեռու վերարկուի տակ մտավ: Թռչունն եկավ, որ քեռուն վերցնի, երեխան կրակեց, թռչունը սատկեց: Երեխան վեր կացավ, քեռուն ուշքի բերեց, քեռին արթնացավ, ասաց.— Սա ի՞նչ բան է:

Երեխան ասաց.— Մի մեծ թռչուն խփեցի, դե՛, արի գնանք տուն:

Վերցրին ծաղիկն ու ջուրը, գնացին: Սատկած թռչունը մնաց այնտեղ: Հասան տուն, ջուրն ու ծաղիկը եղբայրը տվեց քրոջը:

Երեխան իսկույն մտավ ներս, ասաց.— Մայրի՛կ, մի մեծ թռչուն խփեցի:

Մայրն ասաց.— Որտե՞ղ է:

Երեխան ասաց.— Մեր բերած ծաղկի տեղումն է:

Մայրն ասաց.— Շուտ գլուխն ու պոչը ինձ կբերես:

Երեխան գնաց, թռչունի գլուխն ու պոչը կտրեց, տվեց մորը: Տղան նստեց մոր մոտ, նայեց մայրը ինչ է անում: Մայրը հանեց գլխի յուղը, դրեց իր կերակրի մեջ, պոչի յուղը հանեց, դրեց եղբոր կերակրի մեջ: Երեխան այդ բոլորը տեսավ, բան չասաց:

Քեռին եկավ, նստեցին ճաշի, երեխան ասաց.— Քեռի՛, մի՛ ուտի, մայրիկն ինձ ձիթապտուղ թող բերի:

Մայրն ասաց.— Ահա ճաշը, կե՛ր:

Ջուճօխը լուցը բաշլից։ Մարը կնա̈ց ծիծըրդö՛ղ պիրիլ։ Համան չուճօխը լանգարը փիխից։ Մարը նսդուվ, ուդիլա̈ն գիրուվ, համան մէջը՝ միգ ուէն, ա̈սգա̈րը՝ միգ ուէն իղուվ։

Քռէն ա̈սուց.— Աս չա̈ պուն ի։

— Քռա̈, ծան մը՛ հանէ, հիկկէտ խալխսիցուվ։

Լսուձը հա̈ջա̈թից, քռէն համան իլուվ դղէն ջագդին իրա̈ւք.— Աըրէ՛ս, գդըէջ դղաս,— ա̈սուց։

Դղան իլա̈ն քռէն դայմա միգդիղ գաըրէրին։ Դղան քան գքռէն ավիլա գդըէջ իղուվ։ Ամըն ուր բարաբուր գուըլթէրին լավը։ Դղան ուր մը ա̈սուց քռէն.— Տօն իդոն գիցիր, Իս խոսր գուըլթում լավը։

Քռէն ա̈սուց.— Աղվա̈՛ր է, պա̈րէ ջամպուք, գնօ։

Դղան իլուվ կնա̈ց լավը, պառվիցուվ թարըը-նէն, իշից ճաղցուց քուր մը գօ, վիրցöգ գքուրը՝ իշից կիդնէն վըրքը դնվա գօ։ Իշուվ, իշից՝ քառ~սօն բղէնծ գօ դունը պöյը. յամըն բղէնծ մա̈կէ մը գօ, գրöգը գուվառա, ուդիլա̈ գուխփա։ Ցէստէն իշից, յէնսէն իշից մուրթ չիկօ։ Պառվիցուվ յու-դըննէն, դիսուվ մուրթ մը, ա̈սուց.— Ցասդիդը չա̈ գուշինիս։

Դունդիրը ա̈սուց.— Մինք քառսօն մէյ ինք, մթնօյը գուկուն։

Դղան հիյիցուվ։ Մթնօյը իգէն, դունդիրը ա̈~սուց.— Ամա̈ն, պուն չա̈սիք աս դղան, գդըէջ ի, մէ գըսբանէ։

Ինգըրդաքը ա̈ցէն.— Մէ ինգիր գինինք գէ։

Ադա̈նք հա̈րա̈մա̈ք էրին, ա̈ցէն տայ ադ դղան.
— Մէյ ինգիր գըննա̈ւս։

Դղան կանահատ իգիք։ Հա̈րա̈մա̈քը իրինց մին-ձը իրէն գէ։

Դղան ա̈սուց.— Իս գուըլթում, վա̈ղը գուկում։

Դղան իլուվ կնուց յէր քռէն քուվը, պուն չա̈-սուց։ Քանը ուր մը անցուվ, դղան ա̈սուց տայ քռէն.— Իս գուըլթում պառվիլ, յոթ ուրին գու-կում։

Քռէն ա̈սուց.— Պա̈րը ջամպուք, կնա։

Դղան կնա̈ց հա̈րա̈մուցը քովը։

Հա̈րա̈մա̈քը ա̈ցէն.— Իրգօնը թա̈քա̈վա̈րէն դօ-նը բըր ուրթունք, բադռինք։

Դղան ա̈սուց.— Իս չուըըր ամըր ինիմ, ա̈ն բըր ըննօ։

Հա̈րա̈մա̈քը խաբöլ իրէն գէ։

Գիշիրը իլուն կա̈ցէն քառսօն հիկկում, թա̈քա̈վա̈-րէն դօնր հասուն։ Դղան քառսօն խէջ առուվ խուէր դջիբը, ա̈սուց.— Ցիսու բուդր չվա գըքիշդէնք, իս գընիմ, թարախին գիշիմ՝ իդօն չա՞ գօ, ծև խա̈բար գուդօմ, խէջ գխսկիմ միգ-միգ գուկօք, ծան չըր-հանիք։

Երեխան սկսեց լաց լինել։ Մայրը գնաց ծի-թապտուղ բերելու։ Երեխան իսկույն ափսեները փոխեց։ Մայրը նստեց ճաշ կերավ, իսկույն միսը՝ մի կողմ, ոսկորը՝ մի կողմ գնաց։

Քեռին ասաց.— Սա ի՞նչ բան է։

—Քեռի՛, ձայն մի՛ հանի, հոգիդ ապատվեց։

Լսածը պատմեց, քեռին իսկույն վեր կացավ, տղայի ճակատը համբուրեց.— Ապրե՛ս, կտրիճ տղաս,— ասաց։

Տղան ու քեռին միշտ միասին էին ապրում։ Տղան քեռուց ավելի կտրիճ դարձավ։ Ամեն օր միասին գնում էին որսի։ Մի օր տղան ասաց քեռուն.— Դու տանը մնա, ե՛ս այսօր գնամ որսի։

Քեռին ասաց.— Լա՛վ, բարի ճանապարհ, գնա՛։

Տղան ելավ գնաց որսի, հանդում ման եկավ, տեսավ մի ջաղացքար, վերցրեց քարը, տեսավ գետնի տակ տներ կան։ Իջավ, տեսավ՝ տան բակում քառասուն պղինձ կա. ամեն մի պղնձի մեջ մի ոչխար կա, կրակը վառվում է, ճաշը եփվում։ Դես նայեց, դեն նայեց, մարդ չկար։ Ման եկավ սենյակներում, տեսավ մի մարդ, ասաց.— Այստեղ ի՞նչ ես անում

Տանտերն ասաց.— Մենք քառասուն հոգի ենք, երեկոյան կգան։

Տղան սպասեց։ Երեկոյան եկան, տանտերն ասաց.— Ամա՜ն, տղային բան չասեք, նա կտրիճ է, մեզ կսպանի։

Ընկերներն ասացին.— Մեզ ընկեր կդարձնենք նրան։

Նրանք ավազակներ էին, տղային ասացին.— Մեզ ընկեր կդառնա՞ս։

Տղան համաձայնվեց։ Ավազակները նրան դարձրին իրենց գլխավորը։

Տղան ասաց.— Ես գնում եմ, վաղը կգամ։

Տղան ելավ գնաց իր քեռու մոտ, ոչինչ չասաց։ Մի քանի օր հետո, տղան քեռուն ասաց.— Ես գնում եմ ման գալու, յոթ օրից կգամ։

Քեռին ասաց.— Գնա՛, բարի ճանապարհ։

Տղան գնաց ավազակների մոտ։

Ավազակներն ասացին.— Իրիկունը թագավորի տունը պիտի գնանք, կտրենք։

Տղան ասաց.— Ես ինչ որ հրամայեմ,ա՛յն պիտի լինի։

Ավազակները հավանություն տվեցին նրան։

Գիշերը ելան քառասուն հոգով, գնացին, հասան թագավորի տունը։ Տղան քառասուն խիճ առավ դրեց գրպանը, ասաց.— Այս պատին ցցեր կխփենք, ես կբարձրանամ, լուսամուտից կնայեմ՝ տան մեջ ի՞նչ կա, ձեզ լուր կտամ, մի-մի խիճ կգցեմ, մեկ-մեկ կբարձրանաք, ձայն չեք հանի։

Դղան իլավ թարախան, նըքցէ մըտավ, իշից ա̈շկէն մը բաղցած է։ Թախտէն միգ տէն կինա զօ, միգ տէն՝ ճօ̈ր։ Ա̈շկէնը բդօ̈ղ-բդօ̈ղ քրդնած, խուրօ անօ̈շ քօն բաղցած իր: Դղան խմից զկինէն, խմից զճօ̈րը, տարդագ ջաղախնէն դիզը խտէր։ Ա̈շկընէն մուդը մա̈ղնա̈ մը գար, դղան հանից զմա̈ղնա̈ն, խտէր լէր մուդը, Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը չիմցավ, դղան անցավ թարախան. խակից խէջ մը։ Հա̈րա̈մա̈քը միգ-միգ իլուն իվիր։ Դղան գալայնէն կլօ̈խը միգ-միգ դդրից, թալից իղօն, հա̈րա̈մա̈քը խա̈լխիցուն, սա̈ղցիցուն։ Դղան բըր ուկիր իկէն իշից տրուցի տանին ուց մը իգիք, մըտավ նըքցէ։ Դղան հա̈ճա̈մից ուցէն իրվան, քիշից զղաման, գիխից ուցէն կլօ̈խը, քանզան դուվաթլա գիխից զղաման, ուցէն կլօ̈խը ձա̈գից, մտավ քա̈րէն միչը։ Իթօ̈ղ դաման յադ գիղը, իլավ կնա̈ց լէր քուէն քովը։ Էր քուէն հիչ պուն չհաղաթից:

Ուկունք ա̈շկէնը։ Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը իմցավ քընին, իշից ջաղախը կինա չըկօ, լայնը պանցըրցօ̈ց քէչ մը. իշից դունը միչը դըքըր ըլլայը միռած մարթակ. «ճի՞ղ» ճղուց։ Տայ տօըլ կնա̈ց, իշից ուց մը զօ, վախըթունը շուշմըշ ա̈րօ̈ց, պանցըր ծինավ գինչից.— Հաա̈ք, յամա̈, միռօ:

Մարը-դուդը լսիցէն ծանը, ուշէդ իգէն, տըռնին բըր անցնէն, իշիցէն ուց մը զօ է, վախըթներին չըմդուն նըքցէ։

Ա̈շկէնը ծան իդօ̈ր։ Մարը-դուդը ա̈ցէն.— Մը՛վախնա̈, մը՛վախնու մինք հուս դունք։

Իհալին համան իգիք, ա̈շկէնը տուրուցի հա̈նիցէն։ Մարը-դուդը ա̈ցէն.— Աս չա̈ է։

— Ջըմ կլոգէ,— ա̈սուց ա̈շկէնը,— իս բաղցած էր է, տօ̈ք չուցըր դուղիխնաք, իս ա̈լէ տըրղան դուղիխնօմ համօ։

Ա̈շկէնը իշից, ծառուցը մաղնէն չիգօ։

Մարը ա̈սուց.— Ղըզը՛մ, մը՛վա̈խնու, պուն չիգօ։

Թա̈քա̈վա̈րը հաւզցավ. հա̈րա̈մա̈ց պուն է.— Հա̈րօ,— ա̈սուց,— զաս մարթակը, ո՞վ սպանած է։

Թա̈քա̈վա̈րը դյուշինմյուշ իլավ. «Ուվըր զաս դաման զըհանէ քարէն միչին, ան իրաձ զընօ զաս»։

Իլան ա̈րօ̈ց թա̈քա̈վա̈րը.— Ո՞ւվ ըր զաս դաման զըհա̈նէ քա̈րէն միչին, զէմ ա̈շկէնը իլան թա̈քա̈վըրտէնը էր բըր ուզօմ։

Ջարըր գդըէջ գար լէր հուղէն լիրվան, իգէն թա̈րջիբիցէն, դաման չըգարցէրին հա̈նէրին։

Վախըտ մը անցավ, բառավ մը խա̈բօր իդօ̈ր թա̈քա̈վա̈րէն.— Միր խուղէն միչը զաս դաման հանուղ չիգօ, իս ամէս մը յառանչ ըրգը գդըէջ դի-

Տղան բարձրացավ լուսամուտը, ներս մտավ, տեսավ՝ մի աղջիկ է պառկած։ Մահճակալի մի կողմը գինի կար, մյուս կողմը՝ ջուր։ Աղջիկը պտուղ-պտուղ քրտնել էր և անուշ խոր քնով քնել։ Տղան խմեց գինին, խմեց ջուրը, դատարկ բաժակները տեղը դրեց։ Աղջկա մատին մի մատանի կար, տղան հանեց, դրեց իր մատը, թագավորի աղջիկը չզարթնեց, տղան անցավ լուսամուտը մի խինճ գցեց։ Ավազակները մեկ-մեկ բարձրացան վերև։ Տղան բոլորի գլուխները մեկ-մեկ կտրեց, գցեց սենյակի մեջ, ավազակները սատկեցին, վերջացան։ Տղան ետ դարձավ, որ գար, դրսի դռնից մի օձ եկավ, մտավ ներս։ Տղան վրա հասավ, դաշույնը քաշեց, զարկեց օձի գլխին, այնքան ուժեղ զարկեց դաշույնը, որ օձի գլուխը ծակեց, մտավ քարի մեջ։ Դաշույնը թողեց այնտեղ, վեր կացավ գնաց քեռու մոտ։ Քեռուն ոչինչ չպատմեց։

Դառնանք աղջկան։ Թագավորի աղջիկը քնից արթնացավ, նայեց բաժակի մեջ գինի չկա, լույսը մի քիչ բարձրացրեց, տեսավ տան մեջ ընքըր մեռած մարդիկ. «Ճի՞ղ» ճվաց։ Դեպի դուռը գնաց, տեսավ մի օձ կա, վախից շփոթվեց, բարձր ձայնեց.— Հասե՜ք, մայրի՜կ, մեռա։

Մայրն ու հայրը լսեցին ձայնը, շտապ եկան, դռնից ներս մտնելիս, տեսան մի օձ, վախից ներս չմտան։

Աղջիկը ձայն տվեց։ Մայրն ու հայրն ասացին.— Մի՛ վախենա, մենք այստեղ ենք։

Մարդիկ իսկույն եկան, աղջկան դուրս հանեցին։ Մայրն ու հայրն ասացին.—Սա ի՞նչ բան է։

— Չգիտեմ,— ասաց աղջիկը,— ես քնած էի, ինչ որ դուք տեսնում եք, ես էլ հիմա այդ եմ տեսնում։

Աղջիկը նայեց, մատի մատանին չկար։

Մայրն ասաց.— Աղջի՛կս, մի՛ վախենա, բան չկա։

Թագավորը հասկացավ, որ այդ ավազակների գործն է.—Հապա,— ասաց,— այս մարդկանց ո՞վ սպանեց։

Թագավորը մտածեց. «Ով այս դաշույնը քարից հանի, նա էլ արած կլինի»։

Թագավորը հայտարարեց.— Ով այս դաշույնը քարից հանի, աղջիկս ու թագավորությունս իրեն կտամ։

Իր հողի վրա ինչքան կտրիճ կար, եկան, փորձեցին, դաշույնը չկարողացան հանել։

Ժամանակ անցավ, մի սպառավ լուր տվեց թագավորին.— Մեր հողում այս դաշույնը հանող չկա, ես մի ամիս առաջ ձի հեծած երկու կտրիճ

ևօ ծիօն յիրվան հիձուձ, ֆլուն դ'իդը գորըէն: Այա̈նք գառնուն հանին զղաման:

Թա̈քա̈վա̈րը ամըր ա̈րöց պիրիլ գադ ըրգը գդըէջը, աղա̈ր հումուր խուրդից օնբաշէ մը իլան ըրգը ա̈սկա̈ր: Ասա̈նք կա̈ցէն: Դղան նսդած իր սաքէյն: Օնբաշէն ա̈սուց տալ դղան.— Ձա̈ նսդիր իս, աշխուր գուվասա: Թա̈քա̈վա̈րը ուշէդ դքէ կուզէ:

Դղան իլավ գայնիցավ, սիլլա մը գիխից օնբաշէն, սաքին իվար ինգավ, սադգիցավ:

Դղան ա̈սուց ա̈սկա̈րնէն.— Թա̈քա̈վա̈րէն խա̈բուր դվիք, տըրդէս մարթօ քուվ օնբաշէ մը չըխուրգի:

Ասկա̈րնէն վա̈խըսնիրին շուվգիլը-աշավգիլը կա̈ցէն, Թա̈քա̈վա̈րէն ա̈ցէն.— Թա̈քա̈վա̈րը արրուձ, տըրգադ գդըէջ չընուր յա̈խշուր. միդ սիլլա գիխից օնբաշէն, սաքէն, ինգավ միռավ:

Թա̈քա̈վա̈րը ամըր ա̈րöց խուրդից զբինբաշէն՝ թափուր մը ա̈սկա̈ր առնի, աբթու Հա̈սան դղէն քուվը, դղան գայնիցավ, առավ զբինբաշէն նըքցէ: Բինբաշէն ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րը գուզէ դքէ• բըր ուրթունք բարաբուր Թա̈քա̈վա̈րէն գանալը:

Գիրուն, խմիցէն, դղան ա̈սուց.— Իս գուկում:

Բինբաշէն իլավ կնա̈ց Թա̈քա̈վա̈րէն ա̈սուց.— Դղան համօ գուկօ:

Դղան ա̈սուց տալ քաէն.— Քուա̈, մըվախնա, իս գուրթում, ուշէդ գուկում:

Թա̈քա̈վա̈րը յադ վախըսը չարրր իհալի ու ա̈սկա̈ր գար, զ̊արշա իլան ադ դդըջէն: Գդըէջըն հասավ Թա̈քա̈վա̈րէն քուվը, նքցէ առէն գէ, Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Գդըէ՛ջ դղօ, լըօ զ̊ամսան թը զըհանիս, էմ ա̈շկէնը իլան Թա̈քա̈վա̈րաէնը քէ դուդօմ:

— Աբրէ՛ս Թա̈քա̈վա̈ր, Թարջըբինք.— ա̈սուց դղան:

Կնա̈ց, ըրգը մադում քիշից զ̊ամսան, խոöր յամունը:

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Աբրէ՛ս, գդըիջ:

Անցուն իգօն: Ուդիլա̈, խմիլա̈ վախըսը դղան հանից ա̈շկընէն մա̈դնէն, իդöր էր դադէն: Թա̈քա̈վա̈րը շա̈դ խնդուց:

— Աբրէ՛ս, գդըէջ,— ա̈սուց,— էմ ա̈շկէնը քէնն է, էմ Թա̈քա̈վըրաէնըն ա̈լէ քէ բըրուդօմ:

Գդըէջ դղան ա̈սուց.— Շա̈՜դ աբրէս, Թա̈քա̈վա̈՛ր, մաճուն իմ: Իս քաէ մը գունէմ, աբթում էմ քաէն ա̈սիմ, գուկում քէ ջուդուպ գուդօմ:

Կնա̈ց դղան, քաէն առավ իգիք զԹա̈քա̈վա̈րէն քուվը, ա̈սուց.— Աս էմ քաէն է. իս լայզ̊ գուգխնօմ քէ զա̈շկէնը էմ քաէն գուդօս:

իմ տեսել, այսինչ տեղն են ապրում: Նրանք կարող են հանել այդ դաշույնը:

Թագավորը հրամայեց բերել այդ երկու կորիճներին. դրա համար ուղարկեց մի տասնապետ և երկու զինվոր: Նրանք գնացին: Տղան նստած էր պատշգամբում: Տասնապետն ասաց տղային.— Ինչ ես նստել, աշխարհը կրակ է ընկել վառվում է: Թագավորը շտապ քեզ է կանչում:

Տղան վեր կացավ, մի ապտակ հասցրեց տասնապետին, սա պատշգամբից վայր ընկավ, մեռավ:

Տղան ասաց զինվորներին.— Թագավորին հայտնեք, որ ինձ նման մարդու մոտ տասնապետ չուղարկի:

Զինվորները վախից վազելով գնացին, թագավորին ասացին.— Թագավորն ապրած կենա, այդպիսի կորիճ չկա աշխարհում. մի ապտակ հասցրեց տասնապետին, պատշգամբից ընկավ, մեռավ:

Թագավորը հրաման ուղարկեց հազարապետին՝ մի գունդ զինվոր վերցնել, գնալ: Հասան տղայի մոտ, տղան ոտքի ելավ, հազարապետին ներս հրավիրեց: Հազարապետն ասաց.— Թագավորը կանչում է քեզ, միասին գնալու ենք թագավորի պալատը:

Կերան, խմեցին, տղան ասաց.— Ես կգամ:

Հազարապետն ելավ գնաց, թագավորին ասաց.— Տղան հիմա կգա:

Տղան ասաց քեռուն.— Քեռի՛, մի՛ վախենա, կգնամ, շուտ կվերադառնամ:

Թագավորն այդ ժամանակ ինչքան մարդ ու զինվոր ուներ, հանեց այդ կորիճին ընդառաջ: Կորիճը հասավ թագավորի մոտ, նրան ներս առան, թագավորն ասաց.— Կորի՛ճ տղա, այս դաշույնը եթե հանես, իմ աղջիկն ու թագավորությունը քեզ կտամ:

— Թագավորն ապրած կենա, փորձենք,— ասաց տղան:

Գնաց, երկու մատով քաշեց դաշույնը, դրեց պատյանը:

Թագավորն ասաց.— Ապրե՛ս, կորիճ:

Գնացին տուն: Կերուխումի ժամանակ տղան հանեց աղջկա մատանին, հանձնեց հորը: Թագավորը շատ ուրախացավ:

— Ապրե՛ս, կորիճ,— ասաց,— իմ աղջիկը քոնն է, իմ թագավորությունն էլ քեզ պիտի տամ:

Կորիճ տղան ասաց.— Թագավո՛ր, շա՜տ ապրես, շնորհակալ եմ: Ես մի քեռի ունեմ, գնամ քեռուս ասեմ, կգամ քեզ պատասխանեմ:

Տղան գնաց, քեռուն վերցրեց, եկավ թագավորի մոտ, ասաց.— Սա իմ քեռին է, ես արժանի եմ դառնում քո աղջիկը իմ քեռուն տաս:

Թա̈քա̈վու̈րը դըղէն խաթրը չըգդրից։

Ցադ դիղը թա̈քա̈վու̈րէն ա̈շկէնը քռէն դվէն, հարսնաք իրէն, շապթընում, ամսնում թմպա̈գ, ղուռնօ քըշտիցէն, քէֆ իրէն։

Քռէն հասուվ յէր մրազէն։

Դղան իլավ կնա̈ց լադ մամլաքաթէն հէռօ։ Շա̈դ կնա̈ց, քէչ կնա̈ց հասուվ թալէ մը միչ, իշից, սուսը ծառէ մը դա̈կ շա̈դ իհալի գար։ Էնք գամուց-գա̈մուց մուդգուցուվ, հարցöց.— Աս չա՞ պուն ի։

Բառուվ մը ա̈սուց.— Գդրէ՛չ դղօ, լախպըրէն աշքը դավ մը նսդուծ ի, էհալէն ճör չըդör։

— Զվէ՞ն համուր,— ա̈սուց դղան։

— Ամըն ուր ա̈շկէն մը բըր ուդօնք էր, մէ ճör բըր ուդօ։

Դղան ա̈սուց.— Օ՞մ գուհիլաք համօ։

Բառուվը ա̈սուց.— Իսուր նուրը թա̈քա̈վու̈րէն ա̈շկընէն է։

Դղան ա̈սուց.— Մը՛վա̈խնա̈ք իս ադ դավը գըսա̈նիմ։

Քիշից գթöրը, հյուճյումից դավէն իրվան, գըդըրից գկլöխը։ Դավը սա̈դգիցուվ, ա̈խպըրէն ճöրը պա̈ցվիցուվ։ Իհալին վիրա̈նա̈դ ճöրը մխիլը բաշլից։

Դղան ա̈սուց.— Ջöրը թըղ իսթկա, սունրա մխիցիք։

Ադ խըլա̈ք բառուվը կնա̈ց, ծառը թաթխից վիրինէն միչը, գդրէչ դղէն գռնօյը կաղդօ մը քիշտից։ Իհալին սա̈րբա̈ստ ճör մխիլը բաշլից։ Թա̈քա̈վու̈րը լսից զադ, ամըր ա̈րöց.— Ուվըր զաս գդրըչըռէնը իրա̈ծ է, զէմ ա̈շկէնը խա̈լիսից, զէմ ա̈շկէնը էր բըր ուդօմ։ Զարըր գդրէչ գօ յէմ ղօնալէն առչվէն բըր ասնէն։

Բառուվը ա̈սուց թա̈քա̈վու̈րէն.— Ան գդրըչէն գռնօյը վիրէն գօ. ծառուցս նշուննի. ան է դավը սբանօղը։

Իհալին միգ-միգ գուասնիր, թա̈քա̈վու̈րը լա̈լէն գռնöյը միգ-միգ գուիշիր։ Դավը սբանօղ դղան իգիք։ Թա̈քա̈վու̈րը պռնից զէ, ա̈սուց.— Աս գռնազէտ վիրէնը չա̈ է։

— Դղան ա̈սուց.— Խա̈բուր չիմ։

Բառուվը լադ դիղը գար, ա̈սուց.— Շա̈՜դ ապրէս, թա̈քա̈վու̈ր, աս գդրէչն է դավը սբանօղը։

Թա̈քա̈վու̈րը առուվ կնա̈ց զդղան յէր դօնը, իմör զա̈շկէնը էր, յութ ուր, յութ իրգօն թմպա̈գ, ղուռնօ քիշտցէն, քէֆ ու խնդում իրէն, ա̈նա̈նք հասուն իրինց մրազէն, մինք ա̈լէ հասնէնք միր մրազէն։

Թագավորը տղայի կամքը չմերժեց։

Այդտեղ թագավորի աղջիկը քեռուն տվեցին, հարսանիք արեցին, շաբաթներով, ամիսներով թմբուկ, զուռնա զարկեցին, քեֆ արեցին։

Քեռին հասավ իր մուրազին։

Տղան ելավ գնաց այդ երկրից հեռու։ Շատ գնաց, քիչ գնաց, հասավ մի դաշտի, տեսավ մի սոսու ծառի տակ շատ մարդիկ կան։ Կամաց-կամաց մոտեցավ, հարցրեց.— Սա ի՞նչ բան է։

Մի պառավ ասաց.— Կտրի՛ճ տղա, աղբյուրի ակին մի դև է նստած, մարդկանց ջուր չի տալիս։

— Ինչի՞ համար,— ասաց տղան։

Պառավը պատասխանեց.— Ամեն օր մի աղջիկ ենք տալիս իրեն, որ մեզ ջուր տա։

Տղան ասաց.— Ո՞ւմ եք սպասում հիմա։

Պառավն ասաց.— Այսօր հերթը թագավորի աղջկանն է։

Տղան ասաց.— Մի՛ վախեցեք, ես այդ դևին կսպանեմ։

Քաշեց թուրը, հարձակվեց դևի վրա, կտրեց գլուխը։ Դևը սատկեց, աղբյուրի ջուրը բացվեց։ Մարդիկ խսկույն սկսեցին արյունոտ ջուրը վերցնել։

Տղան ասաց.—Ջուրը թող մաքրվի, նոր վերցրեք։

Այդ խելոք պառավը գնաց, ձեռքը արյան մեջ թաթախեց, կտրիճ տղայի թիկունքին զարկեց։ Ժողովուրդն սկսեց ազատ ջուր վերցնել։ Թագավորը լսեց այդ, հրամայեց.— Ով այդ կտրիճությունն արել է, աղջկան ազատել, աղջիկս նրան եմ տալու։ Ինչքան կտրիճ կա իմ պալատի առաջով պիտ անցնի։

Պառավն ասաց թագավորին.— Այն կտրիճի թիկունքին, որ արյուն կա, ձեռքիս հետքն է. նա է դևին սպանողը։

Ժողովուրդը մեկ-մեկ անցնում էր, թագավորը բոլորի թիկունքին մեկ-մեկ նայում էր։ Դևին սպանող տղան եկավ։ Թագավորը բռնեց նրան, ասաց.— Թիկունքիդ այս արյունն ի՞նչ է։

Տղան ասաց.— Չգիտեմ։

Պառավն այդտեղ էր, ասաց.— Շա՜տ ապրես, թագավոր, այս կտրիճն էր դևին սպանողը։

Թագավորն առավ տղային գնաց իր տուն, աղջիկը տվեց նրան, յոթ օր, յոթ գիշեր թմբուկ, զուռնա զարկեցին, քեֆ ուրախություն արեցին։ Նրանք հասան իրենց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

## 2 (2). ՔԱՇԻՇ ԼԻՌԸ

Գըգինօ, չըգինուր թա̈քա̈վո̈ր մը։ Ան ըրք ղըղօ գունըէօ։ Ըրք ղղան ա̈լէ հասած ին։ Թա̈քա̈վո̈րը գըգինչի զըրք մէյն ա̈լէ, գա̈սէ.— Ըսկօ անմիզէտ ծէն մը, անմիզէտ մա̈նղա̈գ մը իսկա, գա̈րթա̈ք ո̊ազանչը, ուվըր չա̈դ գըո̊ազամիշըննօ, ան յէմ դիղը թա̈քա̈վո̈ր ըըրըննօ։

Դղաքը իլուն կա̈ցէն, ինգուն ջամպուքը։ Շա̈դ կա̈ցէն, քէչ կա̈ցէն, հա̈սուն ջամպօն չաթու̊ղը, Ցադ դիղը ըրք ախպարը գայնիցուն, դիսուն ըրք ջամպուք զօ։ Առչը ջամպուքը ուվըր գուրթօ՝ յիդ գուկօ, միգալ ջամպուքը ուվըր գուրթօ՝ յա գուկօ, յա՝չէ, ու̈չա̈նչը ջամպուքը ուրթա̈ղը՝ յիդ չուկուր։

Բզզա̈գ ախպարը ա̈սուց.— Ամմէյիս միգ ջամպուք բըր ուրթունք։ Դա̈րէ մը սունրա, ուվըր սաղ մընա̈ց, յաս դիղը գուկօ՝ մէյիս միգալիս գըդխանօնք։

Մինձ ախպարը կնա̈ց ուրթա̈ղ-ուկա̈ղ ջամպուքը։

Օրթանչա ախպարը կնա̈ց յան ջամպուքը՝ յա գուկօ, յա՝ չէ։

Բզզա̈գ ախպարը կնա̈ց հիդ չուկիլը ջամպուքը։

Բզզա̈գ ախպարը չա̈դ կնա̈ց, քէչ գնա̈ց, արիվը միրից, հա̈սավ սասը ձառէ մը գա̈կ։ Նսդավ յադ դիղը հա̈նգճըցավ։ Հա̈նից գըիշարը յախպիրէն քովը, ողիլա գիրավ։ Իգիք մա̈շին դլկէ մը, գայնիցավ գղէն տիմը։ Դղան հա̈նից բադուռ մը մէս, քա̈րից էր։ Դլկէն գիրավ դէ, ա̈սուց.— Է՜յ ախպա՛ր, ուցը բիրդէն, ծա̈կը թիվէն չըգառնօ, տօն չո՞ւց իգուր յաս ջամպուքը։ Ցասդիղը ուկա̈ղը յիդ չըտառնուր։

Դղան ա̈սուց.— Զա̈՞ չինիմ։

— Տօն ընծէ ա̈ղվըրուտէն իրիր, իս ա̈լէ քէ ադվըրուտէն բըրինիմ,— ա̈սուց դլկէն,— յաս ջամպուքը ըր գուրթուս՝ ըրք դավ զօ, ա̈նա̈նք ջամպին մուրթ չըրանցընին։ Առչը դավէն սուրէ մը մակա գառնիս, գըղա̈նէս, համան սաղ ծառը գառնիս, գըրա̈քնիս։ Դավը գա̈սէ քէ՝ Ուզէ։ Տօն ուզէ քովը գինա̈ղ բաո̊ըրը թասը։ Դավը գա̈սէ՝ Օ՜ֆ, չա̈դ ուզիցիր. Թասը գուդօ քէ։

Դա̈րէն խալխսիցավ։ Դղան առավ գթասը, յիդ տարծավ։ Հա̈սավ սուսէն դա̈կը, յա̈խպըրէն յաշքը, նսդավ յանդիղը, հա̈նգճիցավ։ Թասը հա̈նից՝ յա̈խպիրին ճո̈ր միից, ճո̈րը իսկա տարծավ, ֆիտից զէ յախպիրէն քովը, յախպիրէն չուրս տէն իսկա տարծավ։ Յադ վախըտը ադ դիղէն թա̈քա̈վո̈րէն ա̈չկընէն խըզմա̈տճէն իկիք յա̈խպիրէն ճո̈ր բըր մխիր։ Ա̈չկէնը դիսավ զդղան իսկա գուֆիտէ, համան իթո̈ղ զգուդալը, յիդ տարծավ, թա̈քա̈վո̈րէն ա̈չկընէն ա̈սուց.— Ամա՜ն, ո̊ադը̊ն, յա̈խպըրէն յաշքը դղա մը նիսդած, իսկա գուֆիտէ։

## 2 (2). ՔԵՇԻՇ ԼԵՌԸ

Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում, Ունենում է երեք տղա։ Երեք տղաներն էլ հասունացած են լինում։ Թագավորը կանչում է երեք տղաներին ու ասում.— Ահա ամեն մեկիդ մի ձի, ամեն մեկիդ մի խուրջին ոսկի, գնացեք վաստակի, որ մեկդ որ շատ կվաստակի, նա էլ իմ տեղը թագավոր կլինի։

Տղաները ելան գնացին, ճամփա ընկան։ Շատ գնացին, քիչ գնացին, հասան ճամփաբաժանի։ Այդտեղ երեք եղբայրները կանգ առան, տեսան երեք ճամփա կա։ Առաջին ճամփով ով որ գնա՝ ետ կգա, մյուսը՝ կամ կգա, կամ չէ, երրորդ ճամփով գնացողը՝ ետ չի գա։

Փոքր եղբայրն ասաց.— Յուրաքանչյուրս մեկ ճամփով պիտի գնանք։ Մի տարի հետո, ով որ ողջ մնաց, այստեղ կգա՝ մեկս մյուսիս կտեսնենք։

Մեծ եղբայրը գնաց գնացող-եկող ճամփով։

Միջնակ եղբայրը գնաց այն ճամփով, որով կամ՝ կգա, կամ՝ չէ։

Փոքր եղբայրը գնաց ետ չեկող ճամփով։

Փոքր եղբայրը շատ գնաց, քիչ գնաց, արեր մայր մտավ, հասավ մի սոսի տակ։ Նստեց այդտեղ հանգստացավ։ Աղբյուրի մոտ հանեց պաշարը, կերավ։ Անսպասից եկավ մի աղվես, կանգնեց տղայի առաջ, տղան հանեց մի կտոր միս, գցեց նրան։ Աղվեսը կերավ այն, ասաց.— Է՜յ եղբայր, օձը պորտով, ծիտը թևով չի կարող, դու ինչպե՞ս եկար այս ճամփով։ Այստեղ եկողը ետ չի դառնա։

Տղան ասաց.— Ի՞նչ անեմ։

— Դու ինձ լավություն արեցիր, ես քեզ լավություն պիտի անեմ,— ասաց աղվեսը,— այս ճամփով որ գնում ես՝ երեք դև կա, որանք ճամփից մարդ չեն թողնում անցնի։ Առաջին դևի համար մի հոտ ոչխար կվերցնես, կտանես, իսկույն աջ ձեռքը վերցնես, կհամբուրես։ Դևը քեզ կասի՝ ուզիր։ Դու կուզես նրա մոտ գտնվող պղնձե թասը։ Դևը կասի՝ Օ՜ֆ, շատ ուզեցիր. թասը կտա քեզ։

Տարին լրացավ։ Տղան վերցրեց թասը, ետ վերադարձավ։ Հասավ սոսու ծառի տակի աղբյուրի ակին, նստեց այնտեղ, հանգստացավ։ Թասը հանեց, աղբյուրից ջուր վերցրեց, ջուրը ոսկի դարձավ, լցրեց աղբյուրի մոտ, աղբյուրի չորս կողմը ոսկի դարձավ։

Այդ ժամանակ թագավորի աղջկա աղախինն եկավ այդտեղից ջուր վերցնելու։ Աղջիկը տեսավ, որ տղան ոսկի է թափում, իսկույն թողեց կուժը, վերադարձավ թագավորի աղջկա մոտ ու ասաց.— Վա՜յ, տիրուհի, աղբյուրի մոտ մի տղա կա նըստած, ոսկի է թափում։

Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը ա̈սուց.— Ուշէգ կընծ, ա̈սօ, ղղէն հուս թըղ ակօ։

Խըղմա̈ուճէն լիդ ատրծուվ, կնա̈ց ղղէն ա̈սուց.— Էմ ղ̈ագընը զքէ իդօն գուզէ։

— Քէ ղ̈ագընը օ՞ւմն է,— հարցո̈ց դղան։

— Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնըն է,— ա̈սուց խըղմատճէն։

Դղան գայնիցուվ, խըղմա̈տճէն հիդը բարաբուր իդօն կա̈ցէն։ Հա̈ուուն թա̈քա̈վիրէն յա̈շկընէն ուղան, մղուն նըքցէ։ Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը ա̈սուց տալ դղան.— Ջաղ բաղ̈ըրը թուսը ընծի գուղօ՞օ։

Դղան ա̈սուց.— Տօն էմ նիշա̈նձօն թը զընուս, զաս թուսը գուզօմ քէ։

Ա̈շկէնը իդուվ էր նիշա̈նձօն։ Դղան բաղ̈ըրը թուսը իդօ̈ր էր։ Աղ իրղօ̈նը վիրուն, խմիցէն, քէֆ իրէն։ Սա̈րա̈խըղա̈ն ղղան ա̈սուց տալ ա̈շկէնը.— Իս յէմ դօնը զուրթում։

Ձա̈նքի ղղէն վախըտը խա̈յխուծ իր, հա̈, չէ՝ բըր հա̈նիր յան գիղը, քէ էր ախպըրդաքը խա̈դիր ին։ Դղա̈ն հա̈սուվ յաղ գիղը, գիսուվ ախպըրդաքը իդուծ ին։ Ախպըրդաքը ա̈ցէն էր.— Յօ՞զօ ծէնիտ իլան փարան։

Բզղա̈գ դղան ա̈սուց.— Բաթմըշիրա։ Հա̈լա̈ մաթուն չի՞ք, հիկկէս փըրթուվ։

Ախպըրդաքը ա̈ցէն էր.— Օ՛ռ քէ փարա ուզօնք, ծէն մա̈լէ ջամպին զառնինք, զըհիձնէօ̈ զուրթունք։

Բզղա̈գ ախպարը ա̈սուց.— Նա̈՛ ծէն զուզիմ, նա̈՛ փարա։ Իս զըքիլիմ զուրթում։

Իլուն կա̈ցէն, հա̈սուն թա̈քա̈վա̈րէն քուվը։ Դուղր գինչից զդղաքը, իշից բզղա̈գ դղան հիչ պուն չունա՝ միրղա̈կ-պիզա̈կ է, ա̈սուց էր.— Ջվա՞ տըրղաս իդուծ իս։

Դղան ա̈սուց.— Անջա̈խ հիկկէս խա̈յխսիցա։

Թա̈քա̈վա̈րը շա̈դ նիղա̈ցուվ.— Ղ̈ատ մա̈լէ տօն տըրղաս թէ զուկուս, քէ կլօ̈խը կըզըղրիմ։

Դղան ա̈սուց.— Է՜հ,— իլուվ կնա̈ց։

Վախտը մը անցուվ, թա̈քա̈վա̈րը դղաքը գինէ գինչից, ա̈սուց իրինց.— Գինա̈ բըրուրթա̈ք ղ̈ազանջը։

Ձուցըր առչը ղ̈աթէն ծէն, փարա զունէր ին, հա̈մօ ա̈լէ տըրղան կա̈ցէն։ Բզղա̈գ դղան առուվ զծէնը, զփարան, ինզուվ յէր առչը չամպուքը հա̈սուվ յան սուսէն դա̈կը, դլկէն իլուվ տիմը, դղան իդօ̈ր էր ուզիլա̈, գիրուվ։ Դըկէն ա̈սուց տալ դղան.— Իքընջը դավէն համուր հուրթվա գառնիս զըղա̈նէս, սաղ ծառը զըրա̈քնիս, գա̈սի քէ՝ ուզէ՛։ Դավէն քուվը հիսէնքթիթը զօ, գա̈սիս՝ հիսէնքըթիթը դօ̈ր ընծէ։

Դղան առուվ զհուրթվա̈քը, գնա̈ց իքընջը դա̈վէն քուվը, սաղ ծառը իրա̈ք։

Դավը ա̈սուց.— Ուզէ՛։

Թագավորի աղջիկն ասաց.— Շատ գնա, ասա, թող այդ տղան այստեղ գա։

Աղախինը ետ դարձավ տղային ու ասաց.— Իմ տիրուհին քեզ տուն է կանչում։

— Քո տիրուհին ո՞վ է,— հարցրեց տղան։

— Թագավորի աղջիկն է,— ասաց աղախինը։

Տղան ելավ, աղախնի հետ գնաց տուն։ Հասան թագավորի աղջկա սենյակը, մտան ներս։ Թագավորի աղջիկը տղային ասաց.— Այդ պղնձե թասը ինձ կտաս։

Տղան ասաց.— Եթե նշանածս դառնաս, թասը կտամ քեզ։

Աղջիկը նրա նշանածը դարձավ։ Տղան պղնձե թասը տվեց նրան։ Այդ իրիկուն կերան, խմեցին, քեֆ արեցին։ Առավոտյան տղան ասաց աղջկան.— Ես իմ տունը պիտի գնամ։

Տղայի ժամանակը լրացել էր՝ եղբայրներին հանդիպելու։ Տղան հասավ այն տեղը, տեսավ եղբայրները եկել են։ Եղբայրներն ասացին նրան.— Ո՞ւր է քո ձին ու փողը։

Փոքր տղան ասաց.— Կորցրեցի։ Դեռ գոհ չե՞ք, որ հոգիս ազատվեց։

Եղբայրներն ասացին նրան.— Ա՛ռ քեզ փող, մի ձի էլ ճանապարհին կվերցնենք, կհեծնես, կգնանք։

Փոքր եղբայրն ասաց.— Ո՛չ ձի եմ ուզում, ո՛չ փող։ Ես քայլելով կգնամ։

Նրանք գնացին, հասան թագավորի մոտ։ Հայրը կանչեց տղաներին, նայեց փոքր տղան ոչինչ չունի՝ մերկ ու բոբիկ է, ասաց նրան.— Ինչու՞ այդպես ես եկել։

Տղան ասաց.— Հազիվ հոգիս ազատեցի։

Թագավորը շատ նեղացավ.— Մյուս անգամ եթե այդպես գաս, գլուխդ կկտրեմ։

Տղան ասաց.— Է՜հ,— ելավ գնաց։

Մի ժամանակ անց թագավորը նորից տղաներին կանչեց, ասաց.— Նորից պիտի գնաք վաստակի։

Ինչպես առաջին անգամ ձի, փող ունեին, նույնպես էլ հիմա գնացին։ Փոքր տղան վերցրեց ձին, փողը, ընկավ իր առաջվա ճանապարհը, հասավ այդ սոսու տակը, աղվեսն ելավ դեմը, տղան տվեց նրան ուտելիք, կերավ։ Աղվեսն ասաց տղային.— Երկրորդ դևի համար հարթեր կտանես, աջ ձեռքը կհամբուրես, կասի քեզ՝ ուզի՛ր։ Դևի մոտ մի սփռոց կա, կասես՝ սփռոցը տուր։

Տղան առավ հարթերը, գնաց երկրորդ դևի մոտ, աջ ձեռքը համբուրեց։

Դևն ասաց.— Ուզի՛ր։

— Ջիդօ հիւէնքթիթը դ՛օր ընծէ,— ձաուց դղան։
Դավր ձաուց.— Օ՛ֆ, օ՛ֆ, շ՚ուդ ուզիցիր։
Իդ՛օր հիւէնքթիթը, դղան առավ, իլավ կնձ՚ց՝ լիդ տարծավ յան սուրէն դ՛ակը, նըդավ, հ՚ընդճիլ, թփոց հիւէնքթիթը, լ՚իխշար չ՚էրըր թավ. վըր-թավըր ոդիլձ գօ, մինչը գօ։ Դղան գուդէ-գուդէ, ուղիլէն չուլթըմմա։
— Օ՛խ,— ձաուց,— ձա է պուճը։
Ձալլից գքթիթը։ Իգիք թ՚օքձ՚վ՚որէն ձ՚շկընէն խզմձ՚աճէն, ձաուց.— Քիլէ, ուրխթունք իդօն։
Դղան իլ՚ձն խզմձ՚աճէն բարաբար կ՚ձցէն իդօն։
— Օ՛ռ քէ ձ՚դվ՚ռ հադիամը, չա՞ ձաուց դղան ձ՚շկընէն։
— Աս հիւէնքթիթը չա՞ է,— հարցօց ձ՚շկէնը։
Դղան իպուց հիւէնքթիթը, ձ՚շկէնը դիռավ լ՚ձշխար չ՚էրըր ոդիլձ գօ, մինչը գօ։
— Օ՛խ,— ձաուց,— շ՚ուդ ձ՚դվ՚ռ պան է։
Առավ զհիւէնքթիթը ադվ՚ռ մը բիհից։
Գիրուն, խմիցէն, բաղիցուն։ Սաբախդան դըղան իլավ կնձ՚ց։
Ջամպուքը դիռավ զախպըրդաքը։ Ախպըրդաքը ձ՚ցէն էր.— Յօ՞ գօ ծէնիռ իլան փարան, յօ՞ գօ։
— Բաթմըշ իրադէ,— ձաուց բզդ՚ձգ դղան։
Ախպըրդաքը ձ՚ցէն.— Դ՚ձդ՚ձյը դքէ գըսբանէ, օ՛ռ, ուդօնք քէ փարա, ծէն մ՚ձլէ գառնինք քէ ջամպին, գուրթունք դադէն քավը։
Բզդ՚ձգ ախպարը չուզից դէ։
Իլան կ՚ձցէն թ՚ձքձ՚վ՚ռէն քավը։
Թ՚ձքձ՚վ՚ռը գինչից զդղաքը։
Բզդ՚ձգ դղան ձաուց.— Էմ ծէնն իլան փարան գինա բաթմըշ իրա։
— Ի՛լ կըն՞օ տիմիս,— ձաուց թ՚ձքձ՚վ՚ռը։
Բզդ՚ձգ դղան իլավ կընձ՚ց։
Վախըտ մը անցավ, գինա թ՚ձքձ՚վ՚ռը գինչից զդղաքը։ Բզդ՚ձգ դղէն ձաուց.— Աս դ՚առէն մըդ՚ձկ տէր, պիզ՚ձկ—միրզ՚ձկ թը գուկաս, ձ՚դվ՚ռ կիդացէ, քէ կլօխը բըրգդրիմ։
Բզդ՚ձգ դղան իլավ կնձ՚ց։ Առավ զծէնը, զփարան ինգավ յառջը ջամպուքը, հասավ յան սուրէն դ՚ձկը։ Դլկէն իլավ յառչիվը։ Դղէն իդ՚օր էր ուդիլ՚ձ, գիրավ, ձաուց.— Ուչընջը դավէն կիմիշնալ՚ձ, գըդ՚ձնէս, սաղ ծառը գըր՚ձքնիս, գ՚ձռէ դ՚ձվը՝ ոդէ՛ տ՚ձն ձ՚լէ գ՚ձսիս՝ զիդօ թօրը տօր ընծէ։
Դղան ձաուց.— Աղվ՚ա՛ր է։
Դլկէն իլավ կնձ՚ց։ Դղան առավ կիմիշնա, ձ՚ընջը դավէն քավը կնձ՚ց, սաղ ծառը իբ՚ձք։
Դավը ձաուց.— Ո՛ւզէ։
Դղան ձաուց,— Ջիդօ թօրը գ՚օր ընծէ։
Դ՚ձվը ձաուց.— Օ՛ֆ, օ՛ֆ շ՚ուդ ուզիցիր։
Դ՚ձվը իդ՚օր զթօրը դղէն։ Դղան տարծավ յիդ յան սուրէն դ՚ձկը, նըդավ, քիշից զթօրը յաՊ՚ին, գիխից կիդէնը։ Աշխար յ՚օրր գար սիվ ձ՚ակ՚ձր,— իգիք՝ Ասկ՚ձրնէն մինձը ձաուց.— Փըլէ՞նք, թը՞ շինինք։

— Այդ սփռոցը տուր ինձ,— ասաց տղան։
Դևն ասաց.— Օ՛ֆ, ո՛ֆ շատ ուզեցիր։
Տվեց սփռոցը նրան, տղան առավ, ելավ գնաց այն սուտ տակը, նստեց, հանգստացավ, բացեց սփռոցը, աշխարհում ինչ տեսակ-տեսակ ուտելիք որ կար, մեջը կար։ Տղան ուտում է ուտելիքը չի վերջանում։
— Օ՛խ,— ասաց տղան,— ա՛յս է բանը։
Ծալեց սփռոցը։ Եկավ թագավորի աղջկա ախտիինը, ասաց.— Արի՛, գնանք տուն։
Տղան ու աղախինը միասին գնացին տուն։
— Ա՛ռ քեզ մի լավ նվեր,— ասաց տղան աղջկան։
— Այս սփռոցն ի՞նչ է,— հարցրեց աղջիկը։
Տղան բացեց սփռոցը, աղջիկը տեսավ աշխարհում ինչ տեսակ կերակուր կա, կա մեջը։
— Օ՛խ,— ասաց,— շատ լավ բան է։
Վերցրեց սփռոցը պինդ պահեց։
Կերան, խմեցին, պառկեցին։ Առավոտյան տըղան ելավ գնաց։
Ճամփին տեսավ եղբայրներին։ Եղբայրներն ասացին նրան.— Ո՞ւր է փողը և ձիդ, ո՞ւր է։
— Կորցրեցի,— ասաց փոքր տղան։
Եղբայրներն ասացին.— Հայրիկը քեզ կսպանի, ա՛ռ, առնենք քեզ փող, մի ձի էլ կվերցնենք ճանապարհին, կգնանք հայրիկի մոտ։
Փոքր եղբայրը չուզեց։
Վեր կացան գնացին թագավորի մոտ։
Թագավորը կանչեց տղաներին։ Փոքր տղան ասաց.— Իմ ձին և փողը նորից կորցրեցի։
— Գնա՛ դեմիցս,— ասաց թագավորը։
Փոքր տղան ելավ գնաց։
Ժամանակ անցավ, թագավորը նորից կանչեց տղաներին։ Փոքր տղային ասաց.— Այս անգամ ուշադիր եղիր, մերկ ու բոբիկ եթե գաս, լավ իմացիր, գլուխդ կկտրեմ։
Փոքր տղան ելավ գնաց։ Առավ ձին, փողը ընկավ առաջին ճանապարհը, հասավ սուտ տակը։ Աղվեսն ելավ դիմացը։ Տղան նրան ուտելիք տվեց, աղվեսը կերավ ու ասաց.— Երրորդ դևին գոմեշներ կտանես, աջ ձեռքը կհամբուրես, դևը քեզ կասի՝ ուզի՛ր, դու կասես՝ այդ թուրը տուր ինձ։
Տղան ասաց.— Լա՛վ։
Աղվեսը գնաց։ Տղան վերցրեց գոմեշները, երրորդ դևի մոտ գնաց, աջ ձեռքը համբուրեց։
Դևը տղային ասաց.— Ուզի՛։
Տղան ասաց.— Այդ թուրը տուր ինձ։
Դևն ասաց.— Օ՛ֆ, օ՛ֆ, շատ ուզեցիր։
Դևը թուրը տվեց տղային։ Տղան վերադարձավ այն սուտ տակը, նստեց, քաշեց թուրը պատյանից, զարկեց գետին։ Աշխարհում ինչքան սև զինվոր կար, եկան։ Զինվորների մեծն ասաց.— Քանդենք, թե՞ շինենք։

Դղան ա̈սաց.— Հիչ պուն մը չըբըրինիք,— քիշից գթöրը, իւէր յա̈մունը: Ա̈սկա̈րնէն գուրսու— վիցուն: Դղան գթöրը առուվ, կընա̈ց նիշա̈նվէն քուվը, իդöր գէ նիշա̈նվէն: Թրէն հունարը ցըցցöց ա̈նա̈ր: Նշա̈նձօն շա̈դ խնդաց: Ադ իրիգօնը գիրուն, խմիցէն, ա̈նöշ-ա̈նöշ բառգիցուն:

Սա̈րա̈խդան դղան պա̈րըմընից գնշա̈նձօն.— Գուրթում իս յէմ դա̈ղա̈ն քուվը:

Հա̈սուվ ախպըրդա̈ցը քուվը: Ախպըրդաքը ա̈ցէն էր.— Ա̈րէ՛, ախպար, մի՛նէ. դա̈դա̈յը իրվառ շա̈դ նիղա̈ցուձ է: Օ՛ռ, ուզօնք քէ փարա, ձէն, դա̈ղէն յըրմինը գըխայխէս:

Բղդա̈գ դղան չուզից զէ: Իլուն կա̈ցէն թա̈քա̈վա̈րէն քուվը: Թա̈քա̈վա̈րը դիսուվ բզդա̈գ դղան հիչ պուն պիրուձ չէ, ա̈սաց.— Ջալաթը գինչիցի՛ք:

Թա̈քա̈վա̈րէն գնալը զադ խուսքիրը լսից ուշէդ-ուշէդ կնա̈ց, կոշդöգ մը ջալաթը դիսուվ, ա̈սաց.— Հօն դքէ հիվունու ա̈րöր, յիփր գքէ թա̈քա̈վա̈րը զըզինչէ:

Ջալաթը ա̈սաց.— Աղվա̈՛ր է:

Թա̈քա̈վա̈րէն գնալը կնա̈ց յէր մարթօն քուվը. ա̈սաց.— Թա̈քա̈վա̈ր արրէս, չվա՞ բըրարանիս զէ, ավիլա̈ աղվա̈ր չէ՞ բզդա̈գ դղան ղուրգինք Քաշիշ լիռը, յադ դիղը ուրթա̈ղը յիդ չուկար:

— Աղվա̈՛ր մէդք է,— ա̈սաց թա̈քա̈վա̈րը, գինչից զբզդա̈գ դղան:

— Իս հիվունդ իմ, Քաշիշ լէռնին ընձէ խա̈դ գըպիրիս, իս գըճուղնում:

Բզդա̈գ դղան ա̈սաց.— Աղվա̈՛ր է,— ուշէդ-ուշէդ էլա̈վ կնա̈ց, ինղուվ առնը ջամպուքը:

Հասուվ յան սուսէն դա̈կը, դլկէն իլուվ տիմը, ա̈սաց.— Մը՛վախնու, ջամպուքը աղվա̈ր է. դա̈վիրէն ուզուձ հաղիան օռ, կնó:

Թա̈քա̈վա̈րէն դղան անցուվ կնա̈ց: Քէչ կնա̈ց, շա̈դ կնա̈ց, հասուվ մինձ ըռու լիռու մը ձարքը: Ադ դիղը Քաշիշ լիռն իր: Դիսուվ յադ դիղը մինձ դօն մը զօ: Նքցէ մըղուվ, իշից ա̈շկէն մը նստուձ գարգաֆ գուխիզվէ: Ա̈շկէնը ա̈սաց.— տայ դղան.— Ուցը բիրդէն, ծա̈կը թիվէն, տօն չա̊ց իգիր յադդիղը:

— Շա̈դ հիշդ էգա,— ա̈սաց դղան:

Ա̈շկէնը կնա̈ց ուդիլա̈ իպիր, պղէն կիրուվ: Ըրգöքը նստուն յադդիղը, իրգան-պարա̈գ խուսիցուն, մէյը զմիգալը սիրիցէն:

Ա̈շկէնը ա̈սաց.— Հէնգ ախպար գունէմ. կա̈ցուձին յուվը, մըթնöլը գուկուն, մը՛վախնու:

Իրգöնը ա̈շկընէն ախպըրդաքը իգէն. դղան դիսուն, տայ քայրը ա̈ցէն.— Աս ո՞ւվնէ:

Քայրը ա̈սաց.— Քէչ մէ յառանչ իգիք, դարէր դղամ է:

Ախպըրդաքը պուն չա̈ցէն: Գիրուն, խմիցէն, բա̈ռգիցուն:

Տղան ասաց.— Ոչինչ չպիտի անենք,— քաշեց թուրը, դրեց պատյանը: Ձիավորներն անհետացան: Տղան վերցրեց թուրը, գնաց նշանածի մոտ, տվեց նրան: Թուրի շնորհքը ցույց տվեց նշանածին: Նշանածը շատ ուրախացավ: Այդ իրիկունը կերան, խմեցին, անուշ-անուշ պառկեցին:

Առավոտյան տղան հրաժեշտ տվեց նշանածին.— Գնում եմ ես իմ հոր մոտ:

Հասավ եղբայրների մոտ: Եղբայրներն ասացին.— Արի՛, եղբայր, մի՛ անի, հայրիկը շատ նեղացած է քեզանից: Ա՛ռ տանք քեզ փող, ձի, հայրիկից գլուխդ ազատիր:

Փոքր տղան չուզեց: Նրանք գնացին թագավորի մոտ: Թագավորը տեսավ փոքր տղան ոչինչ չի բերել, ասաց.— Դահիճ կանչեցե՛ք:

Թագավորի կինն այդ խոսքերը լսելով շտա-շտապ գնաց դահիճի մոտ, գաղտնի ասաց.— Երբ թագավորը քեզ կանչի. դու քեզ հիվանդ ձևացրու:

Դահիճն ասաց.— Լա՛վ:

Թագավորի կինը գնաց մարդու մոտ, ասաց.— Թագավո՛ր, ապրած կենաս, ինչի՞ ես սպանում նրան, ավելի լավ չէ՞ փոքր տղային ուղարկենք Քեշիշ լեռը, այնտեղ գնացողը ետ չի գա:

— Լա՛վ միտք է,— ասաց թագավորը, կանչեց փոքր տղային:

— Ես հիվանդ եմ, Քեշիշ լեռից ինձ խոտ կբերես, ես կառողջանամ:

Փոքր տղան ասաց,— Լա՛վ,— Իսկույն ելավ գնաց, ընկավ առաջին ճանապարհը:

Հասավ այն սարի տակը, ավելը դիմն ելավ, ասաց.— Մի՛ վախեցիր, ճամփադ լա՛վն է, դևերի ոգած նվերն առ, գնա՛:

Թագավորի տղան անցավ գնաց: Քիչ գնաց շատ գնաց, հասավ մի մեծ ըռռ լեռան գագաթ: Այդ տեղը Քեշիշ լեռն էր: Տեսավ այդտեղ մի մեծ տուն կա: Ներս մտավ, տեսավ մի աղջիկ ձեռագործ է անում: Աղջիկը տղային ասաց.— Օձն իր պորտով, ծիտն իր թևով, դու ինչպե՞ս եկար այստեղ:

— Շատ հեշտ եկա,— ասաց տղան:

Աղջիկը գնաց ուտելիք բերեց, տղան կերավ: Երկուսով նստեցին այդտեղ, երկար բարակ խոսեցին և իրար սիրեցին:

Աղջիկն ասաց.— Հինգ եղբայր ունեմ. գնացել են որսի, մթնշաղին կգան, մի՛ վախեցիր:

Իրիկունը աղջկա եղբայրներն եկան, տղային տեսան, քրոջն ասացին.— Ո՞վ է սա:

Քույրն ասաց.— Մի քիչ առաջ եկավ, օտար տղա է:

Եղբայրները բան չասացին: Կերան խմեցին, քնեցին:

Սարախդան իդավ, ախպըրդաքը ըցէն տայ դղան.— Մինք գքէ շա̈դ սիրիցունք, գուզինք միր քույրը քէ նշանձօն ըննօ։

Դղան ա̈սուց.— Մա̈մնուն իմ։

Դղան նշանվիցուվ։ Ա̈շկընէն ախպըրդաքը ա̈մըն ուր յավ գուրթէրին, դղան ա̈շկէնը իդօն գըմնէրին։ Ա̈շկէնը հաղ̊աթից զէր հաղ̊այութը դզէն. — Ընծէ համուր իմ ու ախպըրդաքը գախարթագան մը պռնուձ ին, իդօն զարուձ ին զէ։

Դղան ա̈սուց.— Չի գարնո̈ւր փախէր գախար̃թագանը։

Ա̈շկէնը ա̈սուց.— Զգախարթագանը թըլըսըմուձ ինք՝ լիշուցը ղ̊ափախնէն ա̈սիղ խիթուձ ինք, իէլ̃քը չըպանէր, աշքը չըդիսնուր, ծառվէն չըխըբըռվէր. սաղէն ղ̊ուվութը ադ է։ Ագար զասիղը թը գըհանխս, գախարթագանը չըրվնուր մուրթ գըտառնը, զէս գարսէյն միշը գըտնա, գթույնէ։

Ա̈շկէնը կնա̈ց ուդիլա̈ գուփիր, դղան կնա̈ց գախարթագանէն տօնը, հանից զասիղը գախարթագանէն իշուցը, գախարթագանը չըրվընցուվ։ Զա̈շկէնը խո̈ր գարսէն միշը թուցօց։ Դղան համան կնուց զա̈շկնէն քուվը, իշից ա̈շկէնը չըկօ։ Դղան զըրզը ծառը գիխից մէյը միգալը,— Ա̃խ,— ա̈սուց,—իս չա̂ շինիցա։

Ախպըրդաքը իգէն իդօն, իշիցէն քայրը չըգօ, ա̈ցէն տայ դղան.— Ցօ̊ գօ միր քայրը։

— Տըրըզսօ, տըրըզսօ իդուվ,— ա̈սուց դղան։

Ախպըրդաքը ա̈ցէն.— Վա̈յ, միր քայրը կնա̈ց միր ծառուցը։

— Ցօ̊ կնուց,— ա̈սուց դղան։

— Ցօթը ձվօն միշը յադէն միշը գօ։

Դղան ա̈սուց.— Իս գըդնում զէ։

Կլօ̈խը առուվ ինգուվ, ջամպուքը։ Բէշ կնա̈ց, շուդ կնա̈ց հասուվ դէզ մը, իշից ծան մը գունէ։ Գամուց-գամուց մուգըըցուվ տայ յադ ծանը, իշից ըրք հիկկա նսդուձ գուխուսէն։ Բիրդան մը ծան իդ̊ըր. — Հուս չա̂ գուշինիք։

Ադ ըրք մէյը վախցուն, ա̈ցէն.— Ես յա̈մմու̊ր իգիք։ Հուս արի, դղօ։ Մինք ըրք պուն գուռնէնք, չուգարնունք պիժնինքզէ։

— Ադ չա̂ պուն է,— ա̈սուց դղան։

— Մէյը բօ̈րկ մէ, միգալը պուրց մէ, ու̈չա̈նչէ՝ ճահավըրը քուր մը։

Դղան ա̈սուց.— Ադա̈նք չա̂ մառնա գուռնէն

Ադ ըրք հարամաքը ա̈ցէն.— Բօ̈րկը կլխէտ գըտնէս՝ զաքէ մուրթ չըդիսնօր։ Պուրցը ղ̊օլթըխըտ գուտնէս՝ ծէն մը գըհօ, ուզուձ դիղիտ գըդանա զքէ։ Ճըհավըր քուրն ալէ՝ կէն չունա։ Զաս ըրք մէյը չուգարնունք պիժնէ։

Դղան ա̈սուց.— Իս զադա̈նք ծէ գուպիժնէմ, ղ̊ուրղա գըքա̈րիմ, օմըր գինօ ան զէր պիժէնը գառնօ՝

— Աղվա̈՛ր է,— ա̈ցէն հարամաքը։

Առավոտյան եղբայրները տղային ասացին.— Մենք քեզ շատ սիրեցինք, ուզում ենք, որ մեր քույրը քո նշանածը լինի։

Տղան ասաց.— Շնորհակալ եմ։

Տղան նշանվեց։ Աղջկա եղբայրներն ամեն օր որսի էին գնում, տղան ու աղջիկը տանն էին մնում։ Աղջիկը պատմեց իր կյանքը տղային.— Եղբայրներս ինձ համար մի կախարդ են բռնել, տանը կապել։

Տղան ասաց.— Կախարդը չի կարո՞ղ փախչել։

Աղջիկն ասաց.— Կախարդին հմայել ենք՝ աչքերի կոպերին ասեղ ենք խրել, խելքը չի աշխատում, աչքը չի տեսնում, ձեռքերը չեն շարժվում, ողջ մարդու ուժն էլ այդ է։ Եթե ասեղը հանես, կախարդը անտեսանելի մարդ կդառնա, ինձ կարասի մեջ կդնի, կթողնի։

Աղջիկը գնաց խոհանոց ուտելիք եփելու. տղան գնաց կախարդի սենյակը, հանեց ասեղը կախարդի աչքից, կախարդն աներևութացավ։ Դըրեց աղջկան կարասի մեջ և թողեց։ Տղան իսկույն եկավ աղջկա մոտ, տեսավ աղջիկը չկա։

Տղան երկու ձեռքն իրար խփեց.— Ա՜խ,— ասաց,— ես ի՞նչ արեցի։

Եղբայրները տուն եկան, տեսան իրենց քույրը չկա. տղային ասացին.— Ո՞ւր է մեր քույրը։

— Այսպես, այսպես եղավ,— ասաց տղան։

Եղբայրներն ասացին.— Վա՜յ, մեր քույրը մեր ձեռքից գնաց։

— Ո՞ւր գնաց,— ասաց տղան։

— Յոթը ծովի միջի կղզին։

Տղան ասաց.— Ես կգտնեմ նրան։

Գլուխն առավ, ճանապարհ ընկավ։ Շատ գնաց, քիչ գնաց հասավ մի տեղ, լսեց մի ձայն է գալիս։ Կամաց-կամաց մոտեցավ այդ ձայնին, տեսավ երեք մարդ նստած խոսում են։ Հանկարծ ձայն տվեց.— Ի՞նչ եք անում այդտեղ։

Այդ երեքը վախեցան, ասացին.— Սա որտե՞ղից եկավ։ Արի այստեղ, տղա։ Մենք երեք բան ունենք, չենք կարողանում բաժանել։

— Այդ ի՞նչ բաներ են,— ասաց տղան։

— Մեկը գդակ է, մյուսը մի բարձ է, երրորդը՝ մի ադամանդ քար։

Տղան ասաց.— Դրանք ի՞նչ իմաստ ունեն։

Այդ երեք ավազակներն ասացին.— Եթե գդակը գլխիդ դնես՝ քեզ մարդ չի տեսնի։ Եթե բարձը թևիդ տակ տանես՝ մի ձի կդառնա. ուզած տեղդ կտանի քեզ։ Ադամանդ քարն էլ՝ գին չունի։ Այս երեքն էլ չենք կարողանում բաժանել։

Տղան ասաց.— Ես դրանք ձեզ կբաժանեմ վիճակ կգցեմ, ում որ ընկնի, նա էլ իր բաժինը կվերցնի։

— Լավ,— ասացին ավազակները։

Դղան ըսուց.— Ճըհավըրը քուրը դվիք ընծէ, պուրցն ալէ, բօրկն ալէ։

Դղան առավ զաղօնք, ըսուց տալ հարամաքը.— Գըռնագնէտ տարծըցիք տիտէս։

Հարամաքը տարծօն։ Դղան առավ զճահավըրը քուրը, պուրցը խուէր կէրղը, բօրկն ալէ խուէր կըլլուէն, դղան չէրվընցուվ։ Հարամաքը հիյիցուն, հիյիցուն մարդ չկօ, ըրք մէկը զմիգալը սըանիցէն։

Դղան հանից զբօրկը կլլին, առավ զպուրցը ճըհավըրը քուրը, իլավ կնաց, հասավ ձվօն յիզիրը.
— Օ՜ֆ,— ըսուց,— հալա հանչէմ։

Առավ զպուրցը խուէր, դուլթըղը. պուրցը տարծուվ ծէն մը, ծէնը ըսուց տալ դղան.— Ջըրը զուզիս, գինիմ զէ։

Դղան ըսուց.— Ցօլթը ձվօն մէջդիղը բըրուրթունք, յան ադէն միջը։

— Շա՜դ տժար է,— ըսուց ծէնը,— զուրթում. յաղան չըմընէ, չունքու յադ դիղը խուզ մը գօ։ Ադ խուզը բաղզը հօդ առնէ, մէյ զըսբանէ։

Դղան ըսուց.— Ջօ չինիմ։

Ծէնը ըսուց.— Գառնէս մըզրաղ մը, զըհանիմ զքէ յաղան, իս զըմնում ճըրէն միջը։ Մզրաղը զառնիս զըբուհուվէս։ Ցադ դիղը ճօր գօ, խուզը զուկօ զըխըմէ, ուօն չօդ ուշէդ մըզրաղում զըսբանիս զէ, համան-համան փուրը զըբադռէս, փիրէն միջը դուլթէ մը գօ, դուլթէն զառնիս, դուլթէն միջը յուլթը վիրու գօ, ադ վիրուիրը գախարթագանէն հիկկէն ին, բաղզը ըսբանիս զէ, դուլթէն զառնիս՝ գախարթագանը հիվունա զըբադգա։ Քէ Նշանձօն յաղէն միջը դուն մը միջը գօ, զուրթուս, զըղնօս զէ.իս յադիղը քէ զուհիյէմ դըքըր ուկուս։

Դղան խուզը սբանից, դուլթէն առավ, Նիշանձօն դդուվ։ Նշանձօն դիսավ զդղան, մէյըզմիգալը փաթըվիցուն։

Դղան ըսուց տալ Նշանձօն.— Գախարթագանը յօ՞ գօ։

Նշանձօն ցըցօց զանօր դիղը։ Գախարթագանը հիվունա բառգած իր։ Դղան ըսուց.— Ձօւց իս գախարթագան։

— Ամա՛ն, դօր միդ վիրուայը ուզիմ,— ըսուց գախարթագանը։

— Աղվա՛ր է, զուզօմ,— ըսուց դղան, իպուց դուտէն, վիրուիրը միգա՛գ-միգա՛գ սբանից։

Գախարթականը «ըը՜ըմ» իրօգ, սաղցիցուվ։ Նշանձօն կրգից դղան, առավ կնաց։ Ծէնը դըկըր զուհիյէր։ Հիձուն ծիօն, հասուն աշկընէն յախպըրդուցը քովը։ Ախպըրդաքը դիսուն, չօդ խըընդացէն յուլթը որ, յուլթը իրզօն թըմպօգ, զուռնօ քիշդիցէն գիրուն, խմիցէն, քէֆ իրէն։ Դղան ըսուց տալ աշկէնը.— Հիրա՛ք է բըրուրթունք միր քաղա՛քը։

Իլուն կօցէն։ Քէչ կօցէն, չօդ կօցէն, հասուն դղէն քաղա՛ք։ Դղէն դօդը՝ թաքավօրը, խաբուր առուվ էր դղան իգուծ է։

Տղան ասաց.— Ադամանդ քարը, գդակն ու բարձը տվեք ինձ։

Տղան դրանք վերցրեց ու ասաց ավազակներին.— Թիկունքով դ՛պի ինձ դարձեք։

Նրանք դարձան։ Տղան վերցրեց ադամանդ քարը, բարձը դրեց գիրկը, գդակն էլ գլխին, անհետացավ։ Ավազակները սպասեցին, սպասեցին մարդ չկա. երեքն էլ մեկը մյուսին սպանեցին։

Տղան հանեց գլխարկը գլխից, վերցրեց բարձը, ադամանդ քարը, ելավ գնաց, հասավ ծովեզերք.
— Օ՜ֆ,— ասաց.— մի քիչ հանգստանամ։

Վերցրեց բարձը, դրեց թևատակին, բարձը դարձավ մի ձի, ձին ասաց տղային.— Ի՛նչ կուզես, այն էլ կանեմ։

Տղան ասաց.— Յոթ ծովի մեջտեղը պիտի գնանք, այն կղզին։

— Շա՜տ դժվար է,— ասաց ձին,— կգնամ, կղզի չեմ մտնի, որովհետև այնտեղ մի խոզ կա։ Այդ խոզը եթե հոտն առնի, մեզ կսպանի։

Տղան ասաց.— Ի՞նչ անեմ։

Ձին ասաց.— Կառնես մի նիզակ. կհանեմ քեզ կղզին, ես կմնամ ջրի մեջ։ Նիզակը կվերցնես ու կթաքնվես։ Այդտեղ ջուր կա, խոզը կգա խմելու, կխմի, դու նրան կսպանես, իսկույն փորը կպատռես, փորի մեջ մի տուփ կա, այդ տուփը կվերցնես, տուփի մեջ յոթը որդ կա, այդ որդերը կախարդի հոգին են, կվերցնես՝ կախարդը կհիվանդանա։ Կղզու մեջը մի տուն կա, որի մեջ է գտնըվում քո Նշանածը, կգտնես նրան, ես այստեղ կըսպասեմ մինչև գաս։

Տղան խոզին սպանեց, տուփը վերցրեց, Նշանածին գտավ։ Նշանածը տեսավ տղային, մեկը մյուսին փաթաթվեցին։

Տղան ասաց Նշանածին.— Կախարդը ո՞ւր է։

Նշանածը ցույց տվեց նրա տեղը։ Կախարդը հիվանդ պառկած էր։ Տղան ասաց.— Ի՞նչպես ես, կախա՛րդ։

— Ա՜խ, տուր մի որդ ուտեմ.— ասաց կախարդը։

— Լա՛վ, կտամ,— ասաց տղան,— բացեց տուփը, որդերը մեկիկ-մեկիկ սպանեց։

Կախարդը «ըը՜ըմ» արեց, սատկեց։ Նշանածին գրկեց տղան, առավ գնաց։ Ձին սպասում էր։ Հեծան ձին, հասան աղջկա եղբայրների մոտ։ Եղբայրները տեսան, շատ ուրախացան։ Յոթ օր, յոթ գիշեր թմբուկ, զուռնա զարկեցին, կերան, խմեցին, քեֆ արեցին։ Տղան ասաց աղջըկան.— Բավական է, պիտի գնանք մեր քաղաքը։

Ելան գնացին։ Քիչ գնացին, շատ գնացին, հասան տղայի քաղաքը։ Տղայի հայրը՝ թագավորը, իմացավ, որ տղան եկել է։

Դղան առավ զըրգը գնայը հասավ զէր մուրազը։

Իշինք դղէն դուդը՝ թա̈գա̈վա̈րը, չա̈ դուդա̈շա̈մըշ ըննօ։ Թա̈քա̈վա̈րը ձըռձամըշ իղավ, ա̈սաց. «Աս դղան զըղա̈ղվատիմ, զըրբանիմ»։

Թա̈քա̈վա̈րը զէր դղան գա̈ղվատից, պոնիցöց ջալաթէն ծառը իդöր, ա̈սաց տալ ջալաթը.— Դուրանիս զէ։

Դղէն մարը խաբար առավ, ուշէդ գնա̈ց ջալաթը պոնից, ա̈սաց.— Զըննու զէմ բըղդա̈գ դղան սբանիս։ Կնօ շöն մը պընէ, սբանէ, դղէն շա̈բագը հանէ, վիրէնը թաթխէ, թա̈քա̈վա̈րէն դար։ Դղան ադվա̈ր դիղ մը դաբիհիս։

Ջալաթը չարը ա̈սաց թա̈քա̈վիրէն գնալը ա̈րöցզէ։

Թա̈քա̈վա̈րէն բըղդա̈գ դղէն գա̈ննա̈քը գուհիլէրին՝ դղօն իս օր գուկօ, վա̈ղը գուկօ, դղօ չըկօ։

Դղէն առչը գնալը ա̈սաց.— Իշի, համօ թա̈քա̈վա̈րէն կլօխը չա̈ պիրիմ,— քիշից զթöրը, զիխից կիդէնը, ըլթըն մամլաքաթը մըխրէմ քիմը ա̈ռկա̈ր տարծուվ։

Ա̈սկա̈րնէն մինձը ա̈սաց տալ դղէն գնալը.— Զա̈ շինինք։

Դղէն գնալը իպուց հիսէնքթիթը։ Ա̈սկա̈րնէն մինձին ա̈սաց.— Յառանչ՝ թըղ ադիլա̈ ադին։

Ա̈սկա̈րնէն ադիլա̈ գիրան, գիշդացան։ Գնալը հիսէնքթիթը ձալից, իսöր դիղը, ա̈սաց տալ ա̈սկա̈րնէն մինձը.— Փըընչալս սահաթըն մէջը զէմ մարթը դազիմ։ Դարթաս պա̈սիս թա̈քա̈վա̈րէն։

Ա̈սկա̈րնէն մինձը կնա̈ց թա̈քա̈վա̈րէն քովը, ա̈սաց.— Համó-համó բըղդա̈գ դղան դազիմ, համó-համó պիրիր՝ պիրիր, չըպիրիր՝ կլöխս բըրդըդրիմ։

Թա̈քա̈վա̈րը վախթունը զինչից զջալաթը.— Ամա̈ն,— ա̈սաց,— բըղդա̈գ դղաս յօ՞ դօ։

Ջալաթը ա̈սաց.— Բիհուձ իմ զէ։

— Շա̈՞դ աբրէս, կնó պիր զէ,— ա̈սաց թա̈քա̈վա̈րը։

Ջալաթը իպիր զթա̈քա̈վա̈րէն բըղդա̈գ դղան։

Խաբուր դվէն զինդունը, քէ դղան իպիք։ Գնալը բաղըրը թուսը առավ, իդöր ա̈սկա̈րնէն մինձէն, ա̈սաց.— Յէմ ղունալըն դըկըր թա̈քա̈վա̈րէն դունաղը, աս թասամ ճöր զըֆիտիս՝ ջամպաքը իսկա զըտառնու։ Էմ մարթը զըհիձնա ձիօն, դուկօ յէմ քովը։

Թա̈քա̈վա̈րէն բըղդա̈գ դղան հիձավ ձիօն, իգիք զա̈ննօցը քովը։ Ամըր ա̈րöց ա̈սկա̈րնէն մինձէն՝ թա̈քա̈վա̈րէն կլöխը դդրիլ։

Ա̈սկա̈րնէն մինձը համան թա̈քա̈վա̈րէն կլöխը դդրից, իպիր։

Թա̈գա̈վա̈րէն բըղդա̈գ դղան հասավ էր մուրազէն, տöք ալէ հասնաք ծիր մուրազէն։

Տղան առավ երկու կանանց, հասավ իր մուրազին։

Տեսնենք տղայի հայրը՝ թագավորը, ի՞նչ է մտածում։ Թագավորը նախանձեց. մտածեց. «Ես տղային կհրավիրեմ, կսպանեմ»։

Թագավորն իր տղային հրավիրեց, բռնեց դահճի ձեռքը տվեց, ասաց.— Կսպանես սրան։

Տղայի մայրը լուր առավ, իսկույն գնաց դահճին բռնեց, ասաց.— Չլինի որ իմ փոքր տղային սպանես։ Գնա մի շուն բռնի, սպանի, տղայի շապիկը հանի վրայից, արյան մեջ թաթախի, թագավորին տար։ Տղային մի լավ տեղ կպահես։

Ինչ որ թագավորի կինն ասաց, դահիճը նույնն արեց։

Թագավորի փոքր տղայի կանայք սպասում էին՝ տղան այսօր կգա, վաղը կգա, տղան չկա։

Տղայի առաջին կինն ասաց.— Տես, հիմա թագավորի գլխին ի՞նչ պիտի բերեմ,— քաշեց թուրը, զարկեց գետնին, ամբողջ երկիրը մրջյունի պես զինվոր դարձավ։

Զինվորների մեծն ասաց տղայի կնոջը.— Ի՞նչ անենք։

Տղայի կինը բացեց սփռոցը։ Զինվորների մեծին ասաց.— Նախ՝ թող ուտեն։

Զինվորները կերան, կշտացան։ Կինը սփռոցը ծալեց, դրեց տեղը, ասաց զինվորների մեծին.— Քսանչորս ժամվա մեջ իմ ամուսնուն եմ ուզում։ Գնաս թագավորին կասես։

Զինվորների մեծը գնաց թագավորի մոտ, ասաց.— Հիմա́-հիմա́ փոքր տղային եմ ուզում, հիմա́-հիմա́ բերեցիր՝ բերեցիր, չբերեցիր՝ գլուխդ կկտրեմ։

Թագավորը վախից կանչեց դահճին.— Ամա̂ն,— ասաց,— ու՞ր է փոքր տղաս։

Դահիճն ասաց.— Պահել եմ։

— Շուտ արա, գնա բեր նրան,— ասաց թագավորը։

Դահիճը բերեց թագավորի փոքր տղային։

Իմաց տվեցին կնոջը, թե տղան եկել է։ Կինը պղնձե թասն առավ, տվեց զինվորների մեծին, ասաց.— Իմ պալատից մինչև թագավորի պալատը այս թասով ջուր կթափես՝ ճամփան ոսկի կդառնա։ Ամուսինս կհեծնի ձին ու կգա ինձ մոտ։

Թագավորի փոքր տղան հեծավ ձին, եկավ կանանց մոտ։ Հրամայեց զինվորների մեծին՝ թագավորի գլուխը կտրել։

Զինվորների մեծը իսկույն թագավորի գլուխը կտրեց, բերեց։

Թագավորի փոքր տղան հասավ իր մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

## 3 (3). ՋԸՐՔԸՆ ԴՂԱՆ

*Գըգինօ, չըգինուր մար մը իլան դղա մը։ Դղէն անունը Ջըրքըն իր։ Ադ դղան ձնն է չըրքըն իր։ Գուկէրին տրացնիրը դղան գուշինիֆըրէրին մուրը, գուռէրին.— Դղէտ անունը չմ ի։*

*Մարը գուխր.— Իմ դղէն անունը հիդը բարաբար ձնուձ ի, անոր անունը Ջըրքըն ի։*

*Մարը գըկիդիր, էր դղան նաղուր մինձնօ, քանզան չըրքըն բըշ ընիօ, ադոր համար զանօնը իտօր Ջըրքըն։*

*Տղան քանզան չըրքըն իր, ինսաննէն միչը չիգար. միրընէն միչը թա գուխա, միրընէն միչը չիգար, սադանա միչը թը գուխա իսա, սադանու չալմանիր։ Ջըրքըն դղան ուրէ-ուր մինձնիլուվ իհալին յիրմինի գուվախնիր, չուջըինէն գուվախնէրին յիրմինը, հիդը չոխաղէրին։ Գամաց-գամաց դղան մինձավ, նաղուր ախա՝ խլօք իր, նաղուր ախա՝ ցավ սիրդ իր։ Իհալին խաբօլ չիրինէրին զէ յիրինց միչը, ադոր համար յալընըզ գուբրիր։ Ամըն օր ադ դղան գուրթիր ձըվօն իզիրը, բուրչընէն, թալլընէն, լէռօնքը գէլիր։ Ուր մը ջամպին գուանցնիր, ջամպօն յիզիրը մըճօմ դէսավ, նաղավ յադ դիդը, իշից մըճուռնէն գուպանէն։ Ջըրքըն դղան դըյուշիմըշ իղավ. «Աս մըրճուռնէն չմ գուդին, մի՞ինք ին»։*

*Կնաց թարլնին ցիրին իպիր, իդօր մըրճըռնէն,*

*Մըրճըռնէն թաքավօրը իգիք, ասաց.— Շա՛դ աբրէս, Ջըրքըն դղօ, օռ քէ մըրճըմուն վըդ մը ադօմ, զաս ադվար գուբիհիս, յիփըր նիդը գուինէս գուչաղիս զէ, իս քէ դըհանէմ։*

*Դղան ասաց,— Աղվա՛ր է,— առավ, իտէր դէ ջիրը, իլավ կնաց։*

*Ղէրը ուր մալէ բախչէն միչը դիսավ ղըվըղ ձառ մը, ձառէն միչը միդօ գուպանիր. «Մի՞ինք ին,— ասաց Ջըրքըն դղան,— ասոնք չմ գուդին, ձաղգընէն չիրցուձ ին, ձառիրը մայվա չըզօ։ Ասոնց ադիլը շինիմ, թըղ ուդին»։*

*Դղան կնաց յպիր ճօր, շաքուր։ Թաս մը ճըրէն միչը իլէց զշաքուրը, ադվար մը հալից զէ, իտէր զէ գրազէն յէրվան, քէչ մը շուղցուվ, մաղը թաթխից միչը, դըքըր մուղը տիմանօ։ Կնաց ձօզ-ձօզ դափազ քուր մը պիրից, միղվէն ուդիլան իլէց յէրվան, դըքըր քարէն ձաղվէն լվա, իտէր զէ յարիվէն դուկը։ Ջաղըր մէղօք գար, իգէն գիրուն զադ ուդիլան։ Միղվէն մինձը ասուց տալ Ջըրքըն դղան.— Օ՛ռ, ուղօմ քէ մէղվը թիվ մը, յօրը նիդը գուինէս, չաղի զէ, իս քէ դըհասնէմ։*

*Դղան առավ մէղվը թիվը իտէր ջիրը։*

*Ուչընջը օրը ձըվօն յիզիրքը կնաց։*

## 3(3). ՏԳԵՂ ՏՂԱՆ

*Լինում է, չի լինում, մի մայր ու տղա է լինում։ Տղայի անունը Տգեղ էր։ Այդ տղան ծնված օրից տգեղ էր, հարևանները գալիս էին շնորհավորելու մորը, հարցնում էին.—Տղայիդ անունն ի՞նչ է։*

*Մայրն ասում էր.— Իմ տղայի անունն իր հետ միասին է ծնվել, նրա անունը Տգեղ է։*

*Մայրը գիտեր, որ տղան ինչքան մեծանա, այնքան պիտի տգեղանա, դրա համար էլ անունը Տգեղ դրեց։*

*Տղան այնքան տգեղ էր, որ մարդկանց մեջ նմանը չկար, կապիկների մեջ թե ասես, կապիկների մեջ էլ չկար, սատանաների մեջն էլ թե ասես, սատանայի էլ նման չէր։ Տղան օրեցօր մեծանում էր, ժողովուրդը նրանից վախենում էր, երեխաներն էլ նրանից վախենում էին, հետը չէին խաղում։ Կամաց-կամաց տղան մեծացավ, ինչքան խելոք ասես՝ խելոք էր, ինչքան ասես՝ սրտացավ էր։ Մարդիկ նրան չէին ընդունում իրենց մեջ, դրա համար էլ մենակ էր ապրում։ Ամեն օր այդ տղան գնում էր ծովեզերքը, այգիները, արտերը, լեռները ման էր գալիս։ Մի օր ճամփով գնալիս ճամփեզրին մրջյուն տեսավ, նստեց այնտեղ, տեսավ մրջյուններն աշխատում են։ Տգեղ տղան մտածեց. «Այս մրջյուններն ի՞նչ են ուտում, մե՞ղք են»։ Գնաց արտերից ցորեն բերեց, տվեց մրջյուններին։*

*Մրջյունների թագավորը եկավ, ասաց.— Շա՛տ ապրես, Տգեղ տղա, ա՛ռ քեզ մրջյունի մի ոտ տամ, այն լավ կպահես, երբ նեղն ընկնես, կշփես, ես քեզ կհասնեմ։*

*Տղան ասաց.— Լա՛վ է,— վերցրեց, դրեց գրպանը, ելավ գնաց։*

*Մի օր էլ այգում տեսավ մի փչակով ծառ, ծառի մեջը մեղու էր բանում. «Մե՞ղք են,— ասաց Տգեղ տղան,— սրանք ի՞նչ են ուտում, ծաղիկները չորացել են, ծառերի վրա պտուղ չկա։ Սրանց ուտելիք շինեմ, թող ուտեն»։*

*Տղան գնաց ջուր ու շաքար բերեց, մի թաս ջրի մեջ լցրեց շաքարը, լավ հալեցրեց, դրեց կրակին, մի քիչ տաքացավ, մատը թաթախեց մեջը, մինչև դիմանալը։ Գնաց ծակ-ծակ մի տափակ քար բերեց, մեղվի ուտելիքը վրան լցրեց, մինչև ծակոտիները լցվեցին, դրեց արևի տակ։ Ինչքան մեղու կար եկան, կերան։ Մայր մեղուն եկավ ասաց.—Ա՛ռ, տամ քեզ մի մեղվի թև, երբ որ նեղն ընկնես, շփի այն, ես քեզ կհասնեմ։*

*Տղան առավ մեղվի թևը, դրեց գրպանը։*

*Երրորդ օրը ծովեզերք գնաց։*

Ձուվը հա̈նկէսդ իր։ Դղան իշից՝ ձուվօն միջը մինձ ծöլ մը բռնդուձ իր, գոնօյը օղ մը դար. «Մի՞խք է,— ա̈սուց Զըրքըն դղան,— օղը հանիմ գոնադէնս»։

Իճուվ ճըէն միջը, օղը հանից, ծöլը հանկճիցուվ, ա̈սուց տալ դղան.— Շա̈՞դ աբրէս, Զըրքըն դղօ, ուզէ՛, ուզօմ քէ։

Զըրքըն դղան ա̈սուց տալ ծöլը.— Ձուվը թա̈քա̈վա̈ր, շա̈դ աբրէս, ձուվը միջը իրդան ումըր քէ։

Ծöլը ա̈սուց.— Օ՛ռ, քէ փուլ մը ուզօմ լէմ գոնադէն, հöրը նիղը գուինէս, իսկէ ձուվուն միջը, իս քէ գըհասնէմ։

Դղան փուլը առուվ, իտէր ջիրը, կնա̈ց իդօն։

Շա̈դ անցուվ, քէչ անցուվ, դղան գէր բօլը առուվ, ա̈սուց տալ մարը.— Յամա̈, բըր նիշա̈նվէմ։

— Ա̈՛ղվա̈ր է դղաս,— ա̈սուց մարը.— ուզէ ա̈շկէն, իս առնէմ։

Դղան շա̈դ ա̈շկնիր ուզից, ա̈շկէն չըդվէն, ա̈շկընիրը գա̈սէրին. «Ո՞ւվ գաս սաղանան գառնէ»։

Դղան շա̈դ նիղա̈ցուվ, ա̈սուց տալ մարը.— Յամա̈, ընծէ ա̈շկէն չա̈դօն, իս չըրքըն իմ, էմ չըրքընըլըքը լա̈մա̈՞ր լառանչ իգուձ է։

Մարը ա̈սուց.— Դղա̈ս, հöրը ինսանէն ա̈ղվըրտէնը գվուձ ին, տօն չըկէր։ Զա̈ղվա̈ր վախտէն հասուր, ագա̈ր համուր տօն չաղվա̈ր ռանգ առիր։

Դղան ա̈սուց տալ մարը.— Զարա չըգօ՞ էմ չաղվըրտընը փիխվա։

— Չըրքընըլըքը,— ա̈սուց մարը,— քէ ձննուձ ուրին քէ գըրվուձ ի, չարա չըգօ։ Աղ հի՞չ, ա̈սօ քէ խիլք, պախդ ըննօ։ Ալաք պունը քէ հա̈մուր աղվա̈ր գըննօ։

— Հա̈բօ,— ա̈սուց դղան,— յամա̈, ընծի, ա̈շկէն չուդօն, չա̈ բըր ըննօ։

— Իս բըր ուրթում թա̈քա̈վա̈րէն ա̈ղվա̈ր ա̈շկէնը բըր ուզիմ։ Ինալէն սիրդը ցուվ չիգօ, բալքի թա̈քա̈վա̈րէն սիրդը ցուվ գօ։

— Էգար թը ինալէն սիրդը ցուվ չիգօ, թա̈քա̈վա̈րէն սիրդը հի՞չ չըննուր,— ա̈սուց մարը։

Դղան ա̈սուց տալ մարը.— Տօն կնօ ուզի թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը ընծի, չարըր գուզէ ան թըղ ըննօ։

Մարը կնա̈ց թա̈քա̈վա̈րէն քուվը, ա̈սուց թա̈քա̈վա̈րէն.— Թա̈քա̈վա̈րն աբրէ՛, քէ՛ ա̈ղվա̈ր ա̈շկէնը էմ Զըրքըն դղէն գուդօ՞ս։

— Գուդօ՛մ,— ա̈սուց թա̈քա̈վա̈րը.— Թըղ ուկօ քէ դղան, դիսնում զէ։

Թա̈քա̈վա̈րը դղէն գանծնը լսուձ իր, դիսուձ չիր զէ։

Իգիք մարը, ա̈սուց դղէն.— Տօն թա̈քա̈վա̈րէն քուվը բըր ուրթուս, ան զքէ բըր դիսնօ։

Դղան իլուվ, կնա̈ց թա̈քա̈վա̈րէն քուվը։ Թա̈քա̈վա̈րը դիսուվ զդղան, գաշքը փակից վախու-

Ծովը հանգիստ էր։ Տղան նայեց՝ ծովի մեջ մի մեծ ձուկ էր պառկած, թիկունքին մի օղ կար. «Մե՞ղք է,— ասաց Տգեղ տղան,— օղը հանեմ թիկունքից»։

Իջավ ջրի մեջ, օղը հանեց, ձուկը հանգստացավ, ասաց տղային.— Շա՞տ ապրես, Տգեղ տղա, ո՛ւզիր, տամ քեզ։

Տգեղ տղան ասաց ձկանը.— Ծովի թագավոր, շատ ապրես, ծովի մեջ երկար կյանք ունենաս։

Ձուկն ասաց.— Ա՛ռ, քեզ մի թեփուկ տամ թիկունքիցս, երբ նեղն ընկնես, այն ծովը գցիր, ես քեզ կհասնեմ։

Տղան թեփուկն առավ, դրեց գրպանը, գնաց տուն։

Շատ անցավ, քիչ անցավ, տղան իր հասակն առավ, ասաց մորը.— Մայրի՛կ, պիտի նշանվեմ։

— Լա՛վ, տղաս,— ասաց մայրը,— ուզիր աղջկան, ես բերեմ։

Տղան շատ աղջիկներ ուզեց, աղջիկ չտվեցին, աղջիկներն ասում էին. «Այդ սատանային ո՞վ կառնի»։

Տղան շատ վիրավորվեց, ասաց մորը.— Մայրի՛կ, ինձ աղջիկ չեն տալիս, ես տգեղ եմ, իմ տգեղությունն որտե՞ղից է առաջ եկել։

Մայրն ասաց.— Տղա՛ս, երբ մարդկանց գեղեցկություն էին բաշխում, դու չկայիր։ Վատ ժամանակ հասար, դրա համար էլ տգեղ տեսք ստացար։

Տղան ասաց մորը.— Իմ տգեղությունը փոխվելու ճար չկա՞։

— Իսկ եթե ինձ աղջիկ չտան,— ասաց տըղան,— ի՞նչ պիտի լինի։

—Ես պիտի գնամ թագավորի գեղեցիկ աղջկան ուզեմ։ Մարդիկ սրտացավ չեն, գուցե թագավորի սիրտը ցավի։

— Եթե մարդկանց սիրտը չի ցավում, թագավորի սիրտը բնա՛վ չի ցավի,— ասաց մայրը։

Տղան ասաց մորը.— Դու գնա թագավորի աղջկան ինձ ուզի, ինչ ուզում է, թող լինի։

Մայրը գնաց թագավորի մոտ, ասաց.— Թագավորն ապրի՛, քո սիրուն աղջկան իմ Տգեղ տղային կտա՞ս։

— Կտա՛մ,— ասաց թագավորը,— թող քո տղան գա, տեսնեմ նրան։

Թագավորը տղայի մասին լսել էր, բայց չէր տեսել։

Մայրը եկավ, ասաց տղային.— Դու թագավորի մոտ պիտի գնաս, քեզ տեսնի։

Տղան ելավ, գնաց թագավորի մոտ։ Թագավորը տեսավ տղային, վախից աչքը փակեց.



3—941

տէնը. «Աս չըմ պուն ի,— ա̈սուց,— սաղանէն բըր ուզօմ զա̈շկէնիս»:

Իպուց զաշքը, ա̈սուց տալ դղան.— Ըրք շարթ զունէմ: Առչի շարթը՝ տօն քան զէմ ա̈շկէնը ա̈ղվա̈ր բըր ըննուս: Իքինչը շարթը՝ քառսօն դըբրա̈գ խառնըզուձ ցիրին, կարա, զիվուն ըրք ուրէն միչը բըր հընդրիս, զամըն թավըր չէր դըբըրգէն միչը բըր ըըլօս: Ուչընչը շարթը՝ էմ ա̈շկէնը զմադնէն ձուվը բըր քարէ, բըր պիրիս գէ: Յօթ ուր մա̈դա̈տ քէ:

Դղան տարձուվ, էր մուրը ա̈սուց թա̈գա̈վա̈րէն ա̈սաձնէն:

— Զըմ զուզա̈շըմըշ ըննօս, դղա̈ս,— ա̈սուց մարը:

— Ալայը զըննօ, մըվախնու.— ա̈սուց դղան:

Հանից միղվէն թիվը, չա̊լից:

Մէղվէն մինձը հասուվ, ա̈սուց տալ դղան.— Զըմ զուզիս:

— Զէմ չա̈ղվըրտէնը բըր ա̈ղվըրցըննիս,— ա̈սուց դղան:

Միղվէն մինձը ա̈սուց.— Շու՛դ աղվա̈ր, հիշդ է ծու քէ ըրք թա̈վըր ձա̈ղա̈գ, կնօ բղնծէ մը միչը տէր գէ, ճօ̈րը շուղձա̈ր, ադ ճըրում ըըվա̈ցվէ, բաղզը խա̈լխուէս, ձա̈գզէն հիդին զըհարիննուս, զըբաոզէս. իս զուզում, սն վախըտը զա̈խշա̈րէն ա̈ղվըրտէնը քէ չէրվան զըքիշիմ: Թա̈քա̈վա̈րը քէ զա̈շկէնը բըր ուզօ, չըխա̈պըտվէս. ըրք ա̈շկէն բըր պիրէ չէր ա̈շկընէն հիդը, իրիսնին իզար բըր հաքցըցէ, զա̈սէ քէ. «Օ՛ռ զա̈շկէնը, կնօ»: Իս չօմըր կըլխէն զընօղէմ, զան զուզիս:

Զարըր միղվէն մինձը ա̈սուց, դղան ա̈րօ̈ց գէ: Քանըզ թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը չա̈դ ա̈ղվօ̈ւր իղուվ, կնա̈ց թա̈քա̈վա̈րէն քուվը:

Թա̈քա̈վա̈րը դիսուվ զդղան, շաշմըշ իղուվ, զա̈շկէնը իպիր դզին տիմը, իշից դղան քան գէր ա̈շկէնը ա̈ղվօ̈ւր ի:

— Առչը շարթը խա̈լխսիցուվ,— ա̈սուց թա̈քա̈վա̈րը:

Ցանա̈ր սօրա դղան չա̊լից մըրճըմէն վըդը: Մրճըմէն թա̈քա̈վա̈րը իզիք ա̈սուց տալ դղան.— Զըմ զուզիս ինիմ:

Դղան ա̈սուց.— Քառսօն դըբրա̈գ ցիրին, կարազիվուն խառնվուձ ըրք ուրէն միչը բըր հընդրիս, զամըն թավըր չէր դըբըրըգէն միչը բըր ըըլօս:

Մրճըմէն թա̈քա̈վա̈րը ամըր ա̈րօ̈ց մըրճըմնէն՝ քառսօն դըբրա̈գ զախրան զա̈դիցէլն մէյը միգալին, արէն դըբըրգնէլն միչը:

Թա̈քա̈վա̈րը դիսուվ գէ, ա̈սուց տալ դղան.— Աբրէս դղաս, իքինչը շարթը խա̈լխսիցուվ: Ու̈չունչը շարթը բըր զա̈դա̈րիս:

«Սա ի՞նչ բան է,— ասաց,— սատանայի պիտի տամ աղջկաս»:

Աչքը բացեց, տղային ասաց.— Երեք պայման ունեմ: Առաջինը՝ դու իմ աղջկանից ավելի գեղեցիկ պիտի դառնաս: Երկրորդ պայմանը՝ քառասուն պարկ ցորենի, գարու և որոմի խառնուրդը երեք օրվա մեջ պետք է ընտրես, առանձին տոպրակների մեջ լցնես: Երրորդ պայմանը՝ աղջիկս իր մատանին ծովը կգցի, պիտի բերես այն: Յոթը օր քեզ ժամանակ:

Տղան եկավ, մորն ասաց թագավորի ասածները:

— Ի՞նչ ես մտածում, տղա՛ս,— ասաց մայրը:

— Ամեն ինչ կլինի, մի՛ վախեցիր,— ասաց տղան:

Հանեց մեղվի թևը, շփեց:

Մեղուների մեծը հասավ, ասաց տղային.— Ի՞նչ ես ուզում:

— Իմ տգեղությունը պիտի գեղեցկացնես,— ասաց տղան:

Մեղուների մեծն ասաց.— Շա՛տ լավ, հեշտ է, ա՛ռ քեզ երեք տեսակ ծաղիկ, գնա դիր մի պղինձ ջրի մեջ, տաքացրու, այդ ջրով լվացվի, երբ կվերջացնես, ծաղկի բուրմունքից կարբենաս ու կպառկես. ես կգամ, այդ ժամանակ աշխարհի գեղեցկությունը քո վրա կթափեմ: Թագավորը քեզ աղջիկը պիտի տա, չխաբվես. երեք աղջիկ պիտի բերի իր աղջկա հետ, երեսներին շղարշ գցած, կասի քեզ. «Ա՛ռ աղջկան, գնա»: Ես ում գլխին նստեմ, նրան կուզես:

Ինչ որ մեղուների մեծն ասաց, տղան կատարեց: Թագավորի աղջկանից ավելի գեղեցիկ դարձավ, գնաց թագավորի մոտ: Թագավորը տղային տեսավ, զարմացավ, աղջկան բերեց տղայի մոտ, տեսավ իր աղջկանից գեղեցիկ է:

— Առաջին պայմանն ավարտվեց,— ասաց թագավորը:

Դրանից հետո տղան շփեց մրջյունի ոտքը: Մրջյունների թագավորն եկավ, ասաց տղային.— Ի՞նչ ես ուզում անեմ:

Տղան ասաց.— Քառասուն տոպրակ ցորեն, գարի, որոմ իրար են խառնված, երեք օրից պիտի ընտրես, ամեն տեսակն առանձին իր տոպրակի մեջ պիտի լցնես:

Մրջյունների թագավորը հրամայեց մրջյուններին՝ քառասուն տոպրակ խառնուրդը զատեցին իրարից, լցրեցին տոպրակները:

Թագավորը տեսավ, ասաց տղային.— Ապրե՛ս տղաս, երկրորդ պայմանն էլ ավարտվեց: Երրորդ պայմանն էլ պիտի կատարես:

Աշկէնը քäրից զմäղնէն ձվուն միչը, ծօյ մը բդլից գէ։ Դղան իլվուձ ուրը կնäց ձվօն իղիրը, փուլը հանից, քäրից ճըրէն միչը, ծöյր իղիկ, äսաց.— Օ՛ռ, զթäքäվäրէն äշկընէն մäղնէն,— իսկից գէ ձվօն յիղիրը։

Դղան äռուվ զմäղնէն, կնäց թäքäվäրէն քուվը, իղöր զմäղնէն թäքäվäրէն։

Թäքäվäրը äսաց.— Äղվäր է, äբրէ՛ս դղաս, äշկէնը պիրիմ, óռ։

Թäքäվäրը իպիր ըրք äշկէն, äսաց.— Օ՛ռ, քէ ուզուձը։

Դղան շաշմըշ իղուվ, զըմօ բըր ասնէ։ Համան մէզօն իգիք նսղուվ յան äշկընէն կլխէն. քէ դղան գուզի գէ։ Դղան քիշից զäշկընէն ծäռը, առուվ կնäց իղօն։

Յօթը ուր, յութը իրզօն քէֆ ու խնդօմ իրէն։ Զըրքըն դղան հասավ յէր մուրազէն, մինք ալ հասնէնք միր մուրազէն։

Աղջիկը մատանին ծովը գցեց, մի ձուկ այն կուլ տվեց։ Տղան հաջորդ օրը գնաց ծովեզր, թեփուկը հանեց, գցեց ջրի մեջ, ձուկը եկավ, ասաց.— Ա՛ռ, թագավորի աղջկա մատանին,— այն գցեց ափ։

Տղան վերցրեց մատանին, գնաց թագավորի մոտ, տվեց նրան։

Թագավորն ասաց.— Լավ, ապրե՛ս տղաս, աղջկան բերեմ, տա՛ր։

Թագավորը բերեց երեք աղջիկ, ասաց.— Ա՛ռ, ուզածդ։

Տղան շվարեց, որ մեկին ընտրի։ Մեղուն իսկույն եկավ, նստեց այն աղջկա գլխին, որին տղան ուզում էր։ Տղան քաշեց աղջկա ձեռքից, առավ, գնաց տուն։

Յոթ օր, յոթ գիշեր քեֆ ու խնդում արեցին։ Տգեղ տղան հասավ իր մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

## 4 (4). ԱՎՋԻ ԴՂԱՆ

Գըգինօ, չըգինուր ավչը մուրթ մը։ Ադ մուրթը պըգդգöց սուրվուձ իր ավչըըլխը, շäդ վäրբիդ ավջա իր։ Ան յէր öմրին մäճնուն չիր, äնուր համուր քէ, ցիրինէն ամբուրը դալմա տարդօյ իր։ Գըկիդիր արգադ ըևիլը, գինա վօղ չըր ուկիր ավչըըլխէն։ Ան գէր öմրը ընցöց ավչըըլխուվ, հäլըվըրից։ Ուր մը äլէ հիվընացուվ, կիդäցուվ բըր միռնա, գինչից գէր դղան äսաց էր. «Ավչըըլխ մինէ»։

Ավչէն միռուվ։ Շäդ վախըտ անցուվ, քէչ վախըտ անցուվ, ավչէն դղէն ինգըրդաքը իգէն, äցէն էր.— Բիլի՛, ուրթունք յավը։

Դղան äսաց.— Իս չը՛մ ուրթու։

Ինգըրնէն äցէն էր.— Այըբ ի քէ, քու դուդը ավչա իր, տօ՛ն ավչըըլխ չըր կիդէս։ Յաստէն-յանտէն ինգըրդաքը խäպըդիցէն գէ։ Իլուն կäցէն յավը, հասուն լիռը։

Ավչը դղան շäդ ղ̊աշէմ իր, լէռօնքը կացուձ չիր։ Նստուն յախպըրէ մը յաշք, ուդիլա գիրուն, իլուն կäցէն լէռօնքը իվիլ։ Ինգըրդաքը ավչը դղան լիռը թօղէն, իլուն կäցէն իդօն։ Ուրը մթնիլä իր։ Ավչը դղան վախցուվ, գինչից ինգըրդուցը, ինգըրդաքը ձան չըդվէն։ Յադ վախըտը կիդացուվ գէնք թօղուձ ին լիռը, իլուձ կäցուձ ին։ Ճամպընէն չըր կիդիր, դիղ չըր կիդիր։ Äսաց. «Ուրթում յան ախպըրէն յաշքը, ըննիմ սուսէն ձարքը, բառդէմ»։

Մöթը կիդէնը ինգուվ։ Դղան վախըտունը էնքզէնք գարից սուսէն ձարքը, քի չիյնա իվար։ Ան

## 4(4). ՈՐՍՈՐԴԻ ՏՂԱՆ

Լինում է, չի լինում, մի որսորդ մարդ է լինում։ Այդ մարդը փոքրուց սովոր էր որսորդության, շատ վարպետ որսորդ էր։ Նա իր կյանքից գոհ չէր, քանի որ ցորենի ամբարը միշտ դատարկ էր։ Այդ գիտեր, բայց նորից որսորդությունից ձեռ չէր քաշում։ Նա իր կյանքը որսորդությամբ անցկացրեց, ծերացավ։ Մի օր էլ հիվանդացավ, զգաց, որ պիտի մեռնի, կանչեց տղային, ասաց. «Որսորդություն մի՛ անի»։

Որսորդը մեռավ։ Շատ ժամանակ անցավ, քիչ ժամանակ անցավ, տղայի ընկերները եկան, ասացին նրան.— Արի՛, գնանք որսի։

Տղան ասաց.— Ես չե՛մ գնա։

Ընկերները նրան ասացին.— Ա՛մոթ է քեզ, հայրդ որսորդ էր, դու որսորդություն չգիտես։ Դես—դեն, ընկերները խաբեցին նրան։ Ելան գնացին որսի, հասան լեռը։

Որսորդի տղան շատ անփորձ էր, լեռներում չէր եղել։ Նստեցին աղբյուրի ակի մոտ, հաց կերան, գնացին լեռները ման գալու։ Ընկերները որսորդի տղային թողեցին այնտեղ, գնացին տուն։ Օրը մթնեց։ Որսորդի տղան վախեցավ, կանչեց ընկերներին, ընկերները ձայն չտվեցին։ Այդ ժամանակ հասկացավ, որ իրեն թողել են լեռը, գնացել։ Ճանապարհ չգիտեր, տեղ չգիտեր։ Ասաց. «Գնամ այդ աղբյուրի ակը, բարձրանամ սոսու կատարին, քնեմ»։

Մութը գետին ընկավ։ Տղան վախից ինքն իրեն կապեց սոսու կատարից, որ վայր չընկնի։

ցուվ էփէլը վախըլտ մը, գա̈մուց-գա̈մուց ջանավուրնէն ծանը գումուդգընիր. տալ ախպայրը գուկէրին ճöր խմիլա̈ համար։ Գըտրն լէռնը միչը յադ դիղը բա̈ս ճöր գար։ Դղան վախըլտոնը հի՞չ հըգարցուվ բառդիր։ Ղաթ մ՚ա̈լէ իգէն ըրք-չորս ջանավուր։ Աղա̈նք քանզան աղվöր էրին. աղա̈նց պօրտը լալս դուդիր։

Դղան ա̈սուց. «Նիդիմ յասա̈ցմէ մէյը»: Իլլից գթվունգը, վիրունց իվար ղումպըցöց։ Ջանավöրնէն մէյը սադգիցուվ:

Սա̈բախդան իղուվ, արիվը ձիթից, դղան իճուվ իվար, քիրթից ջանավուրէն գիշէն, առուվ կնա̈ց։ Յաստէն-յանտէն ինգուվ, գուռուվ հա̈սուվ իդօն, մարը ա̈սուց.— Յամա̈, ըսկօ՜ աղվöր գիշէ մը պիրա։

Մարը բաշլից լուցը, ա̈սուց.— Չվա̈ տöն ավջըլըխ կացիր։

— Ընգըրդաքս խապըդիցէն,— ա̈սուց դղան,— գութ մ՚ա̈լէ ավջըլըխ չըմուրթօ։

— Ձաս գիշէն չա̈ բըր շինինք,— մարը ա̈սուց։

— Աս գիշէն շա̈դ սöղ գընօ, ձախի զէ, գուդօն քէ հէնկ հարէր իսկա, ուզօ հազար իսկա։

Սա̈բախդան դղան մարը ուրթիլէյն չհիյիցուվ, առուվ զգիշէն, կնա̈ց։

Ջարշէն գուլվիր, ճըհöդ մը դիսուվ զէ, ա̈սուց տալ դղան.— Ձաս գիշէն գուձախի՞ս։

— Հա̈, գուձախիմ զէ.— ա̈սուց դղան։

Ճըհöդն իդö՞ր էր հազար իսկա։ Ճըհöդը գուկիդիր ադ գիշէն գիժիր ըրք հազար պատուռ իսկա։

Ավչէն դղան իգիք իդօն, իտöր գփարէն մարը գիրուն, խմիցէն, վախըլտ անցըցէն։

Ադ վախըլտէն թա̈քա̈վöրը գինչից զդղան։ Դըղան պա̈նէ խա̈բար չիր։

— Թա̈քա̈վöրը չա̈ դիրաք բըր գինչէ,— ա̈սուց դղան էր մարը,— Ուրթö՞ւմ, յամա̈։

Մարը ա̈սուց.— Կնա̈, մըվա̈խնա, իշէ՛ թա̈քա̈վöրը չա̈ գուա̈նէ։

Ավչէն դղան կնա̈ց թա̈քա̈վöրէն քուվը, դիսուվ՝ թա̈քա̈վöրը նսդուձ է, ան աղվöր գիշէն ա̈լ բադէն էրվան գախուձ է։

Ա̈սուց թա̈քա̈վöրը.— Ըսօ գիշէն տöն պիրուձ ի՞ս։

Դղան ա̈սուց.— Իս գիշէ մը պիրուձ իմ, չըմկիդէ ըսօ՞ է, թէ՞ ընօ է։

Թա̈քա̈վöրը ա̈սուց տալ ավչէն դղան.— Յաս գիշին դուսը միգ գուզիմ։

Դղան ա̈սուց.— Ուրթում էմ մարը ա̈սիմ, քէ ջուղուբ գուդօմ։

Դղան իլուվ կնա̈ց իդօն։

Բավական ժամանակ անցավ, կամաց-կամաց գազանների ձայնը մոտենում էր. գալիս էին աղբյուր ջուր խմելու։ Ամբողջ լեռան վրա այդտեղ միայն ջուր կար։ Տղան վախից չկարողացավ քնել։ Մեկ էլ երեք-չորս գազան եկան։ Նրանք այնքան լավն էին, որ նրանց բուրդը (մորթին) լույս էր տալիս։

Տղան ասաց. «Դրանցից մեկին սպանեմ»։ Շուտ տվեց հրացանը վերևից ներքև, կրակեց։ Գազաններից մեկը սատկեց։

Լույսը բացվեց, արևը ծագեց, տղան ցած իջավ, գազանի մորթին քերթեց առավ, գնաց։ Դես ու դեն ընկավ, դժվարությամբ տուն հասավ, մորն ասաց.— Մայրի՛կ, ահա տես, ի՜նչ լավ մորթի եմ բերել։

Մայրն սկսեց լաց լինել, ասաց.— Ինչո՞ւ որսի գնացիր։

— Ընկերներս խաբեցին,— ասաց տղան,— էլ չեմ գնա։

— Այս մորթին ի՞նչ ենք անելու,— ասաց մայրը։

— Այս մորթին շատ թանկ պիտի լինի, ծախիր, եթե հինգ հարյուր ոսկի տան, դու հազար ոսկի ուզիր։

Առավոտյան տղան չսպասեց մորը, վերցրեց, գնաց։

Շուկայում ման էր գալիս, մի հրեա տեսավ նրան, ասաց.— Այս մորթին ծախո՞ւմ ես։

— Այո՛, ծախում եմ,— ասաց տղան։

Հրեան նրան հազար ոսկի տվեց։ Հրեան գիտեր, որ այդ մորթին երեք հազար կտոր ոսկի արժեր։

Որսորդի տղան եկավ տուն, փողը տվեց մորը, կերան, խմեցին, ժամանակ անցկացրին։

Այդ ժամանակ թագավորը կանչեց տղային։ Տղան բանից տեղյակ չէր։

—Թագավորն ի՞նչի համար պ՛տի կանչի,— ասաց տղան մորը,— գնա՞մ, մայրի՛կ։

— Գնա՛, մի՛ վախեցիր,— ասաց մայրը,— տե՛ս, թագավորն ի՞նչ է ասում։

Որսորդի տղան գնաց թագավորի մոտ, տեսավ՝ թագավորը նստած է, այն լավ մորթին էլ պատից կախված։

— Այս մորթին դո՞ւ ես բերել,— հարցրեց թագավորը տղային։

— Ես եմ բերել,— ասաց տղան,— ա՞յս է, թե՞ այն է, չգիտեմ։

Թագավորն ասաց որսորդի տղային.— Այս մորթուց տասը հատ ուզում եմ։

— Գնամ մորս ասեմ, քեզ պատասխան կըտամ,— ասաց տղան։

Տղան ելավ գնաց տուն։

Մարը ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րը չա՞ ա̈սուց քէ։
Դղէն ճահրան մօ̈թ իր։
— Դուսը գիշա գուզէ,— ա̈սուց դղան,— թա̈քա̈վա̈րը յիրմինիս, իս չա̈ բըր շինիմ։
Մարը ա̈սուց.— Մը՛վախնու, դղաս, ադ ջ̊ըդջ̊անջը վէզըրէն պունն է։ Վա̈զըրը դիսուվ զդիշէն թա̈քա̈վա̈րէն քուվը, էնք ալէ գուզէ ունունօ յադ դիշէն։ Ա̈դա̈ր հումոր զադ իրօ̈ց, ամմա, մը՛վա̈խնու, կնó ա̈սօ թա̈քա̈վա̈րէն՝ քառսուն ըդդը պիս կինա գուզիմ, քառսօն ըրդաթ, քառսօն ուր մա̈դաթ գուդօս՝ գիշիսդունքը դըպիրիմ։
Թա̈քա̈վա̈րը լսից դղէն զա̈սուձնէն, իդօ̈ր զալըլը։ Դղան իլավ կնա̈ց ի գօն, ա̈սուց ուայ մարը.
— Յամա̈, համօ չա̈ բըր շինիմ։
Մարը ա̈սուց.— Օղլում, կնó յան ախպըրէն լաշքը, պուց չուջ̊օր մը, լէց զկինէն միջը, ախպըրէն ճօ̈րը ձաձդէ, թըղ չըրվընու, իլ ուսէն ձարքը։ Կիշիրում գուկուն ջանավուրնէն, ղըխմին զկինէն, շա̈դ անօ̈շ գուխօ իրինց։ Հա̈ ղըխմին, թէ կըխըմին, դըքըր փիրիրը ուդիցէ, գըհա̈րփինուն, չըրգարնուն քիլին։ Գիշնիս, դըպռնիս զիրինք, կիշիսդունքը դըքիրթիս, գառնուս գուկուս։
Զարը ա̈սուց մարը, դղան ա̈րօ̈ց զէ, պունը յառանչ կնա̈ց։ Ջա̈նավուրնէն պռնից, գիշիսդունքը առուվ իգիք, կնա̈ց իդօ̈ր զէ թա̈քա̈վա̈րէն։ Թա̈քա̈վա̈րը հա̈նից իդօ̈ր դղէն ըրգը գա̈լա̈կ իսկա։ Վա̈զէրը զադ լսից, գիշիսդունքը զիսուվ, ա̈սուց. «Իշե՛, յադ դղէն կլօ̈խը չա̈ բըր պիրիմ, ընծի հիչ պուն չա̈սուց»։
Դղան կնա̈ց իդօ̈ն, հիչ պանէ խա̈բա̈ր չէր։ Վա̈զէրն ա̈լէ կնա̈ց թա̈քա̈վա̈րէն քուվը, դիսուվ զգիշիսդունքը, ա̈սուց.— Օ՜խ, նադուր ադվա̈ր ին գիշիսդունքը. լայս գուդօն դունը միջը։ Թա̈քա̈վա̈՛ր աբրէ, ուօն հալվա̈ր իս, թը զըթա̈զա̈լա̈մըշ ընօս, նադո՞ւր ադվա̈ր ըլնօ։
Թա̈քա̈վա̈րը ա̈սուց ուայ վա̈զիրը.— Զարան չա̈ ի։
Վա̈զէրը ա̈սուց.— Շա̈դ հիշդ է։ Ֆլուն թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը թը գառնիս, դունհէնկ դա̈րէ զըառնուս։
— Ո՞վ բըր պիրի զէ,— ա̈սուց թա̈քա̈վա̈րը։
Վա̈զէրը ա̈սուց.— Գիշէն պիրա̈ղ ավջէն դղան ըպիրի զէ։
Թա̈քա̈վա̈րը ամըր ա̈րօ̈ց.— Թըղ ավջէն դղան ուրթու զան թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը պիրէ։
Դղան ա̈սուց.— Իս չըմ գառնու պիրի զէ դըբըր իմ մարը չա̈սիմ։
Դղան ա̈սուց ուայ մարը.— Թա̈քա̈վա̈րը ֆլուն թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը գուզէ, իս չա̈ բըր շինիմ։
Մարը ա̈սուց.— Մը՛վա̈խնու, դղա̈ս, թա̈քա̈վա̈րէն յիրմինը չուրս գա̈լա̈կ իսկա ուզէ, թը դուդօ թա̈քա̈վա̈րը զիսկէն, իս գա̈սիմ քէ չա բըր շինիս։

Մայրն ասաց.— Թագավորն ի՞նչ ասաց քեզ։
Տղան տխուր էր։
— Տասը մորթի է ուզում ինձանից,— ասաց տղան,— ես ի՞նչ պիտի անեմ։
Մայրն ասաց.— Մի՛ վախենա, տղաս, դա նախանձ վեզիրի գործն է։ Նա մորթին տեսել է թագավորի մոտ, ինքն էլ է ուզում ունենալ։ Դրա համար էլ այդպես է արել, բայց մի՛ վախենա, գնա՛, թագավորին ասա՝ քառասուն ուղտի բեռ գինի եմ ուզում, քառասուն բանվոր և քառասուն օր ժամանակ տուր, որ մորթիները բերեմ։
Թագավորը լսեց տղայի ասածները, ամեն ինչ տվեց։ Տղան ելավ գնաց տուն, մորն ասաց.— Մայրի՛կ, հիմա ի՞նչ պիտի անեմ։
Մայրն ասաց.— Գնա՛, տղաս, այն աղբյուրի ակը, մի փոս փորի, գինին լից մեջը, աղբյուրի ջուրը ծածկիր, որ չերևա, բարձրացիր սարի կատարը։ Գիշերով գազանները կգան, կխմեն գինին, նրանց շատ քաղցր կթվա։ Հա՛ կխմեն ու կխմեն, մինչև փորերը ուռչի, կհարբեն, չեն կարողանա քայլել։ Կիջնես, կբռնես նրանց, կքերթես, մորթիները կվերցնես ու կդառնաս։
Մայրն ինչպես ասաց, տղան այդպես էլ արեց, բանը հաջողվեց։ Գազաններին բռնեց, մորթիներն առավ եկավ, տարավ տվեց թագավորին։ Թագավորը նրան երկու փութ ոսկի տվեց։ Վեզիրը լսեց, մորթիները տեսավ, ասաց. «Տե՛ս, այդ տղայի գլուխը ի՛նչ պիտի բերեմ, ինձ ոչինչ չասաց»։
Տղան գնաց տուն, բանից անտեղյակ։ Վեզիրն էլ գնաց թագավորի մոտ, տեսավ մորթիները, ասաց.— Օ՜խ, ինչքան լավն են մորթիները. լույս են տալիս տան մեջ։ Թագավո՛րն ապրի, դու ծերացել ես, եթե երիտասարդանաս, ինչքա՜ն լավ կլինի։
Թագավորն ասաց վեզիրին.— Ի՞նչ հնար կա։
Վեզիրն ասաց.— Շատ հեշտ է, եթե այսինչ թագավորի աղջկան առնես, տասնհինգ տարեկան կդառնաս։
— Ո՞վ պիտի բերի նրան,— հարցրեց թագավորը։
Վեզիրն ասաց.— Մորթիներ բերող որսորդի տղան կբերի նրան։
Թագավորը հրամայեց.— Թող որսորդի տղան գնա այդ թագավորի աղջկան բերի։
Տղան ասաց.— Ես չեմ կարող նրան բերել մինչև մորս չասեմ։
Տղան ասաց մորը.— Թագավորն այսինչ թագավորի աղջկան է ուզում, ի՞նչ պիտի անեմ։
Մայրն ասաց.— Մի՛ վախենա, տղաս,— թագավորից չորս փութ ոսկի ուզի, եթե թագավորը ոսկին տվեց, ես կասեմ, թե ինչ պիտի անես։

Դղան կնա̈ց Թա̈քա̈վա̈րէն քուվը, չուրս գա̈լա̈կ իսկա ուզից։ Թա̈քա̈վա̈րը լսից զըրէցը, չուրս գա̈լա̈կ իսկա իղÖր գըղէն։

Դղան առավ իսկէն, կնա̈ց իղÖն, ա̈սաց,— Յա-մա̈, ըսսօ իսկէն։

Մարը ա̈սաց.— Դղա̈ս, պունը շա̈տ ա̈ղվա̈ր է, մը՛ վախնու, ծռ զաս իսկէն հիդիտ, կնօ տալ ան Թա̈քա̈վա̈րէն մամլաքաթը։ Իշալլա̈, պունիտ ա̈ղվա̈ր գըննօ։

Դղան պարէմընից զմարը, առավ զիսկէն, կը-նա̈ց։ Շա̈տ կնա̈ց, քէչ կնա̈ց, էրգան ճամպուք կնա̈ց, հասավ դիղ մը, իշից դավ մը նստուծ ի ճամպուն իզկրը։ Ադ դավը յութը տարդուկ բղէնծ տրուծ իր ճամպօն իզէրը։ Դավը դիսավ զդղան.
— Օ՜ֆ ըսկօ ավ մը իգիկ,— ա̈սաց, կինչից տալ դղան,— տօն ո̈վ իս, յօ՞ գուրթաս։

Դղան ա̈սաց տալ դավը.— Իս ավչէն դղան իմ։

Դավը ա̈սաց.— Տօն էմ էխպապէն դղան իս, արէ, մը՛ վա̈խնու։

Դղան կնա̈ց դավէն քուվը. դավը ա̈սաց տալ դղան.— Ջա̈՞ն ջունէս, ուզիմ շա̈տ քաղցուծ իմ։

Դղան ա̈սաց.—Ուրթում մա̈կա̈ք պիրիմ, դուզի՞ս։

Դավը ա̈սաց.— Հա̈։

Դղան կնա̈ց սարէ մը մա̈կա̈ք իպիր։

Դավը բուլամադա-բուլամադա կՕշդ գիրավ, ա̈սաց.— Է՛հ, դղօ, յօ՞ գուրթաս հասօ տօն։

Դղան ա̈սաց.— Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէյնը ըրը պիրիմ։

Դավը ա̈սաց.— Ադ շա̈տ ածա̈ր է, յաս ճամպուքը ըրգը ախպար ունէմ, ծա̈կ չըր անցընին ճամպին։ Մէկը շա̈տ գդրէչ ի, միգալը՝ ֆըրթանը գընծէ։

Դղան ա̈սաց.— Ջա՞ չինիմ։

Դավը ա̈սաց.— Օ՛ռ, ուդօմ քէ մրգընուցիս ըրգը թիլ մազ, յիփըր նիղը գիյնէս, չա̈զի գէ. յան վախտը իս քէ կըհասնէմ։ Ընծը չուցըր ադ-վըրթէն իրիր, էմ ախպըրդօցն ալ իրÖր։

Դղան ա̈սաց,— Ջա՞ գըսիրին քէ ախպըրդաքը,

Դավը ա̈սաց.— Իքինչը ախպարը Öղտ գըսիրէ. ա̈չինչը ախպարը գիմիշնա գըսիրէ։ Օ՛ռ, կնօ իրինց, ալ մը՛ վա̈խնու։

Ավչէն դղան չարըր դավը ա̈սուծ իր, արավ գէ։ Շա̈տ կնա̈ց, քէչ կնա̈ց, հասավ իքինչը դավէն քու-վը։ Իշից, դավը քարէյն հիդը գուխադօ, քարիր գուկուլօրէ։ Դավը գինչից զդղէն, ա̈սաց.— ՏÖն ու̈վն իս, յօ՞ գուրթաս։

Դղան ա̈սաց.— Իս ավչէն դղան իմ։

Դավը ա̈սաց.— Ջա՞ պիրուծ իս, ընծէ, քու դուդը էմ էխպաբն իր։

Դղան ա̈սաց.— Ըզգիր պիրուծ իմ քէ։

Դավը շա̈տ խնդուց, ա̈սաց տալ դղան.— Յօ՞ գուրթաս։

Տղան գնաց թագավորի մոտ, չորս փութ ոսկի ուզեց։ Թագավորը լսեց խոսքը, չորս փութ ոսկի տվեց տղային։

Տղան վերցրեց ոսկին, գնաց տուն, մորն ասաց.— Մայրի՛կ, ահա ոսկին։

Մայրն ասաց.— Տղա՛ս, գործը շատ լավ է, մի՛ վախենա, առ այս ոսկին հետդ, գնա այն թագավորի երկիրը։ Գործդ լավ կլինի։

Տղան մնաս բարով ասաց մորը, առավ ոսկին, գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, երկար ճամփա գնաց, հասավ մի տեղ, տեսավ մի դև նըստած է ճամփեզրին։ Այդ դևը յոթը դատարկ պղինձ էր դրել ճամփեզրին։ Դևը տեսավ տղային.— Օ՜ֆ, ահա եկավ որսը,— ասաց, կանչեց տղային,— դու ո՞վ ես, ո՞ւր ես գնում։

Տղան ասաց դևին.— Ես որսորդի տղան եմ։

Դևն ասաց.— Դու իմ բարեկամի տղան ես, արի՛, մի՛ վախենա։

Տղան գնաց դևի մոտ, դևն ասաց տղային.— Ի՞նչ ունես ուտելու, շատ քաղցած եմ։

Տղան ասաց.— Գնամ ոչխարներ բերեմ, կուտե՞ս։

Դևն ասաց.— Այո՛։

Տղան գնաց մի հոտ ոչխար բերեց։

Դևը շատ-շատ կուշտ կերավ, ասաց.— Է՜, տղա՛, դու հիմա ո՞ւր ես գնում։

Տղան ասաց.—Թագավորի աղջկան պիտի բերեմ։

Դևն ասաց.— Դա շատ դժվար է, այս ճամփի վրա երկու եղբայր ունեմ, թռչուն չեն թողնում անցնի ճամփով։ Մեկը շատ կտրիճ է, մյուսը՝ փոթորիկ է հնձում։

Տղան ասաց.— Ի՞նչ անեմ։

Դևն ասաց.— Ա՛ռ, բեղերիցս երկու թել մազ տամ քեզ, երբ նեղն ընկնես, մազերն իրար քսի. այն ժամանակ ես քեզ կհասնեմ։ Ինչպես որ ինձ լավություն արեցիր, եղբայրներիս էլ արա։

Տղան ասաց.— Եղբայրներդ ի՞նչ են սիրում։

Դևն ասաց.— Երկրորդ եղբայրս ուղտ է սիրում, երրորդ եղբայրս գոմեշ է սիրում։ Ա՛ռ, տար իրենց, էլ մի՛ վախենա։

Որսորդի տղան արեց այն, ինչպես դևն էր ասել։ Շատ գնաց, թե քիչ գնաց, հասավ երկրորդ դևի մոտ։ Տեսավ, դևը քարերի հետ է խաղում, քարեր է գլորում։ Դևը կանչեց տղային, ասաց.— Դու ո՞վ ես, ո՞ւր ես գնում։

Տղան ասաց.— Ես որսորդի տղան եմ։

Դևն ասաց.— Ի՞նչ ես բերել ինձ, հայրդ իմ բարեկամն էր։

Տղան ասաց.— Ուղտեր եմ բերել քեզ։

Դևը շատ ուրախացավ, տղային ասաց.—Ո՞ւր ես գնում։

Դղան ա̈սուց. Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէյնը բըր պիրիմ։

Դավը ա̈սուց.— Օ՛ռ ըրգը թիլ մուզ, հծըըր նիղը թուս, չա̊զի զէ, իս քէ գըհա̈նիմ։

Դղան անցուվ կնա̈ց ա̈չա̈նջը դավէն քովը։ Ջուցըր առչը դավէն իրծց, ա̈չա̈նջը դավէն դան իրծց։

Ո̈ւչա̈նջը դավը ըրմա̊զէն վիրիվին գօնէր-գըտառնէր ֆրթանօ քիմը։ Էր հաղինէն իդծր դավէն, դավը մըրզընուցը ըրգը թիլ մուզ իդծր դղէյն, անցուվ կնա̈ց։

Շա̈ղ կնա̈ց, քէչ կնա̈ց, հասուվ յան թա̈քա̈վա̈րէն մամլաքաթը, քէ յա̈շկէյնը բըր առնէ։ Դղան իշից թա̈քա̈վա̈րէն ա̈շկընէն հա̈մուր մհարըրա գօ։ Կնա̈ց խունը նստուվ, գիրուվ, խմից, պա̈տվիցուվ։ Ուր մա̈յէ ա̈սուց. «Հիրա̈՛ք է, պա̈տվիցօ, ուրթում թա̈քա̈վա̈րէն ա̈շկէյնը ուզիմ»։ Կնա̈ց թա̈քա̈վա̈րէն քովը, մղուվ նըքցէ, իշից թա̈քա̈վա̈րը նըստուծ ի, պա̈րիվ իդծր, նստուվ։

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Պա̈րա ըննօ, չա̊ գուզիս։

Դղան ա̈սուց.— Աստըծը ամրում, քէ ա̈ղվա̈ր ա̈շկէյնը ընծէ գուզիմ։

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Շա̈ղ ա̈ղվա̈ր է, ամմա ըրք շարթ գունէմ, թը գընիս զէ, զա̈շկէյնը գուդօմ քէ, թը չիրիր զէ՝ կլծխտ գըգդրիմ։

Դղան ա̈սուց.— Գինիմ զէ։

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Ըրք փէհլվան գունէմ, էմ փէհլվանէն զ̊արշը փէհլվան զըպիրիս. զէմ փէհլվանէն ըսկիցէն, զա̈շկէյնը դվա, թը չէ՝ քէ կլօխը գըգդրիմ։ Ցութը ուր քէ մա̈ղդատ։

Դղան ա̈սուց.— Շա̈՞ղ ա̈ըրէս, թա̈քա̈վա̈՛ր։

Իլուվ կնա̈ց խունը։ Ջուրս-հէնկ ուր անցուվ, դղէն մէդքը ինգուն դավիրը. ա̈սուց. «Աս շա̈ղ ա̈ղվա̈ր իղուվ, դավիրը ընծի գըհասնէն»։

Ցութը ուր իղուվ թա̈քա̈վա̈րը իլան իրօց. «Օխըն-ջը ուրը փէհլիվաննէն բըր խաղուն»։ Դղան չա̊զից մուզը, իգիք առչը դավը, ա̈սուց.— Զա՞ գունէ։

Դղան ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րը շարթիր գուինէ, վա̈ղը բըր ինինք զէ։

Դավը ա̈սուց.— Հիչ մը՛ վա̈խնօ, քա̈ղցուծ իմ, պէ՛ր ուդիլա̈, ուդիմ։

Դղան իպիր ուդիլէն, դավը կիրուվ, կիշդացուվ։

Դղան ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րէն առչը շարթը՝ յութը բղէնծ ուդիլա բըր ուդիս, յամըն բղնծը միչ մա̈կէ մը գօ, գառնո՞ւս ուդիս զէ։

Դավը ա̈սուց.— Հիչ մը՛ վա̈խնօ, նադըր ա̈սիս, քանգան գուդիմ։

Դղան ա̈սուց.— Վա̈ղը մէյդունը բըր ընինք, չարըր էհալի գօ, բըր ուկօ։

Տղան ասաց.— Թագավորի աղջկան պիտի բերեմ։

Դևն ասաց.— Ա՛ռ երկու թել մազ, երբ նեղն ընկնես, քսի իրար, ես քեզ կհասնեմ։

Տղան թողեց գնաց երրորդ դևի մոտ։ Ինչ որ առաջին դևի հետ էր արել, նույնն էլ արեց երրորդ դևի հետ։

Երրորդ դևը գետի վրա փոթորկի պես անցուդարձ էր անում։ Տղան նվերները տվեց դևին, դևը բեղից երկու թել մազ տվեց, տղան թողեց գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, հասավ այն թագավորի երկիրը, որի աղջկան պիտի բերեր։ Տղան տեսավ՝ թագավորի աղջկա համար կռիվ է գնում։ Գնաց իջևանատանը նստեց, կերավ, խմեց, ման եկավ։ Մի օր էլ ասաց. «Հերի՛ք է ման գամ, գնամ թագավորի աղջկան ուզեմ»։ Գնաց թագավորի մոտ, մտավ ներս, տեսավ թագավորը նըստած, բարև տվեց, նստեց։

Թագավորն ասաց.— Բարի լինի, ի՞նչ ես ուզում։

Տղան ասաց.— Աստծու հրամանով քո սիրուն աղջիկն եմ ուզում։

Թագավորն ասաց.— Շատ լավ, բայց երեք պայման ունեմ, թե կատարես, կտամ աղջիկս, թե չկատարես՝ գլուխդ կկտրեմ։

Տղան ասաց.— Կկատարեմ։

Թագավորն ասաց.— Երեք փահլևան ունեմ, իմ փահլևանների դեմ ուրիշ փահլևաններ կբերես, թե նրանք իմ փահլևաններին հաղթեցին, աղջիկս կտամ, թե չէ՝ գլուխդ կկտրեմ։ Յոթ օր քեզ ժամանակ։

Տղան ասաց.— Շա՛տ ապրես, թագավո՛ր։

Ելավ գնաց իջևանատուն։ Չորս-հինգ օր անցավ, տղան հիշեց դևերին, ասաց. «Այս շատ լավ եղավ, դևերն ինձ կօգնեն»։

Յոթ օրը լրացավ, թագավորը հայտարարեց. «Ութերորդ օրը փահլևանները պիտի խաղան»։ Տղան երկու մազն իրար քսեց, եկավ առաջին դևը, ասաց.— Ի՞նչ կա։

Տղան ասաց.— Թագավորը պայմաններ է դրել, վաղը պետք է կատարենք։

Դևն ասաց.— Բնավ մի՛ վախենա, քաղցած եմ, ուտելիք բեր, ուտեմ։

Տղան ուտելիք բերեց, դևը կերավ, կշտացավ։

Տղան ասաց.— Թագավորի առաջին պայմանն է՝ յոթը պղինձ կերակուր պիտի ուտես, ամեն պղնձի մեջ մի ոչխար կա, կարո՞ղ ես ուտել։

Դևն ասաց.— Բնավ մի՛ վախենա, ինչքան ասես՝ կուտեմ։

Տղան ասաց.— Վաղը պիտի ասպարեզ իջնենք, ինչքան ժողովուրդ կա, պիտի գա։

Դավը ըսուց տալ դղան.— Թըքըվըրէն ասօ, էր փէհլվանը յառանչ թըղ ուդէ, բաղզան ույին չըհանին մէ։

Օ̈թընչի ուրը իդուվ, մէյդուն իճուն, մխրէմ քիմը էհալի գար։ Ամըն փէհլվանա յութը բղէնծ ուդիլը գար, յամըն բղընծը միչ մըկէ մը գար։

Թըքըվըրը ըսուց տալ դղան.— Քէ փէհլվանը թըղ ուդէ։

Դղան ըսուց.— Շըդ աըրէ՛ս, Թըքըվըր, քէ փէհլվանը յառանչ թըղ ուդէ։

Թըքըվըրէն փէհլվանը գիրըուվ, գիրուվ, չուրս բղէնծ գիրուվ, ըրք մէյը մըց՝ չգարցուվ ուդիր։ Դղէն փէհլվանը ձայից գծառվէն, ըսուց.— Ցա՜, պի մըռմըլլա,— բաշլից ուդիլը։ Հա՜ գիրուվ, թէ՛ գիրուվ, յութը բղէնծը գիրուվ, Թըքըվըրէն փէհլվանէն զըրք բղէնծն ըլէ գիրուվ, ըսուց.— Հալա գօ՞ դէրը։

Ացէն.— Զըգօ՛, շարթը խալիսիցուվ։ Էհալին ալայը ձափկից. «Դղան ըզագամըշ իդուվ» ըսուց։

Իքինչը ուրը, իքինչը փէհլվանը բըր խաղօ։ Թըքըվըրը յէր փէհլվանէն ծառը մաքտուր իդօր, դղան ըլէ փէհլվանէն ծառը մաքտուր իդօր, ուվըր յառանչ խարուր գըպիրէ ֆլուն Թըքըվըրէն յիրմինը, ան գուզագամըշ ըննօ։ Դղան չաղից զմուգը, ֆըրթանը ընծուղ դավը իգիք, ըսուց.— Խէր ըննօ, չա՞ գօ։

Դղան իդօր դավէն ուդիլա։ Դավը գիրուվ, իճուվ մէյդունը, առուվ զմաքտուրը, ըսուց դղէն.— Մըվըխնու, Թըքըվըրէն փէհլվանը թըղ ուրթօ յառանչ։

Նադուն գադիգէ մը ծարք, դավը ըսուց.— Խըմինք թութօն, համճինք։

Դղան ըսուց.— Վախըըտ կանցնա։ Թըքըվըրէն փէհլվանը Ղարաչէն* անցուվ։

Դղէն փէհլվանը «հոպ» ըսուց, զաթ մըլէ չէրվընցուվ։ Թըքըվըրէն փէհլըվանէն կլխէն կիխից անցուվ, կնըց մաքտուրէն ջուղօպը ուշէդ իպիր։ Իհալէն ձըփկիլը բաշլից։ Իքինչը շարթն ըլէ խալիսիցուվ։

Ուչընչը շարթը՝ Թըքըվըրէն գդրէջ փէհլըվանը իլան դղէն փէհլվանը իճուն մէյդունը, բըր թարվէն։ Դղան չաղից զմուգը, իգիք դավը, ըսուց.
— Խէր ըննօ, չա՞ գօ։

Դղան իդօր դավէն ուդիլա։ Դավը գիրուվ, խըմից, իճուվ մէյդունը, ըսուց,— Հի՛չ մըվըխնօ։

Դղէն փէհլվանը Թըքըվըրէն փէհլվանը պըռնից, իհալէն միչին տրուցէ քըրից, Թըքըվըրէն փէհլվանը սադգիցուվ։ Իհալին քանզան խնդուց.

* Մուսա լեռան արևելքում հոսող Օրոնտես գետի վտակ։

Դևն ասաց.— Թագավորին ասա, թող նախ իր փահլևանն ուտի, որ մեր գլխին խաղ չխաղա։

Ութերորդ օրն եղավ, ասպարեզ իջան, մըրջյունի չափ ժողովուրդ կար։ Ամեն փահլևանի համար յոթ պղինձ կերակուր էին դրել, ամեն պղնձի մեջ՝ մի ոչխար։

Թագավորը տղային ասաց.— Քո փահլևանը թող ուտի։

Տղան ասաց.— Թագավոր, շա՛տ ապրես, թող քո՛ փահլևանն առաջ ուտի։

Թագավորի փահլևանը կերա՜վ, կե՛րավ, չորս պղինձ կերավ, երկուսը մնաց՝ չկարողացավ ուտել։ Տղայի փահլևանը թևերը քշտեց, ասաց.— Հանո՜ւմ աստծո,— սկսեց ուտել։ Հա՜ կերավ, թե՛ կերավ, յոթը պղինձ (կերակուրը) կերավ, թագավորի փահլևանի երեք պղինձն էլ կերավ, ասաց.— Դեռ կա՞։

Ասացին.— Չկա՛, պայմանը կատարվեց։ Ժողովուրդը ծափահարեց. «Տղան շահեց» ասաց։

Երկրորդ օրը, երկրորդ փահլևանը պիտի խաղար։ Թագավորն իր փահլևանին մի նամակ տըվեց, տղան էլ իր փահլևանին նամակ տվեց, ով որ առաջինը պատասխանը բերի այսինչ թագավորից, նա հաղթող կճանաչվի։ Տղան երկու մազն իրար քսեց, քամի հնձող դևն եկավ, ասաց.— Բա՛րի լինի, ի՞նչ կա։

Տղան ուտելիք տվեց դևին։ Դևը կերավ, իջավ հրապարակ, վերցրեց նամակը, տղային ասաց.— Մի՛ վախենա, թող թագավորի փահլևանն առաջ գնա։

Նստեցին մի բլրի գագաթին, դևն ասաց.— Ծխախոտ ծխենք, հանգստանանք։

Տղան ասաց.— Ժամանակն անցնում է։ Թագավորի փահլևանը Կարաչայն* անցավ։

Տղայի փահլևանը «հոպ» ասաց, անհետացավ։ Թագավորի փահլևանի գլուխը տրորելով անցավ գնաց, նամակի պատասխանը շտապ բերեց։ Ժողովուրդն սկսեց ծափահարել։ Երկրորդ պայմանն էլ կատարվեց։

Երրորդ պայմանը՝ թագավորի կորիճ փահլեվանն ու տղայի փահլևանն իջան ասպարեզ, որ կոխ բռնեն։ Տղան քսեց մազերն իրար, դևը եկավ, ասաց.—Բարի՛ լինի, ի՞նչ կա։

Տղան դևին ուտելիք տվեց։ Դևը կերավ, խմեց, իջավ ասպարեզ, ասաց. —Մի՛ վախենա։

Տղան դևին ուտելիք տվեց։ Դևը կերավ, խմեց, բռնեց, ժողովրդի միջից դուրս շպրտեց, թագավորի փահլևանը մեռավ։ Ժողովուրդն այնքան

ձափկլէն ծանը չըգդըրիցուվ. «Դղան ջ̈ազամըշ իղուվ» գինչից։

Թա̈քա̈վա̈րը շո̈ւդ խնդուց, ա̈սուց.— Ջա̈շկէլնը դվա́, կնա̈ց։ Գիլէ́, ուրթունք ի դօն։

Կա̈ցէն թա̈քա̈վա̈րէն դօնը։ Թա̈քա̈վա̈րը ա̈սուց. — Ցօթը ուր լաս դիդը բըր ուդիս, բըր խմիս, քէֆ բըր ինիս, յա̈դա̈ր սօնջ̈ա գա̈շկէլնիս գառնիս, գուրթուս։

Ցօթը ուրը խա̈լիսիցուվ, թա̈քա̈վա̈րը քառսօն պիռ ղումաշ իդօ̈ր ա̈շկընէյն, ճամպուք իտէր գիրինք։

Շո̈ւդ կա̈ցէն, քէչ կա̈ցէն, հասուն դավիրէն քովը։ Դղան դավիրէն հադիա̈ն առուձ իր, իզուդ-իզուդ իդօ̈ր դավիրէն գհադիան, անցուվ կնա̈ց։ Հասուվ յէր թա̈քա̈վա̈րէն թաջ̈ըմը։ Ադ ուրը յադ դիդը բառգիցուն խանէն միչը։

Դղան ա̈սուց տալ խանչէն.— Ընծի ըրք ուդօ դօ̈ր, մէյը ջ̈ումաշէն համուր, էրգօ̈քն ալէ բառգիլա̈ համուր։

Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէլնը զադ լսից, մդքէն միչը ջ̈ըճըջ̈ առուվ։ Իրգօն իղուվ, մօ̈թը կըդէն ինգուվ, դղան ա̈սուց տալ թա̈քա̈վա̈րէն ա̈շկէլնը.— Իս բըր բառգէմ։

Դղան ուզից իգուդ բառգիլ։ Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէլնը հասգըցուվ դղէն մէդքը, ա̈սուց,— Տօ̈ն զէս օ՞մ գուդանէս։

Դղան յադ դիդը շաշմըշ իղուվ, չա՞ բըր ա̈սէ։ Ագար ո̈ւղո̈ւրթը թը չա̈սիր, ա̈դվուր չէ։ Դղան ա̈սուց.— Իս զքէ միր թա̈քա̈վա̈րէն գուդանէմ։

Ա̈շկէլնը ա̈սուց.— Զվէ՞յն համուր։

Դղան ա̈սուց.— Միր թա̈քա̈վա̈րը զըսնհէնկ դարա տառնիլա̈ համուր։

Ա̈շկէլնը ա̈սուց.— Շո̈ւդ ա̈դվա̈ր է, ա̈դա̈՞ր համուր զէս գուդանէս։

Դղան ա̈սուց.— Հա́։

Ա̈շկէլնը ա̈սուց.— Իրգօնը իս ու տօն զըբառգէնք, իս քէնն իմ, տօն՝ էմ իս։ Հօ̈րը թա̈քա̈վա̈րէն քովը զըհա̈սնէնք, իս զըսնհէնկ դարա թա̈քա̈վա̈րը զըտարծնիմ։ Ադ էմ պունն ի։

Ադ իրգօ̈նը անօ̈շ բառգիցուն։ Սա̈բա̈խդա̈ն իղուվ, ա̈շկէլնը ա̈սուց տալ դղան.— Զէս գուդօս թա̈քա̈վա̈րէն, տօ̈ն ա̈շկընը ըռուխ զըհաքնէս, իպար զըտնէս կլխէտ, զըգայնէս թա̈քա̈վա̈րէն դունը տրուցէ տօռը։ Իս նըջըցէ բազըը սանէմ, ամըր գուդօմ, գա̈սիմ թա̈քա̈վիրէն քէ համուր. «Առիք զէ նքցէ՝ ընցէ համուր խըղմա̈տչա»։ Յադ վախըտը տօ̈ն յէմ քովը զըգինուս, իս զըկիդիմ չա բըր շինիմ յա̈դա̈ր սօնջ̈ա։

Ա̈շկէլնը չարըր ա̈սուց, դղան իրօ̈ց զէ։ Դղան, ա̈շկէլնը հա̈սուն թա̈քա̈վըրէն քովը։ Դղան ա̈շ-ուրախացավ, որ ծափահարության ձայնը չկտրեց կանչեց. «Տղան հաղթանակեց»։

Թագավորը շատ ուրախացավ, ասաց.— Աղջիկը տվի՛, գնաց։ Արի՛, գնանք տուն։

Գնացին թագավորի տունը։ Թագավորն ասաց.— Յոթը օր այստեղ պիտի ուտես, խմես, քեֆ անես, աղջիկս կառնես, կգնաս։

Յոթ օրը լրացավ, թագավորը քառասուն բեռ օժիտ տվեց աղջկան, ճանապարհ դրեց նրանց։

Շատ գնացին, քիչ գնացին, հասան դևերի մոտ։ Տղան դևերի համար նվերներ էր վերցրել, նրանց առանձին-առանձին նվերներ տվեց, անցավ գնաց։ Հասավ իր թագավորի սահմանը։ Այդ օրը այդտեղ իջևանատանը քնեցին։

Տղան իջևանատիրոջն ասաց.— Ինձ երեք սենյակ տուր, մեկն օժիտի համար, մյուս երկուսն էլ՝ քնելու։

Թագավորի աղջիկն այդ լսեց, մտքում խռովեց։ Իրիկունը մութը գետին ընկավ, տղան թագավորի աղջկան ասաց. —Ես պիտի քնեմ։

Տղան ուզեց առանձին քնել։ Թագավորի աղջիկը հասկացավ տղայի միտքը, ասաց.—Դու ինձ ո՞ւմ համար ես տանում։

Տղան այդտեղ շվարեց, ի՞նչ ասեր։ Եթե ճիշտը չասեր, լավ չէր լինի։ Ասաց.— Ես քեզ մեր թագավորի համար եմ տանում։

Աղջիկն ասաց.— Ի՞նչի համար։

— Որպեսզի մեր թագավորը տասնհինգ տարեկան դառնա։

Աղջիկն ասաց.— Շատ լավ, ի՞ր համար ես ինձ տանում։

Տղան ասաց.— Այո՛։

Աղջիկն ասաց.— Իրիկունը ես ու դու միասին կքնենք, ես քոնն եմ, դու՝ իմը։ Երբ թագավորի մոտ կհասնենք, ես նրան տասնհինգ տարեկան կդարձնեմ։ Դա իմ գործն է։

Այդ իրիկուն անուշ քնեցին։ Առավոտյան աղջիկն ասաց տղային. — Ինձ կտաս թագավորին, դու աղջկա շորեր կհագնես, երեսիդ քող կքաշես, կկանգնես թագավորի պալատի դրսի դռանը։ Երբ ես ներս մտնեմ, կհրամայեմ, կասեմ թագավորին քեզ համար. «Սրան ներս առեք՝ ինձ համար աղախին»։ Այդ ժամանակ դու ինձ մոտ կմնաս, հետո ես գիտեմ, թե ինչ պիտի անեմ։

Ինչ որ աղջիկն ասաց, տղան այդպես արեց։ Տղան, աղջիկը հասան թագավորի մոտ։

կէյնը իգծր թա̈քա̈վո̈րէն, կնա̈ց հա̈քուվ ա̈շկընը
ըրուխ, իգիք գայնիցուվ թա̈քա̈վո̈րէն գունը,
տրուցէ ոօոը։ Ա̈շկէյնը աոուվ գէ նըքցէ։
Թա̈քա̈վո̈րը հա̈րէր դարա գընիր, իփըր գի-
սուվ գաշկէյնը շա̈ղ գա̈նջ իր, շա̈ղ ալ ա̈ղվո̈ր իր,
շա̈ղ խնդուց, ա̈սուց.— Քիլէ, ուրթունք յէմ ուղան,
բառզէնք։

Ա̈շկէյնը ա̈սուց.— Շա̈՞դ աբրէս, թա̈քա̈վո̈ր,
դըքըր դըսնհէնկ դարա չըտարծնիմ գքէ, ադ պա-
նը չընուր։ Տօն յաթը ուրին սօնգ̇ս դըսնհէնկ
դարա բըր տառնաս։

Ա̈շկէնը կնա̈ց յէր ուղան՝ դղէն քովը։ Գիրուն,
խմիցէն, բառգիցուն։ Օթը ուրը խա̈լխիցուվ, ա̈շ-
կէյնը ա̈սուց տայ դղան.— Կնու, մինձ բղէնծ մը
պիրիցօ̈ր. իլօ̈ց դըքըր ըլալը գէյթ, վառը գգրա̈գը,
տէրգէ գրագէյն յիրվան, աղվա̈ր մը թըղ քըփըր-
թօ։ Կնու պիր, թա̈քա̈վո̈րը հուս։

Ա̈շկէյնը, դղան զթա̈քա̈վո̈րը միրգըցըցէն։ Հը-
լա թա̈քա̈վո̈րը խա̈բուր չիր կլօխը չա բըր ուկօ։
Դղան, ա̈շկէյնը պռնիցէն միյը վըռուցը, միյը՝ ծա-
ռուցը, դարէն փըրթուձ գաթնէյն բղնծէն միջը
տրէն։ Թա̈քա̈վո̈րը դըսնհէնկ դարա տարծավ...
բղնծէն ղափա̈ղը տրէն, թա̈քա̈վո̈րէն խասաբը
ուղարթիցէն։

Ա̈շկէյնը հա̈ման դղէն ծառը պռնից, անցուն
թա̈քա̈վո̈րէն ուղան։ Ա̈շկէյնը իպիր թա̈քա̈վո̈րէն
թաջը, խոկում վա̈րա̈գը, ըրուխնէն հա̈քցօ̈ց դղէն,
նստըցօ̈ց գէ թա̈քա̈վո̈րէն քուրսէն։

Ա̈շկէյնը տրգան բիչիմ մը դվուծ իր դղէն, հիչ
մուրթ չըր գառնիր կիդա̈նիր գէ, աս ուվն է։
Ա̈շկէյնը ամըր իրօ̈ց իհալէն.— Ուվըր արզու գունա
թըղ ուկօ, թա̈քա̈վո̈րը գիսնօ՝ դըսնհէնկ դարէ
դարծուծ է։

Թա̈քա̈վո̈րէն մինձրդա̈քը իդէն շինըֆըրիցէն
թա̈քա̈վո̈րէն նա̈ր օ̈մրը, շա̈ղ խնդացէն, իլուն
կա̈ցէն, պուն չըկխտացուն։

Ջվա̈զիրն ալէ գարիցէն չընըրշ ճիրէյն իդխտ-
ալէյն, սիբիցէյն։

Ա̈շկէյնն իլան դղան հասուն իրինց մուրազէն,
ալաք գա̈նջիրը թըղ հասնէն իրինց նըպաղագէն։

Տղան աղջկան տվեց թագավորին, գնաց հագավ
աղջկա շորեր, եկավ կանգնեց դրսի դռանը։ Աղ-
ջիկը նրան ներս առավ։

Թագավորը հարյուր տարեկան կլիներ, երբ
տեսավ աղջիկը շատ ջահել է, շատ էլ գեղեցիկ,
շատ ուրախացավ, ասաց.—Արի՛, գնանք իմ սեն-
յակը, քնենք։

Աղջիկն ասաց.— Շա՜տ ապրես, թագավոր,
մինչև քեզ տասնհինգ տարեկան չդարձնեմ, այդ
բանը չի լինի։ Դու յոթ օր հետո տասնհինգ տա-
րեկան պիտի դառնաս։

Աղջիկը գնաց իր սենյակը՝ տղայի մոտ։ Կե-
րան, խմեցին, քնեցին։ Յոթ օրը լրացավ, աղջի-
կը տղային ասաց.— Գնա՛, մի մեծ պղինձ բերել
տուր, բերնեբերան կաթ լցրու, կրակը վառի,
դիր կրակի վրա, թող լավ եռա։ Գնա, թագավո-
րին բեր այստեղ։

Աղջիկը, տղան թագավորին մերկացրին։ Դեռ
թագավորը տեղյակ չէր, թե գլխին ինչ է գալու։
Տղան, աղջիկը բռնեցին մեկը ոտից, մյուսը՝
գլխից, տարան եռացող կաթի պղնձի մեջ գցե-
ցին։ Թագավորը տասնհինգ տարեկան դարձավ...
պղնձի կափարիչը փակեցին, թագավորի հաշիվը
մաքրեցին։

Աղջիկն իսկույն տղայի ձեռքը բռնեց, մտան
թագավորի սենյակը։ Աղջիկը բերեց թագավորի
թագը, ոսկե գավազանը, շորերը հագցրեց տղային,
նստեցրեց թագավորի գահին։

Աղջիկը տղային այնպիսի մի կերպարանք
էր տվել, որ ոչ ոք նրան չէր կարող ճանաչել, թե
դա ով է։ Աղջիկը հրամայեց ժողովրդին.— Թա-
գավորը տասնհինգ տարեկան է դարձել, ով ցան-
կանում է, թող գա տեսնի։

Թագավորի մեծամեծները եկան շնորհավորե-
ցին թագավորի նոր կյանքը, շատ ուրախացան,
ելան գնացին, բան չհասկացան։

Վեզիրին էլ կապեցին կատաղած ջորու պոչից,
բաց թողեցին։

Աղջիկն ու տղան հասան իրենց մուրազին,
բոլոր ջահելներն էլ թող հասնեն իրենց նպատա-
կին։

## 5 (5). ՔԱԼ ԴՂԷՆ ՄՈՒՐԱԶԸ

Դրըգինօ, չըղինուր բառավ մը իլան գղա մը։
Աղ գղան քալ է։ Մարը մա̈նուծ գումա̈նէ հէրքէ-
ա̈էն լիրմինը զօրնիզը, աղ ումուդում զաղ գղան
գուրինի։ Զաֆայղա, գղան շա̈ղ չա̈գվա̈ր իր։ Ուր
մը կուդցուվ մուըը մա̈նուծը, գարուվ ծախից,
մարը ա̈սուց.—Զվա̈°, օղլում, հա̈րա̈մուտէն գունիս։
Դղան ա̈սուց.— Աղվա̈՛ր գունիմ,— նէղացուվ,
գա̈նին իլուվ կնա̈ց։
Վախըտ անցուվ, գղան փուշմընից, իգիք իդօն,
մուըը ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րէն ա̈շկէնը գուզիս ընծի։
Մարը ա̈սուց.— Օղլո՛ւմ, չըննուր։
Դղան ա̈սուց մուըը.— Դըսբա̈նիմ դքէ, թը
չըրուրթուս ուզիս դէ ընծի։
Մարը վա̈խուցթունը կընա̈ց թա̈քա̈վա̈րէն քու-
վը։ Հա̈սուվ թա̈քա̈վա̈րէն փայթախիթը, բա̈կճէն
դիսուվ զբառուվը, ա̈սուց.— Զա̈° գուզիս։
Բառուվը ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րէն քուվը ըըր
ասնէմ, կա̈ղղօք ղըրէց գունիմ։
Բա̈կճէն ա̈սուց.— Հիչէ, համօ իս գուկում։
Բա̈կճէն ուշէդ կընա̈ց թա̈քա̈վա̈րէն քուվը, ա̈-
սուց.— Բառուվ մը գքէ կուզէ դըսնիլ։
Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Թըղ ուկա̈ւ։
Բառուվը կընա̈ց թա̈քա̈վա̈րէն քուվը. թա̈քա̈-
վա̈րը ա̈սուց, – Նա̈նա̈՛, չա̈° գուզիս։
Բառուվը ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րը աբրա̈ւծ, զուաղ-
լըղըտ գուզիմ։
— Նա̈նա̈՛, ուզօմ քէ փարա, կնա։
Ա̈սուց բառուվը.— Իս փարա չուզիմ, քէ զա̈շ-
կէնը գուզիմ էմ Քալ դղէն։
Թա̈քա̈վա̈րը շաշմըշ իղուվ. – Աս չա̈° պան ի.
— ա̈սուց,— Նա̈նա̈՛, զա̈շկէնը գուգում, ըմը ըրգը
շարթ գունէմ, թը գինի գը՝ ա̈շկէնը դուդում, թը
չինիր գը՝ կլօխը գըդդըրիմ։
Բառուվը ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րը աբրա̈ւծ, շար-
թիրըտ չա̈°չ ի։
— Առջը շարթը՝ սինէն միշը իսկում ղուրղ
մը չորսաէն իսկում ծաղկիր ըըր զըխըրդուն, ծան
ըըր հանին։ Իքինջը շարթը՝ տըրղ էմ սարայէն
սարայա մը ըրք ուրին ըըր շինէ։
Բառուվը իդօն կընա̈ց, վա̈խուցթունը ամպուրը
մդուվ։
Քալ գղան իկիք, լասուէն-յանաէն իշից, մարը
պատվիցուվ, դիսուվ գը ամպուրէն միշը, ա̈սուց.—
Զա̈° խա̈բուր պիրիր ընծի թա̈քա̈վա̈րէն լիրմինը։
— Ըրգը շարթ պիրա թա̈քա̈վա̈րէն լիրմինը,—
ա̈սուց մարը,— մէկը՝ ղուրղ մը սինէն միշը. իս-
կում ծակիր ըըր զըխըրդուն, ծան ըըր հանին։ Ի-
քինջը շարթը՝ սարայէ մը գուզի տըրղ էր սա-
րայէն՝ ըրք ուրէն միշը։

## 5 (5). ՔԱՉԱԼ ՏՂԻ ՄՈՒՐԱԶԸ

Լինում է, չի լինում մի պառավ ու իր տղան։
Տղան քաչալ է լինում։ Մայրն ուրիշի համար թել
էր մանում, դրա հույսով տղային պահում։ Ինչ
օղում, որ տղան շատ վատն էր։ Մի օր գողա-
ցավ մոր մանածը, տարավ ծախեց, մայրն ա-
սաց նրան.— Տղա՛ս, ինչու՞ ես գողություն ա-
նում։
Տղան ասաց.— Լա՛վ եմ անում,— զայրա-
ցավ ու թողեց տնից հեռացավ։
Ժամանակ անցավ, տղան զզջաց, եկավ տուն,
մորն ասաց.— Թագավորի աղջկան կուզես ինձ։
Մայրն ասաց.— Տղա՛ս, չի լինի։
Տղան ասաց.— Կսպանեմ քեզ, եթե չգնաս
նրան ինձ չուզես։
Մայրը վախից գնաց թագավորի մոտ։ Հա-
սավ թագավորի պալատը, պահակը տեսավ պա-
ռավին, ասաց.— Ի՞նչ ես ուզում։
Պառավն ասաց.— Թագավորի մոտ պիտի
գնամ, գաղտնի խոսելիք ունեմ։
Պահակն ասաց.— Սպասի՛ր, հիմա ես կգամ։
Պահակն իսկույն գնաց թագավորի մոտ, ա-
սաց.— Մի պառավ ուզում է քեզ տեսնել։
Թագավորն ասաց.— Թող գա՛։
Պառավը գնաց թագավորի մոտ, թագավորն
ասաց.— Նանի՛, ի՞նչ ես ուզում։
Պառավն ասաց.— Թագավորն ապրա՛ծ, ողջու-
թյունդ եմ ուզում։
— Նանի՛, քեզ փող տամ, գնա՛։
Պառավն ասաց.— Ես փող չեմ ուզում, քո
աղջիկն եմ ուզում իմ Քաչալ տղային։
Թագավորը զարմացավ.— Սա ի՞նչ բան է,
Նանի՛, աղջկաս կտամ, բայց երկու պայման
ունեմ, թե կատարի՝ աղջկաս կտամ, թե չկատա-
րի՝ գլուխը կկտրեմ։
Պառավն ասաց.— Թագավորն ապրա՛ծ, պայ-
մաններդ ի՞նչ են։
— Առաջին պայմանը՝ մի սկուտեղի մեջ ու-
կե թուխսը չորս կողմը ոսկե ձագերով պետք է
ճլվլան։ Երկրորդ պայմանը՝ երեք օրում իմ պա-
լատի նման մի պալատ պիտի կառուցի։
Պառավը տուն գնաց, վախից ամբարը մտավ։
Քաչալ տղան եկավ, դես ու դեն նայեց, մորը
փնտրեց, տեսավ՝ ամբարի մեջ, ասաց.— Ի՞նչ
լուր բերեցիր թագավորից։
— Երկու պայման բերեցի թագավորից,—
ասաց մայրը,— մեկը՝ մի թուխս սկուտեղի մեջ.
ճլվլացող ոսկե ձագերով։ Երկրորդ պայմանը՝
երեք օրվա մեջ իր պալատի պես մի պալատ
պիտի կառուցես։

Քալ դղան գալ լուց, հա̈մա̈ն փախավ։ Ինգավ ջամպուք, շա̈դ կընա̈ց, քէչ կնա̈ց, հասավ մա̈շա մը, տատրիցավ, նստավ մինձ շրէ մը դա̈գ։

— Օ՛ֆ, օ՛ֆ,— ա̈սաց.— Իս չա՞ շինիցա։

Ղա̊լթ մալէ, խըբըդա̈գ մուրվըքվա̈ր հալվա̈ր մը իլավ տիմը, ա̈սաց.— Ձա գուզիս, իս Օֆ-օֆն իմ, տօ̈ն յօ՞ գուրթաս։

— Կլօ̈խիս աառձ գարթամ,— ա̈սաց Քալ դղան։

— Արի էմ քովը, իս գքէ ադվա̈ր գըրիհիմ,— ա̈սաց հալիվօ̈րը։

— Գուկըմ,— ա̈սաց Քալ դղան,— իլա̈վ կնա̈ց հիդը։

Անցուն շրէն յանալէն, հալվա̈րը գալնիցավ, մդքում խուսիլը բաշլից։ Ծրին սօս մը պացվիցավ, մդուն նըքցէ, սօռը էնքըթէնք փա̈գվիցավ։ Հալվա̈րը իպիր էր ուդիլա, գիրուն. դղան շա̈դ քա̈ղցած իր, գիշղացավ։ Հալվա̈րը իդօ̈ր էր քասսօն պա̈լէնք. յադ շրէն միչը քասսօն ուզօ գա̈ր։ Հալվա̈րը ա̈սաց.— Ձա̈լա̈ք ուդինէն ըըպա̈նուս, գըսօ ուզան՝ չըրպա̈նու։ Օ՛ս քէ թօ̈խթ մա̈լէ, շա̈պաթը ղա̊լթ մը քէ դարս բըր ուզօմ։ Աս ուդինին չարըր դօ, քէնն է։

Հալվա̈րը դարս իդօ̈ր էր, իլավ կնա̈ց։ Քալ դղան գալա ուդինէն պա̈տվիցավ, յախշար չարըր դօ, յադ ուդինէն միչը դօ։ Դղան քէֆլա իր։ Օթ ուրը ղա̊թ մը հալվա̈րը գուկէր, դարս գուդէր։

Ղա̊լթ մալէ դղան կլխէ ինգավ, ա̈սաց.— Ձվա՞ գալաք սովէն բըր պա̈նու, գըսօ սօռը չըբըր պանու։

Կնա̈ց, դադ սօռը իպուց, նըքցէ մդավ, իշից միրգա̈կ, կլօ̈խ իվար կա̈խված է ա̈շկէն մը, վըրքը ճօ̈ր գուքըփըրթօ։ Ա̈շկէնը դիսավ դղան.— Ա՛խ, ա՛խ,— ա̈սաց,— սօ՛ն ալ ինգար յաս գալիմէն ծառը, քա̈գէ՛ գէս, իճէցօ́ր, ա̈սիմ քէ։

Դղան զա̈շկէնը քա̈գից, ա̈շկէնը ա̈սաց.— Քա̈ղցած իմ, ընծը ուդիլա պիր։

Դղան գնա̈ց ադվա̈ր-ադվա̈ր ուդիլա իպիր էր, գիրավ, գիշդա̈ցավ ա̈շկէնը, ա̈սաց.— Է՛յ, ախպա̈ր. միր հիկկէն չո̊ւց բըր փրցընինք։

— Չո̊ւց բըր փրցընինք, քըրօ̈՛գ,— ա̈սաց դղան։

Ա̈շկէնը գինէ տալ դղան.— Ձադ թօ̈խթը հալվա̈րը քէ դված է՝ չըգարթաս խալիսէս զը։

Դղան գինէ.— Ձվա՞։

Ա̈շկէնը ա̈սաց.— Ձադ թօ̈խթ, բո̊ղզը խալիսէս, ըրգօ̈քիս ա̈լէ մաֆ իդած ինք։ Հա̈մօ գուկօ հալվա̈րը, գա̈սէ քէ՝ դարսիտ սուրվիցո̊ւր, սա՛ չէ։ Բո̊ղզը դարսիտ սուրվէս, խա̈լիսէս թօ̈խթը, գէս գըսբա̈նէ, գքէ գըգա̈խէ յէմ դիվը։ Հալվա̈րը

Քաչալ տղան այդ որ լսեց, թողեց փախավ։ Ճամփա ընկավ, շատ գնաց, քիչ գնաց, հասավ մի անտառ, հոգնեց նստեց մի մեծ ժայռի տակ։

— Օ՛ֆ, օ՛ֆ,— ասաց,— Ես ի՞նչ արեցի։

Մեկ էլ ճերմակ մորուքով մի ծերունի դեմն ելավ, ասաց.— Ի՞նչ ես ուզում, ես Օֆ-օֆն եմ, դու ու՞ր ես գնում։

— Գլուխս առած գնում եմ,— ասաց Քաչալ տղան։

— Արի մոտս, ես քեզ լավ կպահեմ,— ասաց ալևորը։

— Կգա՛մ,— ասաց Քաչալ տղան,— վեր կացավ հետը գնաց։

Անցան ժայռի մյուս կողմը, ալևորը կանգ առավ, մտքում խոսել սկսեց։ Ժայռից մի դուռ բացվեց, ներս մտան, դուռը ինքնիրեն փակվեց։ Ալևորն ուտելիք բերեց, կերան. տղան շատ քաղցած էր, կշտացավ։ Ալևորը նրան տվեց քառասուն բանալի. այդ ժայռի մեջ քառասուն սենյակ կար։ Ալևորն ասաց.— Բոլոր սենյակները կբացես, այս մեկը՝ չբացես։ Ա՛ռ քեզ մի գիրք, շաբաթը մեկ քեզ դաս եմ տալու։ Այս սենյակներում ինչ որ կա, քոնն է։

Ալևորը նրան դաս տվեց, ելավ գնաց։ Քաչալը բոլոր սենյակները ման եկավ, աշխարհում ինչ որ կար, այդ սենյակներում կար։ Տղան ուրախացավ։ Յոթ օրը մեկ ալևորը գալիս, դաս էր տալիս։

Մի անգամ էլ տղան գլխի ընկավ, ասաց.— Ինչո՞ւ բոլոր դռները պիտի բացվեն, այս մեկ դուռը պիտի չբացվի։

Գնաց, այդ դուռը բացեց, ներս մտավ, տեսավ մի մերկ աղջիկ գլուխն ի վայր կախված, տակը ջուր է եռում։ Աղջիկը տեսավ տղային ասաց.— Ա՛խ, ա՛խ, դո՞ւ էլ ընկար այս անխիղճի ձեռքը, քանդի՛, իջեցրո՛ւ ինձ, ասեմ քեզ։

Տղան աղջկա կապերը քանդեց, աղջիկն ասաց.— Քաղցած եմ, ինձ ուտելիք բեր։

Տղան գնաց լավ-լավ ուտելիքներ բերեց, աղջիկը կերավ, կշտացավ, ասաց.— Ա՛յ եղբայր, մեր հոգին ինչպե՞ս պիտի ազատենք։

— Ինչպե՞ս պիտի ազատենք, քույրի՛կ,— ասաց տղան։

Աղջիկն ասաց տղային.— Այդ գիրքը, որ ծերունին տվել է քեզ՝ չկարդաս վերջացնես։

Տղան ասաց.— Ինչո՞ւ։

Աղջիկն ասաց.— Այդ գիրքը, եթե կարդաս, վերջացնես, երկուսս էլ կկորչենք։ Հիմա ալևորը կգա, կասի քեզ՝ դասդ սովորե՞լ ես, ասա՝ ոչ։ Եթե դասդ սովորես, գիրքը վերջացնես, ինձ կսպա-

գուկօ քաոսուն վարա̈ց զըպիրէ, զքէ զըղիխէ, զը֊ գիխէ, հա̈ զըգիխէ, զըկըր վա̈րիցնէն ալայը զը֊ զըղրա։ Շա̈ղ զընիղանօ տուրիցէ զը՜անի զքէ, քէ խիլքըտ զասնա, բաղզը իմ՜նաս՝ զէս չմասնուս։ Հա̈մօ զէս լիդ զա̈խէ դիղըս, տօն կնօ նէչող դիղիս։

Դղան պանից ա̈շկընէն խոսքիրը տըրզաղ։ Ցիփ խալիսիցով հալվա̈րէն, իլա̈վ կնա̈ց չէր մա֊ րը խաչը։ Մարը դիտով զդղան, ասուց.— Յօ՞ զէր, օղլում։

Քալ դղան ալէյքը զու հալալժէ.— Միր սուն֊ ջը աղվա̈ր բըր ըննօ, յա̈մա̈, իս վա̈զը աղվա̈ր բախրի մը զըընում, զըղա̈նէս զէս բազուրը, զը֊ ձա̈իխս, ամա բախօրուքը չըրուղօս, ան զըյա̈նէս իղօն։ Իս լիդ զուկում, մէ վա̈խնու։ Ամըն ու տըրզադ, զըհարսղնունք։

Էր մարը ա̈մըն ուր տըրզաղ զուձա̈խէ։ Ուր մը դղան ա̈սուց տալ մարը.— Յամա̈, իս աղվա̈ր ծէն մը բըր ըննում, բազուրը ըր զուրթուս, բախօրուքը չուղօս։

Մարը առուվ զծէնը կնա̈ց բազուրը։ Իկիք հալ֊ վա̈րը.— Է՞հ, է՞հ, նա̈նա̈՛, չո՞ւց աղվա̈ր ծէն զու֊ նէս, զըձախի՞ս զէ։

— Հա̈,— ա̈սուց նա̈նա̈ն։

— Կէնը նա̈ղո̈ւր է,— ա̈սուց հալվա̈րը։

Քալ դղէն մարը զէնէ.— Հա̈րէր լէրս է ծիօս կէնը։

Հալվա̈րը իդո̈ր հա̈րէր լէրա, ուզից բախօրուքը։

— Բախօրուքը չըմուղօ,— ա̈սուց բառավը։

Զվա՞,— ա̈սուց հալվա̈րը։

Աղ խէր ի։

— Օ՛ռ, քէ խէրը փարա, դո՛ր բախօրուքը։

Բառավը էնքզէնք մաոցով, հալվա̈րը ծիօն հիդը բարաբուր բախօրուքը առուվ կնա̈ց։ Հալվա̈րը հիձուվ ծիօն իրվան, ուցա̈ձցուվ փըտփըսուց ծի֊ օն լազանճը։

— Զո̈ւց իս, Քալ դղօ,— քիշից ջըրբաշը գիխից, ինզուվ ճամփուք։ Ծէնը քանզան զուշուվղէ, զու֊ զէ զհալվա̈րը ըսրա̈նի։

Հալվա̈րը ձա̈լվիցուվ, հասուն ախպա̈ր մը, հալվա̈րը ցա̈ձցուվ, ճո̈ր բըրխըմէ, ծառուցը ին֊ զուվ բախօրուքը։ Ծէնը տարծուվ ձիձէնալ մը, հալվա̈րը տարծուվ շա̈հան մը, ինզան միգ-միգ իդիդստա, հա̈սուն ձուվօն իրվան, ձիձեռնալը վախ֊ ցուվ շահանէն լիրմինը, ձուվը մդուվ, շա̈հանն ա̈լէ մդուվ, ըրդո̈քըն ա̈լէ ծո̈կ տարծուն։ Ջիձէռ֊ նալը զինա վա̈խցուվ, ժըռուվ ձուվին, աղվրնա մը տարծուվ, շա̈հանըն ալ իդիդտէն։ Աղվրնալը կընա̈ց Թա̈քա̈վա̈րէն զօնը մդուվ, շա̈հանն ա̈լէ մդուվ, աղվրնալը Թա̈քա̈վա̈րէն ծառը նօռ մը տարծուվ։ Շա̈հանը իղուվ ղարվէշ մը՝ ծառը Թամբուռօ զար։

Թա̈քա̈վա̈րը ա̈սաց.— Զա՞ զուզիս։

նի, բեզ կկախի իմ տեղը։ Ալեոըը կգա, քառա֊ սուն ճիպոտ կբերի, բեզ կխփի, կխփի, կխփի, մինչև բոլոր ճիպոտները ջարդվեն։ Շատ կզայ֊ րանա, բեզ դուրս կհանի, կուշաթափվես, երբ ուշքի գաս՝ ինձ չմոռանաս։ Հիմա ինձ նորից տեղս կախի, դու գնա նստի տեղդ։

Տղան նույնությամբ կատարեց աղջկա ա֊ սածները։ Երբ ազատվեց ալեորից, ելավ գնաց մոր մոտ։ Մայրը տեսավ տղային, հարցրեց.— Ո՞ւր էիր, տղա՛ս։

Քաչալ տղան ամեն ինչ պատմեց.— Մեր վերջը լավ պիտի լինի, մայրի՛կ, ես վաղը մի լավ եզ կդառնամ, կտանես ինձ շուկա, կծախես, բայց պախուրցս չտաս, այն կտանես տուն։ Ես ետ կգամ, մի վախենա։ Ամեն օր այդպես կհարստա֊ նանք։

Ամեն օր մայրն այդպես (տղային) ծախում էր։ Մի օր էլ տղան ասաց մորը.— Մայրի՛կ, ես մի լավ ձի պիտի դառնամ, շուկա որ գնաս, պախուր֊ ցը չտաս։

Մայրն առավ ձին, գնաց շուկա։ Եկավ ալե֊ վորը.— Է՞հ, է՞հ, նանի՛, ի՞նչ լավ ձի ունես, ծա֊ խո՞ւմ ես։

— Հա՛,— ասաց նանը։

— Գինն ի՞նչ է,— ասաց ալեորը։

Քաչալ տղայի մայրն ասաց.— Հարյուր լիրա է ձիու գինը։

Ալեորը տվեց հարյուր լիրան, ուզեց պախուրցը։

— Պախուրցը չեմ տա,— ասաց պառավը։

— Ի՞նչու,— հարցրեց ալեորը։

— Դա բախտ է։

— Ա՛ռ բախտիդ փողը, պախուրցը տո՛ւր։

Պառավն ինքն իրեն մոռացավ, ալեորը ձիու հետ պախուրցն էլ վերցրեց ու գնաց։ Ալեորը հե֊ ծավ ձին, կռացավ փսփսաց ձիու ականջին։

— Ո՞նց ես, Քաչալ տղա,— քաշեց մտրակը խփեց, ճանապարհ ընկավ։ Ձին այնպես էր վա֊ զում, ուզում էր ալեորին սպանել։

Ալեորը ծարավեց, հասան մի աղբյուրի, ալե֊ վորը կռացավ ջուր խմելու, պախուրցը ձեռքից ըն֊ կավ։ Ձին դարձավ ծիծեռնակ, ալեորը դարձավ բազե, ընկան իրար հետևից, հասան ծովի վրա, ծիծեռնակը վախեցավ բազեից, ծովը մտավ, բազեն էլ մտավ, երկուսն էլ ձուկ դարձան։ Ծի֊ ծեռնակը նորից վախեցավ, թռավ ծովից դուրս, աղավնի դարձավ, բազեն էլ հետևից։ Աղավնին գնաց թագավորի պալատը մտավ, բազեն էլ մտավ, աղավնին թագավորի ձեռքին նուռ դար֊ ձավ։ Բազեն դարձավ դերվիշ՝ ձեռքին սազ։

Թագավորն ասաց.— Ի՞նչ ես ուզում։

Դարվէշը ըսաւ.— Մտուցիտ նօրը գօր:

Թöքöմöրը ըսաւ.— Զըմուզօզը:

Դարվէշը ըսաւ.— Զըմարթու:

Թöքöմöրը վöխցաւ լողքին, նօրը գիլը վախըտը, ինգաւ ծառօցը, գըդրիցաւ, նըրուն հադիրը չարգվիցուն: Դարվէշը հուվ տարծաւ, բըլխշիցաւ նըրուն հադիրը գըդգըդիլը, ամա Քալ դղէն թöքöմöրէն ձնգէն վըրքը գար, հուվը կիդöցուվ դղէն թöքöմöրէն վըրքը գօ, ուզիցուվ ուզիլ զադ նըրուն հուգը: Թöքöմöրը վըդը վիրցöց, լող վախտը նըրուն հուգը դըլքէ մը տարծուվ, պընից գհուվը աղվöր մը գիրուվ: Դըլքէն Քալ դղա տարծուվ, նսդուվ քուրսէն թöքöմöրէն տիմը: Թöքöմöրէն խիլքը կնöց, ինգուվ: Քալ դղան գինչից.— Է՜յ, թöքöմöր, չվա՞ քանզադ պառզուձիս: Զէս զուկիդանօ՞ս, իս ան Քալ դղան իմ, քէ զöշկէնիտ զուզէր է: Քէ աղվöր öշկէնը զուզիմ:

— Շարթիրըս զադարէ, զöշկէնիս զուզօմ:

Քալ դղան ըսաւ.— Սարախըդան շարթիրիտ գըզöդարիմ:

Թöքöմöրը լասաէն իշից, լանտէն իշից, զէր սիրուձ գընայը կինչից: Գընայը իգիք, ըսաւ.— Արրէ՛ս թöքöմöր, չա՞ զուզիս:

— Öշկէնը միր ծառոցը կնöց,— ըսաւ թöքöմöրը:

— Արրէ՛ս թöքöմöր, սու չա՞ պուն ի,— ըսաւ գընայը:

— Սարախըդան գըդխնօս, գըհադնուս չա պուն ի:

Թöքöմöրը, տարրուձ իր, ըսաւ տայ գընայը.— Ուրթօնք, բարզէնք:

Թöքöմöրը սարախըդան առվըդօն իմցուվ, իլուվ տուրիցէ, իշից զöրրէն տունց öրիվը ձիթուձ է, վöխցուվ, նըքցէ մըդուվ.— Օ՜ֆ, օ՜ֆ,— ըսաւ,— öս Քալ դղէն պուննի, էմ աղվöր öշկէնը ծառոցիս կնöց:

Սարախըդան իդուվ, Քալ դղէն մարը իգիք թöքöմöրէն քուվը, հակուձ գöբուձ, ան փըլըդուձ բառուվը գըսնհէնկ դöրի տարծուձ իր:

— Արրէ՜ս թöքöմöր, իս Քալ դղէն մարն իմ, քէ աղվöր öշկէնը իմ Քալ դղէն զուզօ՞ս: Շարթէն մէյը քէ սարայէն տիմը գօ:

Թöքöմöրը ըսաւ.— Արրէս, միզալ շարթն ալէ պիր:

— Արրէ՜ս թöքöմöր,— ըսաւ բառուվը.— գըպիրիմ:

Բառուվը կնից իդօն, ըսաւ Քալ դղէն.— Թöքöմöրը խսկում ձուրձը զուզէ:

— Աղվö՛ր է, լամա, իրգօնը խսկում ձուրձը գըդանէս:

Դերվիշն ասաց.— Ջեռքից նուռը տուր:

Թագավորն ասաց.— Չե՛մ տա:

Դերվիշն ասաց.— Չե՛մ գնա:

Թագավորը այդտեղ վախեցավ, նուռը տալու ժամանակ, նուռն ընկավ ձեռքից փշրվեց, նռան հատիկները ցրվեցին: Դերվիշը հավ դարձավ, սկսեց նռան հատիկները կտցահարել, բայց Քաչալ տղան թագավորի ծնկի տակ էր, հավը կարծեց, թե տղան թագավորի ոտի տակ է, ուզեց ուտել այդ նռան հատիկը: Թագավորը ոտքը բարձրացրեց, այդ ժամանակ նռան հատիկը աղվես դարձավ, բռնեց հավին ու մի լավ կերավ: Աղվեսը Քաչալ տղա դարձավ, նստեց թագավորի դեմի աթոռին: Թագավորի ուշքը գնաց, ընկավ:

Քաչալ տղան ձայն տվեց.— Է՜յ, թագավոր, ինչու՞ ես այդքան քնում: Ինձ ճանաչեցի՞ր, ես այն Քաչալ տղան եմ, որ աղջկադ էր ուզում: Քո սիրուն աղջիկն եմ ուզում:

— Պայմաններս կատարի, աղջկաս կտամ:

Քաչալ տղան ասաց.— Առավոտյան պայմաններդ կկատարեմ:

Թագավորը դես նայեց, դեն նայեց, իր սիրած կնոջը կանչեց:

Կինը եկավ, ասաց.— Թագավորն ապրի՛, ի՞նչ ես ուզում:

— Աղջիկը մեր ձեռքից գնաց,— ասաց թագավորը:

— Թագավորն ապրի՛, այդ ի՞նչ բան է,— ասաց կինը:

— Առավոտյան կտեսնես, կհասկանաս ինչ բան է:

Թագավորը հոգնած էր, կնոջն ասաց.— Գնա՛նք, քնե՛նք:

Թագավորն առավոտ շուտ արթնացավ, ելավ դուրս, տեսավ արևն արևմուտքից է ծագել, վախեցավ, ներս մտավ.— Օ՜ֆ, օ՜ֆ,— ասաց,— սա Քաչալ տղայի գործն է, իմ սիրուն աղջիկը ձեռիցս գնաց:

Առավոտյան Քաչալ տղայի մայրը եկավ թագավորի մոտ, հագած կապած, այն թափթփված պառավը տասնհինգ տարեկան էր դարձել:

— Թագավորն ապրի՛, ես Քաչալ տղայի մայրն եմ, քո սիրուն աղջկան իմ Քաչալ տղային կտա՞ս: Պայմաններից մեկը պալատիդ դիմացն է:

Թագավորն ասաց.— Ապրե՛ս, մյուս պայմանն էլ բեր:

— Թագավորն ապրի՛, կբերեմ:

Պառավը գնաց տուն, Քաչալ տղային ասաց.— Թագավորն ոսկե թոնիր է ուզում:

— Լա՛վ, մայրիկ, երեկոյան ոսկե թոնիրը կտանես:

Իրգօն իղուվ, իսկուծ ջ̈ուրջ̈ը թա̈քա̈վո̈ւրէն քու-
վը իղուվ։ Իսկուծ ջ̈ուրջ̈ը բաշլից գըդգըդիլը, ծա-
կիրը բաշլիցէն ճըջ̈ճըջ̈իլը։ Թա̈քա̈վո̈րը իլա̈ն գը-
նա̈յը բաշլիցէն ձա̈փկիլը- խաղիլը՝ «Ա̈շկէնը կը-
նա̈ւց միր ծա̈ռուցը» ա̈սիլը։

Իսկուծ ջ̈ուրջ̈ը տարծուվ Քալ դղան, ա̈սուց.— Թա̈քա̈վո̈րն աբրո՞ւձ, գա̈շկէնը գուզիմ՝ համա̈ն-համան։

Թա̈քա̈վո̈րը իլան գընա̈յը ձէն դվուն.— Ա̈շկէնը կնա̈ւց միր ծառուցը վա̈յ աման։

Քալ դղան առուվ կնա̈ւց դա̈շկէնը սարայէն։ Քալ դղան հասուվ էր մըրազէն, մէդքը ինգուվ շրէն միջը գինա̈ւղ ա̈շկէնը, ա̈սուց տալ թա̈քա̈վո̈ւրէն ա̈շկէնը.—Իս գուրթում պիրիմ զան ա̈շկէնը։

Կնա̈ւց, առուվ զան ա̈շկէնը, իպիր հիդը բարաբուր հարստութէնն ալէ։

Երևկոյան ոսկե թուխսը թագավորի մոտն էր։

Ոսկե թուխսն սկսեց կտցահարել, ձագերն էլ սկսեցին ճվվալ։ Թագավորն ու կինն սկսեցին ծափ տալ, պարել՝ «Աղջիկը մեր ձեռքից գնաց» ասելով։

Ոսկե թուխսը դարձավ Քաչալ տղա, ասաց.— Թագավորն ապրա՜ծ, աղջկադ եմ ուզում՝ հենց հիմա։

Թագավորն ու կինը ձայն տվեցին.— Աղջիկը գնաց մեր ձեռքից, վա՜յ աման։

Քաչալ տղան աղջկան առավ տարավ պալատից։ Քաչալ տղան հասավ իր մուրազին, հիշեց ժայռի մեջ կենող աղջկան, թագավորի աղջկան ասաց.— Ես պիտի գնամ բերեմ այն աղջկան։

Գնաց, բերեց այդ աղջկան, հարստությունն էլ հետը միասին։

## 6 (6)․ ԹԱ̈ՔԱ̈ՎՈ̈ՒՐԷՆ ԲԶԴԱ̈Գ ԴՂԱՆ

Գըգինուր, չըգինուր թա̈քա̈վո̈ր մը։ Ադ թա̈քա̈վո̈իրը գունունօ ըրք դղօ։

Ան գուվա̈սյաթի իրինց.— Իս յէփըր գըմիռնիմ ըրք իրգօ̈ն ամէյ միյըտ բըր ուկա̈ք կըրըզմա̈նէս յէրվան, ա̈վիդըրուն գարթաք։

Վա̈ղըտ գասնա, թա̈քա̈վո̈րը գումիռնա։ Մինձ դղան միմը իլա̈ն ա̈վիդա̈րունը գառնի, գուրթու կըրըզմանին յէրվան գարթիլը։ Ցադ վա̈ղըտը կըրըզմա̈նին ծառ մը գուրգա̈նու, լայսը գուանցընէ։ Դղան գուվախնու, գուփախա։ Ըրք իրգօ̈ն գուրթու, ամա գուփախա, չուգարթու։ Ջախպըրդա̈քը գուխապըտէ։

Ըրք իրգօ̈նը գուխալիսա, յէտքը գուրթու օրթանչա ախպարը, չուցըր գըննօ մինձ ախպարը տըրզադ ալ գըննօ, ան ալ տըրզադ գուխապըտի զախպըրդա̈քը։

Նուբը գուկու բզդա̈գ ախպուրը։

Գուրթու բզդա̈գ ախպարը, գըըլիշա կըրըզմանին յէրվան գարթիլը։ Ցադ վա̈ղըտը ծառը գուրգա̈նու՝ միմէն լայսը անցընիլա համուր։ Բզդա̈գ դղան գուքիշի զթօ̈րը, գուզիխի, գուգդրի զմուդը։ Դա̈վը գուննու զլայսը անցընա̈ւղը. միգալ ախպըրդա̈քը չուկիդա̈նուն։

Բզդա̈գ ախպարը զադ դա̈վէն մուդը գառնի, գուկու յախպըրդուցը քուվը, գու հարցնի.— Գարթացա՞ք դաղէն կըրըզմանէն յէրվան։

Ախպըրդա̈քը գա̈սին.— Հա̈։

Բզդա̈գ ախպարը գա̈սի.— Սօդ իք։ Գարթացուձ չիք։ Ըզսօ մուդը գդրիցա պիրա։ Ա̈րգիք արթունք աս վիրէնը յըրըր գաթուձ ի գութ-գութ։

Բարաբուր գուրթուն գուհասնէն դա̈վէն հա̈րը։

## 6(6). ԹԱԳԱՎՈՐԻ ՓՈՔՐ ՏՂԱՆ

Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում։ Այդ թագավորն ունենում է երեք տղա։

Նա կտակում է տղաներին.— Երբ ես մեռնեմ, ամեն մեկդ երեք գիշեր պիտի գաք գերեզմանիս վրա, ավետարան կարդաք։

Անցնում է ժամանակ, թագավորը մեռնում է։ Մեծ տղան մոմն ու ավետարանը վերցնում, գնում է հոր գերեզմանի վրա կարդալու։ Այդ ժամանակ գերեզմանից մի ձեռք է երկարում, լույսը հանգցնում։ Տղան վախենում է, փախչում։ Երեք գիշեր գնում է, բայց փախչում է, չի կարդում․ Եղբայրներին խաբում է։

Երեք գիշեր անցնելուց հետո, միջնեկ եղբայրն է գնում, ինչպես արել էր մեծ եղբայրը, նա էլ իր եղբայրներին է խաբում։

Հերթը գալիս է փոքր եղբորը։

Փոքր եղբայրը գնում, սկսում է կարդալ գերեզմանի վրա։ Այդ ժամանակ ձեռքը երկարում է, որ մոմի լույսը հանգցնի։ Փոքր տղան քաշում է թուրը, զարկում, մատը կտրում։ Լույսը հանգցնողը դևն է լինում. մյուս եղբայրներն այդ չեն հասկանում։

Փոքր եղբայրն այդ դևի մատը վերցնում, գալիս է եղբայրների մոտ, հարցնում.— Կարդացի՞ք հայրիկի գերեզմանի վրա։

Եղբայրներն ասում են.— Այո՜։

Փոքր եղբայրն ասում է.— Սուտ եք։ Չեք կարդացել։ Ահա մատը կտրել, բերել եմ։ Եկե՛ք գնանք այնտեղ, ուր որ արյունը կաթ-կաթ կաթել է։

Միասին գնում հասնում են դևի հորը։

Բզզա̈գ ախպարը գա̈սի.— Տօ̈ք ընծէ հիլըցէք հուս. Նըքըր իս ուկում։ Բարնում գա̈րիցիք զէս, իհ̂ըցըցէք հա̈րը։ Իս դուկում, բարունը գիժգըդիմ, տօ̈ք զուհասգնաք իս իգուծ իմ, գըքիշիք, գըհա̈նիք զէս։

Բզզա̈գ ախպարը ադ գուլթ-գուլթ վիրընէն լիգըտէն գուրթօ, գուհասնա, գուիշի մինձ սարայի մը գօ։ Գուրթօ յադ սարայէն գումըննա, գուիշի ա̈շկէյն մը գարկաֆ գուպանա, գա̈սի.— Պարէվ, քուրօ̈գ։

Ա̈շկէյն ալ գա̈սի.— Աստըծը պարէն, ախպա̈ր։ Ուցը բիրդէն, ծա̈կը թիվէն չըգա̈րիր յասդիգը ակուր, տօն չո̂ւց իգիր։ Հոս դէվ մը գօ, մուդը գըդըրուծ ի, յարալանմըշ իղուծ ի, բառգուծ ի, թը հա̈դիտ գառնէ, գըննի գուդի գքէ։ Ուշէդ փախէ։

Դղան ալ գա̈սի.— Իս ա̈դա̈ր հա̈մա̈ր իգուծ իմ, բըրսըքա̈նիմ զէ։

Ադ ա̈շկէյնը գա̈սի.— Իս աղվա̈ր չըմկիդէ, կընու հա̈մու էմ օրթանջա քուրիս քուվը, ան գա̈սի քէ չա̈ց բըր սըքա̈նիս զէ։

Բզզա̈գ դղան գուլթօղօ, գուրթօ օրթանջա քուրը քուվը։ Գուրթօ յան սարայէն գուըննէ, գուիշէ սա ղալթէն օրթանջա քայրը քան զմէգալը աղվօ̈ր ի, նսդուծ գարկաֆ գուպանա։ Աղօ̈ր ալէ գա̈սի.— Պարէվ, քուրօ̈գ։

— Պարէվ, ախպար։ Ուցը բիրդէն, ծա̈կը թիվէն չըգառնու յասդիղ ակուր, տօն չո̂ւց իգիր։ Հա̈մու դէվը գըննէ, գուդէ գքէ. յարալանմըշ իղուծ, բարգուծ ի։

— Իս ա̈դա̈ր հա̈մուր իգուծ իմ, զա̈դա̈ր սպանիլէն թա̂րիֆ ըրէ ընծէ, իս կնա̈մ սըքա̈նիմ զէ։

Ան ա̈լէ գա̈սի.— Գուրթաս միզալ սարայէն, ըրք քուրէս բզդալը, գուրթաս ան քըզ թա̂րիֆ գօնէ, քի չո̂ւցըր սըքա̈՞նիս զդէվը։

Դղան գըննի գուրթօ յան սարայէն, գուիշէ բզզա̈գ քայրը յան զէրգը քայրը ղահա աղվա̈ր ի. արիվէն գա̈սէ՝ տօ̈ն մի ձիթի, իս գուձիթիմ։

Գա̈սի.— Պարէվ, քուրօ̈գ, ընծէ թա̂րիֆ իրօ̈, քի չո̂ւց բըր սըքա̈նիմ զդէվը։

Ա̈շկէյնը գա̈սի.— Կընու իշէ, ագար թը դէվը բառգուծ ի, ջընջիրը պիրնին գումնէն, լիդիվին գուըննին խաս՝ բառգուծ ի։ Ան վա̂ղըտը գըքիշիս գըթծրը գըզլխիս, գըսըքա̈նիս զէ։ Դա̈վը գա̈սի քէ. «ինսան-օղլը միմա̈լէ գիխէ, քի ուշէդ սա̈դդէմ»։ Ամմա տօն գա̈սիս՝ իս յէմ մուրը յիրմինը ղաթ մը ձննուծ իմ, ղաթ մա̈լէ գըզիխիմ։

Դղան գուրթօ, գուդիսնօ ջընջիրը պիրնին գումընէն, լիդիվէն գուըննին, գուգիխի։ Դէվը գա̈սի. — Միմա̈լէ գիխէ։

Փոքր եղբայրն ասում է.—Դուք ինձ այստեղ սպասեք, մինչև ես գամ։ Պարանով կապեցեք ինձ, իջեցրեք հորը։ Ես կգամ, պարանը կշարժեմ, դուք կիմանաք, որ ես եկել եմ, կքաշեք, կհանեք ինձ։

Փոքր եղբայրն այդ կաթ-կաթ արյան հետևից գնում, հասնում, տեսնում է մի մեծ պալատ կա։ Գնում, մտնում է այդ պալատը, տեսնում է մի աղջիկ ձեռագործ է անում, ասում է.— Բարև՛, քույրիկ։

Աղջիկն ասում է.— Աստծո բարին, եղբա՛յր։ Օձը պորտով, ծիտը թևով չի կարող այստեղ գալ, դու ինչպե՞ս եկար։ Այստեղ մի դև կա, մատը կտրած, վիրավոր քնած է, եթե քո հոտն առնի, կելնի կուտի քեզ։ Շուտ փախիր։

Տղան ասում է.— Ես դրա համար եմ եկել, պիտի սպանեմ նրան։

Այդ աղջիկն ասում է.— Ես լավ չգիտեմ, հիմա գնա իմ միջնեկ քրոջ մոտ, նա քեզ կասի ինչպես պիտի սպանես նրան։

Փոքր տղան թողնում, գնում է միջնեկ քրոջ մոտ։ Բարձրանում է պալատ, տեսնում միջնեկ քույրն ավելի սիրուն է, քան մեծը, նստած ձեռագործ է անում։ Նրան էլ ասում է.— Բարև՛. քույրիկ։

— Բարև՛, եղբայր։ Օձը պորտով, ծիտը թևով չի կարող այստեղ գալ, դու ինչպե՞ս եկար։ Հիմա դևը վեր կկենա, կուտի քեզ. վիրավորված եկել, քնել է։

— Ես դրա համար եմ եկել, դրա սպանելու ձևը բացատրիր ինձ, գնամ սպանեմ նրան։

Նա էլ ասում է.— Կգնաս մյուս պալատը, երեք քույրերից փոքրը քեզ կպատմի, թե ինչպես պիտի սպանես դևին։

Տղան վեր է կենում գնում այդ պալատը, տեսնում՝ փոքր քույրը մյուս երկուսից ավելի գեղեցիկ է. արևին ասում է՝ դու մի ծաթիր, ես պիտի ծաթեմ։

Ասում է.— Բարև՛, քույրիկ, ինձ պատմիր, թե ինչպե՞ս սպանեմ դևին։

Աղջիկն ասում է.— Գնա տես, եթե դևը պառկած է, ճանճերը բերնից մտնում, հետևից դուրս են գալիս, ուրեմն՝ քնած է։ Այն ժամանակ կքաշես թուրը, կզարկես, կսպանես նրան։ Դևը կասի քեզ. «Մարդու տղա, մի հատ էլ զարկ, որ շուտ մեռնեմ»։ Բայց դու կասես՝ ես մորիցս մի անգամ եմ ծնվել, մի անգամ էլ կզարկեմ։

Տղան գնում, տեսնում է ճանճերը բերնից մտնում, հետևից դուրս են գալիս, զարկում է։ Դևն ասում է.— Մի հատ էլ զա՛րկ։

Դղան գա̈սի.— Իմ մուրը յիրմինը զ̊ալթ մը ձննուծ իմ, միգ զ̊ալթ ա̈լէ գըգիխիմ, դուսրա̈նիմ։

Դղան ուըրգադ գըսրա̈նի դդէվը։ Ցիդ գուլվա, գուառնի գա̈շկընիրը, բզդա̈գ վալըը էնք գուառնի, օրթանչանը՝ օրթանչա ախպորը, մինձը՝ մինձ ախպորը։ Գուրթօ աղ հիրէն քուվը գուհասնա, գուխժգդի գըարունը։ Ախպրդա̈քը մինձ ա̈շգէյնը գուքիշին։

— Աս մինձ ախպոր զ̊ըսմալթն է,— գա̈սէ դղան։

Ախպըրդա̈քը գըխնդուն։

Իքընչէն ա̈լէ գուհանի՝ օրթանչա ախպորը համուր։

Բզդա̈գէն գուհասնա նուրը, ա̈շկէյնը գուա̈սի.— Քը ախպըրդա̈քը գըզ̊ըսխանմըշընուն, քի իս շա̈դ աղվա̈ր իմ, գքի գըթուղօն հիրէն միչը, ուօն յառանձ իլ։

Դղան գա̈սի.— Զէ, էմ ախպըրդա̈ք ուըրգադ պուն չըրինին։ Գուհա̈նի գա̈շկէյնը յառանձ, էնք գումընօ հա̈րը։

Ախպըրդա̈քը գուա̈սին.— Աս դահա աղվա̈ր ի, զէնք գըթօղունք հա̈րը, չըհա̈նին զը։

Հիրէն գիսը գուհասնա, բա̈րունը գուկդրին, դղան գըմնու միչը։

Գա̈սին.— Մինձը՝ մինձ ախպորը, օրթանչէն՝ օրթանչա ախպորը, բզդայն ա̈լէ գուգօնք վէզիրէն դղէն։

Բզդա̈գ դղան հիրէն միչը գուբայըլմիշ ըննօ, ուռնըը խիլքը կլօ̈խը գուկօ գիննօ, գուրթօ մինձ գա̈շկընէն սարայը, գուիշէ հուն զօ իսկը ա̈րխաք մը։ Ցադ սարային գուննի, միգալ սարայէն գուրթօ, հուն ալ գուիշէ իսկը զ̊ուրզ̊ մը՝ ծակիրն ալէ հիդը։ Գուուրթու յան միգալ սարայէն, գիշէ ծէնը մուրդէն միչը թաղվուծ։ Գուհանի զծէնը մուրդին։ Ծէնը գուգօ էր ըրգը մուզ, գա̈սէ.— Ցիփըր նիդը գիյնէս զաս ըրգ մուզը տիրուր քիշղէս, իս գըհա̈սնէմ քէ։

Գուննի դղան գուրթօ։ Շա̈դ գուրթօ, քէչ գուրթօ, գուիշի հուվէվ մը մա̈կա̈կ գօրծէ, աղ հուվըվէն յալվարլամըշ գըննօ, գա̈սէ.— Օ՛ռ զէմ ըռօխ՝ ուօն հա̈քէ, քօ ըռախնէն իս հա̈քնէմ։

Հուվիվէն հիդը գուփիխէ զռախնէն, գըհաքնա հուվըվէն ըռուխը, գուառնի մա̈կա̈ մը յիրմինը, գուզնի զէ, գիշէն գուանցնի կլօ̈խը, գուտառնօ Քյալ դղա։ Դղան գըհարցնէ հուվըվէն.— Կիղէն միչը չա՞ գօ, չա՞ չիկօ։

Հուվէվն ա̈լէ գա̈սի.— Զա բըր ըննօ, թա̈քա̈վըրէն դղաքը ըրք ա̈շկէյն պիրուծ ին, ըրգօ̈քը իրինք առուծ ին, բզդա̈գ ա̈շկէյնը ա̈լէ վա̈զիրէն դղէն բըր ուզօն։ Ա̈շկէն ա̈լէ չուզի հարսնաք ըննօ, քառսօն ուր մա̈զա̈ն ի գվուծ։

Բզդա̈գ դղան գուկու կիղը գումըննա, գուրթօ

Տղան ասում է.— Մորից մի անգամ եմ ծնվել, մի անգամ էլ կզարկեմ, կսպանեմ։

Տղան այդ ձևով սպանում է դևին։ Ետ է դառնում, վերցնում է աղջիկներին, փոքր քրոջն ինքն է առնում, միջնեկը՝ միջնեկ եղբորը, մեծը՝ մեծ եղբորը։ Գնում հասնում է հորի մոտ, շարժում է պարանը։ Եղբայրները մեծ աղջկան քաշում հանում են։

— Այս մեծ եղբոր բախտն է,— ասում է տղան։

Եղբայրներն ուրախանում են։

Երկրորդին է հանում՝ միջնեկի համար։ Հերթը հասնում է փոքրին։ Աղջիկն ասում է.— Եղբայրներդ կնախանձեն, որ տեսնեն ես շատ գեղեցիկ եմ, քեզ կթողնեն հորի մեջ, դու առաջ ելիր։

Տղան ասում է.— Ո՛չ, եղբայրներս այդպիսի բան չե՛ն անի։ Առաջ աղջկան է հանում, ինքը մնում է հորի մեջ։

Եղբայրներն ասում են.— Սա ավելի գեղեցիկ է, իրեն կթողնենք հորում, չենք հանի։

Հասնում է հորի կեսը, կտրում են պարանը, տղան մնում է մեջը։

Ասում են.— Մեծը՝ մեծ եղբորը, միջնակը՝ միջնեկ եղբորը, փոքրն էլ վեզիրի տղային կտանք։

Փոքր տղան հորի մեջ ուշագնաց է լինում, վերջը ուշքի է գալիս, վեր է կենում գնում մեծ աղջկա պալատը, տեսնում է այնտեղ մի ոսկե օրորոց կա։ Այդ պալատից դուրս է գալիս գնում է մյուս պալատը, այնտեղ էլ տեսնում է ոսկի թուխս կա՝ ձագերն էլ հետը։ Գնում է մյուս պալատը, տեսնում է ձին ցեխի մեջ թաղված։ Հանում է ձին ցեխից։ Ձին նրան երկու մազ է տալիս և ասում.— Երբ նեղն ընկնես, այս երկու մազն իրար կքսես, ես կհասնեմ քեզ։

Տղան վեր է կենում գնում։ Շատ է գնում, քիչ է գնում, տեսնում է մի հովիվ, մաքիներ է արածեցնում, հովվին խնդրում է, ասում.— Ա՛ռ իմ շորերը՝ դու հագիր, քո շորերն էլ ես հագնեմ։

Հովվի հետ փոխում է շորերը, հագնում է հովվի շորը, նրանից առնում մի մաքի, մորթում է, մորթին անցկացնում գլուխը, դառնում Քաչալ տղա։ Տղան հարցնում է հովվին.— Գյուղի մեջ ի՞նչ կա, ի՞նչ չկա։

Հովիվն ասում է.— Ի՞նչ պիտի լինի, թագավորի տղաներն երեք աղջիկ են բերել, երկուսն իրենք են վերցրել, փոքրին՝ վեզիրի տղային են տալու։ Աղջիկը չի ուզում հարսանիք անել, քառասուն օր ժամանակ է տվել։

Փոքր տղան գալիս մտնում է գյուղ, գնում է



4—941

Ղույըմչը վüրբիդէ մը քովը.— Պարէվ,— գըսէ,— վարբիդ, քովիդ շüգիրդ չը՞ր առնիս զէս:

— Է՛,— գըսի,— Քյալ դղօ, լիմբ՞ր իգուր իլուր:

Ան ալ գըսի.— Իս քէնէ փարա չըմ ուզի:

Ղույըմչէն գառնէ զէ քովը:

Թüքüվüրէն դղաքը գըգինչին ղույըմչէն, գըսին.— Իսկը üրüսք մը բըր շինիս, բըր հասցընիս նըքըր քառսօն օր:

Ղույըմչէն լիդ գուկու ջահրան մöթ:

Քյալ դղան գըսի.— Զա՞ իղուծ ի:

— Է՛, Քյալ դղա, տöն ուղուրսուս իս իգուծ. Թüքüվüրէն դղաք նըքըր քառսօն ուր մüդüտ դվուծ ին, իսկը üրüսք գուզին:

— Է՛, վարբի՞դ.— գըսի Քյալ դղան,— ադ ի դլուշինգէս: Ամըն իրիգöն մանէթի մը լաբլաբու օռ, քառսօն օր լիդը üրüսքը օռ կընօ:

Տըրգադ գըբըլըշա պուն: Ամէն ըրգöն Թըք-Թըք, ամա քառսօն արէն հիդը իսկը üրüսքը գուպիրի: Սանձ իրիգօնը վüրբիդը գուխէ Թարախէն ձագէն, զաԹը üրüսքը գըբըսօ: Գըխընգօ, քի Քյալ դղան շինուծ ի:

Սարախըդան գընևօ վարբիդէլն գըսի.— Օ՛ռ զüրüսքը, վարբի՛դ, իս üլէ ուկամ հիդիդ:

Վարբիդը չի դüնէր զէ:

Üշկէլնը զուգիխնու, գըխընգօ, գըսի. «Դղան սաղ իս»: Զվարբիդին գուգօ բüխշիշ, գըսի.— Աս ղամԹէն գուզիմ իսկը ղուրղը՝ ծüկիրն ալ հիդը բարաբուր:

Ղույըմչին լիդ գուկու, գըսի.— Աս ղամԹէն üլէ իսկը ղուրղը գուզի լիրմինս:

Քյալ դղան գըսի.— Քառսօն օր մüդüտ դöր, իս գուխüդըրիմ:

Քառսօն օրը գըխüլիսա, սüրüխդüն վüրբիդ գուկօ, գըդխնօ դղան խüդըրիրի իսկը ղուրղը ծակիրն ալէ բարաբուր:

Վüրբիդը գառնէ գուդանի Թüքüվիրէն դօնաղը: Աս ղամԹէն üլէ բզդüգ üշկէլնը գըսէ.— Ջըրիդ բըր ընի ծիուն, ով որ գըհասնի յառանձ, ան üլէ գառնի զէս:

Թüքüվüրը իլան գինի.— ԲըԹըն Թըղ ուկուն, ջըրիդ բըր խաղուն:

Ղույըմչէն գուխադրվա, Քյալ դղան գուկօ, գըսի.— Իս ալէ գուզիմ աըԹիլ ջըրիդ:

Ղույըմչէն գըսի.— Թուփալ ծէն մը զօ յախըռը, օռ զէ, կընօ:

Քյալ դղան գուըԹօ, զադ Թուփալ ծէնը գուգաբի լիղըքնէն միչը, ադ ըրգը մուզը գուքիշտի, գուկու ըսբիդüգ ծէնը, ըսբիդüգ ըռուխնէն üլէ հիդը բարաբուր:

ոսկերչի մոտ.— Բարև՛,— ասում է,— վարպետ, մոտդ ինձ աշակերտ չե՞ս վերցնի:

— Է՛,— ասում է,— Քաչալ տղա, որտե՞ղից եկար:

Նա էլ ասում է.— Ես քեզնից փող չեմ ուզի:

Ոսկերիչը վերցնում է նրան իր մոտ:

Թագավորի տղաները կանչում են ոսկերչին, ասում.— Մի ոսկի օրորոց պիտի շինես, մինչև քառասուն օր պիտի հասցնես:

Ոսկերիչը տխուր վերադառնում է:

Քաչալ տղան ասում է.— Ի՞նչ է պատահել:

— Է՛, Քաչալ տղա,— ասում է,— քո գալն անհաջող էր. Թագավորի տղաները մինչև քառասուն օր ինձ ժամանակ են տվել, ոսկե օրորոց են ուզում:

— Է՛, վարպետ,— ասում է Քաչալ տղան,— ա՞յդ է մտածմունքդ: Ամեն իրիկուն մի մանեթի լաբլաբու առ, քառասուն օր հետո օրորոցն առ գնա:

Այդպես գործն սկսում է: Ամեն իրիկուն թըկ-թըկ, բայց քառասուն օրից ոսկե օրորոցը բերում է: Քառասուն օրվա վերջին գիշերը վարպետը լուսամուտի անցքից նայում, տեսնում է ոսկե օրորոցը փայլում է: Ուրախանում է, որ Քաչալ տղան շինել է:

Առավոտյան վեր է կենում, վարպետին ասում.— Վերցրու օրորոցը, վարպե՛տ, ես էլ գամ հետդ:

Վարպետը չի տանում նրան:

Աղջիկը տեսնում է օրորոցը ուրախանում, ասում է. «Տղան ողջ է»: Վարպետին նվեր է տալիս, ասում.— Այս անգամ կուզեմ ոսկե թուխսն իր ձագերի հետ:

Ոսկերիչը վերադառնում է, ասում.— Այս անգամ էլ ոսկե թուխսն է ուզում ինձնից:

Քաչալ տղան ասում է.— Քառասուն օր ժամանակ տուր, ես կպատրաստեմ:

Քառասուն օրը վերջանում է, առավոտյան վարպետը գալիս, տեսնում է, տղան պատրաստել է ոսկե թուխսն իր ձագերով: Վարպետն առնում է տանում թագավորի պալատը: Այս անգամ էլ փոքր աղջիկն ասում է.— Ձիարշավ պիտի լինի, ով առաջ հասնի, նա էլ ինձ կառնի:

Թագավորը հայտարարում է.—Բոլորը թող գան ձիարշավ խաղալու:

Ոսկերիչն էլ է պատրաստվում, Քաչալ տղան գալիս է, ասում.— Ես էլ եմ ուզում գնալ ձիարշավի:

Ոսկերիչն ասում է.— Մի կաղ ձի կա ախոռում, վերցրու գնա՛:

Քաչալ տղան գնում է այդ կաղ ձին կապում է եղեգնուտի մեջ, երկու մաղն իրար է քսում, գալիս է սպիտակ ձին, սպիտակ հագուստներն էլ հետը:

*Գուհաքնա բաունինէն, գուհիգնա գծէնը, գուրծա տալ ջըրիգը մէյգանը, յաստը չինգլին գումըդնա, յանոր չինգլին գուրննի։ Բըդըög üշկէյնը գըխնգօ, քի ըդըög դղէն իգավ։ Դղան գուփինի գաունը, գուհիգնա գծուփալ ծէնը, գուրծօ ի գօն։*

*Իքինջը ուրն üլէ տըղադ գարննօ։*

*Դղէն ճ°ուլըմջէն գüսի.— Վարբիդ, չ°üց իր, ադվüր իր ադ դղան։*

*Ղուլըմջէն գüսի.— Քյüլ դղա, ու°ն üլէ աղվüրը կխոէցուր։*

*Üւչինջի ուըը դղան գուկնօ ջըրիդ, գուքիշտի թöրը, գուրադոէ մագիրէն գդէն ծիօն փուրը։*

*Էհալին գուձüփկի, քէ աս գդրէջը ջըրիդը ճ°ագանմիշ իդավ։*

*Յադ վաճ°ըտը դղան գüսի,— Ի՛ս իմ թüքüվüրէն ըդըög դղան, ի՛ս ըըր առնիմ ըդըög üշկէյնը, ան էմ նշüձօն ի։*

*Յութը ուր, յութը իրգօն հարսնüք գինին, գըխընդուն։*

*Իրգնուցը ինգավ ըրք խնձüր. մէյը՝ հüճ°üթօղէն, մէյը՝ էհալէն, մէյն üլէ՝ մահրըմէն։*

## 7 (7). ՇԱՀՅԱՐԱՆ

*Շահյարան խլüք թüքüվüրմ իր։ Յէր վախտը քէնզէնք խլüք մարթ չըդար։ Ան ուր մը üսուց.— քüնզէս աղվüր, խիլք իլան հարստութէն ունüնüղ չիգօ։*

*Զադ խոսքիրը լսից հալվüր մը, üսաց.—Զü° գընօ Շահյարէն հարստութէնը։ Ջահիլ վախտըս թալէ մը անցօ, չադըր մը գար յէ։ Չադըրէն միչը գիցած ճ°արարուէն Շահյարան չունա գէ։*

*Շահյարան լսից զադ խոսքիրը, üսաց.— Զադ հüլվüրը քուվիս պիրիք։*

*Կüցէն հüլվüրէն քուվը, դիսան զüմբիլէն միչը բաագած է, üցէն էր.— Շահյարան գքէ գուգէ էր քուվը։*

*— Չըմ գարնօ ուրթօ,— üսուց հüլվüրը,— ծառվէս, վդվէս գուտաղօ։*

*Իլուն կüցէն, Շահյարէն üցէն հüլվüրէն üսաձը։*

*—Կüցի՛ք, շüլդիցի՛ք պիրի՛ք գէ,— üսուց Շահյարան։*

*Կüցէն, պիրէն գէ։ Շահյարան üսուց° տալ հüլվüրը.— Տօն չո°ւց գիտուր չադըրէն միչը ճ°արարուէն։*

*Հագնում է շորերը, հեծնում ձին, գնում ձիարշավի հրապարակը, մի անկյունից մտնում է, մյուս անկյունից դուրս է գալիս։ Փոքր աղջիկն ուրախանում է, որ փոքր տղան եկավ։ Տղան փոխում է հագուստը, հեծնում է կաղ ձին, գնում տուն։*

*Երկրորդ օրն էլ այդպես է անում։*

*Տղան ոսկերչին հարցնում է.— Վարպե՛տ, ինչպե՞ս էր, լա՞վ էր այդ տղան։*

*Ոսկերիչն ասում է.— Քաչա՛լ տղա, դո՞ւ էլ ես լավը հասկանում։*

*Երրորդ օրը տղան գալիս է ձիարշավ, քաշում թուրը, վեզիրի տղայի ձիու փորը պատռում։*

*Ժողովուրդը ծափահարում է, որ այդ կտրիճը ձիարշավում հաղթեց։*

*Այդ ժամանակ տղան ասում է.— Ե՛ս թագավորի փոքր տղան եմ, ե՛ս պիտի առնեմ փոքր աղջկան, նա ի՛մ նշանածն է։*

*Յոթ օր, յոթ գիշեր հարսանիք են անում, ուրախանում են։*

*Երկնքից ընկավ երեք խնձոր. մեկը՝ հեքիաթ ասողին, մեկը ժողովրդին, մեկն էլ՝ դուրկ ականջներին։*

## 7(7). ՇԱՀՅԱՐԱՆ

*Շահյարան մի խելոք թագավոր էր։ Իր ժամանակ նրանից խելոք մարդ չկար։ Նա մի օր ասաց.—Ինձանից լավ, խելք ու հարստություն ունեցող չկա։*

*Այդ խոսքերը լսեց մի ալևոր, ասաց.— Ի՞նչ է Շահյարայի հարստությունը։ Երիտասարդ ժամանակս մի դաշտի միջով անցա, մի վրան կար։ Վրանում եղած ունեցվածքը Շահյարան չունի։*

*Շահյարան լսեց այդ խոսքերը, ասաց.—Այդ ալևորին մոտս բերեք։*

*Գնացին ալևորի մոտ, տեսան զամբյուղի մեջ պառկած է, ասացին նրան.— Շահյարան քեզ իր մոտ է կանչում։*

*— Չեմ կարող գնալ,— ասաց ալևորը,— ոտքերս ու ձեռքերս դողում են։*

*Ելան գնացին, ալևորի ասածները հաղորդեցին Շահյարային։*

*— Գնացե՛ք, շալակե՛ք, բերե՛ք,— ասաց Շահյարան։*

*Գնացին, բերեցին նրան։ Շահյարան ասաց ալևորին.—Դու ինչպե՞ս տեսար վրանի մեջ եղած ունեցվածքը։*

— Տօն չունէս զէ,— ա̈սուց հա̈լվա̈րը։

Շահյարան նիխիկիցավ, ա̈սուց.— Գուզիմ գինօ զադ չադըրը։

—Գարնունք գինօ զէ,— ա̈սուց հա̈լվա̈րը,— ա̈գա̈ր տօն ա̈մըր թը գինիս սալանէն թա̈քա̈վա̈րէն, ծակէրէն թա̈քա̈վա̈րէն, ա̈դօ̈ւնք մէ գուդանէն լան չադըրը։

Թա̈քա̈վա̈րը ա̈մըր ա̈րօ̈ց սալանէն թա̈քա̈վա̈րէն, ծակէրէն թա̈քա̈վա̈րէն, հա̈լվա̈րէն հիդը իլուն կա̈ցէն լան չադըրը։ Շօ̈ւղ կա̈ցէն, քէչ կա̈ցէն, հա̈սուն չադըրը։ Ալայը չադըրէն միչը մդուն, պուն չդիսուն։ Շահյարան նիխացուվ, ա̈սուց տալ հա̈լվա̈րը.— Աս չա՞ պուն է, զէս գուխա̈պըդիս։

Հա̈լվա̈րը ջուզուպ իդօ̈ր.— Սա̈քըր ա̈րօ̈ր։

Ցադ խուսքէն իրվան, ա̈չկէն մը նըքսէ մըդուվ։ Շահյարան դիսուվ զէ չաշմըշ իղուվ, քէ սա չօ̈ւց ա̈զվըրթէն է։

Ա̈չկէնը ալայնէն պա̈րիվ իկիր ա̈սուց։ Ղ̊աթմալէ ֆըրթանէն իրվան հիձուձ քուրսընա իգէն։ Ամըն մուրթը գուրա քուրսընա իգիք։ Ցադա̈ր իդդատէն ֆըրթանէն իրվան հիձուձ մասա մա̈լէ իգիք, ալայը նսդուն։ Շահյարան դիսուվ զադ ղ̊արարտէն, շաշմըշ իղուվ, ծան չհա̈նից։

Ախշարէն էն ադվա̈ր ա̈չկէնը ա̈սուց տալ Շահյարան.— Իրգօնը լէմ քուվը միսաֆըր իք։

Հա̈լվա̈րը ա̈սուց տալ թա̈քա̈վա̈րը.— Ջո՞ւց է Շահյարա̈, զաս ա̈դվա̈ր ա̈չկէնը գուզի՞ս քէ նշանձօն ըննօ։

— Հա̈րու գընօ՞,— ա̈սուց Շահյարան։

— Իս ադ պունը գըդիսնում,— ա̈սուց հա̈լվա̈րը։

Իլուն կա̈ցէն ա̈չկընէն ղ̊ունախը։ Ա̈չկէնը իպիր սուֆրան սա̈զից, նսդուն ադիլա̈ գիրուն։ Հա̈լվա̈րը ա̈սուց տալ ա̈չկէնը.— Ալայիս գուզինք տօն թա̈քա̈վա̈րէն նշա̈նձօն ըննուս, ղ̊արօ̈՞լ գինիս։

— Թա̈քա̈վա̈րը զէր մադնէն թը գուդօ ընծէ, ղ̊արօ̈լ գինիմ,— ա̈սուց ա̈չկէնը։

Շահյարան իդօ̈ր զմադնէն։ Ցադդիղը գիրուն, խմիցէն, քէֆ իրէն, սահաթնէրուվ թմպա̈գ, զուռնօ քիշտիցէն, ա̈դվա̈ր-ա̈դվա̈ր խուսացէն։

Ախշարէն էն ադվա̈ր ա̈չկէնը ա̈սուց.— Վախտը անցուվ, Շահյարա̈, քիլէ ուրթունք բաղդէնք։

Շահյարան ա̈սուց.— Տօն կնօ, իս գուկամ։

Ա̈չկէնը կնա̈ց, բառգիցուվ։ Քէչ մը սօրա Շահյարան կնա̈ց լա̈չկընէն ուդան, տօռը մուդդուցուվ, տըռնին փիս հօ̈դ մը իկիք։

Շահյարան դիսուվ զա̈չկէնը ըրթըն ցավիր իլած է, թարխընէն գուղա, դօնը հիդդուձ է։

Շահյարան նէքցէ չըմդուվ, ա̈չկէնը գինչից։ Ան չուզից, կնա̈ց հա̈լվա̈րէն քուվը նսդուվ, շա̈դ նիխացուձ իր։

— Դու չունես դրանք,— ասաց ալևորը։

Շահյարան զայրացավ, ասաց.— Ուզում եմ տեսնել այդ վրանը։

— Կարող ենք տեսնել,— ասաց ալևորը,— եթե դու հրամայես առյուծների թագավորին և թռչունների թագավորին, նրանք մեզ կտանեն այդ վրանը։

Թագավորը հրամայեց առյուծների թագավորին, թռչունների թագավորին, ալևորի հետ ելան գնացին այդ վրանը։ Շատ գնացին, քիչ գնացին, հասան վրանը։ Բոլորը վրանի մեջ մտան, ոչինչ չտեսան, Շահյարան վայրացավ, ասաց ալևորին.— Սա ի՞նչ բան է, ինձ խաբեցիր։

Ալևորը պատասխանեց.— Համբերի՛ր։

Այդ խոսքի վրա, մի աղջիկ ներս մտավ։ Շահյարան տեսավ նրան ու զարմացավ, թե դա ի՜նչ գեղեցկություն է։

Աղջիկը բոլորին բարի գալուստ մաղթեց։ Մեկ էլ քամու վրա հեծած աթոռներ եկան։ Ամեն մարդու համար աթոռ եկավ։ Դրանից հետո քամու վրա հեծած մի սեղան եկավ, բոլորը նստեցին։ Շահյարան տեսավ այդ երեքը, զարմացավ, ձայն չհանեց։

Աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն ասաց Շահյարային.—Այս երեկո ինձ մոտ հյուր եք։

Ալևորն ասաց թագավորին.— Ի՞նչպես է, Շահյարա, ուզո՞ւմ ես, որ այս գեղեցիկ աղջիկը քո նշանածը լինի։

— Բայց կլինի՞,— ասաց Շահյարան։

— Ես այդ բանը կանեմ,— ասաց ալևորը։

Ելան գնացին աղջկան պալատը։ Աղջիկը բերեց սեղան բացեց, նստեցին, ուտելիք կերան։ Ալևորն ասաց աղջկան.— Մենք բոլորս ուզում ենք, որ դու թագավորի նշանածը դառնաս, համաձա՞յն ես։

— Եթե թագավորն իր մատանին ինձ տա, կհամաձայնվեմ,— ասաց աղջիկը

Շահյարան տվեց մատանին։ Այդտեղ կերան, խմեցին, քեֆ արեցին, ժամերով թմբուկ, զուռնա զարկեցին, անուշ-անուշ զրուցեցին։

Աշխարհի ամենագեղեցիկ աղջիկն ասաց.— Ժամանակն անցավ, Շահյարա՛, արի գնանք քնենք։

Շահյարան ասաց.— Դու գնա, ես գալիս եմ։

Աղջիկը գնաց, պառկեց։ Քիչ հետո Շահյարան գնաց աղջկա սենյակը, մոտեցավ դռանը, դռնից տհաճ հոտ էր գալիս։

Շահյարան տեսավ աղջկան ամբողջովին վերքերով պատած, թարախը հոսում է, տունը հոտում է։

Շահյարան ներս չմտավ, աղջիկը կանչեց նրան։ Նա չուզեց գնալ, գնաց ալևորի մոտ նստեց. շատ էր վիրավորված։

— Չվա՞ քանզագ նիղöցած իս,— öսաց հöլվöրը։

Շահյարան հաղօթից ըննած պունը.— Էմ մազնէն չա՞ բըր ըննօ։

Հöլվöրը öսաց.— Սöբöխըղöն գուխօ öշկէնը, գազ պունը իս գուզխնօմ, համու բառզիցունք։

Սöբöխըղöն իկիք öշկէնը, öշկէնը հէն աղվըրուէնն իր։

Հöլվöրը öսաց տալ öշկէնը.— Շահյարան գքէ չուզէ։

Öշկէնը öսաց տալ թöքöվöրը.— Գուզօմ զմազնէն,— öփկէց մը մազնաք հանից ջիբին,— öռ քէ մազնէն։

— Տօն քէ ծառում զէմ մազնէն գՕր,— öսաց Շահյարան։

Öշկէնը հանից զմազնէն մինգըղից ծառը տալ Շահյարան, öսաց.— Իս աշխուրն իմ. հիչ մուրթ զէս չըհասգընուր։

## 8 (8). ԹÖՔÖՎԻՐԷՆ ԻՍԿԱ ԿԼԱՈՒԽ, ԱՐՋՈՒԹ ԿԼԱՈՒԽ ԴՂԱՔԸ

Վախտիլը թöքöվիրէն մէյը թöպտիլը խըլաֆիտուն գուրթö իվիլը դըռնիլա հöմուր, քի իհալին չուց գուտըրրա։ Գըդիսօ ըրք öշկէյն նըսգած դիշöփօյն քուվը գուխուսէյն։ Öշկընիրէն մէյը կöսի.— Ագöր թöքöվիրը զէս թը գառնի, իս էյր հöմուր զըպիրիմ ըրգը դղօ՝ միգէն կլատխ իսկա, միգալէն öլէ՝ արծութ։

Թöքöվիրը գուրթօ իդօն, զըգինչըցընի զազ öշկէյնը, գառնի զէ։

Ուր մöլէ թöքöվիրը գուրթօ յավըր։ Էնը ամէյս, էնը ուր, էնը սահաթ սօնօրա ադ öշկէյնը ըրգը դղօ զըպիրի՝ միգէն կլատխ իսկա ըըրնու, միգալէն öլէ՝ արծութ։

Ադ թöքöվիրը գունունու դալը զընալ մը։ Ադ զընալը գուօըսօանմըշ ըննու, մէդքը զըտընա զազ չուճըխնէն դէյր ինիլ։ Դուպիրի ըրգը շուն լագöղ գուտընա ադ զինգուն հիդքուվէն, ադ ըրգը չուճօխն öլէ, գառնի, գուտընա սընդգէ մը միչ, գուսիբի ձէուվը։

Թöքöվիրէն խöբուր գուգուն, գöսին.— Քէ զնöյը պիրուծ ի ըրգը շան լագöդ։

Թöքöվիր գուöսի.— Դöրէք զէ չուք ջամփէն միչը, զարգէք գարգադաչէն, անցնöղ — տառնöղ թըղ թըքնա իրիսը։

Ադ ըրգը չուճօխը ճöյրը գուհöնի ձուվին տուրուցի։ Ցանտին ըրգը հիկկա գուկուն, մէյը գուöսի.

—Ագöր թը աս սընդգալը փարօ ի՝ քի թըղ ըննօ, ագöր թը հիկկա ի՝ ընծի թըղ ըննօ։

— Ինչու՞ ես այդպես նեղացած,— ասաց ալևորը։

Շահյարան պատմեց եղածն ու ասաց.— Իմ մատանին ի՞նչ պիտի լինի։

Ալևորն ասաց.— Առավոտյան աղջիկը կգա, ես այդ բանը կանեմ, հիմա քնենք։

Առավոտյան աղջիկն եկավ՝ դարձյալ իր նախկին գեղեցկությամբ։

Ալևորն ասաց աղջկան.— Շահյարան քեզ չի ուզում։

Աղջիկն ասաց թագավորին.— Մատանին կտամ,— գրպանից մի բուռ մատանի հանեց,— ա՛ռ քո մատանին։

— Դու քո ձեռքով իմ մատանին տուր,— ասաց Շահյարան։

Աղջիկը հանեց մի մատանի, ձեռքը պարզեց Շահյարային, ասաց.— Ես աշխարհն եմ. ինձ ոչ ոք չի հասկանա։

## 8(8). ԹԱԳԱՎՈՐԻ ՈՍԿԵ ԳԼՈՒԽ, ԱՐԾԱԹ ԳԼՈՒԽ ՏՂԱՆԵՐԸ

Ժամանակով մի թագավոր ծպտված գնում շրջում է տեսնելու համար, թե իր ժողովուրդն ինչպես է ապրում։ Տեսնում է երեք աղջիկ դարբասի մոտ նստած, խոսում են։ Աղջիկներից մեկն ասում է.— Եթե թագավորն ինձ առնի, ես նրա համար երկու տղա կբերեմ՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

Թագավորը տուն է գնում, կանչել է տալիս այդ աղջկան և ամուսնանում հետը։

Մի օր էլ թագավորը գնում է որսի։ Ինն ամիս, ինն օր, ինը ժամ հետո, այդ աղջիկն երկու տղա է բերում՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

Թագավորը մի ուրիշ կին է ունենում։ Այդ կինը նախանձում է և մտադրում այդ երեխաներին անհետացնել։ Բերում է երկու շան լակոտ, դնում այդ կնոջ կողքին, այդ երկու երեխաներին վերցնում, դնում արկղի մեջ, գցում ծովը։

Թագավորին լուր են տալիս, ասում.— Քո կինը երկու շան լակոտ է բերել։

Թագավորն ասում է.— Տարե՛ք նրան ճամփի մեջտեղը, ամրացրեք խաչափայտին, անցնող-դարձողը թող թքի երեսին։

Այդ երկու երեխաներին ջուրը ծովից դուրս է հանում։ Այն կողմից երկու հոգի են գալիս, մեկն ասում է.— Եթե այս արկղում փող է՝ թող քեզ լինի, եթե հոգի է՝ ինձ լինի։

Գուանին վար սընդա̈ըլը, վարպա̈նոն գէ, գախ-շին ըրդը չաճօխ: Մոլթը գուանի, գուգանա գէ, էր համար գուրիհի: Այա̈ր գընայը վար չաճախնէն գադարգի մա̈կդա̈ր: Յէփըր քաւն գա̈րէ դոլընոն, թա̈քա̈վիրը գըխադըցնի չըրիդ: Աղ դդաքը գաա̈սին.— Մինք ալէ ըրը ալթանք չըրիդ:

Աղ վըօք ամէն մէյը ծէն մը գուանի, գուր-թուն չըրիդ:

Զըրիդ խադիլէն վաղըրը աա̈ղօղանքը գուխնէյն կըլխնին: Թա̈քա̈վիրէն չաղվա̈ր գընայը գըդիսնու վար դդիցը խսկը-արձաթը կլխընէն:

Դդաքը յէփըր յար ջամփին դուանէն, գադիսնուն գարգաղաչը զարգած գնայը, գըմըդըը-նուն, ձա̈դգում գիշպին գիրիսը, գըսրփին գար-ցօնքը:

Աղ թա̈քա̈վիրէն չաղվա̈ր գընայը սöդ գուհի-վըննոու, գա̈սի.— Աուլանը գէյթը կադվըըցնի գէս:

— Ո՞վ գըպիրի զասլանը գէյթը,— գա̈սի թա̈-քա̈վիրը:

— Ջըրիդ խաղցող ըրգը դդաքը գըպիրին գը,— գա̈սի գնայը:

Թա̈քա̈վիրը գուգինչըցնի վադ դդաքը: Դդաքը գուկուն թա̈քա̈վա̈րէն դառն: Թա̈քա̈վա̈րը գա̈սի. — Ըրք ուրին բըր պիրիք ասլանը գէյթը, բադըը չըպիրիք՝ կլխնէս բըր գըդըրիմ:

Դդաքը գուրթուն լիսը: Գուրթուն գիլվէն, գու-իշին ասլան մը մինգըվöծ ի:

— Էմ ձայձ ադվըըցըցիք,— գա̈սի ասլանը,— իս ծի ադվըրութէն գինիմ:

Աղ ձայձ չուքան գընինու, թարուխը միչը: Ադա̈նք տանկում գուձագին գձայձ, աղ թարուխ գուղղա, աղ ձայձ գազվուրնու: Աղ դդաքը գուըը-թին գէյթ, գուանին, յիդ գուրթուն, գուդանին թա̈քա̈վիրէն գուգօն: Թա̈քա̈վա̈րը շա̈դ գուխնդօ, գա̈սի.— Աֆարիմ դդաք, շա̈դ մուհիան իգօ: Ու-գիցէ՛ք:

— Թա̈քա̈վիր, չվա՞ վադ գընալ զարգած իս գարգադաչէն:

Թա̈քա̈վիրը ջուղաբ չիդօր:

— Թա̈քա̈վի՛ր,— գա̈սին անա̈նք,— չվա՞ մինք քէ ա̈սուձ ա̈սլանը գէյթ պիրունք քէ, տօն միր ա̈-սուձը չուլսիս, վադ գնա̈յը գարգադաչին բըր քագիս:

Յադ վաղըտը թա̈քա̈վիրը ա̈մըր գինէ՝ ուրթիլ վադ գնա̈յը գարգադաչին քագիլ, պիրիլ:

Գուրթուն, գըպիրին թա̈քա̈վիրէն գօնը: Գուա̈-սին աղ դդաքը.— Թա̈քա̈վի՛ր, աղ գինգուն միխ-քը չա՞ ի:

— Էր հարցըցիք,— գա̈սի թա̈քա̈վիրը:

Վերցնում են արկղը, բաց անում, տեսնում երկու երեխա: Այդ մարդը վերցնում է դրանց, տանում պահում: Նրա կինը երեխաներին ուղարկում է դպրոց: Երբ քանի տարեկան են դառնում, թագավորը ձիարշավ է կազմակերպում: Տղաներն ասում են.— Մենք էլ պիտի գնանք ձիարշավ:

Տղաներից ամեն մեկը մի ձի է վերցնում, գնում ձիարշավ:

Ձիարշավի ժամանակ տղաների թասակներն ընկնում են գլխներից: Թագավորի չար կինը տեսնում է այդ տղաների ոսկի-արծաթ գլուխները:

Տղաները, երբ այդ ճամփով անցնում են, տեսնում են խաչափայտին գամված կնոջը, մոտենում են, ծաղկով շոյում են երեսը, սրբում՝ արցունքները:

Թագավորի չար կինը սուտ հիվանդ է ձևանում և ասում.— Առյուծի կաթն ինձ կառողջացնի:

— Ո՞վ կբերի առյուծի կաթը,— ասում է թագավորը:

— Ձիարշավ խաղացող այդ երկու տղաները կբերեն,— ասում է կինը:

Թագավորը կանչում է այդ տղաներին: Տղաները գալիս են թագավորի տունը: Թագավորն ասում է.— Երեք օրից պիտի բերեք առյուծի կաթը, եթե չբերեք՝ գլուխնիդ կկտրեմ:

Տղաները գնում են լեռը: Գնում ման են գալիս, տեսնում են մի առյուծ մեկնված է:

— Իմ ծիծը լավացրեք,— ասում է առյուծը,— ես ձեզ լավություն կանեմ:

Այդ ծիծը վերք է լինում, թարախը մեջը: Նրանք դանակով ծակում են ծիծը, թարախը դուրս է գալիս, ծիծը լավանում: Տղաները կթում են կաթը, առնում, վերադառնում, տանում տալիս են թագավորին: Թագավորը շատ է ուրախանում, ասում.— Ապրե՛ք տղաներ, շատ գոհ եմ: Ուզե՛ք:

— Թագավո՛ր, ինչո՞ւ ես այդ կնոջը գամել խաչափայտին:

Թագավորը պատասխան չի տալիս:

— Թագավո՛ր,— ասում են նրանք,— ինչո՞ւ մենք քո ասած առյուծի կաթը բերեցինք քեզ, դու մեր ասածը չես լսում, այդ կնոջը խաչափայտից պիտի հանես:

Այդ ժամանակ թագավորը հրամայում է՝ գնալ, այդ կնոջը խաչափայտից հանել, բերել:

Գնում, բերում են թագավորի տունը: Տղաները հարցնում են.— Թագավո՛ր, այդ կնոջ մեղքն ի՞նչ է:

— Հարցրեք իրեն,— ասում է թագավորը:

— Քը միխքը չա՞ ի,— գուհարցնին դղաքը։

— Իս միխք չունէմ,— գուա̈նի ադ գնայը,— գինչիցիք զմինձմարը։

Գըգինչին զմինձմարը։ Ա̈ն գուկու, թա̈քա̈վիրը գուհարցնէ բառվօն.— Էմ գնայը չա՞ պիրուձ իր՝ չուն լագո̈դ, չէ՞ գդուք իպիր։ Ո̈ւզո̈րթ ասու, թը չէ քէ կլատխ բըր գդրիմ։

— Քէ գնայը,— գուա̈նի բառօվը,— պիրուվ ըրգը գդօ՝ միգէն կլատխ իսկա, միգալէն՝ արձութ։

— Յօ՞ գուն դդաքը,— գուա̈նի թա̈քա̈վիրը։

— Իս միխք չունեմ,— գուա̈նի բառօվը,— քէ միգալ գնայնի միղավո̈րը։

Թա̈քա̈վիրը գուգինչի գգնա̈յը, գուհարցընէ.— Էմ գնա̈յը չա՞ պիրուձ իր՝ չո̈ւն լագո̈դ պիրուձ իր։ Ո̈ւզո̈րթ ասու, թը չէ՝ կլատխտ բըր գդրիմ։

Ա̈ն ալ գուա̈նի.— Դղա̈ք պիրուձ իր՝ միգէն կլատխ իսկա, միգալէն՝ արձութ։

Աղ վա̊ղըսը ըրգը դդաքը կլխընէն հանիցէն տա̊ղըսդունքը։ Թա̈քա̈վիրը ա̈դօ̈նց կլխընէն գիտավ՝ մէգէն արձութ ի, միգալէն՝ իսկա։

— Աս դղաքը Ւ՞նու ին,— ա̈սուց թա̈քա̈վիրը։

— Իս միղավո̈ր չիմ, քէ միգալ գնայն է միղավո̈ր։ Իս իմ խուսքէն դիրն իդօ,— գա̈նի գնա̈յը։

Թա̈քա̈վիրը գինչից զջա̈լա̈թը, ասուց.— Ըրգը ծէն պէ, մէյը բառվօն համուր, քի ղա̈ղա̈րթը չա̈սուց յան վա̊ղըսը, մէգն ա̈լէ՝ չաղվո̈ր գինգունը համուր, քի գ̊ըսղա̊նչըլըղ̊ին ղէս խափից։

Թա̈քա̈վիրը ամըր իրՕց՝ գադ դդաքը պիրուղ գնայը համամ գանէյն, աղվո̈ր ըռախնա հա̈քցընին, պիրին յէր քովը։

Գուդա̈նէն, գուլվանուն, գուհա̈քցնին գաղվո̈ր ըռախնէյն, գուպիրին գունըսդըցնին թախտէյն։

Թա̈քա̈վիրը թազա հարսնաք գինի. յոթը ուր, յոթ իրգՕն։

Իրգնայցը գինա ըրք խընծըրու հուդ. մէյը՝ ընծի, մէյը՝ Սէթրակին, մէյը՝ հա̊ղաթօղէն։

## 9 (9). ՏՏՈՄԸ

Ժամանակին գնա̈գ մը երեխա չի ունենում։ Գըխընդըրվա ասըձա. «Ջուջօխ թըղ ընօ դէ, թը գուզէ, տտօմ թըղ ընօ»։

Աստուծ զձայնը գըլսէ, գուդօ էր տտօմ մը, ադ տտմէն միչն ալէ ա̈շկէյն մը գըգինու։

Տտօմը գըմիգնօ, ամմա դունըմիչը հիչ պուն մալէ չուինի։ Մարը գուշալկի գադ տտօմը, գուրթու պօրա մանուղնէն քովը, գա̈նի իրինց.— Շա̈դ գըխնդըրէմ զէմ տտօմն ա̈լէ սուրվըցըցիք մանիլը։ Ջըհաննամը թըղ ընօ, թը՛ղ պանա։

— Քո մեղքն ի՞նչ է,— հարցնում են տղաները։

— Ես մեղք չունեմ,— ասում է կինը,— կանչեցեք տատմորը։

Կանչում են տատմորը։ Նա գալիս է, թագավորը հարցնում է պառավին.— Իմ կինն ի՞նչ էր բերել՝ շան լակոտ, թե՞ տղաներ էր բերել։ Ճիշտն ասա, թե չէ քո գլուխը կկտրեմ։

— Քո կինը,— ասում է պառավը,—բերեց երկու տղա՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

— Որտե՞ղ են գտնվում տղաները,— ասում է թագավորը։

— Ես մեղք չունեմ,— ասում է պառավը,— քո մյուս կինն է մեղավոր։

Թագավորը կանչում է կնոջը, հարցնում.— Իմ կինն ի՞նչ էր բերել՝ շա՞ն լակոտ էր բերել։ Ճիշտն ասա, թե չէ՝ գլուխդ կկտրեմ։

Նա էլ ասում է.— Տղանե՛ր էր բերել՝ մեկի գլուխը ոսկի, մյուսինը՝ արծաթ։

Այդ ժամանակ երկու տղաները գլխներից հանում են թասակները։ Թագավորը տեսնում է նրանց գլուխները՝ մեկը արծաթ, մյուսը՝ ոսկի։

— Այս տղաներն ու՞մն են,— ասում է թագավորը։

— Ես մեղավոր չեմ, քո մյուս կինն է մեղավորը։ Ես իմ խոսքի տերը եղա,— ասում է կինը։

Թագավորը կանչում է դահճին ասում.— Երկու ձի բեր, մեկը պառավի համար, որ այն ժամանակ ճիշտ չասաց, մյուսն էլ՝ չար կնոջ համար, որ նախանձից ինձ խաբեց։

Թագավորը հրամայում է՝ տղաներ ծնող կնոջը բաղնիք տանել, գեղեցիկ հագուստներ հագցնել, բերել իր մոտ։

Տանում են, լվանում, գեղեցիկ հագուստներ հագցնում, բերում նստեցնում են թախտին։

Թագավորը նորից հարսանիք է անում. յոթ օր, յոթ գիշեր։

Երկնքից ընկնում է երեք խնձոր. մեկը՝ ինձ, մեկը՝ Սեդրակին, մեկն էլ՝ հեքիաթ ասողին։

## 9(9). ԴԴՈՒՄԸ

Ժամանակին մի կին երեխա չի ունենում։ Աստծուց խնդրում է. «Երեխա թող լինի, ուզում է դդում լինի»։

Աստված ձայնը լսում է, մի դդում է տալիս, այդ դդումի մեջ մի աղջիկ է լինում։

Դդումը մեծանում է, բայց տան մեջ գործ չի անում։ Մայրը շալակում է դդումը, գնում բուրդ մանողների մոտ և ասում.— Շա՜տ եմ խնդրում իմ դդմին էլ մանել սովորեցնեք։ Ջեհաննա՛մը, թո՛ղ աշխատի։

Տոմը հիչ գըսօրվա՞ պանիլ։ Աղ տոմը ա̈շ-կընիրէն գա̈սի.— Շադ գըխնդրիմ գէմ պիժէնն ա̈լէ մանիցիք իս գուրժում դունծ, խնծըր պի-րիմ ծէ։

Ա̈շկընիրը գէր պի·ժէնն ալէ գըմանին։

Տոմը կլուրվիլուվ-կլուրվիլուվ գուրթու գը-մըննա թա̈քա̈վիրէն բուստանը։ Տամէն միչին ա̈շ-կէյնը գըննէ, գըրրլիշա դունծ, խնծըր քաղիլը։ Գըլըննա տամէն միչը գուրթու։ Թա̈քա̈վիրէն դը-ղան գիշի գըղըննա, քի բուստանը քաղվուծ ի։

Ա̈շկընիրը գուղին, գըխնդուն։

Իրիզօնը գուկու մարը տոմը դանիլը համար, գա̈սի.— Թըղ չըրաշարի՛, իշա̈լլա, մանի՞ց, չըմա՞-նից, չա՞ շինից։

— Մանից, հապու չըմանի՞ց, սկու իշի՛։

Գընալը գառնի գտոմը գուրթու իդօն։

Միգանուրը աղ գնալը ըրգը քիլօ պօրտ ֆադ-լա գառնի, գըդանա։

Տոմը էր ինգէրդուցը գա̈սի.— Տօ՛ք գէմ պի-ժէնն ալէ մա̈նիցիք, իս գուրթում ծիգ գապիրիմ դունծ, խնծըր։

Գինա կուլուրվիլուվ-կուլուրվիլուվ գուրթու գը-մըննա բուստանը։ Թա̈քա̈վիրէն դղան գըպուհվը-դա ձառէ մը դա̈գը, գըդխնօ տոմ մը մդուվ բուս-տանը, միջին իլուվ ա̈շկէյն մը բըլըշիցուվ դունծ, խնծըր քաղիլը։

Թա̈քա̈վիրէն դղան գըդխնօ, քի շա̈դ աղվա̈ր ա̈շկէյն մէ, համան գըքարվա յէրվան, գըպըռնի գէ, գա̈սի.— Իս գքի հավնիցօ, տօն գառնի՞ս գէս։

Ա̈շկէյնը գա̈սի.— Գառնիմ։

Ցադ վախըտը դղան գըլըլօ դունծ, խնծըր տոմը, գըխուրգի գէ։

Իրզօնը աղ գնալը գուրթու սոմը պիրիլա, գըհարցընի.— Թըղ չըրաշարի՛, իշա̈լլա, մանի՞ց, չըմանի՞ց, չա՞ շինից։

— Մանի՛ց, հապու չըմանի՞ց, սկու իշի՛։

Գընալը գըշալգի գտոմը, գուրթու իդօն։

Միգանուրը գընալը ըրգը քիլօ ֆադլա պօրտ գառնի, գըշալգի գտոմն ա̈լէ գուրթու։

Ա̈շկէյնը գէնէ գուրթու դունծ, խնծըր պիրիլը։

Թա̈քա̈վիրէն դղան, քի գուհիյիր էլը գըպռնի գէ, գա̈սի.— Թը բըր առնիս գէս, մադնէս տնէմ մուղիտ։

— Գառնիմ,— գա̈սի ա̈շկէյնը։

Թա̈քա̈վիրէն դղան գէր մադնէն գըտնա ա̈շ-կընէն մուղը։

Իրզօնը մարը գուրթու տոմը պիրիլը, գա̈սի. — Մանի՞ց, չըմանի՞ց, չա՞ շինից։

— Մանի՛ց, հապու չըմանի՞ց, սկու իշի՛։

Դդումն աշխատել կսովորի՞։ Այդ դդումը աղ-ջիկներին ասում է.— Շատ եմ խնդրում իմ բաժի-նըն էլ մանեք, ես կգնամ ձեզ տանձ ու խնձոր կբերեմ։

Աղջիկները նրա բաժինն էլ են մանում։

Դդումը գլորվելով-գլորվելով գնում մտնում է թագավորի այգին։ Դդմի միջի աղջիկը դուրս է գա-լիս, սկսում է տանձ ու խնձոր հավաքել։ Լցնում է դդմի մեջ ու գնում։ Թագավորի տղան տեսնում է, որ այգին քաղված է։

Աղջիկներն ուտում են, ուրախանում։

Իրիկունը մայրը գալիս է դդումը տուն տանե-լու, ասում.— Աստված շնորհքը կտրի, մանե՞ց, չմանե՞ց, ի՞նչ արեց։

— Մանե՛ց, հապա չմանե՞ց, ահա տե՛ս։

Կինը առնում է դդումը, գնում տուն։

Մյուս օրը այդ կինը երկու կիլո բուրդ ավելի է վերցնում, տանում։

Դդումն իր ընկերուհիներին ասում է.— Դուք իմ բաժինն էլ մանեք, ես գնամ ձեզ տանձ ու խնձոր բերեմ։

Նորից գլորվելով-գլորվելով գնում մտնում է թագավորի այգին։ Թագավորի տղան թաքնվում է մի ծառի տակ, տեսնում է մի դդում մտավ այ-գին, միջից մի աղջիկ դուրս եկավ և սկսեց տանձ ու խնձոր հավաքել։

Թագավորի տղան տեսնում է, որ աղջիկը գե-ղեցիկ է, անմիջապես դուրս է թռչում բռնում նրան, ասում.— Ես քեզ հավանեցի, դու ինձ կառնե՞ս։

Աղջիկն ասում է.— Կառնե՛մ։

Այդ ժամանակ տղան տանձ ու խնձոր է լըց-նում դդմի մեջ, ուղարկում։

Իրիկունը այդ կինը նորից է գնում դդումը բե-րելու, հարցնում է.— Աստված դրա շնորհքը կտրի, մանե՞ց, չմանե՞ց, ի՞նչ արեց։

— Մանե՛ց, հապա չմանե՞ց, ահա տե՛ս։

Կինը շալակում է դդումը, գնում տուն։

Մյուս օրը դարձյալ երկու կիլո բուրդ ավելի է վերցնում, շալակում է դդումն ու գնում։

Աղջիկը նորից գնում է տանձ ու խնձոր բե-րելու։

Թագավորի տղան, որ նրան էր սպասում, բռնում է ու ասում.— Եթե ինձ պիտի առնես, մատանիին դնեմ մատիդ։

— Կառնե՛մ,— ասում է աղջիկը։

Թագավորի տղան իր մատանին դնում է աղ-ջըկա մատը։

Երեկոյան մայրը գնում է դդումը բերելու, ասում է.—Մանե՞ց, չմանե՞ց, ի՞նչ արեց։

— Մանե՛ց, հապա չմանե՞ց, ահա տե՛ս։

Մարը գըշալգի տօմը, յա̈լա բախալըմ, գուր-թու իդօն։

Իլվուձ ուրը թա̈քա̈վիրէն մարթակը գուկուն գա̈շկէյնը ուգիլը։

Գընայը գա̈սի.— Մինք ա̈շկէյն չունէնք, մինք տօմ մը կունէնք, ուրիշ մուրթ չունէնք։

— Ջարուր չունա, տօմ թըղ ըննօ,— գուա̈սին։

Մարը գուդօ գտօմը, թա̈քա̈վիրէն մարթակը գըծափկին, գըխաղուն, գըխնդուն, գաննին գտօ-մը ծիօն լէրվան գըտնին, յալլա̈ բախալըմ, գուրթուն թա̈քա̈վիրէն սարայը։ Քէֆ. հարսնա̈կ կինին։ Ով ըր գըղխնօ, գուա̈սի.— Վա՜խ, խէղճ դղան, տօմ պիրուձ ին։

Թա̈քա̈վիրէն դղան գուա̈սի.— Ջարուր չունա,— գուհիյա։ Դղան էսօր գուհիյա, վուղը գուհիյա, ամա ա̈շկէյնը տամէն միչին չըննիր։

Քաղքին միչը դաղվառ մը գըգինու, թա̈քա̈վա̈րէն դղան գըհիգնա զծէնը, գուրթու։ Ա̈շկէյնը գըննէ տամէն միչին, գըհաքնա դաղվա̈ր ըռախնէն, գըհիգնա ծէնը, գուրթու յադ դաղվառը։ Դըղան ա̈շկէյնը գըննին գըխաղուն, քէֆ գինին, գըխնդուն։

Ա̈շկէյնը քան դդղան յառանձ գուուրթօ իդօն, գըմըննա տամէն միչը։

Շափութ մը սօնրա գինա դաղվառ գըննօ։ Դղան գինա գուուրթու։

Ա̈շկէյնը գըննէ տամէն միչին, դուհաքվա, դու-սազվա, ըրգը աղվըրնա գըտնա ձուցը, գուհիգնա զգարմէր ծէնը, գուրթու։ Գինա դղան ա̈շկէյնը գըննին գըխաղուն, քէֆ գըննին, գըխնդուն։

Ուդիլա ուդիլէքան ա̈շկէյնը կլուր մը կուդէ, կլուր մա̈լէ գուքարի ձուցը։ Աղվըրնաքը քարուց կլուրը գուգին։

Ցանտին գըննայ մը գըղխնօ գա̈շկէյնը կլուր գուքարի ձուցը, էնք ալէ գուքարի յէր ձուցը։ Ա̈շկընէն ձուցէն կլուրնէն աղվըրնաքը գուգին, ամմա ան գինգունը ձուցէն կլուրնէն ուդուղ չիկօ։

Դղան քան գա̈շկէյնը վարբիդ կըդա̈շինմիշ ըննօ, մահանօ ճօ̈ր ֆիտիլը. գըննէ տուրիցէ գա̈շկընէն ծէնը գըբիհա, գըհիգնա յէր ծիունը, գուրթու իդօն, գուհիյա ա̈շկընէն։

Ա̈շկէյնը գըննի, գիշի էր ծէնը չիկօ, քիլիլում գուրթու ի դօն, գըհանի զաւխը, բըր մըննա տա-մէն միչը, գիշի, գըղխնօ, քի տօմը չիկօ։ Ցադ վախըտը դղան համան գըկրգի զէ, տօմն ա̈լէ գըքարի գրօ̈գը։ Ադ վախտը գաննին մէգ գմիգալ, գըխնդուն։

Իրինք հասուն իրինց մուրազէն, տօք ա̈լէ հասիք ծիր մուրազէն։

Մայրը շալակում է դդումը և գնում տուն։

Հաջորդ օրը թագավորի մարդիկ գնում են աղջկան ուզելու։

Կինն ասում է.— Մենք աղջիկ չունենք, մենք միայն դդում ունենք, ուրիշ մարդ չունենք։

— Վնաս չունի, թող դդում լինի,— ասում են։

Մայրը տալիս է դդումը, թագավորի մարդիկ ծափ են տալիս, ուրախանում, վերցնում են դդումը, դնում ձիու վրա, հայդե՜, գնում թագավորի պալատը։ Քեֆ, հարսանիք են անում։ Ով որ տեսնում է, ասում է.— Ափսո՜ս, խեղճ տղան, դդում են բերել։

Թագավորի տղան ասում է.— Վնաս չունի,— սպասում է։ Տղան այսօր է սպասում, վաղն է սպասում, բայց աղջիկը դդմի միջից դուրս չի գալիս։

Քաղաքում հրավերք է լինում, թագավորի տղան հեծնում է ձին, գնում։ Աղջիկը դդմի միջից դուրս է գալիս, հագնում իր գեղեցիկ շորերը, հեծնում է ձին, գնում այդ հրավերքին։ Տղան ու աղջիկը ելնում, պարում են, քեֆ անում, ուրախանում։

Աղջիկը տղայից առաջ է տուն գնում, մտնում դդմի մեջ։

Մի շաբաթ հետո նորից հրավերք է լինում։ Տղան նորից է գնում։

Աղջիկը դուրս է գալիս դդմի միջից, հագնվում, զուգվում, զարդարվում է, երկու աղավնի դնում ծոցը, հեծնում է կարմիր ձին ու գնում։ Նորից տղան ու աղջիկը ելնում պարում են, քեֆ անում, ուրախանում։

Ճաշի ժամանակ աղջիկը մի բուֆտա ինքն է ուտում, մեկն էլ ծոցն է գցում։ Աղավնիներն ուտում են բուֆտան։

Այն կողմից մի կին տեսնում է, որ աղջիկը բուֆտա է գցում ծոցը, ինքն էլ է գցում իր ծոցը։ Աղջկա ծոցի բուֆտաներն աղավնիներն են ուտում, իսկ կնոջ ծոցի բուֆտաներն ուտող չկա։

Տղան աղջկանից ավելի ճարպիկ է լինում, ջուր թափելու պատրվակով դուրս է գալիս, աղջըկա ձին պահում, նստում է իր ձին, գնում տուն, սպասում աղջկան։

Աղջիկը դուրս է գալիս, տեսնում իր ձին չկա, քայլելով գնում է տուն, հանում շորերը, որ մտնի դդմի մեջ, տեսնում է, դդումը չկա։ Այդ ժամանակ տղան իսկույն գրկում է նրան, դդումն էլ գցում կրակը։ Այդ ժամանակ առնում են իրար, ուրախանում։

Իրենք հասնում են իրենց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

## 10 (10). ՈՒՑԷՆ ԱՂՎԸՐԹԷՆ

Վախըտըմ ավչէն մէյը ցանուձիր ցիրին։ Ուր մը իլուվ կնա̈ց թալլան՝ ցիրինը իշիլա̈։ Ցիրինէն միչը տիսուվ ըրգը ուց՝ սիվ իլան խըբիդա̈գ։ Սիվ ուցը գիտըլիդա̈գ ուցը ըըլլից։ Ավչէն դունէլում գադ քիշից գթվա̈նգը, նիդից սիվ ուցը, խըբիդա̈գ ուցը իլուվ անա̈ր պիրնին, ա̈սուց տայ մուրթը.— Ա̈րի, ինսան օղլու, փիչիմ պիրունիտ։

Ուցը փչից ավչէն պիրունը, ավչէն սուրվիցուվ գալաք հայվանէն լիզօ̈ն։

Ուցը ա̈սուց մարթօն.— Հիչ միդէ մը չա̈սիս գաս։

Ավչէն լիփր իդօն գուկիր ջամպուքը մա̈շէն միչը գիսուվ, գէր էխպապ հուվէվը։ Հուվէվը շա̈դ խնդուց, լիփր վինդիրը գիսուվ, խնդութունր իլա̈վ մա̈կէ մը գնից։

Ադ վախտը թիբիկնէն ա̈վիլը բաշլիցէն.— Ա՜խ, մթնիր, իշնէրինք գադ մա̈կա̈կը բադըռնէն իրնինք։

Հուվըվէն շօնը, լիփըր լսից թիբիքնէն ա̈վիլը, ա̈սուց.— Ա՜խ, էմ դիրր թը գիշդա̈ցնի գէս մսին, դադ թիբիքնէն բադուռ-բադուռ գուինիմ։

Ավչէն լսից գադ խոսքիրը, լիփր հուվէվը իպիր ուդիլա̈ն, խմիլա̈ն, ա̈սուց տայ հուվէվը.— Շօ̈նը լառանչ գիշդացօ̈ր։

— Տօ̈ն միսաֆըր իս,— ա̈սուց հուվէվը.— լառանչ գէէ ըըր գիշդացնիմ։

Ավչէն ա̈սուց.— Շօ̈նը լառանչ դօ̈ր, թըղ ուդէ, թը չէ՝ իս ալէ չըմուդէ։

Հուվէվը մաժբուր իդուվ ավչէն խաթրը չըգըդրիլում, իդօ̈ր մէս շօ̈նը, գիշդացօ̈գ գէ։ Իրինք բըլէշիցուն ուդիլ-խմիլը։

Հուվէվըն իլան ավչէն ա̈րա̈վա̈նիլում շօ̈նը, հանկէաչ սրդում բառդիցուն։

Շօ̈նը գիշդանիլում ղուվաթլիցուվ, առանց դըրուչը մա̈կա̈կը էնք րիհից, չի թօ̈ղ թիբիկնէն մոդկընուն։

Սա̈րա̈խդա̈ն, լիփըր իմցուն, գիսուն մա̈կա̈կը ըըլթըն գուն, թիբիկնէն ա̈լէ բադուռ-բադուռ իգուձին։ Հուվէվը շա̈դ խնդուց անա̈ր համուր, քէ ավչէն խոսքը լսից, ա̈սուց.— Ա̈րի՛, խաթըրըտ իշիմ,— ա̈սուց հուվէվը,— ուզօմ քէ դամըգլը՞դ մա̈կա̈ մը։

Ավչէն իչուվ սուրէն միչը, յադ դաղ̊իղ̊ան մա̈կա̈ մը պառչից։ Ավչէն կիդանիլում գլիզօն, ալայը սուրէն միչը գադ պիրա̈դ մակէ՛ն, քի գուպառչիր։ Առուվ կնա̈ց գէ, կիդանիլում քի ադ մա̈կէն գուշադնու։

Ավչէն մա̈կէն իդուր ի դօն, մա̈կէն ձնա̈ց շա̈դ շադցուվ, իղուվ սուրէ մը։

## 10(10). ՕՁԻ ԼԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակին մի որսորդ ցորեն էր ցանել։ Մի օր ելավ գնաց արտ՝ ցորենը տեսնելու։ Տեսավ ցորենի մեջ երկու օձ՝ սև ու սպիտակ։ Սև օձը սպիտակ օձին կուլ տվեց։ Որսորդը այդ որ տեսավ, քաշեց հրացանը, կրակեց սև օձի վրա, սպիտակ օձը դուրս եկավ նրա բերանից, ասաց մարդուն.— Ադամո՛րդի, արի, փչեմ բերանդ։

Օձը փչեց որսորդի բերանը, որսորդը բոլոր կենդանիների լեզուն սովորեց։

Օձն ասաց մարդուն.— Ոչ մեկին այս բանը չասես։

Երբ որսորդը տուն էր գալիս, ճանապարհին անտառի մեջ, տեսավ իր ընկեր հովվին։ Հովիվը, երբ ընկերոջը տեսավ, շատ ուրախացավ, ուրախությունից վեր կացավ մի մաքի մորթեց։

Այդ միջոցին շնագայլերն սկսեցին ոռնալ.— Ա՜խ, մթներ, իջնեինք այդ ոչխարների պատառները բաժուն տայինք։

Հովվի շունը, երբ լսեց շնագայլերի ոռնոցը, ասաց.— Ա՜խ, եթե տերս ինձ կշտացնի այս մսով, այդ շնագայլերին պատառ-պատառ կանեմ։

Որսորդը լսեց այդ խոսքերը, երբ հովիվը բերեց ուտելիքն ու խմելիքը, ասաց հովվին.— Շանն առաջ կշտացրու։

— Դու հյուր ես,— ասաց հովիվը,— առաջ քեզ պետք է կերակրեմ։

Որսորդն ասաց. —Շանն առաջ տուր, թող ուտի, թե չէ՝ ես էլ չեմ ուտի։

Հովիվն ստիպված, որպեսզի որսորդի սիրտը չկոտրի, միս տվեց շանը, կշտացրեց նրան։ Իրենք սկսեցին ուտել-խմել։

Հովիվն ու որսորդը շանն ապավինելով, հանգիստ սրտով քնեցին։

Շունը կշտանալով ուժ առավ, առանց տիրոջ ոչխարներին պահեց, չթողեց շնագայլերը մոտենան։

Առավոտյան, երբ զարթնեցին, տեսան, որ բոլոր ոչխարները կան, շնագայլերն էլ պատառ-պատառ են արված։ Հովիվը շատ ուրախացավ, որ որսորդի խոսքը լսեց, ասաց.— Արի՛, քեզ լավություն անեմ,— ասաց հովիվը,— մի բերքատու մաքի տամ։

Որսորդն իջավ հոտի մեջ, այդ պահին մի մաքի բառաչեց։ Որսորդը հասկանալով լեզուն, ամբողջ հոտի միջից այդ բորոտ մաքին ընտրեց, որ բառաչում էր։ Վերցրեց գնաց, իմանալով որ այդ մաքին կբազմանա։

Որսորդը մաքին տարավ տուն, մաքին ծնեց, շատ բազմացավ, դարձավ մի հոտ։

Ամրն իրգօն սարէն գուռկօ իգօն: Ուր մը մթնօլը մակացը սարէն իգիք իգօն, ավչէն խընգուց: Գեալը ասաց.— Զվա՞ գուձըձազզէս, ասա կէ ընծէ, թը չինը գըլթարգիմ զքէ:

Ավչէն չասաց:

Յաց վախըռը հավիրը գու քըրքըրէրին սաանր յառչիվը գիցուծ գաքսպը: Հավիրէն մէչը խարօդ մը գար, խարօղը թափթըփից թէվիրքը, ասաց.— Քառսօն գնազ թարրիս գունիմ, աօն գնա մը չըգարի՞ս թարրիս ինիս:

Ավչէն հառըըցավ խորագէն ասաձը, առավ զվարացը, ձիձից զգնալը, գնալը աթօղ փախավ:

Մարթը էր սիրտը գիցաձը չասաց գինգանը, քանի վոր ացը ասաձ իր. «Հիչ միզէ մը չըըըր ասխս զէ»:

## 11 (11). ՄԻՆՉ ՁԸԳԻՑՈՒՉ ԴԻԷՂ՝ ՄԻՆՉ ՔԷՕՈՒՐ ՄԸ ՏԷՅՐ

Գըգինօ, չըգինուր, գանջ թաքավէյր մը գըգինօ: Հալիվիրնէյն հիչ չըր սիրիր: Ուր մալէ գալաք հալըվըրնէյն գիլաախ գըգըիլա ամըր գուգը:

Գըըըլիշէյն զհալիվիրնէյն կլաախը գըրէյլ: Հալիվիր մա գազչը զգգան, գասը.— Ամա՛ն զգաս, բիհի զէյս, գըրիգանամ զահա քէ:

Դղան գասէ.— Զա՞ շինիմ, յաղա, չի՞ւց բըհիմ զքէ, թը գակոն զ՞նօն զքէ, գալախս ալէ գըզընին:

— Մը՛ վախնուր,— գասը հալիվէյրը,— բաղէյն մէյչ ընծը գիէզ մը շինէ, բաղիհնէյմ թօաց, յանիր ընծը ոզիլա գուզաս, ջաղա՞ մա գըտնէյս բաղիհնէյն, բայան չինիր, ամա չայրըր զաննա, գըտաանօ ցիրիկամ, իրզաանը գակաս, ընծէ գասս:

Դղան զանահաթ գուքը: Բաղէյն մէյչ զիեղ մը գըշինէ, զղօուզը գըտնա մէյչ. բաղիհնէյմ գըթագա, յանիր ա ոզիլա գուզր զաղէյն:

Գաանա ազէյն մը, թաքավէյր ամըր գինը՝ որթիլ ֆլան թաալը ֆըրթանը ընծէյըր: Միզաննօուր ալաա գարթան ֆըրթանր ընծէյլ:

Դղան իրզաան գուքը, գըպանը գըազիհնիէ. զաղէյն գասը.— Իսար կացաք ֆըրթանը ընծէյլ:

Դօւզ գասը— Վօաց գարթաս ընծէյլ: Սաաթ մը սանղա գըտաարինաս, մանկօաց գըտնէյս սալաղ թիվէյա, մըգ քան հօւսօզ մը գըգզըիս, ըրզը ծիաւ գըփշախս, գըփըչըզիս, գըքարիս պիրօնիս: Թաքավիրէյն մարթաաք թը գըհարցնին քիզ չա գա շինիս, ասը՝ ֆրթանը գօզիմ:

Միզաննօուըը ալաա գարթան ֆըրթանը ընծէյլ: Աղ զղան սաաթ մը սանղա գըտաարինը՝

Ամեն իրիկուն հոտը տուն էր գալիս: Մի օր էլ մթանը ոչխարի հոտը տուն եկավ, որսորդը ծիծաղեց: Կինն ասաց.— Ինչո՞ւ ես ծիծաղում, ասա, թե չէ կթողնեմ քեզ:

Որսորդը չասաց:

Այդ ժամանակ դրան առաջի աղբի մեջ հավերը քուջուջ էին անում: Հավերի մեջ մի աքլոր կար, թևերը թափահարեց, ասաց.— Քառասուն կնիկ եմ դաստիարակում, դու մի կնիկ էլ չե՞ս կարողանում դաստիարակել:

Որսորդը հասկացավ աքլորի ասածը, վերցրեց գավազանը, ծեծեց կնկան, կինը թողեց փախավ:

Մարդն իր սրտում եղածը չասաց կնոջը, քանի որ օձն ասել էր. «Ոչ մեկին չպիտի ասես»:

## 11(11). ՄԵԾ ՁԵՂԱԾ ՏԵՂՈՒՄ՝ ՄԻ ՄԵԾ ՔԱՐ ԴԻՐ

Լինում է, չի լինում, մի երիտասարդ թագավոր է լինում: (Նա) ծերերին բնավ չէր սիրում: Մի օր էլ բոլոր ծերերի գլուխները կտրելու հրաման է տալիս:

Սկսում են ծերերի գլուխները կտրել: Մի ծեր ալեոր խնդրում է իր տղային, ասում.— Ամա՛ն տղաս, ինձ պահիր, պետք կգամ քեզ:

Տղան ասում է.— Ի՞նչ անեմ, հա՛յր, ինչպե՞ս պահեմ քեզ, թե գան գտնեն քեզ, բոլորիս էլ կմորթեն:

— Մի՛ վախեցիր,— ասում է ալեորը,— պատի մեջ ինձ համար մի տեղ շինիր, մի պատուհան թող, այնտեղից ինձ ուտելիք կտաս, պատուհանին էլ դռնակ կդնես, չի երևա, բայց ցերեկը ինչ որ անցնի-դառնա, երեկոյան կգաս, ինձ կասես:

Տղան համաձայնվում է: Պատի մեջ մի տեղ է շինում, հորը դնում միջը. պատուհան է թողնում, այնտեղից ուտելիք տալիս հորը:

Անցնում է մի ժամանակ, թագավորը հրամայում է՝ գնալ այսինչ դաշտը քամի հնձելու: Հաջորդ օրը բոլորը գնում են քամի հնձելու:

Տղան երեկոյան գալիս է, պատուհանը բացում, հորն ասում.— Այսօր գնացինք քամի հնձելու:

Հայրն ասում է.— Վաղը կգնաս հնձելու: Մի ժամ անց գնոգնես, մանգաղը կգցես ձախ թևիդ (իբրև թե) մի քանի հասկ կկտրես, երկու ձեռքով կտորրես, կփչես բերանդ կգցես: Եթե թագավորի մարդիկ քեզ հարցնեն, թե ի՞նչ ես անում, կասես՝ քամի եմ ուտում:

Հաջորդ օրը բոլորը գնում են քամի հնձելու: Այդ տղան մի ժամ անց. հոգնում է, մանգաղը

մանկծուղ գըտնա թիվլյն, գըդդըրը մըդ քանը հծ-ուսդ մը, գըփշըր յափէյն մէյչ, գըփըշըդը, գըքօրը ի պիրծն։ Թըքըմվիրէյն չառշնայն գըդըռնօն, գը-հարցընին.— Զը՞ գէօշինիս, չը՞ գöդիս։

— Ֆըրթանը գöդիմ,— գուըմը դղան։

Իրդառն գուրթուն թըքըմվիրէյն խըրուր գու-դուն, գըսին.— Դղա մը գը, ֆըրթանը գուընծը, ֆըրթանը գöդի։

Թըքըմվէյր գըսը.— Դինչիցըք զադ դղան յըսդիէգ, իշիմ։

Գըգինչին զդղան։ Թըքըմվէյր գըհարցընը.— Տծն խուր չը՞ գուքըրայր ի պիրծնիտ։

— Ֆըրթանը գուքըրայրիմ ի պիրծնիս, քաղ-ցծձայմիր։

-- Ֆըրթանան գուդվա՞, փիր գըդիշդացնիք։

— Հըբը ֆըրթանան գընծըվուա՞։

Ցըդիր իրվան աւ ֆըրթանը ընծէյլ չըր ուրթուն։

Ուր մըլը Թըքըմվէյր դըլլուլ գըգինչըցընը զալուա մարթուակ սարայյն յառչայվ գըպիրը-ցընը, գըսը.— Ծիզ ըրք ուր մուհլաթ, ըրք ուր սունղա բըր ըսըք ծիր քանզալուա մինձ պը-րիգöմ։

Դղան գուրթը դըդէյն գըսը.— Թըքըմվէյր զէյմ մինձ պըրիգöմ գöզը։

Դօդ գըսը.— Զշառնիտ դուր, Թըքըմվէյր գը-հարցնը՝ չու՞ց բըր կիդըննուք. յան վաղըռը դաղ-մուամ գըզարգիս շօւն. շառն չըղղըլուվ գըխա-խա։ Ավըլ-մավը սունղա գըգինչէյս գը. շառն գուկը։

Դղան տրզադըլը գինը։ Թըքըմվէյր գըշաշ-մըշզընը դղայն խիլըքութօն իրվան։

Ղայր ուր մըլը Թըքըմվէյր գինը դըլլուլ գը-գինչըցընը, զալուա մարթուակ գըջուղվը սարա-յյն յառչայվ, գըսը.— Ըրք ուր ծիզ մուհլաթ, բըր ըսըք ծիր քանզալուա մինձ դուշմօն։

Հըլիվէյր դղայն գըսը,— Զգընալու դուր։

Ըրք ուր սունղա ալուա գըջուղվէյն։ Թըքըմ-վէյր գըշաշմըշզընը, քի ադ դղան գդըննա դարօ-ւձը դուշմուն դէյը։ Գըհարցնը.-- Զը՞ դէյը զգը-նալըտ պիրծձիս։

— Քանզալուա մինձ դուշմօնիս գընաանը,— գըսը դղան։

— Զու՞ց գըհըսգընուք,— գըհարցընը Թըքըմվէյր։

— Հըմը իս գըցըցընիմ քիզ,— գըսը դղան։

Սիլլուամ գիխծձ քիմը գինգöն, գընա գըթա-փըլվա կիդայն։ Գընը գըմըց-գըմըց գուղըրթա, գըգաննա, գըսը.— Թըքըմվի՛ր, շիդ թըղ աբրէյս, էյմ մօուրթ շիդ չըղվէյրիյը. քը զըմըրը բիլը չուպռնը, զէյր դöդ բըդէյն մէյչ բիհծձը։

— Դիւռէր Թըքըմվէյրիս,— գըսը դղան,—

գցում է թևին, կտրում մի քանի հասկ, տրորում ափի մեջ, փչում, գցում բերանը։ Թագավորի հսկիչ-ները տեսնում են, հարցնում.— Ի՞նչ ես անում, ի՞նչ ես ուտում։

— Քամի եմ ուտում,— ասում է տղան։

Երեկոյան գնում են թագավորին հայտնում, ասում.—Մի տղա կա, քամի է հնձում, քամի է ուտում։

Թագավորն ասում է.— Կանչեք այդ տղային այստեղ, տեսնեմ։

Կանչում են տղային, գալիս է։ Թագավորը հարցնում է.— Դու այսօր ի՞նչ էիր գցում բե-րանդ։

— Քամի էի գցում բերանս, սոված էի։

— Քամին կուտվի՞, փոր կկշտացնի՞։

— Հապա քամին կհնձվի՞։

Դրանից հետո այլևս քամի հնձելու չեն գնում։

Մի օր էլ թագավորը մունետիկի միջոցով կանչել է տալիս բոլոր տղամարդկանց իր պալա-տի առաջ, ասում է.—Ձեզ երեք օր ժամանակ, երեք օր անց ինձ պետք է ասեք, ո՞վ է ձեր ամենամեծ բարեկամը։

Տղան գնում է հորն ասում.— Թագավորն ու-զում է (իմանալ) իմ ամենամեծ բարեկամին։

Հայրն ասում է. —Շունդ տար, թագավորը կհարցնի՝ թե ինչպե՞ս իմանանք. այն ժամանակ շանդ քացով կխփես, շունդ վնգստալով կփախչի։ Մի րոպե անց, շանդ կկանչես, շունը նորից կգա։

Տղան այդպես էլ անում է։ Թագավորը զար-մանում է տղայի խելքի վրա։

Մի ուրիշ օր էլ թագավորը նորից մունետիկի միջոցով բոլոր տղամարդկանց հավաքում է իր պալատի առաջ, ասում.— Երեք օր ձեզ ժամա-նակ, պիտի հայտնեք ձեր ամենամեծ թշնամուն։

Ալևորը տղային ասում է.—Կնոջդ տար։

Երեք օր անց, նորից բոլորը հավաքվում են։ Թագավորը զարմանում է, որ այդ տղան կնոջը տարել է որպես թշնամի։ Հարցնում է.— Ինչո՞ւ համար ես կնոջդ բերել։

— Ամենամեծ թշնամիս կինս է,— ասում է տղան։

— Ինչպե՞ս հասկանանք,— հարցնում է թա-գավորը։

— Հիմա ես քեզ ցույց կտամ,— ասում է տղան։

Մի ապտակ կնոջը տալուն պես, կինը գլորվում է գետին։ Կամաց-կամաց ուղղվում է, վեր կենում, ասում.— Թագավո՛ր, երկար ապրես, իմ մարդը շատ վատն է. քո հրամանն անգամ չի կատարում, հորը պատի մեջ է թաքցրել։

— Տեսնո՞ւմ ես, իմ թագավոր,— ասում է

գընաս քա̈նըզ շաունիս բիլա̈ չիգըկ, ա̈վըլ-մա̈վըլ խամուզից գէյս։ Ղարահաթլուայիմ, գջագաս դէյր, չÖցըր կիդիս։

Յան վա̊ըտը թա̈քա̈վէյրը ա̈մըր գինը գհա̈լիվէյր քÖու պիրըցընի, վա̈գէյր գըտարծընը գադ հա̈լիվէյր յէյր քÖու։ Ա̈մըր գինը.— Ա̈վըր մինձ չունաօ, մինձ քէօտր մը թըղ տնա ի քաշան։

## 12 (12). ԴԱԲԱԽ ՀԱԼՎԷՅԻ

Վախտիլէ թա̈քա̈վիրնէյն իրինց վէզիրնէյն հիէտ թա̈րդիլը ղ̊յաֆա̈թու, կիշերու-ցիրեկու դուրթայն գիլվայն, հա̈սզընիլա հա̈մուր, իրինց իհալին չուց դուաքրա։

Թա̈քա̈վիրէյն միէ դա̈րվիշը ղ̊յաֆա̈թով վա̈գիրէյն հիդ կիշէյր մը, ծմըռվօնը գէյս, դարախխանայն տայ գուրթը։ Մըդ դարախխանայն տաÖն յարասին լայս գուիրվընիր։ Գըմուդգընուն, գըդըսնօն, քի հա̈լիվէյր մը միրգըցուց, մուրաքը ըըքըր բայըդ, մըդÖձը հէյր, գիշա գութումարը։ Գըշաշմըշընուն, յադ ցրդայն ադ հա̈լիվէյր չա̈ց գուտիմա̈նը։ Գըզարգին զտաու։ Հա̈լիվէյր դաբուախ գըշուդվը զտաու պա̈նիլա։ Դա̈րվայշ պա̈րիվ գուդը։

— Ա̈սըձձը պա̈րէյն, թա̈քա̈վէր.— գա̈սը հա̈լիվէյր։

Թա̈քա̈վէյր ա̈վըլ-մա̈վըլ դըհա̈սգընը հա̈լիվիրէյն չա̈ ընէյը, դըհարցնը էյր.— Հիավ ույն հէյդ չÖ՞ցիս։

— Յադ ջիհա̈տին չո՞ւ դուշըմըշգընում։

— Ցարսօն ըրգուքէյն հէյդ չÖ՞ցիս։

— Հի՞չ ա̈դվիր չիմ։

— Ըրգուքէյն հէյդ չÖ՞ցիս։

— Ըրգաք դըհը ըրք չիդÖձը։

— Զա̈՞ չինիցիր գվէյցը։

— Վէյց դըավըրգա̈ք տարծըցա, յարսօն ըրգուքէյն ֆայդա չիրէյց։

— Եօլա լա̈ իկկայմ թըղ ցա̈նայր։

— Ցա̈նիցա̈, բÖղ զարգայցգը։

— Միմա̈ թըղ ցա̈նայր։

— Ցա̈նիցա̈, զաթինիցուայնգը։

— Միմա̈լը թըղ ցա̈նայր։

— Դըքըր ցա̈նիմ, Öր իրգÖն իդու։

— Ղ̊ուազ մը թը գըղուրգիմ քիզ. գաոնո՞ւս փիրջայրգէ։

— Ա̈գիր վարբիդն իմ։

— Դա̈րվիշնէյն գուրթուն ի դÖն։ Թա̈քա̈վէյըը գա̈սը տայ վա̈զայր.— Ադ հա̈լիվէրէյն ջուղա̈բնէյն թարջումÖն գուզիմ։ Շիդ խիլըք գուիրվընը։

Թա̈քա̈վէյր բաոզօձ քիմը, վա̈զայր գըլընա քյասուամ իսկա, գուրթը հա̈լիվիրէյն քÖու, գա̈սը.—

տղան,— կինս շանս չափ անգամ չեղավ, անմիջապես ինձ մատնեց։ Մեղավոր եմ, պատժիր ինձ, ինչպես գիտես։

Այն ժամանակ թագավորը հրամայում է ծերունուն բերել, նրան դարձնում է իր վեզիրը։ Հրամայում.— Ով որ մեծ չունի, թող անկյունում մի մեծ քար դնի։

## 12 (12) ԿԱՇԵԳՈՐԾ ԱԼԵՎՈՐԸ

Ժամանակին թագավորներն իրենց վեզիրների հետ ծպտված գիշեր ու ցերեկ, գնում ման էին գալիս, իմանալու, թե իրենց ժողովուրդն ինչպես է ապրում։

Թագավորի մեկը, ծպտված, վեզիրի հետ մի գիշեր, ձմեռվա կեսին, գնում է դեպի կաշեգործատները։ Մի կաշեգործատան դռան արանքից լույս է երևում։ Մոտենում են, տեսնում, որ մի մերկացած ալևոր, մորուքը մինչև պորտը, մտել է հորը, կաշի է մշակում։ Զարմանում են, այդ ցըրտին այդ ալևորն ինչպես է դիմանում։ Դուռը խփում են։ Տեր կաշեգործը վազում, դուռը բաց է անում։ Դերվիշը բարև է տալիս։

— Աստծո՛ բարին, թագավո՛ր,— ասում է ալևորը։

Թագավորն անմիջապես հասկանում է ալևորի ի՞նչ մարդ լինելը, հարցնում է.— Հեռվի հետ ի՞նչպես ես։

— Այդ մասին չե՛մ մտածում։

— Երեսուներկուսի հետ ի՞նչպես ես։

— Բոլորո՛վին լավ չեմ։

— Երկուսի հետ ինչպե՞ս ես։

— Երկուսը դեռ երեք չի եղել։

— Վեցն ի՞նչ արեցիր։

— Վեցը տասներկու դարձրեցի, բայց երեսուներկուսին չհերիքեց։

— Գոնե մի այգի ցանեիր։

— Ցանե՛ցի, ցուրտը տարավ։

— Մեկն էլ ցանեիր։

— Ցանեցի՛, հափշտակեցին։

— Մի հատ էլ ցանեիր։

— Մինչև ցանեցի, օրը իրիկուն եղավ։

— Մի սագ թե քեզ ուղարկեմ, կարո՞ղ ես փետրահանել։

— Դրա վարպետն եմ։

Դերվիշները տուն են գնում։ Թագավորը վեզիրին ասում է.— Այդ ալևորի պատասխանների մեկնությունը քեզնից եմ ուզում։ Շատ խելոքն է երևում։

Թագավորը քնելուն պես, վեզիրը մի քսակ ոսկի է լցնում, գնում ալևորի մոտ, ասում.— Քիչ

*Բայց մը յառանց բրդը գօրվէյը իգէյն, անէնց գը-վաձ ջագօրնէյն մաօնէն չա՞յիր։ Նազիր փարա գուգիս, գուգամ քիզ։*

*— Դօրվիշնէյն միէ տառնայիր. աօն վագայրնիս։*

*— Օռր քիզ քօռատամ խոխա, գօ օռը։*

*— Հիռօն՝ խիսաէյնը, քի ադիր իրվան չա գուշըմըշգընում։ Յարռօնըրգաք՝ յարռօնըրգը ադրըռգանքինը. հիչ միմէ չանէյմ։ Ըրգաք՝ վիրվայսիը, փօռք աոըձձը, օգվէյր ին. գուհա ընծր վօրից չուրիգա։ Թօքօվէյրր հարցույց. ամախօռն վից օմայա չա՞ շինիցա, գօ հօմը գուպանէյմ։ Ացա, քի վէց օմէյս չը՝ գըովըրգը ամէյս պանիցօ, գինօ հիրօք չի՞ռ։ Իկկայմ ցօնիցա՝ գդառամ անցա՝ խիսաիցա։ Աշկայն մը անցա՝ հուրս իգա։ Դիքըր միմօ անընում՝ վօ՞րախս անցա։ Թօքօվէյր ՞ռաղ մը բրր գուրգիր։ Դարգից։ Աղ ՞այն օյր աօն իս, իսօ փիրչիցա գքիզ։*

*Իլա վօգայր կնից թօքօվիրէյն քօռվ. տառց էյր. չայրրր հօյիվէյր ացօձիր։*

*Ցան վա՞րար թօքօվէյր դուրգից ըդ վազայր թափրր մը օռկօրա, հանգ-հանքամանավ պիրէյն գհօյիվէյր թօքօվիրէյն ՞անաա՞. թօքօվէյր գօրից էյր մօէյշ։*

## 13 (13). ԱՄԸՆ ՊԱՆԷՆ ՍԸՐԱՆ ԳՈՒՈՒԿՈՒ

*Գըգինա, չըգինար թօքօվօր մը։ Աղ թօքօվօրը շօղ ձագգընա գուսիրի, տըղան ջընինէյ մը գուշինըցընէ, գուցանի ծագգընա, ըմր բաղմանչի չուգարնա մընա էր խօչ։ Ըմը բաղմանչը ըր գաակա հօյըօյթ դասար մը գանընա, գագօխըցնի գըրաղմանչէն։ Մարթ չատրթա պանիլա յէր խօչ։*

*Վախտէն մէ, հօյիվիր աէն մարթ մը գաօսի.— Իս ըըր արթամ բաղմանչաթէն ինիմ թօքօվիրէն խօչ։*

*Աղ հայիվիրէն ձանօթնէն, ընդանաք գաօսին.— Մօ՛ արթա, թօքօվօրը գքի օլ գըգօխըցընի։*

*Հօյվիր գաօսի.— Չէ, իս ըըր արթամ։*

*Գաարթա։ Թօքօվիրէն խօբար գաադան.— Իգաձ ի հօյվօր մը, գաայի բաղմանչաթէն ինի քի ջընինին։*

*Թօքօվօրը գաօսի.— Դարիք ջընինին, թըղ ըըլիշա պանիլ։*

*Էօր մը, հէյնկ օր, ամայս մը գապանա հայիվէյր, քանգան աղվօր գաշինի գջընինէն։ Թօքօվօր գաակա, գաշաշմիշ ըննա, քի չօ՞ւց աղվօր շինվաձ գէյը։*

*Ջընինէյն մէյչ գագինա մինձ ձօռ մը, աղ ձօռ*

*տատը երկու դերվիշ եկան, նրանց տված պատասխաններից իմացան ի՞նչ էր։ Ինչքան փող ուզես, կտամ քեզ։*

*— Դերվիշներից մեկը դո՞ւ էիր. դու վեզիրն ես։*

*— Վերցրու այս բանակ ոսկին ու արա։*

*— Հեռուն՝ դա մահն է, այդ մասին չեմ էլ մտածում։ Երեսուներկուսը՝ ատամներս են. մի հատ էլ չունեմ։ Երկուսը՝ ոտներս են, փառք աստծո, լավ են. դեռ գավազան չեմ վերցնում։ Թագավորը հարցրեց, [ե ամառվա վեց ամիսների ընթացքում ի՞նչ արեցի, որ մինչև հիմա աշխատում եմ։ Ասացի, թե վեց ամսվա փոխարեն, տասներկու ամիս աշխատեցի, բայց նորից չհերիքեց։ Մի այգի ցանեցի՝ մի տղա ունեցա՝ մահացավ։ Մի աղջիկ ունեցա՝ հարս դարձավ։ Մինչև մի ուրիշը ունենամ՝ ժամանակս անցավ։ Թագավորը մի սագ պիտի ուղարկեր։ Ուղարկեց։ Այդ էլ դու ես, ես էլ փետրեցի քեզ։*

*Վեզիրը վեր կացավ գնաց թագավորի մոտ, ասաց նրան այն, ինչ ալեորն էր ասել։*

*Այն ժամանակ թագավորը ուղարկեց վեզիրին մի զունդ զինվորով, մեծ պատիվներով ալեորին բերեցին պալատ, թագավորը նրան թոշակ նշանակեց։*

## 13 (13). ԱՄԵՆ ԲԱՆԻ ՀԵՐԹԸ ԿԳԱ

*Լինում է, չի լինում մի թագավոր։ Այդ թագավորը ծաղիկներ շատ է սիրում, մի շատ գեղեցիկ ծաղկանոց է շինել տալիս, ծաղիկներ ցանում, բայց ոչ մի այգեպան նրա մոտ չէր մնում։ Ինչ այգեպան գալիս էր անպայման մի թերություն գտնում էր, կախել էր տալիս։ Ոչ ոք չէր գնում նրա մոտ աշխատելու։*

*Ժամանակ անց, մի ալեոր մարդ ասում է.— Ես պիտի գնամ թագավորի մոտ այգեպանություն անեմ։*

*Այդ ալեորի ծանոթները, ընտանիքը ասում են նրան.— Մի՛ գնա, թագավորը քեզ էլ կախել կտա։*

*Ալեորն ասում է.— Չէ՛, ես պիտի գնամ։*

*Գնում է։ Թագավորին իմաց են տալիս.— Մի ալեոր է եկել, ուզում է այգեպանություն անել քո ծաղկանոցում։*

*Թագավորն ասում է.— Տարեք ծաղկանոց, թող սկսի աշխատել։*

*Մի օր, հինգ օր, մի ամիս ալեորն աշխատում է, այնքան լավ է մշակում ծաղկանոցը։ Թագավորը գալիս, զարմանում է, թե ինչքա՜ն լավ է ամեն ինչ արել։*

*Ծաղկանոցում մի մեծ ծառ է լինում։ Այդ ծա-*

գու շըքըրցնի ձա̈ղղընէն, հա̈լիվո̈րը գուա̈սի. «Աս ձօռ ըըր խա̈րա̈րի զձա̈ղղնէն»։

Թա̈քա̈միրէն խա̈րա̈ր գուռգու.— Ջաղ ձօռ զըզըրէնք, ծա̈ղղընէն զարար գուգու։

Թա̈քա̈մա̈ր գուգյուշինմիշ ըննու, գուա̈սի.— Թըղ գինու անք էր քյաֆ, ըղչիրնու, անուր սրան գուուկու էոր մը։

Գուռտնու մըգ գուս էուր յառաջէն, բաղման չին զուղընու, քի սահի ձառէն գիրրմդօյն ախըշնիցէն, վէր հաւըլը ձօռ չիրցու։

Թա̈քա̈մա̈րէն խա̈րտուր իղՕր քի.— Ձօռ չիրցու։

Թա̈քա̈մա̈ր ա̈սուց.— Իս չա՞սու. սըրան գուկու էուր մը։

Բաղմանչին ըըլիշիցու էր պէօն։

Ուրէն մէ, կիղացը հաւվայվ մը, քանզան աղվա̈ր ո̊ւզէմ զուռնանու, ալէյլն ա̈ գուա̈սին աղ հաւըվէն. «Աս ո̊ւզէն թա̈քա̈միրէն լայըղ ի»։

Ադ հաւվայվ զադ ո̊ւզէյն գուտանի, գուգանու թա̈քա̈միրէն։ Գուհասնու թա̈քա̈միրէն դառն սարըէստ գուռըթու թա̈քա̈միրէն տառու, բա̈կչաք գուընին գուա̈սին։— Է՜, չօրա̈ն. յա՞ս գուռըթուս առանց հարցնիլ։

Հաւվայվ գուա̈սի.— Ջանըմ, չէինիք գէս, թա̈քա̈միրէն խօչ գուըթում։

— Ջա՞ ըըր շինիս թա̈քա̈միրէն խօչ։

Գուա̈սի.— Ջաս ո̊ւզէն պիրուձ ըմ, հա̈գիս ըըր ուզում գէր։

Բա̈կչաք խա̈րտուր գուռգուն թա̈քա̈միրէն, գուա̈սին.— Հաւվայվ մը իգուձ, գունա ո̊ւզայ մը, գուա̈սի հադիս ինիզը քի։

— Պիրի՛ք,— գուա̈սի թա̈քա̈մա̈րը,— չո̈ւց հաւվայվ ի ադ։

Գուռըթուն բա̈կչաք, գուա̈սին.— Արի՛ կնու։

Գուռըթու թա̈քա̈միրէն թէմալլահ գուինի, գուասի.— Թա̈քա̈մա̈ր ա̈ըրուձ գինու, հաւըվէն հադիան քանզաս գըննու. ո̊ւզայ մը պիրու քի։

Թա̈քա̈մա̈ր գուիշի, գուգընու սահիզա շա̈դ ազվա̈ր ո̊ւզէյ մի, գուա̈սի.— Դարէք, գվէք զը բաղմանչէն, թըղ ըիհէ զը։

Գուհանի ափ մը խոկու գուռգու հաւըվէն, գուա̈սի.— Շա̈դ մաննուն իղում քինէ։

Հաւվայվ ավա թէմալլահ գուինի, գուըթու։

Բաղմանչին գուիշի զադ ո̊ւզէյն էուր մը, հա̈յնկ էուր, ամայս մը, էրգը ա̈մայս, ադ ո̊ւզէյն քան զան գուկիրնու, գարուձ դիղ ֆըրթանէն հիդ գուձիձվա։ Էուր մալ գուգդըրի զըարէուն, գուըննի բիթըն ղձա̈ղղընէն գուխառընգի մէյը միզօլ։

— Հէ՜յ վախ,— գուա̈սի բաղմանչին,— թա̈քա̈միր աս ղաթ ըըր գա̈խի գէս։

Խա̈րտուր գուգու թա̈քա̈մա̈րէն.— Ջանըմ,— գուա̈սի,— զադ ո̊ւզէյն իմա̈ր պիրէյն յիմ կլխայն բա̈-

որ սափեր է գցում ծաղկանոցի վրա, ալեոքն ասում է. «Այս ծառը կփչացնի ծաղիկներին»։

Թագավորին հայտնում է.— Այդ ծառը կըտրենք, ծաղիկներին վնաս է տալիս։

Թագավորը մտածում է, ասում.— Թող մնա իր քեֆին, կչորանա, մի օր նրա հերթն էլ կգա։

Անցնում է մի տաս օր արանքում, այգեպանը տեսնում է, իսկապես, ծառի տերևները դեղնում են. վերջապես, ծառը չորանում է։

Թագավորին իմաց է տալիս.— Ծառը չորացավ։

Թագավորն ասում է.— Ես չասացի՞. դրա հերթըն էլ մի օր կգա։

Այգեպանը շարունակում է իր գործը։

Մի օր էլ, մի գյուղացի հովիվ, մի շատ սիրուն ոչխար է ունենում, բոլորն ասում են այդ հովվին. «Այս ոչխարը թագավորին է վայել»։

Հովիվը վերցնում է ոչխարը, տանում թագավորին։ Հասնում է թագավորի տունը, համարձակ գնում է թագավորի դուռը, պահակները ասում են.— Հե՜յ հովի՛վ, ո՞ւր ես գնում առանց հարցնելու։

Հովիվն ասում է.— Այ մարդ, ի՞նչ եք ուզում ինձանից, թագավորի մոտ եմ գնում։

— Ի՞նչ ես անելու թագավորի մոտ։

Ասում է.— Այս ոչխարը բերել եմ, նրան նվեր պիտի տամ։

Պահակները հայտնում են թագավորին, ասում.— Մի հովիվ է եկել, մի ոչխար ունի, ուզում է քեզ նվիրել։

— Բերե՛ք,— ասում է թագավորը,— այդ ի՞նչ հովիվ է։

Պահակները գնում, ասում են հովվին.— Արի՛ գնա։

Գնում է թագավորին խոնարհվում, ասում.— Թագավորն ապրած կենա, հովվի նվերն այսքան կլինի. մի ոչխար եմ բերել քեզ։

Թագավորը նայում, տեսնում է, որ իրոք շատ լավ ոչխար է, ասում է.— Տարեք, տվեք այգեպանին, թող պահի։

Հանում է մի բուռ ոսկի է տալիս հովվին, ասում.— Շատ շնորհակալ եմ քեզանից։

Հովիվը նորից խոնարհվում է, վեր է կենում, գնում։

Այգեպանը պահում է այդ ոչխարը մեկ օր, հինգ օր, մի ամիս, երկու ամիս, այդ ոչխարն այնքան է գիրանում, որ կապած տեղը քամու հետ է կովում։ Մի օր էլ կտրում է պարանը, բոլոր ծաղիկները խառնում իրար։

— Հե՜յ վախ,— ասում է այգեպանը,— թագավորն այս անգամ ինձ կկախի։

Իմաց է տալիս թագավորին, ասում.— Այ հոգիս, այդ ոչխարը որտե՞ղից բերեցին իմ գլխին

լու, գդլից զբարէուն, բիթըն գձա̈գգնէն խա̈նոգից մէյ միգօլ։

Թա̈քա̈վո̈ր գուա̈սի,— Ջարո̈՛ւր չունա, ադա̈՛ր ալ սըրան գուկու էուր մը։

Բաղմանչին գուգարի զդ̊ուգէն, գուուրթու, զձա̈գգընէն բիչու գուպիրի թէքրար։

Ծա̈ղ չուսունա յուսուէն, էուց մը գուուկու զաղ մա̈կէն զվըղը գուխա̈ձի։

Բաղմանչէն գուշուվգի, նիքէ հասնա մա̈կէն խօչ, էուց գուփախա մա̈կէն ա̈ գուսաղգա։

— Հէ՛յ վախ,— գուա̈սի հա̈լիվա̈ր,— աս դ̊աթ թա̈քա̈վո̈ր բըր գախի զէս. թա̈քա̈վիրէն սիրագուն մակուն իր աս։

Բաղմանչէն խաբուր գուուդա թա̈քա̈վո̈րէն.— Էուց խա̈ձից զմա̈կէն, սաղգա։ Ինսան դՕր, արթընք, զաղ էուց ղընանք, սրա̈նէնք զը։

Թա̈քա̈վո̈ր գուա̈սի.— Ջարո̈՛ւր չունա, էուր մը ադա̈ր ալ սըրան գուուկու։

Սահի դա, մըգ քունը էուրէյ մը սՕնդ հա̈լվա̈ր գուդխնա, քի էուց մդուծ ձէ մը զէյս տուրիցէ ի, գուզարկի ակէն յասսէն-յանտէն, չուկարնու մըննա նքսի, սըրգաղ ա̈լէ սաղգու էուց։

Հա̈լիվա̈ր թա̈քա̈վիրէն խաբուր գուուդու.— Էուցն ա սաղգու։

— Հապա իս չա̈՞սա, քի ադա̈ր ալ սըրան գուուկու էուր մը։

Էուրին մէջն ա աղ բաղմանչին գուիշի գուդխնա, ջընինէն մէչ մինձ խնծըրինա մը գուգինու, ըրք-չուք հուդ խնծուր մնացուծ զընու ձՕսու։ Աղ խնծըրինա ձուուն ալ հավըզէն իրվան կացուծ գուունու, հալէվար գուինի զաղ խնծուր բըր քաղի, յանտիհին թա̈քա̈վո̈ր ու գնա գուուկան մէն ջընինան։

Թա̈քա̈վո̈ր գուա̈սի.— Հավըզէն իգէր գիշնանք, զըլվացվանք ալ։

Հա̈լվա̈ր գուբուվըդա, ծան չուհանի։

Թա̈քա̈վո̈ր գուա̈սի զինգէուն.— Հա̈նի՛ սախնէտ, իչէ՛ ըլվացվի։

Գնա գուհանա զըռախինէն, գուիշնա հավըզէն մէչ, գութա̈ըըլվա ճըէն միչ, տուըվիր գուիշի, զհա̈լիվէր գուդխնա, համան աջալա գուըսի հավուզին։

Թա̈քա̈վո̈րը դուա̈սի.— Ջվա̈՞ ուշէդ իլուր։

Գնալը գուա̈սի.— Ինսան գու հուս, գուփառջա իրվնէս։

— Ցօ՞ գու, էո՞ւվ ի։

Գնալը գուա̈սի.— Իշի տալ ձօս։

Թա̈քա̈վո̈ր գուիշի, բաղմանչին ձառէն յէրվան գու, ամըր գուինի.— Ուշէդ բաղմանչէն բըր գախվա։

Խաբուր գուառնին էհալին, քի թա̈քա̈վո̈ր զաղ բաղմանչէն ալ բըր գախի, իհալին գուչուղվէն միդուն դիղ, քի զհա̈լա̈վիր բըր կախին դէյը։

փորձանք, պարանը կտրել է, բոլոր ծաղիկները խառնել իրար։

Թագավորն ասում է.— Վնա՜ս չունի, նրա հերթն էլ մի օր կգա։

Այգեպանը կապում է ոչխարը, գնում, ծաղիկները նորից կարգի է բերում։

Շատ ժամանակ չի անցնում, օձը գալիս է այդ ոչխարի ոտքը խայթում։

Այգեպանը վազում է, մինչև ոչխարին հասնելը, օձը փախչում է, ոչխարն էլ սատկում։

— Հե՜յ վախ,— ասում է ալևորը,— այս անգամ թագավորն ինձ կկախի. սա թագավորի սիրելի ոչխարն էր։

Այգեպանն իմաց է տալիս թագավորին.— Օձը խայթեց ոչխարին, սատկեց։ Մարդ տուր, գնանք, այդ օձը գտնենք, սպանենք։

Թագավորն ասում է.— Վնա՜ս չունի, մի օր էլ դրա հերթը կգա։

Իսկապես, մի քանի օր հետո ալևորը տեսնում է, որ օձը մտել է մի ծակ, կեսը դուրսն է մնացել, պոչը դես-դեն է խփում, չի կարողանում ներս մտնել և այդպես էլ սատկում է։

Ալևորը թագավորին իմաց է տալիս.— Օձն էլ սատկեց։

Թագավորն ասում է.— Ապա ես չասա՞ցի, որ դրա հերթն էլ մի օր կգա։

Մի օր էլ այգեպանը տեսնում է, որ ծաղկանոցի մեջ մի մեծ խնձորենի կա, երեք-չորս խնձոր է մնացել վրան։ Այդ խնձորենու ծառն էլ թեքված էր ջրավազանի վրա, ալևորը բարձրանում է, որ այդ խնձորները քաղի, այն կողմից թագավորն ու թագուհին գալիս, մտնում են ծաղկանոց։

Թագավորն ասում է.— Իջնենք ավազանի եզրը, լողանանք։

Ալևորը թաքնվում է, ձայն չի հանում։

Թագավորն ասում է.— Հանի՛ր շորերդ, իջի՛ր լողացիր։

Կինը հանում է շորերը, իջնում ավազան, ջրի մեջ սկսում է թավալվել, վերև է նայում, տեսնում ալևորին, իսկույն դուրս է գալիս ավազանից։

Թագավորն ասում է.— Ինչու՞ շուտ դուրս եկար։

Կինն ասում է.— Մարդ կա այստեղ, մեզ է նայում։

— Ու՞ր է, ո՞վ է։

Կինն ասում է.— Ծառի վրա նայիր։

Թագավորը տեսնում է, որ այգեպանը ծառի վրա է, հրամայում է.— Այգեպանն անմիջապես պետք է կախվի։

Ժողովուրդն իմանում է, որ թագավորն այս այգեպանին էլ է կախում, հավաքվում է հրապարակում դիտելու, թե ինչպես են ալևորին կախելու։

Գուպիրին զհա̈լիվա̈ր, գուհանին դարապաչէն լէրվան:

Թա̈քա̈վա̈ր ամըր գուտըտ.— Անու ոծնըը գըրուլցու:

Հա̈լա̈վուր գուգա̈ շինմըշ ըննու, գուա̈սի.— Զարո՞ւր չունա, թա̈քա̈վա̈ր արրուծ գինու. էսոր մը քը սըրան ա̈ գուտկու:

Թա̈քա̈վա̈ր գուգա̈ շինմըշ ըննու, գուա̈սի.— Սիրիցըք գաս մօտըրթ, թըղ ուրթու արրա:

Էրգնաուց գուինն ըրք խնծիրը հուգ. մէլը՝ հաթաղուղէն, մէլը՝ լսօղէն, մէլն ալ՝ ջումլա ալամէն: Անցունք, տարծունք՝ մեղա ասդըծու:

Բերում են ալևորին, տանում են կախաղանի մոտ:

Թագավորը հրամայում է.— Ասա՛ վերջին խոսքդ:

Ալևորը մտածում է, ասում.— Վնա՛ս չունի, թագավորն ապրած կենա. մի օր էլ հերթը քեզ կգա:

Թագավորը մտածում է, ասում.— Թողե՛ք այս մարդուն, թող գնա ապրի:

Երկնքից ընկնում է երեք խնձոր. մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ ամբողջ աշխարհին: Անցանք, դարձանք՝ մեղա աստծու:

## 14 (14). ՇՈ̈ԽԴ ԱԲՐԷՕ՞Ղ ՇՈ̈ԽԴ ՊՈԽՆ ԳԸԿԻԴԻ, ԹԸ՞ ՇՈ̈ԽԴ ԽԼՎԷՕՂ

Թա̈քա̈վա̈ր ու վա̈զայր մյօջաթալլահ գուպըռնըվէն: Թա̈քա̈վօ̈ր գուա̈սի.— Վա̈զէ՛ր, շա̈դ դա̈րա̈ք ունընէօղ շա̈դ պուն գըկիդի:

Վա̈զայր գուա̈սի.— Չէ՛յը, շա̈դ խլվէօղ շա̈դ պուն գըկիդա̈նօ:

— Շու՛դ աղվա̈ր,— գուա̈սի թա̈քա̈վա̈րը,— պիրընք դուսը հիկկա շա̈դ դա̈րա̈ք ունընէօղ, դուսը հիկկայա պիրինք շա̈դ խլվէօղ, իշինք ըմմա̈ւ շա̈դ պուն գիդի:

Գուպիրիցընին յամըն թավըրի դուսը հիկկա:

Թա̈քա̈վա̈ր գուշինցընի ճըրը ուդիլային, գուտընէն մասէն լէրվան՝ հանկ հիկկէն յանուէն, հանկ հիկկէն յասաէն:

Թա̈քա̈վա̈ր շինցըցուծ գըննու տկալնա, ամիգը դըգ դուլանջ մը իրգնութային:

Մասէն լէրվան նսդուծ գուննուն շա̈դ դա̈րա̈ք ունընէօղնէն:

Թա̈քա̈վա̈ր գուա̈սի.— Գիրի՛ք համու:

Գուվիրցընին զտկալնէն մա̈րթօք բըր ուդին, միզէն տիկուլը միգալէն ճահրան գուտիբա: Գուիշին գըդիսնօն չուըննու, գուտնէն զտկալնէն:

Թա̈քա̈վա̈ր գուա̈սի.— Գիրի՛ք համու: Զվա՞ չուուդիք:

— Չէ՛յը, մինք չըն՛ք ուդի:

— Իլլի՛ք տա̈ք,— գուա̈սի թա̈քա̈վա̈րը:

Գուուկուն շա̈դ դիզ խլվէօղնէն, գունըսդէն մասէն լէրվան:

Թա̈քա̈վա̈ր գուա̈սի.— Տա̈ք գիրի՛ք համու:

Գուաունին տկալնէն ադընք, գումըխին գու-

## 14 (14). ՇԱՏ ԱՊՐՈ՞ՂԸ ՇԱՏ ԲԱՆ ԳԻՏԻ, ԹԵ՞ ՇԱՏ ՄԱՆ ԵԿՈՂԸ

Թագավորն ու վեզիրը վեճի են բռնվում: Թագավորն ասում է.— Վեզի՛ր, շատ տարիք ունեցողը շատ բան կգիտենա:

Վեզիրն ասում է.— Չէ՛, շատ ման եկողը շատ բան կգիտենա:

— Շա՛տ լավ,— ասում է թագավորը,— բերեք տասը հոգի շատ տարիք ունեցող, տասը հոգի էլ բերեք շատ ման եկած, տեսնենք ո՞ր մեկը շատ բան կիմանա:

Բերում են ամեն տեսակից տասը հոգի:

Թագավորը ջրիկ կերակուր է պատրաստել տալիս, դնում են սեղանին՝ հինգ հոգուն այս կողմը, հինգ հոգուն այն կողմը:

Թագավորը գդալներ էր շինել տվել ամեն մեկի պոչը երկու թևերի բացվածքի չափ:

Սեղանի շուրջը նստում են շատ տարիք ունեցողները:

Թագավորն ասում է.—Դե՛, կերե՛ք:

Մարդիկ գդալները վերցնում են, որ ուտեն, մեկի գդալը դիպչում է մյուսի դեմքին: Նայում տեսնում են՝ չի լինում, գդալները վայր են դնում:

Թագավորն ասում է.— Կերե՛ք: Ինչու՞ չեք ուտում:

— Չէ՛, մենք չենք ուտի:

— Դուք վե՛ր կացեք,— ասում է թագավորը:

Գալիս են շատ տեղ ման եկած մարդիկ, նստում են սեղան:

Թագավորն ասում է.— Հիմա դուք կերեք:

Նրանք վերցնում են գդալները, մխրճում կերակ-

*գիլէն, տէյմ տիմուց մէյը մէգալան գուգիրցընիին։*

*Թաքավոր գուոտի վագըրէն.— Տօն ադարթ իս, չօնդ գիդ իլվէօղնէն չօնդ պուն կիդին։*

## 15 (15). ՑԻԴԸ ԷՈՒՐ ՊԱՐԱ

*Շօդ հարծուդ մօուրթ մը գըցինու։ Ադ մօուրթ ըրգը դըղու գունունու։ Իրիգուան մը իրուգ գըդիւնա, գուասին էր. «Ցիտ՞ը էուըրտ գուգիս, պարա ըննու, թը՞ համու»։*

*Ըրգը աղըգ գուկու յիրՕզ։ Իքինչը աղըգը գուասի գինգՕուն։ Գընայ գուասի.— Հայթ մա թը գուկու յիրՕզտ, աուու քի. «Հայըվըրութայնս գուգիմ զաղվըրութայն»։*

*Նիքէ քընին իմնու, խաբուր գուուկու էր՝ քի ֆըլօն չըֆլիկտ վաոիցու։*

*Սահաթ մը սօնզրա խաբուր գուուկու էր՝ բիթըն գայէրըտ վաոիցուն։*

*Վէլ հասըլը նիքէ իրիգուուն հիչ պուն չըմնուր էր, չայրըր հարուսդութէն գունա ալայը գուուրթու։*

*Գուասի գինգուն.— Ղայրը մի համուր յասդէյղ աբրիլը տՕռ չըմնաց. առնինք գչուճուխնէյն, ըննինք յաս մամլաքաթին։*

*Գուաոնին զըրգը չուճաուխ, գուընին յադ քաղքին։*

*Շօդ գուուրթուն, թէ՝ քէչ, գուուրթուն, գուհաննտիբէն կէյղ մը։ Գուիշնէն յադ դէյղ, գուհարցընին.— Ցաս կիղէն մըխտօր էո՞ւվ ի։*

*Գուցուցընին զմըխտարէն դաուն։*

*— Գանիլը պՕն մը ընծի տՕր,— գուասի մօուրթը,— յաս կէյղէն մէչ։*

*Մըխտօր գուիշի աս մուրթ հակուձ աղվար ըռուխ, հարծուդ ի, դյուշինմիշ գուունու, գուասի.— Քի համուր պուն չունէնք մընք։*

*Մօուրթը գուասի.— Ձարճր գուուզի թըղ ըննու, գըպանէմ, բաս հուց ուղին էյմ չուճաուխնէն։*

*Մըխտօր գուասի. Շօդ-աղվար, հույէյվ գընուու։*

*Գուասի.— Գընուու։*

*Իլվուձ էուր մըխտօր դէյլուլ գուգինչըցընի. «Ուվըր գուվ, մակա, աձ գունա թըղ պիրի զը միգուն դէյղ»։*

*Սաբախդան գուպիրին կիղայցաք զասանք միդուն դէյղ։ Գուպիրին էր չանթուօմ հուց։ Գուաոնի զասանք, գուուրթու կիղին տուրիցի։*

*Էուր մը, ըրգը էուր, ըրք էուր, դէվամ գուինի զէր պՕն։*

*Կիղին տուրիցի մինձ ճայուր մը ու շուդ ձառիր գուգինու, յադ դէյղ գիսէուր գըմանգըղըցնի զհայվաննէն։*

---

*րի մեջ և դեմ դիմաց նստածները մեկը մյուսին կերցնում։*

*Թագավորն ասում է վեզիրին.— Դու ճիշտ ես, շատ տեղ ման եկածները շատ բան գիտեն։*

## 15 (15). ՎԵՐՋԻՆ ՕՐԸ ԲԱՐԻ

*Շատ հարուստ մի մարդ է լինում։ Այդ մարդը երկու տղա է ունենում։ Մի գիշեր երազ է տեսնում, իրեն ասում են. «Վերջի՞ն օրդ ես ուզում բարի լինի, թե՞ հիմա»։*

*Երկու անգամ երազ է գալիս։ Երկրորդ անգամ կնոջն է ասում։ Կինն ասում է մարդուն.— Մի անգամ էլ որ երազ գա, ասա, որ «ծերությանս եմ ուզում լավությունը»։*

*Մինչև քնից արթնանում է, լուր է գալիս, թե այսինչ ագարակդ վառվեց։*

*Մի ժամ հետո լուր է գալիս, թե բոլոր կալերդ վառվեցին։*

*Վերջապես մինչև իրիկուն ոչինչ չի մնում, ինչ հարստություն ուներ, բոլորը գնում է։*

*Կնոջն ասում է.— Էլ այստեղ ապրելու մեզ դուռ չմնաց. վերցնենք երեխաներին, այս երկրից հեռանանք։*

*Վերցնում են երկու երեխաներին, հեռանում այդ քաղաքից։*

*Շատ են գնում, թե՝ քիչ, գնում հանդիպում են մի գյուղ։ Իջնում են, հարցնում.— Ո՞վ է այդ գյուղի գյուղապետը։*

*Ցույց են տալիս գյուղապետի տունը։*

*Մարդն ասում է.— Մի գործ տուր ինձ, գյուղի մեջ անեմ։*

*Գյուղապետը տեսնում է այդ մարդը լավ շորեր է հագած, հարուստ է, մտածում է, ասում.— Քեզ համար գործ չունենք մենք։*

*Մարդն ասում է.— Ի՛նչ ուզում է լինի, կաշխատեմ, միայն երեխաներս հաց ուտեն։*

*Գյուղապետն ասում է.— Շատ լավ, հովիվ կլինե՞ս։*

*Ասում է.— Կլինե՛մ։*

*Հաջորդ օրը գյուղապետը մունետիկ է կանչել տալիս. «Ով որ կով, ոչխար, այծ ունի թող բերի հրապարակ»։*

*Առավոտյան գյուղացիներն անասուններին բերում են հրապարակ։ Բերում են մի տոպրակ հաց։ Վերցնում է անասուններին, գնում է գյուղից դուրս։*

*Մի օր, երկու օր, երեք օր, իր գործն է անում։*

*Գյուղից դուրս մի մեծ մարգագետին ու շատ ծառեր են լինում, այդտեղ կեսօրին բերում մակաղեցնում էր անասուններին։*

Ադ դէյղ ջամփի իգիր գըննու։

Էոր մա, բաղըրգօն մը գուուկա, բըրաննա յադ դիղին, գուդխննա քի ադ դէյղ շոդ աղվօր դէյղ ի, բօղըրգուան գուասի.— Էօր մը, ըրգը որ համչանք յասդէյղ։

Գուիչիցընին զպիռնայր, գանըսդէն ձառիրէն չայկ։

Ադ հուվայվ գումըղգընու քէվրանբաշէն, պարծվ գուուդու, գուխուսա՝ հէյդ։ Գուխուսա, ադ մուրթ գուդըսնա քի հուվայվ խիլըք մուրթ ի, ըմը հուվուվութէյն գուինի, գուասի, էր.— Ջվա՞ տօն հօվուվութէն գունիս, տօն խէլըք մուրթ իս։

Հուվայվ գուասի.— Իմ դարդէյր շոդ ի։

Բօղրգօն գուասի քի.— Շոդ աղվոր, յաս կիղէն մէջ չըգինուր մէյըմ գընամ, քի համնիմ զըռախնէս, ուդում, ըլվանու։

Հուվայվ գուասի.— Համնի զըռախնէտ, իս գըդանէմ, իս գուպիրիմ զը։

Գուառնի ըռախնէն մըթնա գուուրթու իդօն, գինգէուն գուասի.— Ջաս ըռախնէն ըլվուց, բաղրգանայն ի։

Գընայ իլվուծ էուր աղվօր մը գուլվանու զադ ըռախնէն, գուուտալամիշ գինէ զը. գուծալի, գուտընա զը մէկ տէն։ Գուդուշինմիշ ըննօ. «Մուրթս բըր ուկու տատրուծ-տատրուծ բըր դանա զաս ըռախնէն, ավիլա աղվօր ի իս գըդանէմ»։

Ցառանչ ըր գիսէուր ըննու գընա գուառնի զըռախնէն, գուուրթու ադ ճըրէն իգէյր, բազրգանէն խօչ։ Գուուդու զըռախնէն։ Բօղըրդուան գուիշի գուդըսնա ադ գընա շոդ աղվօր գընա մի, ամըր գուինի.— Ջուղվիցէք, զպիրնայր պարցիք։

Գուառնի զհուվըվէն գընա, գուփախա, գուուրթու։

Հուվայվ գիսէուր գուուկու հայվըննէն բըր մանգըղցընի գուիշի նա բաղրգան գու, նա քարվանբաշը։

Հուվայվ գուդուշինմիշ ըննու. «Ադոր ըռախնէն յօ՞ մընուց, ի թօղ կընուց»։

Մթնաք վախըտ իդծն գուուրթու, գուիշի գուդըսնա ըրգը դղէն նսդօուծ ըն տաու, գուուլուն, գուհարցնի չուճըխնէն.— Ջվա՞ գուուլաք, յօ՞ գու մամօ։

Մինձ դղէն գուասի.— Ջըմ կիդի, յադա, զան ըռախնէյն ըլվուց, իդէօր զը, յիդ չի իգիք։ Հուվայվ գուդուշինմիշ ըննու. «Աս կիղն ա աբրիլը դիղ չի ընծի համուր»։

Խաբուր գուուդու մըխտարէն.— Իս գուուրթում, զէյրը հուվէյվ զըդըք։

Մըխտօր գուասի.— Ջըվ..՞ գուուրթուս, տէօն աղվոր գուբիհիս զմիր կիղէն հայվանուատ։

— Գուուրթում,— գուասի մուրթ։

Այդ տեղը ճամփեզրին մոտ է լինում։

Մի օր մի վաճառական է գալիս պիտի անցնի այդ տեղով, տեսնում է այդ տեղը լավ տեղ է, վաճառականն ասում է.— Մի երկու օր այստեղ հանգստանանք։

Իջեցնում են բեռները, նստում ծառերի հովին։

Այդ հովիվը մոտենում է քարավանապետին, բարև տալիս, խոսում հետը։ Խոսում է, այդ մարդը տեսնում է, որ հովիվը խելոք մարդ է, բայց հովվություն է անում, ասում է.— Ինչու՞ ես հովվություն անում, դու խելոք մարդ ես։

Հովիվն ասում է.— Իմ դարդերը շատ են։

Վաճառականն ասում է.— Շատ լավ, այս գյուղում չկա՞ մեկը, որ շորերս հանեմ, տամ, լվանա։

Հովիվն ասում է.— Հանիր շորերդ, ես կտանեմ, կբերեմ։

Վերցնում է շորերը, երեկոյան տանում տուն, կնոջն ասում.— Այս շորերը լվա, վաճառականինն է։

Հաջորդ օրը կինն այդ շորերը լավ լվանում, արդուկում, ծալում, դնում է մի կողմ։ Մտածում է. «Մարդս պիտի գա, հոգնած-ջարդված տանի այս հագուստները, ավելի լավ է ես տանեմ»։

Կեսօրից առաջ կինը վերցնում է շորերը, գնում է այդ ջրի եզրը, վաճառականի մոտ։ Տալիս է շորերը։ Վաճառականը նայում տեսնում է, այդ կինը շատ լավ կին է, հրամայում է.—Հավաքե՛ք, բեռները բարձեք։

Առնում է հովվի կնոջը, փախչում, գնում։

Հովիվը կեսօրին բերում է անասուններին մակաղելու, տեսնում է ո՛չ վաճառական կա, ո՛չ էլ քարավանապետ։

Հովիվը մտածում է. «Սա իր շորերն ո՞ւր թողեց, գնաց»։

Երեկոյան տուն է գնում, տեսնում է երկու տղաները նստած են դռանը, լաց են լինում, հարցնում է երեխաներին.— Ինչու՞ եք լաց լինում, ո՞ւր է մայրիկը։

Մեծ տղան ասում է.— Չգիտեմ, հայրի՛կ, այդ շորերը լվաց, տարավ, չվերադարձավ։ Հովիվը միտք է անում. «Այս գյուղն էլ ինձ համար ապրելու տեղ չէ»։

Իմաց է տալիս գյուղապետին.— Ես գնում եմ, ուրիշ հովիվ ճարեք։

Գյուղապետն ասում է.— Ինչու՞ ես գնում, դու լավ ես պահում մեր գյուղի անասունները։

— Գնում եմ,— ասում է մարդը։

Գուաոնի զըրգը դղէն, մէյնձ գուքիլի, բգդագն ա̈ յուաէն գուաոնա, ճամպըք գըլննի։

Շա̈գ գուուրթու, քէչ գուուրթու, գուհանուիրա մինձ ճաուր մը։ Մօուրթ գուիշի գուգըլնա ճամպըք չըկու աանիլա հա̈մուր, ճըրէն միչին բըր աանա։ Մըգ չուճաուխ գութուղա ցամէք, միգալ չուճաուխ գուաանի, գուանցնի ճըրին յանուէն։ Գուաաանու միգալ չուճաուխն ալ բըր աանի, գուաոնի զչուճաուխ գուհաանա գիս ճըրէն, յանուին գուուկու ճանալօուր մը զադ ցամքէն զչուճաուխ բըր աոնի, գուշամաթի ճրէն միչին, ճանալօուր գուաոնի զչուճաուխ, գուփախա։

Ադ բգդագ չուճաուխն ա̈ յուսին գուիյնա ճըրէն մէյչ։ Զադ ա չուգաոնու պըռնի, ճաուր կուդանո զը։ Մուրթը էնք բա̈ս գըլննի ցա̈մըք։ Ցօ՞ ուր թու։ Զա՞ բըր ըննու. շաշմըշ իղավ մուց. «Է՜,— գուա̈սի,— հա̈րսղութայն կնա̈՜ց, գնագս կնա̈՜ց, չուճուխնէն կա̈ցէն, իս չա՞ բըր շինիմ, յՕ՞ բըր ուրթում հա̈մու»։

Գուաոնի զկլլաուխ, գուինա չամպըք։ Շա̈գ գուուրթու, քէչ գուուրթու, տալ յիգ գուտաոնու գուիշի, քի քանի ցիրինը հա̈գայմ էրգընութայն կա̈ցէր ի։ Գուհաանա մինձ մա̈մլա̈քա̈թ մը։ Գուիլվա ադ մա̈մլա̈քա̈թէն մէյչ, գուուրթու ճաշարանայն տաուռ, գուգայնա։ Սահաթ մը, ըրգը սահաթ չումըննա նըքսի, չուուրթու յա։ Գուունի ճաշարանէն դօյր.— Ա՛յ մուրթ,— գուա̈սի,— գայնուձ իս տաուռ, մուրագյու՞ն իս։

Մօուրթ գուա̈սի.— Գուն գուուզիմ, պա̈նէյմ թը գունէս, ուկում պա̈նէմ խօչըրա։

— Զա՞ գառնուս պա̈նէս,— գուա̈սի ճաշարանէն դօյր։

— Զա̈յրը գուուզի թըղ ըննու, գըպա̈նէմ,— գուա̈սի։

— Ամուն գուլվաննըս։

— Գուլվա̈նու̈մ, ախպէր,— գուա̈սի։

— Շուգ ադվա̈ր,— գուա̈սի,— անցէ ամըննա ըլվա̈նըլ դէյղ։

Գուպիրի էր ամուն մը ուդիլա, գուուդի, գուըլլիշա զա̈մընէյն ըլվա̈նէլ։

Գուպանա յադ դէյղ ա̈մայս մը, ըրգը ա̈մայս, ադ ճաշարանէն մուշդարաք ավիլա շա̈դցուն, քա̈նէր ադ մօուրթ բըլիշիցու յադ դիղ պա̈նիլ։ Ճաշարանէն դօյր սիրից զադ մօուրթ, ադվա̈ր ուդիլա իդօր էր, փարա յա իդօր էր։

Ադ մա̈մլա̈քա̈թէն թա̈քա̈վիր գումիռնա։ Ցաուանչ թա̈քա̈վիր հըննդրիլա հա̈մուր դօվլաթ ղուշա գուսիրայլըն։ Ադ ղուշը ա̈նա̈ր կլխայն գունուդիր, ան բըր ըննիր թա̈քա̈վիր։ Բիթըն էհայլին գուուրթուն միդուն դէյղ։ Գուսիրին զծէկ։ Կուպանցընու, գուիլվա ղէյր գուուննու։ Գուպատվէն զղուշ յաատէն-յանուէն։ Ադ ճաշարանէն դօյր գուուկու, գու-

Վերցնում է երկու տղաներին, մեծը քայլում է, փոքրին էլ ուսին է առնում ճամփա է ընկնում։

Շատ է գնում, քիչ է գնում, հանդիպում է մի մեծ ջրի։ Մարդը նայում, տեսնում է ճանապարհ չկա անցնելու, ջրի միջով պիտի անցնի։ Երեխաներից մեկին թողնում է ջրափին, մյուսին վերցնում, անցնում է ջրի այն կողմը։ Վերադառնում է մյուս երեխային վերցնում, հասնում է ջրի մեջտեղը, այն կողմից մի գազան է գալիս, ջրափին գտնվող երեխային պիտի հափշտակի, սա գոռգոռում է ջրի միջից, գազանը հափշտակում է երեխային, փախչում։

Այդ փոքր երեխան էլ ուսի վրայից ջուրն է ընկնում։ Նրան էլ չի կարողանում բռնել, ջուրը տանում է։ Մարդը միայն ինքն է ցամաք դուրս գալիս։ Ո՞ւր գնա, ի՞նչ անի. շվարում մնում է. «Է՜,— ասում է,— հարստությունս գնա՜ց, կինս գնա՜ց, երեխաներս գնա՜ցին, ես հիմա ի՞նչ պիտի անեմ, ո՞ւր պիտի գնամ»։

Առնում է գլուխը, ճամփա ընկնում։ Շատ է գնում, քիչ է գնում, ետ է դառնում տեսնում, որ մի ցորենի հատիկի չափ տարածություն է անցել։ Հասնում է մի մեծ երկիր։ Ման է գալիս այդ երկրում, գնում կանգնում մի ճաշարանի դռանը։ Մեկ ժամ, երկու ժամ՝ ներս չի մտնում, ոչ էլ հեռանում։ Դուրս է գալիս ճաշարանապետը.— Ա՛յ մարդ,— ասում է,— դռանը կանգնել ես, մուրացկա՞ն ես։

Մարդն ասում է.— Աշխատանք եմ ուզում, եթե աշխատանք ունես, գամ աշխատեմ մոտդ։

—Ի՞նչ կարող ես աշխատել,— ասում է ճաշարանի տերը։

— Ի՛նչ ուզում է լինի, կաշխատեմ,— ասում է։

— Աման կլվանա՞ս։

— Կլվանա՛մ, ախպեր,— ասում է։

— Շատ լավ,— ասում է,— անցիր աման լվանալու տեղը։

Նրան մի աման ճաշ է բերում տալիս, ուտում է, սկսում ամանները լվանալ։

Այդտեղ աշխատում է մի ամիս, երկու ամիս, այդ մարդու աշխատելու օրվանից ճաշարանի հաճախորդներն ավելի շատանում են։ Ճաշարանի տերը սիրում է մարդուն, լավ ուտելիք, փող է տալիս։

Այդ երկրի թագավորը մեռնում է։ Առաջներում թագավոր ընտրելու համար Դովլաթ ղուշ էին արձակում։ Այդ ղուշն ում գլխին նստեր, նա լինում էր թագավոր։ Ամբողջ ժողովուրդը գնում է հրապարակ։ Թռչունը բաց են թողնում։ Բարձրանում, պտտվում ու անհետանում է։ Դես ու դեն թռչուն են փնտրում։ Ճաշարանի տերը գալիս, տեսնում

իշի, ղուշ նսդöուծ յուդ ամուն ըլվանողէն ուսէն.
— Չէյը, չէյը, ադ չիղուվ,— գուա̈սի էհալին։

Գուառնին զղուշ, ղուդ ամուն ըլվանուղ մուրթ նա, ղուղանէն ղուշ մը զուրիհէն, քի հիչ ղէղիմ ձէդ չունա։ Թէքըուր գասիրին զդöվլաթ ղուշէն։ Գուպանցըրնու ծէկ գոխլվա, գուխլվա, գուրթու ալա ադ մօրթ ըր բիհվօուծ, ա̈ղուր դինայրք գու-փիրշըդի, ղուձագի զդինօյրք գուխշնա մարթօյն ուսէյն գունսդա ալա։ Ինալին գուդխնա ղուշ ալա նսդöուծ յուդ մարթöուն յուսէն.— Չէ, ղայըր.— գուա̈սին,— աս ի միր թա̈քա̈վիր։

Յառանչ ադ քաղքէն ինալին չաղվա̈ր գուար-րիյր, քան էր ադ մարթ թա̈քա̈վիր իղուվ, ինա-լին՝ ղայըր շա̈դ ադվա̈ր գուարրա։ Մինձ անöն հա̈նից ադ թա̈քա̈վիր։

Ուկընք չուճըխնէն։ Ջուան ըր ճանավօուր ի-դուր, հուվըփէն գուհանտիրայնի, չամաթիլու ադ ճանավօուրը դութուղու զչուճուալխ գուարթու։ Հու-վափէն միչէյն մէյնձ գուա̈սի.— Ջաս չուճատխ րըր դանէմ միր դöն։

Իրդառն գուղօնուազ հէյդ ի ղօն, էր ղա̈դէն գուա̈սի.— Ջաս չուճատխ զրաու ճանավարէն պյուրնին առէնք դը։

Ադ հովըվէն ղէուդ գուա̈սի.— Շա̈դ ադվա̈ր, օղլո՛ւմ, առն ախպար չունայրըս, ադ չուճատխ իղու քի ախպար։

Բըղդա̈դ չուճատխ, ճայր ըր գուդանալգ չա̈խ-ցուծ դունդըղլառկ, ջա̈ղուցք գուդաննա։

Դա̈գըրմա̈նչէյն գուա̈սի էր մշգօն,— Ի՛լ, իշի ալա մէյմը չու՞ գըդրից զճայր։

Մըշէ գուըննի, գուիշի չուճատխ մը փագöուծ զճայր։

Գուգինչի վարրիղէն.— Արէ,— գուա̈սի,— չու-ճատխ մը փա̈գուծ զճատր։

Դա̈գըրմա̈նչէյն գուըննի, գուառնի զչուճատխ, գուիշի՝ տառ հիկկա գու իրվան, գուիչըցընի զչա̈-ղուցք, պամգու գուըըլըդէ զը, շա̈ղ չայ մը գու-շինի, գուխմցընէ զը։

Ադ դա̈գըրմա̈նչէյն ալ չուճատխ չուունըրնու։ Իր-դառն գուառնի ղոնուաղ իղօն, գինգյունը ղու-ա̈սի.— Չուճատխ չունայր ընք. առդուծ չու-ճուտխ իղօր մի։

Ադ բառօվ քանգան կուխընդու, քան զան ադ-վա̈ր գուբիհի զադ չուճատխ։

Ադ չուճըխնէն մինձցուն, ամէյ մէյը ղէյղ ա̈սկա̈ր կա̈ցէն։ Ըրգ ախպարն ալ առանց զմեդ զմիդալը կիդա̈նիլ ինգուն զարիթայմ խօչ։ Ադ զաբիթ քան-զան սիրից զադ ա̈սկա̈րնէն։

Ըուր մալէ թա̈քա̈վիր գինչից զզաբըթնէյն ա̈սուց.— Ընծը ըրգը ա̈սկա̈ր գուբիդա շա̈դ խիլըք, բըր ըննուն։

է, թռչունը նստել է այդ աման լվացողի ուսին.— Չէ՛, չէ՛, այդ չեղավ,— ասում է ժողովուրդը։

Վերցնում են թռչունը, աման լվացող մարդուն էլ տանում պահում են մի տեղ, որը ոչ մի տեղից անցք չունի։ Նորից են Դովլաթ ղուշին արձակում։ Սա բարձրանում է, պտտվում, գնում է նորից այդ մարդու պահված տեղի տանիքը քչփորում, ծակում է տանիքը, իջնում, նորից նստում այդ մարդու ուսին։ Ժողովուրդը տեսնում է, որ թռչունը նորից նստեց այդ մարդու ուսին, ասում է.— Չէ՛, արդեն սա է մեր թագավորը։

Առաջ այդ քաղաքի ժողովուրդը վատ էր ապրում, իսկ այդ մարդու թագավոր դառնալով, ժողովուրդն արդեն սկսում է լավ ապրել։ Այդ թագավորը մեծ անուն է հանում։

Դառնանք երեխաներին։ Նրան, որ գայլանը տարավ, հովիվներ են հանդիպում, սկսում են աղմկել, գայլանը վախից թողնում է երեխային, փախչում։ Հովիվների մեծն ասում է.— Այս երեխային պիտի տանեմ մեր տուն։

Իրիկունը նրան տանում է տուն, հորն ասում.— Այս երեխային գայլանի բերանից խլեցինք։

Հովվի հայրն ասում է.—Շատ լավ, տղա՛ս, դու եղբայր չունեիր, այս երեխան քեզ եղբայր կլինի։

Փոքր տղային, որ ջուրը տանում է ջրաղացի ջրատար խողովակին է հասցնում, ջրաղացը կանգ է առնում։

Ջրաղացպանն իր մշակին ասում է.—Ե՛լ, տես ջուրն ինչո՞ւ կտրվեց։

Մշակը ելնում, տեսնում է մի երեխա փակել է ջուրը։

Վարպետին կանչում է.— Արի՛,— ասում է,— մի երեխա փակել է ջուրը։

Ջրաղացպանը ելնում է, վերցնում է երեխային, տեսնում է՝ դեռ շունչ կա վրան, իջեցնում է ջրաղացը, բամբակի մեջ փաթաթում, տաք թեյ է պատրաստում, խմցնում նրան։

Այս ջրաղացպանն էլ երեխա չի ունենում։ Երեկոյան վերցնում է երեխային, տանում տուն, կնոջն ասում.— Երեխա չունեինք, աստված մեզ երեխա տվեց։

Պառավն այնքան է ուրախանում, այնքան լավ է պահում երեխային։

Այդ երեխաները մեծանում են, ամեն մեկը իր տեղում զինվոր է գնում։ Երկու եղբայրներն առանց մեկը մյուսին ճանաչելու, ընկնում են մի սպայի մոտ։ Սպան շատ սիրեց այդ զինվորներին։

Մի օր էլ թագավորը կանչեց սպային ասաց.— Ինձ երկու զինվոր է պետք, որոնք շատ խելոք պետք է լինեն։

Զարիթը ա̈սուց.— Իս գունէմ ըրգը ա̈սկյա̈ր, չափին ավիլա խիլիք։

— Էօյլա իսա, զադ ա̈սկյա̈րնէն գուպիրիս խօչս։

Զարիթ իդուր զա̈սկյա̈րնէյն թա̈քա̈վիրը, եփըր դիսուվ զա̈սկյա̈րնէն, առչը՞ դէսնիլէն քան զան սիրից գիրինք, էլ չըդըսնըվուծ։ Ա̈սկյա̈րնէն գիրուն, խմիցէն թա̈քա̈վիրէն խօչ, հիչ պուն չուինայրըն, չունքի թա̈քա̈վա̈ր շա̈դ սիրից գիրինք։

Ուրէն մէ բա̈զըրգօն մը գուա̈նիր յադ մա̈մլա̈քա̈թէն խիչին, յուց զադ թա̈քա̈վիրէն զանաուն, ադվա̈ր թա̈քա̈վա̈ր ի դէյէ, ուզից մինծ հա̈դիա մը դանա թա̈քա̈վիրէն, իդուր թա̈քա̈վիրէն շա̈դ ղըյմաթըը հադիյինա։

Թա̈քա̈վիր լէփըր դիսուվ զադ հադիինէն, աչալիպ մնուց.— Շա̈դ ադվա̈ր,— ա̈սուց բա̈զըրգանէն,— իս քինէ շա̈դ մա̈մնուն իդում, լազում ի,— ա̈սուց.— իրիգաուն տօն խօ̈չս մըսաֆըր բըր գինուս։

Բա̈զրգօն ա̈սուց.— Շա̈՛դ ադվա̈ր, դըզինում, ըմմը էմ գնալը չըմ գարա թուղու։ Էմ պանվօրնէն ըմիաթ չըմ ինի։

Թա̈քա̈վիրն ա̈սուց.— Շա̈՛դ ադվա̈ր, իս գունէմ ըրգը ա̈սկյա̈ր, շա̈դ խիլըք ըն, գուրթուն քէ գինգունը բա̈կչըլըկ գինին։

Գուուրթուն, զադ ըրգը ա̈սկյա̈ր դուդանէյն, գաանցընին չադըրէն առչիվ, գուա̈սին.— Տաք յասդէյդ բակչա բըր գինաք, մուրթ չըբըըթուդաք մընա չադըրէն մէյչ։

Իրիգաուն ադ ա̈սկյա̈րնէն գուխուսէն մէ միգալի հիդ, վախըտ ասնա դէյը, չըթառիդէն։ Մէյը գուա̈սի տա միգօլ.— Զա՞ անցած կյլխիտ նիքէ հա̈մօ։

Մէյը գուբըլիշա գլլխէն անցօծ։ Միգալն ա գուբըլիշա։ Բա̈զըրգա̈նէն գնալը գուլըսի չադըրէյն մէյչըն, գուա̈սի. «Աս ա̈սկյա̈րնէն էմ դզօքն ին»։

Գուըննի տուրիցի, գուկըրգի զըրդը մըգնա, գուա̈սի.— Տաք էմ դզօք ըք։

Գուառնի գիրինք, գուդանը չադըրէն մէյչը։

Քանզան գուա̈սին-գուխօսին, ամ դղու միգ թիվէն գուբառիգէն՝ մարն ա̈լէ հիգվընէն բարաբուր։

Բա̈զըրգան թա̈քա̈վիրէն խօչ շա̈դ վախտ անցընիլէն սօնդ, գուընի, գուուրթու։ Գուիշի քի չադըրէն առչիվ ա̈սկյա̈ր չըկու, գուհասնա չադըրէն խօչ, գուիշի նէքսի ամըն ա̈սկյա̈ր գինգօ̈ուն մէգ թիվէն բառդուծ։ Քանզան գունիխըքըննու բա̈զրգան, գուքիշի զդարանչալէն բըրնիդի զըրքը, ամմա գուդյուշընմըշըննու, դուա̈սի. «Ուրթում պիրիմ զթա̈քա̈վա̈ր, թըղ ուկու, անկ էր իչու թըղ գըսնա զէր խիլիք ա̈սկյա̈րնէն»։

Սպան ասաց.— Ես ունեմ երկու զինվոր, չափից ավելի խելոք։

— Որ այդպես է, այդ զինվորներին կբերես մոտս։

Սպան զինվորներին տարավ թագավորի մոտ, երբ տեսավ նրանց, առաջին տեսնելուն այնքան սիրեց նրանց, էլ չտեսնված։ Զինվորները կերան, խմեցին թագավորի մոտ, ոչ մի գործ չէին անում, քանի որ թագավորը նրանց շատ էր սիրում։

Մի օր մի վաճառական էր անցնում այդ քաղաքի մոտով, լսել էր այդ թագավորի անունը, որպես լավ թագավորի ուզում է նրան մի մեծ նվեր տանել, տարավ շատ թանկագին նվերներ տվեց թագավորին։

Թագավորը երբ տեսավ այդ նվերները, զարմացած մնաց.— Շատ լավ,— ասաց վաճառականին,— ես քեզանից շատ շնորհակալ եմ։ Պետք է երեկոյան ինձ մոտ հյուր լինես։

Վաճառականն ասաց.— Շա՛տ լավ, կմնամ, բայց կնոջս չեմ կարող թողնել։ Իմ բանվորներին չեմ վստահում։

Թագավորն ասաց.— Շա՛տ լավ, ես ունեմ երկու զինվոր, շատ խելոք են, կգնան քո կնոջը պահակություն կանեն։

Գնում են, այդ երկու զինվորներին տանում, կանգնեցնում են վրանի առաջ, ասում.— Դուք այստեղ պահակ պիտի կանգնեք, չպիտի թողնեք մարդ վրանից ներս մտնի։

Երեկոյան այդ զինվորներն իրար հետ զրուցում են, որպեսզի ժամանակն անցնի, չքնեն։ Մեկն ասում է մյուսին.— Գլխովդ ի՞նչ է անցել դարձել մինչև հիմա։

Մեկն սկսում է պատմել իր գլխով անցածը։ Մյուսն էլ է պատմում։ Վաճառականի կինը լսում է վրանի միջից, ասում. «Այս զինվորներն իմ տղաներն են»։

Դուրս է գալիս, գրկում է երկուսին էլ, ասում.— Դուք իմ տղաներն եք։

Վերցնում է նրանց, տանում վրանից ներս։

Այնքան են ասում-խոսում, որ ամեն մի տղան (մոր) թևերի վրա քնում է՝ մայրն էլ նրանց հետ միասին։

Վաճառականը թագավորի մոտ բավական ժամանակ անցկացնելուց հետո, վեր է կենում գնում։ Տեսնում է, որ վրանի առաջ զինվոր չկա, հասնում է վրանի մոտ, նայում ներս, տեսնում ամեն մի զինվորը կնոջ մեկ թևի վրա քնած է։ Վաճառականն այնքան է զայրանում, քաշում է ատրճանակը, որ երեքի վրա էլ կրակի, բայց մտածում է, ասում. «Գնամ բերեմ թագավորին, թող գա, իր աչքով տեսնի իր խելոք զինվորներին»։

Գուրթու բըզրդըն գուպիրի գթըքըվէր.— Իշի,— գուձսի,— քէ խըլիք ըսկըրնէն, ըսու հըմօ զըսինք չա՞ շինիմ իս։

Թըքըվըր գուձսի.— Հը, հէտև ի, զըսընք զընիլ։

Նիքէ լադ վախըռը զընալը գուիթիու։ Ըսկըր-ներն ըլէ գուիթիուն, գուիշին թըքըվըր իրինց վիրիվ կլինէն գըննծուծ, գուշաշմիշ ընեուն, գու-խիվնուն ըսկըրնէն, չա՞ ջըղուպ ըըր ուդուն թը-քըվիրէն։ Ցէփըր գուղլինուն բըզրրգընէն ծօռ գու-դաբանչալէն, զընա գուգիդընու ըսկըրնէն վըխ-ցուն, գուձսի.— Իս լսադիղ իֆադա չըմ ուդու, զուրթունք թըքըվիրէն խօչ։

Գուրթուն թըքըվիրէն խօչ, բըզրրգընն ըլ հիդվընէն։ Գընա գուձսի.— Թըքըվըր ալրուծ գինու, գուխընթրիմ լազըմ ի փադիս գուաուռ մուրթ չըննի ուրիցի։

Ցադուր սօէզ, գընալ գուբիլիշա հըթըղիլ, գու-ձսի.— Ըս ըսկըրնէն էմ չուճուխնան ըն։ Վա-խըռ մը,— գուձսի,— էմ մուօրթ հուվալվ ըր, իպիր լուախնա ըլվացա, դարա զադ լուախնէն դրէօչ։ Ադ բըզըրդընէն իդէր ադ լուախնէն, ա-ռավ գէս, փախու կընեց։

Հըմու թըքըվըր շաշմըշ իղավ, ծուց. «Էօլ-լա իսա, աս էմ գընալն ի, աս ըսկըրնէն ը՝ էլմ դըղօքն ըն»։

Գուիշի ուալ բըզրրգըն.— Իս չէււց ջըզա ու-զում քի, ուն զէմ գընա ասիր փախուր։ Իս զըս-բանօր գքի, ըմը ասդուծ թըղ ուկկու հըխիու։

Գուըննի բըզըրդօն գուգախի զկլուխ, գուասնա ուրթու։

Թըքըվիր էր գընա իլան չուճուխնէն լադ դիղ օմըր գուանցընին։

Իրգընաուց գինն ըրք խնծիրը հուգ. մէ՝ հա-թաղօզէն, մէ՝ լսօզէն, մէգն ալ՝ ջումլա ըլըմէն։

## 16 (16). ՉԱՅՐԸՐ ԳԸՑԱՆԻՍ, ՋԱՆ ԱԼԷ ԳԸՆՏԻՍ

Գուգինու, չուգինու թըքըվըր մը, ադ գու-նունու վըզէր մը։ Ադ թըքըվըրը, զընըլը իլան դղան գուրթուն պաավիլ, աշկէնը գութօղուն իդծն։ Թըքըվըրը վըզիրէն գըսէ.— Տօռը մանդլէ, զըր-մըթէն ճօր, հաց, ուդիլա գուգօս։

Վըզիրը տօռը գուփագէ ըշկընէն ըրվան։ Վը-զիրը ըմըն ուր ալըր հաց, ճօր գուդօ։ Ուր մը չաղվըր մդքում գըսէ ըշկնէն, քի տօռը պըննօ։

Աշկէնը գըսէ.— Տօռը չըմ պըննօ։

Վըզէրը սօդ դիղը խըբուր գուխարգէ թըքը-վըրէն, քի աս ըշկէնը չաղվըր է, ճահլնէն ընը-օղը-մընըօղը բէլէսըզ է, արը, օւ ըշկէնըրա։

Թըքըվըրը չա՞ բըր շինէ. դղան գուխուրգէ ըշկընէն քուվը։ Գուկօ ախպարը գիշէ տօռը տըր-զան փըգուծիր։

Վաճառականը գնում, բերում է թագավորին.— Տե՛ս,— ասում է,— քո խելոք զինվորներին, դու ասա, հիմա սրանց ի՞նչ անեմ։

Թագավորն ասում է.— Հա՛, արժի սրանց սպանել։

Մինչ այդ կինը զարթնում է։ Զինվորներն էլ են զարթնում, տեսնում են թագավորն իրենց գլխավերևը կանգնած, շփոթվում, գժվում են, թե ի՞նչ պատասխան պիտի տան թագավորին։ Երբ տեսնում են վաճառականի ձեռքի ատրճանակը, կինը հասկանում է, որ զինվորները վախեցան, ասում է.— Ես այստեղ բացատրություն չեմ տա, գնանք թագավորի մոտ։

Գնում են թագավորի մոտ, վաճառականն էլ հետները։ Կինն ասում է.—Թագավորն ապրած կենա, խնդրում եմ դուռը ծածկել տալ, որ մարդ դուրս չգա։

Դրանից հետո կինն սկսում է պատմել, ասում է.— Այս երեխաներն իմ զավակներն են։ Մի ժամանակ,— ասում է,— ամուսինս հովիվ էր, շորեր բերեց լվացի, տարա տիրոջը։ Այդ շորերը այս վաճառականինն էր, վերցրեց ինձ, փախավ գնաց։

Թագավորն ապշում է. «Որ այդպես է, այս կինն իմ կինն է, այս զինվորներն իմ տղաներն են»։

Նայում է վաճառականին.— Ես ինչպե՞ս պատիժ պիտի տամ քեզ, որ դու իմ կնոջը վերցրիր փախար։ Ես քեզ կսպանեի, սակայն աստված թող քո պատիժը տա։

Վաճառականը վեր է կենում, գլուխը կախ հեռանում։

Թագավորն ու իր կինը, երեխաների հետ այդտեղ մնում են ու ապրում։

Երկնքից երեք խնձոր է ընկնում. մեկը՝ պատմողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ արար աշխարհին։

## 16 (16). ԻՆՉ ՈՐ ՑԱՆԵՍ, ԱՅՆ ԷԼ ԿՀՆՁԵՍ

Լինում է, չի լինում մի թագավոր, նա մի վեզիր է ունենում։ Այդ թագավորը, կինն ու տղան գնում են ճանապարհորդելու, աղջկան թողնում են տանը։ Թագավորը վեզիրին ասում է.— Դուռը փակիր, ջուր, հաց, ուտելիք կտուրից կտաս։

Վեզիրը դուռը փակում է աղջկա վրա։ Ամեն օր նրան հաց ու ջուր է տալիս։ Մի օր էլ վատ մտքով ասում է աղջկան, որ դուռը բացի։

Աղջիկն ասում է.— Դուռը չե՛մ բացանի։

Վեզիրը սուտ լուր է ուղարկում թագավորին, թե աղջիկը վատ է պահում իրեն, ջահելների ելնողն ու մտնողն անհայտ է, արի, առ աղջկադ։

Թագավորն ի՞նչ պիտի անի. տղային է ուղարկում աղջկա մոտ։ Եղբայրը գալիս է տեսնում, որ դուռը փակ է առաջվա պես։

Գյաւէ.— Պույ ըղտօըը։

Ամմա աշկէյնը գյաւէ.— Չըմ պանօ։

Ախպարը մաղնէն ըլցըցընէ էր, քի խու քէ ախպարն իմ։ Աշկէնը տօրը գըպանա։ Գիշէ էր ախպարն է, գյաւէ.— Ախպա՛ր, չըլա՞ իկած խու յաողէզըը։

Ախպարը սօդ մըղքում գուխապըտի գէր քալըը.— Դյաղյալը իլան մամալը գուկուն, բուրթունք ձարշա։

Գյանի ըղքայըը գուրթուն։ Գուրթուն լիւը, գիշին քէ աղբալը մը գօ, աղբայրէն քուվը մինձ ձուռ մը գօ։ Քաշըը գուցյաւէ.— Բըր բաղգէմ։

Սխպարը գյաւէ.— Ձնգէս ուէր կըօխիտ, բաղգէ։

Աշկէյնը գըըաոգա խարօ քօն։ Ախպարը գամուց մը քուրը կըլօխը ըընանէ ձնգին, գըտնա քարէ մը լէրվան։ Ախպարը գուխօղօ քայըը, գըփախա։ Գիթիօ աշկէնը, գիշէ ախպարը չիգօ։ Գումըթնէ, աշկէնը գըննէ ձառէն ձարքը, գըըառգալանդէղը։

Սարախըաղն գըննօ միգալ թաքավըրէն դղան ծիօն ըըվան հիձիր է, իգիր է ճօր բըր խըմցընէ ծիօն աղբըրին։ Ծէնը գուխըըաա, ճօր չուխըմէ։ Դղան գյաւէ. «Չըլա՞ ճօր չուխըմէ ծէնը»։ Գիշէ, ճըրէն միջը թասֆիր մը գուըվունօ, դղան գիշի, քի ձառէն ձարքը աշկէն մը գօ։ Դղան էր մէդքը գյաւէ՝ աղվար է աշկէնը։ Աշկէնն ալէ ըսահը, շադ աղվար իր. արիվէն գյասիր՝ խու ձիթիմ, տօն մը՛ ձիթիր։

Դղան աշկընէն գյաւէ.—Արէ՛ իճէ ձառէն ձըրքին։

Աշկէնը չուխուսէր։ Դղան գընէ ձառէն ձարքը, գուպռնու աշկընէն թիվը, գիշնէն ձառէն դօգը։ Աշկէնը դղէն հիդը չըխուսէր։ Դղան գըպռնէ զադ աշկէնը, գըտնա ձիօն ըըվան, դղան ալ գըհիձնա ծիօն ըըվան։

Զադ աշկէնը գառնէ, հարս գըղանա ի դօն, յութ ուր, յութ իրգօն թըմպագ գըքիշտին։ Հարսը շադ աղվար իր, ամը հիչ միգէն հիդը չըր խուսիր։ Ան ըրգը դղօ գունիր, իփր ալալը սուրուցէ գըգինուն, մարը չուջըխնէն նէնի-նէնի գյաւէ.— Բալքըմ դաղալը գըղանա մէ քռանց։

Տուրուցունց գուլըսին հարսէն ձանը, հուրսը ձան գունա դիյա, գուխընդուն։

Բաղզան մուրթը գյաւէ.— Գուզի՞ս դանէմ գըէ ախպօրինց։

Գնալըն ալ գյաւէ.— Տը կիդիս ձառէ դվղի՞նն իմ իս։

Թաքավըրէն դղան, վազիրէն հիդը գնալը իլան ըրգը դղան, թափըր մը ասկար ալէ գուղըրգէ գինգունը մարինց։ Ջամփունքը տալը մը գուգիսնուն, տուրէն միջը չադըր մը գուքիշտին, ադ իրգօնը հուդ գուբառգէն։

Ասում է.—Բաց դուռը։

Բայց աղջիկն ասում է.— Չեմ բացանի։

Եղբայրը մատանին ցույց է տալիս, թե ես քո եղբայրն եմ։ Աղջիկը դուռը բաց է անում, տեսնում, որ եղբայրն է, ասում է.—Եղբա՛յր, ինչո՞ւ ես եկել այստեղ։

Եղբայրը խաբում է քրոջը.— Հայրիկն ու մայրիկը գալիս են, մենք գնալու ենք դիմավորելու։

Վերցնում է քրոջն ու գնում։ Գնում են սար, տեսնում են մի աղբյուր կա, աղբյուրի մոտ մի մեծ ծառ կա։ Քույրն ասում է.— Պիտի քնեմ։

Եղբայրն ասում է.— Գլուխդ ծնկիս դիր, քնի։

Աղջիկը խոր քուն է մտնում։ Եղբայրը կամացուկ քրոջ գլուխը ծնկի վրայից վերցնում, դնում է մի քարի վրա, քրոջը թողնում է ու փախչում։ Աղջիկը զարթնում է, տեսնում՝ եղբայրը չկա։ Մթնում է, աղջիկը բարձրանում է ծառի կատարին ու այնտեղ քնում։

Առավոտյան մի ուրիշ թագավորի տղա, ձի հեծած գալիս է աղբյուրի մոտ՝ ձին ջրելու։ Ձին խրտնում է, ջուր չի խմում։ Տղան ասում է. «Ինչո՞ւ ջուր չի խմում»։ Նայում է, տեսնում ջրի մեջ մի պատկեր է երևում։ Տղան նայում է, որ ծառի կատարին մի աղջիկ կա։ Տղան մտքում ասում է՝ սիրուն աղջիկ է։ Աղջիկն էլ, իրոք, շատ սիրուն էր. արևին ասում էր՝ դու մի՛ ծագիր, ես պիտի ծագեմ։

Տղան աղջկան ասում է.—Արի՛ իջիր ծառի կատարից։

Աղջիկը չի խոսում։ Տղան բարձրանում է ծառի կատարը, բռնում աղջկա թևից, իջեցնում է ծառի տակ։ Աղջիկը տղայի հետ չի խոսում։ Տղան բռնում է աղջկան, դնում ձիու վրա, ինքն էլ հեծնում։

Այդ աղջկան առնում, հարս է տանում տուն, յոթ օր, յոթ գիշեր թմբուկ են զարկում։ Հարսը շատ լավն է լինում, բայց ոչ մեկի հետ չի խոսում։ Նա երկու տղա է ունենում, երբ բոլորը դրսում էին լինում, մայրը երեխաներին օրոր էր ասում.— Նրանի՛ հայրիկը մեզ տանի քեռանց։

Դրսից լսում են հարսի ձայնը, որ հարսը ձայն ունի, ուրախանում են։

Հետո ամուսինն ասում է.— Ուզո՞ւմ ես տանեմ քեզ եղբորդ մոտ։

Կինն ասում է.— Կարծում ես ծառի փչակի՞ց եմ եղել։

Թագավորի տղան, վեզիրի հետ կնոջը և երկու երեխաներին, մի գունդ զինվորով ուղարկում է մորանց տուն։ Ճանապարհին մի դաշտ են տեսնում, մի վրան են խփում ու այնտեղ գիշերում։

Գըմթնէ, վազէրը գասէ.— Արի հիմա իջէ։

— Գնալը գասէ.— Չըմընո։

— Դըրան գըցնիմ։

— Գըցնիմ՝ գնէ։

— Միդալն ալէ գըցնիմ։

— Գըցնիմ՝ դնէ։

Սանդը ըրդօքըն ալ գըցնէ։

Գնալը գուգէ տուրուցէ ըննիլ, վազիրին գասէ.— Գացիմ՝ բարան մը գարէ մէշքիս։

Վազիրը բարանը գարից գինգան մէշքը, գընալը իժօղ կնաց։ Միշքին բարանը գնալը քակից, փախուվ գնաց, ինգավ լէռ մը։ Անդիղ դիտավ հովէվ մը։ Հանից էր ըրախնէն հովավէն իդօր։ Ինքը հագավ հովվէն ըրուխը, ուրից մակը գիշէյն մալէ, անցօց կլօխը, առրցավ քալ դդա, կնաց։

Շօդ գնաց, քէչ կընաց, բառաո խիլք դաշդա մը։ Մըդավ դաշավէն միջը, յանդիգը պանիցավ։ Ամէս մը պանիցավ, իշից, էր գաղէն դաշտան իւ էր դուղն իլան վաղիրը դալմա գուկէրին յադ դիդը, գընըսդէրին։ Աշկէնը պան չառաց էր գաղէն։ Յանար սանկը իշից դիստվ էր մարթը իլան վազէրն ալէ իգէյն նօղիցան յադ դաշդան։ Աշկէնը տախմըլից, չառաց քէ ադ էմ մարթըն է։

Ուր մալէ թագավօրը գասէ.— Արէ, քալ դդօ հաղաթէ։

Աշկէնըն ալ գասէ.— Տօռը գըղբիցիք, տուն պալէնքը դվիք ընծէ։

Տօռը փագիցէն, պալէնքը դվէն քալ դդէն։ Քալ դդան կըլօխը չարըր իդած իր բաշից հաղաթիլը։ Վազիրը գուհասգնօ յիրվանը ադ հաղիտաթը, գասէ.— Հանիցիք դէ տարիցէ։

Մարթը գասէ.— Քալ դդա, ասվա՞ր է հաղիտաթըդ, հաղաթէ։

Վաղէրը գասէ.— Ադ հաղիտաթը ադվար չէ։

Մարթն ալ գասէ.— Հաղաթէ։

Աշկէնը դասէ.— Ձա հա՞վդաք ընծէ,— գըհանէ դաշէն գըքլարէ կլօխին, գըձձաքը գըքըքըվա գասէ.— Ը՛սօ էմ մարթըն է, ըսօ ան վաղիրըն է, որ խաբար իդօր էմ դաղէն՝ «Աշկէնըդ չադվար է, ջամփունքը ձառւծ է», ըսօ ալ է ան վաղիրն ի, քի զէմ չուջըլինէն գնից։

Թագավօրը հասգըցավ, քի էր աշկէնը միղք չունա, դիղին գալնիցավ, ասաց.— Պանիցիք զվաղէրը, գաբիցիք չամբըշ ճըրէ մը յիդտէն, բադուռ-բադուռ թըղ ըննուի։

Մարթը, գընալը գըրթան իդօն։ Գնալը դարթա խամամը, գըլվացվա, գըրուխը գըփիխէ։ Յաթ

Մթնում է, վեզիրն ասում է.— Արի՛ ինձ մոտ։

Կինն ասում է.— Չե՛մ գա։

— Տղայիդ կմորթեմ։

— Մորթում ես՝ մորթի՛։

— Մյուսին էլ կմորթեմ։

—Մորթում ես՝ մորթի՛։

Վերջը երկուսին էլ մորթում է։

Կինն ուզում է դուրս գնալ, վեզիրին ասում է.— Ուզում ես մի պարան կապիր մեջքիցս։

Վեզիրը պարանը կապում է կնոջ մեջքին, կինը թողնում գնում է։ Կինը պարանը մեջքից արձակում է, փախչում գնում, ընկնում է լեռը։ Այնտեղ տեսնում է մի հովիվ։ Կինը հանում է շորերը, տալիս հովվին։ Ինքը հագնում է նրա շորերը, ուզում է մի մաքուր մորթի, հագցնում է գլխին, դառնում քաչալ տղա, գնում։

Շատ է գնում, քիչ է գնում, հանդիպում է մի արճարանի։ Մտնում է արճարանը, աշխատում։ Մի ամիս աշխատում է, տեսնում է, որ իր հոր արճարանն է։ Իր հայրն ու վեզիրը միշտ գալիս էին այդտեղ նստում։ Աղջիկը բան չի ասում իր հորը։ Հետո տեսնում է իր ամուսինն ու վեզիրն էլ գալիս նստում են այդ արճարանը։ Աղջիկը համբերում է, չի ասում, որ դա իր ամուսինն է։

Մի օր էլ թագավորն ասում է.— Արի՛ Քաչալ տղա, մի հեքիաթ պատմիր։

Աղջիկն ասում է.—Դուռը կողպեցեք, դրան բանալին տվեք ինձ։

Դուռը փակում են, բանալին տալիս են քաչալ տղային։ Քաչալ տղան ինչ որ գլխին եկել էր, սկսում է պատմել։ Վեզիրը հասկանում է, որ պատմությունն իր վրա է, ասում է.— Հանե՛ք սրան դուրս։

Ամուսինն ասում է.— Քաչա՛լ տղա, պատմությունդ լա՞վն է, շարունակի՛ր։

Վեզիրն ասում է.— Այդ պատմությունը լավը չէ։

Ամուսինն էլ ասում է.— Պատմի՛ր։

Աղջիկն ասում է.—Չե՞ք հավատում ինձ,—գդակը գլխից հանում է, մազերը թափում ու ասում,— Սա՛ իմ ամուսինն է, սա՛ էլ այն վեզիրն է, որ սուտ լուր տվեց հորս, թե «Աղջիկդ վատն է, ճանապարհը ծուռ է», սա՛ էլ այն վեզիրն է, որ երեխաներիս մորթեց։

Թագավորը հասկանում է, որ իր աղջիկը մեղք չունի, տեղից վեր է կենում, ասում.— Բռնեցե՛ք վեզիրներին, կապեցե՛ք կատաղած ջորու ետևից, թող կտոր-կտոր լինեն։

Մարդն ու կինը գնում են տուն։ Կինը գնում է բաղնիք, լողանում, շորերը փոխում։ Յոթ օր, յոթ

ուր, լուխ իրգօն թմպօգ գըքիշտին, քէֆ գինին, գըխընդուն։

Իրգընքին ինգուվ ըրք խընծօր. մէյը՝ հաղա-թօղին, միգալ ըրգօքը՝ մուրթ-գինգունը։

## 17 (17). ՂԸՍՄԱԹԻՆ ՉԸՋՓԱԽԷՐ

Դըգինօ, չըգինուր, թաքավօր մը, գընունօ դղա մը։ Աղ դղան ամըն օր ավշըլըղ գուրթօ լիալ։ Ուրմ օլէ գըդիսնօ դարվէշ մը։

Դարվէշը գօսէ.— Թաքավօրը դղօ, քէ ղըսմաթը չաղըրը գօ։

Դղան գուրթօ։ Շօդ գուրթօ, քէչ գուրթօ, գըդիսնօ չաղըր մը, չաղըրէն միչը տիղնած-փըռըփըրուած, հիվունտ օշկէն մը բառգած իր։ Ձադ օշկէնը չառնիլա հօմուր, դղան քիշից գառնօյը, գիխից լօշկընէն փօրը, իխօղ փախուվ։ Ջամփուքը դյուշումէշ իղուվ. «Խալիսիցու էմ տիղնած ղամաթէն»։

Անցուվ էփէլի վաղըտ մը, դղան գինա իգիք լադ գիդիրը լավշըլըղը։ Իշից, դիսավ չաղըրէն դիղը մինձ ղօնաղ մը գօ։ Ցադ ղօնաղէն լառչիվը օշկէն մը ձօղղընէն գուճրիր։ Դղան համան աշըղլամիշ իղուվ լօշկընէն տիմը, օսուց.— Օշկէն, թաս մը ճօր գուդօ՞ս ընծէ, շադ ձօրավ իմ։

— Գուդօմ, արէ ներքաէ,— օսուց օշկէնը։

Դղան ներքաէ անցուվ, ճօրը խմից թաթ-թաթ, ամա չըգարցուվ ուրթիլ, քուր գըդրից, գայնիցուվ մնուց։

Օշկէնը օսուց.— Ձվա՞ գայնուած իս, չա՞ գուզիս։

Դղան օսուց.— Գառնիքս ղէս։

Օշկէնը առչը աղըգին չըգարցուվ չուղուբ ուդիր, տաղիղա մը գայնիլին սօնղրա, օսուց.— Գառնիմ։

Ցադ վաղըտը դղան գառնէ զօշկէնը, բարաբար գուրթուն լէր դօդէն ղօնաղը։

Դղան օշկընէն գուհաղաթէ չարըր անցուած իր կլխին, ձիձաղիլում գուօսէ դէրվիշէն ըրէյցը՝ «Քէ ղըսմաթը չաղըրը գօ»։

Ցան վաղըտը օշկէնը գուօսէ.— Իս իմ ան չաղըրէն հիվունտ, տիղնած օշկէնը, յէփիր տօն տանօյը քիշիցիր, խիթիցիր փօրիս, տիղնած ճօրը ֆիտիցուվ, իս աղվօրցօ։ Տանդէն դօգն ալէ չահահիր իր՝ ձախիցունք, գիրունք զէ։ Ագար թը չըր ավդօ, իշխ տանգօն դիղը։

գիշեր թմբուկ են զարկում, քեֆ անում, ուրախանում։

Երկնքից երեք խնձոր ընկավ. մեկը՝ պատմողին, մյուս երկուսը՝ մարդ ու կնկան։

## 17 (17). ԲԱԽՏԻՑ ՉԵՍ ՓԱԽՉԻ

Լինում է, չի լինում, մի թագավոր է լինում, ունենում է մի տղա։ Այդ տղան ամեն օր գնում էր սարը՝ որսի։ Մի օր էլ մի դերվիշ է տեսնում։

Դերվիշն ասում է.— Թագավորի՛ տղա, քո բախտը վրանի մեջ է։

Տղան գնում է։ Շատ է գնում, քիչ է գնում, տեսնում է մի վրան, վրանի մեջ խիստ դեղնած մի հիվանդ աղջիկ է պառկած։ Որ այդ աղջկան շառնի, տղան քաշում է դանակը, կոխում աղջկա փորը, թողնում փախչում։ Ճամփին մտքի մեջ ասում է. «Ազատվեցի իմ դեղնած բախտի՜ց»։

Անցնում է բավական ժամանակ, տղան դարձյալ գալիս է այդ տեղերը որսի։ Նայում, տեսնում է վրանի տեղը մի մեծ պալատ կա։ Այդ պալատի առջև մի աղջիկ ծաղիկներն է ջրում։ Տղան իսկույն սիրահարվում է նրան, ասում.— Աղջի՛, մի թաս ջուր կտա՞ս ինձ, շատ ծարավ եմ։

— Կտա՛մ, արի ներս,— ասում է աղջիկը։

Տղան ներս է մտնում, ջուրը կաթ-կաթ խմում, բայց չի կարողանում գնալ, քար կտրում, կանգնում մնում է։

Աղջիկն ասում է.— Ինչու՞ ես կանգնել, ի՞նչ ես ուզում։

Տղան ասում է.— Ինձ կառնե՞ս։

Աղջիկը միանգամից չի կարողանում պատասխան տալ, մի պահ սպասելուց հետո, ասում է.— Կառնե՛մ։

Այդ ժամանակ տղան վերցնում է աղջկան, միասին գնում են իր հոր պալատը։

Տղան աղջկան պատմում է իր գլխի եկածը և ծիծաղելով հիշում դերվիշի խոսքերը՝ «քո բախտը վրանի մեջ է»։

Այդ ժամանակ աղջիկն ասում է.— Ե՛ս եմ այդ վրանի հիվանդ, դեղնած աղջիկը, երբ դու դանակը քաշեցիր, փորս խրեցիր, դեղնած ջրերը թափվեցին, ես լավացա։ Դանակի կոթն էլ աղամանդից էր՝ ծախեցինք կերանք։ Եթե չես հավատում, նայիր դանակի տեղը։

Դղան պուպուշըմըշ ընօ, քի գինա ադ աշկէնը էր ղումաթըն իր։

Յադ վախըտը յութը օր, յութը կիշիր թմպծգ, զուռնօ վիշիցէն, հարսնըկ իրէն։

Իրինք հասուն իրինց մըրազէն, մինք ալ հասնինք միր մըրազէն։

Տղան մտածում է, որ զարձյալ ա՛յդ աղջիկն էր իր բախտը։

Այդ ժամանակ յոթ օր, յոթ գիշեր թմբուկ, զուռնա են զարկում, հարսանիք անում։

Նրանք հասան իրենց մուրազին, մենք էլ հասնենք մեր մուրազին։

## 18 (18). ՈՒՂԻՐԹ ԽՈՒՍՈՒՂ ՄՕՐԹ

Ուղիրթ խուսուղ մարթաում գնա մարթօն գա̈սը.— Մուրթ, կնը՛, փարա կազամըշիղէյր։

Մօրթ ծը մը, ըրգա̈ք չարշայն գուրթը, գիլվա, տարտըգ գուկը. մա̈թա̈լիք մա̈ չըգար պիրիր. չունքի սէդ չըգէր խուսիր։

Գնա գընիխիքընօ, մարթօն գա̈սը.— Կնը՛, հա̈րա̈մութէյն իրէյր, սէդ խասը, փարա պիր։

Մօուրթ գուֆքա̈լա̈մըշգընը, գուրթը ցիրիգը լուսաւ, իրինց հա̈րէյադ տրա̈սնէյն դաւա̈ն հա̈րա̈մութէն ինէյլ, սաօւն իդըրաա գըբուֆդա։ Դօնդայր գիսծր գուկը ուդիլա ուդէյլ, տանին նըքսը մըննիլ իքան, գիշը տաօն իդըրաա մօուրթ մը գը, գա̈սը.— Զա̈՞ գա̈ննէյս հուա։

Մօուրթ գա̈սը.— Իպա հա̈րա̈մութէյն ինէյլ։

— Դօ,— գա̈սը դօնդայր,— տրզադ հա̈րա̈մութէյն չըննար։ Արը՛ թֆէնգ մը իլա̈ն ծայն մը ուդում, կնը՛ ջամփըգ դըրը, մուրթ սումըշիրէյր, դօն բադըը։

Մարթօն ծայն միլան թֆէնգ մը գուդը, գըխուրգիէգը։

Մօուրթ գուրթը ըրք-չուք սաաթ թառլան գիլվա։ Յադ դիղանք քառսօն հա̈րա̈մա գիցէյն։ Յադ դիդին ա̈ մինձ ջամփիէմ գասնա, գըպիժնըվա, ըրգը ջամփըգ գընը։ Հա̈րա̈մէյց գէյս մըգ ջամփիէ գըբիհը, միգալ գէյս՝ միգալ ջամփիէ գըբիհը, փուսաան յըմմը ջամփըք ըր բըր սանա՝ բըր սումըշգինայնգը։

Ադ հա̈րա̈մաք ուղիրթ խուսուղ մօրթ ըռասդ գուկուն, գա̈սին.— Թա̈սլիմ իղէյր։

Մուրթ գա̈սը.— Թա̈ալէյմ թֆէնգէյս ձուարք գը։

Գիշնա ձիօն, զծայն մա̈թա̈րէյս գառնը։ Հարամաք սրդիդ գըդսնաուն գը, գա̈սին.— Զաս մօուրթ միչվընէյս առնինք, բա̈գուձ ինպըրէյն դիէղ գըպռնը։

Քա̈նըզ փուսաան յառանչ քարվուան մը պասնա, յարսօն-քառսօն ճիրըսդունքով։ Ադ թուջա̈րը ըրգըզ գընը։ Հա̈րա̈մաք, նիր զ̊աբէյլ իլուձ մօուրթ գըղուրգին քարվուան գայնըցընիլա համուր։

## 18 (18). ՃՇՄԱՐՏԱԽՈՍ ՄԱՐԴԸ

Ճշմարտախոս մի մարդու կնիկ մարդուն ասում է.— Մա՛րդ, գնա՛, փող վաստակիր։

Մարդը մեկ-երկու օր գնում է շուկա, ման է գալիս, դատարկ վերադառնում. բան չի կարողանում բերել, որովհետև սուտ խոսել չգիտեր։

Կնիկը սրտնեղում է, մարդուն ասում.— Գնա՛, սուտ խոսիր, գողություն արա, փող բեր։

Մարդը ջղայնանում, գնում է օրը ցերեկով, իրենց հարուստ հարևանի տունն է մտնում, դռան եռևը թաքնվում։ Տանտերը կեսօրին գալիս է հաց ուտելու, դռնից ներս մտնելուն պես, տեսնում է դռան ետևը մի մարդ կա։ Ասում է.— Ի՞նչ ես կանգնել այստեղ։

Մարդն ասում է.— Եկել եմ գողության։

— Տղա՛,— ասում է տանտերը,— այդպես գողություն չի լինի։ Արի՛ քեզ տամ ձի ու հրացան, գնա՛ ճանապարհ կտրիր, մարդ կողոպտիր, տուն թալանիր։

Մարդուն մի ձի ու հրացան է տալիս, ուղարկում։

Մարդը գնում է երեք-չորս ժամ դաշտում ման է գալիս։ Այդտեղ քառասուն ավազակներ են լինում։ Այդտեղից մի մեծ ճանապարհ է անցնում, բաժանվում երկու ճամփա է դառնում։ Ավազակների կեսը մի ճանապարհն է բռնած լինում, մյուս կեսը՝ մյուս ճանապարհը, որպեսզի փոստը որ ճամփից որ անցնի՝ կողոպտեն։

Ավազակները հանդիպում են ճիշտ խոսող մարդուն, ասում.— Հանձնվի՛ր։

Մարդն ասում է.— Հանձնվելը հրացանիս ծայրին է։

Ձիուց իջնում է, ձին դարձնում է դիրք։ Ավազակները նրան շատ սրտոտ են կարծում ու ասում.— Այս մարդուն մեզ հետ վերցնենք, մեր բացակա ընկերոջ տեղը կբռնի։

Փոստի գալուց առաջ մի քարավան է անցնում, երեսուն-քառասուն ջորիներով բեռնված։ Դա վաճառականի ապրանք է լինում։ Ավազակները նոր ընդունած մարդուն ուղարկում են, որ քարավանը կանգնեցնի։

Ադ մօւրթ գուրթը։

— Գա̈նը՛,— գա̈ռը սալ քարվանբաշըն,— միք քառսօն հիկուալիք ոգծիդ բըր սումըշգինինք։

— Տöն,— գա̈ռը քարվանբաշըն,— ուղիրթ խուսուղ մուրթ գուրծուս։ Իս թանաքինով գէհիրը միդր գունէյմ, տöն լադ միդրին մա̈ւդիր։

Հա̈րա̈մաք գուկուն ղադ քարվուան գըսումըշգինին, ղա̈թըրչայց ծառ ու վըդդը գըգաբին։ Միդրը գըդսնօն, գընողէյն ղադ միէդրը ուդիլ։ Ուղիրթ խուսուղ մօւրթ գա̈ռը.— Ինդրվա̈ւնք, ադ միէդրը գէհրըլուայր, մա̈ւդաքըը։

Հա̈րա̈մաք գա̈սին.— Տöն տառ նիր իգիր, գըմի՞գ բըր խափէյս։ Ա̈րգըք, դդաք, գա̈սիր ծուառ ու վըդդը գա̈րիք, ղադ միդրն ա̈ միք ուդիք։

Տրգադ ա̈լ գինին։ Դօս-դսնըհէյնկ դաջիջա սունջա ալուա հա̈րա̈մաք գըսա̈դըդէյն։ Նիր իգադ մօրթ չայըր գինը, վըդը, ծուառ գըքա̈գը, ղադ ըողիէ ղալուա գըպառնը ճիրըոդöնց իրվան, իդöն գըդսնա։ Կիշիրու ղառառ գըգարդը։

— Ո՞ւվ իս,— գա̈ռը,— գնա։

— Պուց ղառառ, գնա̈գ, էիս իմ,— գա̈ռը։

Տառա գըպանը, գիշը, գըդսնա, քի մօւրթ ճիրըսդիրու ըողըգ պիրöձիր։ Խնդա̈լով գպիռնայր իդöն գըմցցընին, ծայն ու գթֆընգն ա̈լը գըդանէյն, հա̈րէսդ սրա̈նէյն լիդ դուդուն, իրիք ա̈լը հա̈նկէյադ ումըր մը դանցընին։

Այդ մարդը գնում է։

— Կանգնի՛ր,— ասում է քարավանապետին,— մենք քառասուն հոգի ենք, ձեզ պիտի կողոպտենք։

— Դու,— ասում է քարավանապետը,— ճըշմարտախոս մարդ ես երևում։ Ես թիթեղյա ամաններով թունավորված մեղր ունեմ, դու այդ մեղրից չո՛ւտես։

Ավազակները գալիս, կողոպտում են քարավանը, ջորեպանների ձեռ ու ոտը կապում։ Մեղրը տեսնում են, նստում են այդ մեղրը ուտելու։ Ճշմարտախոս մարդն ասում է.— Ընկերնե՛ր, այդ մեղրը թունավորված է, մի՛ ուտեք։

Ավազակներն ասում են.— Դու դեռ նոր ես եկել, մեզ պիտի խաբե՞ս։ Եկե՛ք, տղաներ, սրա ձեռ ու ոտը կապենք, մեղրն էլ մենք ուտենք։

Այդպես էլ անում են։— Տաս-տասնհինգ րոպե հետո բոլոր ավազակները մեռնում են։ Նորեկ մարդը մի կերպ ձեռ ու ոտն արձակում է, այդ ամբողջ ունեցվածքը բարձում է ջորիների վրա, տանում տուն։ Գիշերով գալիս դուռը խփում է։

— Ո՞վ ես,— ասում է կնիկը։

— Դուռը բաց, կնի՛կ, ես եմ,— ասում է։

Կնիկը դուռը բաց է անում, տեսնում, որ մարդը ջորիներով հարստություն է բերել։ Ուրախությամբ բեռները ներս են տանում, ձին ու հրացանն էլ տանում, հարուստ հարևանին են վերադարձնում, իրենք էլ հանգիստ կյանք վայելում։

## 19 (19). ՀՈ̈ԻՐ ՓԻՐՈ̈ԻԴԸ, ՀԻՐԷՆ ՄԻՋԸ ԳԻՑՆԱ

Գօ, չըգօ, մուրթ մը։ Ան շարաբ գըձա̈խէր։ Ամին ուր գիւվիր գըգինչիր.— Շարաբէս իրի՛սը, ով ըր գըպա̈նու հա̈րը, ան գիյնա հիրէն միջը։

Ամըն ուր ուըրղադ գըգինչիր, շարաբ գըձա̈խիր։ Ուր մը հասավ թա̈քա̈վիրէն զ̈ունաղէն տիմը, գինչից.— Շարաբէս իրի՛սը, ով ըր գըպանու հա̈րը, ան գիյնա հիրէն միջը։

Թա̈քա̈վա̈րը ադ ծանը լսից, ա̈սուց.— Հա̈ւս ա̈րէ, շարաբ ձա̈խա̈ւղ։

Թա̈քա̈վա̈րը հա̈նից բա̈խշէշ իդöր էր, ա̈սուց. — Շա̈՛դ ա̈բրէս, ղղաս ադվա̈ր զօսիս, կնó, գինչէ։

Վա̈զիրը ղադ դիսավ, հöրը բա̈խշէշ իդöր շարաբ ձախօղէն, հիչ պուն չա̈սուց, լէր մըդքէն միջը ջ̈ըսկանմըշ իղավ, ա̈սուց էնքյէնքը. «Ձա̈ւց գընօ, իս վա̈զիր ընօմ, թա̈քա̈վա̈րը ընծէ բա̈խշէշ չուդօ, ադ շարաբ ձա̈խա̈ւղէն ուդօ, իշի, չա՞ պիրիմ լա̈նա̈ւր կլöխը»։

Վա̈զիրը կնա̈ւց թա̈քա̈վա̈ւրէն քովը, ա̈սուց.— Թա̈քա̈վա̈ր աբրէս, տօն ադ շարաբ ձա̈խա̈ւղ մար-

## (19 (19). ՀՈՐ ՓՈՐՈՂԸ, ՀՈՐԸ ԿԸՆԿՆԻ

Կար, չկար, մի մարդ կար։ Նա օշարակ էր ծախում։ Ամեն օր ման էր գալիս ու կանչում.— Օշարակիս երե՞սը, ով որ բացի հորը, նա էլ կընկնի մեջը։

Ամեն օր այդպես կանչում, օշարակ էր ծախում։ Մի օր էլ հասավ թագավորի պալատի դեմը, կանչեց.— Օշարակիս երե՞սը, ով որ բացի հորը, նա էլ կընկնի մեջը։

Թագավորն այդ ձայնը լսեց, ասաց.— Այստե՛ղ արի, օշարակ ծախող։

Թագավորը հանեց նրան նվեր տվեց, ասաց.— Շա՜տ ապրե՛ս, տղաս, լավ ես ասում, գնա՛ կանչի։

Վեզիրը տեսավ, որ թագավորը նվեր տվեց, օշարակ ծախողին, ոչ մի բան չասաց, բայց մըտքում նախանձեց, ինքնիրեն ասաց. «Ո՞նց կլինի, ես վեզիր լինեմ, թագավորն ինձ նվեր չտա, այդ օշարակ վաճառողին տա, տես, ի՞նչ բերեմ նրա գլուխը»։

Վեզիրը գնաց թագավորի մոտ, ասաց.— Թագավորն ապրի՛, դու այդ օշարակ ծախող մարդուն

թօն փարա գվէր, ըմմօ ան ա̈սուց՝ թա̈քա̈վա̈րէն պիրանը հիդդած է։

Իլված օրը շարար ձա̈խա̈ղ մարթը իդիք, թա̈քա̈վա̈րը գինչից գէ, ա̈սուց.— Գայնէ լադ գիդը, քէ մա̈կաար բըր օդօմ։ Ջաս մա̈կոըբը գըդա̈նէս մասմանա, գջուգուբը դըպիրիս։

Շարար ձա̈խա̈ղ մարթը մա̈կաարը առավ, գա̈մուց-գա̈մուց քիլիլը բաշլից։ Վա̈զիրը հա̈սավ գէ, ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րը չա՞ իդՕր քէ։

Շարար ձա̈խա̈ղ մարթը ա̈սուց.— Թա̈քա̈վա̈րը մա̈կաաբ իդՕր ընծէ։

Վա̈զիրը ա̈սուց.— Ջա՞ դըրաք։

— Մասմանէյն մինձօն իրմինը մինձ բախչէշ բըր առնիմ, ադա̈ր հա̈մար։

Վա̈զիրը ա̈սուց.— Տօն կիդլի՞ս գդիդը։

Շարար ձա̈խա̈ղ մարթը ա̈սուց.— Ջէ։

Վա̈զիրը ա̈սուց.— ՏՕ՛ր ընծէ գմա̈քոըբը, իս օրթում առնիմ գբա̈խչէշը, պիրիմ քէ։

Շարար ձա̈խա̈ղ մարթը մա̈կոըբը իդէր վա̈զիրէն։ Վա̈զիրը կնա̈ց մասմանան, մասմանէն մինձօն իդՕր գմա̈կոըբը, ան գարթուց գէ։ Համան, պռնիցէն գվա̈զիրը, սարինէն քփրթած բըզընծէն մինչը քարիցէն։ Վա̈զիրը սաբին տարծավ։

Շարար ձա̈խա̈ղ մարթը գահիյիր, քէ վա̈զէրը բա̈խչէշ բըր պիրէ։ Վա̈զէրը չիգիք։ Շարար ձա̈խա̈ղ մարթը շա̈դ հիյիլին սօրա,ի գօն կնա̈ց։

Իլված օրը գինա շարար ձա̈խա̈ղ մարթը թա̈քա̈վիրէն գ̊ունադէն տիմին գօնցնիր, գագըռչիր.— Շարարէս իրի՞սը, ավըր գըպանտ հա̈րը, ան գիյնա հիրէն մինչը։

Թա̈քա̈վա̈րը լսից գծանը, շա̈դ ա̈նչէդ գինչից գէ։ Շարար ձա̈խա̈ղ մարթը կնա̈ց թա̈քա̈վիրէն քովը, ա̈սուց.— Շա̈դ աբրէս, թա̈քա̈վա̈՛ր, չա՞ գօսիս։

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Իրէկ մա̈կոըբ մը գվա քէ, չա՞ հինիցիր գէ։

Շարար ձա̈խա̈ղ մարթը ա̈սուց.— Թա̈քա̈վա̈՛րն ա̈բրուծ, վա̈զէրը մա̈կոըբը յիրմինիս առավ, ա̈սուց ընծէ. «Իս գօրթում, բախչէշը գըպիրիմ քէ, հոս գայնէ, իս հօսու գակում». կնա̈ց, չիգիկ։ Իս ա̈լէ շա̈դ հիյիցօ, քէչ հիյիցօ, դիսօ վա̈զէրը չիգիկ. կացա իդօն։ Քանգադ պուն իղուվ։

Թա̈քա̈վա̈րը գալաք պոնը հասցըցուվ, ա̈սուց.— Շա̈՞դ աբրէս, շարար ձա̈խա̈ղ, քէ Օմըրը էրգան թըղ ընհօ, քէ խուսած խուսքիրը շա̈դ ա̈ղա̈րթ ին։

Թա̈քա̈վա̈րը հանից շա̈դ մինձ բախշէշ իդՕր շարար ձա̈խա̈ղէն։

փող տվեցիր, բայց նա ասաց՝ թագավորի բերանը հոտած է։

Հաջորդ օրը օշարակ ծախող մարդը եկավ, թագավորը կանչեց նրան, ասաց.— Կանգնի՛ր այդտեղ, քեզ մի նամակ պիտի տամ։ Այս նամակը կտանես օճառի գործարան, պատասխանը կբերես։

Օշարակ ծախող մարդը նամակը վերցրեց, կամաց-կամաց սկսեց քայլել։ Վեզիրը հասավ նրան, ասաց.— Թագավորը քեզ ի՞նչ տվեց։

Օշարակ ծախող մարդն ասաց.— Թագավորը նամակ տվեց ինձ։

Վեզիրն ասաց.— Ի՞նչի համար։

— Օճառի գործարանի մեծից խոշոր նվեր պիտի ստանամ, դրա համար։

Վեզիրն ասաց.— Դու տեղը գիտե՞ս։

Օշարակ ծախող մարդն ասաց.— Չէ՛։

Վեզիրն ասաց.— Տո՛ւր ինձ նամակը, ես գնամ նվերը ստանամ, բերեմ տամ քեզ։

Օշարակ ծախող մարդը նամակը տվեց վեզիրին։ Վեզիրը գնաց օճառի գործարան, նամակը տվեց գործարանի մեծին, նա կարդաց։ Անմիջապես բռնեցին վեզիրին, օճառ եռացող պղնձի մեջ գցեցին։ Վեզիրն օճառ դարձավ։

Օշարակ ծախող մարդը սպասում էր, որ վեզիրը նվերը պիտի բերի։ Վեզիրը չեկավ։ Օշարակ ծախող մարդը շատ սպասելուց հետո, թողեց տուն գնաց։

Հաջորդ օրը օշարակ ծախող մարդը նորից է անցնում թագավորի պալատի առաջից ու կանչում.
— Օշարակիս երե՜սը, ով որ բացի հորը, նա էլ կընկնի հորի մեջը։

Թագավորը ձայնը լսեց, շտապ կանչեց նրան։ Օշարակ ծախող մարդը գնաց թագավորի մոտ ու հարցրեց.— Շատ ապրես, թագավո՛ր, ի՞նչ ես ուզում։

Թագավորն ասաց.— Երեկ քեզ մի նամակ տվեցի, ի՞նչ արեցիր։

Օշարակ ծախող մարդն ասաց.— Թագավորն ապրած կենա, վեզիրը նամակը վերցրեց ինձնից, ասաց. «Ես կգնամ, նվերը կբերեմ քեզ, դու այստեղ կանգնիր, ես հիմա կգամ». գնաց ու չեկավ։ Ես էլ շատ սպասեցի, քիչ սպասեցի, տեսա վեզիրը չի գալիս, գնացի տուն։ Այդքան բան եղավ։

Թագավորն ամեն ինչ հասկացավ, ասաց.— Շա՜տ ապրես, օշարակ ծախող, թող կյանքդ երկար լինի, քո ասած խոսքերը շատ ճիշտ են։

Թագավորը հանեց շատ մեծ նվեր տվեց օշարակ ծախողին։

Դըգինա, չըգինար, ըրք դըղ գըգինան։ Ա̈ղա̈նք գուրթուն դլար դուրրաթ, յանդիէղ գըպա̈նայն։ Յանդիէղ մէյդօն մը գիր, ամըն ուր քէյֆ գինայնիրըր։ Ա̈նից միէ գա̈սը.— Մի̈ք իլան ուրթանք քէյֆ ինէյը։

Յանդիէղ թա̈քա̈վէյրր գուկը։ Ադ դղան գա̈սը. — Թա̈քա̈վէյր գա̈չկէյն թը գադիր ընծը. շիդ աղվիր գըննիր։

Միգայն ա գա̈սը.— Էյէր թա̈քա̈վէրէյն խազնան թը գըմըննայմիր, նամ̊դա̈ր դա̈րայմ գդիր շալգայմ, ուրթայիր, ավիլա աղվա̈ր գըննիր։

Ու̈չա̈նչէյն էլը գա̈սը.— Ասդուծ թըղ ուդը։

Թա̈քա̈վէյր զադ ալոա գըլըսը, գուրթը իդՕն, գըրքմընն է գըգինչը, գա̈սէ.— Տա̈ք յանդիէղ չա̊ գախոսայքիր:

— Իս գուա̈սայմ, թա̈քա̈վէյր գէյր ա̈չկայն ընծը թը գադը, շիդ աղվիր գըննը,— գա̈սը առչը դղան։

Իքընչը դղան գա̈սը.— Իս էլը գուասայմ թա̈քա̈վիրէյն խազնան, թը գըմըննէյմ, նամ̊դա̈ր գըշա̈լգիմ գդիր թը գըդանէյմ, գըհա աղվիր գըննը։

— Իս ա̈լը ա̈ցա,— գա̈սը իչընջը դղան,— Ասդուծ թըղ ուդը:

Թա̈քա̈վէյր զա̈չկէյն առչը դղայն գուդը։ Իքընչէյն ա̈լը նամ̊դա̈ր գարը դանա քանգան գդիր, գուդը։ Իչընջէյն ա̈լը սիլլուամ գըզարգը։

Ա̈դ ըրքմընն ա̈ ջամպըք ինգուն։

Թա̈քա̈վէր էյր մարթայց կա̈ղտաք գըբընդը, գա̈սը, քի ուրթուն տարդըգ ուրթաղ մարթօն կլաուխ թըռցընին։

Ծամփիէ գդիր շա̈լգՕղ գըտատրինը, գա̈սը տայ տարդըգ ուրթօղը.— Մըըշըմա̈ տՕն շալգը, իս տա̈տրիցա։

Ախպօր լարդըմիլա հա̈մուր ըչընչը դղան գպայտ գանը լէյր գոնիէ, էյնքա̈լը տարդըգ գուրթը։ Թա̈քա̈վիրէն մարթուաք գըհասնէյն, տարդըգ ուրթուղ մարթօն կլաուխ գըթոցնին, փարան մնից շալգողէյն։

Շիդ գուրթու, քէյչ գուրթուն. ճայր մը գըհասնէյն։ Յա̈չկնէյն ծառը պոնօղ դա̈սը.— Պոնէ լըսը ա̈չկընէյն ծառօյ, իս ուրթամ ջամպըք պա̈տվէյմ։ Գուրթը ջամպըք պա̈տվէյլը ճայր գինա, գըխախդա։ Ցադ րիչըմը, ա̈չկայն ու փարան գըմընը իչընջը՝ բզդադ դղայն։

Աս դղան կնից հիռօ քա̈ղիէք մը, յանդիէղ խուն մը իպուց, ուկՕղ-ուրթՕղ բալէյշ գըգիրցընիր, խըմցընիր, գըբաոգըցընիր։

Ու̈ր մա̈լէ թա̈քա̈վէյր թա̈րդիլը զ̊ըլա̈ֆա̈թու



Լինում է, չի լինում, երեք տղա է լինում։ Գնում են օտար աշխարհ աշխատելու։ Այնտեղ մի հրապարակ կար, որտեղ ամեն օր քեֆ էին անում։ Նրանցից մեկն ասում է.— Մենք էլ գնանք այնտեղ քեֆ անենք։

Թագավորը գալիս, նստում է այդտեղ։ Այդ նույն տղան ասում է.— Եթե թագավորն իր աղջիկն ինձ տար, շատ լավ կլիներ։

Մյուսն ասում է.— Եթե թագավորի գանձատունը մտնեմ, ինչքան փող կարողանամ վերցնեմ, գնամ, ավելի լավ կլիներ։

Երրորդն ասում է.— Աստվա՛ծ թող տա։

Թագավորն այդ բոլորը լսում է, գնում է տուն, երեքին էլ կանչում է, ասում.— Դուք այնտեղ ի՞նչ էիք խոսում։

— Ես ասում էի, եթե թագավորն իր աղջիկն ինձ տար, շատ լավ կլիներ,— ասում է առաջին տղան։

Երկրորդ տղան ասում է.— Ես էլ ասում էի, թե մտնեի թագավորի գանձատունը, ինչքան կարողանայի շալակել, փող տանել, ավելի լավ կլիներ։

— Ես էլ ասացի,— ասում է երրորդը,— Աստվա՛ծ թող տա։

Թագավորն աղջիկը տալիս է առաջին տղային, երկրորդին էլ ինչքան փող կարողանում է վերցնել, տալիս է։ Երրորդին էլ մի ապտակ է տալիս։

Այդ երեքն էլ ճանապարհ են ընկնում։

Թագավորն իր մարդկանց գաղտնի կարգադրում է, ասում, որ գնան դատարկ գնացող մարդու գլուխը թռցնեն։

Ճանապարհին, փող շալակողը հոգնում է, դատարկ գնացողին ասում.— Ես հոգնեցի, մի քիչ էլ դու շալակիր։

Եղբորն օգնելու համար երրորդ տղան երկրորդի բեռն է վերցնում, իր թիկունքին, ինքն էլ դատարկ գնում։ Թագավորի մարդիկ հասնում են, դատարկ գնացողի գլուխը կտրում, փողը մնում է շալակողին։

Շատ են գնում, քիչ են գնում, մի ջրի են հասնում։ Աղջկա ձեռքը բռնած տղան ասում է.— Աղջըկա ձեռքից բռնի, ես գնամ ճամփա գտնեմ։

Գնում է ճամփան փնտրելու, ընկնում է ջուրը, խեղդվում։ Այդպես, փողն ու աղջիկը մնում են երրորդ՝ փոքր տղային։

Այս տղան գնում է մի հեռու քաղաք, մի իջևանատուն է բաց անում, եկող-գնացողին ձրի կերցնում, խմցնում ու քնացնում է։

Մի օր էլ թագավորը ծպտված գալիս է այդ

իգիք յող խունը, գիրու, խըմից, բաղիցու, իլու. ա̈սուց.— Զա՞ բըր ուգօմ։

— Իս փարա չÖգիմ խÖնիս բալայշը.— ա̈սուց ուդ դղան։

— Զիա՞ համար բալայշը.— հարցույց Թա̈քա̈վէյր։

Դղան ա̈սուց.— Մինք ըրք միէյախիքիր. կա̈ցուք Թա̈քա̈վիրէյն քÖվ. միյէս՝ դա̈շկույն ուղիցուք. միգուալիս՝ խապնա վիրըըցուք, իս ա̈ըը ացա՝ ատուած գուդը։ Թա̈քա̈վէր դա̈շկույն միր մինձ ախպօր իդէյր, որթանջայն ա̈ըը խապնա իդէյր, ընծ ա̈ըը սիլլուած զարգից։ Ինգուք ջամպըք։ Փարան շա̈յգÖղ տատրիցու, շալիէ ընծը իդէյր։ Թա̈քա̈վիրէյն մարթուաք իգէյն. տարդըգ ուրթօղ ըսբանիցէյն։ Շիդ կացուք, քէյչ կա̈ցուք. ճայր մը իգուք։ Մինձ ախպուարիս ա̈սուց. «Պոնը յա̈շկըն էյն ծառօց, ուրթում գա̈չըգ պառվէյմ»։ Կնից ճայր ինգու, խախդիցու։ Իս ա̈ըը գա̈շկայն ու գիարան առու, իգա յա̈ողիէղ. բա̈լէյշ խուն պացա։

Թա̈քա̈վէյր ա̈սուց.— Դիմա̈ք աս փարան Թա̈քա̈վիրը՞ փարուայը, ա̈յա̈ր դայր փարա, թը գըբիդա քիզ, ա̈ըը, դուրգիմ։

— Տօն կիդիս,— ա̈սուց դղան։

Յադ վա̈ղըթը Թա̈քա̈վէյր յօթ ուր, յօթ իրգÖն թմպÖզ, դունա քիշդըցէյց. հարսնաք իրէյն։

Դարոսը մահրումայն ա̈լէ։

իշխանատունը ուտում, խմում, քնում և ասում.— Ի՞նչ պետք է տամ։

— Ես փող չեմ ուզում, իշխանս ձրի է,— ասում է տղան։

— Ինչի՞ համար է ձրի,— հարցնում է թագավորը։

Տղան ասում է.— Մենք երեք եղբայր էինք, գնացինք թագավորի մոտ. մեկը՝ աղջիկն ուզեց, մյուսը՝ գանձը վերցրեց, ես էլ ասացի՝ աստված թող տա։ Թագավորն աղջկան մեր մեծ եղբորը տվեց, միջնեկին էլ գանձ տվեց, ինձ էլ մի ապտակ տվեց։ Ընկանք ճանապարհ։ Փող շալակողը հոգնեց, բեռը հանձնեց ինձ։ Թագավորի մարդիկ հասան, դատարկ գնացողին սպանեցին։ Շատ գնացինք, քիչ գնացինք, մի ջրի հանդիպեցինք։ Մեծ եղբայրս ասաց. «Աղջկա ձեռքից բռնի, ես գնամ ճանապարհ փնտրեմ»։ Գնաց, ջուրն ընկավ, խեղդվեց։ Ես էլ փողն ու աղջկան վերցրեցի, եկա այստեղ, ձրի իշխանատուն բացեցի։

Թագավորն ասաց.— Ուրեմն այս փողը թագավորի՞ փող է, եթե ուրիշ փողի կարիք ունենաս, ասա, ուղարկեմ։

— Դու գիտես,— ասաց տղան։

Այդ ժամանակ թագավորը յոթ օր, յոթ գիշեր թմբուկ, զուռնա զարկել տվեց, հարսանիք արեց։

Տարոսը զրկվածներին և։

## 21 (21), ԹԱ̈ՔԱ̈ՎÖՒՐԷՆ ԸՐՔ ԽԼÖՒՔ ԴՂԱՔԸ

Թա̈քա̈վա̈ր մը գունա ըրք դղօ։ Դղաքը մինձուձ ին։ Թա̈քա̈վա̈րը դա̈շիմըշ իլուվ էնքյէնք, գինչից մինձ դղան ա̈սուց.— Օղլու՛մ, իս հա̈լվա̈րիցա, գուգիմ տÖն լէմ դիղը Թա̈քա̈վա̈ր ըննուս։

— Շա՛դ աբրէս, Թա̈քա̈վա̈ր յադա,— ա̈սուց դղան, իս ա̈վիլա լա̈յը՞ գուդխնօմ յէմ օրթանջը ախպարը։

Թա̈քա̈վա̈րը նեղացուվ, անա̈ր համուր քէ դղան չըլսից զէ, ա̈սուց.— Վիրցէ՛ տիմիս, կնօ։

Դղան կնա̈ց։

Համօ Թա̈քա̈վա̈րը գինչից օրթանջը դղան։ Իկիք օրթանջը դղան, ա̈սուց.— Շա՛դ ա̈բրէս, Թա̈քա̈վա̈ր յադա, խա̈դիր իմ։

Թա̈քա̈վա̈րը չուցըր մինձ ախպուրը ա̈սուձ իր, օրթանջը դղէն ա̈լէ ա̈սուց։

Օրթանջը դղան ջուղուր իդÖր.— Շա՛դ ա̈բրէս, Թա̈քա̈վա̈ր յադա, էմ բզդա̈գ ախպարը լայը՞ դուդխնօմ։

Թա̈քա̈վա̈րը նիղացուվ, զբըզդա̈գ դղան գինչից, չուցըր ա̈սուձ իր էր մինձ ախպըրդա̈ցը, բզգուն ա̈լէ ա̈սուց։

Բզդա̈գ դղան ա̈լէ լայը՞ դիսուվ զէր մինձ ախպըրդաքը։

## 21 (21). ԹԱԳԱՎՈՐԻ ԵՐԵՔ ԽԵԼՈՔ ՏՂԱՆԵՐԸ

Մի թագավոր երեք տղա ուներ։ Տղաները մեծացել էին։ Թագավորն ինքն իրեն մտածեց, կանչեց մեծ տղային, ասաց.— Տղա՛ս, ես ծերացա, ուզում եմ դու իմ տեղը թագավոր լինես։

— Շա՛տ ապրես, թագավոր հայր,— ասաց տղան,— ես ավելի արժանի եմ գտնում իմ միջնեկ եղբորը։

Թագավորը նեղացավ, որ տղան իրեն չլսեց, ասաց.— Վե՛ր կաց դեմիցս, հեռացի՛ր։

Տղան գնաց։

Հիմա թագավորը կանչեց միջնեկ տղային։ Միջնեկ տղան եկավ, ասաց.— Շա՛տ ապրես, թագավոր հայր, պատրա՛ստ եմ։

Թագավորն ինչոր մեծ եղբորն ասել էր, նույնը միջնեկ տղային ասաց։

Միջնեկ տղան պատասխանեց.— Շա՛տ ապրես, թագավոր հայր, իմ փոքր եղբորն եմ արժանի տեսնում։

Թագավորը նեղացավ, փոքր տղային կանչեց, ինչ ասել էր մեծ եղբայրներին, կրտսերին էլ նույնն ասաց։

Փոքր տղան էլ արժանի գտավ իր մեծ եղբայրներին։

Թա̈քա̈վա̈րը բզդա̈գ գղան ա̈լէ դուրգից:

Երք ախպարը գա̈չիմըշ իզուն.— Աս չա̈՞ պուն է, միր գուզը միր իրվան նէխիկիցում. ուրթանք դա̈ղէն քումը. աֆրըղ՞ ուզինք:

Երք ախպարը բարաբուր կա̈ցէն Թա̈քա̈վիրէն քումը. ա̈ցէն.— Ծա̈՞գ արրէս, Թա̈քա̈վա̈ր յազա. մէ աֆա̈րÖ:

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց ատյ գղաքը.— Ծէ, աֆ իրա, ամա տÖք չէմ խուզին րըր hիվընա̈ք:

Երք գղան ա̈ցէն.— Յազա̈, մէ նասահատ գÖր:

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց ատյ գղաքը.— Վիլուձ ջամպընէա մըղաք ըրրիք, միմալէ՝ առունց ծէ մուրթ պուն ա̈սիլ մը՛խուսաք:

Գղաքը բաքէն դա̈ղէն զծառը, իլուն կա̈ցէն: Երք ախպարը բարաբուր ինգուն ջամպունք: Ջամպուքը դուրթէրին մինձ ախպարը ա̈սուց.— Öղդ մը անցուձ է յա̈ռա̈ր՝ թափալ է:

Օրթանչը ախպարը ա̈սուց.— Ըղղէն պիռը միզ տէն ըռով է, միզ տէն՝ իզ:

Բզդա̈գ ախպարը ա̈սուց.— Ըղղէն միզ աշքը գայր է, ըրգը ագռաքը չիզօ:

Ծա̈գ կա̈ցէն, քէչ կա̈ցէն, արապ մարթ մը գիտուն: Արապը ա̈սուց.— Ախպըրդա̈ք, Öղդիս գորսուվուձ է, գիտա̈՞ք գէ:

Մինձ ախպարը ա̈սուց.— Öղդիտ թափա̈՞լ իր:

Արապը ա̈սուց.— hա̈:

Օրթանչը ախպարը ա̈սուց.— Քէ Öղդէն պիռը ըռով իլան ի՞զ իր:

— Հա̈, hա̈:

Բզդա̈գ ախպարը ա̈սուց.— Քէ Öղդէն միզ աշքը գա̈՞յր իր, ըրգը ագռաքը չիզօ՞:

Արապը շա̈դ խընդուց, ա̈սուց.— Հա̈, hա̈, hա̈, յօ՞ գօ էմ Öղդը:

Երք ախպարը ա̈ցէն.— Մինք իչում չիգիտունք գէ:

Արապը նիղացուվ, ա̈սուց.— ՏÖք hա̈րա̈մա̈ք իք, զէմ Öղդը գուզիմ ծինէ:

— Մինք hա̈րա̈մա̈ք չինք,— ա̈ցէն ախպըրդաքը:

Ալայը իլուն կա̈ցէն քա̈ղա̈ք: Արապը կընա̈ց hÖքա̈մա̈տը, խամազից գիրինք:

Ջըրք ախպարն ա̈լէ hÖքա̈մա̈տը պանից, ինգուն մըhա̈քա̈մա̈ն:

Մըhա̈քա̈մէն ռայիզը hարցÖց ըրք ախպարը.— ՏÖք չա̈՞ գիտաք, չու՞ց գուկիդանուք զադ Öղդը:

Մինձ ախպարը ա̈սուց.— Մինք իչում Öղդ չիգիտունք. ամմա Öղդը քիլա̈ձ վախտը իզին բալլա իր թա̈փալ ըննիլը:

Օրթանչա ախպարը ա̈սուց.— Ջամպէն միզ տէն ջանչ գուպա̈նիր, միզալ տէն՝ մրճօմ: Ցա̈-

Թագավորը փոքր տղային էլ դուրս արեց:

Երեք եղբայրները մտածեցին.— Սա ի՞նչ բան է, մեր հայրը մեզանից նեղացավ, գնանք հայրիկի մոտ, ներողություն խնդրենք:

Երեք եղբայրները միասին գնացին թագավորի մոտ, ասացին.— Շա՜տ ապրես, թագավոր հայր, մեզ ների՛ր:

Թագավորն ասաց տղաներին.— Ձեզ ներեցի, բայց դուք իմ հոգուց պիտի հեռանաք:

Երեք տղաներն ասացին.— Հա՛յր, մեզ խորհուրդ տուր:

Թագավորն ասաց տղաներին.— Գնացած ճամփաներիդ ուշադիր նայեք, մեկ էլ՝ առանց ձեզ բան հարցնելու մի՛ խոսեք:

Տղաները համբուրեցին հոր ձեռքը, ելան գնացին: Երեք եղբայրներն իրար հետ ընկան ճանապարհ: Ճանապարհին մեծ եղբայրն ասաց.— Մի ուղտ է անցել այստեղից՝ կաղ է:

Միջնեկ եղբայրն ասաց.— Ուղտի մի կողմի բեռը մեղր է, մյուսը՝ յուղ:

Փոքր եղբայրն ասաց.— Ուղտի մի աչքը կույր է, երկու ատամները չկան:

Շատ գնացին, քիչ գնացին, մի արաբ մարդ տեսան: Արաբն ասաց.— Եղբայրնե՛ր, ուղտս կորել է, չե՞ք տեսել:

Մեծ եղբայրն ասաց.— Ուղտդ կա՞ղ էր:

Արաբն ասաց.— Այո՛:

Միջնեկ եղբայրն ասաց.— Ուղտիդ բեռը մեղր ու յո՞ւղ էր:

— Այո՛, այո՛:

Փոքր եղբայրն ասաց.— Քո ուղտի մի աչքը կո՞ւյր էր, երկու ատամները չկա՞ն:

Արաբը շատ ուրախացավ, ասաց.—Այո՛, այո՛, այո՛. ո՞ւր է իմ ուղտը:

Երեք եղբայրներն ասացին.— Մենք մեր աչքով չենք տեսել:

Արաբը նեղացավ, ասաց.— Դուք ավազակներ եք, իմ ուղտը ձեզանից եմ ուզում:

— Մենք ավազակ չենք,— ասացին եղբայրները:

Բոլորն ելան գնացին քաղաք: Արաբը գնաց իշխանության մոտ, մատնեց նրանց:

Երեք եղբորն էլ իշխանությունը բռնեց, ընկան դատարան:

Դատավորը հարցրեց երեք եղբորը.— Դուք ի՞նչ տեսաք, որտե՞ղից գիտեք այդ ուղտը:

Մեծ եղբայրն ասաց.— Մենք աչքով ուղտ չենք տեսել, բայց ուղտի քայլելու հետքից հայտնի էր կաղ լինելը:

Միջնեկ եղբայրն ասաց.— Ճամփի մի կողմը ճանճ էր բանում, մյուս կողմը՝ մրջյուն: Այդտե-

դու̈ր կուգիդանում, քէ ըղդէն պինը միգ տէն ըռօպ իր, միգ տէն՝ իղ։

Բզդա̈գ ախպարը ա̈սուց.— Öղդը ջամպօն միգ տէն գալմա գուքիլիր։ Ցադո̈ր գուկիդանում, քէ միգ աշքը գալր իր։ Ծա̈դ արձուձ վախըտը ադա̈ցը դիղը խո̈դը գայնուձ իր, չադո̈ր գուկիդանում, քէ ըրգը ադռան չիգօ։

Մըհա̈քա̈մէն ռայիզը ա̈սուց.— Արրա̈ք դղաք, նսդիցիք, համճըցիք։

Մըհա̈քա̈մէն ռայիզը ամըր իրÖց կդնիլ-պիրիլ զադ Öղդը։ Կա̈ցէն, զÖղդը շա̈դ պաավիցան, կդուն, ռուէն, իգէն զէ։ Մըհա̈քա̈մէն ռայիզը իշից Öղդը՝ ըսահ է։ Իդօր զÖղդը արապէն, արապը առուվ զէ իլով կնա̈ց։

Ըրք ախպարը ադ մա̈մլա̈քատէն Թա̈քա̈վո̈րէն քուվը զինչիցէն։ Ըրք ախպարը կա̈ցէն։

Թա̈քա̈վո̈րը ա̈սուց տայ ըրք ախպարը,— Դըղա̈ք, լէմ քուվը մըսաֆըր իք։

Ադ Թա̈քա̈վո̈րը Թարչըբից գիրինք Թավըր-Թավըր։ Իշից շա̈դ խիլա̈ք դղաք ին։ Ըրք դղաքը Թա̈քա̈վո̈րէն քուվը գիրուն-խմիցէն, ամսընում մնացէն։ Թա̈քա̈վո̈րը ամըն զամ հիդվէն բարաբուր ուդիլա̈ գուդիր։

Ուր մա̈լէ ա̈սուց.— Իս խադիր չըբըրընում իրինց հիդը ուդիլէն վախըտը, իշիմ չո՞ւց բըրուդին»։ Թա̈քա̈վո̈րը բինվըդիցուվ տըրզան դիղ մը, քէ զառնօ հասզընօ, չա̈՞ զօսին ուդիլա̈ ուդիլը վախըտը։

Իրզօն իղուվ, ուդիլէն պիրէն դղա̈ցը։

Մինձ ախպարը ա̈սուց.— Ախպըրդա̈ք. աս մէր Թա̈քա̈վո̈րը, լա ա̈սա̈ր դուդը, աշչա իղուձ է, լա էնք աշխանան պանուձ է, չա̈նքի մեր Թա̈քա̈վո̈րը դալմա ուդիլէն իրվան գուխոսա։

Օրթանչը ախպարը խմից կինէն.— Ո՜ւֆ,— ա̈սուց,— աս չո̈ւց հադատին տուրիցէ հա̈դ մը գունա կինէն։

Բզդա̈գ ախպարը տիկուլը առուվ, մէս գիրուվ, ա̈սուց.— Հադատին տուրիցէ փիս հա̈դ մը գունէ մըսին։

Թա̈քա̈վո̈րը բինվըդուձ դիղին զադ ալաք ա̈սուձնէն լսից, չափին տուրուցէ նիղացուվ, ուշէդ գնա̈ց մուրը քուվը, ա̈սուց.— Ցամա̈, էմ դուդը չա՞ իր, էմ դուդը չա՞ գուպանիր։

Մարը ա̈սուց.— Քու դուդը աշչա էր։ Տօն ա̈լէ բզդագէրիր, գուրթէր-գուկէրիր քու դա̈դէն քուվը. «Ըսօ պունը ա̈նօշ է, ընօ պունը չա̈նօշ է» գուա̈սէրիր, բադուռ-բադուռ գուդէրիր։

Թա̈քա̈վո̈րէն սիրդը հանճիցուվ։

Իլվուձ սա̈բա̈խդա̈ն շա̈դ ուշէդ զինչից կինա ձա̈խո̈ղը։ Կինա ձա̈խո̈ղ մուրթը իգիք Թա̈քա̈վո̈րէն քուվը, բաշլից տուդիլը։ Կինա ձա̈խո̈ղը բաշլից միգ դունց խուսիլը՝ միգ դունց դըղողիլը։

ղից հասկանում եմ, որ ուղտի մի կողմի բեռը մեղր էր, մյուս կողմում՝ յուղ։

Փոքր եղբայրն ասաց.— Ուղտը միշտ ճամփի մի կողմից էր քայլել, դրանից իմացա, որ մի աչքը կույր էր։ Խոտ արածելու ժամանակ (պակասող) ատամների տեղը, խոտը կանգուն էր մնացել, այդտեղից իմացա, որ երկու ատամները չկան։

Դատավորն ասաց.— Ապրե՛ք տղաներ, նստեցեք, հանգստացեք։

Դատավորը հրամայեց գտնել-բերել այդ ուղտին։ Գնացին, շատ փնտրեցին ուղտին, գտան, առան, եկան։ Դատավորը նայեց ուղտին, տեսավ որ ճիշտ է։ Ուղտը տվեց արաբին, արաբն առավ, ելավ գնաց։

Երեք եղբայրներին այդ երկրի թագավորի մոտ կանչեցին։ Երեքն էլ գնացին։

Թագավորը այդ երեք եղբայրներին ասաց.— Տղանե՛ր, դուք իմ հյուրն եք։

Այդ թագավորը նրանց տեսակ-տեսակ փորձեց։ Տեսավ շատ խելոք տղաներ են։ Երեք տղաները թագավորի մոտ կերան-խմեցին, ամիսներով մնացին։ Թագավորն ամեն անգամ նրանց հետ ճաշում էր։

Մի օր էլ ասաց. «Այս անգամ ուտելիս ես իրենց հետ չպիտի լինեմ, տեսնեմ ի՞նչպես են ուտում»։ Թագավորը թաքնվեց այնպիսի մի տեղ, որ կարողանա լսել, թե ուտելիս ի՞նչ են խոսում։

Իրիկուն եղավ, տղաներին ուտելիք բերեցին։

Մեծ եղբայրն ասաց.— Եղբայրնե՛ր, այս մեր թագավորը, կամ նրա հայրը, խոհարար է եղել կամ էլ խոհանոցում է աշխատել, որովհետև մեր թագավորը միշտ ճաշից է խոսում։

Միջնեկ եղբայրը գինին խմեց.— Ո՜ւֆ,— ասաց,— այս ի՞նչ արտակարգ հոտ է գալիս գինուց։

Փոքր եղբայրը գդալն առավ, միս կերավ, ասաց.— Արտասովոր վատ հոտ է գալիս մսից։

Թագավորը թաքնված տեղից այդ բոլոր ասածները լսեց, չափից դուրս նեղացավ, շտապ գնաց մոր մոտ, ասաց.— Մայրի՛կ, իմ հայրը ո՞վ էր, իմ հայրը ի՞նչ էր աշխատում։

Մայրն ասաց.— Քո հայրը խոհարար էր։ Դու էլ փոքր էիր, գնում-գալիս էիր հորդ մոտ. «էս բանը անուշ է, էն բանը անուշ չէ» ասում էիր, պատառ-պատառ ուտում։

Թագավորի սիրտը հանգստացավ։

Հաջորդ առավոտ շատ շուտ կանչեց գինեվաճառին։ Գինեվաճառն եկավ թագավորի մոտ, սկսեց դողալ։ Գինեվաճառն սկսեց մի կողմից խոսել, մի կողմից՝ վախից բաց թողնել։

Թա̈քա̈վա̈րը ա̈սաց.— Մը՛ վախնօ, դղաս, պուն չիգօ: Ձաս կինէն լըմա̈՞ր շինուծ իս:

Կինա ծախա̈ղը ա̈սաց.— Աբրէ՛ս թա̈քա̈վա̈ր. խաղա̈ղին շինուծ իմ զէ:

— Իկկէն դիղը յառանչ չա՞ իղուծ ի,— ա̈սաց, թա̈քա̈վա̈րը:

— Աս իկկէն յառանչ կըրըզմանէ դիղ իղուծ ի գուվասկէր ի մարթը կլöխ իլավ խուղին:

Թա̈քա̈վա̈րը ա̈սաց.— Աբրէ՛ս, դղաս, կնó:

Թա̈քա̈վա̈րը գինչից մէս ծախա̈ղ մուրթը:

Ղ̊ասուբը իգիք թա̈քա̈վա̈րէն քուվը, հարցög թա̈քա̈վա̈րը.— Աս մէսը չվը՞ մէս իր:

Ղ̊ասուբը ա̈սաց.— Մակը մէս իր:

— Ձաս մակէն ո̈ւվ բիհուծ իր,— հարցög թա̈քա̈վա̈րը:

— Ձաս մակէն կիղացը մարթօ մը յըրմինը առա զէ:

Թա̈քա̈վա̈րը ամըր իրög գինչիլ զադ կիղացը մուրթը: Մակա բիհա̈ղ կիղացէն իգիք թա̈քա̈վա̈րէն քուվը: Թա̈քա̈վա̈րը ա̈սուց.— Ձաս մակէն տօն չո̊ւց բիհուծ իս. ա̈սօ զա̈ւղա̈րտը:

— Աս մակէն մարը սադգիցուվ, էնք բզդա իր, ղ̊ուզէյը ծըծըցա միր շուն զաթնում:

— Աբրէ՛ս, կնó,— ա̈սաց թա̈քա̈վա̈րը:

Ադ վախըտը հասգըցուվ ադ ըրք դղիցը մըդքիրը, շա̈տ մա̈ծուն իղուվ:

Գինչից դդղաքը:

Մինծ դղան թա̈քա̈վա̈ր իրög յէր դիղը, միգալ ըրգը դղաքն ա̈լէ՝ յանա̈ր քուվը վազէր:

Պունը՝ քէ, բըլէթը՝ ընծէ: Ցիրգնացը ըրք հուդ խնձա̈ր ինգուվ. մէյը՝ ընծէ, մէյը՝ հա̊ղաթօղէն, մէյն ալէ՝ ուդուղէն:

## 22 (22). ԽԼՈ̈ԻՔ ԴՂԱՆ

Մարթօն մէյը դղա մը գունիր: Ադ դղան ամըն ուր մակդաբը գուրթիր: Ուր մա̈լէ վազէրն իլան թա̈քա̈վա̈րը իգէն մակդաբը, իշիցէն չուճուխնէն գախաղուն: Ադ դղէյն յալընդըզ նսդուծ գուգարթիր. թա̈քա̈վա̈րը հարցög էր.— Դղա̈ս, չվա՞ ուլաք չուճուխնէն գուխաղուն, տօն չուխաղուս:

Դղան ա̈սաց.— Թա̈քա̈վա̈ր աբրէս, չուճուխնէն դարսիրը սուրվուծ ին, գուխաղուն, իս ա̈լ դարսիրիս սուրվէմ՝ բըրխաղում:

Թա̈քա̈վա̈րէն խօշէն իգիք, հանից փարա իդöր էր, դղան չառուվ զը, ա̈սաց.— Ձաս փա̈րան, թը զառնիմ, դանիմ էմ դաղէն՝ զէս զըծիծէ:

Թա̈քա̈վա̈րը հարցög.— Չվէ՞ն համուր:

Դղան ա̈սաց.— Փարան քէչ է, ադա̈ր համուր զէս զըծիծէ էմ դուդը. չավդուր քի փարան քէչ էր,

Թագավորն ասաց.— Մի՛ վախենա, տղա՛ս, բան չկա: Այս գինին ինչի՞ց ես շինել:

Գինի ծախողն ասաց.— Ապրե՛ս թագավոր, խաղողից եմ շինել:

— Այգու տեղն առաջ ի՞նչ է եղել,— ասաց թագավորը:

— Այս այգին առաջ գերեզմանատեղի է եղել, վարելու ժամանակ հողից մարդու գանգ է դուրս եկել:

Թագավորն ասաց.— Ապրե՛ս, տղաս, գնա՛:

Թագավորը կանչեց մսագործին:

Մսագործը եկավ թագավորի մոտ, թագավորը հարցրեց.— Այս միսն ի՞նչի միս էր:

Մսագործն ասաց.— Ոչխարի միս էր:

— Այս ոչխարն ո՞վ էր պահել,— հարցրեց թագավորը:

— Այս ոչխարը մի գյուղացի մարդուց եմ գնել:

Թագավորը հրամայեց այդ գյուղացի մարդուն կանչել: Ոչխար պահող գյուղացին եկավ թագավորի մոտ: Թագավորն ասաց.— Այս ոչխարն ինչպե՞ս ես պահել, ճիշտն ասա:

— Այս ոչխարի մայրը սատկեց, ինքը փոքր էր, գառը մեր շան կաթը ծծեց:

— Ապրե՛ս, գնա՛,— ասաց թագավորը:

Այդ ժամանակ հասկացավ այդ երեք տղաների մտքերը և շատ գոհ մնաց:

Կանչեցին տղաներին:

Մեծ տղային իր փոխարեն թագավոր դարձրեց իր տեղը, մյուս երկու տղաներին էլ՝ նրա մոտ վեզիր:

Խոսքը՝ քեզ, բլիթը՝ ինձ: Երկնքից երեք հատ խնձոր ընկավ. մեկը՝ ինձ, մեկը՝ հեքիաթ ասողին, մեկն էլ՝ ստողին:

## 22 (22). ԽԵԼՈՔ ՏՂԱՆ

Մի մարդ մի տղա ուներ: Այդ տղան ամեն օր դպրոց էր գնում: Մի օր էլ թագավորն ու վեզիրը այդ դպրոցն եկան, տեսան, որ երեխաները խաղում են: Այս տղան միայնակ նստած կարդում էր:

Թագավորը հարցրեց.—Տղա՛, ինչու՞ բոլոր երեխաները խաղում են, դու չե՞ս խաղում:

Տղան ասաց.— Թագավորն ապրի՛, երեխաները դասերը սովորել են, խաղում են, ես էլ դասերս սովորեմ՝ կխաղամ:

Թագավորին դուր եկան այս խոսքերը, հանեց փող տվեց տղային, տղան չվերցրեց, ասաց.— Եթե այս փողը վերցնեմ, տանեմ հորս, նա ինձ կծեծի:

Թագավորը հարցրեց.— Ինչի՞ համար:

Տղան ասաց.— Փողը քիչ է, դրա համար ինձ կծեծի. հայրս չի հավատա, թե փողը քիչ է, ինձ

բըրա̈ւէ ընծէ. յա̈ կօղցուծ իս զը, յա՛ ծ̊գուծ իս զը, Թա̈քա̈վա̈րը քէչ փարա չուգօր մարթօ։

Թա̈քա̈վա̈րը հանից ափկէց մը փարա իդÖր դըղէն։ Դղէն ա̈սուց.— Հա̈, հա̈, գիա̈ւր, համօ էմ դուդը գավդօ, փարան շա̈ւդ է։

Թա̈քա̈վա̈րը շա̈ւդ խնդաց յադ դղէն տիմը, կընա̈ւց վարժարըւէին քուվը ա̈սուց.— Ջաս դղան աշվա̈ւր մը բըրըըհիք, բըրդարթացնիք, զասա̈ւր մասարիֆը իս բըրուգօմ, դըքըր զմաքդարը խալխաս բաղզը մաքդարը խալխաս, ընծէ խաբուր գուդաք.

Թա̈քա̈վա̈րը իլան վաղէըը իլան կայէն յիրինց գիդը։ Շա̈ւդ վախըտ անցավ, քէչ վախըտ անցավ, ադ դղան խալխից զմաքդարը, թÖխթ առավ։

Թա̈քա̈վա̈րէն խաբուր դվէն, քէ դղան խալխսից զմաքդարը։ Թա̈քա̈վա̈րը գինչից դղան իլան զէր դուդը։ Դուդը յիփըր լսից թա̈քա̈վա̈րը գինչուծ է գիրինք, բաշլից տօղիլը, ա̈սուց տայ դղան.— Մինք չա՞ զարահադ գունէնք թա̈քա̈վա̈րէն տիմը, քի մի գինչուծի։

Դղան ա̈սուց.— Յադա̈, մըվախնօ, դուրթունք թա̈քա̈վա̈րէն քուվը իս ու տօն, իս չուցըր պարիվ գուդօմ, տÖն ա̈լէ տըրդադ պարիվ դուդօս չամըշնուս, չըվախնուս։

Կացէն թա̈քա̈վա̈րէն քուվը։ Նիրս մդան, դղան ա̈սուց.— Աբրէս, թա̈քա̈վա̈ր յադա։

Թա̈քա̈վա̈րն ա̈սուց.— Աբրէս, դղաս, նէսդ։

Դղէն դուդը ամընչըթունը պարիվ չիդօր, խիվ գիմը չուքդէն գաիշէ։

Թա̈քա̈վա̈րը ա̈սուց տայ դղան.— Տօն թարբիալա իս, քու դուդը թարբիասըզ ի։

Դղան ջուղուբ իդÖր, տայ թա̈քա̈վա̈րը.— Շա̈՜դ աբրէս, թա̈քա̈վա̈՛ր, իմ դուդը թարբիալա ի, քէ զէս ղրգուծ է մաքդարը։ Ա՜խ, չա՞ ա̈սիմ իմ բարգօն, քէ զիմ դուդը մաքդաբ ղուրգուծ չէ։

Թա̈քա̈վա̈րը ա̈սուծ.— Շա̈՜դ աբրէս, դղա̈ս, տօն շա̈՜դ խիլա̈ւք իս, տօն յէմ քուվը գընստէս, էմ վագիրը բըրընուս։

## 23 (23). ԽԼՕ̈ԻՔ ԴՂԱՆ ԻԼԱՆ ԹԱՄՊԱԼ Ա̈ՇԿԷՑՆԸ

Գուգինօ բառուվ մը, գունընօ դղա մը։ Ադ ղըղան չըֆչա գընօ։ Նիղը գըմ̈ուն, ուդիլա̈ չըր ունընուն, ադ բառուվը գունիղանուն, գուա̈սի.— Արէ բախրուցը մէյը ծախինք, ծմիռը աբրէնք։

— Թը գըծախինք,— գա̈սի դղան,— կարունքը չո՞ւց բըր ինինք։

Կիշիր-ցիրիկ բառուվը դղէն հիդը դուծիծվա։ Դղան ա̈լէ գըբըզ̈մըշընօ, գա̈սի.— Գուծախիմ բախրին, ամմա ագար կարնունցը ղէյր բախրը չըմ զ̈ընօ, զքի բըր լծիմ թէք բախրի հիդը։

պիտի ասի. կա՛մ գողացել ես, կա՛մ էլ գտել ես, թագավորը քիչ փող չի տա մարդու։

Թագավորը հանեց մի բուռ փող տվեց տղային։ Տղան ասաց.— Այո՛, այո՛ հիմա, տե՛ս, հայրս կհավանա. փողը շատ է։

Թագավորը շատ ուրախացավ այդ տղայի համար, գնաց վարժապետի մոտ, ասաց.— Այս տղային լավ պիտի պահեք, սովորեցնեք, սրա ծախսերը ես կհոգամ, մինչև դպրոցն ավարտի, երբ դըպրոցն ավարտի, ինձ իմաց կտաք։

Թագավորն ու վեզիրը գնացին իրենց տեղը։ Շատ ժամանակ անցավ, թե քիչ ժամանակ անցավ, այդ տղան դպրոցն ավարտեց, վկայական ստացավ։

Թագավորին իմաց տվեցին, թե տղան դպրոցն ավարտեց։ Թագավորը կանչեց տղային և նրա հորը։ Հայրը, երբ լսեց, որ թագավորը կանչել է իրենց, սկսեց դողալ, տղային ասաց.—Մենք ի՞նչ հանցանք ենք կատարել թագավորի դեմ, որ մեզ կանչել է։

Տղան ասաց.— Հայրի՛կ, մի՛ վախենա, ես ու դու կգնանք թագավորի մոտ, ինչպես որ ես կբարևեմ, այնպես էլ դու կբարևես, չամաչես, չվախենաս։

Գնացին թագավորի մոտ։ Ներս մտան, տղան ասաց, թագավոր հայր, ապրած կենաս։

Թագավորն ասաց.— Ապրե՛ս, տղա՛ս, նստի՛ր։

Տղայի հայրն ամոթից չբարևեց, խենթի նման չորս կողմն էր նայում։

Թագավորը տղային ասաց.— Դու կրթված ես, քո հայրն անկիրթ է։

Տղան պատասխանեց թագավորին.— Շա՜տ ապրես, թագավո՛ր, իմ հայրը կրթված է, որ ինձ դպրոց է ուղարկել։ Ախ, ի՜նչ ասեմ պապիս, որ հորս դպրոց չի ուղարկել։

Թագավորն ասաց.— Շա՜տ ապրես, տղա՛ս, դու շա՜տ խելոք ես, դու ինձ մոտ կնստես, իմ վեզիրը կդառնաս։

## 23 (23). ԽԵԼՈՔ ՏՂԱՆ ԵՎ ԾՈՒՅԼ ԱՂՋԻԿԸ

Լինում է մի պառավ, ունենում է մի տղա։ Այդ տղան հողագործ է լինում։ Նեղն են ընկնում, ուտելիք չեն ունենում, այդ պառավը սրտնեղում է, ասում.— Արի՛ եզներից մեկը ծախենք, ձմռանն ապրենք։

— Եթե ծախենք,— ասում է տղան,— գարնան ի՞նչ պիտի անենք։

Գիշեր-ցերեկ պառավը տղայի հետ կռվում է։ Տղան էլ ձանձրանում է, ասում.— Եզը կծախեմ, բայց գարնանը եթե ուրիշ եզ չգտնեմ, քեզ կլծեմ կենտ եզի հետ։

— Լծի՛, չահաննամը,— գöսի բառավը:

Կարնանցը դղան բախրա չըղնօ, մըջքար գընօ, զբառավը գըլծէ:

Թöքöվöրը Թարգիլը ղլաֆա՛ժամ իլվաձ վա-ղըսը գըգխնօ, քի դղա մը բառավ մը լծաձ ի:

— Աս ի՞նչ դրուԹին ի,— գöսի Թöքöվöրը:

— Միր բայմանը դըրգալ ի,— գöսի դղան:

— Ո՞ւվ ի աս բառավը, չա՞ գի ձիր բայմանը:

— Աս էմ մարն ի: Ան ծմիռը öսուց. «Զրախ-րին ձախէ, ագար դըկըր կարոնքը դէրը չըղ̊դնաս, զէս լծէս»:

— Ադվöր,— գöսի Թöքöվöրը,— տöն քու մարը Թöղ, իս գուխուրկիմ քէ բախրի մը: Տöն ընդանէք կունէ՞ս:

Դղան գöսի.— Չէ:

— Աշկէն մը գունէմ, ուզօմ քէ՝ գառնի՞ս զէ,— գöսի Թöքöվöրը:

— Հա՛, գառնիմ,— գöսի դղան:

Թöքöվöրը գաշկէյնը գուխուրկէ: Աղ աշկէյնը շöղ Թամբալ գընօ: Ցիփը ուդիլա բըր ուդին, մարԹ գուզինչի.— Աշկէ՛յն, արէ, ուդիլա ուդինք

Աշկէյնը Թամբալուխինին չուկու սոֆրան:

մարԹն öլէ գըհասգընա, քի ան Թամբալուխի-նին չուկու, գöսէ.— Ուվ ըր ըսöր լօղմա մը հաց գուզօ՝ գըսպանիմ զը:

Աշկէյնը ըրգը ու ըրրգադ բաղցաձ գըմընօ, գուիշի քաղձաձ բըր սադգա, զէր կորսէն դինը գավիլէ:

— Ըրգը մադակ հաց գվիք էր,— գöսի մարԹը:

Ուչöնցի ուրը, անöնք սոֆրան գավէրցնին, աշկէյնը սոֆրէն հրջապատն öլէ գուավիլէ: Ան գուիշի, գուզինա, քէ ամըննէյն գուլվանուն, գը-մադգնօ զամըն պուն գուսուրկա, գուտինի:

— Դվիք զէր Թայընը, Թըղ ուտի՝ գիշդանու,— գöսի մարԹը:

Ցադöր իրվան աշկէյնը գöսի.— Տöք սուրիցի պունը իրիք, իս՝ գունը պունը:

Վաղըտ մը սօնդրա, Թöքöվöրը գöսի. «Զադ իմ աշկէյնի դրուԹինը չա՞ իղավ, ուրԹամ, դիս-նամ զէ»:

Թöքöվöրը գուկօ յöշկընէն քավը, սէղանէն առչիվը գունուդա: Աշկէյնը ըրք կլöխ սխդյար գա-պիրի գուտընա դադէն յառչիվը, գöսի.— Ցադա՛, öն ըսօ փաքլամիշ իրօ, փիսան գուկօ, գըդխնօ գքէ դարդակ նստաձ իս, անուԹա Թը գըսադգէս, Թօշ մը հաց չուդօր քէ:

— Վալլա, մալադէց փիսէն,— գöսէ Թöքöվöրը,— օր Թարբիա իրիր ի գլօխը գաշկէյնա:

— Լծի՛, ջահաննա՛մ,— ասում է պառավը:

Գարնանը տղան եզ չի գտնում, նեղն է ընկնում, պառավին է լծում:

Թագավորը ծպտված ման գալու ժամանակ տեսնում է մի տղա պառավ է լծել:

— Այս ի՞նչ դրություն է,— ասում է Թագավորը:

— Մեր պայմանն այսպես է,— ասում է տղան:

— Ո՞վ է այդ պառավը, ի՞նչ է ձեր պայմանը:

— Սա իմ մայրն է: Նա ձմռանն ասաց. «Եզը ծախիր, եթե մինչև գարուն եզ չգտնես, ինձ կլը-ծես»:

— Լավ,— ասում է Թագավորը,— դու քո մորը Թող, ես քեզ եզ կուղարկեմ: Դու ընտանիք ունե՞ս:

Տղան ասում է.— Չէ՛:

— Մի աղջիկ ունեմ, տամ քեզ՝ կառնե՞ս,— ա-սում է Թագավորը:

— Հա՛, կառնեմ,— ասում է տղան:

Թագավորն աղջկան ուղարկում է: Այդ աղջիկը շատ ծույլ է լինում: Երբ ճաշ պիտի ուտեն, մարդը կանչում է.— Աղջի՛, արի, ճաշ ուտենք:

Աղջիկը ծուլությունից չի մոտենում սեղանին: Մարդը հասկանում է, որ նա ծուլությունից չի գա-լիս, ասում է.— Ով սրան մի պատառ հաց տա՝ կսպանեմ:

Աղջիկը երկու օր այդպես մնում է քաղցած, տեսնում է քաղցած պիտի մեռնի, իր աԹոռի տե-ղըն ավլում է:

— Երկու մատնաչափ հաց ավեք սրան,— ա-սում է մարդը:

Երրորդ օրը, երբ նրանք սեղանը հավաքում են, աղջիկը սեղանի շուրջն էլ է ավլում: Նա նա-յում տեսնում է, որ ամաններ են լվանում, մոտե-նում է, ամեն ինչ սկսում է սովորել ու անել:

— Տվեք նրան իր բաժինը, Թող ուտի՝ կշտա-նա,— ասում է մարդը:

Դրա վրա աղջիկն ասում է.— Դուք դրսի գործն արեք, ես՝ տան գործը:

Մի ժամանակից հետո, Թագավորն ասում է. «Իմ ծույլ աղջկա դրությունն ի՞նչ եղավ, գնամ, տեսնեմ նրան»:

Թագավորը գալիս է աղջկա մոտ, սեղանի առաջ նստում: Աղջիկը երեք գլուխ սխտոր է դնում հոր առաջ, ասում.— Հայրի՛կ, ա՛ռ սրանք մաքրիր, փեսան կգա, կտեսնի քեզ պարապ նստած, քաղ-ցած մեռնելիս էլ լինես՝ մի պատառ հաց չի տա քեզ:

— Ապրի՛ փեսան,— ասում է Թագավորը,— որ դաստիարակել է իմ ծույլ աղջկան:

## 24 (24). ՔԱԼ ԴԴԱՆ ԻԼԱՆ ՔÖԽՍԱՆ

*Մարթ մը գըդինօ, գդամմ գանանը, գլուխ՝ քալ գընընը։ Էդից իլայր գըթըմմա։ Քալ դդան ճագայցք բըր ալթը, դöդ գöար էյր.— Քöսէն ճագöցք մöրթար, ան ադվիր մարթ չը։*

*Ցանդէյից բըք ճաղուցք գիր։ Քալ դդան կնից վիրը ճաղöցքը, իշից Քöսէն հան գիր։ Տարծա, կնից գիադիղը ճաղöցքը, իշից Քöսէն յանդիդն öլ գիր։ Տարծա կնից նըրքը ճաղöցքը, իշից գիտա Քöսէն հադ öլ գիր։*

*— Իս չա՞ բըր շինիմ գայիր, յօ՞ բըր ալթամ,— öսաց էնք յէնք.— հöւս բըր ադամ, չա՞ր գուզը թըղ ընը։*

*Իշշöն վիրըվին գպալս իճըցըցէյն. ըըցէյն գցիրէյն յամպօր, իլլիցէյն գքօար, öղöն բըլըշիցա ադվէյը։*

*Քöսան öսաց.— Պաղարճ հաց իփիք. ադիք։*

*Իպիր լագան մը, իլէյց ճէյր, իլէյց իլէյր, շաղիցէյն։*

*Քöսան ասաց.— Բէյնա իղա, պէր ճէյր։*

*Ճէյր լցցէյն։ Աս աղըզն է ճրա իղա։ Իլէյր լցցէյն, ճէյր լցցէյն, իլէյր լցցէյն։ Իլայր թըմմիցու։ Ալուա իլայր անչաղ պաղարճ մը իղավ։ Աղվիր գրէյգ մը վառիցայն, իփիցէյն պաղարճ, Քöսէն öսաց.— Ան ըր չլըված սայդ մը գըխասա, ան öլէ գաանը զպաղարճ։*

*Քալ դդան öսաց.— Մէնձ յառանճ գըխասա, սանըղա՝ բզդö։*

*Քöսան öսաց.— Միր պիէ թաղլամ գիր Ցադ թառլան ծմիրաք ցանիցաք։ Ծմիրամ իղöվիյր մինձու, մինձու, մինձու, իղու քան զղանէյմ դöդ աստ գշիգաւր. գիխից մէյմ. ըրդաք, ձմիրա չխքիցա, չիգաար մէյչ ինդա, դէյր իղա։ Էյմ դöդ ծմիրզէյն մէյչ մըղա չիգաար պաավէյը։ Դիհա մօրթ մը յանդիէղը։ Մօրթ հարցայց.— Ձա՞ գա պաավէյս։*

*— Ձիղաուրիս մէյչ ինդա, գապաավայմ զը-*

*Մօրթ öսաց.— Միք ըրք ար իղա միր քարվան գապաավէյք, չագարիք ըննաաղը։*

*Քöսէն հաքիյöթ խալիսիցա։*

*Քալ դդան ըլիշիցա հաղաթէյը.— Միք գանայքիր յօթ գաչըդ միղö։ Էյմ դöդ օմըն ամըաւխղան գըհամըրէյըղը, գըսիբիր գարթիր, տիրդöսք գակիր, գըհամըրըրէյըղը, նըքսը գաանայըղը։ Ունցէյք սաղարադ-թօփալադ միղաամ։ Ուր մöլը գաիշի, քի ադ միղօն չիդօ։ Էյմ դöդ գահիղնա խարըզայն իրվան, գարթը միղօն պաավէյը։ Խարըզայն գանիէ ցավ գընը։ Գöաին, քի ադ ցավ գըճադնըս, էլէր հնդանղայգ քօսէյիը։ Էյմ դöդ շիդ պաավիցա, չըգարցա ըննիր։ Մօրթ մը հընդանղայգ*

## 24 (24). ՔԱՉԱԼՆ ՈՒ ՔՅՈՍԱՆ

*Մի մարդ է լինում, ունենում է մի տղա, գլուխը՝ քաչալ։ Նրանից ալյուրը վերջանում է։ Քաչալն ուզում է ջրաղաց գնալ, հայրն ասում է.— Քյոսայի ջրաղացը չգնաս, նա լավ մարդ չէ։*

*Այնտեղ երեք ջրաղաց է լինում։ Քաչալ տղան գնում է վերին ջրաղացը, տեսնում է Քյոսան այնտեղ է։ Դառնում, գնում է մեջտեղի ջրաղացը, տեսնում է, որ Քյոսան էլ է այնտեղ։*

*— Ես էլ ի՞նչ անեմ, ո՞ւր գնամ,— ասաց ինքն իրեն,— այս՛տեղ կազամ, ինչ ուզում է թող լինի։*

*Էշի վրայից բեռն իջեցրին, ցորենը լցրեցին ամբարը, քարը պտտեցրեցին, աղունն սկսեց աղալ։*

*Քյոսան ասաց.— Բաղարջ հաց եփենք, ուտե՛նք։*

*Մի կոնք բերեց, ջուր լցրեց, ալյուր դրեց, շաղեցին։*

*Քյոսան ասաց.— Պինդ եղավ, ջուր բեր։*

*Ջուր լցրեցին։ Այս անգամ էլ ջրիկ եղավ։ Ալյուր լցրեցին, ջուր լցրեցին, ալյուր լցրեցին։ Ալյուրը վերջացավ։ Ամբողջ ալյուրը հազիվ մի բաղարջ եղավ։ Թեժ կրակ վառեցին, բաղարջը եփեցին, Քյոսան ասաց.— Ով որ մի չլսված սուտ ասի, նա էլ բաղարջը կուտի։*

*Քաչալն ասաց.— Առաջ մեծը կխոսի, հետո՝ փոքրը։*

*Քյոսան ասաց.— Մեր բակում մի դաշտ կար։ Այդ դաշտում ձմերուկ ցանեցինք։ Մի ձմերուկ աճեց, մեծացա՜վ, մեծացա՜վ, մեծացա՜վ, եղավ այս տան չափ։ Հայրս վերցրեց կացինը, զարկեց մեկ, երկու, ձմերուկը ճեղքվեց, կացինը մեջն ընկավ, կորավ։ Հայրս ձմերուկի մեջը մտավ, կացինը փնտրելու, տեսավ՝ մի մարդ կա այնտեղ։ Մարդը հարցրեց.— Ի՞նչ ես ման գալիս։*

*— Կացինս մեջն ընկավ, փնտրում եմ։*

*Մարդն ասաց.— Մենք երեք օր եղավ մեր քարավանն ենք փնտրում ու չենք գտնում։*

*Քյոսայի պատմությունը վերջացավ։*

*Քաչալն սկսեց պատմել.— Մենք ունեինք յոթ փեթակ մեղու, հայրս առավոտյան հաշվում էր մեղուներին ու ազատ արձակում, իսկ երեկոյան գալիս, հաշվում էր, ներս ընդունում։ Ունեինք նաև մի չալ ու կաղ մեղու։ Մի օր էլ տեսնում է, որ այդ մեղուն չկա։ Հայրս հեծնում է աքլորն ու գնում մեղուն փնտրելու։ Աքլորի թիկունքին վերք է բացվում։ Ասում են, որ այդ վերքը կլավանա, եթե հնդկընկույզ քսեն վրան։ Հայրս շատ ման է գալիս, հնդկընկույզ չի գտնում։ Մի մարդ*

գիրէյր. բաղատամ մընացէյր լադայցը փլուրէյք։ Պիրէյն դադ բաղատա, քունէյն խորադայն լարան, գö ճուղցէյր։ Խոքատող կայցէյր յադպընէյց թարըլվէյր։ Յադպընէյց պուսէյր ունիըդը ձօռ մը։ Աղ ձօռ մինցէյր. ունիայղ իղէյրիը։ Օմըն ուր էյմ գöդ պադ ունիայղ գըհամըըրիր. գըքըր թութվիլէյն վաղըտր էղըք։ Թութվիցէն զունիայղ, հöդ մը բաղոկից։ Իշիցէյն. իշիցէյն, գըքըր չըիգօնգը։ Շիդ մութ իղըք։ Օմմիէ պուն մը քուր, խուղը կըլöղ, փադ քարիցէյն. գըքըր պադ հուդ ունիայղ իսկիցէյն։ Զառը կըլöղին մըշիէմ խուղ ճöացէյր ձառայն իրվան։ Աղ խöղ իղու թառլուամ, էյմ դöդ յաղդիէղ ցիրին ցöնից։ Ցիրէյն շիդ öղվիր իղու, ընծիլէյն վաղըտր իղըք։ Ըրք ախպրու ըըլըշիցուք ընծէյլ։ Ընծիցու՛ք, ընծիցու՛ք, մընից բաղօռ մը դիղ։ Յադ դիղին խէյղ մը իլու։ Զադ խէյղ կուղըըդիցուք, չըդարըցուք պունայըդը։ էյմ մինձ ախպուար քöրից զմöնկöղ յիղըդատ, մöնկöղ կընից մըղու խիղöն յիդիվը, խէյղ ինդու։ Պունիցուք, զընիցուքըր, ճըքիցուք գիթյր փիրին իլու ըընդամ։ Պöցուք զըընդա, ըրնդէյն միչին իլու թառուղթ մը, աղ թառուղթ գöրուք խօչայն քöու դարթիլա։ Խօչան դարթուց զթառուղթ. մէյչ կըրöձիր։ «Քըք մուղիր, Քöսա, աս պաղուարճ Քալ դղայնըն»։

Ցասղիէզ Քöսան öսուց.— Քը սայդ քան զայմ ֆաղլուայր։

Պիրէյն զպաղուարճ. պայըծուն յիշöն, Քալ դղան իսկիցը յարչայվ, կնից իդöն։

Խիլըք Քալ դղան զաղանմըշ իղավ։

## 25 (25). ՔՈՒՍԱ ԲԱԲՕՅԸ

Գըդինօ, չըդինօ, Քöսա բաբօյ մը։ Աս Քöսա բաբօյը գունընօ իշ մը։ Գօռնէ գիշօյը զուրթու թառլան՝ հիրկիլö, վառկիլö, ցանիլö, հիդն ալ գունըսօ իսկը փարա։

Զամփունքը սասա գուլօ վառուն հöրöմö զուվախնու քի հöրöմöքը գառնէն գլուկէյն յիրմինը, գուխիթի զէ իշօն յիդիվը։ Իշը գուրթու, գուրթու, գութըրքէ իսկա։ Հöրöմöքը գուդըսնօն, քի էշը իսկը փարա գութըրքէ, գուöսին.— Քöսա բաբöկ, զաս իշը միզ չը՞ր ձախէ։

Քöսա բաբօյը գուöսէ.— Ըս զաս իշը չօ՞ւց ձախէմ, իսկա գութըրքէ։

— Մինք շöդ փարա գուդօնք, թöքի միզ ձախի զէ։

— Գուձախիմ, ամմա չաբըր գöսիմ, զադ իրիք։ Գուրթաք ախըռ մը, յախըռը իրտ գըլըընաք, իշն öլէ գöխկիլիք միչը, գըէդ գուդուք, իրտը գըվառիք, գըէդ իլան մուխը գըշուղցընին զախըռը գըփöցիք զտօռը, իշը սöթöխդöն իսկա գըթըրքի։

հնդկընկույզ էր կերել, մի կտոր ատամների արանքն էր մնացել։ Այդ կտորը բերեցին, քսեցին աքլորի վերքին, վերքը լավացավ։ Աքլորը գընաց աղբանոց թավալվելու։ Այդ աղբանոցում բուսնում է մի ընկուզենի։ Այդ ծառը մեծանում է, ընկույզ է տալիս։ Ամեն օր հայրս այդ ընկույզները հաշվում էր, մինչև թափ տալու օրը հասավ։ Ընկույզը թափ տվեցինք, մի հատ պակասեց։ Նայեցի՛ն, նայեցի՛ն, չգտան։ Շատ մարդ հավաքվեց։ Ամեն մեկը մի բան՝ քար, հողի կտոր, փայտ գցում էին, մինչև ընկույզի հատիկն ընկավ։ Հողակտորից մի քիչ մնաց ծառի վրա։ Այդ հողը մի դաշտ դարձավ, հայրս այդ արտում ցորեն ցանեց։ Ցորենը շատ լավ եղավ, հնձելու ժամանակն հասավ։ Երեք եղբայրով սկսեցինք հնձել։ Հնձեցի՛նք, հնձեցի՛նք, մի կտոր տեղ էր մնացել։ Այդ տեղից մի խոզ դուրս եկավ։ Վազեցինք այդ խոզի հետևից, չկարողացանք բռնել։ Մեծ եղբայրս մանգաղը հետևից շպրտեց, մանգաղը գնաց մտավ խոզի ետևը, խոզն ընկավ։ Բռնեցինք, մորթեցինք, փորը ճղեցինք, փորից մի սնդուկ դուրս եկավ։ Սնդուկը բացեցինք, միջից մի թուղթ դուրս եկավ։ Այդ թուղթը տարանք խոջայի (վարժապետի) մոտ կարդալու։ Խոջան կարդաց թուղթը, մեջը գրված էր. «Ք... մի ուտիր, Քյոսա՛, այս բաղարջը Քաչալինն է»։

Այդտեղ Քյոսան ասաց.— Քո ստոն իմ ստին գերազանցեց։

Բերեցին բաղարջը, բարձեցին էշին, Քաչալն առաջը գցեց, գնաց տուն։

Խելոք Քաչալ տղան հաղթեց։

## 25 (25). ՔՅՈՍԱ ՊԱՊԻԿԸ

Լինում է, չի լինում, մի Քյոսա պապի է լինում։ Այդ Քյոսա պապն ունենում է մի էշ։ Վերցնում է էշն ու գնում արտ՝ հերկելու, վարելու, ցանելու, հետն էլ ունենում է ոսկի փող։

Ճանապարհին հանդիպում է քառասուն ավազակների, վախենում է, որ նրանք իր փողերը կըվերցնեն, դրանք խոթում է էշի քամակը։ Էշը գընում է, գնում, ոսկի է թրքում։ Ավազակները տեսնում են, որ այդ էշը ոսկի է թրքում, ասում են.— Քյոսա՛ պապի, այդ էշը մեզ չե՞ս ծախի։

Քյոսա պապն ասում է.— Ես այս էշն ինչպե՞ս ծախեմ, ոսկի է թրքում։

— Մենք քեզ շատ փող կտանք, միայն թե ծախիր մեզ։

— Կծախե՛մ, բայց ինչ ասեմ, այդպես էլ կանեք։ Կտանեք մի ախոռ, ախոռում հարդ կլցնեք, էշն էլ մեջը կփակեք, կրակ կտաք, հարդը կվառեք, կրակն ու ծուխը ախոռը կտաքացնեն, կփակեք դուռը, էշը առավոտյան ոսկի թրքած կլինի։

Տըրգադ ա̈լէ հա̈րա̈մա̈քը գուինին։

Սա̈րա̈խդա̈ն գուկոն, գուգխնուն խոկա թըրքըուծ ի, թը՝ չէ։ Տօռը րըր պա̈նուն՝ չըպա̈ցվէր։ Իշը իգուծ ի ուըռանը յիգիվը, վըդվէն լարուծ ի, նալէրն ա̈լէ գուբըրսօն։

Հա̈րա̈մա̈քը գուխընդօն, քի խոկա ի։ Գուպա̈նուն գառօը, գուիշին իշը սադգուծ ի։ Հա̈րա̈մա̈քը գուա̈սին.— Վա̈յ, Քա̈ւսա բարօ̈ք, վա̈յ, ա̈ծն ադվա̈ր օյին խաղցիր միր կլխէն։

Համօ ուկունք Քա̈ւսա բարօյը։

Բարօյը գինգունը դուհաղա̈յթէ.— Գնա̈՛գ, իս էմ իշը ձախիցա հա̈րա̈մօ̈ցը, հա̈րա̈մօ̈քը գուկուն իգօն, գէս գըպառվէն, միր ըրգը դաշվաննէն մէյը հիգս գուգանէմ մէյը իգօն գըթուղօմ, յիփըր գուկուն հա̈րա̈մա̈քը գըպառվէն գէս, ա̈ծն գա̈սիս՝ կա̈ցուծ ի թարլան հէրկիլ, գուղուրգիս գիրինք քուվիս ա̈ծն ալ գիփիս ուդիլա՝ փիլավ։

Քա̈ւսան դաշվանէն մէյը իգօն վթուղօ, մէյը դառնի, գուրթօ։

Հա̈րա̈մա̈քը գուկօն Քա̈ւսա բաբկօ̈ն տօնը։ Գընա̈յը գիրինք գուխուրգի թարլան, չուցըր մուրթը թա̈մբիհ իրուծ իր։ Հա̈րա̈մա̈քը գուրթուն թարլան, գա̈սին.— Քա̈ւսա բարօ̈կ, իշը սադգիցուվ, գփարան դօ̈՛ր,— գդաշվունը գուդխնուն բաբգօ̈ն քուվը։

Բարօյը գուա̈սի.— Համօ իս փարա չունիմ, իգօն ուրթունք, փարան դուդօմ։

Գուկրի մաքդուբ մը գինգունը, քի կէփէս փիլավ։ Մաքդուբը դաշվանէն վէգը գուգարի, քի դանա գինգունը։ Դաշվունը գուրթու տայ մաշանի։ Հա̈րա̈մա̈քը գուհարցընէն.— Բարօ̈յ, յօ̈ գուրթու դաշվունը։

Բարօյը գուա̈սի.— Աղ էմ փօղդաշին ի, քասար ջամփէն գուրթու։

Հա̈րա̈մա̈քը գուա̈սին մէյը միգալին.— Ջիշօն փարէն չըր առնինք, գդաշվունը գուառնինք։

Իրգօ̈ն գընա̈ս հա̈րա̈մա̈քը գուրթուն Քա̈ւսա բաբկօն հիդը իրինց տօնը, գուիշին չարըր ուդիլէն գրուծ իր մաքդուրի միչը. ադ ուդիլէն խադիր, ռուֆրան դրուծ իր, դաշվուն ա̈լէ իգօն գար։

Հա̈րա̈մա̈քը գըխընդուն, քի գդաշվունը գուառնին, գուդին, գուխմին, Քա̈ւսա բարօյը գուպիրի իշշօն փարան բըր ուդօ, հա̈րա̈մա̈քը, չուդին գփարան առնին, գդաշվունը գուուզին առնին։ Քա̈ւսա բարօյը դաշվունը գուդօ, իշուն փարան չուդօ։ Կառնին գդաշվունը գուրթուն։

Հա̈րա̈մա̈քէն մինձը գուկրի մաքդուբ, գըդախէ դաշվանէն վէգը, գուխուրգի գէ գինգունը։ Դաշվունը գուրթու չուկօ։ Ան գուրթու ընգըրդօցը քուվը, գուա̈սի.— Աս զաթը գինէ Քա̈ւսա բարօյը խափըդից զըմէ, ուրթունք ադվա̈ր մը ձիձինք գէ, առնունք գփարան։

Հա̈րա̈մա̈քը գուրթուն Քօ̈սա բաբկօն քուվը։ Քա̈ւսա բարօյը գուա̈սի գինգունը.— Հա̈րա̈մա̈քը

Ավազակներն այդպես էլ անում են։

Առավոտյան գալիս, ուզում են տեսնել էշը ոսկի թրքե՞լ է, թե՝ ոչ։ Դուռը պիտի բացեն՝ չի բացվում։ Էշը եկել դռան ետևն ընկել, ոտները տնկել է, պայտերն էլ փայլում են։

Ավազակներն ուրախանում են, թե ոսկի է։ Բաց են անում դուռը, տեսնում են, էշը սատկած է, ասում են.— Վա՜յ, քյոսա՛ պապի, վա՛յ, դու լա՛վ խաղ խաղացիր մեր գլխին։

Հիմա գնանք Քյոսա պապին։

Պապը կնոջը պատմում է.— Կնի՛կ, էշը ծախեցի ավազակներին, ավազակները հիմա կգան, ինձ կփնտրեն, մեր երկու ճագարներից մեկը հետս կվերցնեմ, կտանեմ, մյուսը՝ կթողնեմ տանը, երբ որ նրանք կգան ինձ կփնտրեն, դու կասես՝ գնացել է արտ հերկելու, կուղարկես նրանց ինձ մոտ, դու էլ կեփես կերակուր՝ փլավ։

Քյոսան ճագարներից մեկը տանն է թողնում, մյուսը վերցնում է, գնում։

Ավազակները գալիս են Քյոսա պապի տունը։ Կինը նրանց ուղարկում է արտ, ինչպես մարդը պատվիրել էր։ Ավազակները գնում են արտը, ասում.— Քյոսա պապի, էշը սատկեց, փողը տու՛ր,— պապի մոտի ճագարը տեսնում են։

Պապն ասում է.— Նա իմ փոստատարն է, գնանք, փողը կտամ։

Կնոջը նամակ է գրում, որ փլավ պատրաստի։ Նամակը կապում է ճագարի վզից, որ տանի կնոջը։ Ճագարը գնում է դեպի անտառ։ Ավազակները հարցնում են.— Պապի՛, ճագարն ո՞ւր է գնում։

Պապն ասում է.— Նա իմ փոստատարն է, կարճ ճամփով է գնում.

Ավազակներն իրար ասում են.— Էշի փողը չենք վերցնի, ճագարը կվերցնենք։

Երեկոյան ավազակները Քյոսա պապի հետ գնում են տուն։ Նայում, տեսնում են, որ նամակի մեջ ինչ ուտելիք որ գրված էր, պատրաստ դրված է սեղանին, ճագարն էլ տանը։

Ավազակներն ուրախանում են, որ ճագարը կառնեն։ Ուտում, խմում են, Քյոսա պապից էշի փողը չեն վերցնում, ճագարն են ուզում։ Քյոսա պապը ճագարն է տալիս, էշի փողը չի տալիս։ Առնում են ճագարն ու գնում։

Ավազակապետը նամակ է գրում, կախում ճագարի վզից, ուղարկում կնոջ մոտ։ Ճագարը գնում է, ետ չի գալիս։ Ավազակապետը գնում է ընկերների մոտ, ասում.— Այս անգամ էլ Քյոսա պապը մեզ խաբեց, գնանք նրան մի լավ ծեծենք, փողն առնենք։

Ավազակները գնում են Քյոսա պապի մոտ։ Քյոսա պապը կնոջն ասում է.— Ավազակները հի-

ըըր ուկուն հöմօ քուլիս, լիդ գփարան ըըր ուղին։ Աս ձաթէն էս մումբարէն միչը վիրէն գըլըցըցիմ, գըգարիմ վէդիտ, գուöսիմ քէ. «Դընöգ, ակր ուդի-լա»։ Տöն չըր ընէ դէ, իս öլէ գընըխըքընում քէ, գըգինիմ դքէ. դմումբար գըդդրիմ։ Սօնրա գըսըլ-վըլում՝ դöւ-դöւ-դöւ, տöն գըննիս, գըխադուս։ Գընայը գուսըրվըցնէ, էնք գուրթու թարլան, հöրöմöքը գուրթուն թարլան Քöսա բարöն քու-վը, գուգին դփարան։ Քöսա բարօյը գուսաի.— Ի տօն ուրթունք, ոդօմ դփարան։

Հöրöմöքը գուրթուն իդօն, դինդունը չուցըր սուրվըցուցուծ իր, ըըրդանէա գունի։ Գասի. «Սաֆ-րան տէր»։ Գնայը չուինի։ Քöսա բարöյը յօռնէ գասնօյը. գըմինգըվըցընի գը, գըդընի գը։ Ջընի-լէն լէդը հöրöմöքը գուöսին.— Քöսա բարöն, չվա գինիցիր գըսառվը։

Քöսա բարօյը գուöսի.— Öսուձիս չըգöդöրից, անöր գընիցա գը, թը գուգիմ, գըսադցընիմ գը։ Գուառնի գդուդուգը՝ դո՛ւ—դո՛ւ—դո՛ւ, բառուվը գըգաննա, դուբաշըրի խադիլը։

Հöրöմöքը ադ գուդիսօն, գուöսին զադ ձա-թէն.— Ադ դուդօդ գադօ՞ս մէ։

Էնք ալ չուգի ադօ դէ, ըմըը գուդօ գը։ Գօո-նին, գուրթուն։

Հöրöմիցը մինձը գուգընի վէր գընայը. գօօնի ծառը դուդուգը՝ դո՛ւ—դöւ—դո՛ւ, գնայը չսադնօ։ Գուրթու ընգըդօցը քուվը, չöնէ՝ գընայը մի-ռուվ, դուդուգը չըըադդօց գդնայը։ Մէյը մէգալին գուդու դդուդուգը. ամէն մէյը գուգինի վէր գընայը. քառսուն հöրöմöն գöննաքը ըըրդադ գումիռնէն։

Հöրöմöքը ձարար գուինին. գուöսին.— Քö-սա բարօյին գառնինք գըտընինք չըլթէն միչը, գըգöբինք գպիրունը, ձուվը գըքöրինք։

Գուրթուն գչըլթան գուդանին. Քöսա բարօյը գուտընին չըլթէն միչը, գպիրունը գուգöբին. ըըր խսկին գը ձուվը։ Ջամփուքը ուրթիլը վաձըռը. չալդը ծան գուունէ. Քöսա բարօյը գուöսէ հöրö-մöցը.— Ա՛յ ջաhիլնա, կյացէք, տöք հարսնöք ֆարչըցիք, սօնրա դէս յօր գուուգիք դարիք։

Հöրöմöքը չըլթան գուգöխին ձուռը, գուր-թուն գուֆարչէն հարսնöքը։

Քöսա բարօյըն öլէ ձառին դախված գուգինչի. — Վալլա՛-բիլլա՛, իս զէմ ամմէյն öշկէյնը չըմ առնի, վալլա՛-բիլլա՛, չըմ առնի։

Հուվէվ մի գուկօ էր մöկուցը հիդը, գուըսի զադ ծանը, գուöսի.— Իս գառնիմ քէ ամմէյն öշ-կէյնը։

Քöսա բարօյը գուöսի.— Արէ՛, տöն մöդ չըլ-թէն միչը, գախիմ գքէ, ըմը ծան չըր հանի։

մա գալու են ինձ մոտ, փողը ետ պիտի ուզեն։ Այս անգամ այս հաստ աղիքի մեջ արյուն կլցնեմ, կկա-պեմ վզիցդ, քեզ կասեմ. «կնի՛կ, ուտելիք տուր»։ Դու չես տա, ես էլ քեզ վրա կբարկանամ, կմորթեմ քեզ, վզիդ կապած հաստ աղիքը կկտրեմ, հետո կփչեմ՝ դո՛ւ-դո՛ւ-դո՛ւ, դու կվերկենաս, կպարես։ Կնոջը սովորեցնում է ու ինքը գնում արտ։ Ավազակները գնում են արտ Քյոսա պապի մոտ, փողն ուզում։ Քյոսա պապն ասում է.— Գնանք տուն, փողը տամ։

Ավազակները գնում են տուն։ Կնոջն ինչպես որ սովորեցրել էր, այդպես էլ անում է։ Ասում է.— «Սեղան բա՛ց»։ Կինը չի բացում։ Քյոսա պապը վերցնում է դանակը, կնոջը պառկեցնում է գետնին և մորթում։ Մորթելուց հետո ավազակները ասում են.— Քյոսա պապի՛կ, ինչո՞ւ պառավին մորթեցիր։

Քյոսա պապը ասում է.— Ասածս չարեց, դրա համար էլ մորթեցի, եթե ուզենամ՝ կողջացնեմ։ Առնում է սրինգը՝ դու՛-դու՛-դու՛, պառավը ող-ջանում է, սկսում է պարել։

Ավազակները տեսնում են, ասում.— Այդ սը-րինգը մեզ կտա՞ս։

Նա էլ իբր չի ուզում տալ, բայց տալիս է։ Վերց-նում են, գնում։

Ավազակապետը մորթում է կնոջը, վերցնում սրինգը՝ դո՛ւ-դո՛ւ-դո՛ւ, կինը չի ողջանում։ Գնում է ընկերների մոտ, չի ասում, թե կինս մեռավ, սը-րինգը չողջացրեց։ Սրինգը մեկը մյուսին է տա-լիս, ամեն մեկը մորթում է իր կնոջը, քառասուն ավազակների կանայք այդպես մեռնում են։

Ավազակները հավաքվում են, ասում.— Քյոսա պապին ցցենք տոպրակը, բերանը կապենք, գցենք ծովը։

Առնում են տոպրակը, գնում Քյոսա պապին դը-նում են տոպրակը, բերանը կապում, որ ծովը գցեն։ Ճամփին գնալիս՝ նվագի ձայն է գալիս, Քյոսա պապն ասում է ավազակներին.— Ա՛յ ջահելներ, գնացե՛ք հարսանիք նայեք, հետո ինձ ուր ուզում եք տարեք։

Ավազակները տոպրակը կախում են ծառից, գնում են հարսանիք դիտելու։

Քյոսա պապն էլ ծառից կախված կանչում է.— Աստված վկա, ես իմ հորեղբոր աղջկան չե՛մ առնի, աստված վկա, չե՛մ առնի։

Մի հովիվ է գալիս իր ոչխարների հետ, լսում է այդ ձայնն ասում.— Ես կառնեմ քո հորեղբոր աղ-ջըկան։

Քյոսա պապն ասում է.— Արի՛ մտիր տոպրա-կը, քեզ կախեմ, բայց ձայն չհանես։

Գուալնա կէ չըլթէն մէչը, գուգäխի զհուվէվը, էնք գօռնի զմäկäկը, գուրթու:

Հäրäմäքը գուխուն, գչըլթէն գառնուն գըքä-րին ձուվը, իդ սառնիլը վօ̊ղըրը գուգխնուն զԹö-սս բարօյը, գուշաշմիշ ըննուն, գուհարցնին.— Աս չա՞յ ի, Թöսա բարÖկ:

Ան ալ գուäսի.— Զուվը քäրիցաք զէս, ձուվին հանիցա զաս մäկäկը, թը դահա խուրօն թը գը-քäրէք իսէ, դահա մինձ սուրա գըպիրէր է:

Հäրäմäքը գուäսին.— Ագար զմի äլէ թը գըտըննիս չըլթէն մէչը, գըքարիս ձուվը, մինք äլէ գըպիրի՞նք:

Բաբօյը գուäսի.— Հä, դահա մինձը գըպիրիք, չըլթէնիր պիրիք, ըննիմ զձի մէչը, գäրիմ պի-րանը, քäրիմ զձուվը, տÖք ալ գըպիրիք:

Գուրթուն գըպիրին ամէն մէյը չըլթա մը, բա-բօյը գուալնա զիրինք չըլթէն մէչը, գուգäփի զպի-րանը, գուքäրի ձուվը:

Թառսուն հäրäմäքը ալայը տըրգադ քäրից ձուվը, խäլիսիցուվ:

Կընäց բառվուն քուվը, մարթ, զնայ մուհաբա-թում աբրիցուն: ՀäրäմÖցը յիրմինը խալիսիցուն:

Միր հաղօյօթն ալ խալիսիցուվ:

Դնում է նրան տոպրակի մեջ, կախում ծառից, ինքը վերցնում է ոչխարները, գնում։

Ավազակները գալիս են, վերցնում տոպրակը, գցում են ծովը, ետ դառնալիս տեսնում են Քյոսա պապին, զարմանում են, հարցնում.— Քյոսա՛ պապի, սա ի՞նչ բան է։

Նա էլ ասում է.— Դուք ինձ ծովը գցեցիք, ես էլ այս ոչխարները ծովից հանեցի, եթե ավելի խորը գցեիք, ավելի մեծ հոտ կբերեի։

Ավազակներն ասում են.— Եթե մեզ էլ տոպրա-կի մեջ դնես, ծովը գցես, մենք էլ կբերե՞նք։

Պապն ասում է.— Այո՛, ավելի մեծերը կբե-րեք, տոպրակներ բերեք, դնեմ ձեզ մեջը, կապեմ բերանը, գցեմ ծովը, դուք էլ կբերեք։

Ամեն մեկը գնում բերում է մի-մի տոպրակ, Քյոսա պապը նրանց դնում է տոպրակների մեջ, բերանները կապում, գցում ծովը։

Քառասուն ավազակներին բոլորին այդպիսով գցում է ծովը, վերջացնում։

Գնում է պառավի մոտ, մարդ ու կնիկ սիրով ապրում են։ Ավազակների ձեռքից ազատվում։

Մեր հեքիաթն էլ վերջացավ։

## 26 (26). ՄՈՒՍԱ ԹÖՒՍԱ ԲÄԲԿՕՆ ՍՕՆՂԸ

Դիդինօ. չըգինուր մարթ մը իլան ըրք դզօ: Դուդը զըհիվընանու, գäսի ալյ դղաքը.— Իս ըրր միռնիմ, Մուսա-Թöսա անունում մարթու հիդ ճամփունկ մուրթուք, քուվը մը պանաք:

Ադ ըրք դղէն դուդը զըմիռնա, մինձ ախ-պարը գäսէ.— գուրթում պäնիլ:

Շäդ գուրթօ, քէչ գուրթօ դիշի ջամփօն իզէրը Մուսա-Թöսա անունում մարթ մընսդուձ է, պարիկ չուդօր էր: Դադէն äսաձնէն զիննա մէզքը, ամմա Թöսան զըննէ տիմը, գäսէ.— Յօ՞ գուրթաս:

Դղան չըխուսէր:

Յասսէն, յանտէն շäդ զուռ զինէ, դղան զը-խապըսէ, գուրթուն ի դօն, գäսէ.— Ըսքօ քէ լÖսկ մը, իլան շÖն մը, կäրը հուցը տօն դուդխս, ցիրինը հուցը շունը գուդուս, շÖնը յÖրը զընսդա, զան դիզը զըվäսկէս: Յամէսը քէ հազուր փարա գուդօմ, äգար թը զընէխիկըննս իսա, ադանճա զըգդրիմ, գուրթուս. սս ի էմ շարթը զ̊արÖլ զի-նի՞ս:

Դղան äսուց.— Զ̊արÖլ զինիմ:

Բաշլից պունը: ՇÖնը յօրը նսդուվ, զանդիզը վասկիցուվ, շÖնը կնուց քäրիրէն յէրվան, դղան վասկիցուվ, հäրուրը գդրիցուվ, շուդ նէխիկիցուվ: Թöսան իզիք äսուց դղէն.— Նէխիկիցձու՞:

## 26 (26). ՄՈՒՍԱ-ՔՅՈՍԱ ՊԱՊԻԿԻ ՎԵՐՋԸ

Լինում է, չի լինում, մի մարդ իր երեք տղա-ներով։ Հայրը հիվանդանում է ու տղաներին ա-սում.— Ես մեռնելու եմ, Մուսա-Քյոսա անունով մարդու հետ ճանապարհ չգնաք, մոտը չաշխատեք։

Այդ երեք տղաների հայրը մեռնում է, մեծ եղ-բայրն ասում է.— Ես գնում եմ աշխատելու։

Շատ է գնում, քիչ է գնում, տեսնում ճամփի եզրին Մուսա-Քյոսա անունով մի մարդ է նստած, բարև չի տալիս նրան, իր հոր տված խրատը միտքն է ընկնում, բայց Քյոսան նրա դեմն է ելնում, ա-սում.— Ո՞ւր ես գնում։

Տղան չի խոսում։

Դես, դեն շատ է ստիպում, տղային խաբում, տանում տուն, ասում.— Ահա քեզ մի լուծք և մի շուն, գարի հացը դու կուտես, ցորեն հացը շանը կտաս, շունը որտեղ նստի, այնտեղ կվարես։ Ամի-սը քեզ հազար փարա կտամ, եթե նեղանաս՝ ա-կանջդ կկտրեմ, կգնաս. սա է իմ պայմանը, համա-ձա՞յն ես։

Տղան ասաց.— Համաձայն եմ։

Սկսեց աշխատել։ Շունը որտեղ նստեց, այնտեղ վարեց, շունը գնաց նստեց քարերի վրա, տղան վա-րեց, արորը կոտրվեց, տղան շատ զայրացավ։ Քյոսան եկավ, ասաց.— Նեղանո՞ւմ ես։

Դղան ա̈սուց.— Դա̈գըլ նէխիկընիլ, հիկկէս ա̈լէ իլուվ։

Քա̈ւսան պընից զդղան, զագանճը գդրից, ա̈սուց.— Գնօ համօ, շարթը խալխսիցուվ։

Դղան լալը-լալը կնա̈ց յախպըրդուցը քուվը։ Ախպըրդաքը ա̈ցէն.— Աս չա̈՞ է քէ խուլը։

Դղան ա̈սուց.— Քա̈ւսան կաս իրՕց։

Ուրթանչը ախպարը ա̈սուց.— Իս գուրթում, հախին գուկում։

Կնա̈ց Քա̈ւսէն քուվը։ Մինձ ախպարը չուցըր պուն իդՕր, գինա ադա̈ր ադ պունը իդՕր։

Բաշլից պունը։ Մինձ ախպար քիմը ադ ա̈լէ նիղացուվ։ Քա̈ւսան զադա̈ր ագանճն ա̈լէ գդրից, դուրգից զախբըրդուցը քուվը։

Բզդա̈գ ախպարը ա̈սուց.— Քէ ագանճն ա̈լէ գդրէց Քա̈ւսան։ ՏՕք պուն չըպա̈նըք, իս բըր ուրթում լադ Քա̈ւսէն քուվը, զագանճն ա̈լէ բըր գըդրիմ, ձա̈մդըգին պիգուր մը բըր հանիմ, սաբըր ըրիք. իշիցիք՝ չա́ բըր պիրիմ ա̈դա̈ր կլՕխը։

Իլուվ կնա̈ց։ Հա̈սուվ յան գիղը, քէ Քա̈ւսան գըն-նըսգիր, Քա̈ւսէն ա̈դա̈ւն իր։ Դիսուվ զՔա̈ւսան, ձի-ձաղէլում, ա̈սուց.— Մուսա-Քա̈ւսա բարՕկ, պուն չունէ՞ս, ուլում քուլիտ պա̈նէմ։

Քա̈ւսան ա̈սուց.— Հա̈յ, պա̈րուվ, էմ դղան, պուն ալ շա̈՛դ գօ, հուց ալ շա̈՛դ գօ, փարա ալ շա̈՛դ գօ։

Ըրգը միգում իլուն, կացէն իդօն։ Ձէր մինձ ախպըրդուցը պա̈նուձ պունը իդՕր բզդա̈գ ախպարը, ա̈սուց.— Աս ի էմ շարթը, ղ̊արՕլ գինիա։

Բզդա̈գ դղան ա̈սուց.— Ղ̊արՕլ գինիմ, ամմա իս ա̈լէ շարթ մը գունէյմ, ուՕն թը գընիխըքընուս՝ իս ա̈լէ քէ ագանճը բըր գդրիմ ու ձա̈մդագիտ ա̈լէ փիգուր մը բըր հանիմ։

Մուսա-Քա̈ւսա բարօյը ղ̊արՕլ իրՕց, չունքի էնք գուկիդանուր քի չըբըր նիխըքընու։

Դղան առուվ զլՕսկը ծառը, գՕշդ-գՕշդ գիրուվ ցիրինում հուցը, կա̈րը հուցը իդՕր չունը։ ՇՕնը չըգիրուվ զէ՝ քահրիցուվ։ ՇՕնը կնա̈ց նսդուվ պՕլը, քա̈րէ մը յէրվան։ Դղան առուվ զմասուսան, գի-խուձը քիմէն՝ շՕնը սադգիցուվ։

Քա̈ւսան իգիք ա̈սուց.— Զվա՞ շՕնը սբա̈նիցիր։

Դղան ա̈սուց.— Մուսա-Քա̈ւսա բարՕկ, կա̈րը հուցը չուդՕղ շօնը տրզաս ուշէդ գըսադգա,— դը-ղան ա̈սուց.— Նէխըկըցա՞ւր, ԲարՕկ։

Քա̈ւսան ա̈սուց.— Չէ՛, չէ՛, չընէխըկըցու։

Իլվուձ ուրը դղէն ա̈սուց.— Բախրիքը թաբա-խէն ձագին բըր անցնիս յախըռը, բըր ուկում իշիմ՝ խա̈ւդ գուդին։

Դղան ա̈սուց.—Շա̈ւդ ադվա̈ւր, Քա̈ւսա բարՕկ, համՕ-համՕ գըդանէմ, թաբախէն ձագին զանցնիմ գիրինք։

Քա̈ւսան իլուվ կնա̈ց։ Դղան առուվ զբախրիքը,

Տղան ասաց.— Միայն նեղա՞ցա, հոգիս էլ դուրս եկավ։

Քյոսան բռնեց տղայի ականջը կտրեց, ասաց.— Հիմա գնա, մեր պայմանը վերջացավ։

Տղան լաց լինելով գնաց եղբայրների մոտ։ Եղբայրներն ասացին.— Այս ի՞նչ է քո վիճակը։

Տղան ասաց.— Քյոսան արեց։

Միջնեկ եղբայրն ասաց.— Ես կգնամ, նրա հախից կգամ։

Գնաց Քյոսայի մոտ։ Մեծ եղբոր նման սրան էլ նույն գործը տվեց։

Սկսեց աշխատել։ Մեծ եղբոր պես սա էլ վայ-րացավ։ Քյոսան սրա ականջն էլ կտրեց, ուղարկեց եղբայրների մոտ։

Փոքր եղբայրն ասաց.— Ձեր ականջն էլ Քյոսան կտրե՞ց։ Դուք գործ չեք կարող անել, ես պիտի գնամ այդ Քյոսայի մոտ, ականջն էլ պիտի կտրեմ, ծոծրակից մի կտոր կաշի էլ պիտի հանեմ, սպասեք տեսեք՝ ի՛նչ եմ բերելու նրա գլխին։

Ելավ գնաց։ Հասավ այնտեղ, ուր Քյոսան էր նստում։ Տեսավ Քյոսան ծիծաղում է.— Մուսա-Քյոսա պապիկ, գործ չունե՞ս, գամ մոտդ աշխա-տեմ։

Քյոսան ասաց.— Հա՛յ, բարև, իմ տղա, գործ էլ շա՛տ կա, հաց էլ շա՛տ կա, փող էլ շա՛տ կա։

Երկուսը մեկ եղան, գնացին տուն։ Նա էլ մեծ եղբայրների անելիք գործը տվեց փոքր տղային, ասաց.— Սա է իմ պայմանը, համաձա՞յն ես։

Փոքր տղան ասաց.— Համաձայն եմ, բայց ես էլ մի պայման ունեմ, եթե դու նեղանաս՝ ես էլ քո ականջը պիտի կտրեմ և ծոծրակից մի կտոր կաշի պիտի հանեմ։

Մուսա-Քյոսա պապիկը համաձայնվեց, քանի որ գիտեր, որ ինքը չի նեղանա։

Տղան ձեռքն առավ լուծը, կուշտ-կուշտ կերավ ցորենի հացը, գարի հացը տվեց շանը։ Շունը չկե-րավ՝ խռովեց։ Շունը գնաց նստեց բակում, մի քա-րի վրա։ Տղան վերցրեց խթանիչը, խփելուն պես՝ շունը սատկեց։

Քյոսան եկավ ասաց.— Ինչո՞ւ շանը սպանեցիր։

— Մուսա-Քյոսա պապիկ, գարի հաց չուտող շունը այսպես շուտ կսատկի,— ասաց տղան,— նեղացա՞ր, պապիկ։

Քյոսան ասաց.— Չէ՛, չէ՛, չե՛մ նեղանում։

Հաջորդ օրը տղային ասաց.— Եզները լուսա-մուտի անցքից պիտի հանես ախոռը, պիտի գամ տեսնեմ՝ խոտ են ուտում։

Տղան ասաց.— Շատ լավ, Քյոսա պապիկ, հենց հիմա կտանեմ, լուսամուտի անցքից կանցկացնեմ իրենց։

Քյոսան ելավ գնաց։ Տղան վերցրեց զույգ եզ-

գըրկÖքն üլէ գնից, ջամ մը դգիշէն, ջամ մը վըդ-
վէն, ջամ մը կըÖխը, միգ-միգ անցÖց թաքախէն
ծագին, կըÖխը իտէր մըÖրը իրվան, ուշէդ-ուշէդ
կնüց զՔüսան գինչից.— Մուսա-Քüսա բաքÖկ,
արէ իշէ. բախրէքը չü՛ց անÖ՛շ-անÖշ գուգին։

Քüսան իգիք, իշից զրախրուցը կըÖխը խիղէն
լիրվան տրուծ, լիգվընէն տրուցը հանուծ ին։

Դղան üսուց.— Մուսա-Քüսա բաքÖկ, իշէ,
բախրիքը լիզօն հանուծ ին, խüդը գըրըլիցընին-
գըրըլիցընին գուգին։

Քüսան üսուց.— Վüյ, աս չա՞ պուն ի լէմ
կըÖխը պիրիր,— շüղ նէխիկիցուվ։

Դղան üսուց.— Մուսա-Քüսա բաքÖկ, նէխի-
կիցա՞ւր։

Քüսան üսուց.— Չէ, դղաս, չընէխիկիցու,—
ամմա Քüսան քանզան նէխիկիցուծ իր, քէնթը
թըղ պռնէր, հիկկէն գընիիր։

Քüսան իլվուծ ուրը սուրէ մը իծիր խոÖր գը-
ղէն, üսուց էր.— Ջամփին տուրիցէ ուծ չըրըրըն-
նի։ Անութա բըր ուրթուն, դÖշդ բըր ուկուն։

Դղան üսուց.— Շüդ üգվüր, Մուսա-Քüսա
բաքÖկ, իրդօնը իծըրէն փիրիրը թմպüղ քիմը գըն-
նօ, քանզան գուգին, նըքըր ջիթին։

Սüքüխդüն դղան իլուվ կնüց թüմզ գüղնը
հուսդ վüրուց մը գդրից՝ ամըն գիխիլէն իծօն
մէյը սադգիցընիլա համար։ Առուվ գիծիրը կնüց,
դըքըր խանդÖյը հասնա, լիդ ի գօն տառնօ, դա-
լաք իծիրը ջամփուն միջը փուից։ ՄթնÖյը ուշէդ-
ուշէդ իգիք իդօն, խաբուր իպիր Մուսա-Քüսա
բաքկÖն.— Լայսը աչկիտ, Մուսա-Քüսա բաքÖկ,
քի ուզուծը իղուվ, իծըրէն փüրը թմպüղ քիմը
իղուվ, քան զան գÖշդ ին։

Մուսա-Քüսա բաքօյը կնüց իշից, չա՞ դըսնա.
ալայ իծիրը սադգուծ ին։

— Իշշի քուռü՛գ, աս չա՞ շինիր իս, դօնս կըլ-
խէս փըլլէր իս։

Դղան üսուց.— Մուսա-Քüսա բաքÖկ, նէխի-
կիցա՞ւր։

— Հա՛, նէխիկիցու։

— Շարթը՝ շարթ է։

Մուսա-Քüսա բաքÖյը չուզից շարթը ջաքÖլ
ինիր, ամմա բզդüգ դղան գդրէճ իր, գաքից
զծէռվէն, վիդվէն, գդրից զանգանճը, հանից փի-
գուր մը ձամդագին, փարան üլէ առուվ կնüց։

ների էլ մորթեց, մի անգամ կաշին, մի անգամ
ոտքերը, մի անգամ էլ՝ գլուխը, մեկ-մեկ անցկաց-
րեց լուսամուտի անցքից։ Գլուխները դրեց մսուրի
խոտի վրա, շուտ-շուտ գնաց Քյոսային կանչեց.—
Մուսա-Քյոսա պապիկ, արի տե՛ս, եզները ի՞նչ
անուշ-անուշ ուտում են։

Քյոսան եկավ, տեսավ եզների գլուխները խոտի
վրա դրված, լեզուները դուրս հանած են։

Տղան ասաց.— Մուսա-Քյոսա պապիկ, նայի՛ր,
եզներն ինչպես լեզուներով խոտը փաթաթում-փա-
թաթում ուտում են։

Քյոսան ասաց.— Վա՜յ, էս ի՞նչ բան էր բերե-
ցիր գլխիս,— շատ նեղացավ։

Տղան ասաց.— Մուսա-Քյոսա պապիկ, նեղա-
ցա՞ր։

Քյոսան ասաց.— Չէ՛, տղաս, չնեղացա,—
Քյոսան այնքան էր նեղացել, որ քիթը բռնեիր՝ հո-
գին կտար։

Քյոսան հաջորդ օրը մի հոտ այծ տվեց տղային,
ասաց նրան.— Այծ ճամփից չպիտի դուրս գա։
Սոված պիտի գնան, կուշտ պիտի գան։

Տղան ասաց.— Շատ լավ, Մուսա-Քյոսա պա-
պիկ, իրիկունն այծերի փորերը թմբուկի պես կու-
ռեն, այնքան կուտեն, մինչև պայթեն։

Առավոտյան տղան ելավ գնաց զուտ կաղնուց
մի հաստ ճիպոտ կտրեց, որ ամեն խփելիս մի այծ
սատկեր։ Այծերն առավ գնաց, մինչև ձոր գնալն ու
դառնալը, բոլոր այծերին ճամփի մեջը փռեց։ Մը-
թանը շուտ-շուտ եկավ տուն, հայտնեց Մուսա-
Քյոսա պապիկին.— Աչքդ լույս, Մուսա-Քյոսա
պապիկ, քո ուզածը եղավ, այծերի փորը թմբուկի
նման դարձավ, այնքան որ կուշտ են։

Մուսա-Քյոսա պապիկը գնաց տեսավ, ի՞նչ
տեսնի. բոլոր այծերը սատկել են։

— Էշի քուռա՛կ, այս ի՞նչ ես արել, տունս գլ-
խիս ես քանդել։

Տղան ասաց.— Մուսա-Քյոսա պապիկ, նեղա-
ցա՞ր։

— Հա՛, նեղացա։

— Պայմանը՝ պայման է։

Մուսա-Քյոսա պապիկը չուզեց պայմանն ըն-
դունել, բայց փոքր տղան կտրիճ էր, նրա ձեռն ու
ոտը կապեց, ականջը կտրեց, հանեց ծոծրակից մի
կտոր կաշի, փողն էլ առավ ու գնաց։

## 27 (27). ԽԻԼԸՔ Ա̈ՃԿԱՅՆ

Գըգինը, չըգինուր. ա̈ղքուդ մօուրթ մը գըգինը, գունըրնը ա̈շկէյն մը։ Աղ ա̈շկընէն մօրր գըմինա, ա̈շկույն գընը դըյնըվէննը դա̈րը։ Ու մա̈լը գա̈սը դա̈ղէն.— Յադա́, դըքըր յէփ միք աուունց խուդ բըր մընուք. կընը, ա̈սը թա̈քա̈վիրէն միգ ա̈լը թըղ ուդը լու̊մուամը խուդ, միք ա̈լը անիք գխուղէն հöում։

Գըննը գöուդ. գուրթը թա̈քա̈վիրէյն քöու։ Տը-ուն բա̈կչէն գա̈սը.— Չաու̂ գուգիս։

Աղ մօուրթ գա̈սը.— Թա̈քավէյր գուգիմ դըսնօմ։

Խարուր գուգուն թաքավիրէյն.— Ա̈ղքուդ մօուրթ մը իգöուծը, գöուգը գքիգ գըսնա։

Թա̈քա̈վէյր գա̈սը— Թուղըք, թըղ ուկը։

Ա̈ղքուդ մուրթ գընիր թա̈քա̈վիրէյն քöու, պարիվ գուգը, ծուաու գըրակնը, գըդա̈ննա։

Թա̈քա̈վէյրը գա̈սը.— Չաու̂ գուգիս։

— Թա̈քա̈վիր ա̈րրուծ,— գա̈սը,— իս աս գարիգէս մէյջ խուղը բաադ գիրուծ չիմ, գաղչիմ, գէր միգ öուփ մը խուդ, միք ա գխուղէն հöում անիք։

— Ա̈զվէըր,— գա̈սը թա̈քա̈վէյր,— կընը իդöն, իս գա̈սիմ, քիգ գուգուն բադօս մը խուդ։

Գուկը իրիգ կիէդ, գուգուն էյր բադօս մը խուդ էյնք ու ա̈շկէյն գըրաշլին գադ խէուղ գաքնէյը Դաքնիլ իքան իսկէն հավուան մը խուղին ուրիցը գուկը։

Ա̈շկայն գա̈սը.— Փաուք ասըծը, ադուծ միր ջմուաթ իդէր։

Դöդ գա̈սը.— Աս հավուան բըր դանըմ թա̈քա̈վիրէն։

Ա̈շկէյն գա̈սը.— Յադա́, արը ծախիք զաս ու արրէք։

— Չիէ, յավրում,— գա̈սը,— ագար թա̈քա̈վէյր զաս իöուդ միգ թըդ չուդիր, զաս հավուան չըր ջընուայքիր։

— Ա՜խ, յադա́, ուöն գէտխալըդընուս, ուöն զաս հավուան թա̈քա̈վիրէն բըր դանէս, ամմա թա̈քա̈վէյր քինը զասիր ծաուն ա̈լը բըր ուզը։

Դöուդ չըգդըրվէյր։ Միգանöուր զաուը գհավուան, գուրթը թա̈քա̈վիրէն քöու։

Թա̈քա̈վէյր գա̈սը.— Հաբը ասիր ծուաու յա՞յըը։

— Թա̈քա̈վիր աբրո՞ւծ,— գա̈սը,— զաս մին ջըդուք, զաս պիրա։

— Չիէ,— գա̈սը թա̈քա̈վիր,— ուաք գծուաու բիհöուծաք։

Չայր թը գա̈սը ադ մօուրթ, թա̈քա̈վէյր չավ-

## 27 (27). ԽԵԼՈՔ ԱՂՋԻԿԸ

Լինում է, չի լինում, մի աղքատ մարդ է լինում, ունենում է մի աղջիկ։ Այդ աղջկա մայրը մեռնում է, աղջիկը սասնինը տարեկան է լինում։ Մի օր էլ հորն ասում է.— Հայրի՛կ, մինչև ե՞րբ մենք առանց հողի պիտի մնանք, գնա՛, ասա թագավորին, որ մեզ էլ մի կտոր հող տա, մենք էլ հողի համն առնենք։

Հայրը վեր է կենում, գնում թագավորի մոտ։ Դռնապանն ասում է.— Ի՞նչ ես ուզում։

Մարդն ասում է.— Թագավորին եմ ուզում տեսնել։

Լուր են տալիս թագավորին, թե մի աղքատ մարդ է եկել, ուզում է քեզ տեսնել։

Թագավորն ասում է.— Թողե՛ք, թող գա։

Աղքատ մարդը բարձրանում է թագավորի մոտ, բարևում, ձեռքը համբուրում, կանգնում։

Թագավորն ասում է.— Ի՞նչ ես ուզում։

— Թագավորն ապրած,— ասում է մարդը,— ես այս տարիքիս մեջ դեռ հողի բերք չեմ կերել, խնդրում եմ՝ մեզ էլ մի բուռ հող տուր, մենք էլ հողի համն առնենք։

— Շա՛տ լավ,— ասում է թագավորը,— գնա՛ տուն, ես կասեմ, քեզ մի կտոր հող կտան։

Գալիս է իրենց գյուղը, նրան մի կտոր հող են տալիս։ Ինքն ու աղջիկը սկսում են այդ հողը հերկել։ Հերկելիս հողից ոսկե սանդ է դուրս գալիս։ Աղջիկն ասում է.— Փա՛ռք աստծո, աստված մեր բախտը տվեց։

Հայրն ասում է.— Այս սանդը պիտի տանեմ թագավորին։

Աղջիկն ասում է.— Հայրի՛կ, արի ծախենք այն, ապրենք։

— Չէ՛, զավակս, եթե թագավորն այս հողը մեզ տված չլիներ, այս սանդը չէինք գտնի։

— Ա՜խ, հայրի՛կ, դու սխալվում ես, դու այս սանդը որ թագավորին տանես, նա սրա ձեռքն էլ է ուզելու։

Հայրը չի զիջում։ Հաջորդ օրը վերցնում է սանդը, գնում թագավորի մոտ։

Թագավորն ասում է.— Հապա սրա ձեռքն ու՞ր է։

— Թագավորն ապրա՜ծ,— ասում է,— միայն այս գտանք, սա էլ բերեցի։

— Չէ՛,— ասում է թագավորը,— դուք ձեռքը պահել եք։

Մարդն ինչ որ ասում է, թագավորը չի հավա-

դուր։ Դըգինչը գէյր äսկäրնէր. գäսը.— Ախկիլըցէք զաս մօուրթ, հույ ալ մուգաք էյր։

Միգան օուր գինա զըգինչը զմօուրթ, գäսը.— Äգար հավանէն ծուառ թը չըր պիրիր, չիդ գըչարչարիք գքիզ։

— Թäքäվիր աբրո՛ւձ,— գäսը,— ագար ծուառ ըգուձ թը ըընայքիր, հէյդ բարաբար զըպիրայմ զիր։

Թäքäվէյր նիգացավ.— Արըք, դարըք, ձիձիցէյք գը, դըքըր ըրարը։

Դըդանէն զմօուրթ, ադվէյր մը զըձիձին։

Մօուրթ զըրաչըը ճըզէյլ. «Բայլէքը գäչկայնիս թըղ լըսայմ»։

Թäքäվէյր զըգինչը գէյր մարթուաք, գäսը.
— Ձա՞, äսուձ լիփըր ձիձիցաք գը։

— Բաս äսուց. «Բայլէքը գäչկայնիս թըղ լըսայմ»։

— Պիրիք զմօուրթ հուս։

Գուկը մօուրթ, թäքäվէյր գäսը.— Ձվա՞ ուՕն գուձայր. «Բայլէքը գäչկայնիս թըղ լսայմ», Փր äչկէյն չա՞ äսուձ։

Äչկէյնիս äսուձ. «Äրը լադա՛, զադ հավուան մը գանէյր, թäքäվէյր քինը զասիր գծառն äլը բըր ուգըը»։

Թäքäվիր äսուց.— Քանզա՞դ խիլըք äչկէյն գունէյս ուՕուն, քա՞նը դարը գըննր։

— Մուդ քուն դարը։

Թäքäվէյր գäսը.— Յէփր ուրգուադը, գäսիս äչկընէս ընծը, էմ էրվան ուա՞րմ մը թըղ գարը՝ առունց թիլ, առունց աւիդ։

ԴՕուդ գուրթը, äչկընէյն գäսը, չայըր թäքäվէյր äցուձ իր։

— Յադա՛, խս չացա՞ քիզ՝ մը՛ դանէյր զհավուան, բուլուամ գինէս, համը չա՞ իդա։

— Ա՛խ, äչկայնի՛ս,— äսաց դՕուդ,— համը ավիլս բալան ինզուձ իք։ Համը թäքäվէյր քինը զուգը ուա՞րմ մը գարիս էր՝ առունց թիլ, առունց աւիդ։

— Շիդ ադվիր,— գäսը äչկէյն,— գուրթուս գäսիս թäքäվիրէյն՝ յիրգնայց ամբիրէն ըմմը ըսանդ ըր գՕւգը, թըղ գուրգը բադօւ մը, զարէմ էր ուաղըմը։

Միգան օուր դՕուդ գուրթը թäքäվիրէյն գäսը.
— Թäքäվէյր աբր՛ուձ, äչկայնիս գուäսը քէու. «Յիրգընայց ամբիրին ըմմը ըսանդ ըր գՕւգը, թըղ գուրգը բադօւ մը, զարիմ էր ուա՞րմ մը»։

Թäքäվէյր զըղըսնա քի ըսհախ խիլըք äչկայնը, գäսը.— Բարա՛, վօուղ զäչկայնիս զըպիրիս հուս, ամմա նա՛ քիլիլու բըր ուկը, նա՛ դա՝ հիձուձ, նա՛ միրզադ բըր ուկը, նա՛ դա՝ հակուձ։

ԴՕուդ գուկը, äչկընէն քօու գäսը.— Վօուղ բըր ուրթուք թäքäվիրէն քՕու, ամմա ան äսուց.

տում, կանչում է իր զինվորներին, ասում.— Բանտարկեցե՛ք այս մարդուն, հաց էլ մի տվեք։

Մյուս օրը դարձյալ կանչում է այդ մարդուն և ասում.— Եթե սանդի ձեռքը չբերես, շատ պիտի չարչարենք քեզ։

— Թագավորն ապրա՛ծ, եթե ձեռքը գտած լինեինք, սանդի հետ կբերեի։

Թագավորը զայրանում է.—Վերցրե՛ք, տարե՛ք, ծեծե՛ք, մինչև խոստովանի։

Տանում են մարդուն, մի լավ ծեծում։

Մարդն սկսում է գոռալ. «Երանի աղջկաս լսած լինեի»։

Թագավորը կանչում է իր մարդկանց, հարցնում.— Ի՞նչ ասաց, երբ նրան ծեծում էիք։

— Միայն ասաց. «Երանի աղջկաս լսած լինեի»։

— Բերե՛ք մարդուն այստեղ։

Մարդը գալիս է, թագավորն ասում է.— Ինչու՞ էիր դու ասում. «Երանի աղջկաս լսած լինեի»։ Աղջիկդ ի՞նչ ասաց որ։

— Աղջիկս ասաց. «Արի՛, հայրիկ, այդ սանդը մի՛ տանի, թագավորը քեզանից սրա ձեռքն էլ է ուզելու»։

Թագավորն ասաց.— Այդքա՞ն խելոք աղջիկ ունես դու, քանի՞ տարեկան կլինի։

— Մոտ քսան տարեկան։

Թագավորն ասում է.— Եթե այդպես է, աղջկադ կասես, որ ինձ մի ձեռք հագուստ կարի՝ առանց թել ու ասեղի։

Հայրը գնում է, աղջկան ասում այն, ինչ թագավորն ասել էր։

— Հայրի՛կ, ես չասացի՞ քեզ՝ մի՛ տանի սանդը, փորձանքի ես հանդիպելու, հիմա ի՞նչ եղավ։

— Ա՛խ, աղջի՛կս,— ասաց հայրը,— հիմա ավելի մեծ փորձանքի մեջ ընկանք։ Հիմա թագավորը քեզնից պահանջում է, որ դու նրան մի ձեռք հագուստ կարես՝ առանց թել ու ասեղի։

— Շա՛տ լավ,— ասում է աղջիկը,— կգնաս թագավորին կասես՝ երկնքի ամպերի որ գույնը որ ուզում է, թող մի կտոր ուղարկի, որ նրա հագուստը կարեմ։

Հաջորդ օրը հայրը թագավորի մոտ է գնում, ասում.— Թագավորն ապրա՛ծ,— աղջիկս ասում է. «Երկնքի ամպերի որ գույնը որ ուզում է, թող մի կտոր ուղարկի, իրեն մի ձեռք հագուստ կարեմ»։

Թագավորը տեսնում է, որ իրոք, աղջիկը խելոք է.— Հայրի՛կ, վաղն աղջկադ կբերես այստեղ, բայց ո՛չ քայլելով է գալու, ո՛չ էլ՝ հեծած, ո՛չ մերկ է լինելու, ո՛չ էլ՝ հագնված։

Հայրը գալիս, աղջկան ասում է.— Վաղը գնալու ենք թագավորի մոտ, բայց նա ասաց. «Աղջիկդ

«Ա̈շկայնիտ նա̈ քիլիլու բըր ուկը, նա̈՝ հիձձուձ, նա̈ ըռահու բըր ուկը, նա̈՝ միրզագ»։

—Աղվէյրը,— գա̈սը,— կնը́, տրասնէն զէյշը պիր, կնը́ ինը շըրըկաչէյն ա̈լը ա̈սը՝ բադըրդաձ շըրըկէյմ թըղ ուզը։

Դöւդ գուրթը գիշն ա̈լ զըպիրը, շըըկին ա̈լ։

Ա̈շկայն զըմիրզընը, զըբըլվա շըրըկին, զըպռնը իշօն զակէյն, էյշ զըքիշը, գուրժուն թա̈քա̈վիրէն քöու։

Թա̈քա̈վիր զըդլուշինմիշըննօ. «Ըսա̈խ, խիլըք ա̈շկէյնը ի. զաս զընագ զառնիմ»։

Գա̈սը.— Ա̈շկէյն, իս զքիզ բըր առնիմ զընագ, բըր տառնուս սուլթան, ամմա, իս քիզ պօուն մը բըր ա̈սիմ, առունց ընծը՝ մարթա խրուդ չըբըր ուդուս, ագար կաղդագ խըրուդ թը զուդուս մարթա, իս զքիզ զըթարգիմ։

— Շի̈դ աղվիր,— գա̈սը ա̈շկայնը։

Տըզադ սիրուվ զաբրէն հէյնկ-վից ամէյս։ Ուր մա ըրգը կիղացա արարանտ փադ զըպիրին քաղըք ձախիլա։ Կիշիրու հայվանայն զըդանէյն խուուն զըզաբին, իրիք գուրթուն յութայլ։ Միգէյն արաբանան մաղըզ ծայն մը լձուձ զըննը, միզալ արաբանան՝ ըրգը բախըը։ Սա̈բա̈խդա̈ն զուկը բախրöուց դայր, գիշը ըրգը բախրöն արասայն ծիլը քուռիէմ զը, զըխընդը.— Օ՜,— գա̈սը,— բախրիէքիս ծիլը քուռէմ ձընանէյն։

Քայչ մը սօնա̈րա զուկը ձիօն դայր.— Փա̈ռք ասըձը,— գա̈սը,— ծայնիս ձընանէյր, շիդ պիռ զըպառնում։

Բախրօց դայր գասնա, զըկըրզը զքուռէյը, գա̈սը.— Զա՞ հուխ զունէյս յէմ քուռէյ։

— Զուց,— գա̈սը ձիօն դայր,— աս էմ ծիօն քուռէյնը։

Ա̈գիկ զըբաշլին մա̈ջադալան, յա̈նտին զուկը փուլիյա։ Սօնզըրա դաղվան զըհասնա թա̈քա̈վիրէն քöու։

Բախրուց դայը գա̈սը.— Թա̈քա̈վիր աբրո՜ւձ, սա̈բա̈խդա̈ն կացա խöուն, դիսա բախրէքիս ծիը քուռէմ ձընանէյն, համը աս մօուրթ գուա̈սը՝ ծիը քուռէյ այնն ը։

Ծիօն դայր գա̈սը.— Թա̈քա̈վիր աբրո՜ւձ, էմ ձայն ձանդըրցօձ իր, կիշիրու ձնանէյր, քուռէյ կուլըվէյր, կացէյր հասէյր բախրöուց գիսդիէղ մացէյր, համը աս մօուրթ էյմ ծիը քուռգայն դիր զուզաննա։

Թա̈քա̈վէյր գա̈սը.— Ծիյը քուռէյը յայրըր գիր, անիր զըհասնա։

Բախրöուց դայր զըխընդըրդը, զըտընա զքուռիէ յարաբայնան, գուրթը ի դöն։

Ծիöն դայր զընիղանը լալը-լալը զընադա յարաբանան։

Ուրթիլն իկան քաղքէյն մէյչ զըդըսնուազ բառօվ մը, զըհարցնը.— Զվա՞ զöւլուս։

ո՛չ քայլելով է գալու, ո՛չ էլ՝ հեծած, ո՛չ հագնված պիտի գա, ո՛չ էլ՝ մերկ»։

— Շա՛տ լավ,— ասում է աղջիկը,— գնա՛, հարևանից էշը բեր, գնա՛, ձկնորսին էլ ասա՝ մի պատառոտված ուռկան տա։

Հայրը գնում է էշն էլ է բերում, ուռկանն էլ։ Աղջիկը մերկանում է, ուռկանով փաթաթվում, բռնում է էշի պոչից, էշը քարշ է տալիս, գնում են թագավորի մոտ։

Թագավորը մտածում է. «Իրո՛ք, այս աղջիկը խելոք է, ես նրան կին կառնեմ»։

Ասում է.— Աղջի՛կ, ես քեզ կին կառնեմ, դառնալու ես թագուհի, բայց քեզ մի բան եմ ասելու,— առանց ինձ՝ մարդու խրատ չպիտի տաս, եթե ինձանից գաղտնի խրատ տաս, ես քեզ կթողնեմ։

— Շա՛տ լավ,— ասում է աղջիկը։

Այդպես սիրով հինգ-վեց ամիս ապրում են։ Մի օր էլ երկու գյուղացի սայլերով փայտ են բերում քաղաք ծախելու։ Գիշերով անասուններին տանում են իշխանատուն, կապում, իսկ իրենք գնում են հյուրանոց։ Մեկի սայլին լծված է լինում մի մատակ ձի, մյուսի սայլին՝ մի զույգ եզ։ Առավոտյան վաղ եզների տերը գալիս տեսնում՝ եզների արանքում մի ձիու քուռակ, ուրախանում է.— Օ՜,— ասում է,— եզներս մի քուռակ են ծնել։

Քիչ հետո ձիու տերն է գալիս.— Փա՛ռք աստծո,— ասում է,— ձիս ծնել է, հիմա շատ բեռ կքաշեմ։

Եզների տերն անցնում գրկում է քուռակին, ասում.— Ի՞նչ իրավունք ունես իմ քուռակի վրա։

— Ինչպե՞ս,— ասում է ձիու տերը,— սա ի՛մ ձիու քուռակն է։

Նրանք սկսում են վիճել, այնտեղից մի ոստիկան է գալիս։ Վերջը բանը հասնում է թագավորին։

Եզների տերն ասում է.— Թագավորն ապրա՛ծ, առավոտյան վեր կացա, գնացի իշխանատուն, տեսա, որ եզներս ձիու քուռակ են ծնել։ Հիմա այս մարդն ասում է՝ ձիու քուռակն իմն է։

Ձիու տերն ասում է.— Թագավորն ապրա՛ծ, իմ ձին հղի էր, գիշերով ծնել է, քուռակը գլորվելով գնացել, եզների արանքն է ընկել, հիմա այս մարդն իմ ձիու քուռակին տեր է կանգնել։

Թագավորն ասում է.— Ձիու քուռակը որտեղ որ գտնվում էր, նրան է հասնում։

Եզների տերն ուրախանում է, գնում վերցնում է քուռակին, դնում սայլի մեջ ու տանում տուն։

Ձիու տերը շատ է վշտանում, լաց լինելով նստում է սայլին։

Գնալու ժամանակ, քաղաքի միջով անցնելիս մի պառավի է հանդիպում, հարցնում է.—Ինչու՞ ես լաց լինում։

— Ա՜խ, դադիմա̈՛ր,— գա̈սը,— խս չուլում, ու՞վ թըղ ուլու։ Ծիր թա̈քա̈վէյր ողիրթ շա̈ռա̈ուտ հըդիստ, էյմ ծիը քուռիէյ բախրօ̈ց դրէյչ իդէյր։

— Օղլը՛մ,— ա̈սուց բառօվ,— սուլթուան քան գթա̈քա̈վէյր աղվիր, խիլըք շա̈ռա̈ուտ գըդըսնա, կնը՛ սուլթանէյն քօ̈ու։

Ադ մուրթ գուրթը սուլթանէյն թարա̈ղայն վըրքը գըգաննա սըհաթ մը ղ̊ադարը, իչուց գարցուանք սրփիլու։

Սուլթուան թարա̈ղին գըդըսնուա գը, գա̈սը խըզմէթքարիրէյն.— Գինչիցը՛ք գիդը մուրթ, թըղ ուկը հուս, իշիմ չա՞ուզը։

Մուրթ գուրթը սուլթանէյն քօ̈ու.— Ձվա՞ գօ̈ուլուս, ախպա̈՛ր,— գա̈սը սուլթուան։

— Թա̈քա̈վէյր,— գա̈սը,— էյմ ծիօն քուռիէյ բախրօ̈ց դրէյչ հուխ գիսու։ Հիչ գիսէ՞յզ, խանում սուլթուան, բախրին գըձընանա, ծիը քուռըգ պիրէ։

Սուլթուան ա̈սուց.— Մ՛ուլուր, ախպա̈՛ր, իս քիզ պօ̈ուն մը գըշուռիմ, ամմա չըբըր ա̈սիս. քէ սուլթուան սուրվըցէյց գէս։ Վօ̈ուղ—, գա̈սը,— թա̈քա̈վէյր իլան վազայր ծիօն նստուծ ինը քադիէք բըր ուրթուն, սօ̈ն ա̈լը գրղ̊ընօս շըբըկէյմ, չանթուամ գըգարիս յուսիտ, յիփըր գիշիս գօ̈ուկուն, գըքարիս գշըբըկին ջամփօն իդէյր գըքիշիս, գըհանիս միչին իփր ծագ, գըտնէյս ի չանթան։ Գուկուն ադիք գըհարցնիին քիզ՝ չա՞ու շինիս։ Տօ̈ն ա գա̈սիս՝ չա̈ու գըսնաք ծագ գօ̈ուպընիմ։

Միզանօւրը ծիուն քոռգայն դայր դառնը գշըբըկին, չանթամա գըգախը յայս, գըհիյա ի ջամփիյ, գիշը յանտին գօ̈ուկուն թա̈քա̈վէյր իլան վազայր, գըբիլիշա շըբըկը քարէյլ, թա̈քա̈վէյր գա̈սը.— Ադ մուրթ շաշ̊ըն՞ը, չա՞յ ը,— գըմոդգընուն, գա̈սին,— ա̈դ չա̈ու շինիս։

Մուրթ գա̈սը.— Ձա̈ու գըսնաք, ծագ գօ̈ուպընիմ։

— Շաշ̊ըն,— գա̈սը թա̈քա̈վէյր, ցամիէք ծա՞գ գըդին ը։

— Իսը չիմ շաշ̊ընը, բախրին բադըղ ծիը քուռօ̈գ ձընանա, չվա՞ ցամիէք ծագ չի գինար։

Թա̈քա̈վէյր ավըլ-մավըլ կլիր գիյնա.— Վօ̈ուղ,— գա̈սը,— հէր հայ քօ̈վիս գուկուս։

— Միզան օւրը ծիօն դայր գուրթը թա̈քա̈վիրէյն քէուվ։

—Ուղէ՛յրթ ա̈սը,— գա̈սը,— ո̂ւվ սուրվըցէյց գքիզ։

— Հի՛չ մուրթ,— գա̈սը։

Թա̈քա̈վէյր գըգինչըցընը գըակչաք, գա̈սը.— Աղվէյր մը ձիձիցըք, թիփըռըցիէյք գը, դըքըր ղ̊ըրարը։

Քանզան գըձիձէյն գը, քի մաժբուր գընը, գա̈սը.— Սուլթուան սուրվըցէյց զէյս։

—Ա՜խ, տատի՛,— ասում է,— ես լաց չլինեմ, ո՞վ լաց լինի։ Ձեր թագավորն արդար դատ չարեց, իմ ձիու քուռակը եզների տիրոջը տվեց։

— Տղա՛ս,— ասաց պառավը,— թագուհին թագավորից ավելի լավ, խելոք դատ կանի, գնա՛ նրա մոտ։

Այդ մարդը գնում է թագուհու լուսամուտի տակ կանգնում է մի ժամի չափ, աչքերի արտասուքը սրբելով։

Թագուհին պատուհանից նկատում է նրան ու ասում իր աղախիններին։— Կանչեցե՛ք այդ մարդուն, թող գա այստեղ, տեսնեմ ի՞նչ է ուզում։

Մարդը գնում է թագուհու մոտ.— Ինչո՞ւ ես լաց լինում, եղբա՛յր,— հարցնում է թագուհին։

— Թագավորը,— ասում է նա,— իմ ձիու քուռակը եզների տիրոջը հանձնեց։ Իսկի տեսե՞լ ես, տեր թագուհի, եզը ծնի, ձիու քուռակ բերի։

Թագուհին ասաց.— Մի՛ լար, եղբա՛յր, ես քեզ մի խորհուրդ կտամ, բայց ոչ մեկին չասես, որ թագուհին է սովորեցրել։ Վաղը թագավորն ու վեզիրը ձի նստած քաղաք են գնալու, դու էլ գտիր մի ուռկան և մի տոպրակ, կախիր ուսիցդ, երբ տեսնես, որ նրանք գալիս են, ուռկանը գցիր ճամփի եզրին, քաշիր իբր միջից ձկներ ես հանում, լցնում տոպրակի մեջ։ Նրանք կգան, քեզ կհարցնեն, թե ի՞նչ ես անում։ Դու էլ կասես՝ չե՞ք տեսնում, ձուկ եմ բռնում։

Հաջորդ օրը ձիու քուռակի տերը վերցնում է ուռկանը, ուսից մի տոպրակ կախում ճամփին ըսպասում։ Տեսնում է՝ այն կողմից թագավորն ու վեզիրը գալիս են, սկսում է ուռկանը գցել և քաշել։ Թագավորն ասում է.— Այդ մարդը գժվե՞լ է, ի՞նչ է,— մոտենում են, հարցնում,— այդ ի՞նչ ես անում։

Մարդն ասում է.— Չե՞ք տեսնում, ձուկ եմ բռնում։

— Շշմած,— ասում է թագավորը,— ցամաքում ձո՞ւկ կլինի։

— Ես չեմ շշմածը, եթե եզը քուռակ կծնի, ինչո՞ւ ցամաքում ձուկ չի լինի։

Թագավորն անմիջապես գլխի է ընկնում.— Վաղը,— ասում է,— մոտս կգաս։

Մյուս օրը ձիու տերը գնում է թագավորի մոտ։

— Ճի՛շտն ասա,— ասում է թագավորը,— ո՞վ քեզ սովորեցրեց։

— Ո՛չ մեկը,— պատասխանում է մարդը։

Թագավորը կանչում է պահակներին, ասում.— Մի լավ ծեծեք սրան, փետրահան արեք մինչև խոստովանի։

Այնքան են ծեծում, որ ստիպված է լինում, ասում է.— Թագուհին ինձ սովորեցրեց։

Թöքöվէյր ավըլ-մավըլ բըրուանք գըխուձձը. «Դիմակ ան ընծը տավաչանէց, խափից գէս»։

Իրգուան Թöքöվէյր մէյլժ իրիս գուրժը ի դöն։ Սուլթօուն արգ առչընը ձուղրիրիս գընընը յաս-չայլ, գöսը.— Զվա՞ մայլժ ը ջահրատ։

— Ծուանիտ դըդրը.— գöսը,— չöցա՞ քիգ, ղայր մարժա խըրուդ չըբըր ուդուս առուեց ընծը։ Տöն չվա՞ ալամէյն խըրուդ դվöուձ իս։

Ցառանչ սուլթօուան գինքըրը.— Իս մարթա խըրուդ դվուձ չիմ.— դöսը։

Շիդ գուռիլին սօնդըրա, գöսը. Շöդ ղահրիցա զադ մօուրժ, չուռիցուագը։

— Ցըփըը տըրգաար,— öսուց Թöքöվէյր.— իս էյմ ինջըմայն յիդ չըմ առնիր. իս ըրվանէն էյմ գընա չիս, ամմա աս վից ամայս, քի միք շիդ մուհարաժու արրիցուք. ադիր բադուալ աս սարայէն միչին քանգալօյը սիրուձ պօունիս, բադօու մը գառնիս, գըղանէյս հէյդիտ։

Սուլթօուան գöսը.— Թöքöվէյր արրո՞ւձ, քը öցէուձ թըղ ըննը, իս öլ öսիմ պօուն մը, պիժընվիլ ա՝ դուպիժընվէնք, öրը Öմէյս ղադախ մը կինա խմիք, պիժնըվէք։

— Աղվէյրը,— öսուց Թöքöվէյր։

Սուլթօուան անցուվ մուդպուախ, իլէյց ըրգը ղադախ կինա, միգէն մէյչ բոյըլմըշ ընիլը իլաչ իռէր, իդէրգը Թöքöվիրէյն։ Ըրգը մէյ թօղա ինիլու öսուձ սուլթօուան.— Գö՞րը մընուս, Թöքöվէյր,— öսաց, խմից։

Թöքöվիրն öլը,— Քիզ պöրը ջամփըք,— öսիլու, խմից գէյր ղադախը։

Թöքöվէյր խմէուձ քիմը, խէյլք անցու, միռուձ քիմը իդու։

Կիշիրն öլը սահալթը տօս իդու։ Ավըլ—մավըլ սուլթօուան գինչից ֆայտօնչուամ, բըլլից զԹöքöվէյր խալուայմ միչ, տրուն զը ֆայտօն, ուղիրթ էյր դաղէն դաուն։ Սահալթ ըրգուքէյն կիշիրու Թöքöվէյր գիՖը, գիշը ձարվիցöուձը, զըգինչը խըղմէյթքարիրէն անօուն, գöսը.— Ճայր մը պիրըք ընծը։

Ավըլ-մավըլ սուլթօուան գըլըննա խալօում* մը ճէր, գըմիննը Թöքöվիրէյն։

Թöքöվէյր խալօում պռնօուձ քիմը կայըղըլամըշգինը, գöսը. — Իս յօ՞ գում։

Սուլթօուան գöսը.— Միր դաուն։

— Զաո՞ւ շինիմ յասդիէղ,— գöսը Թöքöվէյր։

— Զո՞ւց,— գöսը գնöյը,— տÖն չöցի՞ր՝ քան զալուս ղըլմաթլը պօուն դուր հէյդիտ։ Իս ղայր գքիզ ղըլմաթլը պուն չունէյմ յաս աշխար, գքիզ ալ հիդիս պիրա։

Ցան վախըտը Թöքöվէյր գընը գըկըրգը, գըպաքնը զգընöյը։

Թագավորն իսկույն շրթունքն է կծում. «Սիրիմըն նա ինձ դավաճանեց, խաբեց ինձ»։

Թագավորը երեկոյան տխուր դեմքով տուն է գնում։ Թագուհին առաջվա նման խնդումերես դիմավորում է նրան ու ասում.— Ինչո՞ւ ես տխուր։

— Ձայնդ կտրի՛ր,— ասում է թագավորը,— ես քեզ չե՞մ ասել, որ ոչ ոքի խրատ չտաս առանց իմ գիտության։ Դու ինչո՞ւ ես ուրիշին խրատ տվել։

Սկզբում թագուհին ուրանում է.— Ես մարդու խրատ չեմ տվել,— ասում է։

Շատ ստիպելուց հետո ասում է.— Շատ խղճացի այդ մարդուն, խորհուրդ ավեցի։

— Որ այդպես է,— ասաց թագավորը,— ես իմ խոսքից ետ չեմ կանգնի. այս օրվանից իմ կինը չես, բայց այս հինգ-վեց ամիսը, որ միասին սիրով ապրեցինք, դրա փոխարեն այս պալատից քո ամենասիրած բանից մի կտոր կվերցնես, քեզ հետ կտանես։

Թագուհին ասում է.— Թագավորն ապրա՜ծ, քո ասածը թող լինի, ես էլ մի բան ասեմ, բաժանվելը՝ կբաժանվենք. արի մի-մի թաս գինի խմենք, հետո բաժանվենք։

— Լա՛վ,— ասաց թագավորը։

Թագուհին գնաց խոհանոց, լցրեց երկու բաժակ գինի, մեկի մեջ քնաբեր դեղ լցրեց, մատուցեց թագավորին։ Երկուսը բաժակները խփեցին, թագուհին ասաց.— Մնաս բարո՜վ, թագավոր,— ասաց ու խմեց։

Թագավորն էլ.— Քեզ բարի ճանապարհ,— ասելով խմեց իր բաժակը։

Թագավորը խմելուն պես ուշաթափվեց, մեռելի նման եղավ։

Գիշերվա ժամը տասը եղավ։ Թագուհին շտապ կանչեց մի կառապան, փաթաթեց թագավորին մի գորգի մեջ, դրեցին կառքի մեջ, քշեցին ուղիղ դեպի իր հոր տունը։ Գիշերվա ժամը երկուսին թագավորը զարթնեց, տեսավ ծարավ է, կանչեց իր սպասավորի անունն ու ասաց.— Մի ջուր տվեք ինձ։

Թագուհին իսկույն լցրեց մի խալում* ջուր, տվեց թագավորին։

Թագավորը խալումը բռնելուն պես զգաստացավ ու ասաց.— Այս ո՞ւր եմ։

Թագուհին ասաց.—Մեր տանը։

—Ի՞նչ եմ անում այստեղ,— հարցրեց թագավորը։

— Ինչպե՞ս,— ասաց կինը,— դու չասացի՞ր ինձ՝ ամենաթանկ բանը վերցնեմ, ինձ հետ տանեմ։ Ես էլ քեզանից ավելի թանկ բան չունեմ այս աշխարհում, քեզ վերցրեցի հետս, բերեցի։

Այն ժամանակ թագավորը վեր է կենում, գրկում, համբուրում է կնոջը։

* Զօրացած դդումից պատրաստված ջրաման.

— Ամմն,— գäըը,— ՝զմիդ մօտըմ թըղ չըղըս-
նա յապիէգ։
Կիշիրու գընիրն, գըշընօն ըրըը ծէյն, յաանչ
ըր արիվը ծիթը գըհաանէյն տըրայըն։ Յան ու-
վանից իրից մուհարաթ գըշադնը. չան գäըըն,
ջան գըլսէյն։
— Բիգիմ էլէր, բիգիմ էլէր,
Հöքիօթ խոդէր չէրէգլէր։
Դանդիրն ä լ գäըը.
— Öթöդէն բիր յէլ էսափ,
Բու ադաթի բիզդէն քէսափ։

— Ի սեր ասածդ՞,— ասում է,— մեզ մարդ թող չտեսնի այստեղ։
Գիշերով վեր են կենում, գտնում երկու ձի, արևածագից առաջ հասնում պալատ։ Այն օրվանից իրենց սերը շատանում է. ջան են ասում, ջան՝ լսում։
— Մեր ձեռքերը, մեր ձեռքերը,
Հեքիաթն ուզում է աղանդեր։
Տանտերն էլ պատասխանում է.
— Մի կողմից փչեց քամին,
Այդ սովորույթն էլ վերացավ մեզնից։

## 28 (28). ÜՇԿԸՆԷՅՆ ՇԱԹՍԱՖԸ

Մօրթ մը գունընը ըրք դղը իլան äշկայն մը։ Ճäշկայնը հուրս գուգօ։

Ախպըրդուաք գիշին գըդըունօն, քի իրինց գö-ադը զիրինց փիսան ավիլա շիդ գուսիրը. գուզը-խանմըշ ըննուն, ամմա չուգարին ծուն հանէր։

Ուր գընը, ուր գըմընը, ուր մäլ բըղդäդ ախպար գäը մէգալ ախպըրդօց.— Էյէր թը գուգէք՝ իս գըխուսէմ գադէյն հէյդ։

Ախպըրդուաք զ՞անահայթ գուկուն։

Ուր մäլը բըղդäդ գղան գադէյն գäըը.— Յա-դä, յաանչ ըզմիգ շիդ գըսիրայիրիր, միր քուայր հուրս ըննիլին սօնրա, ըզմիր փիսան ավիլա շիդ գուսիրիս, քան ըզմիգ։ Ախպըրդաքըն äլէ գա-զ՞արխինէունիր։ Տօն չա՞ գäսիս, չա՞ ճուդուր ու-գում իրինց։

— Շիդ ադվիր, գղäս, վöղն իրգաուն իս ճու-ղուբ գուդում ծիդ։

Միգաննör սäրäխդäն դöուդ գըզինչը ըզմինձ գղան, գäըը.— Դղäս, իրգաուն միսաֆըր ըըր ունընուք, կընը չարշայն, չայըըր գըրիտա՝ մէյս, մայվը, ըսսը կընը պիր, դէյր մամայն, հարս-նէրան, սուֆրը թըղ խադրին։

Դղան գուրթը, գուպիրի շայըըր գուրիդա գäը մօր.— Յամä, գադայը äսուց քի, իրգաուն զ՞ըյմաթլը միսաֆըր ըըր ունընուք, äզվիր սուֆրօ մը խադրիցըք։

Իրգöննը դöուդ գըզինչը ըղըզդäդ դղան, գä-ըը էյր.— Դղäս, յէփր ինսան ըըր ուկը, կընը գքայ-րիտ ու ըզփիսատ äլը կինչը։

Իրգöն գընը ալուա գըճուղվէն, սաա միսա-ֆըրը ուկուծ չըննուր։ Էպպիյա հիյըլին սօնրա դö-ուդ մինձ դղայն գäըը.— Դղäս, գայիրվընը քի միր միսաֆըրը շըըըր ուկը գայր, աըը՝ մամայն, հարսնիրայն ըզսիզöուն թըղ պäնուն դա, ճուդվի-ցըք նըսդըք։

Գըշարվէյն սէղնէյն չուկտա՝ հարսնայր դղայց զ՞ուլտըզ՞ը, äշկայն՝ փիսէն զ՞ուլտըզ՞ը։

## 28 (28). ԱՂՋԿԱ ՊԱՏԻՎԸ

Մի մարդ ունենում է երեք տղա և մի աղջիկ։ Աղջկան ամուսնացնում է։

Եղբայրները նկատում են, որ իրենց հայրը փեսային ավելի շատ է սիրում, նախանձում են, բայց չեն կարողանում ձայն հանել։

Օր է գալիս, օր է անցնում, մի օր էլ փոքր եղբայրն ասում է մյուս եղբայրներին.— Եթե կուզեք՝ ես կխոսեմ հայրիկի հետ։

Եղբայրները համաձայնվում են։

Մի օր էլ փոքր տղան հորն ասում է.— Հայրի՛կ, առաջ դու մեզ շատ էիր սիրում, մեր քրոջը հարս տալուց հետո, սեր փեսային ավելի շատ ես սիրում, քան մեզ։ Եղբայրները վշտանում են։ Դու ի՞նչ կասես, ի՞նչ պատասխան տամ նրանց։

— Շա՛տ լավ, տղա՛ս,— ասում է հայրը,— վաղը իրիկուն ես կպատասխանեմ ձեզ։

Հաջորդ օրն առավոտյան կանչում է ավագ որդուն, ասում.— Տղա՛ս, այս երեկո հյուր ենք ունենալու, գնա շուկա, ինչ որ պետքն է՝ միս, միրգ ու բանջար բեր, տուր մայրիկին, հարսներին, թող սեղան պատրաստեն։

Տղան գնում, բերում է ինչ որ պետք է և ասում մորը.— Մայրի՛կ, հայրիկն ասաց, որ երեկոյան հարգարժան հյուր ենք ունենալու, լավ սեղան պատրաստեք։

Երեկոյան հայրը կանչում է փոքր որդուն, ասում նրան.— Տղա՛ս, քանի որ մարդ է գալու, գնա քրոջդ ու փեսայիդ էլ կանչիր։

Երեկոյան բոլորը հավաքվում են, բայց դեռ հյուրը չի երևում։ Երկար սպասելուց հետո, հայրն ավագ որդուն ասում է.— Տղա՛ս, երևի մեր հյուրն այլևս չի գալու, մայրիկին, հարսներին ասա՝ թող սեղան բացեն, հավաքվենք, նստենք։

Շարվում են սեղանի չորս կողմը՝ հարսները տղաների կողքին, իսկ աղջիկը՝ ամուսնու կողքին։

*Յիփըր գ՚դաղաննէն դըլըննօն, գöտդ ամր գինր ա՚չկընէյն վիգաց գանէնիլ.— Հանը՛ դըռնձո,— գüօր։*

*Ա՚չկէյն թատաճօր գինը, գüօր.— Զվա՞ բըր հանիմ գըռտնա։*

*— Հա՛նը, գüօսիմ քիզ։*

*Ա՚չկայն ամընչաթօան դըլիշա լöաց։*

*— Հանը՛, գüօսիմ քիզ։*

*Ա՚չկայն գըհանը ըղֆըստօան։*

*— Շարüնն ա հանը՛։*

*Յիփըր ա՚չկայն չըհանիր, գէօդ գüօսը.— Ղըղ-ըժ, ասիք քօ ախպըրդօաքն ին ու քը հարսնայը, աս öլէ մöրթիտ նը, միք öլը՝ քը գöտդ-մöարն իք։ Ամընչիլ չըրիգէր, յարանըշա չիկը միչվընէա։*

*Ա՚չկայն շüրüյնն ալ գըհանը։*

*— Վարդօաքիտ öլը հանը՛։*

*Ա՚չկայն գինա գըըլիշա լöաց։*

*— Հանը՛, գüօսիմ քիզ,— գüօսը գöտդ։*

*Յան վախըտը, ա՚չկայն մաժըսը գըննը, մարթօն իդըստ գասնա, գըըլիշա իչըցընէլ գվարդօաք։*

*— Հիրüք ը, չըրիգէր դալը, հանէր գատհըտ, արը՛ նէստ մարթöտ գօլածքը, բիլի՛ճըցըք ադէլ։*

*Դօղլին, գըխըմին, միղէան գըվըրցընին, գöտդ գüօսը տալ դըղօաք.— Միր հարցմանքէն ըղճա-դօտր ասաա՞ք։*

*Դղաաք դըշաշմըշ ըննան, միգմիգը խըխս գիշին, պան չըր հասդընըն։*

*Ան ադէյն գöտդ գüօսը.— Տաք ծիր քօր ախ-պըրդօք էք, միք öլը էր գöտդ-մöար։ Միր իդըս-տա չիգըկ գվարդօաք հանէլ, կնիկ էր մարթօն իդըստ գանիցա։ Դիմակ՝ ծիր քօր շատաֆ բինöղ միր փիսանը։ Դիմակ՝ ծիր քայլը զէյը շատաֆ գվէոձը մարթօն բինիլա։ Տաք էլ էյմ ավլադնայն էք ամմա, գան ավիլա բըր խասարիմ, քան ըզծիզ։*

## 29 (29). ԳԻՆԳՈՒՆ ՎԱՐԲԻԴՈՒԹԷՆԸ

*Գըցինու, չըցինու ախքադ աբրöղ մարթ մը իլան գնüյ մը։*

*Ադ գնüյը գüձիձվա մարթօն հիդը ադքադ աբրիլէն համար։*

*Մարթը գüսէ.— Զա բըր չինիմ։*

*Գնüյը գüսէ.— Կնօ, ջամփաք գդրէ։*

*Մարթը գփիդադը գըռնա յüսէն, գüրթօ ճամ-փաքը գüփիրէ։*

*Յանդüնից գüկü ադվöր ըսախնէն հալüձ ծիավöր մը, գüհարցընէ.— Հարցընիլը ա՚յըր չընօ՛ չա՞ գüշինիս։*

*— Ջամփաք գüգդրիմ, էմ չüճըխնէն հա-մար իդարըլը՞ բըր գöնէմ։*

*Երբ բաժակները լցնում են, հայրը կարգադրում է աղջկան ոտքի կանգնել.— Հանի՛ր շորերդ,— ասում է հայրը։*

*Աղջիկը զարմանում է, ասում.— Ինչո՞ւ պիտի շորերս հանեմ։*

*— Հանի՛ր, ասում եմ քեզ։*

*Աղջիկը ամոթից սկսում է լաց լինել։*

*— Հանի՛ր, ասում եմ քեզ։*

*Աղջիկը հանում է շրջազգեստը։*

*— Շապիկդ էլ հանի՛ր։*

*Երբ աղջիկը չի հանում, հայրն ասում է.— Աղջի՛կս, սրանք քո եղբայրն ու քո հարսներն են, սա էլ ամուսինդ է, մենք էլ՝ ծնողներդ, ամաչել պետք չէ, օտար չկա մեջներս։*

*Աղջիկը շապիկն էլ է հանում։*

*— Վարտիքդ էլ հանի՛ր։*

*Աղջիկը նորից է լաց լինում։*

*— Հանի՛ր, քեզ ասում եմ,— ասում է հայրը։*

*Այն ժամանակ աղջիկն ստիպված անցնում է ամուսնու թիկունքն ու սկսում է վարտիքն իջեցնել։*

*— Բավակա՛ն է, այլևս պետք չէ, շորերդ հագի՛ր, արի՛ նստիր ամուսնուդ կողքին, սկսե՛ք ուտել։*

*Ուտում, խմում, սեղանը հավաքում են, հայրը ասում է տղաներին.— Ձեր հարցի պատասխանն ստացա՞ք։*

*Տղաներն ապշած մեկը մյուսի երեսին են նայում, ոչինչ չեն հասկանում։*

*Այն ժամանակ հայրն ասում է.— Դուք ձեր քրոջ եղբայրներն եք, մենք էլ նրա ծնողները։ Մեր թիկունքին չեկավ վարտիքը հանելու, գնաց իր ամուսնու մոտ։ Ուրեմն՝ ձեր քրոջ պատիվ պահողը մեր փեսան է։ Նշանակում է՝ ձեր քույրն իր պատիվն իր ամուսնուն է պահ տվել։ Դուք բոլորդ իմ զավակներն եք, բայց ես նրան ավելի պիտի պատվեմ, քան ձեզ։*

## 29 (29), ԿՆՈՋ ՎԱՐՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

*Լինում է, չի լինում, մի աղքատ ապրող մարդ ու կին են լինում։*

*Այդ կինն ամեն օր իրենց աղքատ ապրելու համար մարդու հետ կռիվ է անում։*

*Մարդն ասում է.— Ի՞նչ անեմ։*

*Կինն ասում է.— Գնա՛, ճամփա կտրիր։*

*Մարդը վերցնում է քլունգը, գնում ուսին, գնում է ճամփաները փորում։*

*Այն կողմից լավ հագուստ հագնված մի ձիավոր է գալիս, հարցնում.— Հարցնելն ամոթ չլինի, ի՞նչ ես անում։*

*— Ճամփա եմ կտրում, որ իմ երեխաներին ապրուստ տանեմ։*

*Ծիավո̈րը գուշաշըմիշ ըննօ, գա̈ուէ.— Տըգուդ ջամփուք չըր գդըրին։*

*— Հարօ չո̂ւց ինիմ,— գա̈ուէ մուրթըւ*

*— Մուրթ գըսբանիս, փարան գըսօյմըշ ինիս, գըհարսըղըննօս։*

*— Քանգքէ հարէուդ չըմ գարէ գըննօ,— փիգուգը գուվիրցընէ գուգիխէ մարթօն կըխէն։*

*Մուրթը գումիտնա, ան փարան գաունէ, գուրթօ յէր դօն, գուհաղ̊աթի գինգունը չարըր իրօձ իւ։*

*Գնա̈յը չա̈ուդ վարըրիդ գըննօ, գուգա̈շինմիշ ըննօ, քէ էր մուրթը բըր ուրթօ, բըր հաղ̊աթէ հէրքէւէն, չուց ինէ, քէ մարթօն ա̈ուաձը ուօդ ըննօ, ուշէդ գունէ հա̈րթը գըզըներցնէ, գլուր գըշինէ։ Մուրթը գուբառըղըցընէ խըսայը, յիփըր մուրթը գուբառղա, քօն գաունա յաշքը, գնա̈յը կա̈ղդօկ գուննէ խըսիկէն դամը ձագի մը գլուր գուֆիթէ մարթօն կըխէն:*

*Մուրթը սա̈րա̈խդա̈ն գըլնէ, մըհալլան չարըր մուրթ գօ, ալաչնէն գուհաղաթէ, քի չուց ա̈ս իրգօն սբանից գհարէուդ մուրթը, ուրղադ հօրըդցուվ։*

*Ադ խաբարը պիրնը-պիրան գուհասնա հաքիմաթէն։*

*Ադ մուրթը գուգինչին, գուհարցընին.— Յի̈ւփ սբանիցիր զադ մուրթը։*

*— Գլուր մաղիլը իրգօնը,— գա̈ուէ մուրթը։*

*Ալայը գուբաշըլըին ձիձաղիլ յադ մարթօն յիրվան։*

*Ղադին գա̈ուէ.— Ջաս խիվը հանիցըք յաս գիդին։*

*Խիլքից բագուս մարթօն սաբաբուն, վարըրիդ գնա̈յը հարըդցուվ։*

## 30 (30). ԳԻՆԳՈՒՆ ՇԱՈՒԻՆ ՀԻՈՒՕ ԳԻՑԷ

*Ուր մը գինգունը մէյը գուդալը գաունէ գուրթօ ախպալըը ճօր պիրիլա̈։ Գուրթօ յախպալըը, գիշէ գա̈նա̈կը մէյը միգալէն գձձաքը գուփիգին։ Ադ գնա̈յը վա̈խնիլում յադ գա̈նույը շառին՝ չըմուդգըննուր ատյ յանա̈նք, գըհիյա նըքը անա̈նք լըլօն ճօր, ըննին ուրթուն։ Տըգադում գնա̈յը գուշըլղա։ Գուդալը լըլիլին սօնրա, գուրթօ ի դօն։ Մուրթը գուհարցնէ.— Ջվա՞ իմիցիր։*

*Գնա̈յը գա̈ուէ.— Ջըրկիդէ՞ս, գանա̈ցը շառը մինձ գըննօ։ մէյը միգալէն գձձաքը գուփիշէրին, գուլթ մը ճօր դա̈նիլէն համուր։*

*Մուրթը գա̈ուէ գինգունը.— Գինգունը շառը չա̂ գըննօ. գնա̈յը չա̂յէ դա, գինգունը շառը չա՞ բըր ըննօ։*

*Ցադա̈ր յէրվան գնայը գընիխիկինօ, ըզմուրթը գըջուղաբէ։*

*Մուրթը նիխիկիցուձ գաունի ըզվարա̈ցը, ադվա̈ր մը գըձիձէ զգնա̈յը:*

*Ձիավորը զարմանում է, ասում.— Այդպես համփա չեն կարի։*

*— Հապա ինչպե՞ս անեմ,— ասում է մարդը։*

*— Մարդ կսպանես, փողը կթալանես, կհարստանաս։*

*— Ինչից հարուստը չեմ կարող գտնել,— վերցնում է քլունգն ու խփում մարդու գլխին։*

*Մարդը մեռնում է, ինքը փողերն առնում, գնում է տուն, ինչ որ արել էր կնոջը պատմում։*

*Կինը շատ վախկոտ է լինում, մտածում է, որ իր ամուսինը պիտի գնա բոլորին պատմի, ի՞նչ անի, որ մարդու ասածը սուտ տեղ անցնի, իսկույն ելնում է, հորթը մորթում, քյուֆթա շինում։ Մարդուն պառկեցնում է հոլիկում, երբ մարդը պառկում է, քնով անցնում, կինը դաղանի հոլիկի կտուրի մի ծակից քուֆթան թափում է մարդու գլխին։*

*Մարդն առավոտյան ելնում գնում է, թաղում ինչքան մարդ կա, բոլորին պատմում է, թե ինչպես երեկոյան սպանել է մի հարուստ մարդու և այդպես հարստացել։*

*Այդ լուրը բերնեբերան հասնում է կառավարությանը։*

*Այդ մարդուն կանչում են, հարցնում.— Երբ սպանեցիր այդ մարդուն։*

*— Քուֆթա մաղելու երեկոյան,— ասում է մարդը։*

*Բոլորն սկսում են ծիծաղել այդ մարդու վրա։*

*Դատավորն ասում է.— Այս խենթին տարեք այստեղից։*

*Խելքից պակաս մարդու շնորհիվ, ճարպիկ կինը հարստանում է։*

## 30 (30). ԿՆՈՋ ՇԱՌԻՑ ՀԵՌՈՒ ՄՆԱ

*Օրերից մի օր մի կին վերցնում է սափորը, գնում աղբյուր ջուր բերելու։ Գնում է աղբյուր, տեսնում, որ կանայք իրար մազ են պոկում։ Վախենալով այդ կանանց շառից՝ չի մոտենում. սպասում է, որ բոլորը ջուր լցնեն, թողնեն գնան։ Այդ պատճառով էլ կինը ուշանում է։ Սափորը լցնում, հետո վերադառնում է տուն, ամուսինը հարցնում է.— Ինչո՞ւ ուշացար։*

*Կինն ասում է.— Չգիտե՞ս, կանանց շառը մեծ է, մի կաթիլ ջրի համար իրար մազ էին պոկում։*

*Մարդն ասում է.— Կնոջ շառն ի՞նչ պիտի լինի. կինն ի՞նչ է, որ նրա շառն ի՞նչ լինի։*

*Դրա վրա կինը վիրավորվում է, մարդուն խիստ պատասխան է տալիս։*

*Մարդը ջղայնացած վերցնում է ճիպոտը, կնոջը մի լավ ծեծում։*

Գնայը լադմըր լէրվան զըղձանրինօ, վէ գուդէ գյանիցը շար չոյ զընհօ հաօզըցընի մարթօն:

Սարափոզան աօվրօն մարթը գառնէ լՕսկը, գուրթօ թալլան հիրգիլյա: Դահա թալլան չըհա-ած, գաթը գնայը չուցըլոէ մը հիղը գադօ հավ մը, գյաւէ. «Ուշէ՛գ կնօ միր մարթը ըր գահիրղէ, չըհիրզված գիղը թադէ գաօ հավը, աանոց էր ըրվինիլա, արէ ի գօն, հիչ միղէն պուն չըրյաւէ»:

Դղան գուրթօ մարթօն չըհիրզած գիղը վադ հավը գըթադէ:

Մարթը գըհասնա թալլան, գըրլիշա վյօնկիլը: Աղգ մը, ըրգՕք ուրթիլ ակիլին սօնրա, հավը հաղէն միջին զընէ խիպէն պիրանը: Մարթը գիշէ հավ մը իլավ խիպէն պիրանը: Գըղալնէ-ցընէ լՕսկը, գանի գհավը, գիշէ շյաղ է, շյաղ զը-խընդօ, գյաւէ. «Ալ խաւր չավյանկէմ, ադած իզՕր պէմ ղըմաթը»:

Գառնէ զըռնիկիքը իլան հավը, գուրթօ ի գօն, կինգանը գյաւէ.— Գնա՛գ, խաւր ադած միր ղըս-մաթը իգՕր, գաօ զըխաղըրկը, իրգօնը բարաբար գադինք:

Միամէդ մարթը գընէ գուրթօ դրացնիրէն քավը, նըքըր գնայը խադըրէ զհավը: Գնայը չու-ցըր լադըմ է, գըխադըրվա, Մարթը իրգօնը գագօ իշահնամ զընսդա մասայէն լէրվան, գյաւէ.— Գը-նա՛գ, պէ՛, իշինք չարըր խադրած իս, ուդինք:

Գնայը գըպիրէ բադաւ մը չոր հաց, ըրգը կլՕխ սոխ իլան քէչ մը աղ, գըտնա մարթօն առիմը, գըդայնա միղ ուէն:

Մարթը գիշէ գինգանը յաշքը. Յօ՞ գօ պի-րած հավիս:

Գնայը գյաւէ.— Զվա՞ հավ, յմա՞ր պիրիր գա, լիրմինիս գուզիս հավ:

Մարթը գյաւէ.— Զա՞ քի վյանկիլը կացած էր է, պիրա թալլին:

Տըղաղամ մարթ իլան գնայ գուծիծվըդէն:

Գնայը գունէ ատըրիցէ, գադինչըրվէ. «Հա՛սա՛ք, դրացնի՛ր, միր մարթը խիվցած է»:

Դրացինիրը գուգուն գըռըքվին, գուհարցընին.— Զա՞յէ աս ծիր ծանը:

Գնայը գյաւէ.— Աստըծը խաթրը համար թըղ ըննօ, հարցըցիք միր մարթօն, չա՞ գուզէ լիրմինիս:

Իհալին գուհարցնէ մարթօն,— Զվա՞ ըղդնա-կիտ գուծիծիս, ղաբահատը չա՞յ է:

Մարթը գյաւէ.— Վյանկիլ կացած էր է, վան-կիլը վախըտ հավ մը իլավ հաղէն միջին, առա իգա գէ, գվա էր, քի իրիգվամ ադիլա խադըրի գէ, համիկ ինքյա՛ր գանէ գէ:

Գնայը յադ դիղը գըղձավառլամըշ ըննօ՝ իհա-լէն գյաւը.— Դրացնի՛ր, աստըծը խաթրը համար թըղ ըննօ, գյագյարը ացիք. համիկ միր մարթը խիվցած չէ՞:

Կինն էլ ավելի է վիրավորվում, մտադրվում մարդուն հասկացնել, թե ինչ բան է կնոջ չարը։

Վաղ առավոտյան մարդը վերցնում է լուծքը, գնում արտը հերկելու։ Դեռ արտին չհասած, կինը մի երեխայի հավ է տալիս ու ասում. «Տուր գնա, մեր մարդը որտեղ որ հերկում է, չհերկված տեղում թաղիր այս հավը, առանց իրեն երևալու, արի տուն, ոչ մեկին բան չասես»։

Երեխան գնում է չհերկված տեղում հավը թաղում։

Մարդը հասնում է արտը, սկսում է վարել։ Մեկ-երկու անգամ գնալ-գալուց հետո, հավը հողի միջից խոփի բերանն է դուրս գալիս։ Կանգնեցնում է եզներին, վերցնում հավը, տեսնում, որ դեռ տաք է, շատ է ուրախանում ու ասում. «Այսօր էլ վար չեմ անի, աստված ղսմաթս ավեց»։

Վերցնում է հավն ու եզները, գնում տուն, կնոջն ասում.— Կնի՛կ, այսօր աստված մեր ղըսմաթը ավեց, այս հավը կպատրաստես, իրիկունը միասին կուտենք։

Միամիտ մարդը ելնում գնում է հարևանների մոտ, մինչև կինը հավը պատրաստի։ Կինն ինչ որ պետք է, պատրաստում է։ Մարդը երեկոյան գալիս, ախորժակով նստում է սեղանի մոտ ու ա-սում.— Կնի՛կ, բեր տեսնենք ինչ որ պատրաստել ես, ուտենք։

Կնիկը բերում է մի պատառ չոր հաց, երկու գլուխ սոխ ու մի քիչ աղ, դնում է մարդու առաջ, կանգնում մի կողմ։

Մարդը նայում է կնոջ աչքերին.— Ո՞ւր է բերածս հավը։

Կինն ասում է.— Ի՞նչ հավ, որտեղի՞ց ես բերել, որ ինձնից պահանջում ես։

Մարդն ասում է.— Չէ՞ որ վար անելու էի գնացել, արտից բերեցի։

Դրա վրա մարդ ու կնիկ կռվում են։ Կինը դուրս է գալիս, կանչում. «Հասե՛ք, հարևաննե՛ր մեր մարդը գժվել է»։

Հարևանները գալիս հավաքվում են ու հարցնում.— Այս ի՞նչ է ձեր ձայնը։

Կինն ասում է.— Աստծու սիրուն, հարցրեք մեր մարդուն, ի՞նչ է ուզում ինձանից։

Մարդիկ հարցնում են.— Ինչու՞ ես կնոջդ ծեծում, հանցանքն ի՞նչ է։

Մարդն ասում է.— Վարելու էի գնացել, վարելիս մի հավ դուրս եկավ հողից, բերեցի, տվեցի նրան, որ իրիկվան ճաշ պատրաստի, հիմա ուրանում է այդ։

Կինը հարևանների ներկայությունից քաջալերված՝ ասում է.— Դրացինե՛ր, աստծու սիրուն, ճիշտն ասեք, հիմա մեր մարդը չի՞ գժվել։

Յաւգէր լէրվան ինալին մէժրուր գընհօ մար-
թօն աժիլա.— Տօն ձօ՞ռ իս. խօղէն միջը հով չը-
գարիր ըննուր, հէր հալ տօն գաօ ամաձնէտ լի-
րուզիտ գլխաձ գըննուս։

Տըզաղում մուրթը գուզանմըշ ըննօ, ծանր գա-
գըղըէ։

Յիփըր մուրթը գըմխամըղնօ, գնայր գինա գա-
խօրդէ ծօգ գութաղացնէ խաղէն միջը։ Մուրթը
գուրթօ վայլիլ, գէնա դաղ ծգիրր գըհանէ խա-
պէն պիրուն, գայէ էնքյէնք, «Գնա՛գ, իշիմ համօ
չա՞ լըր շինիս»։

Գաղնի գլօխը իլան ծգիրը թալլան գըթօղօ, գա-
կօ իղօն։ Ջամփունքը ակիլը վախտ ռասա գակօ
ըրգը-ըրք հիկկա, գայէ.— Բըլիք իրզօնը միր գօնր
մի սաֆըր, ըսկօ միր ուզիլնքը հիցնէս գօ։

Մարթակը ինգան չիֆթչէն խիլագը, կացէն
հիղը, մղան ի գօն։

Մուրթը գինգանը գայէ.— Ուշէգ գաօ իփէ։

Գանողա միաաֆըրնէն հիղը, գըխաաա։ Գը-
նայը էնքգէր հագըրլըղը գաղիսնօ, նըքըր յաղ
վախըտը ուրը գըմթն ö։Մարթակը քախցած գան-
նան, գայրն.— Ջարըր խաղըրած իս, պէ՛, ադինք։

Նըքըր յաղ վախըտը գնայը գաղալէն ճօրը
ֆիտած գաննօ, գայէ.— Մա՛րթ, նըքըր իս սաֆ-
րան խաղըրիմ իշէ, ճօր մը պէ, ճօր չիկօ խմիլա։

Մուրթն այէ միաաֆըրնա գանա աժիլամ չգա-
շամըշ ըննար, քէ գնայը ալան մը գըխաղօ էր,
գաղնի զգուգալը գարթու ճօրը։ Գնայը գաղնը
տանգընէն գըրլշա սրիլը։ Մարթակը գըհարցնին.
— Ջա՞ լըր շինիս, գաղանք գաւրիս։

Գնայը գայէ,— Մուրթս աաց, քէ չախղան
բաըը ծաախս ավ անցած չէ. տանգընէն աղվօր
արէ, ակամ զաղ մարթակը ըըր գընիմ։

Մարթակը գաօ լսիլամ գաննին, ամէյը աալ
գափախէն։

Մուրթը գակօ ճրին, գաիշի մարթակը չիկան
գնայը նստած գանը միզ քաշան ջահրան մօթ է։
Մուրթը գահարցնէ.— Աս չա՞յ է։

Գնայը գայէ.— Բի պիրած միաաֆըրնէն բզգէ
գալմանէն։

Մուրթը ամօղը գըդգըէ, ծան չըհանիր, գարթա
ըզմարթաքը գըպատվա, շըղրանօ, ամօդ դըրած
գակա իղօն, գայի գինգանը.— Գիր համիկ բաղաա
մը չար հաց ադինք գա բաադինք։

Գնայը ձիձաղգիլամ գընէ սաֆըը թաղարըք
գըդխնօ, գալպիրի հավը, ծըգիրը գըանա մաւէն
լէրվան։

Մարթը գայէ.— Աս չա՞յ է, գնա՛գ։

Գնայը գայէ.— Դիաէր, մարթ, աղած գին-
գանը շաոին հէաօ թըղ բիհէ, իլար ացիր գինգանը
շաոը չա՞ գըննօ, ձիձիցիր գէա։ Էնգը խլա՛ք գնայը
իս իմ, գիաէր չուց ալըն խաղցա կլէնա, ըսկօ,
գէ գինգանը շաոը։

Ժողովուրդն ասիպված ասում է մարդուն.—
Դու սխալ ես, հողի միջից հավ չի կարող դուրս
գալ, այդ բոլոր ասածներդ երազումդ տեսած
կլինես։

Այդպիսով մարդը համոզվում է, ձայնը կըտ-
րում։

Երբ մարդը միամտվում է, կինը նորից է ուղար-
կում այն երեխային, մի ձուկ թաղել է տալիս ար-
տում։ Մարդը գնում է արտը վարելու, այս անգամ
էլ խոփի բերանը ձուկ է դուրս գալիս։ Մարդն ինքն
իրեն ասում է. «Կնի՛կ, հիմա տեսնենք ի՞նչ ես
անելու»։

Վերցնում է ձուկն ու եզները, արտը թողնում,
գալիս է տուն։ Ճանապարհին հանդիպում է երկու-
երեք հոգու, ասում.— Այս երեկո մեզ հյուր եկեք,
ահա մեր ուտելիքը։

Մարդիկ ընկնում են մշակի խելքին, գնում են
միասին մանում տուն։

Մարդը կնոջն ասում է.— Սա շուտ եփիր։

Ինքը նստում է հյուրերի հետ, զրույց անում։
Կինն իր պատրաստությունն է տեսնում մինչև օրը
մթնում է։ Մարդիկ քաղցածանում են, ասում.—
Ինչ որ պատրաստել ես բե՛ր, ուտենք։

Մինչ այդ կինը սափորի ջուրը թափում է, մար-
դուն ասում.— Մա՛րդ, մինչև սեղանը կպատրաս-
տեմ, դու գնա մի սափոր ջուր բեր, խմելու ջուր չկա։

Մարդը հյուրերի ներկայությունից չի կասկա-
ծում, որ կինը կարող է խաղ խաղալ, վերցնում է
սափորը, գնում ջրի։ Կինը վերցնում է դանակներն
ու սկսում սրել։ Հյուրերը հարցնում են.—Ի՞նչ ես
անելու, որ դրանք սրում ես։

Կինը պատասխանում է.—Մարդս ասաց, որ
վաղուց ձեռքս որս չի ընկել. դանակները լավ սրի,
որ գամ սրանց մորթեմ։

Այդ մարդիկ հենց որ դա լսում են, ամեն մեկը
մի կողմ է փախչում։

Մարդը ջրից վերադառնում, տեսնում է՝ հյու-
րերը չկան, կինը նոթերը կախ՝ մի անկյունում
նստած։ Հարցնում է.—Էս ի՞նչ բան է։

Կինն ասում է—Բերածդ հյուրերը քեզ են նման։

Մարդը հույսը կտրում, ձայն չի հանում, գնում
է փնտրում դրանց, չի գտնում, հույսը կտրած գը-
նում, կնոջն ասում.— Բե՛ր հիմա մի պատառ
չոր հաց ուտենք ու քնենք։

Կինը ծիծաղելով վեր է կենում, սեղանի պատ-
րաստություն է տեսնում, բերում է հավը, ձուկը
դնում սեղանին։

Մարդն ասում է.— Կնի՛կ, էս ի՞նչ բան է։

Կինը պատասխանում է.— Տեսա՞ր, մա՛րդ, աստ-
ված կնոջ շառից հեռու պահի, վեր կացար ասա-
ցիր, թե կնկա շառն ի՞նչ պիտի լինի, ինձ էլ ծեծե-
ցիր։ Ամենախելոք կինը ես եմ, տեսա՞ր ինչ խա-
ղեր խաղացի գլխիդ, այսպես է կնկա շառը։

## 31 (31). ԸՐԹ ԱՎԼԸՐ ԽԱՆԸՄԼԸՂԸ

*Մօուրթը գնաց բարըշխցայն խանըմըլըղը՝ առջը նէտր գինգէտնը ինգավ.— Մօ՛ւրթ, գընը, հէտվ մը, իփր, ադիմ։*

*Մօուրթ հէտվ մը գնից. փախլամիշ իրէյց խոճր գը թանչարան, գրիէգ վառից.— Գնա՛գ, իս կացա, գիփա-չիփա՝ ակօն կիգխ։*

*— Մօուրթ, իս ըրք ավէր խանըմ իմ, իփլ, պիր ադիմ։*

*Մօուրթ ուրթիլէն վախրա մը սանդըրա մուրազէօն մը իդիք, հոց ադից։*

*— Մուրազօւն, իս ըրք ավէր խանըմ իմ, հէտց դուլէօր գը, օռ դհէտց, թանչարան հէտվ մը գը, իշը խիշուծ ը, թը՝ չիէ, թը չիէ՝ գրիէգ վառը*

*Մուրազէօնը գուիշի՝ հովը իփուծ է։ Հէտվը գուառնը, չառաօ՞ գուտըն ա մէյչ, գոռոր.— Խանըմ, հէտվ չիփօծ է. գրիէգ վառիցա, պաղոռշ մը առա, իս գուրթում։*

*Մուրազէօնը գուրթը մարթօն գուլօն, գուիշը մօուրթ հուն գը, գուալչի.*

*— Խանըմը գուգը գխարօցը,*
*Իս ա՛լ գուդիմ գհովը։*

*Մօուրթը գուկը ի գօն, գոռոռ.— Գնա՛գ, հէտվ չա՞ իդավ, իփօ՞ծ ը, թը՝ չիէ։*

*— Մօուրթ, քանըր կացօծ իս ճէյր ա խմուծ չիմ։ Մօուրթ, աղըգ իդիր, դէյր ճէյր խըմիմ, պէր ադինք ադիլա՛ն։*

*Մօուրթ գուիշը թանչարան՝ գուիշը հավէն դիէդ չառաօ՞ մը գը։*

*— Գնա՛գ, հավօն դիէդ չառաօ՞ մը գը, հէտվը չա՞ իդավ։*

*— Չա՞ կիդիմ, մօուրթ, մուրազէօն մը իդըք, իս ացա՝ իշի թանչարան հէտվ իփօ՞ծ է, թը՝ չիէ, առուծ ընծը՝ քէչ մացօծ իփիլա, պայր չա՞ իդավ չըմ կիդիր։*

*— Ա՞ռը քը խանըմլըղը, ուրցած չըննար, ըսսինէնց գընը,— գառը, գառնը վարօցը գըբըլիշա գնայ ծիծէլ։*

## 32 (32). ԳԻՆԳՈՒՆԸ ԻՐՈՒՋ ՊՈՒՆԸ ՋԸՐՎՆՈՒՐ

*Գուգինօ, չուգինար մուրթ մը գուգինօ։ Ադ գուրթը ամըն ուր գուծիծվըդա գինդունը հիդը, տալ գընալը գաւէ.— Իս սարախաղան գուրթում իրգօնը գուկում, շօգ գուչարչարվիմ, տօն չա՞ գուշինիս ի գօն։*

## 31 (31). ԵՐԵՔ ՕՐՎԱ ԽԱՆՄՈՒԹՅՈՒՆ

*Մարդ ու կին որոշեցին խանմություն անել. առաջինը հերթը կնոջն ընկավ.— Մա՛րդ, մի հավ մորթիր, եփիր, ուտեմ։*

*Մարդը մի հավ մորթեց, փետրահան արեց, դրեց կաթսան, կրակը վառեց.— Կնի՛կ, ես գնացի, կեփվի-չեփվի՝ դու գիտես։*

*— Մա՛րդ, ես երեք օրվա խանում եմ, եփիր, բեր ուտեմ։*

*Մարդու գնալուց մի քիչ անց մի մուրացկան է գալիս, հաց ուզում։*

*— Մուրացկա՛ն, ես երեք օրվա խանում եմ, հացը պահարանումն է, ա՛ռ հացը, կաթսայում հավ կա, տե՛ս եփել է, թե՝ չէ, թե չի եփել՝ կրակը վառիր։*

*Մուրացկանը նայում է՝ եփել է։ Հավը վերցնում է, տրեխը գցում մեջը, ասում.— Խանո՛ւմ, հավը չի եփել. կրակը վառեցի, մի բաղարջ վերցրեցի, ես գնում եմ։*

*Մուրացկանը գնում է մարդու խանութը, տեսնում մարդն այնտեղ է, երգում է.*

*— Խանումը կուտի գավաղանը,*
*Ես էլ կուտեմ այդ հավը։*

*Մարդը գալիս է տուն, ասում.— Կնի՛կ, հավն ի՞նչ եղավ, եփե՞լ է, թե՝ չէ։*

*— Մա՛րդ, ինչ որ գնացել ես, ջուր էլ չեմ խմել։ Մա՛րդ, լավ է եկար, ջուր տուր խմեմ, ճաշն էլ բեր, ուտենք։*

*Մարդը նայում է կաթսայի մեջ, տեսնում հավի փոխարեն մի տրեխ կա։*

*— Կնի՛կ, հավի տեղ մի տրեխ կա, հավն ի՞նչ եղավ։*

*— Ի՞նչ իմանամ, մա՛րդ, մի մուրացկան եկավ, ես ասացի՝ նայիր տես կաթսայի հավը եփե՞լ է, թե՝ չէ, ասաց՝ քիչ է մնացել եփելու, հետո ի՞նչ եղավ, չգիտեմ։*

*— Ա՞յս է քո խանմությունը, այդպե՛ս չի լինի, այսպե՛ս կլինի,— ասում է, առնում գավազանն ու սկսում կնոջը ծեծել։*

## 32 (32). ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՉԻ ԵՐԵՎՈՒՄ

*Լինում է, չի լինում, մի մարդ է լինում։ Այդ մարդն ամեն օր ծեծկռտվում է կնոջ հետ, ասում.— Ես առավոտյան գնում եմ, երեկոյան գալիս, շատ եմ չարչարվում, դու ի՞նչ ես անում տանը։*

Կնիկը կը նեղանայ, կ'ըսէ. — Շա՛տ աղուոր, վա-
ղը դուն կեցիր տունը, ես կ'երթամ քու տեղդ
բանելու, ամմա իրիկունը տուն գամ, ամէն բանը
տեղը-տեղը ըրած ըլլաս։

Կնիկը կ'երթայ բանելու, մարդը կը սկսի
տան բանը։ Հալա տունը չաւլած՝ տղան կու լա-
յ։ Մարդը կ'ըսէ՝ ի՞նչ ընեմ։ Տղուն բերնին
բարձ մը դնելով կ'ըսէ՝ թող ձայնը
քիչ մը կտրէ, մինչև խմորը շաղեմ։

Ըմմա շատ ճարպիկ ըլլալուն կը մտածէ ըն-
նօ՝ կարասը մէջքիս կապեմ, մինչև հացը շա-
ղեմ, թանն ալ կարասին մէջ կը հարուի, գործս ա-
շէկ կը լմնցնեմ։

Շաղելէն ատեն խմորը, կարասը կը զարնէ
պատը, կարասը կը կոտրի, այրանը վրան կը թա-
փի, խմորը կը թրջուի, ինք ալ ամբողջ կը թրջուի,
ի՞նչ ընէ, մտածելու մէջ կ'իյնայ։ Կ'ըսէ՝ տղուն նա-
յիմ։ Կը նայի, տղան մեռած է, խմորը
փճացած, ինք ալ ամբողջ թրջուած է։ Կը մերկանայ,
արևին տակ կը պառկի։ Կատու մը կու գայ, ինչ որ
ունի կը տանի։ Խեղճ մարդը դուռը կը գո-
ցէ, կը սպասէ որ կնիկը բանէն գայ։

Կնիկը կու գայ, կը տեսնէ դուռը ներսէն գոցուած է,
կը կանչէ մարդուն.— Մա՛րդ, դուռը բաց։

— Չե՛մ բանար,— կ'ըսէ մարդը,— յանցանք
մը ըրած եմ։

— Զարար չունի, բան չիկայ, ըսէ՛ ի՞նչ է։

— Կնի՛կ, չոճուխը խեղդած եմ։

— Զարար չունի, ուրիշը կ'ունենանք,— կ'ըսէ
կնիկը։

— Կնի՛կ, խմորը փճացուցած եմ։

— Զա՛րար չունի, ատ ալ բան մը չէ։

— Կնի՛կ, կարասը կոտրած եմ։

— Զարար չունի, ատ հիչ բան չիկայ է։

— Կնի՛կ, բան մ'ալ կայ ըսելիք, կը վախնամ։

— Ըսէ, ըսէ՛, ի՞նչ է։

— Ա՜խ, ինչ ըսեմ, կը վախնամ. կատուն ունե-
ցածս տարած է։

— Մա՛րդ, ամէնը թող ըլլար, ատ մէկը չըլլար։

Կնիկը սրանեղում է, ասում.— Շա՜տ լավ, վա-
ղը դու կմնաս տանը, ես կգնամ քո փոխարեն աշ-
խատելու, բայց երեկոյան տուն գամ, բոլոր գոր-
ծերը տեղը-տեղին արած լինես։

Կնիկը գնում է աշխատելու, մարդը սկսում է
տան գործն անել։ Դեռ տունը չավլած՝ երեխան լաց
է լինում։ Մարդն ասում է՝ ի՞նչ անեմ։ Երեխայի
բերնին բարձ է դնում, մտածում՝ թող ձայնը մի քիչ
կտրի, մինչև խմորը շաղեմ։

Բայց, քանի որ շատ ճարպիկ էր, մտածում է՝
կարասը մեջքիս կապեմ, մինչև խմորը շաղեմ, կա-
րագն էլ կարասի մեջ կհարվի, գործս շուտ կվեր-
ջացնեմ։

Խմորը շաղելու ժամանակ, կարասը պա-
տին է խփվում, կոտրվում, թանը թափվում է
վրան։ Խմորը թրջվում է, ինքը լրիվ թրջվում, ի՞նչ
անի. մտածմունքի մեջ է ընկնում։ Ասում է՝ երե-
խային տեսնեմ։ Նայում է, ի՞նչ տեսնի, երեխան
մեռած է, խմորը փչացած, ինքն էլ լրիվ թրջված։
Մերկանում է, պառկում արևի տակ։ Այն կողմից մի
կատու է գալիս, դրա ունեցած-չունեցածը ուտում։
Խեղճ մարդը դուռը փակում է, սպասում, մինչև
կնիկը գա աշխատանքից։

Կնիկը գալիս է, տեսնում դուռը ներսից փակ-
ված է, կանչում է մարդուն.— Մա՛րդ, դուռը բաց։

— Չե՛մ բացի,— ասում է մարդը,— հանցանք
եմ կատարել։

— Վնաս չունի, բան չկա, ասա՛, տեսնեմ՝
ի՞նչ է։

— Կնի՛կ, երեխային եմ խեղդել։

— Վնաս չունի, ուրիշը կունենանք,— ասում է
կինը։

— Կնի՛կ, խմորը փչացրել եմ։

— Վնաս չունի, էդ էլ մի բան չէ։

— Կնի՛կ, կարասը կոտրել եմ։

— Վնաս չունի, էդ էլ դատարկ բան է։

— Կնի՛կ, մի բան էլ պիտի ասեմ, վախենում
եմ։

— Ասա՛, ասա՛, տեսնեմ՝ ի՞նչ է։

— Ա՜խ, ո՞նց ասեմ, վախենում եմ. կատուն
ունեցած-չունեցածս տարել է։

— Մա՛րդ, բոլորը թեև եղավ, այդ մեկը՝ չեղավ։

Բ

# ԱՌԱԿՆԵՐ ԵՎ ԱՆԵԿԴՈՏՆԵՐ

## 1 (33). ԼԵԶՈՒՆ ՑՈՒՎԸ

Կ'ըլլայ, չ'ըլլար, կար ձախող մարդ մը։ Այդ մարդը ամէն օր քաղքին դուրսը երեք սահաթի ճամբայ լեռը կ'երթար, փայտ կը կտրէր, կը շալկէր, կը բերէր քաղաք, կը ծախէր։ Ամէն օր այդպէս կ'ապրէր։ Շատ անցաւ, քիչ անցաւ, օր մը լեռը արջ մը տեսաւ, շատ վախցաւ։ Իշկեց արջը, քիթը արջի քիթ է, ինչպէս արջը իշխա է, բերնէն ելած խօսքը՝ մարդու խօսք է։

— Աս ի՞նչ բան է,— ըսաւ, վախցաւ։

Յառաջ թէ դառնայ՝ արջէն պիտի վախնայ, ետ թէ դառնայ՝ առանց փայտի պիտի դառնայ։ Շաշմիշ եղաւ, ի՞նչ ընէ։

Արջը հասկցաւ, որ մարդը կը վախնայ, ըսաւ.
— Ա՛յ մարդ, դուն ամէն օր հոս լեռը եկուր, ես փայտ պատրաստեմ քեզի, տանիս, ծախես։ Ամէն օր ժամ մը դառնալու էիր, հիմա երեք ժամ դառնաս։ Փարադ աւելցնես, էշ մը առնես, գործերդ աղւոր ըլլան։

Տրդյալ մէկ պատիկեցաւ։ Տարի մը անցաւ, փայտ ծախող մարդուն գործը շատ աղէկ եղաւ։ Օր մը գլուխը կ'ուշիմէր եղաւ. «Ես աս արջէն չա՞ շինիմ, դանեմ իգնի, մեր տուն ուտելիք կերցնեմ էրս»։

Կինը ըսաւ.— Կնճ դուկանին խնկուռ մէջ սա, ուտելիք ունի, իրգոնը միասին դուրս ընէք։

Մարդը կնոջ լեզուն, գնաց արջը, ըսաւ.— Քիլէ, երթանք իգնի՝ իս ու տան։

Արջը չուզեց, ըսաւ.— Թէ դառնանք ի գոն՝ իս ու տան, դուք շնորհակալ չըլլալ։

Մարդը ըսաւ.— Հա՛, չէ՛, բեր երթանք։
Իջէն իգոն։

Կինը նայեց իր, գիրինք մարդ չըլլալով ճամ- պուքը, հասան իգոն, մարդը ըսինչից գինդունը։ Կնոջը տուաւ խոսք. գիտաւ արջը վախցաւ, ըսաւ.— Աս ի քէ միասին, նա պեղակ թող ուրը քէ ալէ, քէ միասինէն ալէ։

Արջը հասկցաւ։ Անցան կէս օրեր, գիտան ու- գիլէ, խոսակցեցան. արջը տխրած լեռը։ Միզալ տրը մարդը կնոջ լեռը փայտ պիրելու։ Արջը ելաւ ըսաւ.— Դ'աթ մէկ տօն յաս լեռը փայտ գտրել չըլլալ. դուք բարով-բարով գինիմ։

Մարդը եկեց. հիչ փայտ թողած չէ, ղալալը քաշած է։ Մարդը ի գոն կնոջ, հանչիցաւ ամէս

## 1 (33). ԼԵԶՎԻ ՎԵՐՔԸ

Լինում է, չի լինում, փայտ ծախող մի մարդ է լինում։ Այդ մարդն ամեն օր քաղաքից երեք ժամ- վա ճանապարհի հեռավորությամբ սարն էր գնում, փայտ կտրում, շալակում, տանում քա- ղաք, ծախում։ Ամեն օր այդպես էր ապրում։ Շատ անցավ, քիչ անցավ, մի օր էլ սարում մի արջ տեսավ, շատ վախեցավ։ Նայեց արջին՝ քչլված- քըն արջի էր, աչքը՝ արջի աչք, բայց խոսելը մար- դու խոսվածք։

— Սա ի՞նչ բան է,— ասաց, վախեցավ։

Առաջ գնար՝ արջից էր վախենում, ետ գնար՝ առանց փայտի պիտի տուն գնար։ Շվարեց մնաց, ի՞նչ անի։

Արջը հասկացավ, որ մարդը վախենում է, ասաց.— Ա՛յ մարդ, դու ամեն օր այստեղ արի, ես քեզ համար փայտ կպատրաստեմ, կտանես, կծախես։ Ամեն օր մի անգամ էիր գնում, հիմա երեք անգամ կգնաս։ Փող կավելացնես, էշ կառ- նես, գործերդ կլավանան։

Այդպես էլ աշխատեց։ Մի տարի անցավ, փայտ ծախող մարդու գործը շատ լավ գնաց։ Մի օր էլ մտածեց. «Ես այս արջին ի՞նչ անեմ, տա- նեմ տուն, մոտս կերակուր ուտեցնեմ»։

Կնոջն ասաց.— Գնա՛ խանութից ոսկորով միս առ, ճաշ եփիր, այս երեկո հյուր ունեմ։

Մարդը գնաց սար, արջին տեսավ, ասաց.— Արի, միասին գնանք տուն։

Արջը չուզեց, ասաց.— Եթե միասին տուն գնանք, կթշնամանանք։

Մարդն ասաց.— Հա՛, չէ՛, պիտի գնանք։
Եկան տուն։

Գիշերը մութ էր, ճանապարհին նրանց մարդ չտեսավ, հասան տուն, մարդը կնոջը կանչեց։ Կինը դուռը բացեց, արջին տեսավ, վախեցավ, ասաց.— Այս է՞ քո հյուրը, անիծվես դու էլ, քո հյուրն էլ։

Արջը հասկացավ։ Ներս մտան, ճաշեցին, վեր- ջացրին, արջը վերադարձավ սար։ Հաջորդ օրը մարդը գնաց սար, փայտ բերելու։ Արջը նրա դեմն ելավ, ասաց.— Մեկ էլ դու այս սարը փայտ կտրելու չգաս, քեզ պատառ-պատառ կանեմ։

Մարդը տեսավ, բնավ փայտ չի թողել, բոլորը ցրել է։ Մարդն եկավ տուն մի ամիս

մը։ Ամէյս մը սօնրա գինա կնաց լէռը։ Ուրչը գինա տիմր էլավ, ըսաց.— Զվա՞ թիլիր լէռը։

— Զա՞ չինիմ ավարօ իմ։

— Սրանն գէս,— ըսաց արչը, բառգիցավ կէդէնը։

Մարթը գլաչինմըշ էղավ. «Թր սրանիմ գէ, փադ գդրիլ լէդ գաէյամ»։ Ձիօրը առավ ծառը, վէրցօց գլխից արչէն, էթօղ չիօրը փախավ, թը կէդիր արչը սադըլցավ։ Ամէյս մը սօրա, գինա փադ ծախողը չէր գանէաըթին վաղ չիդիք. առ ջաթէն լէռնը միդայ չօնըր կնաց, կինա արչը տիմը էլավ, ըսաց.— Ես չացա՞ քէ, յաս լէռը չըրըր ավրաս ջաթ մըլէ՝ գրօրանիմ գքէ։ Ձիդըրէն ցավը ճուղցավ, ամա բէ գինդանը խոսքէն ցավը չանցավ։

Մարթը վախաթանը չէր գանէանթը փիխից։
Գինդանը էն աղվըրը աս է։

## 2 (34). ԳՈՒՐՅՕՇ ԽԼԱՆ ԿԻՂԱՑԷՆ

Գիցէյր, չըգիցէյր, գուրյՕշ մը խլան կիղացայմ գիցէյր։

Աս գուրյՕշ խլան կիղացէն միգ-միգը հիդ չիդ մինձ աալըրջ գոնէրին ու միդմիդ չօգ յարգըմ գինէրին։

Օր մը իշանք, ցանիր վաղըրը կիղացէյն ըըմանը գրիշարը անիլու։ Գըղինչը գգարյաշը, գօոէ.— Իշէ, գուրյօշ ախպար, խար սօրքօխըօն մարցօ գրիշար անիլօ, առանց ու- գիլօ գրքըր տիրդակ չըմ գօրէ ցանէ, կնօ, ընծէ բիշար պիր։

— Իշացիս, կլխէս լիրլան, կիղօցը ախպար, արըմավ քիդ բիշար պիրիմ,— ըսաց գուրյՕշը, կնից։

ԳուրյՕշ կնից իղՕն, աաս գրիշՕր, ապրծաւ։ Տանիլը վաջըրը աաաըջ ցիրէյն ընձիլը վաջըրն իր ու ճառլինայն մըղ ջըլըմմը ընձըլած իր։

ԳուրյՕշ հասաւ յան վաջըրը՝ լէյփըր մըղ ախն կիղացէն ու գղաաք գաւընձայնիր, հարանայր ու ըշկընէյր պանադ գօջադվայն, խօրծ գաւգարայն, միգալ աէն ըլը ըշըկչաք գարած խրցայր գՕլ գաւգանայն. մըղ գըրըցաւ՝ աշխՕշ գաւքըպըրթիր։

ԳուրյՕշ գըիշՕր շալգած մըղաւ ի թառլան, աւշէյտ-աշէյտ գօրթիր, գրիշար վաջըրը հասցընընիլը հըմար, չանքի կիդիր քի կիղացէն քըղցՕծիլը։ Աջալա աւրթիլիքան խիդգօն մը յաւաշքը մըղաւ։

— Հը՞,— ըսաց,— չը՞մ ասիր, քի աջալա պօն ընծը չաւկօր։ Յայրըր աջալա պան մը գըդինը, գէյս գաջննա։

հանգստացավ։ Մի ամիս հետո նորից գնաց սար։ Արջը նորից դեմն ելավ, ասաց.— Ինչո՞ւ եկար սար։

— Ի՞նչ անեմ, անգործ եմ։

— Սպանի՛ր ինձ,— ասաց արջը և պառկեց գետնին։

Մարդը մտածեց. «Եթե սպանեմ նրան, նորից կգամ փայտ կտրելու»։ Կացինը ձեռքն առավ, կարկեց արջին, դցեց կացինն ու փախավ. կարծում էր թե արջը սատկեց։ Մի ամիս հետո, փայտ ծախողը նորից իր արհեստից ձեռք չքաշեց. այս անգամ սարի մյուս կողմը գնաց, նորից արջը դեմն ելավ, ասաց.— Ես քեզ չասա՞ցի, որ մեկ էլ այս սարը չգաս, թե չէ կսպանեմ քեզ։ Կացնի վերքը լավացավ, բայց կնոջ խոսքի վերքը չանցավ։

Մարդը վախից իր արհեստը փոխեց։
Կնոջ ամենալավն այս է։

## 2 (34). ԿՐԻԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Լինում է, չի լինում, մի կրիա և մի գյուղացի է լինում։

Այդ կրիան ու գյուղացին իրար շատ մեծ բարեկամությամբ են կապված լինում և իրար շատ են օգնում։

Աշնան մի օր, ցանքի ժամանակ, գյուղացին մոռանում է հետը պաշար վերցնել։ Կանչում է կրիային և ասում.— Լսի՛ր, կրիա՛ եղբայր, այս առավոտ ես մոռացա պաշար վերցնել, առանց ուտելու էլ մինչև երեկո չեմ կարող ցանել, գնա՛, ինձ համար պաշար բեր։

— Աչքիս ու գլխիս վրա, գյուղացի եղբայր, գնամ քեզ պաշար բերեմ,— ասում է կրիան, գնում։

Կրիան գնում է տուն, պաշարը վերցնում ու վերադառնում։ Վերադարձին, արդեն ցորենը հնձելու ժամանակն է լինում և արտերի մի մասն էլ արդեն հնձված էր։

Կրիան հասնում է այն ժամանակ, երբ մի կողմից գյուղացին ու տղաները հունձ են անում, հարսներն ու աղջիկները հնձված ցորենն են հավաքում ու խուրձ կապում, մյուս կողմից էլ իշապաններն կապված խուրձը կալ են տեղափոխում. մի խոսքով՝ աշխատանքը եռում է։

Կրիան պաշարը շալակած, մտնում է արտ և շտապ-շտապ գնում, որ պաշարը ժամանակին հասցնի, քանի որ գիտեր, որ գյուղացին շատ քաղցած է։ Շտապելուց մի խողան է աչքը մտնում։

— Հը՞,— ասում է,— ես չե՞մ ասել, որ շտապելը իմ գործը չէ։ Ուր շտապ մի գործ կա, ինձ է գտնում։

## 3 (35). ԲԱՌՎՈՒՆ ÖՁԸ ԻԼԱՆ ԻՐԻՑԷՅՆ ՄՈՒՐԱՔԸ

*Բառօվ մը ունցէր է öձ մը, գավանաշարքը ուդ ծձն իղէր իր, ամմա ուդ öձ սադղէր իր։*

*Öր մը կöցիր է ի ժամ, իրէյց բաղարէքը ըր-լէշէյը. լիվըը ավիդարուն գուգարթիր, մարաք գոխմկրդմիր, բառօվը գուրըլիշա լöց։ Իրէյց գի-ռէյը գը, շöց ըր գյաշինմիշ իղէյը չըշարցէյը կիդöնիր սարար, չըկա՞ գառալիր։*

*Մöյք ուրիր բաղարէքը խöլիուս, ըխնչի գըրա-ռօվ, հասըընու գդարդ չա՞ ի։*

*Բաղարէքը խալխէյը, իրէյց գրառօվ գխնչէյը, հարցուցէյը.— Օրչնուծ, չըկա՞ իս öվիդöրան գու-գարթօր, սօն գուլայըըդ։*

*— Ա՜խ, իրի՛ց,— գուöսի բառօվ,— էմ ցավ մէյնձ ի։*

*— Ասöւ, չա՞ ի։*

*— Öձ մը գունօր, արիվ ըննու քի, սադ-գավ, մարաք öդöրթ քը մարաք գըլմանիր, հա-յըը öվիդöրունը գուշարթայըըդ, մարաքըս գաժ-գըդվիր, էմ öձ ինդու մայքս, անöր հöմöր լացա։*

*— Վöյ, անիծուծ, գիմöք քը öձ ըլմանցուցիր գէո։*

*Գուկուդղի դէ գիդիցին ուրիցի։*

## 3 (35). ՊԱՌԱՎԻ ԱՅԾՆ ՈՒ ԵՐԵՑԻ ՄՈՐՈՒՔԸ

*Մի պառավ ունեցել է մի այծ, իր միակ հույսն այդ այծն է եղել, բայց այդ այծը սատկել էր։*

*Մի օր պառավը գնում է եկեղեցի, երեցն արդեն պատարագն սկսել էր, երբ սկսում է ավետարանը կարդալ, մորուքը շարժվում է, պառավն սկսում է լաց լինել։ Երեցը տեսնում է նրան, ինչքան մտածում է չի կարողանում հասկանալ լացի պատճառը։*

*Միտքն է դնում պատարագի վերջում կանչել պառավին, իմանալ ի՞նչ է նրա դարդը։*

*Պատարագը վերջանում է, երեցը պառավին կանչում է, հարցնում.— Օրհնա՛ծ, ես որ ավետարան էի կարդում, դու ինչո՞ւ էիր լաց լինում։*

*— Ա՜խ, երե՛ց,— ասում է պառավը,— իմ ցավը մեծ է։*

*— Ասա՛, ի՞նչ է։*

*— Մի այծ ունեի, արևը քեզ լինի, սատկեց, մորուքը ճիշտ քո մորուքին էր նման, երբ ավետարան էիր կարդում, մորուքը շարժվում էր, իմ այծը միտքս ընկավ, դրա համար էլ լաց եղա։*

*— Վա՜յ, անիծվա՛ծ, ուրեմն ինձ քո այծի՞ն նմանեցրիր։*

*Պառավին եկեղեցուց դուրս է քշում։*

## 4 (36). ՄՕԼԼԱՆ ԻԼԱՆ ԲՕԲ

*Öուր մը մօլլան իլöն բöբ բարարուր գուրթուն լիվէյ։ Գըհասնէյն քուփրէյն գլյս, մօլլան գöսի տայ ի բöբ.— Բöւբ, իս ծիր öվիդöրöն գարթացöծ իմ, öդվիր ö մայքիս բիհöծ իմ։*

*—Է՜,—գöսը բöբ,—չա՞ կրöծը միր öվիդöրöնը։*

*— Կրöծը, քի մըգ իրիսէյա թը գըպարդին, միգալն ö իլը։ Իս öլը գöզիմ կիդöնուր ըսահը, թը՝ սայդը։ Ադիր հöմուր ըըր զարդիմ քիզ սիլուամ։*

*— Շիդ öդվիր թöչըբը,— գöսը բöբը։*

*Շöգ, մօլլան գըշըգը սիլան բöբöն իրիսէյն, բöբ գիւըը զմիգալ իրէյա։ Միգալ իրիսէյն ö գըշըգը սիլան, բöբöն իրիսվöնք գըգöրմըրին։*

*Ցադ վաղըտը բöբ ըիրդան մը գըցավնը, գըպըռնը մօլլային ըրգը վիդօց, գöսը.— Մօլլա, միր öվիդöրնային միգալ իրիսն ö ըսիէնց կրöծը,— գöսը, զմօլան գիսկը ճայր։*

## 4 (36). ՄՈԼԼԱՆ ՈՒ ՏԵՐՏԵՐԸ

*Մի օր մոլլան ու տերտերը գնում են զբոսանքի։ Հասնում են կամրջին, մոլլան տերտերին ասում է.— Տերտե՛ր, ես ձեր ավետարանը կարդացել, լավ էլ միտքս պահել եմ։*

*— Է՜,— ասում է տերտերը,— ի՞նչ է գրված մեր ավետարանում։*

*— Գրված է, որ եթե մի երեսիդ խփեն, մյուսն էլ դեմ արա։ Ես էլ ուզում եմ իմանալ՝ ճի՞շտ է, թե՝ սուտ։ Դրա համար էլ քեզ մի ապտակ եմ տալու։*

*— Շա՛տ լավ, փորձիր,— ասում է տերտերը։*

*Մոլլան՝ շրխկ, մի ապտակ է քաշում տերտերի երեսին, տերտերը մյուս երեսն է շուռ տալիս։ Մյուս երեսին էլ է ապտակ քաշում, տերտերի երեսները կարմրում են։*

*Այդ ժամանակ տերտերն իսկույն կռանում է, բռնում մոլլայի զույգ ոտքից, ասում.— Մոլլա՛, մեր ավետարանի մյուս երեսին էլ այսպես է գրված,— ասում է, մոլլային ջուրը գցում։*

## 5 (37). ԽԸԼՕՔ ԽԶՄԱԹԿԱՐԸ

*Գըլգինօ, չըլգինօ, ըրգը հարօնօդ մուրթ, ինդունք դանունուն իրինց խըզմաթկարիրը։*

*Մէկ հարըրուդէն խըզմաթկարը շա՛դ խիլօ՛ք գըլնինօ, միգալէնը՝ չէ։*

*Օւր մը մէկ հարօնօդը գըդարգվօղէ մէգալ հարօնօդը իդօն։ Մաստ գըդադնօն, թավրը-թավրը ուդըվվիրէն հիդը, ադվօ՛ր մածօն ալէ գըդլինօ մասէն։ Գուդին, գըխմին, խիլօ՛ք խըզմաթկարէն ըրբօ՛չը մուրվօցը մածօն գըֆիտօ։*

*Խըլօ՛ք խըզմաթկարը գա՛սի ադօւ դիրը.— Ադա՛, ադա՛, Մուսա լիռը ծայն իչուծ ի։*

*Ադան ուսուլըմ գըհանէ դօստըրօսը, գըըրիէ գմուրաքը, շա՛դ գըխըննօ, վի էր խըզմաթկարը ադվօ՛ր խուսքիրում հասըցըրօծ էր։*

*Վաղըտ մը ուօնրա միգալ հարօնօդն ալէ գըդադվօղէ։ Ան գէր խըզմաթկարը գըդանի ի քանաֆը, գիրինք մարթ շըլըխըլը համար, գա՛սը էր.— Դիսա՛ր, չը՛ցց խիլօ՛ք իր ան խըզմաթկարը, լէմը լէմ մուրվուցը մածօն գըֆիտօ, ադն ալէ գա՛սէր. «Ադա՛, ադա՛, Մուսա լիռը ծայն իչուծ ի»։*

*Դաղվադը գըննօ, հարօնօդը մաստ գըդադնօ, էնք ալէ մածօն գըդալնի, վէ էր խըզմաթկարն ալէ, ըրդօւդ ադվօ՛ր խուսքիր ա՛սի էր։*

*Օւդիլը վաղըտը մախոստ մածօն գըֆիտէ մուրվուցը, խըզմաթկարը գըդիխնօ վէ, գըմանօ գէր ա՛սիլա՛քը.— Ադա՛,— քանաֆէնը՝ մուրվուցիտ։*

*Ադան կիդէլնը գըլօ՛ո, գըլթադօ գուրթօ։*

## 5 (37). ԽԵԼՈՔ ԾԱՌԱՆ

*Լինում է, չի լինում, երկու հարուստ մարդ, նրանք իրենց ծառաներն են ունենում։*

*Մեկի ծառան շատ խելացի է լինում, մյուսինը՝ ոչ։*

*Մի օր հարուստներից մեկը հրավիրում է մյուս հարուստին իր տունը։ Սեղան են բացում, տեսակ-տեսակ ուտելիքների հետ լավ մածուն էլ է լինում սեղանին։ Ուտում, խմում են, խելոք ծառայի տերոջ մորուքին մածուն է թափվում։*

*Խելոք ծառան ասում է տիրոջը.— Աղա՛, աղա՛, Մուսա լեռը ձյուն է իջել։*

*Աղան անմիջապես հանում է թաշկինակը, սրբում մորուքը և շատ ուրախանում, որ իր ծառան խելացի խոսքերով հասկացրեց։*

*Ժամանակ անց մյուս հարուստն էլ է հրավիրում։ Նա իր ծառային տանում է զուգարան, որպեսզի մարդ չլսի, ասում է.— Տեսա՞ր, ի՜նչ խելոք էր այդ ծառան, երբ իմ մորուքին մածուն կթափվի, դու էլ կասես. «Աղա՛, աղա՛, Մուսա լեռ ձյուն է իջել»։*

*Հրավերքը լինում է, հարուստը սեղան է բացում, ինքն էլ է մածուն դնում, որպեսզի իր ծառան էլ իրեն այդպիսի լավ խոսքեր ասի։*

*Ուտելու ժամանակ դիտմամբ մածուն է թափում մորուքին, ծառան տեսնում է, բայց մոռանում է ասելիքը,— Աղա՛,— ասում է,— զուգարանինը՝ մորուքիդ։*

*Աղան գետինն է մտնում, թողնում հեռանում.*

## 6 (38). ՁԱՆԱԴԻՆՑ ԽՃԻՐԸ

*Մէր կէդը մարթ մը գար անօնը Ձանադինց Խչիր իր։ Ան նշանուծ իր։ Օւր մը ըրգը ֆըրստան գաւնէ, գըդանի նշանծվէն, ըմմա անօ՛ր մարը չուհանվիս դէ։*

*Ձանադինց Խչիրը գուրթու էր մուրքարէն քօվը, գա՛սի.— Ըրգը ֆըրստան գարա դէ՝ մէկը ղըվթնօ, միգալը՝ սավալի, ըմմը խայնանաւ չուհանվիս գը։ Խչիր իդիր դա գիր դը։*

*Ղարադայը թաքան զադ դիրիվը չուդիր։*

## 6 (38). ՋԱՆԱՂԵՆՑ ԽԱՉԵՐԸ

*Մեր գյուղում մի մարդ կար, անունը Ջանաղենց Խաչեր էր։ Նա նշանված էր։ Մի օր երկու հագուստ առնում, տանում է նշանածին, բայց նշանածի մայրը չի հավանում։*

*Ջանաղենց Խաչերը գնում է իր մորաքրոջ մոտ, ասում.— Երկու հագուստ տարա նրանց՝ մեկը ընտիր կտորից, մյուսը՝ հասարակ, բայց հարսնացուի մայրը չհավանեց։ Խաչեր եղիր ու կուլ տուր։*

*Հղպրտ նոխտոյն այս տերևը չի ուտի։*

## 7 (39). ՄԻՍԱՖԸՐ ՉԸՊՈՆԻՐ

***Սվիդիցէն ուր մը գուրթօ Քասուպ, գըլթօ յանդիդը միսաֆըրլըղը։***

***Սա՛րա՛խըդա՛ն գըննէ թարաղին գիշէ՝ անծրիվ գուկօ, տունը դիրուչը գա՛սէ.— Շրէն, անծրիվ գուիշնա, տուրիցէ ըննիլը ուր չէ.— լիդ գուրսադա յաթաղէն միչը։***

## 7 (39). ՀՅՈՒՐ ՉԻ ՊԱՀԻ

*Մի օր սվեդացին Քեսաբ է գնում, մնում է այնտեղ հյուր։*

*Առավոտյան վեր է կենում, լուսամուտից նայում՝ անձրև է գալիս, տանտիրոջն ասում է.— Բարեկա՛մ, անձրև է գալիս, դուրս ելնելու օր չէ,— ու նորից պառկում է անկողնում։*

*Դունըդիրը տարիցէ գըննէ, յիղ գըտանո, գօ-ւէ.— Շրէն, Սվիդիան այսօգ է, աս անծրիվը միտաֆըր չըպոնիր:*

## 8 (40). ԽԼՕԻՔ ԳԻՆԳՈԻՆ ՋՈԻՂՈԻԲԸ

*Գինգյուն մը օցած ին.— Օինէ մի մը բըր գօխինք՝ քը ախպարը. մուրճիտ, յա՛ դղատ, ղմօ գըթողօս գօխին:*

*Գնօյը ջողոբ գոգօ.— Դղաս թը գըգախիք՝ նօրը գոնոնում, մորթիս թը գըղօխիք՝ ղէրը գանոնիմ, ախպար քիմը աշխուր չիգօ:*

## 9 (41). ԽՈԻՐԸՋԷՅՆ ԹԱԲԻՕԹ

*— Խուրօզ,— գօսին խուրըզայն,— իլ յիդը քու-մէյն ծուարք, գի՛ր Նագուր գօրիս, բօս չըբըր քրքըրիս գկօրէյն:*

*— Շի՛դ օգվիր,— գօսը խուրաուզ,— գըխուս-դօնում:*

*Գուրթը, գըննը քումէյն ի ծուարք, գուգը, գըգիշգօնը, գըրլիշա ի փիրգըդայլ:*

*— Խուրօզ,— գօսին էյր,— չըվօ գուփիրգիս, թամամն խուսպօցՕր:*

*— Ջօ շինիմ,— ճուղուբ գուդը խուրաուզ,— թարիՕթինը:*

## 10 (42). ՕԾ ԻԼԱՆ ՃԸՐԸ ԳՈԻՐՅՕՇ

*Օծ իլօն ճըրը գուրյՕշը իրգան ջամփըդ ուր-թիլ իքան, գըհասնէյն մինձ ճայր մը:*

*— Է՛,— գօսը Օծ,— Գուրյօւշ ախպար, չո՞ւց բըր անտալք գաս ճայր:*

*— Հիչ մը՛ վօխիր, Օծ ախպար,— գօսը Գուր-յՕշ,— իս գքիզ գանցընիմ, Իլը գոնիէս:*

*Օծ գըղօրօդվա, գընոդա գուրյօշէն գոնա-գայն: Գիշնէյն ի ճայրը: Գըհասնէյն դիքըր ի ճը-րէյն գիսդիէդ: Օծ գըխօծը զԳուրյուշէյն գծամ-դիէ:*

*— Ա՛խ, Օծ ախպար,— գօսը Գուրյօշ,— չվա՞ գուխօծիս:*

*— Թաբիութինը:*

*— Էյմ թաբիաթն օլէ սըրգադը,— գօսը Գուր-յՕշ, գիշնա ճրէյն յադիէ:*

*Տանտերը դուրս է գալիս, նայում, հետ է գալիս, ասում.— Բարեկա՛մ, Ավեդիան անամպ է, այս անձրևը հյուր չի պահի։*

## 8 (40). ԽԵԼՈՔ ԿՆՈՋ ՊԱՏԱՍԽԱՆԸ

*Մի կնոջ հարցնում են.— Ձեզանից մեկին պիտի կախենք՝ եղբորդ, ամուսնուդ կամ տղայիդ ո՞ր մեկին կթողնես, որ կախենք։*

*— Եթե տղայիս կախեք՝ նորը կունենամ, եթե ամուսնուս կախեք՝ ուրիշը կառնեմ, եղբոր նմանը աշխարհում չկա։*

## 9 (41). ԱՔԼՈՐԻ ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*— Աքլո՛ր,— ասում են աքլորին,— բարձրացիր այդ գարու շեղջի վրա, կե՛ր, ինչքան սիրտդ կուզի, միայն թե գարին չցրես։*

*— Շա՛տ լավ,— ասում է աքլորը,— խոստանում եմ։*

*Գնում, բարձրանում է գարու շեղջի վրա, ուտում, կշտանում է, սկսում է քչուջ անել։*

*— Աքլո՛ր,— ասում են նրան,— ինչո՞ւ ես քչչում, չէ՞ որ խոստացար։*

*— Ի՞նչ անեմ,— պատասխանում է աքլորը,— բնավորությունս է։*

## 10 (42). ՕՁՆ ՈՒ ՋՐԻ ԿՐԻԱՆ

*Օձն ու ջրի կրիան երկար ճանապարհ են գնում, հասնում են մի մեծ գետի։*

*— Է՛,— ասում է Օձը,— Կրիա՛ եղբայր, ինչպե՞ս պիտի անցնենք գետը։*

*— Մի՛ վախենա, Օձ եղբայր,— ասում է կրիան,— ես քեզ կանցկացնեմ։ Բարձրացիր շալակս։*

*Օձը գալարվում, նստում է Կրիայի թիկունքին։ Իջնում են ջուրը։ Հասնում են ջրի մեջտեղը, օձը կծում է կրիայի ծոծրակը։*

*— Ա՛խ, Օձ եղբայր,— ասում է Կրիան, ինչո՞ւ կծեցիր։*

*— Բնավորությունս է։*

*— Իմ բնավորությունն էլ այս է,— ասում է Կրիան ու իջնում ջրի հատակը։*

## 11 (43). ԿԱԼԸ ԻԼԱՆ ÖՂԴԸ

*Öուր մը Կալը գիտուվ քարվուան գասնայր չօլէն։*

*Կնաց, պարիվ իդօր ասուց.— Öղդ ախպար յօ՞ գուրթուս։*

*Öղդը ասուց.— Իս Հալուբ գուրթում, տօն յօ՞ գուրթուս։*

*Կալը ասուց.— Իս ալէ քի հիդ գուկում։ Ձանքի դիսօ բըռօնգտ գախված ի, բալքա իյնա դա՝ իս ադիմ։*

## 12 (44). ՑԻՐԷՑՆ ԻԼԱՆ ԳԻՐԻԷ

*Ցիրէյն գուտրթը ղալր աշխար՝ դիար ղուրբաթ։*

*Գուցինչը գգիրիէյ գանը.-- Գիրէգ ախպար, իս գուտրթում դիար ղուրբաթ։ Մուղամթ լդիր, թը գարիս. դէդիս պանը։*

*— Մը վախնուր, ցիրէ՛ն ախպար, գըքըր ուրուրուղ րիլա գըննում։*

*— Գիրէ՛գ ախպար, շի՞դ մը պացվէյր, գըքըրքըրվէյս։*

## 11 (43). ԳԱՅԼԸ ԵՎ ՈՒՂՏԸ

*Մի օր գայլը տեսավ քարավանն անցնում է անապատով։*

*Գնաց ասաց.— Բարև՛, Ուղտ եղբայր, ո՞ւր ես գնում։*

*Ուղտն ասաց.— Ես Հալեպ եմ գնում, դու ո՞ւր ես գնում։*

*Գայլն ասաց.— Ես էլ քեզ հետ կգամ։ Տեսա որ շրթունքդ կախված է, գուցե ընկնի՝ ես ուտեմ։*

## 12 (44). ՑՈՐԵՆՆ ՈՒ ԿՈՐԵԿԸ

*Ցորենը գնում է օտար աշխարհ պանդխտության։*

*Կանչում է կորեկին, ասում.— Կորե՛կ եղբայր, ես գնում եմ օտար աշխարհ։ Ուշադի՛ր եղիր, եթե կարող ես, ինձ փոխարինիր։*

*— Մի՛ վախենար, ցորե՛ն եղբայր, մինչևիսկ խմորեղենի բարակ շերտ կդառնամ։*

*— Կորե՛կ եղբայր, շա՞տ մի բացվիր, կքրքրվես։*



# Գ.

# ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐ

## 1 (45). ՄՈՒՍԱ ԼԻՌԸ

*Թուրքերը հուջում գունին, գումարթին հա-յերը: Մուսա մարքարէն գուարթու սարըձա, էղէ-վը գուարթու էհային: Ջավը իկիք յառանջը:*

*Ասղուձ ասուց.— Գիլխէ վարիցան ձավուն:*

*Մուսա մարքարէն գիլխից, զշամփունքը պայ-փիցում, էրգը քուվը ձուվ իղում, իհային անցում:*

*Թարքը իգիք, ճօրը համան ժողվիցում, թարքը խըխողվիցում:*

*Հայերը իլուն աղը դիդըր: Մուսա մարքարէն ասուց սարըձա.— Ասմէն, դէր, չա՞ բըր շինիմ, քաղցաձ ի գաս իհային, թող ըրք հուց գանէնք, զամբիկը հուցը զը:*

*Ասղուձ ասուց.— Ըրք հուցը բաղաս-բաղաս իրիք, առֆրա արիք, թող ուդի իհային:*

*Իհային դիրում, դիշգացում, քաղան զամբիկ ալէ լիվցում:*

*Յանայր ասրա Մուսա մարքարէն ասուց.— Ասղուձ, չա՞ բըր շինիմ, գաս իհային ձարավ ի:*

*Ասղուձ ասուց.— Գիլխէ վարիցան, ճօրը թող ուխօ, թող խըմի իհային:*

*Մուսա մարքարէն գիլխից վարանցը, Կարաչալը ֆիտիցում, հայերը խմացէն, շատ ճօր խմիցէն, ըլվաուք իրէն, փաքլամիշ իղան, ան դիղը սըրբ-ցան: Աէ դիղը Մուսա լիռը իղավ:*

## 1 (45). ՄՈՎՍԵՍԻ ԼԵՌԸ

*Թուրքերը հարձակվում, տիրում են հայերին: Մովսես մարգարեն գնում է աստծու մոտ, նրա հանից ժողովուրդն է գնում: Ծովը կտրում է նրանց առաջը:*

*Աստված ասաց.— Խփի՛ր գավազանը ծովին:*

*Մովսես մարգարեն խփեց, ճանապարհ բացվեց, ծովը երկփեղկվեց, ժողովուրդն անցավ:*

*Թուրքերը եկան, ջուրն իսկույն միացավ, թուրքերը խեղդվեցին:*

*Հայերը դուրս եկան մի հարթ տեղ: Մովսես մարգարեն ասաց աստծուն.— Ո՞վ, տե՛ր, ի՞նչ անեմ, ժողովուրդը քաղցած է, միայն երեք հաց ունենք զամբյուղի մեջ:*

*Աստված ասաց.— Երեք հացը պատառ-պատառ արեք, սեղան գցեք, թող ժողովուրդն ուտի:*

*Ժողովուրդը կերավ, կշտացավ, քառասուն զամբյուղ էլ ավելացավ:*

*Դրանից հետո Մովսես մարգարեն ասաց.— Աստվա՛ծ, ի՞նչ անեմ, ժողովուրդը ծարավ է:*

*Աստված ասաց.— Գավազանդ խփի՛ր, թող ջուր գա, թող ժողովուրդը խմի:*

*Մովսես մարգարեն գավազանը խփեց, Կարաչայ գետը հոսեց, հայերն ուրախացան, շատ ջուր խմեցին, լվացք արեցին, մաքրվեցին, այդտեղ էլ բնակվեցին: Այդ տեղը կոչվեց Մովսեսի լեռ՝ Մուսա լեռ:*

## 2 (46). ՄՈՒՍԱ ՔԷՀԻԱՆ

### I

*Օր մը Մուսա քէհիէյին քովը յարանջը մօ-ուրթ մը գուկը, գըսը.— Ջէյա բըր բիհիս, բըր գիրցընիս, խմցընիս, հիչ մուրթ չըրըր կիդանը:*

*Մուսա քէհիան զադ մօուրթը ձարէյլ գինը, գըզիրցընը, գըխըմցընը, հիչ մարթա պուն չասիր:*

*Ադ մօուրթը Մուսա քէհիէյին գըսը.— Անդիոք քաղըք մուրթ ղուրգը, յանիր խաբար պիրիլա համար:*

*Քաղըք ուրթօղ գուկը գըսը, վի քաղըքէյն զայ-մաղուամ փախէյր, թը գըզըննուն գը, բըր գա-խէյն զը:*

## 2(46). ՄՈՒՍԱ ՔԵՀԻԱՆ

### I

*Մի օր Մուսա քեհիայի մոտ մի մարդ է գալիս, ասում.— Ինձ պիտի պահես, կերցնես, խմցնես, ու ոչ ոք չպիտի իմանա:*

*Մուսա քեհիան այդ մարդուն ընդունում է, կերցնում-խմեցնում, ու ոչ ոքի ոչինչ չի ասում:*

*Այդ մարդը Մուսա քեհիային ասում է.— Անտիոք քաղաք մարդ ուղարկիր, այնտեղից լուրեր բերեն:*

*Քաղաք գնացողը գալիս, ասում է, թե քաղաքապետը փախել է, եթե գտնեն նրան, պիտի կախեն:*

Ըրք գյորա ադ մուրթ Մուսա քէհյէն քծուլը բովվուձ գըմընը։

Ըրք գյորին ատնըղըրա փախող ղոյմաղամայն աֆըրըղ գակը։

Հարամաթ գյըլլուլ գըգինչըցընը, քի հէյն ղոյմաղամ թըղ ակը, չէր քարոէյն թըղ նըլըդա։

Մուսա քէհիէյն քծու բովվուձ մուրթ փախուձ ղոյմաղամ գընը, ան գյոսը էյր.— Կընը քյոլըք, խյորուր կօր կի ղոյմաղամ էյմ գուռն ըը։

Մուսա քէհիան գուլէը քյոլըք խյորուր գուղը։

Բյոգքին գակուն, սալթանաթու ղըղոյմաղամ գըղէկանէյն։ Սալթանաթու քուրէն նուղըցնիլը վագըղանէյն, մուրթ գըղուրգը Մուսա քէհիէյն ձիով պիղըլաը րիլա համար։ Դըքըը լաւ վաղըլաը՝ արմանալ, հուխ չանանայնիր ձիով քյոլըք մընիլա։

Պիրիլին ատնըրա ղոյմաղամ գընոդըցնը սաղ ղուլթըղը, միգյընէյն ալը՝ սալախ ղուլթըղը, գյոսը.— Աս էմ մինձ ախպոարնը, իս ըրք գարա ըը.— բովիցա, ընձը չըհարցայց, քի իս օով իմ, գայր մուրթ դադ չըր ինիր։

Գըրաանը ալ Մուսա քէհիյան, գյոսը.— Իս քի զէյլըքը հիչ չըմ մառնար, ադը՝ չայըրըր գադխա։

— Սադլըղըմ գադիմ, ղոյմաղամ էֆէնդի,— գյոսը Մուսա քէհիյան,— չի՞ մինք չըրըրգյոռինք ջամփօն իղըրին ալթիլ, ըըր ալթանք հաւըրինք ջամփին՝ գիդիդին։ Միմյակ չի՞ միք խաաէր չըըրըր անընաք միր գըդըցէյց մէյչ։

Ղոյմաղամը ասաց.— Կիխէս, իչաւըխս ըրվան, յոտիր ատնըղա ջամփօն իղըրին ալը ըըր ալթաք, խասըընա ալը ըըր անընաք ձիր գիդըցէյց մէյչ, ձիր լիօն ալը ըըր գինչըվխ Մուսա լիս։

## 3 (47). ՄՈՒՍԱ ՔԷՀԻԱՆ

### II

Վաղուիլէ Մուսա քէհիա անունով մուրթ մը կիցիրի։ Ադ մուրթը ինալէյն շիդ էյըք գուինիր կիցիրի։ Ուր մալէ չըֆթչէյմը էքիզ քուփրէյն* քովը թարլան գավանիր։ Զաղմալէ խիփը քար մը գըղադըվա։ Հիրէյն գափախը գյոփլող քար մը գըշըրճա, հիրէյն պիրանը գադացվա։ Ցադ հյարը խսկա գակինօ։ Ադ չըֆթչէյն գաշաշմըշ ընհօ, չա բըըշինէ դէյը։

Գուրթօ, խյորուր դուգօ Մուսա քէհիէյն։

Մուսա քէհիան գակը կադ իսկէյն ըրք պիժէյն գինէ։ Պիժէյն մը դուդօ թարլայն դըրյաշը, պիժէյն մը դուղօ չըֆթչէյն, պիժէյն մալէ էյնք գանը։

Երեք տարի այդ մարդը Մուսա քեհիայի մոտ թաքնված է մնում։

Երեք տարի հետո, փոխվող քաղաքապետին նրում է շնորհվում։

Կառավարությունը ստանում է կանչել տալիս, որ նախկին քաղաքապետը թող գա, իր աթոռը գրավի։

Մուսա քեհիայի մոտ թաքնված մարդը փախած քաղաքապետն է լինում, նա ասում է.— Գնա քաղաք, հայտնիր, որ քաղաքապետն իմ տանն է։

Մուսա քեհիան գնում, իմաց է տալիս։

Քաղաքից գալիս են, քաղաքապետին հանդիսավոր կերպով տանում։ Հանդիսավոր կերպով իր աթոռին բազմեցնելուց առաջ, քաղաքապետը մարդ է ուղարկում՝ Մուսա քեհիային ձիով իր մոտ բերելու։ Մինչ այդ՝ հայերն իրավունք չունեին ձիով քաղաք մանելու։

Բերելուց հետո քաղաքապետը նրան նստեցնում է աջ կողմը, իսկ մյուսներին՝ ձախ կողմը և ասում.— Սա իմ մեծ եղբայրն է, ես երեք տարի մոտը թաքնվեցի, բայց նա չհարցրեց, թե ես ո՛վ եմ, որից մարդ այդ չէր անի։

Այս դառնում է դեպի Մուսա քեհիան, ասում.— Ես քո լավությունը երբեք չեմ մոռանա, պահանջիր ինչ որ ցանկանում ես։

— Ողջությո՛ւնդ եմ ուզում, քաղաքապետ տեր,— ասում է Մուսա քեհիան,— ինչո՞ւ մենք քաղաքի մայթերով իրավունք չունենք քայլելու, որ փողոցի մեջտեղով՝ անասունների ճամփով պիտի քայլենք։ Մեկ էլ՝ ինչո՞ւ մեր եկեղեցիներում թաղիք չպիտի ունենանք։

Քաղաքապետն ասում է.— Գնա՛ս, աչքի՛ս վրա, սրանից հետո մայթով կգնաք, ձեր եկեղեցիներում էլ թաղիք կունենաք, ձեր լեռն էլ պիտի կոչվի Մուսա լեռ։

## 3(47). ՄՈՒՍԱ ՔԵՀԻԱՆ

### II

Ժամանակին Մուսա քեհիա անունով մի մարդ է լինում։ Այդ մարդը ժողովրդին շատ բարիք է անում։

Օրերից մի օր մի հողագործ էքիզ բուփրեին* մերձակա արտում վար էր անում։ Մեկ էլ խոփը մի քարի է դեմ անում։ Հորի բերանը մի տափակ քար է շրջվում, հորի բերանը բացվում է։ Այդ հորի մեջ ոսկի է լինում։ Հողագործը շվարում է, թե ինչ անի։

Գնում է, Մուսա քեհիային իմաց է տալիս։

Մուսա քեհիան գալիս է, այդ ոսկին երեք բաժին է անում։ Մի բաժինը տալիս է արտի տիրոջը, մի բաժինը՝ հողագործին, մի բաժին էլ ինքն է վերցնում։

* Գյուղակ Բիթիասից դեպի հյուսիս-արևելք։

Դուխուրգէ խաբուր հուքումաթէյն, քի հէյր մը պացված ի, մինձ ա̈լէ իուկա ծըղնված է։ Հուքըմաթը գուկը, Մուսա քէհյան կէյր պիժայնը հուքումաթէյն գուգո։ Ձունքի խույէյն մինճին ընծած խուզինան հուքումաթէյնէ։ Միգալ ալհին ա̈լէ թարլէն դըէյչ ա̈մըր գինը, քի գէյր ա̈շկէյնը չըֆթ-ջէյն ուգօ, չունքի ա̈նա̈ր ա̈րա̈րում հա̈րգցու։

Յա̈ղիր իրվան հուքումաթը գադ դիղէյն ա̈նօն գըտընա Մուսա լէռ, Մուսա քէհիէյն ա̈նունով, Հուքումա̈թէյն ագիր խըմաթ ինիլէյն հա̈մար։

Կառավարությունը հայտնում է, թե մի հոր է բացվել, մեջն էլ ոսկի է գտնվում։ Կառավարությունը գալիս է, Մուսա քեհյան իր վերցրած բաժինը պետությանն է հանձնում, որովհետև հողի մեջ գտնվող գանձը պետությանն է պատկանում։ Մյուս կողմից էլ կարգադրում է արտի տիրոջը, որ իր աղջիկը հողագործին տա, որովհետև նրա շնորհիվ ինքը հարստացավ։

Այդ պատճառով կառավարությունն այդ տեղի անունը դնում է Մուսա լեռ, Մուսա քեհիայի անունով, կառավարությանը լավ ծառայելու համար։

## 4 (48). ԹԻԳԸՂԻԱ̈ ԻՒԱՆ ՎԱՐՎԱՌԱՆ

Վա̊ղըտիլա գիցէյր փուխփա̈րա̈ւթ թա̈քա̈վէյր մը, ունցէյր ըրգը ա̈շկէյն՝ Թիգըղիէ իւան Վարվառան։

Ըրգը ա̈շկայնն ա̈ իղէյն շիտ խիլըք, աստված բաշդուղ, Քրըստէյս սիրող։ Դաիմա գըքա̈րուզին աստըծը պանիր՝ աստըծը իւմէյն վախնիլ, Քրիստէյս սիրիլ, Քրիստիսէյն ուրէնքնէն պահիլ։

Ա̈գիր հա̈մար ա̈լը իրից գօ̈դ՝ թա̈քա̈վէյր չըր սիրիր գիրինք։ Ա̈դ ըրգը ա̈շկայն գըփախէյն գա̈նին։ Թա̈քա̈վէյր ա̈մըր գինը զ̊ընիլ պիրիլ գիրինք, ա̈յա̈ր թը չըր ուկան, կուդըրիլ, սպա̈նիլ գիրինք։ Յադ վա̊ղըտը ամըն քայլ գախմ գըփա̈խա։

Թիգըղիէ գըփախա գուրթը տալ սըպ Սա̈րկէյս։ Յա̈նդիէյղ գը մինձ, մէյլթ մա̈ղա̈րաամ։ Յաստնձ ըր մընիս ի մա̈ղա̈րան՝ դուշմօն գըհասնա։ Ա̈վըլ-մա̈վըլ գըփօր գծիվայն, գըվիրցընը գիչվէյն տալ իրգանք, գըխընտրը աստըծա. «Յո̃, կէյր աստված, սու՛ս գհիկէյս, միսկիր կէյս դուշմանայս ծուառ»։

Միմա̈լը գըտուգը կիդայն, շայս մը գինիս, գըփա̈գը գմա̈ղա̈րէյն տասւ։ Ամմա յասանձըր նըքսը մընիս՝ կլատիս գըմընը ըրգը շըէյն արասայն։ Ղայր շայս գինիս, Թիգըղիէ գըմընը յըրգը շըէյն արասայն, գըչարալամըշ ընը քա̈րիրէյն յարասին փըրթիլա̈ հա̈մար, ամմա չըգար։ Յաստնձ ցավին արցուանք գըթոա յիչօ̈ց, յա̈նիր սուն՞ա քըդաանք մը փայդահ գինը, դիքըր սուն՞ա վիրընէյնը գուղղը։

Դիքըր համը արցընքը, քըդընքը, վիրընը խարինգված գա̈թընիր գըֆիթէյն շըռէյն բա̈դէյն իրվան տալ մա̈ղա̈րէյն տասւ գըըլսուն դըց ալմաստը հա̈դընիր։

Վարվառան գըփախա տալ մէյթ խա̈նդիէ, սուլու̊ տա դա̈գը ջըկնա̈վիրը մա̈ղա̈րիէմ՝ շոհն պացուծ։ Մա̈ղա̈րիգօն մէյչ տա̈նգը ըրք բադինըգ, տըգ խուրուն։ Վարվառան գըմնիս յադ մա̈ղա̈րիէ, գա̈ղնը թփէյր գըքիշը յառճայվ։

Դուշմօն գըղ̊ընիս Ջվարվառան, գըդանիս դա-

## 4(48). ԹԵԿՂԵՆ ՈՒ ՎԱՐՎԱՌԱՆ

Ժամանակին լինում է մի կռապաշտ թագավոր, ունենում է երկու աղջիկ՝ Թեկղեն ու Վարվառան։

Երկու աղջիկներն էլ լինում են շատ խելոք, աստվածապաշտ, քրիստոսասեր։ Նրանք միշտ աստվածային բաներ էին քարոզում՝ աստծուց վախենալ, Քրիստոսին սիրել, Քրիստոսի օրենքները պահել։

Դրա համար էլ իրենց հայր թագավորը նրանց չէր սիրում։ Այդ երկու աղջիկները տանից փախչում են։ Թագավորը հրամայում է նրանց գտնել, բերել, իսկ եթե չգան, նրանց հալածել, անգամ սպանել։ Այդ ժամանակ ամեն մի քույրը մի կողմ է փախչում։

Թեկղեն փախչում գնում է դեպի սուրբ Սարգիս։ Այնտեղ մի մեծ, մութ քարայր կար, նախքան քարայր մտնելը՝ թշնամին հասնում է։ Աղջիկն անմիջապես ձեռքերը տարածում, աչքերը երկինք հառում, աստծուց խնդրում է. «Մ՛վ, տեր աստված, հոգիս ա՛ռ, մի գցիր ինձ թշնամու ձեռքը»։

Հանկարծ գետինը ցնցվում է, մի ժայռ է ընկնում, փակում քարայրի դուռը, բայց մինչև ներս մտնելը՝ գլուխը մնում է երկու ժայռի արանքը։ Երբ ժայռն ընկնում է, Թեկղեն մնում է երկու ժայռի արանքը, ջանում այդ արանքից դուրս պրծնել, բայց չի կարողանում։ Ցավից, նախ արցունքներն են մաքրում աչքերից, հետո մի քրտինք է դուրս տալիս, վերջում արյունն է հոսում։

Մինչև հիմա էլ արցունքի, քրտինքի և արյան խառնուրդի կաթիլները քարացել, մնացել են դեպի քարայրի դուռը տանող ժայռի պատին ու պսպղում են ալմաստի հատիկների նման։

Վարվառան փախչում է մի մութ ձոր, որի ձախ կողմում կար մի ճգնավորի քարայր՝ ժայռի մեջ բացված։ Քարայրում կար երեք գմբեթավոր պատըրհան, խորանի նման։ Վարվառան մտնում է այդ քարայրը, (մուտքի առաջ) քաշում կաղնու թփեր։

Թշնամին գտնում է Վարվառային, տանում հոր

դէյն քö։ Դծդ չայրըր գինը, ֆայդա չինիր, քըխադյանըըղին վազ չուկուր։

Ցան վաղ̊ըտը գըպռնայն գը գըձձէյց, գըխըրըղայն դը ջամփընայն, քäրիրէյն իրվան։ Ան դինä գäսը.— Ըրք խուրուն գը. ըրք աադուձ գը՝ հայր աադուձ, վօրդի աադուձ, հուկին սուրփ։

Ա̃դիէնց ä գըննը հիկկէյն։

Ամըն աղըզ, յէյփըր գäննաք ցö խ գուրթայն, գըննայն լադ մäղäրիէ, լումըն խուրäնը լառճիվ խուաչ մը գըհäննայն, գուրթայն յիրից պöն։

մոտ։ Հայրն ինչ անում է, զուր է անցնում (աղջիկը) քրիստոնեությունից չի հրաժարվում։

Այն ժամանակ բռնում են նրա մազերից, ճանապարհի քարերի վրայից քարշ տալիս։ Նա դարձյալ իր ասածն է ասում.— Երեք խորան կա. երեք աստված՝ հայր աստված, որդի աստված, հոգին սուրբ։

Այդպես էլ հոգին ավանդում է։

Ամեն անգամ, երբ կանայք ցախի էին գնում, բարձրանում էին այդ քարայրը, ամեն խորանի առաջ մի խաչ էին հանում, գնում իրենց գործին։

## 5 (49). ՄԻՐ ԽÄԲԼÄՔԸ

Միր դիղը Հաջի Հաբիբ äնöն մուրթ մը գուաբրիր։

Ադ մուրթը էվլադ-դօվլաթ չունցիրը, ամա գուառնը ղայրը չուճուխնա, գումինձընը։ Յադäր սօնրա գուչադնը միր կյէղը։

Ուր մը ադäր բառուվը գուուրխօ մäչէն ուլիրէյն համուր սընձըսգա դդրիլա համուր, գուդխնօ մէջէյն միչը ճäխցուց քօր մը գօ։ Գուուկու կյէղը, գուհաղ̊աթի։

Մարթաքը գուուրթուն, գուդ̊դնին, գութամըցին զադ ճաղուցքը՝ իրինց գըննու շադսի։

Յադ Բիթխասը միդ յանը՝ Ուհան Օսկէն պէրնը* մուդը։ Յադ դիղը Շըբըլղէյն** իլան գօ։

## 5(49). ՄԵՐ ՀԱՋԻ-ՀԱԲԻԲԼԻՆ

Մեր տեղում Հաջի Հաբիբ անունով մի մարդ էր կենում։

Այդ մարդը երեխա չէր ունեցել, բայց ուրիշ երեխաներ էր վերցրել ու մեծացրել։ Դրանից հետո մեր գյուղը բազմացավ։

Մի օր նրա պառավը գնում է անտառ ուլերի համար սնձսկա կտրելու, տեսնում է անտառում մի ջրաղացքար կա։ Գալիս է գյուղ, պատմում։

Մարդիկ գնում, գտնում, մաքրում են այդ ջրաղացը՝ դարձնում իրենց սեփականը։

Այդ (ջրաղացը) Բիթխասի մի կողմն է Հովհան Ոսկեբերանի* մոտ։ Այդ տեղը կա և Շըբըլղեյնը**։

## 6 (50). ԶՈՒՎԷՅՆ ÄՃԿԱՅՆ

Թäքäվէյր մը ունցէյր ըրք դղը ու ըրք մանդուլ պäգլը ձուվէն իզզէյր։ Ադ պäգլին գուկուղնըվա։ Թäքäվէյր äմըր գուինը դղայց՝ ուրթիլա րիհիլա զպäգլին։

Մինձ դղան գուրթը բäկչըւըդ̊ը, ամա անջադ̊ դըկր գիսկիշէյր գըաիմäնը, սունդ̊րա քաուն գառնիէգը, գըըառգա դիկըր լայ։ Սäքäխդäն գիծը, գիշը, քի մըդ մանդուլ պäգլին կուղցըվöձը։

Միգäննöր ուրթանչը դղան գուրթը բäկչըւըդ̊ը։ Ան äլը, տըըզ էյր մինձ ախպուար, գըըառգա։ Սäքäխդäն գիշը, գըդսնա՝ միգալ մանդուլ բäգլին ä կուղցըվöձը։

Նöք գուկը բզդäգ դղայն։ Աս դղան, չըըառգիլա համուր ջիգäդ մաղա գըգդրը, գըտնուայր äղը բäդöռ մը։ Մäդէյն ցäվին դղան չըըառգայր։

Գիսկիշիրին սունդ̊րա ձուվին գըննին ըրք äշկէյն գուկուն զպäգլին կուղնէյլ։

## 6(50). ԾՈՎԻ ԱՂՋԻԿԸ

Մի թագավոր ունեցել է երեք տղա, և ծովեզրին երեք ածու բակլա։ Բակլան գողանում են։ Թագավորը հրամայում է տղաներին, որ գնան բակլան պահպանեն։

Մեծ տղան գնում է պահակության, բայց մինչև կես գիշեր հազիվ է դիմանում, հետո քունը տանում է, քնում մինչև լույս։ Առավոտյան զարթնում, տեսնում է, որ մի ածուի բակլան գողացել են։

Մյուս օրը միջնեկ տղան է գնում պահակության։ Նա էլ մեծ եղբոր նման քնով է ընկնում։ Առավոտյան նայում, տեսնում է, որ մյուս ածուի բակլան էլ են գողացել։

Հերթը հասնում է փոքր տղային։ Այս տղան, որպեսզի չքնի, ճկույթ մատը կտրում է, վրան մի կտոր աղ ցանում։ Մատի ցավից տղան չի քնում։

Կեսգիշերին անց ծովից դուրս են գալիս երեք աղջիկ, գալիս են բակլան գողանալու։

* Բիթխասի մոտ Հովհան Ոսկեբերանի մենաստանը։

** Շըբըլղեյն աղբյուրը։

Ադ աշկընէյր գըննուն իրգան բօյլա, գձձըռ-գՕնք քըրքըրոուձայնիր գուվդինէյն ՟իրվան, գը-հասնէյն դիկըր թուփըղ՞նայն։

Բըգգօդ դղան գը՞ուչըմը աշկընիրէն իրվան, գըքնթը գմիէ գձձէյց։ Միգանէյն գըփախէյն, գինէյն ի ձՕվ։

Ադ գղան գադ աշկայն գըդանա իդՕն, դադը մարէյն գառը, քի գադ աշկէյն էյր գնադ բըր առնը։

Հարսնաք գինին։

Ադ աշկայն չխօսէյր։ Գասնա էփիէ վաղըռ, գունըն ըրք դուըք։ Զայըր գինը մօրթ խօսըցնիլա գգնա, ֆայդա չինիր։ Դըպըռնը գչուջըղ՞նայն միէ, գըտնա մօրը ձնգէյն, գըղընէյգը։ Դընա չըխօսէյր։ Միգալ չուջօ՞ ալը գըպռնը, գըտնա ձնգէյն բըր գընը, գինգՕն սայրտ չըտխմանուր, մաղդան գը-չիյգը, իսկին թէօս մը գըքարվա պխնին։

— Ա՜խ, մարթ,— գաըը գնա,— չվա՞ գադ իրիր։ Իս տառ բըր արթայմ ձՕ, յէյմ գագէյն-մօր քՕ, շիդ պուն բըր պիրայմ, ղանի բըր ինայմ գքիգ։ Արը գար գէյր ի ձՕվ։

Մօրթ գառնը գչուջառու՞, գգնա, գըրթուն ի ձովիգիր։

Գնայը գաըը.— Համօ իս գըրթում, այար քայէ մը սունդ՞րա ձՕ, թը գըփըրփըրը հիյը ընծը, իս գուկում։ Զիէ, այար քանը գՕլ մը իղ ձՕ թը գը-գարմըրը, կիդացէյր քի էյմ դՕդ, էյմ մօար գէյռ գընօձին։ Օ՛ռ գչուջառու՞, իլ կնօ ի դՕն։

Գնայը գիշնա ի ձՕվ, գըրթը։ Քայէ մը սուն-դըրա ձՕ քանը գՕլ մը դիղ գուգարմըրը։ Մօրթ գըհանդընը, քի աշկընէյն դՕդ-մօար գընօձէյնգը, քի չվա տօն տուրիցը մնացիր։

Մօրթ գառնը գչուջառու՞, գըրթօ ի դՕն։

## 7 (51). ՁՈՒՎԸ ՄՕՐԹ

Վաղ՞տիլա միր տայ ձուվըգիր գըրթուն իղէյր խէյր ինէյլ։ Օր մը գըրթուն միգ քանը Օր գըմը-նուն, յիդ գըտառնուն։

Ալըգ մալը գըրթուն ի խէյր։ Բութըն իհալին ձՕվ գիշնա։ Տիրգուսկ վաղ՞տ ըրք գաննաք գըզադ-վէյն, գըրթուն մաղարայմ յառճիվը գըրըդ գը-վառին։ Ջու՞ մալը ձուվին գընը գըըըլդու՞ մօրթ մը, բութըն մազիրու ձածգըվուձ, ամմա բութըն միրգադ, անադան դուղմա։ Ադ մօրթ գուկը, գըձնգը յադ գրագէյն յառճայվ։

Ադ գաննաք գըըգ գառնին, գըքարին յադ մարթօուն իրվան։ Էյնք ալը առափ գառնը զգըէգ, գըըննա էյնք յէր իրվան։ Գաննաք գըվախին, օմ միէ խանձՕղ մը գառնը, գընին գըրթուն իհա-լայն քՕռ։ Ադ ձուվը մուրթն ալը գառնը խան-ձՕղ մը, իժգըդիլը—իժգըդիլը գուրթը գաննէյց լիդըտա։

Այդ աղջիկները բարձրահասակ էին, մարմնի վրա թողած արձակ վարսերով, որոնց ծայրերը հասնում էին մինչև կրունկները։

Փոքր տղան հարձակվում է աղջիկների վրա, նրանցից մեկի մազերից բռնում։ Մյուսները փախչում, ընկնում են ծովը։

Այդ տղան աղջկան տանում է տուն, հորն ու մորն ասում, որ այդ աղջկան պիտի առնի։

Հարսանիք են անում։

Աղջիկը չի խոսում։ Բավական ժամանակ է անցնում, այդ աղջիկն ունենում է երկու տղա։ Ամուսինը ինչ անում է, որ կինը խոսի, բան չի դուրս գալիս։ Երեխաներից մեկին բռնում է, դնում մոր ծնկների վրա, մորթում։ Կինը չի խոսում։ Մյու երեխային էլ է բռնում, դնում ծնկներին, որ մորթի, կնոջ սիրտը չի դիմանում, սիրտը խառնում, ետ տալիս, մի ոսկի թաս է բերնից ընկնում։

— Ա՜խ, մարդ, — ասում է կինը,— ինչո՞ այդ արեցիր, ես դեռ պիտի գնայի ծով, իմ հո ու մոր մոտ, շատ բան պիտի բերեի, քեզ հարըս-տացնեի։ Արի՛ ինձ տար ծով։

Մարդը վերցնում է երեխային ու կնոջը, գնու ծովեզր։

Կինն ասում է.— Հիմա ես գնում եմ եթե քիչ հետո ծովը փրփրի, սպասիր ինձ, ե կգամ։ Իսկ եթե մի կալի չափ տեղ կարմրի, իմա ցիր, որ հայրս ու մայրս ինձ մորթեցին։ Վերցրո երեխային և գնա տուն։

Կինն իջնում է ծովը, սուզվում։ Քիչ անց ծով մի կալի չափ տեղ կարմրում է։ Մարդն իմանում է որ ծնողները մորթեցին աղջկան, թե՝ ինչու ես դ դուրսը մնացել։

Մարդը վերցնում է երեխային, գնում տուն։

## 7(51). ԾՈՎԻ ՄԱՐԴԸ

Ժամանակին մեր կողմերը ծովափ էին գնու մատաղ անելու։ Մի օր գնում էին, մի քանի օ մնում, վերադառնում։

Մի օր էլ գնում են մատաղի։ Ամբողջ ժողովու դը ծով է իջնում։ Երեկոյան կողմ երեք կին բա ժանվում, գնում են մի քարայրի առաջ կրակ վա ռում։ Հանկարծ ծովից մի տարօրինակ մարդ դուրս գալիս, ամբողջովին մազով ծածկված, մ րից՝ մերկ։ Այդ մարդը գալիս չոքում է կրակ առաջ։

Կանայք կրակ են վերցնում, լցնում այդ մա դու վրա։ Մարդն ինքն էլ է բռով կրակը վերցնու լցնում իր գլխին։ Կանայք վախենում են, ամեն մ կը մի խանձող է վերցնում, ելնում գնում ժողովր մոտ։ Այդ ծովի մարդն էլ է վերցնում մի խանձո թափահարելով գնում է կանանց հետևից։

Գա՛ննաք գըփախէյն գուրթուն՝ բաբö՛ն քöու ան ա՛լըգուրթը կըդիավընէյն։ Բöբ գըդըսնա զադ գա՛ննաք ու զադ գըբըլդուան, գա՛սը — Ձա՞ բըր չինիմ իս հա՛մը, օշնուձնա, լասղիէղ զուն գա՛ննաք, հարսնիր, ա՛շկընիր, չուշըղնա, չո՞ւց բըր ինիք հա՛մը։

Մա՛ղա՛րէյն լառճայվ թիզընայմ գիցուձ իղէյր։ Բöբ գըպիրըցընը գա՛մպը բա՛րöն մը, զադ ձուվը մօուրթ գըգա՛րըցընը լադ թիզընէյն։

Սա՛բա՛խդա՛ն իհալին գըննը գիշը, գըդըսնա, քի բա՛րöն ատա արզան փա՛տտըրտöձ, գա՛րöձը, ձուվը մօրթ չիգը, թուղայր կա՛ցէյր։

## 8 (52). ՊՕ Ա̈ՇԿԷՆԸ

Գուգինօ, չուգինուր՝ անայըղ մար մը։ Աղ գունընօ դղա մը իլան ա՛շկէն մը։ Ա̈ղունք գունուևուն ուլգընիր։

Աղ ա՛շկէնը իլան դղան ամըն ուր ուլգընիրը էրգուքում արծիլ գուգա՛նէրին։

Ուր մա՛լէ ուլգիգունը մէյը գուգուրսվա։ Անայըղ մարը գուա՛սէ.— Յօ՞ գօ ուլգիգունը մէյը։

Ա̈շկէնը իլան դղան գուա՛սին.— Գուբըրըվիցավ։

Մարը գուա՛սէ.— Թը տըրգադ է, քայր իլան ախպար ուշէդ կացիք, պատվիցուք ուլայը, դըքըր չըզ՞ընաք զէ՝ չըմընաք ի զօն։

Քայրը իլան ախպարը գուրթուն ուլայը պատվիլ։

Մօթը ինգավ, ա՛շկէնը մնաց մա՛շէն միջը։ Ուլա՛յը չզ՞ըդուվ, բաշլից լուցըլ։ Ախպարը գինչից.
— Ուլայը զ՞ըդո՞ւր, քուրö՛կ։

Քայրը չըգարցավ խոսիլ, անճախ.— Վո՜ւ, վո՜ւ, վո՜ւ,— գունիր։

Ախպարը բաշլից քայրը պատվիլ, ամմա ան պօ մը տարծուձ իր։

## 9 (53). ՂԱԹԸՐՋԸ ՆԻՋԱՄԸ

Ղաթըրջը Նիզամը փատ պիրիլ կյացէյր, ճիրէն գուկուլդըրվա տայ խանդէկ։

Նիզամը ըրգը ձöռ պացէյր աղութէյր, ա՛ցէյր.
—Ցա՜, սուրփ Սարքէս, պընիր ճիրէն, թըղ չինա։

Ըմը ճիրէն գուտուրթու։ Սուրփ Սարքէս չըպըռնէզը, չա՛նքի սուրփ Սարքէս չիկօ, սուրփ Սարքէս հա՛քայօթ ի։

Ղաթըրջը Նիզամը յէփըր գուիշի ճիրէն գըկըլդըրվա, սուրփ Սարքէս չըպըռնէ, ջիգյարով գուա՛սի.—Փախէ՛, սուրփ Սարքէս, համը գումնաս ճիրէն վըրքը, գուբըխշէս։

Կանայք փախչում, գնում են քահանայի մոտ, նա էլ հետևներից։ Քահանան տեսնելով այդ կանանց ու այդ մերկ (մարդուն), ասում է.— Ես հիմա ի՞նչ անեմ, օրհնածնե՛ր, այստեղ կանայք, հարսներ, աղջիկներ, երեխաներ կան, ի՞նչ անենք հիմա։

Քարայրի առջև մի թզենի է լինում։ Քահանան կանեփի պարան է բերել տալիս ու այդ ծովի մարդուն թզենուց կապում։

Առավոտյան վեր են կենում, տեսնում, որ պարանն առաջվա պես փաթաթված, կապված է, իսկ ծովի մարդը չկա, թողել գնացել է։

## 8(52). ԲՈՒ ԱՂՋԻԿԸ

Լինում է, չի լինում՝ մի խորթ մայր։ Նա ունենում է մի տղա և մի աղջիկ։ Նրանք ունենում են ուլիկներ։

Այդ տղան ու աղջիկը ամեն օր երկուսով ուլիկներին տանում լին արածեցնելու։

Մի օր էլ ուլիկներից մեկը կորչում է։ Խորթ մայրն ասում է.— Որտե՞ղ է մի ուլիկը։

Աղջիկն ու տղան ասում են.— Կորավ։

Մայրն ասում է.— Թե որ այդպես է, քույր ու եղբայր շուտ գնացեք, փնտրեք ուլիկը, մինչև չգտնեք՝ տուն չմտնեք։

Քույրն ու եղբայրը գնում են ուլիկը փնտրելու։ Մութն ընկնում է, աղջիկը մնում է անտառի մեջ։ Ուլիկը չի գտնում, սկսում է լաց լինել։ Եղբայրը կանչում է.— Ուլիկը գտա՞ր, քույրի՛կ։

Քույրը խոսել չի կարողանում, հազիվ.— Վո՜ւ, վո՜ւ, վո՜ւ,— է անում։

Եղբայրն սկսում է քրոջը փնտրել, բայց նա բու էր դարձել։

## 9(53). ՋՈՐԵՊԱՆ ՆԻԶԱՄԸ

Ջորեպան Նիզամը գնում է փայտ բերելու, ջորին գլորվում է դեպի ձորը։

Նիզամը երկու ձեռքը պարզում է, աղոթում.— Ա՜յ, սուրբ Սարգիս, բռնիր ջորին, թող չընկնի։

Բայց ջորին գնում է։ Սուրբ Սարգիսը չի բռնում նրան, քանի որ սուրբ Սարգիս չկա, այն հեքիաթ է։

Ջորեպան Նիզամը, երբ տեսնում է, որ ջորին գլորվում է, սուրբ Սարգիսն էլ չի բռնում, բացականչում է.— Փախի՛ր, սուրբ Սարգիս, հիմա կմնաս ջորու տակ, կճզմվես։

## 10 (54). ՔՐԻՍԴՈՒՍՆ ԻՂԱՆ ՅԷՐ ԴՂԱՆ

*Ուր մը ասդուծ գուäսէ Քրիսդուսէն.— Կնօ իշէ լուն մամլաքաթը չա՞ գօ։*

*Քրիսդուսը գուրթու գիշէ՝ գäննաքը խլüք ին, քան զմարթաքը։*

*Գուկու գուäսէ.— Գäննաքը խլüք ին, քան զմարթաքը։*

*Ասդուծ գուäսէ.— Տօն բըր ուրթուս հուն, յարսօն դարտ բըր ծնուս, բըր գարքըվէս, բըր հասգընաս ճուվ խլüք ի, սօնրա լիդ գուկուս։*

*Քրիսդուսը կնäց, գարքըվիցուվ։*

*Էր գնäյը ամըն ուր գուäսէր.— Պäնիլ կնօ։*

*Քրիսդուսը գուպանիր, գուկիր պանիլէն, գնäյը գուäսէր.— Կնօ, ճöր պէ։*

*Քրիսդուսը գուրթիր, ճöր գուպիրիր։*

*Գնäյը գուäսէր.-- Կնօ, զüղպը ֆիտէ։*

*Քրիսդուսը դուրթիր, զüղպը գուֆիտիր։*

*Ուր մäլէ Քրիսդուսը աչիգ ծնäց, լարսօն դարէն չըխալիսուծ ուզից ուրթիլ ասդըծա քուվը, ամմա Քրիսդուսը ադ գինգունը յիրմինը դղա մը գունիր։ Զադ դղան մաքդաբը գուղուրգիր։ Ադ դըղան դօկտօր գուսուրվիր։*

*Քրիսդուսը äսուց էր դղէն.— Թը հիվունտ մը գըդխնուս, ագար իս կլխէն գայնուծ իմ, հուն արէ, չա՛բըր դուզիս իլլաճ դօր՝ գըճուղնօ։ Ագար իս վդուցը յիրվան գայնուծ իմ՝ չըճուղնուր։*

*Դղան իշից դադէն խուսքիրը, իլավ կնäց։ Տըգադ շüդ մուրթ ճուղցöց։*

*Ուր մäլէ թäքäվüրէն äշկէյնը հիվունտ իր։ Թäքäվüրը գինչից ալայ դօկտօրնէն, հիչ մէյը պուն մը չըգարցուվ հասդընիլ։ Գինչիցէն Քրիսդուսէն դղան։ Դղան առուվ գչանթան, կնüց իշից, թäքäվüրէն äշկէյնը բառգուծ ի, ամմա էր դուդը վդուցը յիրվան գայնուծ ի։*

*Դղան äսուց.— Հիվընտէն կլօխը յանտէն իլ-իցիք։*

*Ըրք գդրէճ ուշէդ իգէն, իլլիցէն թäքäվüրէն äշկընէն կլօխը Քրիսդուսէն տէն։*

*Դղան իշից սս զուրծը յիդ վդուցը տէն գայնուծ ի, չա՞ բըր շինի, կնուց Քրիսդուսէն յանգաճը äսուց.— Էմ մարը գուկօ, ուշէդ փախէ։*

*Քրիսդուսը փախուվ, թäքäվüրէն äշկէյնը ճուղցուվ։*

*Թäքäվüրը äսուց.— Տօն աղվüր հասգընüղ դօկտօր իս, յասկէ սօրա օմբրօտ նահյատը բըր աբրէս էմ սարան, զէմ äշկէննä äլէ քիզ բըր ուդօմ։*

## 10(54). ՔՐԻՍՏՈՍՆ ՈՒ ԻՐ ՏՂԱՆ

*Մի օր աստված ասում է Քրիստոսին.— Գնա՛, տես այն աշխարհում ի՞նչ կա։*

*Քրիստոսը գնում, տեսնում է, որ կանայք խելոք են, քան տղամարդիկ։*

*Գալիս ասում է.— Կանայք խելոք են, քան տղամարդիկ։*

*Աստված ասում է.— Դու պիտի գնաս այնտեղ, երեսուն տարի պիտի մնաս, պիտի ամուսնանաս, պիտի հասկանաս ո՞վ է խելոք, հետո վերադառնաս։*

*Քրիստոսը գնաց, ամուսնացավ։*

*Իր կինն ամեն օր ասում էր.— Գնա՛ աշխատիր։*

*Քրիստոսն աշխատում էր, գալիս աշխատանքից, կինն ասում էր.— Գնա՛, ջուր բեր։*

*Քրիստոսը գնում էր, ջուր էր բերում։*

*Կինն ասում էր.— Գնա՛, աղբը թափիր։*

*Քրիստոսը գնում էր, աղբը թափում։*

*Մի օր էլ Քրիստոսը դժգոհեց, երեսուն տարին լրացած, ուզեց գնալ աստծո մոտ, բայց Քրիստոսն այդ կնոջից մի տղա ուներ։ Այդ տղային դըրպրոց էր ուղարկում։ Տղան բժշկություն էր սովորում։*

*Քրիստոսն ասաց իր տղային.— Եթե մի հիվանդ տեսնես, ու ես գլխին կանգնած լինեմ, այնտեղ արի, ի՛նչ դեղ ուզում ես տուր՝ կլավանա։ Բայց եթե ես ոտքերի կողմը կանգնած լինեմ՝ չի լավանա։*

*Տղան լսեց հոր խոսքերը, վեր կացավ գնաց։ Այդպիսով շատ մարդկանց բուժեց։*

*Մի օր էլ թագավորի աղջիկը հիվանդ էր, թագավորը կանչեց բոլոր բժիշկներին, ոչ մեկը ոչ մի բան չկարողացավ հասկանալ։ Կանչեցին Քրիստոսի տղային։ Տղան վերցրեց պայուսակը, գնաց, տեսավ. թագավորի աղջիկը պառկած է, բայց իր հայրը կանգնած է ոտքերի կողմը։*

*Տղան ասաց.— Հիվանդի գլուխը մյուս կողմը շրջեցեք։*

*Երեք կորիճներ շտապ եկան, շրջեցին թագավորի աղջկա գլուխը Քրիստոսի կողմը։*

*Տղան տեսավ, որ այս անգամ էլ հայրը ոտքերի կողմն է կանգնել։ Ի՞նչ անի։ Քրիստոսի ականջին ասաց.— Իմ մայրը գալիս է, շո՛ւտ փախիր։*

*Քրիստոսը փախավ, թագավորի աղջիկն առողջացավ։*

*Թագավորն ասաց.— Դու լավ հասկացող բժիշկ ես, սրանից հետո ողջ կյանքդ իմ պալատում կապրես, իմ աղջիկն էլ քեզ կտամ։*

## 11 (55). ԼՕՐՃ ԲԱՐԳՕՆ ԽԱՉԱՆԻԼԸ

*Ուր մը նստուծ իր Լօրճ բարօգը սաղմօսը քուվը տրուծ գուդօնշըմըշընիր։*

*Մթնօզ վախըտ կիդացէ մը իգիք քուվը, իդծր էր պարիվ, վէ ծսուց.— Կօվօ՛րկ աղա, խաչանէ միր իծծօն, ան գուրսըվուծ ի։*

*Բարծըլը առունց նիխիկընիլ սաղմօսը առուվ իպուց, ծսուց աղ մարթօն.— Տանօգ գունէ՞ս։*

*Մուրթը ծսուց.— Հօ։*

*— Դծ՛ր, իշիմ տանծյիտ։*

*Տանծըլը առնիլին սունգրա իպուց զէ, սաղմիսէն լըրվան իտէր, բըլիշիցուվ գարթիլը։ Դիրիվ մը սաղմիցին գարթիլին սունգրա, փագից զտանծըլը, իդծր դըրուչը։*

*Ծսուց.— Զըպանուս զէ, դըքըր ածը չըզընուք։*

*Աս մուրթը տանծըլը առնիլէն սունգրա, մամնունյատ բալան ուրծց, կնօց։*

*Միգալ սարախըզան հուվըվէն հիդը բարաբուր լիոը կօցէն։ Շօդ, քէչ իլվիլէն սունգրա, դիսուն տիմվընէն շըրէն լէրվան նստուծ է թիբի մը։ Քէչ մը մըդգըցուն, յադ շըէն դօգը, դիսուն իրինց պատվուծ ածը, նստուծ է էր ծնանուծ ուլէն քուվը։ Օլը գըթաբըլվա մուրը քուվը։*

*Խնդութունը աղ մուրթը տանծըլը իպուց։ Թիբէլը համան վիրունց իվար վօզից։*

*Հուվէվը սըվըլուց, թիբէլը վախութունը փախուվ։ Էրգուքում կօցէն, զծըլը վիրցըցէն։ Իծծօն դիրը խալվաթըլըզ իդծր հուվըվէն։*

*Մէլը միգալին մաշնունյաթում պիժնըվիցուն*

*Դիրը Ծըլը առուվ կնօց։*

*Հուվէվը ունցուծ հալվաննէն մուխիյաթ իղուվ։*

*Աս մասալան լավիլին սունգրա, կիղէն միջը իհալին Լօրճ բարգօն քուվը գուկիր՝ խաչանըցընիլ։*

## 11(55). ԼՈՒՐԹ (ԿԱՊՈՒՏԱՉ) ՊԱՊԻԿԻ ԽԱՉԱԿՆՔԵԼԸ

*Մի օր Լուրթ պապիկը սաղմոսն իր մոտ դրած մտածում էր։*

*Երեկոյան մի գյուղացի է գալիս մոտը, բարև տալիս ու ասում.— Գևո՛րգ աղա, խաչակնքիր (աղոթիր) մեր կորած այծին։*

*Պապիկն առանց նեղանալու սաղմոսը վերցնում է, բաց անում, ասում այդ մարդուն.— Դանակ ունե՞ս։*

*Մարդն ասում է.— Այո՛։*

*— Տո՛ւր տեսնեմ դանակդ։*

*Դանակը վերցնում է, բաց անում, դնում սաղմոսի վրա, սկսում կարդալ։ Մի էջ կարդալուց հետո, փակում է դանակը, տալիս տիրոջը։*

*Ասում է.— Բաց չանես, մինչև այծը չգտնեք։*

*Այս մարդը դանակն առնում է, շնորհակալ լինում ու գնում։*

*Հաջորդ առավոտյան հովվի հետ միասին գնում են։ Շատ, քիչ փնտրելուց հետո, տեսնում են դիմացի ժայռի վրա նստել է մի շնագայլ։ Մի քիչ մոտենում են այդ ժայռի տակ, տեսնում են իրանց փնտրած այծը նստած է, նոր ծնած ուլիկն էլ թավալվում է նրա մոտ։*

*Այդ մարդն ուրախությունից դանակը բաց է անում։ Շնագայլն իսկույն վերևից ցած է վազում։*

*Հովիվը սուլում է, շնագայլը վախից փախչում է։ Երկուսով գնում են ուլիկին վերցնում։ Այծի տերը աչքալուսանք է տալիս հովվին։*

*Մեկը մյուսից շնորհակալությամբ բաժանվում են։*

*Տերն ուլն առնում է, գնում։*

*Հովիվն իր մոտ եղած կենդանիներին ուշադիր է լինում։*

*Այս պատմությունը լսելուց հետո, գյուղի մեջ ժողովուրդը Լուրթ պապիկի մոտ գալիս էր՝ աղոթել տալու։*

II

# ՔՆԱՐԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

## Ա

## ԽԱՂԻԿՆԵՐ

1 (56).

Պանցր ամբՕնք այաղ է,*
Ա̈շկէնը խար-խար բաոգուծ է։

2 (57).

Գա̈րմէր ֆըստան հակուծ է,
Զուց ալ աղվա̈ր վիլլուծ է։

3 (58).

Գա̈քաֆըէն գանցնէն ղաֆլում,
Տիղծը դուքաղին դալում։

4 (59).

Զիթիր ի լուսն լայըը,
Սիրիմ գիչացիա լայըը։

5 (60).

Դիլլէն խաղա̈ղը սիվցուծ է,
Ա̈շկընէն տիմը խիվցուծ է։

6 (61).

Թինտրէն պՕլը նրպՕ է,
Իմ ուզուծը վրպՕ է։

7 (62).

Նռնինա̈քը նօռ չիգօ,
Բըթըն Քա̈սուպ** ճՕր չիգօ։

8 (63).

Քա̈սպէն յանտէն դար Ուրդէն,***
Քաֆիան գըզաբին բիրդէն։

9 (64).

Քա̈սպէն յանտէն Լա̈տակը,****
Ծմիռը գուկու զա̈դագը։

10 (65).

Իս գուպա̈նէր է իղար,
Իգիք իճուվ վիրունց իվար։

1 (56).

Բարձր ամպերը պայծառ են*.
Աղջիկը խոր-խոր քնած է։

2 (57).

Կարմիր հագուստ հագած է,
Ինչ լավ էլ վայելած է։

3 (58).

Կաքավները անցնում են երամով,
Դեղձը քաղում են ճյուղերով։

4 (59).

Ծաղել է լուսնի լույսը,
Սիրեմ աչքերիդ լույսը։

5 (60).

Որմի խաղողն է սեցել,
Աղջկա համար է խեցել։

6 (61).

Թոնրի բակը նեղլիկ է,
Իմ ուզածը որբիկ է։

7 (62).

Նռնենիներին նուռ չկա,
Ողջ Քեսաբը** ջուր չկա։

8 (63).

Քեսաբից դեն կա Ուրդը,***
Քամարը կապում են պորտը։

9 (64).

Քեսաբից դեն Լատակիան է,****
Ջատիկը գալիս է ձմռանը։

10 (65).

Ես գործում էի շղարշ,
Եկավ իջավ վերից վար։

---

* Յուրաքանչյուր տողից հետո կրկնվում է «Հալա, հալա, հալա նիննա է» կրկներգը։

Ծգել է այն կարծիքը, թե մուսալեռցիները բացի տարածված այս պարերգից ուրիշ երգեր գրեթե չեն ունեցել, իսկ մեղեդիները օտարամուտ են։ Սակայն մեր բազմամյա պրպտումները բերել են այն համոզման, որ մարտաշունչ մուսալեռցին ունեցել է նաև քնքուշ ու բանաստեղծական հոգի, նա երգել է և' մանկան օրորոցի մոտ, և' ուրախության ու տխրության պահին, և' կռվի ժամանակ, և' տարագրության ճամփաներին։

Մուսալեռցիների երգերի և' բառերը, և' մեղեդիները նրբահյուս են, նրանցից շատերի մեջ զարմանալիորեն պահպանված են մեր հնագույն երգերի բանաստեղծական ու երգային կառույցը։

** Հայաբնակ գավառ Մուսա լեռան հարավարևմտյան կողմում։

*** Թուրքական բնակավայր Քեսաբի մոտ։

**** Միջերկրական ծովի ափին Նավահանգիստ Սիրիայում։

11 (66).
Ա̈շկէ՛ն, անօնիտ Շուշան,
Ա̈րէ ուրթունք միր քուշան։
12 (67).
Ա̈շկէ՛ն, անծնիտ Վէկտօր,
Ա̈րէ ընում քէ դօկտօր։
13 (68).
Ա̈շկէ՛ն, անծնիտ Շուշան,
Մա̈դնէս ուդում քի նըշան։
14 (69).
Ա̈շկէ՛ն, անծնիտ Մայրում,
Դöր ընծէ թուս մը այրուն։
15 (70).
Ուզուն չարշէն գուլգըդէն,
Էմ սա̈վգա̈լէն բուլկըդէն։
16 (71).
Թարլան գընևօ ծմէրծլը,
Ա̈շկընէն իրիսը գա̈րմըրծլ ը։
17 (72).
Յասա̈ւր անցուվ տա̈ւր կնա̈ց,
Աշքս լիղիտէն մնա̈ց։
18 (73).
Ջառը գառնի հիլիլա̈,
Իչվէն քիշուձ ձիրիրա։
19 (74).
Ա̈շկէ՛ն, տօռը մանդալէ,
Տöն զէմ սիրդը մը՛ վառէ։
20 (75).
Գդրուձ ունո̊ալզտ փöդ իր,
Ալակ ա̈սուձնէտ սöդ իր։
21 (76).
Բա̈րունը գա̈խիցէն ա̈րըրվիցուն,
Սա̈վունը փռիցէն թա̈ըըլվիցուն։
22 (77).
Ա̈շկէ՛ն, անöնիտ Ջա̈գիր,
Ա̈րէ ուրթունք ըըլղուր ագիլ։
23 (78).
Միադունէն* սագիրը,
Գունցր գանցնէն զագիրը։
24 (79).
Թինդըրէն պöյը սալգընիր,
Ա̈րգիք վա̈զինք, ա̈շկընի՛ր։
25 (80).
Գուզէ, յավրո՛ւմ, զադ գուզէ,
Ալայը կիդին. զադ գուզէ։
26 (81).
Էմ չակման բաշըը՞ չունա,
Նշանծöս ո̊աշըըղ չունա։

11 (66).
Աղջի՛, անունդ Շուշան,
Արի գնանք անկյունը տան։
12 (67).
Աղջի՛, անունդ Վիկտոր,
Արի լինեմ քեզ դոկտոր։
13 (68)
Աղջի՛, անունդ Շուշան,
Մատանիս տամ քեզ նշան։
14 (69).
Աղջի՛, անունդ Մարիամ,
Տուր ինձ մի թաս թան։
15 (70).
Երկար շուկայի սափորները,
Իմ սիրածի հյուսկենները։
16 (71).
Դաշտում հասնում է ձմերուկ,
Աղջկա այտերն են կարմրուկ։
17 (72).
Դեսից անցավ, ո՞ւր գնաց,
Աչքս ետևից մնաց։
18 (73).
Ձեռքին առել է հայելի,
Աչքին քաշել է ծարիր։
19 (74).
Աղջի՛, դռնակը փակիր,
Դու իմ սիրտը մի՛ վառիր։
20 (75).
Ջարդած ընկույզ փուչ էր,
Բոլոր ասածներդ սուտ էր։
21 (76).
Պարանը կախեցին օրորվեցին,
Սավանը փռեցին թավալվեցին։
22 (77).
Աղջի՛, անունդ Ծաղիկ,
Արի գնանք բլղուրի։
23 (78).
Միատունի* ճահիճները,
Բարձր կանգնեն սագերը։
24 (79).
Թոնրի շուրջը սալիկներ,
Եկեք վազենք, աղջիկնե՛ր։
25 (80).
Կուզի, հոգի՛ս, այդ կուզի,
Բոլորը գիտեն. այդ կուզի։
26 (81).
Ծակակոշիկս երես չունի,
Նշանածս դրամ չունի։

* Դաշտ Որոնակի ափին։

27 (82).

Ա̈շկէն, տծն զէմ սիրդը մը՛ վառէ,
Ըրգը հուդ մլա̈րաս շա̈ւդ քա̈րէ։

28 (83).

Թ՛թվինց* ղօնը տինօյ է,
Նուրիցէն ծա̈ռը հինօյ է։

29 (84).

Ա̈շկէն, անծնիտ Ցէղիսա,
Իս բըր ընում քի փիսա։

30 (85).

Ա̈շկէն, անծնիտ Սիմա,
Դծր ընծէ թուս մը կինա։

31 (86).

Ծայրը գուրթու շիշէրուն,
Հուօրս գուպիրին կիշիրուն։

32 (87).

Լիռնին գըպիրին գչալամը,
Հուս գըխաղօ ալամը։

33 (88).

Ա̈շկընէն անծնը Սառէյ իր,
Դարգուծ հույը վառէյ յիր։

34 (89).

Սառէյը կնա̈ց մանդըրասէն,
Պարիվ իրիք Ընտրյասէն։

35 (90).

Սիվ ու գա̈րմէր հակուծ ի,
Ջիգյարս պռնգուծ ի։

36 (91).

Գունցր լիռնընէն ըղդըրինէն,
Ծուրը խա̈նդընէն մրդընինէն։

37 (92).

Հա̈կը, գա̈րը, ծիրըրվը,
Գա̈խը բա̈րուն, ա̈րըրվը։

38 (93).

Հօպէնց* տօռը տայր ի,
Բաբգօն աշքը գայր ի։

39 (94).

Հօպէնց շունը բունջըխնէն,
Դինգիրիգանը* ջընջըխնէն։

40 (95).

Քա̈ղքէյն չամփիէ չա̊ղըլ ը,
Տռօն իդէյվ ա̈ղըլ ը։

41 (96).

Միք գուրթուայնքիր ձուվիզիր,
Դիսունք ղ̊աֆլա մը խիզիր։

42 (97).

Գուց զարաղայն ղամանչան,
Ուդում քիզ զէյմ ղաբանչան։

27 (82).

Աղջի՛, դու իմ սիրտը մի՛ վառիր,
Երկու նշով շաքարս շուտ գցիր։

28 (83).

Թ՛թվենց* տունը այն կողմն է,
Նուրիցայի ձեռքը հինայոտ է։

29 (84).

Աղջի՛, անունդ Եղիսա,
Ես քեզի լինելու եմ փեսա։

30 (85).

Աղջի՛, անունդ Սիմա,
Տուր ինձ գինի մի թաս։

31 (86).

Ջուր կտանեն շշերով,
Հարս կբերեն գիշերով։

32 (87).

Սարից բերում են շաղգամը,
Այստեղ պարում է ամբոխը։

33 (88).

Աղջկա անունը Սառա էր,
Տապկած հավը վառյակ էր։

34 (89).

Սառան գնաց կաղինի,
Բարև տարեք Անդրեասին։

35 (90).

Սև ու կարմիր հագել է,
Իմ ջիգյարը վառել է։

36 (91).

Բարձր լեռների սումախենիները,
Ծորը ձորերի մրդենիները։

37 (92).

Հագել, կապել, ծարիրվել է,
Պարանը կախել, օրորվել է։

38 (93).

Հոբենց* դուռը դար է,
Պապիկի աչքը կույր է։

39 (94).

Հոբենց շան ուլունքները,
Դինգիրիգի* սուտ աչքերը։

40 (95).

Քաղաքի ճամփան քարոտ է,
Դռան ետևը փարախ է։

41 (96).

Մենք գնում էինք ծովեզեր,
Տեսանք մի երամակ խոզեր։

42 (97).

Բաց արա օղու սրվակը,
Տամ քեզ իմ ատրճանակը։

** Մականուն է։

43 (98).

Öրը ուրթունք տայ Ձարլա,*
Դիքըր խիլքիս լիս իլվա։

44 (99).

Öրը ուրթուք լանոր Ամաաչ,**
Ուզում քիզ գէմ իսկի խուաչ։

45 (100).

Öրը ուրթունք միր իկէյն,
Սիրիմ քը սիրօն գիչվէյն։

46 (101).

Ուրթունք տայ լիօն սըրթը,
Իշինք միգ մըգու սայրդը։

47 (102).

Öրը ուրթուք տայ միր գöլ,
Իշիք չա՞ րըր ընը միր խօլ։

48 (103).

Քարիցու քօր մը պանցըրցա,
Նշä՛նուծ գä՛շկընիյէ փախցըրցա։

49 (104).

Իլունք կացունք շըխ յուրուէն,
Շալը գä՛րիցունք բիրդէյն։

50 (105).

Իճունք կացունք տայ մինան,
Հինան շաղիցունք սինան։

51 (106).

Աշկէյն, հիծար թիարան,
Öրը ճուղցէյր գէմ յարան։

52 (107).

Դզօ՛, անծնիտ Խորէն,
Ծէնիտ գուկու յախըռէն։

53 (108).

Փըրթըղ̊ալ կիզվի, խաշի,
Ադ դղան տիտէա չիշիր։

54 (109).

Շä՛մպը ջամփօյն մինարան,
Öրը ճուղցէյր գէյմ յարան։

55 (110).

Դզօ՛, անծնիտ Թումաս,
Ձվä՛ կիրուր դիմ դուլմաս։

56 (111).

Öշկէն, անծնիտ Սիմա,
Öրէ ուրթունք սինէմա։

57 (112).

Öշկէն, անծնիտ Արշալույս,
Öրէ իլվինք նըքը լայս։

* Քարուսին գյուղին մերձակա ագարակ։
** Թարգմաս Յողուն-Օլուկ գյուղում։

43 (98).

Արի գնանք դեպի Ձնլիկ*,
Մինչև խելքդ առնեմ քեզնից։

44 (99).

Արի գնանք դեպի Ամուաչ**,
Տամ քեզ իմ ոսկե խաչը։

45 (100).

Արի գնանք մեր այգին,
Սիրեմ քո սիրուն աչքին։

46 (101).

Գնանք դեպի սարի լանջը,
Տեսնենք մեկ մեկու սիրտը։

47 (102).

Արի գնանք դեպի մեր լճակը,
Տեսնենք ինչ է մեր վիճակը։

48 (103).

Թեքվեցի մի քար վերցրեցի,
Նշանած աղջկան փախցրեցի։

49 (104).

Ելանք գնացինք շեյխի յուրդը,
Պարուից կապեցինք շալը։

50 (105).

Իջանք գնացինք նավահանգիստ,
Հինան շաղեցինք սինու միջին։

51 (106).

Աղջի՛, նստիր ինքնաթիռ,
Դու իմ վերքը դարմանիր։

52 (107).

Տղա՛, անունդ Խորեն,
Ձայնդ գալիս է ախոռեն։

53 (108).

Նարինջը կեղևում է, խաշում,
Այդ տղան քեզ չի նայում։

54 (109).

Շամբի ճամփի մինարեն,
Արի բուժիր իմ յարեն։

55 (110).

Տղա՛, անունդ Թոմաս,
Ինչու՞ կերար իմ տոլման։

56 (111).

Աղջի՛, անունդ Սիմա,
Արի գնանք սինեմա։

57 (112).

Աղջի՛, անունդ Արշալույս,
Արի ման գանք մինչև լույս։

58 (113).
Ա̈շկ՚յն, անօ̈նիս Արաքսի,
Ա̈րէ նստինք միք թաքսի։
59 (114).
Իս գուպ̈ինէր ի հ̈որը,
Խիսղից Խաժմանի փ̈որը։
60 (115).
Ա̈շկ՚յն, անանիդ Շաքէ,
Ա̈րէ ընինք անպաժէ։
61 (116).
Ձ̈օրը ինդու առվընէն,
Սէյլը դարուվ բառվընէն։
62 (117).
Մաքարօնը բիլակ-բիլակ,
Ա̈շկէնը արած է ֆիլակ։
63 (118).
Մաքարօնը բիլակ-բիլակ,
Ա̈շկէնը հակած ի շապղա։
64 (119).
Մաքարօնը բիլակ-բիլակ,
Դղէկը գարած ի կրավատ։
65 (120).
Դուղը խար-խար բառգած ի,
Աշկէյնը գիմիշ-գիմիշ փախած ի։
66 (121).
Վիրի կիղէն իլած ի,
Բըր նիշ̈անվէյմ ըսած ի։
67 (122).
Քիղիցէյն պէյը կացած ի,
Բըր նիշանվէյմ ըսած ի։
68 (123).
Քարած ի դըքուրսան նստած ի,
Վըղը վիզուց արած ի։
69 (124).
Կաղար, աշկէյն, ածն քալաշ,
Մանվէլ դղան քիղ բալաշ։
70 (125).
Տաուռը պացէյն շիշիրով,
Ջ̈աշկէյն դարէյն կիշիրով։
71 (126).
Մավի ֆիշօն քա̈րօ̈ծ ի,
Ջուց ալ ադվ̈ըր վիլօ̈ծ ի։
72 (127).
Կա̈ցուք հասուք փըռժղիէ,
Սայնքը դիսուք գհըրըշղիէ։

58 (113).
Աղջի՛, անունդ Արաքսի,
Արի նստենք մենք տաքսի։
59 (114).
Ես փորում էի հորը,
Ցավից Խաթմանի փորը։
60 (115).
Աղջի՛, անունդ Շաքե,
Արի թեանցակ լինենք։
61 (116).
Ջուրը հոսեց մեջ առվին,
Հեղեղը տարավ պառավին։
62 (117).
Մակարոնը թելիկ-թելիկ,
Աղջիկը դրել է ցանց գլխին։
63 (118).
Մակարոնը թելիկ-թելիկ,
Աղջիկը հագել է գլխարկ։
64 (119).
Մակարոնը թելիկ-թելիկ,
Տղան կապել է փողկապ։
65 (120).
Հյուրը խոր-խոր քնել է,
Աղջիկը կամաց-կամաց փախել է։
66 (121).
Վերին գյուղից եկել է,
Պիտ նշանվեմ ասել է։
67 (122).
Ժամի բակը գնացել է,
Պիտ պսակվեմ ասել է։
68 (123).
Աթոռը դրել նստել է,
Ոտքը ոտքին գցել է։
69 (124).
Կատար, աղջիկ, դու փերի,
Մանվել տղան քեզ ձրի։
70 (125).
Դուռը բացին շշերով,
Աղջկան տարան գիշերով։
71 (126).
Կապույտ վզնոցը գցել է,
Ինչ էլ սիրուն վայելել է։
72 (127).
Գնացինք մինչև փանջենին,
Կարծես տեսանք հրեշտակին։

73 (128).

Զիթիր ի լուսն լայսը,
Թազօ ի արդէս պայսը,
Մու լօ, հիկկէգլիս, մու լօ,
Սիրիմ գիչուցիտ լայսը։

74 (129).

Ա̈ռը՛, հէյ, ախպար, ա̈ռը՛,
Զֆչէն գունա մա̈սուռը,
Զայրը գունայր ձախիցիր,
Ա̈շկընէյն լիրվան խարչիցիր։

75 (130).

Դարընչալէն միշքը գախուձ,
Ա̈շկընէն չալըմ ձախուձ,
Ցա̈սա̈ր անցուվ, ուա̈՞ր կնա̈ց,
Ա̈շքիս լիդիտաէն մնա̈ց։

76 (131).

Աշկէյն, խանդօյը անցօ̈ր գէս,
Աղվօ̈ր պա̈նիր անցօ̈ր գէս,
Գուդօմ քէ անօ̈շ բա̈կ մը,
Կրգիլ-բաոգիլ անցօ̈ր գէս։

77 (132).

Ա̈շկէյն, չվա՞ հիավըցուր,
Ցէմ դա̈ֆտուրը կըրվիցար,
Ցա̈սա̈ր անցուվ, ուա̈՞ր կնա̈ց,
Ա̈շքիս լիդիտաէն մնա̈ց։

78 (133).

Վէգը տրուձ իր հընիր,
Ջէս թը դուզէր՝ չա՞ գընիր,
Ջէս թը գուզէր, չա՜ գընիր,
Բըսբըսըն խսկա գընիր։

79 (134).

Իս դուրթէր ի տայ սուր վար,
Իգիք իճուվ վիրունց իվար,
Թամըզ մըդա̈ք տրագէ,
Ընծի համուր սաա գէ։

80 (135).

Շա̈դ ուզիցա զը բէչարան,
Զըդվէն զը, չա՞ իր չարան,
Քնթիլ փա̈խիլն իր չարան,
Վրքին ըննիլն իր դաղվան։

81 (136).

Ծա̈ղցուց ջամպէն չա̊ըլ իր,
Տռօն յառչիվը ա̈ղըլ իր,
Քա̈րիցա քար մը, պանցըրցա,
Նշանուձ ա̈շկէյնը փա̈խցըցա։

82 (137).

Դղան գայնուձ իր քուփրէն,
Միշքը գախուձ իր դարընչէն,
Ցա̈սա̈ր անցուվ, յօ̈՞ կնա̈ց,
Աշքիս լիդիտաէն մնա̈ց։

73 (128).

Ծաթել է լուսնի լույսը,
Թարմ է արտիս բույսը,
Մի լաց, հոգյակս, մի լաց,
Սիրեմ աչքերիդ լույսը։

74 (129).

Առ, եղբայր, առ ինձ,
Մաճկալն ունի խթանիչ,
Ինչ ունեիր ծախեցիր,
Աղջկա վրա ծախսեցիր։

75 (130).

Ատրճանակը գոտուց կախել է,
Աղջիկներին պարծեցել է,
Դեսից անցավ, ո՞ւր գնաց,
Աչքս ետևից մնաց։

76 (131).

Աղջի՛, ձորակն ինձ անցկացրու,
Լավ բաներ ինձ սովորեցրու,
Կտամ քեզ անուշ մի պագ,
Գրկել-պաչել սովորեցրու։

77 (132).

Աղջի՛, ինչո՞ւ հեռացար,
Իմ մատյանում գրվեցար,
Դեսից անցավ, ո՞ւր գնաց,
Աչքս ետևից մնաց։

78 (133).

Վզին դրել էր հուլունքներ,
Թե ինձ ուզեր՝ ի՞նչ կլիներ,
Թե ինձ ուզեր, ի՜նչ կլիներ,
Ոտից գլուխ ոսկի կլիներ։

79 (134).

Ես գնում էի դեպի վար,
Ընկավ իջավ վերից վար,
Մի լավ մտիկ արեցի,
Ինձ համար վերցրեցի։

80 (135).

Շատ ուզեցի այդ անճարին,
Պատճառն ի՞նչ էր, որ չտվին,
Առնել փախչելն էր ճարը,
Տակից դուրս գալն էր հարցը։

81 (136).

Ջաղցի ճամփան քարոտ էր,
Դռան առաջ փարախ էր,
Գցեցի մի քար, վեր կացա,
Նշանված աղջկան առա փախա։

82 (137).

Տղան կանգնած էր կամրջին,
Ատրճանակը կապած մեջքին,
Այստեղից անցավ, ո՞ւր գնաց,
Աչքս ետևից մնաց։

83 (138).

Շարճայիր ղարբա տարծուվ,
Ա̈շկընէն չալըմ ձախուվ,
Ուզիցա զը, էնք չուզից,
Դարրըվիլու վախան անցավ։

84 (139).

Իս գուկէր ի յա̈ձա̈ցը,
Ըրգը Նօռ գար յէր ձուցը,
Ուզիցա գէ, չուգօր գէ,
Պուռմ քշկից գրձա̈ցը։

85 (140).

Դամը գընէ, գըթընդօ,
Մաքդուր զառնը, գըխնդօ,
Ա̈շկէյն ուզուղէն դվիք,
Սադգա ուրթօ, գըխնդօ։

83 (138).

Արևելյան քամին հակառակ դարձավ
Աղջիկներին ձև ծախեց,
Ուզեցի նրան, ինքը չուզեց,
Պսակվելու ժամանակն անցավ։

84 (139).

Ես գալիս էի ածուներից,
Երկու նուռ կար իր ծոցը,
Ուզեցի դրանք չտվեց ինձ,
Բռով խփեց զույգ կրծքին։

85 (140).

Տանիքը կելնի, կժնդա,
Նամակ կառնի, կխնդա,
Աղջիկն ուզողին տվեք,
Մեռնի գնա, կխնդա։

## Բ

## ԾԻՍԱԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ

### ԽՆԱՄԷՆ ԻՐԳ

1 (141).

Հէ՜յ, Թըթըշ* փխօ քալաշ,
Ձո̈ւց ուզօնք զԱ̈զսափիթը քէ բալաշ։

2 (142).

Հէ՜յ, Ծուռիկ* ախպըրգէյն,
Դօ̈ր ըզհէնգէյն բզդայը,
Հէնգէյն բզդայը՝ Սառէյը,
Դա̈բգած հուվը՝ վառէյը,
Ծուռէյը ինգուվ գըդրիցուվ,
Անօ̈շ հուդը ֆիթիցուվ։

3 (143).

Հէ՜յ, խնամա́, խնամա́,
Սբիդո̈ւզ գձձաք, խնամա́,
Ալայը դվէն, տօ̈ն չըդվիր,
Լիզօտ թըղ գըդրա, խնամա́։

4 (144).

Հէ՜յ, Ալլակ* խնամա,
Ցուվան գըցանինք քամա,
Ալլակէնց հուրսէն փիշէն,
Մանասը գըխածըդի զգիշէն։

5 (145).

Իսուր գիրա̈գէյը,
Բաբան խուշ-խուշէյը,
Նի́դը, ախպա̈ր, նի́դը,
Հարսօն ղումաշը գդըրը́։

6 (146).

Խնամունք իգէն կիշիրում,
Տօ̈ռը պացէյն շշիրում,
Աբօ̈ր իփին, իղ չիկօ,
Փխսան իգիգ, դիղ չիկօ։

### ԽՆԱՄՈՒ ԵՐԳ

1 (141).

Հէյ, Թըթըշ* փեսա պատվական,
Եղիսաբեթը ինչպե՞ս քեզ ձրի տանք։

2 (142).

Հե՜յ, Կարճլիկ* հորեղբոր կին,
Տուր հնգից փոքրիկը,
Հնգից փոքրը՝ Սառան է,
Տապկած հավը՝ վառեկ է,
Սրվակն ընկավ կոտրվեց,
Անուշ հոտը տարածվեց։

3 (143).

Հե՜յ, խնամի́, խնամի́,
Ծերմակ մազով, խնամի́,
Բոլորը տվին, դու չտվիր,
Լեզուդ կտրվի, խնամի́։

4 (144).

Հե́յ, Ալլակ* խնամի,
Դաշտը ցանում ենք կարտոֆիլ,
Ալլակենց հարսի փոշին,
Մանասը կրծում է իր կաշին։

5 (145).

Այսօր կիրակի է,
Պապին ուրախ-զվարթ է,
Կրակի́ր, եղբա՜յր, կրակի́ր,
Հարսի օժիտը կտրի́ր։

6 (146).

Խնամիք եկան գիշերով,
Դուռը բացեցին շշերով,
Փլավն եփվեց, յուղ չկա,
Փեսան եկավ, տեղ չկա։

* Մականուն է։

## ՀԻՆԱ ԱՎԱԶԸ

7 (147).

*Ուրբուլթ գուկը թըմպըգընայն,*
*Շապըլթ ուրն ալ՝ գուռնինային,*
*Հինվա՛, ա՛շկա՛յնս, հինվա՛,*
*Դըքըր գուկը քէ ուզիղ գղան։*

8 (148).

*Իսկը թասէն միչը*
*Հինօն գուշաղինք,*
*Արգուլթը սանդըրում*
*Գձձաքը գուսանդըրինք։*

## ՀԱՐՍԷՆ ՊԱ՛ՐԸՄՆԱ՛ՔԸ

9 (149).

*Էմ լամա՛, էմ հիկկէս լամա՛,*
*Պա՛րը մնուս, շին գինուս, լամա՛,*
*Ցիրէյը պա՛նիտ մնա՛ցիր, լամա՛,*
*Կիշիրը քնիտ մնա՛ցիր, լամա՛,*
*Ա̈նօշ քօնիտ գդրիցիր, լամա՛,*
*Քէ ա՛շկընէն խամթըը խօշ իրիր, լամա՛։*
*Էմ լադա՛, էմ հիկկէս լադա՛,*
*Պա՛րը մնուս, շին գինուս, լադա՛,*
*Էրգար ջամփուք գարճ գդրիցիր, լադա՛,*
*Կիշիրը, ցիրէյը միգ իրիր,*
*Քէ ա՛շկընէն խամթըը խօշ իրիր, լադա՛։*
*Էմ ախպա՛ր, էմ հիկկէս ախպա՛ր,*
*Պա՛րը մնուս, շին գինուս, ախպա՛ր,*
*Շա՛պութ մը լառանճ Սուլթան բազուրը իճուր,*
*Քէ սէվգլուլի քուրը խամթըը խօշ ինիլը համար։*
*Էմ քուրօ՛գ, էմ հիկկէս քուրօ՛գ,*
*Պա՛րը մնուս, շին գինաս, քուրօ՛գ,*
*Ջա՛յկըր ինք, թաք մնացիր, քուրօ՛գ,*
*Աս ընծի չըր վիլլիր, էմ քուրվըղէն գուվիլլիր*

## ՀՈՒՐՍ ԱՌՆԻԼԸ ԻՐՔ

10 (150).

*Աշխար ա՛շկէյնը սագված, նսդած է,*
*Գա՛րմէր ծէն այարուձ, գաբուձ նռնինէն,*
*Մա՛լուր, հա՛յ մար, մա՛լար,*
*Առէն, դա՛րէն գէ,*
*Շաքրում, միղրում մինձուձ ա՛շկէյնը,*
*Առէն, դա՛րէն գէ։*

11 (151).

*Ա՛խ, Մայրո՛ւմ, հիկկա՛ Մայրում,*
*Դունյա գյուզէլի, Մայրո՛ւմ,*
*Հուրս իղուր, ծէն նսդուր,*
*Ծէռվէտ հինալը, Մայրո՛ւմ։*

## ՀԻՆԱՅԻ ԵՐԳ

7 (147).

*Ուրբաթ կգա թմբուկը,*
*Շաբաթ օրն էլ՝ զուռնան,*
*Հինայվի՛ր, աղջի՛կս, հինայվի՛ր,*
*Մինչև կգա քեզ ուզող տղան։*

8 (148).

*Ոսկի թասի մեջ*
*Հինան ենք շաղում,*
*Արծաթե սանրով*
*Ծամերն ենք սանրում։*

## ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵՇՏԸ

9 (149).

*Իմ մայրի՛կ, իմ հոգիս մայրի՛կ,*
*Բարի մնաս, շեն կենաս, մայրի՛կ,*
*Ցերեկը գործից մնացիր, մայրի՛կ,*
*Գիշերը քնից մնացիր, մայրի՛կ,*
*Անուշ քունդ կտրեցիր, մայրի՛կ,*
*Քո աղջկա սիրտը շահեցիր, մայրի՛կ։*
*Իմ հայրի՛կ, իմ հոգիս հայրի՛կ,*
*Բարի մնաս, շեն կենաս, հայրի՛կ,*
*Երկար ճամփադ կարճ կտրեցիր, հայրի՛կ,*
*Գիշերն ու ցերեկը մեկ արեցիր,*
*Քո աղջկա սիրտը շահեցիր, հայրի՛կ։*
*Իմ եղբա՛յր, իմ հոգիս եղբա՛յր,*
*Բարի մնաս, շեն կենաս, եղբա՛յր,*
*Մի շաբաթ առաջ Մեծ շուկան իջար,*
*Քո սիրելի քրոջ սիրտը շահելու համար։*
*Իմ քույրի՛կ, իմ հոգիս քույրի՛կ,*
*Բարի մնաս, շեն կենաս, քույրի՛կ,*
*Զույգ էինք, կենտ մնացիր, քույրի՛կ,*
*Սա ինձ վայել չէր, իմ քրոջն էր վայել։*

## ՀԱՐՍԻՆ ՏԱՆԵԼՈՒ ԵՐԳ

10 (150).

*Շեկ աղջիկը զուգվել, նստել է.*
*Կարմիր ձին թամբած, կապված նռնենուց,*
*Մի՛ լաց, մա՛յրիկ, մի՛ լաց,*
*Առան, տարան նրան,*
*Շաքարով, մեղրով մեծացրած աղջկադ,*
*Առան, տարան նրան։*

11 (151).

*Ա՛խ, Մարիա՛մ, հոգիս Մարիամ,*
*Աշխարհի սիրուն, Մարիա՛մ,*
*Հարս եղար, ձի նստեցիր,*
*Ձեռներդ հինայոտ, Մարիա՛մ։*

## ՄԷՐԱՂԻԸ ԱՎԱՋԸ

*12 (152).*

Էյմ բալան խըկը բալա իր,
Ջա՜ն բալա, ջա՜ն բալա,
Է՜, է, էյմ բալան,
Մէռնէմ Կա̈վա̈րկիս,
Քուխցր բալայիս,
Գուզինչիմ Կա̈վա̈՜րկիս,
Ծան չուդաս, Կա̈վա̈՜րկ,
Օ՜ֆ, օ՜ֆ, ջիգյարըս, օ՜ֆ,
Դա̈րդիրիս մինձն իս, օ՜ֆ,
Գիշիր-ցիրիկ մայքիս գուս,
Էյմ բալաս, քուխցր բալաս,
Ա՜խ, ջիգյարըըմ, ա̈խ Կա̈վա̈րկս,
Յօ՞ րըր զարգիմ գկլաախիս,
Ջիգյարըմ, ու՞ր ուրթամ,
Դարդիրիս օ՞մ ուլամ,
Մէյմը չունէյմ ղ̊աֆադանդա,
Մէյմ չըմանէյը յէմ գըղան,
Չքու մաար յօ՞ թուղիր, կա̈ցիր,
Քը դէղ գքու մաար թըղ թաղային,
Քու մար յաս գրիէդ թըղ չըվառվիր,
Ըրք դիպլօմը դիր իրա գքիզ,
Տօ̈ն չարա չգարցար ղ̊ընիր քըլ,
Ա՜խ ու՞ր. ուրթամ, ու՞ր ուկամ,
Քուշը քօար մը գը սրդայս,
Արցօնք գուղըցնիս յիչուցիս, Կա̈վա̈՜րկ,
Կըզմանէտ իրվան գուզինչիմ Կա̈վա̈՜րկ,
Ծան չուտդաս, Կա̈վա̈՜րկ չըմ խուավուձիս,
Շուդ դիղանք կա̈ցիր իւլիցուր,
Հայաստանը խուղէյն հա̈մչիցուր։

## ՍԳՈ ԵՐԳ

*12 (152).*

Իմ բալան ոսկի բալա էր,
Ջա՜ն բալա, ջա՜ն բալա,
Է՜, է, իմ բալան,
Մեռնեմ Գեորգիս,
Քաղցր բալայիս,
Կանչում եմ Գեո՜րգիս,
Ձայն չես տալիս, Գեո՜րգ,
Օ՜ֆ, օ՜ֆ, հոգիս, օ՜ֆ,
Վշտերիս մեծն ես, օ՜ֆ,
Գիշեր-ցերեկ մաքիս ես,
Իմ բալաս, քաղցր բալաս,
Ա՜խ, հոգիս, ա՜խ Գեորգս,
Ո՞րտեղ զարկեմ գլուխս,
Հոգի՜ս, ուր գնամ,
Վիշտս ում պատմեմ,
Մեկը չունեմ սրտակից,
Մեկը նման չէ իմ տղային,
Քո մորը որտեղ թողեցիր, գնացիր,
Քո տեղ քո մորը թող թաղեին,
Քո մայրն այս կրակով չվառվեր,
Երեք դիպլոմի տեր դարձրի քեզ,
Դու քեզ ճար չկարողացար գտնել,
Ա՜խ, ուր գնամ, ո՞ւր գամ,
Մի մեծ քար կա սրտիս վրա,
Արցունք եմ թափում աչքերիցս, Գեո՜րգ.
Գերեզմանիդ վրա կանչում եմ, Գեո՜րգ,
Ձայն չես տալիս, Գեո՜րգ, ինչո՞ւ խռովել ե
Շատ տեղեր դու շրջեցիր,
Հայաստանի հողում հանգչեցիր։

## Օ̈ՐԻՍՔԸ ԻՐԳ

*13 (153).*

Նանի՜, լավրում նանի՜...
Խօրօ խանդգէյն մըդինայն,
Գըյուլ-բախչայըն վարթինայն։
Նանի՜ լավրում, նանի՜...
Մամօյը կնից ընձըագէյն,
Դադայը կպիրի մինձ խսկէյն։
Նանի՜, լավրում, նանի՜...
Միր բաղդա̈գէյն դփխինէյն,
Դայփխը հանը գչղէյն։
Նանի՜, լավրում, նանի՜...
Բարզօն ցանուձ խնծրինէյն,
Խնծիր գուզը էյմ ծակէյն։
Նանի՜, լավրում, նանի՜...
Վիրը բաղչայն մշմուշէյն,
Մինձէյր, քաղը գմշմուշնէյն։

## ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

*13 (153).*

Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Խոր ձորերի մրտենին,
Գյուլ-բախչայի վարդենին։
Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Մայրը գնաց սնձակի,
Հայրը բերեց մեծ ոսկի։
Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Պատի տակի տփխենին,
Կտրիր հանիր ճյուղերից։
Նանի՜, բալա՛ս նանի՜...
Պապի տնկած խնձորենին,
Միրգ է տալիս իմ ձագին։
Նանի՜, բալա՛ս, նանի՜...
Վերի այգու ծիրանին,
Մեծանա, քաղի իմ որդին։

14 (154).

Նանիկ կընիմ իմ բալին,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ,
Նանիկ կասիմ իմ փաշին,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ։

14 (154).

Նանիկ կանեմ բալիկիս,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ.
Նանիկ կասեմ փաշայիս,
Նանի՜կ, նանի՜կ, նանի՜կ։

15 (155).

Ձէյմ քուխցր բալան գա̈րուրիմ,
Ձէյմ քալաշ բալան գըրաոգըցնիմ,
Սուլթանը վարթում գըձաձգիմ,
Ա̈նէյշ իրքիրում գըմինձցընիմ։

15 (155).

Իմ քաղցր բալայիս կօրորեմ,
Իմ սիրուն բալայիս կքնացնեմ,
Կարմիր վարդով կծածկեմ,
Անուշ երգով կմեծացնեմ։

16 (156).

Նա̈նէ, նազլը դղաս, նա̈նէ,
Նա̈նէ գա̈սիմ քէ,
Գըբաոգըցընիմ քէ անօշ քօն,
Համօ դադալը գուկօ
Գըպիրէ քէ դայիմ թօր։

16 (156).

Նանի՛, քնքուշ տղա, նանի՛,
Նանի՛, կասեմ քեզ,
Կքնացնեմ քեզ անուշ քնով,
Շուտով հայրիկը կգա,
Կբերի քեզ ամուր թուր։

## ՁՈՒՁՕԽ ԽԱՂՑԸՆԻԼԸ ԻՐՔ

17 (157).

Ջամբըր-չումբըր Կարաչէն,
Խուրը խանդըղէն մրդինէն,
Պունցր լիունէն ա̈ղդըրինէն,
Մամայը կնա̈ց սընձըսկէյն,
Բաբան իպիր մինձ իսկէյն։

## ՄԱՆԿԱԽԱՂԱՑԻ ԵՐԳ

17 (157).

Ջամբըր-չումբըր Կարաչէն,
Խոր ձորերի մրգենին,
Բարձր լեռների սառնախենին,
Մայրը գնաց ընձակի,
Հայրը բերեց մեծ ոսկի։

## ՃՈՒՏԱՄԱՆԵԼՈՒԿ

18 (158).

Ծօյը՝ ձուվը,
Ձուփը՝ դրադէն,
Ղ̊ափաղիցէն խա̈փը,
Թըղ չանի գըա̈ղը,
Դըքըր ակօ վա̈ղը,
Պա̈րը ուկու ադա̈ղը։

18 (158).

Ձուկը՝ ծովը,
Տապակը՝ կրակին,
Փակեցին խուփը,
Թող չանի պաղը,
Մինչև գա վաղը,
Բարով գա ատոդը։

19 (159).

Հադայութ, հադայութ հէյկ մը գ̊դա,
Կացա բախչան վէյկ մը գ̊դա,
Վէյկ ձա̈գիցա, իշիցա,
Թըմբլիկ-մըմբլիկ հօւրս մը գ̊դա,
Հօւրս դարա փիսէն դվա,
Փիսան ընծը գըըզ իդէյր,
Գըէյզ դարա փիդէյն դվա,
Փուադ ընծը մա̈խէր իդէյր,
Մա̈խայը դարա թարլայն դվա,
Թարլան ընծը ցիրին իդէյր,
Ցիրէյն դարա հա̈վէօն դվա,
Հէւվ ընծը հավգայթ իդէյր,
Հավգայթ դարա չարշէյն դվա,
Չարշայն ընծը փարա իդէյր,
Փարան դարա բա̈բզօն դվա,
Բա̈բա ընծը թօզ մը իդէյր։

19 (159).

Հեքիաթ, հեքիաթ մի հարս գտա,
Գնացի պարտեզ, մի վեգ գտա,
Վեգը ծակեցի ու անցա,
Թմբլիկ-մըմլիկ մի հարս գտա,
Հարսին տարա փեսին տվի,
Փեսան ինձ կրակ տվեց,
Կրակը տարա փայտին տվի,
Փայտն ինձ մոխիր տվեց.
Մոխիրը տարա արտին տվի,
Արտն ինձ ցորեն տվեց,
Ցորենը տարա հավին տվի,
Հավն ինձ հավկիթ տվեց,
Հավկիթը տարա շուկան տվի.
Շուկան ինձ փող տվեց,
Փողը տարա հորս տվի,
Հայրս ինձ գնդակ տվեց։

## ԳԱ̈ՎԱՋՈՒ ԻՐՔ*

*20 (160).*

Հէ՜յ, հէ՜յ, Բըլլուն Վանիս,
Թինէյր բա̈դա̈ղ Մալը̊ըճ Օհանիս,
Ջակիր լիդա̈ղ Ախր Վանիս,
Գուրյաշ շըճա̈ղ Քըդից Վանիս,
Թմպա̈ց զարգա̈ղ Ն̊ըրըըս Օհանիս,
Ցանցօր վա̈սկա̈ղ Ղավէս Օհանիս,
Իմանա փիգրա̈ղ Կա̈պպուշ Օհանիս,
Տօն բադա̈ղ Ցաուլըկ Վանիս,
Քուշինա գիփող Քա̈չիս Օհանիս,
Ղ̊ուզաք արձա̈ղ Բաշըկ Փա̈նիս,
Տիղծ բա̈դրուսա̈ղ Ախօ Գիրագիս,
Ակրաք քիշա̈ղ Սըթիտ Վանիս,
Ջաս իրքն ավշա̈ղ Ախօ Գիրագիս։

## ԿԱՏԱԿԵՐԳ*

*20 (160).*

Հե՜յ, հե՜յ, Բըլուն Վանես,
Թոնիր շարող Մալըըչ Հովհաննես,
Ծիտ որսացող Ախր Վանես,
Կրիա շրջող Քըդից Վանես,
Թմբուկ զարկող Ներըս Օհաննես,
Նաւր վարող Ղավես Օհաննես,
Կոշիկ կարկատող Կապպուշ Օհաննես,
Պատ ծեփող Ցաւըկ Վանես,
Քարեր կոփող Քաչից Օհաննես,
Գառ արածող Բաշըկ Փանես,
Դեղձ պատվաստող Ախո Կիրակոս,
Ատամ քաշող Սրտոտ Վանես,
Այս երգն երգող Ախո Կիրակոս։

# Գ

# ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ, ԶԻՆՎՈՐԻ ՈՒ ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

## ՀԱԶՈՒՐ ԷՆԸ ՀԱՐԷՐ ԴԸՍՆԸՀԷՆԿ ԴԱՐԷՆ

*1 (161).*

Էնվէր վէ Թալաթ տիւրգը փաշինէն .
Սաբաբ իգուն մըհաճըրըլըկէն,
Բըթըն մաֆ իրէն էրմանը միլլաթէն,
Լիգվըդէն թըղ չիրնիր՝ չվա՞ զաղ ա̈ցէն։
Հազար էնը հարէր դըսնըհէնկ դարէն,
Իդավ փրթըվիլը Կիլիկը էրմանէն,
Ջա՞ միդք գունիր էն մախսըմ չուճըխնէն,
Ջառվընէն թըղ գըդրիր կըլըհնճ կիխադնէն։
Ջո՞ւց մինք բըրմառնունք էրմանը չուջխնէն,
Ճօրը քարվիցուն հիդվէն քուրվըդէն,
Դիր գայնաղ չիդավ էրմանը միլլաթէն,
Ջո՞ւց մինք բըր մառնունք Կիլիկը բալէն։
Ֆէրմանէն հասավ միր լուխը կէղէն՝
Մըհաճըր բըր ըննուն բըթըն կէղանդէն,
Ջա՞ իր միր միդքը՝ միր Ջաբալ Մուսէն,
Ջո՞ւց մինք բըր մառնունք իհալէն հալէն,
Խուսքը լափիցուվ Յաղուբինց Եսայէն.
«Լնը թըղ ըննին,— ա̈սուց կիդանդէն,—
Վէզ չըըըր ձոխնք մինք միր դուշմանէն,
Նիդինք, նիդըդվէնք, միանէնք միր խուղէն»։

*
* *

*2 (162).*

Ցութը ուր բայմանում ֆէրման կրվիցուվ,
Մէճլըսէն խաբարնէն կիղանդէն հասուվ,
Մուսա լիառն իհալին փարթիզան իղուվ,
Դուշմուն խյուքմըթէն կարշա գանիցուվ։

## ՀԱԶԱՐ ԻՆՆ ՀԱՐՅՈՒՐ ՏԱՍՆՀԻՆԳ ՏԱՐԻՆ

*1 (161).*

Էնվեր և Թալիաթ թուրք փաշաները
Պատճառ դարձան գաղթականության,
Ջնջեցին համայն հայ ժողովրդին,
Լեզուները չորանար՝ ինչո՞ւ ասացին։
Հազար ինն հարյուր տասնհինգ թվին,
Եղավ կոտորածը Կիլիկիո հայության,
Ի՞նչ միտք ունեին մատաղ մանուկները,
Կտրվեր ձեռքը սուր խփողների։
Ինչպե՞ս մոռանանք հայ մանուկներին,
Ջուրը նետվեցին քույրերով միասին,
Տերություն անող չեղավ հայ ժողովրդին,
Ինչպե՞ս մոռանանք Կիլիկիո ողբերգությու
Հրամանը հասավ մեր յոթ գյուղերը՝
Գաղթական պիտի լինեն բոլոր գյուղացիները,
Ո՞րն էր մեր միտքը՝ մեր Մուսա լեռան,
Ինչպե՞ս մոռանանք վիճակը հայության,
Եսայի Յաղուբյանի խոսքերը հնչեցին.
«Թող լեռ բարձրանան,— ասաց բոլորին,—
Թշնամու առաջ մենք վիզ չենք ծռի,
Զարկենք, զարկվենք, մեր հողում մեռնենք»։

*
* *

*2 (162).*

Յոթ օր պայմանով հրաման գրեցին,
Ժողովի որոշումը հասավ մեր գյուղերին,
Մուսա լեռան ժողովուրդը պարտիզան դարձա
Թշնամու կառավարության դեմ ելավ, կանգնա

* Հորինված է համագյուղացիների մականունների շուրջը։

Ջագուդ բինիցունք միրում, քուրվըդում,
Քառսօն ուր ձիձվիցունք սրդում հավադում,
Հագրնում ըսկյըրնէն նյըշըննիա իրէն,
Ինալէն մըլգըդում խանդյըգ չափիցէն։
Մուսա լիռը իղուվ յուխը կիղէն խալա,
Դուշմուն խյոքըլմաթէն իթՕղ մինձ յարա,
Թուփիրում, մավզէրնում նյըշըննիա իրէն,
Հարըրնում սադՕլը թուղէն վէ կյացէն,
Ֆրանսըզը փափօրնէն թէսատյոֆ իգէն,
Տմլակյան, Դումանյան, Արաչյան կյացէն,
Պօղօս-Նուպար փաշէն թէլգըրաֆ դըվէն,
Հէնկ հազուր ինալէն նյուր Օմըր պիրէն։

Ճակատ պահեցինք մայրով, քույրերով,
Քառասուն օր կռվեցինք սրտով, հավատով,
Հարձակվեցին զինվորներ հազարավոր,
Լցվեցին ձորեր ժողովրդի արկերով։
Մուսա լեռը դարձավ յոթ գյուղերի բերդ,
Թշնամի կառավարության մեծ ցավ պատճառեց,
Թնդանոթով, մաուզերով վրա տվեցին,
Հարյուրով դիակներ թողին, գնացին,
Ֆրանսիական նավերը պատահմամբ եկան,
Տմլակյան, Դումանյան, Արաչյան գնացին,
Պողոս-Նուպար փաշային հեռագիր տվեցին,
Հինգ հազար ժողովրդին նոր կյանք բերեցին։

## ԳԴՐԷՋ ՎԱՐԹՈՒՀԷՆ*

3 (163).

Բարունը միշքը գաբուձ իր,
Թըվյոնգը յուսէն շյըլգուձ իր,
Ծիգօրը ծառը պընուձ իր,
Մինձ-մինձ քարիր գուշրճիր։
Դուշմանը ճամպունք գուփյըգիր,
Սրդէն միչը գուըսիր՝
Մըլլէյս բուշ թըղ չասնիր,
Դուշմանէս զօրսքը թըղ ձյըգիր։
ԳՕժը յուսէն դըրուձ իր,
Դյուշմանը մըլգին չըր վախիր,
Խըմիլը ճՕր գուդանիր,
Գէնճիրէն յարդըմ գուինիր։
Սարպին անցնյող Վարթունէն,
Կուդալը դըրուձ էր յուսէն,
Հիռվին ուգյող մըլգըդէն
Սաբաբ իղուվ էր գըժէն։
Ջանիլ, հալվյոր ձիձվիցէն,
Սրդում հավադում նիդիցէն,
Շյուդ ըսկյըրնա շըճիցէն,
Ազադըլըղը բինիցէն։

## ՔԱՋ ՎԱՐԴՈՒՀԻՆ*

3 (163).

Պարանը մեջքին կապել էր,
Հրացանը ուսից կախել էր,
Կացինը ձեռքը բռնել էր,
Մեծ-մեծ քարեր շրջում էր։
Թշնամու ճանապարհը փակում էր,
Սրտի խորքից ասում էր՝
Գնդակս զուր թող չանցնի,
Թշնամու կուրծքը թող ծակի։
Կուժը ուսին դրել էր,
Թշնամու արկից վախ չուներ,
Խմելու ջուր տանում էր,
Ջահելներին օգնում էր։
Բարձրից անցնող Վարդուհին,
Սափորը դրել էր ուսին,
Հեռվից եկող գնդակը
Կոտրեց նրա սափորը։
Ջահել, ահել կռվեցին,
Սրտով, հավատով խփեցին,
Շատ զինվորներ գլորեցին,
Ազատությունը պահեցին։

## ՄՈՒՍԱ ԼԻՌԸ ԹՈՒՂՈՒՂՆՆՆ

4 (164).

Դնվըլնէս դէղվըլնէս թօղունք հէռվըցունք,
Բասիթը հուղէն յէրվան վըդ տըրունք,
Մուսա լիռուն սրթունքը տիմվէս գուդխնօնք,
Ացէ՛ք, իշիմ, ա՞ւվ չուլօ, միրի՛ր, քուրվըդյա՛ք։
Թյուրքէրէն քամխօնում ջամփունքը իլունք,
Էժնյաբի միլաթին էմիէթ իրունք,
Դնվըլնէս, թալըննէս, խարաբա թուղունք,
Ացէ՛ք, իշիմ, օ՞ւվ չուլօ դադի՛ր, ախբըրդյա՛ք։
Լիպնանը հուղէն յէրվան մինք բըր հասնէնք,
Ցան դիղը նյուր-նյուր օրէնք բըր սուրվէնք։

## ՄՈՒՍԱ ԼԵՌԸ ԹՈՂՆՈՂՆԵՐԻՆ

4 (164).

Մեր տունն ու տեղը թողինք հեռացանք,
Ոտք դրեցինք Պասիտի հողի վրա,
Երևում են դեմից գագաթները Մուսա լեռան,
Ավա՜ղ, տեսնեմ, ո՞վ չի լացում, մայրե՛ր, քույրե՛ր։
Թուրքի ավտոյով ճանապարհ ընկանք,
Եվրոպային ընծայեցինք հավատք,
Ամայի թողինք մեր տունն ու արտ,
Ավա՜ղ, տեսնեմ, ո՞վ չի լացում հայրե՛ր, եղբայրնե՛ր։
Լիբանանի հողին մենք պիտի հասնենք,
Այնտեղ նոր օրենք պիտի սովորենք։

* Նվիրված է հերոսամարտում իր քաջությամբ աչքի ընկած Վարդուհի Նաշալյանին։

Զա՞ իր աչար միդքիրըտ լուծը կէղանդէն,
Ացնք, իշխմ, ո՞ւվ չուլօ, ացնք, բարգըգաք:

Հայաստանը ջամփընէն լիփ պուց ըրփխոնօնք,
Ալայխս բարաբար յանդիգը բըր ուրթունք,
Ջարալ Մուսէն անօնը հիդվէս գըղանէնք,
Մինք միր Հայաստանը քէֆլա գըթօղունք:

## ՅԱՇԱՍԸՆ ԷՐՄԷՆԻԼԷՐ ՀԷՐ ԶԱՄԱՆ*

5 (165).

Մուսա դաղըն քօյլէրի,
Հէփիսի դէ էրմէնի,
Էրմէնիլէր ալմըշլար
Էլէրինդէ ֆէրմանի:

Յաշասըն էրմէնիլէր,
Յաշասընլար հէր զէման,
Հէր բիրի օրդու բուղան,
Օլմուշլար բիր ղահրիման:**

Յէմին էթիք բու յօլա,
Դաղըլդըք սաղդան սօլա,
Էրմէնի ասկյարլարը
Ալլահ յարդըմչա օլա:

Օյանդըրդը Փայասը,***
Չէքդիրդի թուրքէ յասը,
Չէյթունդա բաշ ղօմանդան
Օլդու բիզիմ Աղասի:

Էրմանի ունվանըմըզ,
Ֆէդա օլսուն ջանըմըզ,
Դէսթանը յազան ջահիլ՝
Խըդըր Գէվօրգ ղուլունըզ:

## ՄՈՒՍԱ ԴԱՂԸՆ ԴԷՍՏԱՆԸ

6 (166).

Ա՜խ, ամա՜ն-յամա՜ն, հալըմըզ յամա՜ն,
Մուսա դաղընդա վէրիյօր դուման:

Սա՛բա՛խդա՛ն չը՞ղդըմ, չանթամա բա՞ղդըմ,
Ալլայա-սըզլայա բօյըմա դա՞ղդըմ:

Սա՛բա՛խդա՛ն ղա՞լ՞դըմ, ղափու ղափալը,
Բինբաշի գէլիյօր էլի զօփալը:

Սա՛բա՛խդա՛ն ղա՞լ՞դըմ, գյունէշ փառլըյօր,
Օթուրմուշ չէթէլէր մարթին յաղլըյօր:

Բու գյունա օլաշմըշ քօռ վէ թօփալը,
Դինը բին ուղըրընա գիդէն էրմէնի:

Ղունամա՛, բլուլբյու՛լ, ղունամա՛, դալըմ յօկ բէնիմ,
Սէլայա գծնմէյէ յօլըմ յօկ բէնիմ:

Ի՞նչ էր մնրշմիդքը, ա՜խ, գյուղացինե՛ր,
Ասեք, տեսնեմ, ո՞վ չի լացում, ասե՛ք, պապիկնե՛ր

Հայաստանի ճամփաները երբ բաց կտեսնենք,
Բոլորս միասին այնտեղ կգիմենք,
Մուսա լեռան անունը մեզ հետ կտանենք,
Մենք մեր Հայաստանը միշտ գոհ կթողնենք:

## ՀԱՅԵՐԸ ԹՈՂ ՄԻՇՏ ԱՊՐԵՆ*

5 (165).

Մուսա լեռան գյուղերում,
Զուտ հայեր են բնակվում,
Հայ քաջերն են վերցրել
Կարգ ու կանոն, իրավունք:

Հայերը թող միշտ ապրեն,
Կեցցեն նրանք հավիտյան,
Բոլորն էլ բանակ խեղդող,
Դարձել են քաջ ու հերոս:**

Երդվեցինք այս ճամփին,
Աջ ու ձախ ցրվեցինք,
Հայ զինվորներին
Աստված օգնական լինի:

Արթնացրին Փայասը,***
Սուգ կապեցին թուրքերը,
Զեյթունում մեծ զեկավար
Դարձավ հերոս Աղասին:

Հայ համբավին ու անվան,
Մեր արյունը թող մատաղ,
Վիպերգ գրող ջահելն այս՝
Խըդըր Գևորգը ձեր ծառան:

## ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՎԻՊԵՐԳ

6 (166).

Ա՜խ, ամա՜ն-յամա՜ն, ի՜նչ է մեր վիճակը,
Մշուշն է իջել վեր Մուսա լեռան:

Առավոտ զարթնեցի, պայուսակս նայեցի,
Լալով, ողբալով վզիցս կախեցի:

Առավոտը վեր կացա, դուռը փակ գտա,
Հազարապետն եկավ, ձեռքին կար մահակ:

Առավոտը վեր կացա, արևն էր փայլում,
Չեթեները նստած զենքերն են յուղում:

Այս օրին հասան կույրն ու կաղերը,
Հավատի ճամփով գնացող հայերը:

Մի՛ թառիր, սոխա՛կ, մի՛, ճյուղեր ես չունեմ,
Հայրենիք դառնալու ճամփա ես չունեմ:

* Քայլերգը հորինվել է Մուսա լեռան 1893 թ. ապստամբության ժամանակ:
** Յուրաքանչյուր քառյակից հետո կրկնվում է այս կրկներգը:
*** Սովեդիայի քաղաք Կիլիկիայում:

Ղըշլանըն իչինդէ դէլիկլի դաշա,
Օնիքի ղայմաղամ, յիդիրմի փաշա։

Ղըշլանըն իչինդէ օզանդըմ, յաթդըմ,
Մալըմ-միւլքիւմի զօվլաթա սաթդըմ։

Ղըշլանըն ծնիւնդէ այնալի չարշը,
Անա՛, բէն գիդիյօրըմ դուշմանիա ղարշը։

### ՋԱԲՐԷՆ ԻՐԳԸ*

7 (167).

Դյուման չըքդը Զաղըը ղօզը** բյուրըդը,
Ցէթմիշ ասկյար արքամ սրա յուրըդը։
Նա՞յնայիմ, դաղլարը բաշը դար իդը,
Բէնիմ այնալը մարթինըմ վար իդը։
Մարթինըմ չադըրդա ասըլը կալդը,
Ճէհիզըմ սանդըկդա բասըլը կալդը։
Զի յումըրտա յէդիմ դյուշումդէ,
Նախըլ էդտիմ ալյամ շաշդը իշիմէ։
Խըմծըմ յապտը բու դէհիրլի աքմալը,
Ցէդիրդիլար բանա, հէյ սէֆիլ բաջըմ։
Բէն բիլմազ դըմ բու դյալյուջյակ բաշըմա,
Շահան իդիմ, զըլմաթըմը բիլմադըմ։
Իքի ասկյար բէնիմ զուրշընդան դէբէրդի,
Սօզըրա՝ սըրա բանա յէթիշդի։

### ԱՆԱ՛, ՕՅԱՆԴԸՐ ԲԷՆԻ

8 (168).

Անա՛, օյանդըր բէնի, գիդյամ թալիմէ,
Այնալի մարթինը ալամ էլիմէ,
Գիթմէյէ դօղրու վաթան յօլընա,
Բունա Ծըմամ յօլու դէրլէր, ալլահ սակլասըն,
Էրմէնիլէր չօկ դըր դէրլէր, ալլահ կուրթարսըն։

### ՂԸՅՄԱ ԱԴԱՆԱ***

9 (169).

Հա՛յ, չամլյա՛ր, չամլյա՛ր, ալ-ա՛ճըլը չամլար,
Հէր դյոնաշ բուրընջա՝ սակըզ դամլար,
Օ՜ֆ, Ադանա ըրմաղը լէշ իլան ղանլար,
Իշդա գյօրդիմ սիզի, ղըյմա չօջուքլար,
Օ՜ֆ, օ՜ֆ, իշդա գէլդիմ սէնի՝ ղըյմա Ադանա։

Զորանոցի՜ մեջ ծակ քարի վրա,
Տասներկու քաղաքապետ և քսան փաշա։

Զորանոցի մեջ ձգվեցի ու պառկեցի,
Ունեցվածքս տերությանը հանձնեցի։

Զորանոցի մոտ հայելապատ շուկա,
Մայրի՛կ, գնում եմ թշնամու դիմաց։

### ՋԱԲՐԱՅԻ ԵՐԳԸ*

7 (167).

Մառախուղն ելավ Զաղըը ղօզը** պարուրեց,
Յոթանասուն զինվոր իմ ետևից շարժվեց։
Ի՞նչ կարող էի անել, լեռան գագաթը նեղ էր,
Հայելիով հրացան ունեի ես։
Հրացանս վրանում կախված մնաց,
Օժիտս սնդուկում դարսած մնաց։
Երազում ես հում ձու կերա,
Պատմեցի մարդկանց, նրանք զարմացան։
Խըմծըմը պատրաստեց թունավոր հացը,
Կերցրին ինձ, հե՜յ իմ խեղճ քույր։
Ես չգիտեի գլխիս այս պիտի գար,
Բազե էի, արժանիքս չիմացա։
Երկու զինվոր իմ գնդակից սատկեցին,
Վերջում՝ հերթը նաև ինձ հասցրեցին։

### ՄԱ՛ՅՐ, ԱՐԹՆԱՑՐՈՒ ԻՆՁ

8 (168).

Մա՛յր, արթնացրու ինձ, գնամ վարժանքի,
Ձեռքս վերցնեմ հայելիով մարտին,
Գնալու եմ ուղիղ ճամփով հայրենի,
Սրան մահվան ճամփա կասեն, աստված պահպանի,
Հայ քաջերը շատ ու շատ են, աստված մեզ փրկի։

### ԱԴԱՆԱՅԻ ԿՈՏՈՐԱԾԸ***

9 (169).

Հե՜յ մայրինե՛ր, մայրինե՛ր, գույն-գույն մայրիներ,
Ամեն արև դիպչելիս՝ խեժը ծորում է կաթ-կաթ,
Օ՜ֆ, Ադանայի գետում դիակներ ու արյուն,
Մորթված մանուկներ, ահա ձեզ տեսա,
Օ՜ֆ, օ՜ֆ, գալիս եմ քեզ՝ ջարդված Ադանա։

---

* XIX դարի վերջին ազգային-ազատագրական մարտերում իր հերոսությամբ աչքի ընկած ֆեդայի Ջաբբարյին (Գաբրիել) թուրքերը թունավորել, գլխատել և գլուխը տարել են Անտիոք։ Հերոսի զառամյալ մայրը երկար ճանապարհ կտրելով, գիշերով գաղտնի գնացել, գտել բերել է որդու գլուխը և թաղել Մուսա լեռում։

** Սար Մուսա լեռան շրջակայքում։

*** Երգը հյուսված է Ադանայի 1909 թ. դեպքերի շուրջ։

## ՍՈՒՐԳՑՈՒՆ ԱՎԱԶԸ

10 (170).

Տէր-Զօր չօլլընա նէլէ՜ր…
Ամա՜նըմ, յամա՜ն, հալըմըզ յաման,
Ալահդան բաշխա քիմսա յօկ դըր…
Սա՛րա՛խդա՛ն չըխդըմ, գա՛նաշ փաալըյօր,
Ճէբիմէ բախդըմ, խաշըլըղըմ թյուքանմըշ,
Մէջբուր օլդըմ, էվլադըմ սադթըմ։

11 (171).

Մինք խլիր ինք դօնէն դիղէն,
Պաժանվէլ ինք ընդանիքէն,
Գարօդ ձգացինք միր կէղանդէն,
Գուլում գարօդօվ-գարօդօվ։

Լիոնիրուն միջ գութափառինք,
Միր բիշուրը միր հիդ գառնինք,
Միր գիրուձը կարը հաց ի,
Գանաչ խոդ ի ու լիղը ճօր։

Սուրփ կրքը միջ գունէնք կրվուձ.
«Շո՛դը կնա՛ց, քէչը մնա՛ց»,
Համպէրութին շադ լավ պուն ի,
Համպի՛րէ, հի՛կկէս, համպի՛րէ։

## ՕՅԱ՛Ն, ՄՈՒՍԱ ԴԱՂԼԸ, ՕՅԱ՛Ն

12 (172).

Չէքդիմ քըլըջը վուրդում դաշա,
Դաշ յարըլդը բաշդան բաշա,
Մուսա դաղլը բինլէր յաշա,
Օյա՛ն, մուսադաղլը, օյա՛ն,
Նամ կալդըրդըն ջումլէ ջիհան։

Օսմանլընըն ա՛սկյա՛րլյա՛րը,
Մուսա դաղըն իգիդլարը,
Բին-բինլէրջէ մարթինլարը,
Օյա՛ն, մուսադաղլը, օյա՛ն,
Նամ կալդըրդըն ջումլէ ջիհան։

Օսմանլընը վափօրլարը,
Մուսա դաղըն դէ թօփլարը,
Բին-բինլէրջէ բօմբալարը,
Օյա՛ն, մուսադաղլը, օյա՛ն,
Նամ կալդըրդըն ջումլէ ջիհան։

Ֆրանսըզըն վափօրլարը
Մուսա դաղըն դավալարը,
Բին-բինլէրջէ չօճուքլարը,
Օյա՛ն, մուսադաղլը, օյա՛ն,
Նամ կալդըրդըն ջումլէ ջիհան։

## ԱՔՍՈՐԻ ԵՐԳ

10 (170).

Դեր-Զորի անապատում, ինչե՜ր…
Ամա՜ն, յամա՜ն, վիճակներս յաման,
Աստծուց բացի ոչ ոք էլ չկա…
Առավոտը զարթնեցի, արևը ծագել էր,
Գրպանս նայեցի, փողս հատել էր,
Ճարահատ եղա, որդուս ծախեցի։

11 (171).

Մենք ելել ենք տնից, տեղից,
Բաժանվել ենք ընտանիքից,
Կարոտ մնացինք մեր գյուղերին,
Կուլամ կարոտով-կարոտով։

Լեռների մեջ կթափառենք,
Մեր պաշարը մեզ հետ կառնենք,
Մեր կերածը գարի հաց է,
Կանաչ խոտ է ու լեղի ջուր։

Սուրբ գրքի մեջ ունենք գրված.
«Շատը գնաց, քիչը մնաց»,
Համբերությունը շատ լավ բան է,
Համբերի՜, հոգիս, համբերի՜։

## ՋԱՐԹՆԻ՛Ր, ՄՈՒՍԱԼԵՌՑԻ, ՋԱՐԹՆԻ՛Ր

12 (172).

Քաշեցի սուրս, զարկեցի քարին,
Քարը ճեղքվեց գլխից գլուխ,
Մուսալեռցին հազար ապրի,
Զարթնի՛ր, մուսալեռցի, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր։

Օսմանական զինվորները,
Մուսա լեռան կտրիճները,
Հազար-հազար մարտիկները,
Զարթնի՛ր, մուսալեռցի, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր։

Օսմանական նավերը,
Մուսա լեռան արկերը,
Հազար-հազար գնդակները,
Զարթնի՛ր ,մուսալեռցի, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր։

Ֆրանսիական մեծ նավերը,
Մուսալեռցոց աղոթքները,
Հազար-հազար մանուկները,
Զարթնի՛ր, մուսալեռցի, զարթնի՛ր,
Ողջ աշխարհում հռչակվեցիր։

## ՂԱՐԻԲԸ ԻՐԳ

I

*13 (173).*

*Ծառը գառնի հիլիլմ̈,*
*Իչվէն քիշուձ ձիրիրմ̈,*
*Յաւըձա խնիմրիցմ̈.*
*Այարում ծիօն հիզնիլմ̈,*
*Ջէրէլ Մուսա ուրթիլմ̈,*
*Թիզինէն թöզ քաղիլմ̈,*
*Ունջազինէն ունջայգ քաղիլմ̈։*

II

*Յաւըձա խնիմրիցմ̈.*
*Այարում ծիօն հիզնիլմ̈,*
*Հայաստան ուրթիլմ̈,*
*Մակտաբ ուրթիլմ̈,*
*Խիլք ու շնöրք սուրվիլմ̈,*
*Միր վաթանը շինցընիլմ̈։*

## ԽՆԴՈՒՄԸ ԻՐԳ

*14 (174).*

*Դուզմըշ իրէք գմասսինէն,*
*Արաջ ւցէք ջագընէն,*
*Հազօր անöշ թըղ ըննօ*
*Հայաստան ուրթօղ գէնչիրէն։*

## ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

I

*13 (173).*

*Ձեռքին վերցրել է հայելի,*
*Աչքին քաշել է ծարիր,*
*Աստծուց խնդրեցի.*
*Թամբած ձի հեծնել,*
*Գնալ Մուսա լեռ,*
*Թզենուց թուզ քաղել,*
*Ընկուզենուց ընկույզ քաղել։*

II

*Աստծուց խնդրեցի.*
*Թամբած ձի հեծնել,*
*Հայաստան մեկնել,*
*Դպրոց հաճախել,*
*Խելք ու շնորհք սովորել,*
*Մեր հայրենիքը շենցնել։*

## ՈՒՐԱԽՈՒԹՅԱՆ ԵՐԳ

*14 (174).*

*Լցրեք լիքը սեղանները,*
*Օղին լցրեք բաժակները,*
*Հազար անուշ թող լինի*
*Հայաստան գնացող ջահելներին։*

# ԵՐԳԵՐԻ ՆՈՏԱԳՐՎԱԾ ՆՄՈՒՇՆԵՐ*

## 1. ՊԱՐԵՐԳ

Գա̈րմեր ֆըստան— Կարմիր հագուստ

*(Մուսա լեռ, Քաբուսիե>էջմիածին)*

*Երգասաց՝* Երվանդ *և* Օննիկ Վարուզյաններ




* *Ձայնաժապավենի վրա գրանցված երգերի վերծանումները կատարել է երաժշտագետ* Կարո Չալիկյանը։

## 2. Ո̈ԻՐԻՍՔԸ ԻՐՔ-ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

*(Մուսա լեռ, Հաջի—Հաբիբլի > Երևան)*

*Երգասաց՝* Սիմա Դուղակլյան



### 3. ՃԻՐԻՍՔԸ ԻՐՔ-ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

*(Մուսա լեռ, Հաջի—Հաբիբլի>Կիրովական)*

*Երգասաց՝* Սառա Ճուղուրյան



### 4. ՃԻՐԻՍՔԸ ԻՐՔ-ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

*(Մուսա լեռ, Հաջի—Հաբիբլի>Լենինական)*

*Երգասաց՝* Էլքիսա Ջերազյան



## 5. ՀԱՐՍԻ ՀՐԱԺԵՇՏ

Պա̈րը մնո̈ւս— Մնաս բարով
*(Մուսա լեռ, Քաբուսիե>Էջմիածին)*
*Երգասաց՝* Վարդուհի Բալջյան



## 6. ՀԱՐՍԻՆ ՏԱՆԵԼՈՒ ԵՐԳ

*Մո՛ւ լու, հա՛յ մար — Մի՛ լաց, ա՛յ մայր*
*(Մուսա լեռ, Քաբուսիե>Էջմիածին)*
*Երգասաց՝* Հովհաննես Հանեսյան և Հովհաննես Թումանյան



### 7. ԿԱՏԱԿԵՐԳ

*(Մուսա լեռ, Քաբուսիե>Հոկտեմբերյան)*

*Երգասաց՝* Կարապետ Ախոյան




### 8. ԽԱՂԻԿ

*(Մուսա լեռ, Հաջի—Հաբիբլի>Կիրովական)*

*Երգասաց՝* Մարիցա Ճուղուրյան



## 9. ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ

**Մաման կնուց սընծրակեյն— Մայրը գնաց սնձի**

*(Մուսա լեռ, Հաջի—Հաբիբլի>Աշտարակ)*

*Երգասաց՝* Մարիամ Ղազիյան




## 10. ՌԱԶՄԻ ԵՐԳ

*(Մուսա լեռ, Հաջի—Հաբիբլի>Կիրովական)*

*Երգասաց՝* Կարապետ Ծուղուրյան



III

# ԲԱՆԱՁԵՎԵՐ

## Ա

## ԱՌԱԾ—ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ

1 (175).
Ա̈բբուղէյն՝ ա̈րրընք, մխնուղայն՝ բա̈դընք։

2 (176).
Ադ խիլքու ճէյր ա̈ չըր կա̈րէ խմիր։

3 (177).
Ադ մուրըքէյն՝ ադ սօ̈նդրը։

4 (178).
Ա̈թի՞ չայդ գդնձին գիննա։

5 (179).
Ա̈լա̈մէյն բարնու հէյր մի̈շնէյր։

6 (180).
Ա̈լա̈մէյն ծուաս իշօ̈ղ՝ անուժա կըմընը։

7 (181).
Ա̈լա̈մէն պիրօ̈ն խընչօ̈նխանը չը, քի քիշիմ, գա̈բէյմ գը։

8 (182).
Ա̈լիմէյն հէյդ քուր գըղրը, խա̈շիմէյն հէյդ կլուր մ՚ուդիր։

9 (183).
Ալուա բըսակ պօ̈ն իսկա չըննուր։

10 (184).
Ալուա ծա̈կը մէյս չուդվէյր։

11 (185).
Ալուա մրգանք ունընօ̈ղ՝ մուրթ չըննուր։

12 (186).
Ալուա պուն զէյր դիէղ գունա։

13 (187).
Ալուա պուն չուփ գունա։

14 (188).
Ալուա պուն վա̈ղըտ գունա։

15 (189).
Ա̈խփէն լըրվան փուսուվ, ըմմը վուրթ փուսուվ։

1 (175).
Ապրողին՝ ապրուստ, մեռնողին՝ պատանք։

2 (176).
Այդ խելքով ջուր էլ չես կարող խմել։

3 (177).
Այդ մորուքին՝ այդ սանրը։

4 (178).
Ծարպիկ թռչունը կտուցից կբռնվի։

5 (179).
Ուրիշի պարանով հոր մի՛ իջնիր։

6 (180).
Ուրիշի ձեռքին նայողը՝ սոված կմնա։

7 (181).
Աշխարհի բերանը խոնջանս չէ, որ քաշեմ, կապեմ։

8 (182).
Գիտունի հետ քար ջարդի, անգետի հետ քուֆթա մի՛ ուտի։

9 (183).
Ամեն փայլող բան ոսկի չէ։

10 (184).
Ամեն թռչունի միս չի՛ ուտվի։

11 (185).
Ամեն բեղ ունեցող՝ մարդ չի լինի։

12 (186).
Ամեն ինչ իր տեղն ունի։

13 (187).
Ամեն ինչ իր չափն ունի։

14 (188).
Ամեն ինչ իր ժամանակն ունի։

15 (189).
Աղբի վրա բուսավ, բայց վարդ բուսավ։

16 (190).
Ախշար գուլար միր, իրնիէգ տարծընադէն։

17 (191).
Աձը յէր վըդուցը գըդա̈խին,
մա̈կէն՝ յէր վըդուցը։

18 (192).
Աձձաղ հÖվ ձըձըրան գըննը։

19 (193).
Ադվէյր՝ ադվըրութÖն հա̈մար,
չըրքընն ա̈՝ աըձձը հա̈մար։

20 (194).
Ա̈դվէյր զա̈դվէյր գըզըննա։

21 (195).
Ա̈դվըրթէն իրէյր, ձուվը քա̈րէ։

22 (196).
Ա̈դվըրութայն չադվէյր։

23 (197).
Ա̈դվիրըդ ա̈շկընիէ ա̈դվիրըդ հարըննադ
գընը, ա̈դվիրըդ հարըննաա ա̈դվիրըդ
չուճօխ գունանը։

24 (198).
Ա̈դվար ծակմատր գծա̈կիր չըսիրիր։

25 (199).
Ա̈գքադէյն իրէյս բադ գըննը։

26 (200).
Ա̈գքադէյն հա̈յին ա̈գքÖդ գըհադըննը։

27 (201).
Ա̈գքա̈դութայն ձյըը չը,
փնթըլըքը՝ այր ը։

28 (202).
Ամաադ լիանանք գըշըճը։

29 (203).
Ամօվուն ունծըվէն իյան
ծմռունը ա̈րիվէն մա̈վդօ։

30 (204).
Ամօռն թը չըր քըրդընիր,
ծմայռ չըր կիշդա̈նար։

31 (205).
Այրա քուայննը, իրաընայց՝ այմը։

32 (206).
Ա̈յրուն ունցէյր, ջուանչ Բաղդադին գուկը։

16 (190).
Աշխարհն անիվ է, երանի
դարձնողին։

17 (191).
Այծն իր ոտից են կախում,
ոչխարն՝ իր ոտից։

18 (192).
Ածող հավը կչկչան կլինի։

19 (193).
Գեղեցիկը՝ գեղեցկության համար,
տգեղն էլ՝ աստծո համար։

20 (194).
Լավը լավին կգտնի։

21 (195).
Լավություն արա, ծովը գցի։

22 (196).
Սիրունությունը չի ուտվի։

23 (197).
Սիրուն աղջիկը սիրուն հարս կլինի,
սիրուն հարսը սիրուն մանուկ
կծնի։

24 (198).
Լավ թխուկանը ճաքերին չի թողնի։

25 (199).
Աղքատի երեսը պաղ կլինի։

26 (200).
Աղքատի հալից աղքատը կհասկանա։

27 (201).
Աղքատությունն ամոթ չէ,
կեղտոտությունն է ամոթ։

28 (202).
Աշխատանքը լեռներ շուռ կտա։

29 (203).
Ամառվա անձրևին և ձմեռվա
արևին մի հավատա։

30 (204).
Ամառը թե չքրտնես, ձմեռը՝
չես լիանա։

31 (205).
Հարսը քոնն է, հարսանոցը՝ իմը։

32 (206).
Թան ունեցիր, ճանճը Բաղդադից կգա։

33 (207).
Ա̇նաուն գը, էյնք՝ չիկը։
34 (208).
Ա̇նծրվէյգ էօր հէվ ճէյր չուգիր։
35 (209).
Ա̇նծրվլին փախուք, գարգուցը ինգուք։
36 (210).
Ա̇նկուն ուգօղ չայր ղըղըննա, ղուն գուգը։
37 (211).
Ա̇նցուծ պա̈նէն՝ վա̈խ չըր ա̈սին։
38 (212).
Ա̇նցուծ՝ մառցուծ։
39 (213).
«Ա̇նո՞շ խմիցիր» ա̈սօ էր, գուզալ մը ջօր գըխմէ։
40 (214).
Ա̇շխօուրը՝ լան, ղունդուրաս՝ նիղ, չա՞ հասգըցօ։
41 (215).
Ա̇շխօուր թըղ վառա, մարթիէմ չունուալը։
42 (216).
Ա̇շխօուր մա̈խղու ծաղօուծը։
43 (217).
Ա̇շխօուրը ծուվ, իս՝ ծարուվ։
44 (218).
Ա̇շխօուրը քանը մօղ մէյը։
45 (219).
Ա̇շկէյն իլէյց դօն ջրէյքնը։
46 (220).
Ա̇շկէյնը տաօն իդտըտէն տրուծ գընըօ։
47 (221).
— Ա̇շկէ՛յն, սիզօուն տէյր։
— Կլաուխս գուցավա։
— Աշկէ՛յն, ա̈րը գիր։
— Ցա̈լըր՞ը մինձ տիկօուլ։
48 (222).
Աշկէյնը ա̈ցիր է, ղ̊ալթ մա̈լէ հուրս թը գընըում, ծէն հիզնիլը բա̈լլիցա։
49 (223).
Աշկէյն, քիզ գուա̈սիմ, հա́րս՝ տօն հասգցէյր։
50 (224).
Ա̇շկէյնը նագուր թը գըրիհիս, գինա ալամէն ղ̊ամաթն է։
51 (225).
Աչք հանուղէյն գուաշք բըր հա̈նիս։

33 (207).
Անունը կա, ինքը՝ չկա։
34 (208).
Անձրևոտ օրը հավը ջուր չի ուզում։
35 (209).
Անձրևից փախանք, կարկուտի տակ ընկանք
36 (210).
Ուշ եկողն ինչ գտնի, այն կուտի։
37 (211).
Անցած բանին՝ վախ չեն ասի։
38 (212).
Անցած՝ մոռացած։
39 (213).
«Անո՞ւշ խմեցիր» ասա նրան, մի կուժ ջուր կխմի։
40 (214).
Աշխարհը՝ լայն, կոշիկս՝ նեղ, ի՞նչ հասկայա։
41 (215).
Աշխարհը վառվի, միջը մի մարդակ չունի։
42 (216).
Աշխարհը մախաթով է ծակված։
43 (217).
Աշխարհը ծով, ես՝ ծարավ։
44 (218).
Աշխարհը մազի չափ է։
45 (219).
Աղջիկն այլոց տան ճրագն է։
46 (220).
Աղջիկը դռան ետևում կլինի։
47 (221).
— Աղջի՛, սեղան դիր։
— Գլուխս է ցավում։
— Աղջի՛, արի կեր։
— Ո՞ւր է մեծ գդալը։
48 (222).
Աղջիկն ասել է, եթե մի անգամ էլ հարս դառնամ, ձի հեծնելը սովորեցի։
49 (223).
Աղջի՛կ, քեզ եմ ասում, հա՛րս՝ դու հասկացիր։
50 (224).
Աղջիկն ինչքան պահես, դարձյալ ուրիշի բախտն է։
51 (225).
Աչք հանողի աչքը պիտի հանես։

52 (226).
Աջալա նիդöղ, ուղիրթ չընիդիր։
53 (227).
Աջալա ուրթուղ, ուշէյդ գըռնöռրինօ։
54 (228).
Աջալա ք... նուղ, ըրդը աղըզ գըք...նըր։
55 (229).
Առչը թծուս, առչը համուամ։
56 (230).
Առունց շօն կիղ չըննուր։
57 (231).
Առունց քըրդöնք գուաբրա։
58 (232).
Ասդուծ գիշը գլալօ, գըթիլը զծուայնը։
59 (233).
Ասդուծ ըրգը ագանճ դվöուծ, պիրուն մը,
քի քէյչ խուսէյս, շիդ լսիս։
60 (234).
Ասդուծ ունդ̊այզ գուդը, ագըր չուդուր,
ագըր գուդը, ունդ̊այզ չուդուր։
61 (235).
Ասդուծ միկէն գուդօ խիլք՝ միգա-
լէն՝ փարա։
62 (236).
Ասդուծ կիդի զէր շարդութը։
63 (237).
Ասէլը հէլշըը, ինէլը՝ ուժուր։
64 (238).
Ա̈սըձը չվա̈խնողէյն իրմէյն վա̈խցէյր։
65 (239).
Ա̈սիղ քա̈րը, կիդայն չիննէյր։
66 (240).
Ա̈սիղէյն ծա̈գին հնդսդուն գըդնիա։
67 (241).
Ա̈սիմ դա̈լգունը, թըղ հասցընօ հարսնօյը։
68 (242).
Ա̈սիս՝ կէյշ իս, չա̈սիս՝ էշ իս։
69 (243).
Աս խմէյր շիդ ճէյր զըվիրցնը։
70 (244).
Աս ճաղուրցքը ցիրին ա̈լէ գա̈ղօ, գիրիգ ա̈լէ։
71 (245).
Աս պօունը վիրայն մը գիժը։
72 (246).
Ավչէն առունց թըվա̈նգ չըննուր։
73 (247).
Արը՛, զգիվունը ցիրընին զա̈դը։
74 (248).
Ա̈րիվ թը գըննօ, աշխարա չըձիթիր։

52 (226).
Շտապով կրակողը, ուղիղ չի կրակի։
53 (227).
Արագ գնացողը, շուտ կհոգնի։
54 (228).
Շտապ կեղտոտողը, երկու անգամ կկեղտոտի։
55 (229).
Նախկին թասը, նախկին բաղնիքը։
56 (230).
Առանց շան գյուղ չի լինի։
57 (231).
Առանց քրտինքի է ապրում։
58 (232).
Աստված նայում է սարին, ձյունը դնում։
59 (233).
Աստված երկու ականջ է տվել, մեկ բերան,
որ քիչ խոսես, շատ լսես։
60 (234).
Աստված ընկույզ կտա, ատամ չի տա,
ատամ կտա, ընկույզ չի տա։
61 (235).
Աստված մեկին կտա խելք, մյուսին՝ փող։
62 (236).
Աստված գիտի իր դատաստանը։
63 (237).
Ասելը հեշտ է, անելը՝ դժվար։
64 (238).
Աստծուց չվախեցողից վախեցիր։
65 (239).
Ասեղ գցես, գետին չի ընկնի։
66 (240).
Ասեղի անցքից Հնդկաստանը կերևի։
67 (241).
Ասեմ տալոջը, թող հասկանա հարսնուկը։
68 (242).
Ասես՝ գեշ ես, չասես՝ էշ ես։
69 (243).
Այս խմորը շատ ջուր կվերցնի։
70 (244).
Այս ջրաղացը ցորեն էլ կաղա, կորեկ էլ։
71 (245).
Այս գործը մի կյանք արժե։
72 (246).
Որսորդն առանց հրացանի չի լինի։
73 (247).
Արի՛, որոմը ցորենից ջոկի։
74 (248).
Թե արև դառնա, աշխարհի վրա չի ծաթի։

75 (249).
Արիվ մըննուծ դուռն, հöքէմ չըմնէր։
76 (250).
Արաղ դիսու, ղմուրուղ մառցու։
77 (251).
Ուղդ «քը՛շ-քը՛շ» ծöխլին չառնըցընիր։
78 (252).
Բամիղ ճալր չըբղդիրա, ծöգ չըպըռնըվայր։
79 (253).
Բամիզ ասդուծ չուղը, ինսաան չուդուր։
80 (254).
Բöխրին բամիզը իննա, տäնըգ քիշöղ՝ շիդ։
81 (255).
Բöխրին զէր դանգ չըղըննօր։
82 (256).
Բաղդուդ ö ղուրմա շիդ գը։
83 (257).
Բöս ուծէյն բզդայը չըսիրվէյր։
84 (258).
Բարդքում կարքըվöղը չուճուխնէն գուզօ տիմը։
85 (259).
Բօյը՝ իրգան, խիլքը՝ գարջ։
86 (260).
Բուղազայն հöմուր իդէյվ չալթայց գուդը։
87 (261).
Բուրդքը ըղդը ծöկ է, նադուր ուրթու գըմիզնօ։
88 (262).
Բուռսը թիրխէյմը հարէր դարա բիհէ, գինö զէր դիյմութը չըգուրսնիր։
89 (263).
Բօդ՝ կöցէյր, էյզ՝ մըննöցէյր։
90 (264).
Բուրք գրöզը շարայը։
91 (265).
Գադվէյն öցիր ին՝ քöքիտ իլլաշ է.
դահա խուրօն թաղիր է զը։
92 (266).
Գöղö չըգիցուծ դիղ, մգնիրը չըրըդ գըխա-ղուն։
93 (267).
Գöղծ գիմը վըդուցը գիյնա։
94 (268).
Գöղծն դինըրքին քöրը, գինա չուք վըդուցը գըզöննա։
95 (269).
Գայթ՝ գէյթ չը։
96 (270).
Գայշդ յանութէյն հöլին չըկիդիր։

75 (249).
Արև մտած տունը, բժիշկ չի մտնի։
76 (250).
Օղին տեսավ, վիշտը մոռացավ։
77 (251).
Ուղտը «քը՛շ-քը՛շ» ասելուց չի պառկի։
78 (252).
Մինչև ջուրը չպղտորվի, ձուկ չի բռնվի։
79 (253).
Եթե աստված չտվեց, մարդը չի տա։
80 (254).
Եզը որ ընկնի, դանակ քաշող՝ շատ։
81 (255).
Եզն իր լծկանը չի գտնի։
82 (256).
Բաղդադում էլ խուրմա շատ կա։
83 (257).
Միայն օձի փոքրը չի սիրվում։
84 (258).
Պարտքով ամուսնացողը երեխաներին կտա
դեմը։
85 (259).
Բոյը՝ երկար, խելքը՝ կարճ։
86 (260).
Ուտելու համար հետույքը փշերին կտա։
87 (261).
Պարտքը ուղտի ձագ է, ինչքան գնա
կմեծանա։
88 (262).
Բուրսայի մետաքսը հարյուր տարի էլ պահ
էլի իր արժեքը չի կորցնի։
89 (263).
Փտածը գնացել է, ամուրը՝ մնացել։
90 (264).
Պարտքը կրակե շապիկ է։
91 (265).
Կատվին ասել են՝ կեղտը դեղ է,
ավելի խորն է թաղել։
92 (266).
Կատու չեղած տեղը, մկները պար կխաղան
93 (267).
Կատվի պես ոտքերի վրա կընկնի։
94 (268).
Կատվին տանիքից գցես, դարձյալ չորս ո
քերին կկանգնի։
95 (269).
Կաթը՝ կաթ չի։
96 (270).
Կուշտը սոված վիճակը չի հասկանա։

97 (271).
Գայլ իղէլը, քան ըգխիվ ըննալ։
98 (272).
Գայլը աաշքը խէլլ գիննա։
99 (273).
Գայլ գու ձարիք։
100 (274).
Գըննաքը նիրգած հավգաթ գըլմանէն. ալայնէն հումը մէլ է։
101 (275).
Գըննէլց շառին հիռօ։
102 (276).
Գըննուձ ճրին վախցէլը, ուղղաղ ճրին մը վախիր։
103 (277).
Գարթացօղ ինսան ղըննը։
104 (278).
Գարճ ինսանէն լիրվան ուրը յոլթը թաքավորութէն, յոլթ ալէ ըռագըլըք գուկօ։
105 (279).
Գդըրչէն մարը ուշէդ գալօ։
106 (280).
Գէյթ ուդող բուդա չըր դդրին։
107 (281).
Գէյշդ նօդունք, քաղցուձ իլունք։
108 (282).
Գէշդ փէյր յանութին չըհաղնուր։
109 (283).
Գդրուձ գայժ չըշինվէյր։
110 (284).
Գըդրուձ մաղէյն չըշոիր։
111 (285).
Գըձձաք բարուբ դիէղ չիսբգծուց։
112 (286).
Գըղննա զկատուր, գըղափաղը զատառ։
113 (287).
Գիխուձ դիէղ խիդ չըպուսնէյր։
114 (288).
Գինգօն լօց քնիթէյն ձուարքն ը։
115 (289).
— Գիրաղիրէն կլխէն լայս իշիր է, ուվ գիսիր է զէ։
— Հավութը։
116 (290).
Գիցուձ խալծտ շուքըր իրէյր։
117 (291).
Գիփուձ քօր կիդայն չըմնուր։
118 (292).
Գնաց գը դօն գըշինը, գնաց գը դօն գը փըլլը։

97 (271).
Կույր եղիր, քան՝ հիմար։
98 (272).
Կույր աչքը շլուղ կընկնի։
99 (273).
Կույր ենք պահում։
100 (274).
Կանայք ներկած հավկիթի են նման. բոլորի համն էլ նույնն է։
101 (275).
Կանանց չարից հեռու։
102 (276).
Կանգնած ջրից վախեցիր, հոսող ջրից մի վախեցիր։
103 (277).
Կարդացողը մարդ կդառնա։
104 (278).
Կարճահասակ մարդու մտքով օրական յոթ անգամ թագավորություն կանցնի, յոթ անգամ էլ կխայտառակվի։
105 (279).
Կորիճի մայրը շուտ լաց կլինի։
106 (280).
Կաթնատու պտուկը չեն կոտրի։
107 (281).
Կուշտ նստեցինք, քաղցած վեր կացանք։
108 (282).
Կուշտ փորը սովածին չի հասկանա։
109 (283).
Կոտրած կուժը չի նորոգվի։
110 (284).
Կտրած մատին չի միզի։
111 (285).
Մազերը զուր տեղը չեն սպիտակել։
112 (286).
Գտնում է աթարը, փակում է դուռը։
113 (287).
Կոխած տեղը խոտ չի բուսնի։
114 (288).
Կնկա լացը քթի ծայրին է։
115 (289).
— Գյուղապետի գլխին լույս է իջել, ով է տեսել։
— Գզիրը։
116 (290).
Վիճակիդ համար փառք տուր։
117 (291).
Տաշած քարը գետնին չի մնա։
118 (292).
Կին կա տուն կշինի, կին էլ կա տուն կքանդի։

119 (293).
Գնաց՝ չիգ․ ամմա մար՝ մէյմը։
120 (294).
Գնա մարթուն ամբրնը։
121 (295).
Գրանքէյն իրվան գազ չըր ըլնօն։
122 (296).
Գրէյգ ու պամպիէ մըդ դիր չըննար։
123 (297).
Գուգալը ճրէն ջամպանքը գըդդըրա։
124 (298).
Գուզը միղծ դու ձարիմ։
125 (299).
Գուլ գաճուող հայվանայն պիրօն չըր գաբին։
126 (300).
Գուած օմ մարթ յէր քումբէյն* գըքիշը։
127 (301).
Գուայը զէյր դուրութուայն չըդնօր։
128 (302).
Գուրայն պատվօած աաշք միյը, աստուծ իդիր ըրդը աշք։
129 (303).
Գուրին իլան թափալին վախցէ։
130 (304).
Գուրմամբըշէյն գըղը իդէյը, քիշէյը ջաջա փիդէյը։
131 (305).
Դաղէյն անատուն դաշկայն գըձախը։
132 (306).
Դալավիրաջայն ջաննաթ չարթար։
133 (307).
Դահա չակման ճօր անցած չէ։
134 (308).
Դէյղիտ կիդացօղ չիգը։
135 (309).
Դէյղիտ ձունդր գիցէյը։
136 (310).
Դըմաշէյն յիրմինը հավդայթը դաանիս, աիղնօցը միշը չըգինար։
137 (311).
Դըմմաշէյն քանէն սաղանան գուղը։
138 (312).
Դըքըր գոտաս չզարգիս, պացող չըննար։
139 (313).
Դըքըր կարանքը չակը, ծոտս չըձազգիր։
140 (314).
Դըքըր նէյր չակը, հընէյն գէյմօթ չըկիդացվիր։

119 (293).
Կին՝ շատ, բայց մայր՝ մեկ հատ։
120 (294).
Կինը ամուսնու կյանքն է։
121 (295).
Կրակի վրա նավթ չեն լցնի։
122 (296).
Կրակն ու բամբակը մեկ տեղ չեն լինի։
123 (297).
Կուժը ջրի ճամփին կկոտրվի։
124 (298).
Բոռ եմ պահում։
125 (299).
Կաղ անող անասունի բեռանը չեն կապի։
126 (300).
Ամեն մարդ կալծն իր քամբալի* տակ կքաշի։
127 (301).
Կույրն իր կուրությունը չի տեսնում։
128 (302).
Կույրի փնտրածը մի աչք էր, աստված տվեց երկու աչք։
129 (303).
Կույրից և կաղից վախեցիր։
130 (304).
Ջախսին տղա է ծնվել, քաշել ճոճն է պոկել։
131 (305).
Հոր անունը աղջկան կծախի։
132 (306).
Խարդախը դրախտ չի գնա։
133 (307).
Դեռ ոտնամանը ջուր չի անցել։
134 (308).
Տեղդ իմացող չկա։
135 (309).
Տեղդ ծանր թիա։
136 (310).
Ժլատից ոչ ձու առնես, դեղնուցը մեջը չի լինի։
137 (311).
Ժլատի քամկից սառանան կուտի։
138 (312).
Մինչև դուռը չթակես, բացող չի լինի։
139 (313).
Մինչև գարուն չգա, ծառ չի ծաղկի։
140 (314).
Մինչև նորը չգա, հնի արժեքը չի իմացվի։

* Ս. Սարգսի տոնին եփվող թխվածք։

141 (315).
Դըքըր չուջառ՞ չուլը, ձէյձ չըր ուգուն էր։
142 (316).
Դիլլէն բըր ուլօ, քէ գիրը
խնդօ։
143 (317).
Դինաըգէյն հա̈խին իմանըգը գուկը։
144 (318).
Դիղ գօ բըր աղճիս, դիղ գօ բըր ձիձվիս։
145 (319).
Դիս զմուար, օռ գա̈շկայն։
146 (320).
Դիսուր՝ խուրանթը, չըդիսուր՝ գուրանթր։
147 (321).
Դիրա̈գնէյն միէ բա̈գծըր։
148 (322).
Դիքր ա̈ռծն ճէյր ուկը, կիրդօն ուաշք գրնիր։
149 (323).
Դիքր գիսծր չըխնդօղ, գիսուրին ուանրա
չըխնդուր։
150 (324).
Դիքր հծա̈ւող պա̈րգընը, պա̈րին յա̈սիէյ
գասնա։
151 (325).
Դղան բզդալը՝ ույնն ը, գա̈րքըվիցու՝ տրա-
ցայն ը։
152 (326).
Դղան դծդ գըքիշը։
153 (327).
Դղաս խիվ՝ փարան չա̈ շինիմ, դղաս
խիլըք՝ փարան չա̈ շինիմ։
154 (328).
Դուղը գիրուվ գա̈ղա̈խը, դղօն ադուպը
ա̈վըրգից։
155 (329).
Դուլ գինգծն ա̈կակ էր դուշմօնը։
156 (330).
Դուն մը քաշան ա̈բրէ, քա̈ն գսարայէն միջը
խայրըղ գինգան մը հիդը։
157 (331).
Դուսը փարը մուրթ մը թը գունունուս,
քսուն փարը շառաֆ գունունուս։
158 (332).
Դծն հա̈րա̈մէյն ջուր չըննուր։
159 (333).
Դծն մը կընը, տրա̈ցէյն կընը։
160 (334).
Դօուս չա̈փը, մէյմ գդըր։
161 (335).
Ջադալը առունց հավգայթ չըննուր։

141 (315).
Մինչև երեխան լաց չլինի, ծիծ չեն տա։
142 (316).
Որթատունկը պիտի լաց լինի, որ տերն ու-
րախանա։
143 (317).
Անխիղճի հախից անհավատը կգա։
144 (318).
Տեղ կա պիտի աղաչես, տեղ կա պիտի կովես։
145 (319).
Մորը տես, աղջկան առ։
146 (320).
Տեսար՝ կատակ էր, չտեսար՝ իրողություն։
147 (321).
Տախտակներից մեկը պակաս է։
148 (322).
Մինչև ատամ ջուր գա, գորտի աչքը դուրս կգա։
149 (323).
Մինչև կեսօր չուրախացողը, կեսօրից հետո էլ
չի ուրախանա։
150 (324).
Մինչև հաստը բարակի, բարակը սաեղից
կանցնի։
151 (325).
Տղան փոքր է՝ իմն է, ամուսնացավ՝ հարևանինը։
152 (326).
Տղան հորը կքաշի։
153 (327).
Տղաս գիժ՝ փողն ինչ անեմ, տղաս խելոք՝
փողն ինչ անեմ։
154 (328).
Հայրը կերավ ագոխը, տղայի ատամները
փչացան։
155 (329).
Որբևայրու փեշն իր թշնամին է։
156 (330).
Տան անկյունում ապրիր, քան պալատում
անպատկառ կնոջ հետ։
157 (331).
Տասը փարայի մարդ ունենաս, քսան փա-
րայի պատիվ կունենաս։
158 (332).
Տանու դողին ճար չկա։
159 (333).
Տուն մի գնիր, հարևան գնիր։
160 (334).
Տասը չափիր, մեկ կտրիր։
161 (335).
Ջատիկն առանց հավկիթի չի լինի։

162 (336).
*Զանաթ ունընäդը նըքը գիտըր քաղցուծ գըմնօ, գանութ չունընäդը՝ նըքը մժնէ։*
163 (337).
*Զäնäթութը խսկում մäղնա է, յÖր ըր գուրթաս, հիդիա գուրթօ։*
164 (338).
*Զäնգըննը կաղÖծ գուգը, äղքÖղ՝ գդդÖծ։*
165 (339).
*Զամբäրէն յիգիվը միղր մը պäտվի։*
166 (340).
*Զäվգը ցու՝ գրäգը շաբաղ։*
167 (341).
*Զէյս չըխäծծուղ Öուց հազուր դարա թըղ ըրրա։*
168 (342).
*Զէյը չըհասնէյր, դուրթընդայն գըզարդը։*
169 (343).
*Զէյր իծÖուց գուսդընը չըդսնÖր, տրäսնէյն իծÖուց խայլ գըդսնա։*
170 (344).
*Զէյր մÖուր մäնÖուծ՝ Հäլըը չարշայն ծախÖուծ։*
171 (345).
*Զէյր պÖն չիդ գիտա, հäրքäշէյն գդարդ գուքիշը։*
172 (346).
*Զէնքը չըր հäսնէյր, շըքէյն բըր զարգիս։*
173 (347).
*Զըլլա՝ գուգը, գբօուշ՝ գըդէփըքը։*
174 (348).
*Զըմմըր մուդ գդրը, վիրէյն գըննը։*
175 (349).
*Զըրըցը վըրքը չըմնուր, գըվախնու գըրըթխա։*
176 (350).
*Զխադօղ չըհäսէյր, թխթուը äցէյր։*
177 (351).
*Զրայց քէլփէտէնու բըր քիշիս պիրնին։*
178 (352).
*Զըրցու ըռօզäրէյր թը գիփիր, քäն գծÖվ իրմէնիս իդ։*
179 (353).
*ԶուսնÖգը գմուրäք չըբըհիր։*
180 (354).
*Զöւրթը չուէփըըսնուս, զäւրթընիյն äլէ չուէփըըսնուս։*
181 (355).
*Էյլըք իրէյր, ծÖվ քäրը։*

162 (336).
*Արհեստ ունեցողը մինչև կեսօր քաղցած կը-մնա, արհեստ չունեցողը՝ մինչև իրիկուն։*
163 (337).
*Արհեստը ոսկե մատանի է, ուր որ գնաս, հետդ կգա։*
164 (338).
*Հարուստը ուզածը կուտի, աղքատը՝ գտածը։*
165 (339).
*Իշամեղվի հետևը մեղր մի փնտրիր։*
166 (340).
*Զավակի ցավ՝ կրակի շապիկ։*
167 (341).
*Ինձ չկծող օձը հազար տարի թող ապրի։*
168 (342).
*Էշին չի հասնում, փալանին է խփում։*
169 (343).
*Իր աչքի գերանը չի տեսնում, հարևանի աչքի շյուղն է տեսնում։*
170 (344).
*Իր մոր մանածը՝ Հալեպի շուկայում է ծա-խած։*
171 (345).
*Իր գործը շատ տեսավ, ուրիշի դարդն է քաշում։*
172 (346).
*Իրեն չհասնես, ստվերին պիտի խփես։*
173 (347).
*Լիքը՝ կուտի, դատարկը՝ կշպրտի։*
174 (348).
*Որ մատը կտրես, արյուն կգա։*
175 (349).
*Խոսքի տակ չի մնա, ճզմվելուց կվախենա։*
176 (350).
*Խաղողին չի հասնի, թթու է ասել։*
177 (351).
*Խոսքը բերանից աքցանով պիտի քաշես։*
178 (352).
*Թե խոսքով բրինձի փլավ եփվի, ինձնից ծովի չափ յուղ։*
179 (353).
*Զուռնաչին մորուք չի պահի։*
180 (354).
*Հարդը չես ափսոսում, հարդանոցն էլ չես ափսոսում։*
181 (355).
*Լավություն արա, ծովը գցիր։*

182 (356).
Էյնք էյր շըքին գըվա̈խը։
183 (357).
Էյշ ան էշն ը, գուրթանք՝ փիխվöձ։
184 (358).
Էյշ լոստանք չըստրվöձ։
185 (359).
Էյշ ինգած դիդին չանայր։
186 (360).
Էյշ կողցէյն. գգուրթանք գուպատվու։
187 (361).
Էյշ հիձձէյր, իշ գուպատվու։
188 (362).
Էյշ պանա, ծայն ուզը։
189 (363).
Էյշ պիռնօն վըրքը չըգաննիր։
190 (364).
Էյշ չուքմըշիդուծ դիդին ջա̈թ մա̈լը չաանայր։
191 (365).
Էյշ ցռայր, ցրցքվայր։
192 (366).
Էյշ քիշöղ ցռին չըվա̈խիր։
193 (367).
Էյնք խիլք չունա, հա̈րքա̈ւէյն խիլք գուդը։
194 (368).
Ըմըն Յուրուսաղիմ ուրթա̈ղը խաջջա չըն-նուր։
195 (369).
Ըմըն գրիցա մրզօնք չըր իւլին։
196 (370).
Ընգըլըզը կնա̈ց, չաքման մնաց։
197 (371).
Ընդա̈նէյն նիղ ուրէյն համօր ը։
198 (372).
Ընդա̈նէյն հէյդ քէյֆ իրէյր, ալըշ-վիրըշ մինիր։
199 (373).
Ընտուղ վիրայն դամօր չըմնուր։
200 (374).
Ըուդ մէյս իղ չունանուր։
201 (375).
Ըսբա̈ղա̈գ շöնը պա̈մպըխչէն գայրու գուզօ։
202 (376).
Երգը խիվ զանձայր գդրէյն, խէյվ մը խիլիէք մը տիրծօւն մը չըգդրէյն։
203 (377).
Երգը բա̈խրէյն արաայն թը գըմըննա, փի-գօւր մը գըհանը։

182 (356).
Ինքն իր ստվերից է վախենում։
183 (357).
Էշն էն էշն է, փալանն է փոխված։
184 (358).
Էշը պայտի սովոր չէ։
185 (359).
Էշն ընկած տեղից չի անցնի։
186 (360).
Էշը գողացել են, փալանն է փնտրում։
187 (361).
Էշը նստել, էշն է փնտրում։
188 (362).
Էշը դատի, ձին ուտի։
189 (363).
Էշը բեռան տակ չի կանգնի։
190 (364).
Էշն իր չոքած տեղից մի անգամ էլ չի անցնի։
191 (365).
Էշը ց...ել, ցրցքվել է։
192 (366).
Էշը քշողը ց...-ից չի վախենա։
193 (367).
Ինքը խելք չունի, ուրիշին է խելք տալիս։
194 (368).
Ամեն Երուսաղեմ գնացողը հաջի չի լինի։
195 (369).
Ամեն խոսքին բեղ չեն ոլորի։
196 (370).
Անգլիացին գնաց, կոշիկը մնաց։
197 (371).
Բարեկամը նեղ օրվա համար է։
198 (372).
Բարեկամի հետ քեֆ արա, առուտուր մի՛ անի։
199 (373).
Թափվող արյունը երակում չի մնա։
200 (374).
Էժան միսը յուղ չի ունենա։
201 (375).
Սպիտակ շանը բամբակագործին վնաս կտա։
202 (376).
Երկու խենթ շվթա են կտրել, մի խենթ, մի խելոք դերձան չեն կտրել։
203 (377).
Երկու եզան արանքը որ մտնի, մի կտոր կաշի կհանի։

204 (378).
Թախտից կփöխնուս, ըմը բախտիտ չըր-դարիր փöխէ։
205 (379).
Թա̈կա̈վիրէյն ա̈շկայն բիլա̈ ձուըր գունընը։
206 (380).
Թանջարան ըրք քարէն գընօղա։
207 (381).
Թանջարան կուլըլիր է, ձապուձը կդիր է։
208 (382).
Թանջարա մը ոգիլա̈ն միչը գուլթ մը գառ-լըծիթ թը գըտնէս, գուդվա̈։
209 (383).
Թէյլ մը քիշը, հազուր գա̈րդըղօւն գինիա։
210 (384).
Թը գուզգիս զղուշմունիտ թա̈նրգիլ, զանա̈ր լիզօն սուրվէ։
211 (385).
Թըմզէյն ծուան հիավունց ա̈նէյշ գուկը։
212 (386).
Թը չըր ցա̈նիր, չըր ընձիր։
213 (387).
Թöք յöուփիս, իշփիմ յիրէյսիտ։
214 (388).
Իլայրս մաղվէյր, մöղիս գա̈խվէյր։
215 (389).
Իվա̈ղ դւքէն աղվա̈ր է, քան զըսուդա̈ղ ասլանը։
216 (390).
Իհալին լիռ գըշրճը։
217 (391).
Իհալին չըգարթընուր։
218 (392).
Ինադ մարթօն հուցն ա̈ չուգվէյր։
219 (393).
Ինուղ իշօն՝ քան զդայր ղուվաթլա չընուր։
220 (394).
Իսանայն ալաչան նքցճունցը, հայվանայն՝ տուրըցունց։
221 (395).
Իսանայն նա̈՛ մայս գուդվա, նա̈՛ դա գիշէյն գըհաքվա, բա̈ս շնա̈րքը գըմնօ։
222 (396).
Իսանայն ուաշք թըղ ընը, անուան թըղ չընը։
223 (397).
Իսուան իսանու շին գընը։
224 (398).
Իսուան լիզվում գըգա̈րվա, հայվուան՝ բա-խըրծուվ։

204 (378).
Թախտից կփախչես, բայց բախտիցդ չես կարող փախչել։
205 (379).
Թագավորի աղջիկն անգամ ժեռաթյուն կունենա։
206 (380).
Կաթսան երեք քարի վրա կնստի։
207 (381).
Կաթսան գլորվել է, խուփը՝ գտել։
208 (382).
Մի կաթսա ճաշի մեջ մի կաթիլ դափնու ձեթ որ դնես, կուտվի։
209 (383).
Մի թել քաշի, հազար կարկատան կթափվի։
210 (384).
Եթե կուզես թշնամուդ հաղթել, նրա լեզուն սովորիր։
211 (385).
Թմբուկի ձայնը հեռվից անուշ կգա։
212 (386).
Չցանես, չես հնձի։
213 (387).
Թքիր ափիս, քսեմ երեսիդ։
214 (388).
Ալյուրս մաղվել է, մաղս էլ՝ կախվել։
215 (389).
Ման եկող աղվեսն ավելի լավ է, քան քնած առյուծը։
216 (390).
Ժողովուրդը սար շուռ կտա։
217 (391).
Ժողովուրդը չի ղալվի։
218 (392).
Համառ մարդու հացն էլ չի ուտվի։
219 (393).
Ընկած էշի համար տիրոջից ուժեղը չկա։
220 (394).
Մարդու բիծը ներսից է, անասունինը՝ դրսից։
221 (395).
Մարդու ոչ միսը կուտվի, ոչ էլ կաշին կը-հագնվի, միայն շնորհքը կմնա։
222 (396).
Մարդու աչքը դուրս գա, անունը դուրս չգա։
223 (397).
Մարդը մարդով է շեն։
224 (398).
Մարդը լեզվով կբռնվի, անասունը՝ մանձով։

225 (399).
Ինատան հÖմ գէյթ ձձÖձը, չա̈վըռվէյր։

226 (400).
Ինատան չալըըր գինը. էյնք էյր գինը։

227 (401).
Ինատան չալըըր գըքիշը, էյր խիլքու գըքիշը։

228 (402).
Ինատան չունցÖձ գուգը։

229 (403).
Ինողունց՝ գ̈ննուղունց։

230 (404).
Իշ իղէյր, իշ բըը ուրթը։

231 (405).
Իշը հա̈րէր քուռօզ ա̈լէ թը գունուհօ, ձունդըը պիռը էյր գըմընօ։

232 (406).
Իշը պիռան վըրքը գըզօ։

233 (407).
Ի՛շ, մը սա̈դգէյր, գ̈արանգ գÖկը։

234 (408).
Իշը օխուլը. նա̈՛ գիրգա̈ննը, նա̈ գըգիժգըննը։

235 (409).
ԻշշÖ՛ն ալար չըվիլիր։

236 (410).
Իշշօն ափարըմ ա̈ցուք, խալայն ցօից։

237 (411).
Իշշօն կլÖխն ա̈լէ մինձ գըննօ։

238 (412).
Իշշօն վէզը չանթա մը իսկա թը գըգա̈խիս ա̈լէ, գինա գա̈սին՝ իշ աղա։

239 (413).
Իչվէնը՝ ձառայր, վիդվէնը՝ քարէյր։

240 (414).
Իչուց հիռօ, սըրդին հիռօ։

241 (415).
Իս՝ աղա, ա̈Öն՝ աղա, միր ա̈ղÖն ու՞վ ա̈ղը։

242 (416).
Իսկէյն բըգգուլը, կայն՝ մինձ։

243 (417).
Իսկէյն թէյփ մուհթաջ գըննը։

244 (418)
Իս խըմիցու, ա̈Öն հա̈րպիցուր։

245 (419).
Իս գուա̈սիմ, իս գու լըիմ։

246 (420).
Իս պա̈նիլ դա̈սիմ, էյնք ուդիլ գըհաս-գըննը։

225 (399).
Մարդը հում կաթ է ծծել, հավատալ չի լինի։

226 (400).
Մարդ ինչ անի, իրեն կանի։

227 (401).
Մարդն ինչ որ քաշի, իր խելքից կքաշի։

228 (402).
Մարդ չանիցածն է ուտում։

229 (403).
Անողաց՝ գանողաց։

230 (404).
Էշ եկել է, էշ էլ գնալու է։

231 (405).
Էշը հարյուր քուռակ էլ ունենա, ծանր բեռն իրեն կմնա։

232 (406).
Էշը բեռան տակ կզա։

233 (407).
Է՛շ, մի սատկիր, գարուն կգա։

234 (408).
Էշի պոչ է. ոչ կերկարի, ոչ կկարճանա։

235 (409).
Էշին ժամը չի վայելի։

236 (410).
Էշին ապրեա տապցինք, զորգին ց...եց։

237 (411).
Էշի գլուխն էլ մեծ կլինի։

238 (412).
Էշի վզից թե մի տոպրակ ոսկի էլ կախես, նորից կասեն՝ էշ աղա։

239 (413).
Աչքը՝ ծառին, ոտքը՝ քարին։

240 (414).
Աչքից հեռու, սրտից հեռու։

241 (415).
Ես՝ աղա, դու՝ աղա, մեր աղանը ո՞վ աղա։

242 (416).
Ոսկին փոքր է, գինը՝ մեծ։

243 (417).
Ոսկին անգամ թեփի կարիք ունի։

244 (418).
Ես խմեցի, դու հարբեցիր։

245 (419).
Ես ասում եմ, ես լսում եմ։

246 (420).
Ես աշխատել եմ ասում, ինքն ուտել է հասկանում։

247 (421).
Իսուր գիրուվ՝ ա̈ղվէյր իս, վöղը չըգիրուվ՝ չաղվէյր իս։
248 (422).
Իսուր գուղը, վöղ չըդուշընմըշ ըննուր։
249 (423).
Իսուրվէյն պöն վաղվէյն մը թուղոր։
250 (424).
Իսöուր վուղ ու գունա։
251 (425).
Իվիր՝ աստուձ, իվար՝ փարա։
252 (426).
Ի վիր՝ մըրգանք, ի վար՝ մուրա̈ք։
253 (427).
Իրգանք դուպա̈թվայք, կիդայն ջդուք։
254 (428).
Իրգöթ շա̈ղ-շա̈ղ դըձիձին։
255 (429).
Իրըսայց ինն ա̈ղ ջուանջ, քառոն բաղուռ գըննը։
256 (430).
Իրըսէյն գուրա սիլլը դըզարգին։
257 (431).
Իրիս դվուք, սատուռ ա̈ գըրիդա։
258 (432).
Իրիսէյն գիշէյն քուսալա տարմայր։
259 (433).
Իրէյս իշöղ շա̈պöթ մը ուղիլա չուգիր։
260 (434).
Իփուձ ա̈րրէյն մէյչ ճէյր չըր լըննօուն։
261 (435).
Լա̈գլա̈գէյն վըդը ամուռն ա̈ հինէօուձ, ձմիռն ա̈։
262 (436).
Լա̈գլա̈գէյն öուր լա̈ղ-լա̈ղու գասնա։
263 (437).
Լայռ լիռնօն գըննը, դառն դöն իրվան չըննուր։
264 (438).
Լա̈նթըգ գիր, գիրգը հուց գիր, ըմը սա̈յրդիտ ա̈նöշ թըղ ըննօ։
265 (439).
Լէզա ձառէն մայվան լիղա գըննօ։
266 (440).
Լէու իղուվ, յանգաճը ինգուվ։
267 (441).
Լըհիֆէյտ գուրա վըդիտ իրգա̈նցէյր։
268 (442).
Լիզուն թը չիր, քա̈րքա̈գնէյն գիչվէյն գըհա̈նայն։

247 (421).
Այսօր կերավ՝ լավն ես, վաղը չկերավ՝ վատն ես։
248 (422).
Այսօր կուտի, վաղվա մասին չի մտածի։
249 (423).
Այսօրվա գործը վաղվան մի թող։
250 (424).
Այսօրը վաղն էլ ունի։
251 (425).
Վերևը՝ աստված, ներքևը՝ դրամ։
252 (426).
Վերևը՝ բեղ, ներքևը՝ մորուք։
253 (427).
Երկնքում էինք փնտրում, երկրում գտանք։
254 (428).
Երկաթը տաք-տաք կծեծեն։
255 (429).
Երեսից ընկնող ճանճը, քառասուն պատառ կլինի։
256 (430).
Երեսի համեմատ ապտակ են զարկում։
257 (431).
Երես տվեցինք, աստառ էլ ուզեց։
258 (432).
Երեսի կաշին արեխացու է դարձել։
259 (433).
Երեսին նայողը մի շաբաթ հաց չի ուտի։
260 (434).
Եփած ապուրի մեջ ջուր չեն լցնի։
261 (435).
Արագիլի ոտն ամառն էլ է հինայած, ձմեռն էլ։
262 (436).
Արագիլի օրը լաղ-լաղով է անցնում։
263 (437).
Լեռը լեռան վրա կլինի, տունը տան վրա չի լինի։
264 (438).
Ալրապուր կեր, կորեկ հաց կեր, բայց սիրտդ թող անուշ լինի։
265 (439).
Դառը ծառի պտուղը դառը կլինի։
266 (440).
Լու դարձավ, ականջն ընկավ։
267 (441).
Վերմակիդ չափ ոտքդ մեկնիր։
268 (442).
Լեզուն չլիներ, ագռավներն աչքերը կհանեին։

269 (443).
Լիզզօն քուղցր, սայրդ՝ սիվ։
270 (444).
Լիզօ̈ս թըր գա̈նը, սայրդիս չա̈նչիր։
271 (445).
Լիշէս գըթուքցնիմ, իրիսէս չիմ թուքցնը։
272 (446).
Լվայմ հա̈մըր լհէյֆ մը չըր վառին։
273 (447).
Լօ̈ն օ̈ղդ կուշինը։
274 (448).
Լօ̈այ՝ լօց գըպիրը։
275 (449).
Լօ̈այ ու խընդատում քայր-ախպուար ին։
276 (450).
Խա̈բաուր չուջըղին օռ։
277 (451).
Խա̈լըընա̈ղ քարվուանը Բա̈ղդադին բիլա̈ լիդ գըտառնօ։
278 (452).
Խէյզ ըլվուց, տէյր տա̈խդէյն, գըսիֆա, գիննա ա̈խպէյն։
279 (453).
Խէյզը խըրօ̈մ բըր քիշդիս։
280 (454).
Խէյլք՝ թանչարան, մայր՝ փանչարան։
281 (455).
Խէյլք խիլքին ֆուարդըլ։
282 (456).
Խէյլք դա̈րիքէյն մէյչ չը, կլխայն մէյչնը։
283 (457).
Խէյվ գըհասնա մուրազա, խիլինք գըհիյա ժամանգա։
284 (458).
Խէյվ գիսկը քօր մը, գօս խիլըք չըր գա̈րին վիրցընայր գը։
285 (459).
Խէյր ուգը տրա̈սնէյտ, խէյր տիրա կլաուխիտ։
286 (460).
Խըյուրը ձուռ պուտած է։
287 (461).
Խըս-խըսայն դա̈փըքը մինձ գընինը։
288 (462).
Խիզ չըննուր, խըրօմ չուկուր։
289 (463).
Խիզին մօզ մը փիդիլն ա̈ պօուն մը։
290 (464).
Խիզզօն քնթէյն ալմաստ չկիլլիր։

269 (443).
Լեզուն, քաղցր, սիրտը՝ սև։
270 (444).
Լեզուս թե ասի, սիրտս չի ասի։
271 (445).
Դիակիս թքել կտամ, երեսիս թքել չեմ տա։
272 (446).
Մի լվի համար վերմակ չեն վառի։
273 (447).
Լուն ուղտ է դարձնում։
274 (448).
Լացը՝ լաց կբերի։
275 (449).
Լացն ու ծիծաղը քույր-եղբայր են։
276 (450).
Լորը երեխայից առ։
277 (451).
Սխալված քարավանը Բաղդադից էլ ետ կդառնա։
278 (452).
Խոզին լվա դիր թախտին, կսահի, կընկնի աղբին։
279 (453).
Խոզին խրամում պիտի խփես։
280 (454).
Խելքը՝ կալթալին, միտքը՝ պատուհանին։
281 (455).
Խելքը խելքից տարբեր է։
282 (456).
Խելքը տարիքի մեջը չէ, գլխի մեջն է։
283 (457).
Խևը կհասնի մուրազին, խելոքը կսպասի ժամանակին։
284 (458).
Խևը մի քար գցեց, տասը խելոք չկարողացան այն վերցնել։
285 (459).
Բարիք կամեցիր հարևանիդ, բարիք գա, դիպչի գլխիդ։
286 (460).
Վարունգը ծուռ է բուսել։
287 (461).
Սուսիկ-փուսիկի քացին ուժեղ կլինի։
288 (462).
Խոզ չկա, որ խրամ չգա։
289 (463).
Խոզից մի մազ պոկելն էլ մի բան է։
290 (464).
Խոզի քթին ադամանդ չի սազի։

291 (465).
Խիլք գը՝ փարա չիգը, փարա գը՝ խիլք չիգը։
292 (466).
Խիլքիտ թը գըգդրէ, թաքին թալամօ գը-քիշդիս։
293 (467).
Խիլք ադաղ՝ չիդ, փարա ադաղ՝ քէյէ։
294 (468).
Խիչըրու անդ̊ամայգ մը չադվէյր ծիռուց։
295 (469).
Խիսսօձ յօր գալան։
296 (470).
Խիսսօձ ալիլամ չըսադնար։
297 (471).
Խիվը ձասց, խլուքը հավդաց։
298 (472).
Խիվծն օմընար հարսնաւքը։
299 (473).
Խիվօն թաշիէգ̊ ադիրթ գըգաննա։
300 (474).
Խիվծն թարնա հէյր չիշնըվէյր։
301 (475).
Խնամն, քաղցըր-քաղցըր արր։
302 (476).
Խնծէյր ձառին հիռօ չիննէյր։
303 (477).
Խուրասդ լէյր ախպըրնէյց գըգինչը։
304 (478).
Խուրըղայն ըցէյն.— Օ՛ռ քիզ օփ մը կարա, բաս կիդայն մէ փիրգիր։
Խուրասդ ըցէյր.— Օփ մը կըրը համուր թաբիութիս չըմ փիխիր։
305 (479).
Խուրօզը կիղէն սղաթն է։
306 (480).
Խճուփ քօր ծխըլվիցու։
307 (481).
Ծա առանց փէյշ չըննուր։
308 (482).
Ծա կլխին գըհիդը։
309 (483).
Ծակմըրը ծիէկ մըքըրէն վըրքը չըթնուր։
310 (484).
Ծըկէյր իշնօնց գըհըմբրին։
311 (485).
Ծըկը լիղէյց բիլա գըղ̊նըվա քէու։

291 (465).
Խելք կա՝ փող չկա, փող կա՝ խելք չկա։
292 (466).
Եթե խելքդ կկարի, նախազից էլ դալամա (պանիր) կստանաս։
293 (467).
Խելք ավող՝ շատ, փող ավող՝ քիչ։
294 (468).
Կեղևով ընկույզն անգամ ձեռքից չի ուտվի։
295 (469).
Մեռածին նույն օրն են ողբում։
296 (470).
Մեռելը լալով չի կենդանանա։
297 (471).
Խեն ասաց, խելոքը հավատաց։
298 (472).
Խելոքն ամեն օր հարսանիք է։
299 (473).
Խենի վեզը ուղիղ կկանգնի։
300 (474).
Խենի պարանով հոր չեն իջնի։
301 (475).
Խնամի, քաղցր-քաղցր արի։
302 (476).
Խնձորը ծառից հեռու չի ընկնի։
303 (477).
Աքլորն իր աղբանոցում կկանչի։
304 (478).
Աքաղաղին ասել են.— Ա՛ռ քեզ մի ափ գարի, միայն թե գետինը մի՛ փորիր։
Աքաղաղն ասել է.— Մի ափ գարու համար բնավորությունս չեմ փոխի։
305 (479).
Աքլորը գյուղի ժամացույցն է։
306 (480).
Խոփը քարին դեմ առավ։
307 (481).
Ձուկն առանց փշի չի լինի։
308 (482).
Ձուկը գլխից կհոտի։
309 (483).
Թխսկանի ձագը քթոցի տակ չի մնա։
310 (484).
Ձկներն աշնանն են հաշվում։
311 (485).
Թռչունի լեղի անգամ կգտնվի մոտը։

312 (486).
Ծա ձծ գըմինձնը։
313 (487).
Ծայն ու ճիրէյն ձիձվլիցուն, էյշ ինգու վիգուց վըրք։
314 (488).
Ծգօն ըցէյն.— Ձուվին չմ խըմըուր։
Ըցէյր.— Շիդ պուն կիդիմ, ամա պիրօնիս ճէյր գըլըվա։
315 (489).
Ծէյթ ճրէյն վըրքը չըմնուր։
316 (490).
Ծէյն չունա, լուսանք գուպատվա։
317 (491).
Ծէնիս գուգօմ, գընայիս չըմուգօ։
318 (492).
Ծիավըրը լայան ուրթուղէն ինգիր չըննուր։
319 (493).
Ծիթ իղավ, ճրէն իրիսը իլավ։
320 (494).
Ծիին իճու, իշօն հիձձու։
321 (495).
Ծիռծուց պուն չըննիր, կուղօղ գուչըղը։
322 (496).
Ծիօն սանգիլէ կարին թիղ ըննը։
323 (497).
Ծնգէյն գընուգա, մուրաք գըփիրշը։
324 (498).
Ծուռը ծառ գըլըվանը, ծիռվայն ա՝ իրիս։
325 (499).
Ծօգ պըռնուղէն իղիվը բըր թըրճա։
326 (500).
Ծօյը ձուվը, բաղուր մի ըննիր։
327 (501).
Ծօյը՝ ձուվը. ձուպը՝ գըռագէն։
328 (502).
Կալը իշիր է ըղգէն բռնըղը գախված է, հիյիր է, քէ իյնա՝ էնք ալէ ուղի գէ։
329 (503).
Կընը՝ միռայր, արը՝ ուլում։
330 (504).
Կիղացքը թը գըճուղվըվէն, զադ գիրաղըրը թուփ գըքարըցընին։
331 (505).
Կինա խմօղ գըհարպինը, չըխմօղ՝ չըհարպինուր։
332 (506).
Կիշըրու գուպաթվիր․ ցիրըգու դղու։

312 (486).
Ձուկը ծովում է մեծանում։
313 (487).
Ձին ու ջորին կռվեցին, էշն ընկավ ոտի տակ։
314 (488).
Ձկան հարցրին.— Ծովից ի՞նչ լուր։
Ասաց.— Շատ բան գիտեմ, բայց բերանս ջուր կլցվի։
315 (489).
Ձեթը ջրի տակ չի մնա։
316 (490).
Ձի չունի, պայտ է փնտրում։
317 (491).
Ձիս կտամ, կինս չեմ տա։
318 (492).
Ձիավորը հետիոտին ընկեր չի լինի։
319 (493).
Ձեթ դարձավ, ջրի երեսն ելավ։
320 (494).
Ձիուց իջավ, էշին հեծավ։
321 (495).
Ձեռքից բան չի գալիս, կռվարար է պատառում։
322 (496).
Ձիու սանդուղը պարուց թող լինի։
323 (497).
Ծնկին կնստի, մորուքը կփետի։
324 (498).
Ձեռքը ձեռք կլվանա, ձեռքերն էլ՝ երես։
325 (499).
Ձուկը բռնողի հետևը պիտի թրջվի։
326 (500).
Ձուկը ծովում, մի՛ սակարկիր։
327 (501).
Ձուկը՝ ծովը, տապակը՝ կրակին։
328 (502).
Գայլը տեսել է ագռավի շրթունքը կախված է, սպասել է, որ ընկնի, ինքն էլ ուտի։
329 (503).
Գնա՝ մեռի, արի՝ լաց լինեմ։
330 (504).
Գյուղացիները եթե հավաքվեն, գյուղապետին կսնանկացնեն։
331 (505).
Գինի խմողը կհարբի, չխմողը՝ չի հարբի։
332 (506).
Գիշերով էր փնտրում, ցերեկով գտավ։

333 (507).
Կլատխ՝ մինձ, խելք՝ բըզըգ։
334 (408).
Կլատխ նիղ գիէղ չըխիթիր։
335 (509).
Կլատխիս սրիպըգ գիատր, գöգրմանչը բöլ-
լիցէյր։
336 (510).
Կլխայս ագöած իփած հöմէօան կլատխ րի-
լö չօկոր։
337 (511).
Կլորը ատանց շարրօ չադմէր։
338 (512).
Կոալ öմբէյդ öր գըպտթվօ։
339 (513).
Կուալ բաազ հöլիվիրը, թիրըգնէն ö մաա-
խարա գըննը։
340 (514).
Հöգöգ-հöգöգ գըշուգմը, տփ-տփ գըցանը։
341 (515).
Հա դöն փլլէյս, հա՝ գիղիցա։
342 (516).
Հöլուպ թը հան դօ, գöնդօնը հաս դօ։
343 (317).
Հալու ըօգիէ գըխնգöցընը, հöրöամ՝
գըհալը։
344 (518).
Հöլու ըագիէ չըգաանըվայր։
345 (519).
Հöմը իղըվիս իլու, ընծը գուսաըվըցընը։
346 (520).
Հö՛մ լուսանքայն, հö՛մ պիվըռայն։
347 (521).
Հö՛մ շուղ, հö՛մ բադ։
348 (522).
Հայվանայն, ապօձ գայրն ը։
349 (523).
Հայվուան՝ հիգըդիլով, ինսաան՝ խօսիլով։
350 (524),
Հավգայլթ կողնöղ հավ ö գըկողնը։
351 (525).
Հավգութայն մէյչ մազ գըպöտվա։
352 (526).
Հöսգընողէյն՝ մըգ, չըհöսգընողէյն՝
հազար։
353 (527).
Հöրöմէյն հէյդ öբրöղ՝ հöրöմա գըննը։

333 (507).
Գլուխը՝ մեծ, խելքը՝ փոքր։
334 (508).
Գլուխը նեղ տեղ չի խոթի։
335 (509).
Գլուխս սպիտակ տեսար, չրաղացպա՞ն կար-
ծեցիր։
336 (510).
Գլխից եկածը եփած հավի գլուխն էլ չի գա։

337 (511).
Քուֆթան առանց արգանակի չի ուտվի։
338 (512).
Գայլը ամպոտ օր է փնտրում։
339 (513).
Գայլը որ ծերանա, շնագայլերի ծաղրի առար-
կան կդառնա։
340 (514).
Հատիկ-հատիկ կհավաքի, բուռ-բուռ կբա-
ժանի։
341 (515).
Կամ տուն ես քանդել, կամ՝ եկեղեցի։
342 (516).
Հալեպը թե այնտեղ է, կանգունն այստեղ է։
343 (517).
Հալալ ունեցվածքը կուրախացնի, հարամը՝
կհալեցնի։
344 (518).
Հալալ ունեցվածքը չի կորչի։
345 (519).
Նոր է եռևիցս ելել, ինձ է սովորեցնում։
346 (520).
Ե՛վ պայտին, և՛ մեխին։
347 (521).
Ե՛վ տաք, և՛ պաղ։
348 (522).
Կենդանու աստվածը տերն է։
349 (523).
Անասունը՝ հոտոտելով, մարդը՝ խոսելով։
350 (524).
Հավկիթ գողացողը հավ էլ կգողանա։
351 (525).
Հավկիթի մեջ մազ է փնտրում։
352 (526).
Հասկացողին՝ մեկ, չհասկացողին՝
հազար։
353 (527).
Գողի հետ ապրողը՝ գող կլինի։

*354 (528).*
Հա̈րա̈մէյն ա̈լէ զասդուձ գըդինչր, քէրվանչայն ա̈լէ, ամմա ըրգա̈քնէ յիրինց սիլահը գըդովա̈մըշ ըննուն։
*355 (529).*
Հա̈րա̈մէյն յէյր շքին գըվա̈խը։
*356 (530).*
Հա̈րկա̈սէյն ծիռով բա̈ս ոծ պըռնը։
*357 (531).*
Հարսդէյն՝ շինըֆիր, ա̈դքադէյն՝ շուն պիր։
*358 (532).*
Հարցընöղ զասդուձ ո̊դայր։
*359 (533).*
Հա̈րքա̈սէյն պօւռը չուդա̈ղը, զէր պօւռը իրգուծ գըբա̈լի։
*360 (534).*
Հարսնայց դիէ̊ղ բըր խադօսս։
*361 (535).*
Հարսօն ադվըրտէնը սըըրըրին գըրվընօ։
*362 (536).*
Հա̈րօմ՝ դիղ չըպռնիր։
*363 (537).*
Հիգիլով փիր չըըվէյր։
*364 (538).*
Հիդիտ թը ախրարին բիլա էմիաթ մինը։
*365 (539).*
Հիչչող շատն չըխյա̈ձձիր։
*366 (540).*
Հիվանտը գուիշին նըքըր ադվըրնօ, դարէրը գըհիյէն նըքըր ուկօ։
*367 (541).*
Հիր փիրöղ, հէյր գինննա։
*368 (542)*·
Հէն ինգիրը, հէն կինէն։
*369 (543).*
Հուքումա̈թէյն գդյուձ մöդ չըցա̈վէյր։
*370 (544).*
Հöտ իրöղ մունդր գիրըգ գըդըննա։
*371 (545).*
Հöտց դիսու, յöց մացու։
*372 (546).*
Հօրս ծիöն գըննը, չըր կիդիր օ՞մ ո̊ւմաթ գընը։
*373 (547).*
Ջա̈ղա̈լը ձադգէն գըվիլէ, քա̈քա̈դ մարթօն չա̊ գըվիլի։
*374 (548).*
Ջաոին իննöղ՝ իննուղէյն հա̈լին գըհա̈սգընը։

*354 (528).*
Ավազակն էլ է աստված կանչում, քարավանապետն էլ, բայց երկուսն էլ իրենց զենքերին են ապավինում։
*355 (529).*
Գողն իր ստվերից է վախենում։
*356 (530).*
Ուրիշի ձեռով միայն օձ բռնի։
*357 (531).*
Հարուստին՝ շնորհավոր, աղքատին՝ շան բոր։
*358 (532).*
Հարցնողն աստծուն է գտել։
*359 (533).*
Ուրիշից բռունցք չուտողը, իր բռունցքը երկաթ է կարծում։
*360 (534).*
Հարսանքատա՞նը պիտի պարես։
*361 (535).*
Հարսի լավությունը սկեսրոջից կերևա։
*362 (536).*
Հարամը՝տեղ չի բռնի։
*363 (537).*
Հոտ քաշելով փոր չի կշտանա։
*364 (538).*
Ընկերոջդ անգամ մի՛ վստահիր։
*365 (539).*
Հաչան շունը չի կծի։
*366 (540).*
Հիվանդին խնամում են մինչև լավանա, պանդխտին սպասում են մինչև գա։
*367 (541).*
Հոր փորողը, հորը կընկնի։
*368 (542).*
Հին ընկերը, հին գինին։
*369 (543).*
Իշխանության կորած մատը չի ցավի։
*370 (544).*
Հավը երազում մանր կորեկ է տեսնում։
*371 (545).*
Հացը տեսավ, լացը մոռացավ։
*372 (546).*
Հարսը ձի կնստի, չգիտես ո՞ւմ բաժին կլինի։
*373 (547).*
Ծաղիկը ծաղկին է վայելում, կեղտոտ մարդուն ի՞նչ կվայելի։
*374 (548).*
Ծառից ընկնողը՝ ընկնողի վիճակից կհասկանա։

375 (549).
Ծիգ հըլնօն գիդայն չըմնար։
376 (550).
Ծիէ՝ մինձ, պօրգըղօն՝ բզզօգ։
377 (551).
Ծիէկ ոսկում ղաֆօսակ տրէյն, «Ա՜խ վաթան» ըսէյր։
378 (552).
Ծառը՝ պոնցր, բդօղը՝ քօխցր, ծառը չըհասնէր նէ, ֆայդան չայ է։
379 (553).
Ծուփը ըլէ ճօր շօդ գօ, մէ չա՞ ֆայդա։
380 (554).
Ծօվ իննօղ յօծ բիլա գըփաթթըվա։
381 (555).
Ծօվ գըդանա, ձօրու գըպիրը։
382 (556).
Ծօվ գուրթը, ձօրու գուգը։
383 (557).
Ծօռ նըստէյք, ուղիղ խօսէյք։
384 (558).
Ղարագայը թաքան ըմըն դիրիվ չուդիր։
385 (559).
Ղահրած իս՝ մանուծիտ իզզադ դէր։
386 (560).
Ղայըղէն մինձը շօդ իր ըլնօ, ան բաթմըշ գըլնօ։
387 (561).
Ղայիր խիլք պիժնիցէյն՝ իշօն յադունձ բառգօծ իր։
388 (562).
Ղանդ մսին չըզատվէյր։
389 (563).
Ղաշմոր ինուղէյն կլուխը գըուիրա։
390 (564).
Ղայր գըհասնիլիրիս, հասնիլիրէյն գըյմօթ գըկիդանաս։
391 (565).
Ղարաչէն չըդիսած մը մըրգընօ։
392 (566).
Ղըթըթվուղէյն քասան ըլլա գըննը։
393 (567).
Ղնգէն ըլան մսէն յարասէն պան չըդինուր։
394 (568).
Ղսմաթին ավիլա չուդվէյր։
395 (569).
Ղուզայն թըռըռդիցու, ած դիսու, ասուց.
—Իշիցէ՛ք, իշիցէ՛ք, ղուզայն իդէյվ պացվիցու։

375 (549).
Ծակ ուլունքը գետնին չի մնա։
376 (550).
Ծակը՝ մեծ, կարկատանը՝ փոքր։
377 (551).
Ծտին ոսկե վանդակ են դրել. «Ա՜խ հայրենիք» է ասել։
378 (552).
Ծառը՝ բարձր, պտուղը՝ քաղցր, որ ձեռք չի հասնում, օգուտն ինչ։
379 (553).
Ծովն էլ շատ ջուր կա, մեզ ի՞նչ օգուտ։
380 (554).
Ծովն ընկնողն օձին անգամ կփաթաթվի։
381 (555).
Ծովը կտանի, ծարավ կբերի։
382 (556).
Ծով կգնա, ծարավ կգա։
383 (557).
Ծուռ նստենք, շիտակ խոսենք։
384 (558).
Հպարտ նոխազը ամեն տերև չի ուտի։
385 (559).
Խռով ես՝ մանածդ առանձին դիր։
386 (560).
Մակույկի ղեկավար եթե շատերը լինեն, այն կխորտակվի։
387 (561).
Խելք բաժանելիս՝ էշի ականջում քնած էր։
388 (562).
Եղունգը մսից չի բաժանվի։
389 (563).
Մաղրուղի գլխին կգա։
390 (564).
Որ ծերանաս, ծերի հարգը կիմանաս։
391 (565).
Կարաշայ (գետը) չտեսած՝ մի՛ մերկացիր։
392 (566).
Խնայողի քսակը լիքը կլինի։
393 (567).
Եղունգի և մսի արանքը բան չի մնում։
394 (568).
Խսմաթից ավելի չի ուտվի։
395 (569).
Ոչխարը ցատկոտեց, այծը տեսավ, ասաց.
— Տեսե՛ք, տեսե՛ք, ոչխարի քամակն երևաց։

396 (570).
Ղումայն լիրվան տöն չըր շինին։
397 (571).
Ղուվäթիա պունցը քուր մը՛ վէրցընիր։
398 (572).
Ղօլթըղը ծմիրäգ տրէյն։
399 (573).
Ճահիլայն ուաշքը կայր գընըը։
400 (574).
Ճäղույքը կäցիր է, թըխթըխգօյը մäցիր է։
401 (575).
Ճäղուցքը ուրթօղ գիսըըդը։
402 (576).
Ճայր՝ բզզöն, գրայց՝ մինձէյն։
403 (577).
Ճայր զճաղօուսք դարէյր, չախչուախ գուպատվա։
404 (578).
Ճայր ինն՛öղ äնծրվին չըվäխիր։
405 (579).
Ճայր յäգյին բղդէյր ը։
406 (580).
Ճäյր յäգին գըգդրին։
407 (581).
Ճայր զէյր ջամփիէ գըզըննա։
408 (582).
Ճայր չըդխուած, իմäնէյն գուհäնը։
409 (583).
Ճրէն պիրուձը, ճծրը գըդանա։
410 (584).
Մադանքիս միմ թը դըտարծնիմ, ավա կէն չունա։
411 (585).
Մäղը յէրվա շըռäղը չը։
412 (586).
Մäմըըր äվիյ տընէնք, äջջըք բըր ուգինք։
413 (587).
Մայվալը ձօուա գըքäրջիջվա։
414 (588).
Մայս առունց իսգäր չըննուր։
415 (589).
Մէսիս գըձամիմ, ըասաբայն մընդութ չըմ ինիր։
416 (590).
Մäնուղ ըախրան իշշը հաջաթով ä գըմäնը։
417 (591).
Մäշէն առունց դըլքա չըննուր։
418 (592).
Մարթօն նամըսը տäղäյն ը, գինգծնը՝ տասդըռէն։

396 (570).
Ավազի վրա տուն չեն շինի։
397 (571).
Ուժիցդ վեր քար մի՛ վերցնի։
398 (572).
Թևատակին ձմերուկ դրեցին։
399 (573).
Ջահելի աչքը կույր կլինի։
400 (574).
Ջրաղացը գնացել է, թխթխկոցը մնացել է։
401 (575).
Ջաղացք գնացողը կապիտակի։
402 (576).
Ջուրը՝ փոքրին, խոսքը՝ մեծին։
403 (577).
Ջուրը ջրաղացը տարել է, չախչախին է փնտրում։
404 (578).
Ջուրն ընկնողը, անձրևից չի վախենա։
405 (579).
Ջուրը ակից է պղտոր։
406 (580).
Ջուրը ակից կկտրեն։
407 (581).
Ջուրն իր ճամփան կգտնի։
408 (582).
Ջուրը չտեսած, ոտնամանն է հանում։
409 (583).
Ջրի բերածը, ջուրը կտանի։
410 (584).
Մատներս թե մոմ դարձնեմ, նորից գին չունի։
411 (585).
Մատի վրա շող չէ։
412 (586).
Երբ ավել գնենք*, ձվածեղ պիտի ուտենք։
413 (587).
Պոզատու ծառը կքարկոծվի։
414 (588).
Միսն առանց ոսկորի չի լինի։
415 (589).
Միսս կծամեմ, մսավաճառին չեմ խնդրի։
416 (590).
Մանող լիրբը էշի հաջաթով էլ կմանի։
417 (591).
Անտառն առանց աղվեսի չի լինի։
418 (592).
Տղամարդու պատիվը գլխարկն է, կնկանը՝ դաստառակը։

* Թարգմանության մեջ ընդունված է «ավել գնել», որովհետև հասունացած շերամը ճյուղերի արանքում բոժոժ հյուսի։

419 (593).
Մարթօն ղաշքը ուփ մը խըմղը գըզիշդայընը:
420 (594).
Մարթօ ադվըրտէն իրուձ չիմ, քէ չադվըրէն գ̊ըննօմ:
421 (595).
Մըգ ագուանձիտ՝ խէլլ, մըգ առաշքիտ՝ գուլլ:
422 (596).
Մըգ ագընձին գըմիա, միգալին՝ գընըը:
423 (597).
Մըգ ձագգում կարօն չուկօր:
424 (598).
Մըգ ծառա չըձափդիր:
425 (599).
Մըգ ծիա ըրգը ծմիրագ չառնըվայր:
426 (600).
Մըգըրդուայչ կլուր չադիր:
427 (601).
Մըգ առաշք միգալէյն ֆայդա չունա:
428 (602).
Մգօն ձիէ լիրուամ ղառնը:
429 (603).
Մգօն շայռ ճադցուց ճրէյն ֆայդաայ ը:
430 (604).
Մէղավէ՞յր իս՝ գադօն այնձ ը, մէղավէյր չիս, այնձ՝ գադառ:
431 (605).
Մէյխ դիէղ լայս գադը:
432 (606).
Մէյը գարխօ, դիղը գըմըննօ, էրգօքէն՝ մէյը գըմընօ:
433 (607).
Մէյմ էյր վըրքը լայս չադար:
434 (608).
Մէյնձ մինձավթայն բըր ինը:
435 (609).
Մըզրա՞ը դըբըրգէն միչը չըբինվէր:
436 (610).
Մշմաշ միգ զմիդուալ դանիլով գիզլըլը:
437 (611).
Միզը զհազըրայն անառն գըհանը:
438 (612).
Միգնագ չուջառ՞ բզգէյց գիրվընը:
439 (613).
Միղը ձախաղը մադը գըլիզը:
440 (614).
Միղրէյն հէյդ ա անհամ գընը:

419 (593).
Մարդու աչքը մի ափ հողը կկշտացնի։
420 (594).
Մարդու լավություն չեմ արել, որ վատություն գանեմ։
421 (595).
Մեկ ականջդ՝ խուլ, մեկ աչքդ՝ կույր։
422 (596).
Մի ականջից մտնում է, մյուսից՝ ելնում։
423 (597).
Մեկ ծաղկով գարուն չի գա։
424 (598).
Մեկ ձեռքը ծափ չի տա։
425 (599).
Մի ձեռքով երկու ձմերուկ չի վերցվի։
426 (600).
Մկրտիչը կոլոլակ չի ուտի։
427 (601).
Մեկ աչքը մյուսին օգուտ չի տա։
428 (602).
Մկան ծակը մեկ ոսկիով է առնում։
429 (603).
Մկան շեռը ջրաղացի ջրին օգուտ է։
430 (604).
Մեղավո՞ր ես՝ կատուն ինձ է, մեղավոր չե
ինձը՝ կատու։
431 (605).
Մութ տեղը լույս կտա։
432 (606).
Մեկը գնաց, տեղը մնաց, երկուսից՝ մեկ
մնաց։
433 (607).
Մոմն իր տակը լույս չի տա։
434 (608).
Մեծը մեծություն պետք է անի։
435 (609).
Նիզակը տոպրակի մեջ չի պահվի։
436 (610).
Ծիրանը մեկը մյուսին տեսնելով կհասունան
437 (611).
Մեկը հազարի անունն է գցում։
438 (612).
Մեծացող երեխան փոքրուց է երևում։
439 (613).
Մեղր ծախողը մատը կլիզի։
440 (614).
Անգամ մեղրի շատն էլ անհամ է լինում։

441 (615).
Մինձ ամունը բղդալը միչը դառնէ։
442 (616).
Մինձը ինճով ա̈շկէյն օռ, ճահիլը ինճով՝ ծէյն։
443 (617).
Մինձ չգիցուձ գիղը, մինձ քուր մը տէր։
444 (618).
Մինձ պիռը՝ մինձ իշօն։
445 (619).
Մինձը չըլըսօ̈ղը շօ̈ղ ժարչիբա գիյնա։
446 (620).
Մինձ քուր առնօ̈ղը չըգարնուր քիշդէ։
447 (621).
Միւնօղայն զգնա̈ գըգապտինին, կուչուղէյն՝ զգաուն։
448 (622).
Միր կէղէն կա̈րէն գահա աղվօ̈ր է, քան գիւէրը գիղէն ալաբալիր ցիրինը։
449 (623).
Մուգ տրա̈ցայն ա̈վիլա աղվօ̈ր ը, քան գհի֊սօտ ընդա̈նէյն։
450 (624).
Մուրէգնէյն չէնթին մէօ̈ր գուղը։
451 (625).
Մուրթ գը հազուր գիժը, հազուր գը մօւրթ մը չիժիր։
452 (626).
Մուրթ էյր ա̈յրունէյն թթօ̈ չա̈սիր։
453 (627).
Մուրթը գինգուն չավըրման ը։
454 (628).
Մուրթ իմ, պուս մա̈լէ վուրթ իմ։
455 (629).
Մուրթ չը, մարտիէ ը։
456 (630).
Մօրթ ըրմաղ, գնա̈՝ կուլ։
457 (631).
Մօր մա̈նծձ Հա̈լբը չարշայն ձա̈խծձ ը։
458 (632).
Մօւրթ էյր դօ̈ն հա̈՛մ պա̈րիյնը, հա̈՛մ խըղ֊մա̈թքուարը։
459 (633).
Մծյը ձծյը չըդա̈նէր, ա̈վիլն ա̈լէ հիդը գըխըռէ։
460 (634).
Մծյը լէր ձագէն մինչը սալան գըտառնօ։
461 (635).
Մօր սայրդ ջիգյարէյն, ջիգյարէյն սայրդը՝ քա̈րէն։

441 (615).
Մեծ ամանը փոքրին մեջը կառնի։
442 (616).
Ահելի աչքով աղջիկ առ, ջահելի աչքով՝ ձի։
443 (617).
Մեծ չեղած տեղը, մի մեծ քար դիր։
444 (618).
Մեծ բեռը՝ մեծ էշին։
445 (619).
Մեծին չլսողը շատ փորձանքի կգա։
446 (620).
Մեծ քար վերցնողը չի կարող դիպուկ խփել։
447 (621).
Մեռնողի կնոջն են զավթում, քոչողի՝ տունը։
448 (622).
Մեր գյուղի գարին ավելի լավն է, քան ուրիշ տեղի լավագույն ցորենը։
449 (623).
Մոտ հարևանն ավելի լավ է, քան հեռու բարեկամը։
450 (624).
Անգամ մուրացկանի տոպրակից կուտի։
451 (625).
Մարդ կա հազար արժե, հազար կա մի մարդ չարժե։
452 (626).
Մարդ իր թանին թթու չի ասի։
453 (627).
Մարդը կնոջ ցանկապատն է։
454 (628).
Մարդ եմ, մի փունջ վարդ եմ։
455 (629).
Մարդ չէ, մարդակ է։
456 (630).
Տղամարդը՝ գետ, կինը՝ լիճ։
457 (631).
Մորը մանածը Հալեպի շուկայումն է ծախել։
458 (632).
Մարդն իր տան և՛ տերն է, և՛ ծառան։
459 (633).
Մուկը ծակը չի մտնում, ավելն էլ հետն է քարշ տալիս։
460 (634).
Մուկն իր ծակի մեջ առյուծ կդառնա։
461 (635).
Մոր սիրտը զավակին, զավկի սիրտը՝ քարին։

462 (636).
Յաթուխը ինսանէն սաղ կրղմուն է։
463 (637).
Յալանըզըզ հուվ մը ունընիլը շօդ աղվօր է, քան դշրքըլթում գուվ մը։
464 (638).
Յալընըզլըզը սըձա գըվիլլը։
465 (639).
Յալուա քօրէյն վըրքին գընը։
466 (640).
Յայր գուղը, հուն գօձը։
467 (641).
Յալր գուղը, հուն գօվչը։
468 (642).
Յառանչ մինօրէն դիղը խադրէ, սունրա գայնըցօր զէ։
469 (643).
Յիփըր լէրվադ գուկու ոխլահում, տօն ըզարշէն իլ հօցու։
470 (644).
Յիփըր կիդիս քէ հուց դվօղ չըբըր ընհօ, քաղցուծ ընհիլիտ մըկիդացըցընէ։
471 (645).
Յիփըր սսդուծ գուղը միդէյն դառն փիլլիլ, լսռանձ գիխէլքը դառնը։
472 (646).
Յիփըր մէյը օսի քէ կլօխիտ ֆաս չիգօ, ծառիտ կըլօխիտ դուր, իշի՝ գօ՞, թը՝ չիգօ։
473 (647).
Յութը կիղը բալըուդ գըլարէ։
474 (648).
Յութը կէղ խօրօզուայմ գըտընա, էնք օ լիըվան գըհիզնա, գուրթը։
475 (649).
Յութը մըգ՝ ձուվին, մէյմը՝ գուվին։
476 (650).
Յուլու չիղու, զուռու գընը։
477 (651).
Յուփը գիփէ, ըընգէն գըթօփէ։
478 (652).
Յծըըը գուրթուս, ըխբալիտ հիդիտ գուրթօ։
479 (653).
Նօ՛ գըթուքնվա, նօ՛ գըբղըըվա։
480 (654).
Նօ՛ գըմէյմ գըլուղում, նօ՛ դօ գընիմ՝ գըտուղում։

462 (636).
Անկողինը մարդու ողջ գերեզմանն է։
463 (637).
Սեփական հավն ավելի լավ է, քան ընկերովի
կովը։
464 (638).
Առանձնությունն աստծուն է վայել։
465 (639).
Ամեն քարի տակից դուրս է գալիս։
466 (640).
Ուր ուտի, այնտեղ էլ կածի։
467 (641).
Ուր ուտի, այնտեղ կերգի։
468 (642).
Առաջ մինարեի տեղը պատրաստիր, հետ
կառուցիր։
469 (643).
Երբ քո դեմ է ելնում զենքով, դու իր դեմ ե
հացով։
470 (644).
Երբ գիտես քեզ հաց տվող չպիտի լինի, քաղ
ցած լինելդ մի զգացնի։
471 (645).
Երբ աստված ուզի մեկի տունը քանդել, առա
խելքն է առնում։
472 (646).
Երբ մեկը քեզ ասի՝ գլխիդ ֆես չկա, ձեռք
գլուխդ տար, տես՝ կա՞, թե՝ չկա։
473 (647).
Յոթը գյուղում դրոշակ կպարզի։
474 (648).
Յոթը գյուղ մի աքլորի կբարձի, ինքն էլ վրա
կհեծնի, կգնա։
475 (649).
Յոթը՝ ծովից, մեկը՝ կովից։
476 (650).
Սիրով չեղավ, զոռով կլինի։
477 (651).
Ափի մեջ կեփի, եղունգի մեջ կլցնի։
478 (652).
Ուր որ գնաս, բախտդ հետդ կգնա։
479 (653).
Ո՛չ կթքնվի, ո՛չ կուլ կգնա։
480 (654).
Ո՛չ կմտնեմ կլողամ, ո՛չ կելնեմ՝ կդողամ։

481 (655).
Նա̈՛ գուգը, նա̈՛ զըգիրցընը։

482 (656).
Նադուր տօն գքէ պանցըրցնիս, քանգան ցուձը գիննէս։

483 (657).
Նաղ ինուղ, հաղ գինը։

484 (658).
Նա̈՛ ընծը, նա̈՛ քըզ։

485 (659).
Նամըսը բալրուղայն ձուարքնը։

486 (660).
Նա̈՛ Շամին շաքարը, նա̈՛ արաբէն իրիսը։

487 (661).
Նաջարէն տօռը խիշլում գաթուձ գըննօ։

488 (662).
Նըքըր լառօն ճö̈ր տառնօ, կիրդէն աշքը գըննէ։

489 (663).
Նըքցը՝ առլան, տուրիցը՝ գö̈դծ։

490 (664).
Նըքցիս գէլս գուվառը, տրուցիս՝ գէլլ։

491 (665).
Նիր հծու, նիր հավգայլթ գուա̈ձը։

492 (666).
Շարա դուգին՝ վարդաքն ու գուդը։

493 (667).
Շարա ձնգին ի վար չիշնէյր։

494 (668).
Շիդէյն իդըսա ուրթուղայն ծուառ քէյչն ա̈ չասնայր։

495 (669).
Շառն զէր ա̈կէյն չըխա̈ձիր։

496 (670).
Շառն զդայր կիդը։

497 (671).
Շառն թը գա̈մընչիր, վարդաք դըհակնիր։

498 (672).
Շառն թըթը լմէյն չըքա̈քնիր։

499 (673).
Շառն հիսըքթիթ չունընուր։

500 (674).
Շառն շօն գըխիղտըցընին։

501 (675).
Շառն շօն մէյս չուգիր։

481 (655).
Ո՛չ կուտի, ո՛չ կկերցնի։

482 (656).
Ինչքան դու քեզ բարձրացնես, այնքան ցածր կընկնես։

483 (657).
Նաղ անողը, հաղ կանի։

484 (658).
Ո՛չ ինձ, ո՛չ քեզ։

485 (659).
Պատիվը դրոշակի ծայրին է։

486 (660).
Ո՛չ Շամի շաքարը, ո՛չ էլ արաբի երեսը։

487 (661).
Ատաղձագործի դուռը թթենու շիվի կեղևով կապված կլինի։

488 (662).
Մինչև ատուն ջուր լինի, գորտի աչքը դուրս կգա։

489 (663).
Ներսը՝ առյուծ, դուրսը՝ կատու։

490 (664).
Ներսը ինձ է վառում, դուրսը՝ ուրիշին։

491 (665).
Նոր համ է, նոր համկիթ է ածում։

492 (666).
Շապիկն ուղեն՝ վարտիքն էլ կտաս։

493 (667).
Շապիկը ծնկից վար չի իջնում։

494 (668).
Շատի եռևից վազողի ձեռքը քիչն էլ չի ընկնի։

495 (669).
Շունն իր պոչը չի կծի։

496 (670).
Շունը տիրոջը գիտի։

497 (671).
Շունը եթե ամաչեր, վարտիք կհագներ։

498 (672).
Շունը թթու լիմոն չի ք...քի։

499 (673).
Շունը խմորի սփոռց չի ունենա։

500 (674).
Շունը շանն են խեղդել տալիս։

501 (675).
Շունը շան միս չի ուտի։

502 (676).
Շա՛ն ո՛ւցէյր՝ բա՛րինէյս չուջըղնուն թըղ
չա՛գնուն, օմմիէ կմաուշ մը թը գուգը՝ փէյ-
րիս գըլըվա։

503 (677).
Շաուն չըր ղարղին՝ դըէյճ խաթրէյն։

504 (678).
Շէյղ կնից, քայլ ծից։

505 (679).
Շէյդ՝ շիդէյն։

506 (680).
Շիդ պա՛նը, քէյլ խուսը։

507 (681).
Շիդ կիդիս՝ քէյլ խուսը։

508 (682).
Շիդ հիչող շաուն կալ գըպիրը։

509 (683).
Շիդ ծիծա՛ղէյլ լուց գըպիրը։

510 (ս84).
Շիդ մը նիղա՛նուր, ուշէդ գըհա՛լիվիրիս։

511 (685).
Շիդ մարթը միչ իշշը ակա չըր գըդրին։

512 (686).
Շիդ՝ տա՛ղողա՛նց, քէյլ՝ ղըննուղա՛նց։

513 (687).
Շիդ ուղա՛ղ քա՛սին գուդը, քէյլ ուղա՛ղ՝ սրդին։

514 (688).
Շա՛դ հարծոդ է, ըմմը քընթը քուք ուղա՛ղ է։

515 (689).
Շա՛դ խուսա՛ղը, շուդ գըխալդընս։

516 (690).
Շա՛դ չարչարվիլը չէ, ջագդէյն կիրն է։

517 (691).
Շա՛դ տա՛ղա՛ղը՝ քէչ գըղնս։

518 (692).
Շա՛ղ հացա ժըծից։

519 (693).
Շօուն ա՛կէյն մանգանան չուղըրթիր։

520 (694).
Շօնն ա՛ կիր գըննը, ամմա մայս չուդվէյր։

521 (695).
Շօուն ըսպիդըգն ա՛ շաունը, սիվը ա՛։

522 (696).
Շօուն սա՛դիէ գուկը, դուրթը ջամայն գը-
քա՛քնը։

523 (697).
Շօուն «քիուա» բըր գինչիս, դըքըր պծնիտ
պուսնա։

502 (676).
Շունն ասել է՝ տիրոջս երեխաները թող շատա-
նան, ամեն մեկը մի պատառ եթե տա՝ փորս
կլցվի։

503 (677).
Շանը չեն խփի՝ տիրոջ խաթրին։

504 (678).
Շատը գնաց, քիչը մնաց։

505 (679).
Շատը՝ շատին։

506 (680).
Շատ աշխատիր, քիչ խոսիր։

507 (681).
Շատ գիտես՝ քիչ խոսիր։

508 (682).
Շատ հաչող շունը գայլ կբերի։

509 (683).
Շատ ծիծաղելը լաց կբերի։

510 (684).
Շատ մի նեղացիր, շուտ կծերանաս։

511 (685).
Շատ մարդկանց մոտ էշի պոչ չեն կտրի։

512 (686).
Շատ՝ ղատողաց, քիչ՝ գտնողաց։

513 (687).
Շատ տվողը քսակից կտա, քիչ տվողը՝ սրտից։

514 (688).
Շատ հարուստ է, բայց քթի կեղտն ուտող է։

515 (689).
Շատ խոսողը, շատ կսխալվի։

516 (690).
Շատ չարչարվելը չէ, ճակատի գիրն է։

517 (691).
Շատ ղատողը՝ քիչ կգտնի։

518 (692).
Տաք (թարմ) հացի վրա հասավ։

519 (693).
Շան պոչը մամլակը չի ուղղի։

520 (694).
Շունն էլ գեր կլինի, բայց միսը չի ուտվի։

521 (695).
Շան սպիտակն էլ շուն է, սևն էլ։

522 (696).
Շան սատկելը, որ գալիս է, գնում մզկիթում
է կեղտոտում։

523 (697).
Շանը «քեռի» պիտի կանչես, մինչև գոր
գլուխ գա։

524 (698).
Զա՞ գըհաւգընում դավըրմանջա ընիլիս, թը զէմ ազունը առանց հըռաօկ չըրըր ադամ։
525 (699).
Զաթուլ ջաւղ կիդայն չըմննէյր։
526 (700).
Զագվըրութէյն ինօղ, չագվըրութէյն գըղնուա։
527 (701).
Զա՞ իրէ, չա՞ իդա, դահա չա՞ բըր ըննում։
528 (702).
Զալթը թփին արադուն չըննուր։
529 (703).
Զաղվիր գըրայց դրէյշ քաւէյն գըմընը։
530 (704).
Զադվըւր խաբուրը ուշէդ գըհասնա։
531 (705).
Զըմընցուածէյն իրէս թուղայն, ըցէյր՝ անծըրիվ գուկօ։
532 (706).
Զայդ ըցէյր․— Օմըն գիրդիլա ղանթօր* մը իղ գըհալլա յիրմէյնիս։
— Տօն չա՞յիս, քի քանզադ իղ բըր հալլա քինը,— ըցէյն էր։
— Իս ըլը զէյմ ղանթօր պունէյմ,— ըցէյր։
533 (707).
Զայդ չա՞յը, ծիէկ չա՞ բըր ըննը։
534 (708).
Զաքման պատվիլ իքան, ղալըբը ջդու։
535 (709).
Զըհըսուծ դուալիտ ծառ մը մինիր։
536 (710).
Զըհըփուծ քօուրիտ կլօուխ գըբադըր։
537 (711).
Զըսիրուծ ծըգալը կըլօխիս պուսուվ։
538 (712).
Զը ք...նիր, քի չըքադցինը։
539 (713).
Զինգընը լիզօն բիլը ասըրվէ, լազըմ գըննօ։
540 (714).
Զուդուղէյն ըռգիէ՝ ադըղէյն հալուլը։
541 (715).
Զուջաւղ լալու գըմիգնը։
542 (716).
Զուջաւղ մահանը՝ մուար գըգիշդընը։
543 (717).
Զուրըք դալա չըգիխիր։
544 (718).
Զուրիը մօուր էվլադնայն շնըրքլա գըննուն, շնըրքլա մօուր էվլադնայն չուրփա գըննուն։

* Ծանրության միավոր։

524 (698).
Ի՞նչ եմ հասկանում ջրաղացպան լինելուս, երբ իմ ալյուրն առանց շահարաժնի չպիտի աղամ։
525 (699).
Երկճյուղը գետին չի մանի։
526 (700).
Վատություն անողը, վատություն կգտնի։
527 (701).
Ի՞նչ էի, ի՞նչ դարձա և դեռ ի՞նչ պիտի դառնամ։
528 (702).
Մորմենու թփից մաճ չի լինի։
529 (703).
Վատ խոսքը տիրոջ քաակն է մտնում։
530 (704).
Վատ լուրը շուտ կհասնի։
531 (705).
Անամոթի երեսին թքել են, ասել է՝ անձրև է գալիս։
532 (706).
Ծիտն ասել է․— Ամեն որտալիս մեկ ղանթար* ճարպ է հալվում ինձնից։
— Դու ի՞նչ ես, որ այդքան ճարպ պիտի հալվի քեզնից,— ասել են նրան։
— Ես էլ իմ ղանթարն ունեմ,— ասել է։
533 (707).
Ծիտն ի՞նչ է, որ ձագն ի՞նչ լինի։
534 (708).
Ճոքակոշիկը փնտրելիս, կաղապարը գտավ։
535 (709).
Չհասած ճյուղին ձեռք մի՛ մեկնիր։
536 (710).
Չհավանածդ քարը գլուխ կջարդի։
537 (711).
Չսիրած ծաղիկը գլխիս բուսավ։
538 (712).
Չրք...ի, որ չսովածանա։
539 (713).
Գնչուի լեզուն անգամ սովորիր, պետք կգա։
540 (714).
Չուտողի մալը՝ ուտողին հալալ է։
541 (715).
Երեխան լալով կմեծանա։
542 (716).
Երեխան պատճառ՝ մայրը կշտանա։
543 (717).
Փտած ճյուղին ոտք չի դնի։
544 (718).
Անշնորհք մոր զավակները շնորհքով կլինեն, շնորհքով մոր զավակները անշնորհք կլինեն։

*545 (719).*
*Ջուգիմ՝ չէյթիս տէյր։*
*546 (720).*
*Պաղըրճէն իդիդա̈նը վա̈ղուղը, բադուին ա̈լէ գըննէ։*
*547 (721).*
*Պա̈նձղ յէյր ծուառ գըգընա, չըպանօ̈ղ՝ յա̈լա̈մէյն ծուառ։*
*548 (722).*
*Պա̈նուղ խուփը գըբըսօ։*
*549 (723).*
*Պա̈նուղ ծուառ քաղցուծ չըմնուր։*
*550 (724).*
*Պարծայն դիէգ չըր ա̈դդիդին։*
*551 (725).*
*Պիվիռնէն քիշիր է, դիղը մնա̈ցիր է։*
*552 (726).*
*Պիրուն գը՝ հուց չիգը, հուց գը՝ պիրուն չիգը, ըրգօքն ա̈ գը՝ ուդուղ չիգը։*
*553 (727).*
*Պիրօն գա̈թնին վառայր, այրուն գուփչը։*
*554 (728).*
*Պօ̈ն՝ ինիլուվ, ջամփիլէ՝ քիլիլուվ։*
*555 (729).*
*Ջահաննամն ա̈ թը գուրթու՝ ինգիր ունցէյր։*
*556 (730).*
*Ջույր գճա̈ղօցք դարէյր, էյնք խաբար չի։*
*557 (731).*
*Ջիգարիտ ցէցը դախուծ իս։*
*558 (732).*
*Ջիգարէյն հէյդ օյին չըննուր։*
*559 (733).*
*Ջիգաուր քօր ղարգըվիցու։*
*560 (734).*
*Ջինգյանէն շինիր ի մա̈ղա̈գ, կլխէյն արէր ին ձա̈ղա̈գ։*
*561 (735).*
*Ջինչօ̈ն յաղաք իսկա̈ր գուպաավա։*
*562 (736).*
*Ջինջըխղիրին վախնուղը գիրիդ չըցանիր։*
*563 (737).*
*Սաբըր ինա̈ղը սալամաթ գըննէ։*
*564 (738).*
*Սադանայն ջուրաբ գըհաքցընը։*
*565 (739).*
*Սադանան թա̈ըմ գըգաննա։*
*566 (740).*
*Սադգուծ իշշը լուսանք գըպատվա։*
*567 (741).*
*Սանդղուխ առչը գաբնդին գըննին։*

*545 (719).*
*Ձեմ ուզում՝ գրպանս դիր։*
*546 (720).*
*Բաղարջի եռևից վազողը, պատառից էլ կըզրկվի։*
*547 (721).*
*Աշխատողն իր ձեռքին է տեսնում, չաշխատողը՝ ուրիշի։*
*548 (722).*
*Բանող խոփը կփայլի։*
*549 (723).*
*Բանող ձեռքը սոված չի մնա։*
*550 (724).*
*Բարձի տակը չեն կեղտոտի։*
*551 (725).*
*Մեխերը քաշել է, տեղը մնացել է։*
*552 (726).*
*Բերան կա՝ հաց չկա, հաց կա՝ բերան չկա, երկուսն էլ կա՝ ուտող չկա։*
*553 (727).*
*Բերանը կաթից վառվել, թանն է փչում։*
*554 (728).*
*Գործը՝ անելով, ճամփան՝ գնալով։*
*555 (729).*
*Դժոխք էլ որ գնաս՝ ընկեր ունեցիր։*
*556 (730).*
*Ջուրը ջաղացը տարել է, ինքը լուր չունի։*
*557 (731).*
*Ջիգյարդ ցիցից ես կախել։*
*558 (732).*
*Ջիգյարի հետ խաղ չեն անի։*
*559 (733).*
*Կացինը քարին կպավ։*
*560 (734).*
*Գնչուն մազ է սարքել, գլխին ծաղիկ են դրել։*
*561 (735).*
*Ճանճի աղիքում ոսկոր է փնտրում։*
*562 (736).*
*Ճնճղուկներից վախեցողը կորեկ չի ցանի։*
*563 (737).*
*Սպասողը նպատակին կհասնի։*
*564 (738).*
*Սատանային գուլպա կհագցնի։*
*565 (739).*
*Սատանան միշտ պատրաստ է։*
*566 (740).*
*Սառկած էշի պայտ է փնտրում։*
*567 (741).*
*Սանդուղքն առաջին աստիճանից կբարձրանան։*

568 (742).
Սըիղըգ իղէյվ, սիվ իղէյվ գաչըղը բայան գինը։
569 (743).
Սէյդ գը՝ բա̈դա̈րիէկ մը գիժը։
570 (744).
Սէյդ ա̈սուղէյն ճամփիէ գարչ գըննը։
571 (745).
Սէվ զարպայն չա՛ ինը, խէյվ՝ գխրօւգ։
572 (746).
Սընծըսգին մա̈սուսը չըննուր։
573 (747).
Սիլը գուրթօ, դիլը գըմիօ։
574 (748).
Սիլէյն պիրօձ, սէյլ գըդանա։
575 (749).
Սիլլան իրըսէյն գուրա դըզարգին։
576 (750).
Սիրդը բօխչա չի, քի յալինայն յառչիվը պա̈նուս գէ։
577 (751).
Սիրը գէյս, սիրիմ՝ գքիզ։
578 (752).
Սուխ չըմ ուգիր, հիդ չըննը դէյը։
579 (753).
Սուրփ է, ըմմը թուրփ է։
580 (754).
Սուրփ խաչը իգիք, լըհիֆը առիք, նըքցի փախիք։
581 (755).
Վառէյը գօսէ՝ ա̈գա̈ր թը խս ուր մը խուրօզ գըննում, զաս հավիրէն հօնգը գանցընիմ։
582 (756).
Վառուծ սրդայն մա̈նիխ մը ցա̈նիր։
583 (757).
Վա̈րբիդ գըկէյն ըրգը վիդու գիննա ֆրխա։
584 (758).
Վա̈րբիդ հա̈րա̈մէյն գօտն գդայր հա̈րա̈մա գըհա̈նը։
585 (759).
Վա̈րբիդէյն մըգ չա̈կայչ՝ լիրուամիը։
586 (760).
Վա̈րէյց ջա̈ննա̈թին իլծձ ը։
587 (761).
Վարթը թըփին ուսալըն չըննիր։
588 (762).
Վըդդը աչըղ իլուվ, պասդուձ մանցուվ։
589 (763).
Վըդդը, կլուխ, ջիգուար հէնկ փարա չիժիր։

568 (742).
Սպիտակ հետևն ու սև հետևը (ոչխարի) անցումն անցնելիս կերևա։
569 (743).
Սուտ կա՝ մի պատարագ արժի։
570 (744).
Սուտասանի ճամփան կարճ կլինի։
571 (745).
Սևին օճառն ի՛նչ կանի, խևին՝ խրատը։
572 (746).
Սրնձրսկու թփից գավազան չի լինի։
573 (747).
Հեղեղը կգնա, տիղմը կմնա։
574 (748).
Հեղեղի բերածը, հեղեղը կտանի։
575 (749).
Ապտակը երեսի համեմատ են խփում։
576 (750).
Սիրտը բոխչա չէ, որ բոլորի առաջ բաց անես։
577 (751).
Սիրիր ինձ, սիրեմ՝ քեզ։
578 (752).
Սոխ չեմ ուտում, որ հոտ չգա։
579 (753).
Սուրբ է, բայց բողկ է։
580 (754).
Սուրբ խաչը եկավ, վերմակն առեք, ներս փախեք։
581 (755).
Վառեկն ասում է՝ եթե ես մի օր աքլոր դառնամ, այս հավերի սերունդը կկտրեմ։
582 (756).
Այրված սրտին մանանեխ մի՛ ցանիր։
583 (757).
Խորամանկ աղվեսը երկու ոտով կընկնի թակարդը։
584 (758).
Վարպետ գողը տանտիրոջը գող կհանի։
585 (759).
Վարպետի մուրճի մի հարվածը՝ մի ոսկի արժե։
586 (760).
Գավազանը դրախտից է ելել։
587 (761).
Վարդի թփից հեծան չի լինի։
588 (762).
Ոտքը դուրս ելավ, սատված մռացավ։
589 (763).
Ոտքը, գլուխը, թոքերը հինգ փարա չարժեն։

590 (764).
Վըրծ իշօն իդըտա քաուրդ գիլլին։
591 (765).
Վիրէյն ճէյր չըտաունուր։
592 (766).
Վիրէյն ֆիթծղ, վիրընու գուրթը։
593 (767).
Վօուրտ սիրօ̈ղ՝ կփէյշն ա̈ գըսիրը։
594 (768).
Տա̈նգը յարան գըճուղնը, ձունդր դրայց չըմառնվայր։
595 (769).
Տաուռիտ ա̈ղվիր գզբը, տրածայնիտ հա̈րա̈մա մըհա̈նիր։
596 (770).
Տա̈նիէ գէյր գէյթ չըգիփիր։
597 (771).
Տա̈նիէ յիոգէյր հա̈սսու։
598 (772).
Տարդըգ ձառայն քուր քարուղ չըննուր։
599 (773).
Տէօուն թը դլկա իս, իս ա̈լը՝ ակայն իմ։
600 (774).
Տըգ ա̈սիղ գըմըննա, տըգ հիձուն գըննը։
601 (775).
Տռնին կուդդը, ժարաջին գըթննա։
602 (776).
Տուում իրմէյնիս նիղացէյր, իս խաբուր չիմ։
603 (777).
Տրա̈սնէյն սիղօն փիր չըլըննօր, թը գըլըննա ա̈լէ, վաղըթը չըննուր։
604 (778).
Տրա̈սնէյն հարսնուա դախմա աղվա̈ր գըննը։
605 (779).
Տրա̈սնէյս դաշշուքը ուղիցէյր, հէյք-թասան ընծը մընա̈ցէյր։
606 (780).
Տուրիցը՝ ջըրըկ, նքցը՝ գըրըգ։
607 (781).
Տօն գքիզ մը կուվիր, հարքասը թըղ կուվին։
608 (782).
Տօ̈ր ընծէ ունջըզը հա̈ւդ մը, ան ա̈լէ փօ̈դ թըղ ըննօ։
609 (783).
Ցա̈նօձիտ գընձիս։
610 (784).
Ցօուրդ մըղըրնուա բիլա գռնագին չուդուր։

590 (764).
Որձ էշի հեռևից քուռակ են ման ածում։
591 (765).
Արյունը ջուր չի դառնա։
592 (766).
Արյուն թափողը, արյունով կգնա։
593 (767).
Վարդ սիրողը՝ փուշն էլ կսիրի։
594 (768).
Դանակի վերքը կլավանա, ծանր խոսքը չի մոռացվի։
595 (769).
Դուռդ լավ կողպիր, հարևանիդ գող մի հանիր։
596 (770).
Դանակն իր կոթը չի տաշի։
597 (771).
Դանակը ոսկորին է հասել։
598 (772).
Դատարկ ծառին քար գցող չի լինի։
599 (773).
Թե դու աղվես ես, ես էլ՝ պոչը։
600 (774).
Ասեղի պես կմտնի, հեծանի պես դուրս կգա։
601 (775).
Դռնից վռնդես, պատուհանից կմտնի։
602 (776).
Դզումը ինձնից նեղացել է, ես լուր չունեմ։
603 (777).
Հարևանի հացը փոր չի լցնի, թե լցնի էլ, ժամանակին չի լինի։
604 (778).
Հարևանի հարսը միշտ սիրուն կլինի։
605 (779).
Հարևանիս ամործիքն է ուռել, հոգն ու ցավը ինձ է մնացել։
606 (780).
Դրսում՝ ճրագ, ներսում՝ կրակ։
607 (781).
Դու քեզ մի գովիր, թող ուրիշները գովեն։
608 (782).
Տուր ինձ ընկույզի մի հատիկ, այն էլ թող փուչ լինի։
609 (783).
Ցանածդ կհնձես։
610 (784).
Դողէրոցցն անգամ ուրիշին չի տա։

611 (785).

Ցուձ նէյսդ, քի ի վիր դանէյն գքիզ։

612 (786).

Ցուձ նսդուձ, պունցր մը խուսէյր։

613 (787).

Ուաձ յէյր հիկկէյն գարդ, դաասօտր՝ յէյր իղէյն։

614 (788).

Ուաձ յէր վիդօց գըզա̈խիվա, դըդայն՝ յէր վիդօց։

615 (789).

Ուաշք անջաղ խօղ գըգիշղա̈ցնը։

616 (790).

Ուգծղ իլա̈ն հա̈մպիրօ̈ղ մըգ չը։

617 (791).

Ուզա̈ւղ պիրօւն գթօւն գօ̈վը։

618 (792).

Ուզէ չուզուձիտ, ասղուձ թուղա սիրուձիտ։

619 (793).

Ուզօձիտ՝ ըսուդ, ուծ̈ն՝ ուծ̈ղ։

620 (794).

Ուլըմմը մինձ-բղդա̈գ չունու։

621 (795).

Ուծծէյն խիթուձը գըրառգա, անութը փէյր չըբառգայր։

622 (796).

Ուծծէյն խիթուձը բարնէն շըքին գըվախնօ։

623 (797).

Ուծծէյն պիրօն թը գըթուքնա, ուծը գըսադգա։

624 (798).

Ուծծէյն պիրօն քամիզէ, ուծը գըսադգա։

625 (799).

Ուղիրթ խուսօղ դիղ չունա։

626 (800).

Ուղ-հուց, սայրդիտ պուց։

627 (801).

Ունցօ̈ձ գա̈րգըղօն մը. գունա քառսօն ձըգ։

628 (802).

Ունքվա շինիլը դիղ, ուաշք հա̈նից։

629 (803).

Ուռսպէյն գըավըրգը շա̈բա̈գ գունընօ, հա̈՛մ գըհա̈կնա, հա̈՛մ գըհա̈կցնէ։

630 (804).

Ուր գը՝ դարա գըբիհը, դարա գը՝ ուր չըբիհիր։

631 (805).

Ուրջլաքիտ ա̈րուրօձիէ։

632 (806).

Ուրը գընէ, չուրը չընիր։

611 (785).

Ցածր նստիր, որ քեզ վերև տանեն։

612 (786).

Ցածր նստած, բարձր մի խոսիր։

613 (787).

Այծն իր հոգու դարդն է, մսագործը՝ ճարպի։

614 (788).

Այծն իր ոտից են կախում, ոչխարը՝ իր ոտից։

615 (789).

Աչքը հազիվ հողը կկշտացնի։

616 (790).

Ուտողն ու համբերողը՝ մեկ չէ։

617 (791).

Ուզող բերանը կթան կով է։

618 (792).

Սիրիր չսիրածիդ, աստված կտա սիրածիդ։

619 (793).

Ուզածդ՝ էժան, դու՝ թանկ։

620 (794).

Մահը մեծ-փոքր չի հարցնում։

621 (795).

Օձի խայթածը կքնի, սոված փորը չի քնի։

622 (796).

Օձից խայթվածը պարանի չուփից կվախենա։

623 (797).

Օձի բերանը որ թքի, օձը կսատկի։

624 (798).

Օձի բերանը քամես, օձը կսատկի։

625 (799).

Ճիշտ խոսողը տեղ չունի։

626 (800).

Աղ ու հաց, սիրտդ բաց։

627 (801).

Ունեցածը մեկ կարկատան է. ունի քառասուն ծակ։

628 (802).

Ունքը շինելու տեղ, աչքը հանեց։

629 (803).

Լիրբը տասներկու շապիկ կունենա, և՛ կհագնի, և՛ կհագցնի։

630 (804).

Օր կա՝ տարի կպահի, տարի կա՝ օր չի պահի։

631 (805).

Նա օրորո՞ցդ է օրորել։

632 (806).

Օրը վերջանում է, չարությունը չի վերջանում։

633 (807).
Ուքըրգը չըխնդուր։
634 (808).
Փարա գունէյա, հիկկա գունէյա։
635 (809).
Փարան ծիռուց ծըղըր։
636 (810).
Փէյր գըրադուա, ուաշք չըլվէյր։
637 (811).
Փէյրը, հիր չը։
638 (812).
Փըլօ̈ղ դօն՝ գարգայթ մահանա։
639 (813).
Փուրիտ քօ̈քը իչադա՞ գուբօ̈լիս։
640 (814).
Քալ կլխայն՝ թուսըղը սունդր։
641 (815).
Քօ̈ղցուձ մըթուղօր՝ հօ̈րօ̈մա գըննօ, շիդ մըխուսէյր՝ իրէյս գըննը։
642 (816).
Քօ̈ն զատդանան ըրք ուր յառանձ ձնօ̈ձըր։
643 (817).
Քօ̈ն գէյշ յառանձ յախըրը չըր մըննէյն։
644 (818).
Քօ̈ն ղասուղ ըռուդ չըղը։
645 (819).
Քօ̈նը լիզօ կիդիս, քանզան մօրթ իս։
646 (820).
Քաչան ճրին գըհօ̈նը։
647 (821).
Քառսընօց հօ̈սքօ̈ղ իլէյր։
648 (822).
Քօ̈սքըն քօ̈ցօուխ էյր ամէյն գարօուրը։
649 (623).
Քարէն իդտա օ̈ղէյը, քօ̈ն գքարէն վըրքը։
650 (824).
Քարթուփ լօ̈րէ, հօ̈խին օ̈րէ։
651 (825).
Քօ̈րքօ̈զէյն պուայն դախմա հիտածձը։
652 (826|.
Քօ̈րծձ զըրք քօուր։
653 (827).
Քօ̈ֆիլէյն յօ̈՛ քասան, յօ̈՛ մուրաք։
654 (828).
Քէյշ գիր, խզմաթքար պրնը։
655 (829).
Քէշը գուդին՝ նըքըր թըմմա, շուդը գուդին՝ նըքըր գիշդօ̈նուն։

633 (807).
Որբը չի ուրախանա։
634 (808).
Փող ունես, հոգի ունես։
635 (809).
Փողը ձեռքի կեղտ է։
636 (810).
Փորը կպատռվի, աչքը չի լիանա։
637 (811).
Փոր է, հոր չէ։
638 (812).
Փլվող տուն՝ կարկուտը պատճառ։
639 (813).
Փորիդ կեղտը ճա՞րպ ես կարծում։
640 (814).
Ծաղատ գլխին՝ տոսախե սանր։
641 (815).
Սոված մի թող՝ գող կդառնա, շատ մի խոսիր՝ պնդերես կդառնա։
642 (816).
Սատանայից երեք օր առաջ է ծնվել։
643 (817).
Էշից առաջ ախոռ չեն մտնի։
644 (818).
Թանկից էժանը չկա։
